ՊԱՏՄՈՒԹՒՒՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԴԱՎԱԹԻՑ

ԾՕՐԻՆԵԱՑ

Հ. ԱԲՐԱՀԱՄ Վ. ՃԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

ՀԱՏՈՐ Ա.

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԻՐՔՆ ՂԱԶԱՐ

1849 – ԹՎՊՂ.

Ա
821

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ օրէն իցէ ընդ կարևորագոյն օգ-
տութիւնս խնդրել՝ ի պատմութեան և տե-
սարանս բազմադիմիս մարդկայնոց իրա-
գործութեանց ընծայեալս՝ ի Թատեր աշ-
խարհիս նորութեամբն և փոփոխութեամբն
հաճոյականս մտաց, իրաւամբք ապա յետ
հնոցն վիպաց զառաջինն տեղին շնորհիցեմք
գաղղիական ազգին պատմութեան: Որ՝ ի
համառօտ ժամանակի՝ ի տեսիլ ածէ մեզ
զնոյն և զմի ժողովուրդ՝ ե զև վսեմախոհ,
իրաւարար և տիրասէր, և ե զև անագո-
րոյն, ամբարիշտ և տիրադրուժ, մերթ կրօ-
նասէր յոյժ, և մերթ անկրօն ամենևին.
գարձեալ՝ ի Թուեղն՝ ի ծագ քաղաքակա-
նութեան ժամանել, ՝ի վերջին խժութիւն
իջանել, և վերստին արագ արագ՝ ի նոյն
յառաջին կարգ ամբառնալ, ազգողագոյն
օրինակ Թողեալ աշխարհի Թէ չիք կա-
տարեալ քաղաքականութիւն, և ոչ մարդ-

կան ընկերահաշտ ժողով՝ առանց կրօնից օրինաւոր յօգիչ կապոյ : Նոյնպէս է առաջնեալ անդ գործարքն ի վաղմանից և առելի ամաց հետէ ի խնդիր նորոյ քաղաքականութեան՝ առպարէզ ընդարձակ կարգեալ չարեաց և բարեաց խառն ամենազգի գնացից՝ յինքն ձգելով զաչս համօրէն Եւրոպիոյ և զողջոյն իսկ մարգկութեան :

Այսոցիկ այսպէս խելամուտ եղեալ, ոչինչ անկարևոր սպաս ծառայութեան մատուցանել համարիմք ընթերցասէր մատց ազգայնոց՝ ի լոյս ընծայելով զհամառօտ պատմութիւնս պատմութեան ազգիս այսորիկ : Սակայն որպէս և հասակ մատենիս ցուցանէ և ոճ պատմագրութեանս, ուսումնասէր մանկտւոյ առաւել ի պէտս է և որոց համառօտագիծ տեղեկութեամբն չառնայցեն, և ոչ իմաստնոց արանց՝ որոց առ ջի կայցէ մեծագանձ ճոխութիւն մատենագրութեան գրաւէս ազգին :

Կամելով ինձ ձեռն տալ մատց ընթերցողին, վասն ընդ լոկ պատմական գիտութեան ուշ ունիցի պատճառացն և բարուց մարդկան ժամանակին, կարգացն և օրինաց, յետ իւրաքանչիւր ցեղից թագաւորութեանցն այս է Մերովեանց, Կարոլոսեանց, Գաբէթեանց, Վալուեանց, Աբրեղիոնեանց և Պորպոնեանց, եդաք ուրոյն և ժամանակակից մարդկանն սովորութիւնս, զօրէնս և զկարգ քաղաքական. ինամով ինձ ցուցանելով թէ ընդ ո՛ր աստիճանս քաղաքականութիւնն յեղափոխէ զմարդիկ ի բիրա

և ի վայրենի կենացն ի վայելուչն կեն-
ցաղ, և յանուսումնութենէ ի գիտութիւն:
Դարձեալ որպէս ընդ բառնալ պարզու-
թեան կենաց՝ ինքնին և բազմագունակ
զեղծմունք քաղաքականութեան ի նեղքս
սպրդին:

Առաւելոր արժան համարեցաք յիշել
զայս, զի զանուն ազգին ի սկզբան անդ
պատմագրութեան ի կարգս Թագաւորացն
Մերովեանց և Կարոլոսեանց փրանկս յոր-
ջորջեմք ըստ սովոյգ բնիկ նոցին անուանա-
կոչութեան. ապա յետ ակրտակեսութեան
Գաբէլեանցն և յազգախառնել բազում
ժողովրդոց աշխարհին ի մի ազգ Ֆռանկ
անուն, մեք ըստ վերոյգրեալ սովորութեանն
մնաձելոյ յազգիս և երկար ժամանակաւն
յօրէնս լինելոյ՝ եգաք յանուն նախնի բնա-
կաց աշխարհին Գաղղիացիս. նոյնպէս և
զաշխարհն Գաղղիա: Դարձեալ և ի տա-
ռապարձութեան անուանց զԹագաւորացն
կանխաւ յայլ գիրս ծանօթ եղելոց ազ-
գայնոցն ականջաց հայացուցանելով ըն-
թերնուլ՝ Յովհաննէս, Փիլիպպոս, Հեն-
րիկոս, Լուդովիկոս, և այլն. նոյնպէս և
զայլսն ըստ սոցա յարմարեալ՝ մանաւանդ
զՄերովեանցն զորս և յոյժ այլազգ հնչէին
ժամանակակից մարդիկն քան զայժմեանան,
եգաք Կլովիս, Կլոտաարիոս, Դագոբերտոս,
Քիլդեբիկոս և այլն: Իսկ զանուանս արդի
մարդկան և ամենևին Գաղղիացիս որպիսիք
են Ռիչըլիէօ, Քոնաէ, Ֆլէօրի, Միրապոյ,
Քոնտորսէ, Ռոպէսպիէռ՝ այլովքն հան-

դերձ, պահեցաք հաւատարմութեամբ ըստ բնիկ սովին հնչման։

Ոչինչ ՚ի կարևորացն համարեալ յիշատակել և զաղբիւրս պատմութեանս ուսումն առաքն, իսկ միայն լինիմք, զի ոչ ամենևին յանձգատակարացն գրեսցի մերս այս դուզնաքեայ աշխատութիւն, և գրասէր մարդկան ախորժ և ներողական նոցա հաճութիւն շատ իսկ համարեսցի մեզ ՚ի վարձ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԱՂԳԱՑԻՈՑ

ՆԱԽԱԾԱՒԳ.

ԳԼՈՒԽ Ա.

Թէ ո՛չ էին բնակիչ աշխարհին Գաղղիացոց մինչ չև Հռովմայեցոցն փիլիպպէ անդամ:

ԳԱՂԳԻԱՑԻՈՑ աշխարհին նախնի բնակիչք կելտքն էին, որ յերկուս ժողովուրդս զատուցեալ, ի Գալս և Իբերս, ունէին զընդարձակութիւն աշխարհին. ապա զոյացեալ Գալացն հալածեցին զԻբերս ի Սպանիա, և ինքեանք կալան զերկիրն համօրէն: Յետ ժամանակացն այնոցիկ գաղթականք ի Փոկիդեայ ելեալ բնակէին ի հարաւակողմանս Գաղղիոյ, և հաստուածս ի նոցանէ կառուցանէր զքաղաքն Մասալիա, և Հարուստութեամբն ի սուբհատս

վաճառուց և յարուեստս հանճարոյ զարգացեալ մեծանայր յոյժ : (599 Ն . Ք .)

Ընդ նոյն ժամանակս գարձեալ դէպ լինէր և Կիմբրացն արշաւել ՚ի Գաղղիա և հաստատել զբնակութիւն իւրեանց յափունս Սենայ և Լուարայ : Իսկ Կիմբրացն ազգ օրինօք քրմացն վարէր՝ որ Դրուիդք ՚ի նոցանէ կարգային , և զդրօշեալս զոստոց կաղնեացն կախէին . զլացանուէր իմն էր առ նոսա կաղնին . ՚ի վերայ բագնեաց նոցին ոչ միայն զանասնոց սպանդս , այլ և մարդազոհս գործէին խժգժաբար : Էին նոցա և քրմուհիք որք հանդերձելոց ինչ լրացս պարծէին գուշակ լինել՝ ՚ի խլրտմանց սպանդիցն հմայս հմայելով : Եւ գտանին իսկ ցարդ ՚ի Գաղղիա ՚ի բազում տեղիս վէմք մեծամեծք գոգաւորք՝ յորոց վերայ երբեմն զոհադործութիւնքն լինէին : Մեծ էր իշխանութիւն քրմացն և ՚ի վարչութիւն ժողովրդեան . իշխանք էին նոքա պատերազմի և խաղաղութեան , և գտաւորք լրաւանց , և հրապարակաւ անէծս ՚ի վերայ կապէին՝ որոց միանգամ չհնազանդէին հրամանաց նոցա :

Զհետ արշաւանացն Կիմբրաց յարձակէցան ՚ի Գաղղիա և ազգ Բեղգաց կամ Բեղգիացւոց , որ ՚ի նոյն սերնդոց Կիմբրացն էին . և սանակոս զաշխարհն արտերեալ ընդ հիւսիս և ընդ հարաւ , խառնեցան ՚ի Կիմբրացին և ՚ի Գաղս , և ՚ի նոյն ՚ի մի Գաղղիացի անուն ամենեքեան այնուհետև կոչեցան , Թէպէտ և անգուլ պատերազմ

ընդ երեսս յարդարէին՝ տոհմիք ընդ տոհմս հակառակելով։ Կանայք նոցա խորհրդակից արանցն լինէին վասն երից հասարակաց, և՛ ի պատերազմի ահագին ձիւն գոչիւն յարուցեալ խրախուսէին զարան՛ ի քաջութիւն. իսկ քերթողք նոցա բարդեանքն կոչեցեալք՝ զյաղթանակս գիւցազանցն երգէին։

Անմարթ էր բազմութեան ժողովրդոց՛ ի պատերազմ քան՛ ի միակութիւն պարապելոց՝ հայհոյելիւ իւրեանց կերակուր՛ ի լուծիւն բաւականի. և այս ահա պատճառք լինէին յոլովակի գաղթականութեանց նոցա, որով ընդ ժամանակս ժամանակս բազում հասուածք յաշխարհէն ելեալ սփռեցան՛ ի մօտաւոր և՛ ի հեռաւոր իսկ գաւառս, և երբեմն զվոհմակս գազանաց գրոհ տուեալ յաւար և՛ ի կոտորած և՛ ի հուր ապականէին զամենայն երկիրս ընդ որս անցանէին։ Կէսք ընդ առաջնորդութեամբ Սիգովեսայ անցին՛ ի Գերմանիա, այլք ընդ Բելովեսայ արշաւեցին կալան զՀիւսիսակողմանս Իտալիոյ և կառուցին զՄեդիոլան, զՊրեշիա, զՎերոնա և զՊոլոնիա. որոց և միացեալ յետ ժամանակաց ընդ Սենոնս՝ կանգնեցին և զՍենեկալիա։

Երբեմն հինդ հարիւր ամաք յառաջ քան զՔրիստոս նոր այլ հասուած ժողովրդեան գաղղիացւոց անցեալ ընդ Ալպեանս, խուժեաց Հետրուրիա և պաշարեաց զՔլուսիոն քաղաք։ Յայնմ ժամանակի Հռովմայեցիք երբու դեսպանութեան աղա-

գաւ եկեալ և միջնորդ հաշտութեան լինել կամեցեալ՝ ընդդէմ օրինաց ազգաց զէն առին հակառակ գաղղիացւոց : Զայրագնեալ սոցա յոյժ՝ Թողին անդէն զպատշարուձն , և զօրավարութեամբ Վրէննայ խաղացին ՚ի վերայ Հռովմայ , և չարաչար խորտակեալ զՀռովմայեցիս յափուշնա Ալլիա գետոյ՝ յարձակեցան կալան զՀռովմ յամին երեքարիւրորդի վաթսներորդի շինուելեան քաղաքին . սակայն վաղ հալածեցան անտի :

Յետոյ ուրեմն արշաւեցին գաղղիացիք և ՚ի Յունաստան. և անցեալ ասպատ ընդ Վոսփոր ՚ի փոքրն Ասիա՝ կալան զբնակութիւն գաւառի միոյ , զոր և անուանեցին Գաղատիա : Բայց յետ պարտեալոյն Աննիբաղայ՝ գաղատացիքս այսոքիկ և հաստուածք գաղղիականացն որ Իտալիա նիզակակից կարքեզոնացւոց , հասեալ ընդ հուպ մահին ընդ լծով ծառայութեան Հռովմայեցւոց (170):

Թէպէտ զբարուց ազգին խօսելով՝ մարգասէր ասեն լեալ զկեղտս կամ զգաղղիացիս և հիւրասէր , քաջ , հանճարեղ և ձարտար յարուեստս , սակայն և յոյժ էին և զակատեալք յարբեցութիւն և ՚ի լսել ըզնորալուրս . բռնագատէին զձանապարհորդս և զվաճառականս օտարս՝ պատմել նոցա զվէպս զարմանալեաց և զհրաշալիս ազգաց հեռաւորաց : Յաղթանդամք էին ամենեքեան , և ներկանէին զհերս իւրեանց ՚ի գոյն կարմիր , և ՚ի վերայ թիկանցն Թողուին երկայնաձիգս : Յառաջինան մերկ

իսկ ջրջէին՝ ի զանազան գոյնս ի տեսիլ ա-
հաւոր ներկեալ զմարմինս, կամ մորթս
գազանաց արկեալ զիւրեամբք. այլ ապա
փոքր մի ի քաղաքականութիւն ընտեր-
ցեալք՝ հնարէին գոհն իւրեանց հան-
դերձս: Անպատճոյճ էր տարազ հանդերձից
նոցա, այս ինքն ազգ ինչ անդրավարտեաց և
տառատոկ. որ ալնուամենայն էր ի նոսա
նկարակերպս ապաներ, իսկ աղքատացն
զգեստ տուեալ էր լոկ կամ մորթ երէոց:
Ընդ ժամանակս ձիգս նախատինս անձանց
վարկանէին տաղտալարտ ի գլուխ ապանել,
վահան առնուլ, և պահպանակս կրծից
դնել, այլ մերկամարմնջ ընդդէմ տպատա-
զինեալոցն ելանէին. սակայն ապա ի տու-
ժից վտանգաց ուսեալք, և յերկար տևո-
րութեամբն առ օտարս վարժեալք, նովին
սկսան և ինքեանք վարել: Ձէնք նոցա էին
աղեղ և նիզակ և սակր, և այլ գործի ինչ
ժանեւոր և սլաք:

Այսչափ ինչ շատ գրեալ զբարուց և զը-
նտանեօրութեանց խաժաբարոյիցն ասել, անց-
ցուք արդ ի պատմել թէ զիարդ ընկճեալ
ընդ Հռովմայեցւոցն տէրութեամբ, զնոցին
կալան տակաւ զտովորութիւն և զքաղաքա-
կանութիւն:

ԳԼՈՒԽ Բ.

Հանգամանք աշխարհին Գաղղիացւոց ի Հռովմայեցւոցն փիլիպէ[1] յորշաւանս բարբարոսաց:

50 Ն. Ք. – 406 Ա. Տ.

Ի ԺԱՄԱՆԱԿՒ յորում արշաւանս գնէին Հռովմայեցիք ի Գաղղիա՝ նուաղեալ անկեալ էին կիմբրացն և Գաղաց պեռուԹիւնք, և աշխարհն բաժանեալ յերիս ժողովուրդս, ի Բելգիացիս, ի Կելտս և Ակուիտանացիս: Բելգիացիք զհիւսիսակողմանն Մարն գետոյ ունէին, Ակուիտանացիք զհարաւակողմանն Կարոնայ, իսկ Կելտք զդաւառան որ ընդ միջ երկուց գետոցս ձգին: Եւ նոքին դարձեալ ազգքն երեք զաւուցեալ բաժանէին ի բազում ինքնիշխան սակաւապետուԹիւնս, որ ի քրմաց, ի ծերոց և յիշխանաց զօրուն գումարէին: Զսոցա զերկպատակ հերձուածս պատերազմին Հռովմայեցիք ի տարածանել զաշխարհակալուԹիւնս իւրեանց, և ի տան ամաց ժամանակի Յուլիոս Կեսար լեգէոնիք ոմանք սասակ և արիւնըռուշտ պատերազմունս մղեալ ընկճեաց զնոսա:

Քանզի գաւառն Պրովինկիա[1] որ մարզ

1 Provence. Փրովինչիա ի Բարբառս Հռով-

կացեալ էր պետութեանն Հռովմայ, փոխանակ զի կուսակից գոյր Մարիոսի ազատարարին իւրոյ ի Կիմբրացւոյն արշաւանաց՝ ի Սիղղայեանց անուն ծանր ծանր հարիւք տագնապէր. իսկ այլ գաւառք աշխարհին ներքին գժտութեամբք երադէին զկորուսեալ իւրեանց:

Աւերնացիք և Սեկուանացիք վասն իշխանութեան մարտ ընդ Եդուացիս եդեալ, ի թիկունս օգնականութեան կոչեցին զԱրիովիստ արքայ Սուեւաց: Արիովիստ ընկձեալ զԵդուացիս, դարձոյց զղէնսն ի վերայ նիզակակցացն իւրոց Սեկուանացւոց: Ածապարեալ սոցա խառնեցան ընդ հակառակորդս իւրեանց ընդ Եդուացիս ընդդեմ բռնաւորին Արիովիստայ. այլ կրկին անգամ պարտեալ յերեսաց նորա, կէսք ի Հռովմայեցիս, և կէսք ի Հելուետիացին գիմեալ անկան: Ընդ լուր կոչոյն Հելուետիացիք յօժարակամ յաւեր և յապականութիւն թողեալ լքեալ զաշխարհն իւրեանց, երեքհարիւր վաթսուն և ութ հազար մարդիկ խաղացին գնացին ի Գաղղիա: Սակայն կեսարու որ հիւպատոսն էր յայնժամ ի Պրովինկիա՝ ածապարեալ, խորտակեաց զբարբարոսան և դարձոյց զ-

մայեցւոց գաւառ լոի, և ի ծովեզերեայն էր նոցա վճարչ պետութեանն գաւառս ասել փերոնեան, զոյն յորջորջեաւ և այս մասն աշխարհին Գաղղիոյ ընկալեալ Փրովինչիա կամ Փրովանս կոչեցաւ:

նոսա անդրէն յերկիր խրեանց . և անտի
խաղաց ՚ի վերայ Արիովիստոսայ , որ բազմու-
թեամբ գերմանացւոց աւերէր զԳաղղիա .
եհար և զնա օգնականութեամբ բնակչաց
երկրին և հալածական տարաւ մինչև յեր-
կիրն նորա : Սակայն ոչինչ նուազ քան զը-
խուժան ահագին էր Գաղղիոյ Հռովմայե-
ցին . վասն որոյ գրգռեցան ժողովեցան
անդէն Բելգիացիք արք երեքհարիւր հա-
զար ընդդէմ կեսարու . այլ ձարտարու-
թեամբ Հռովմայեցւոյն և գաւաճանու-
թեամբ ոմանց խորտակեցան ՚ի սպառ , և
տակաւ եմուտ Գաղղիա ընդ լծով Հռով-
մայեցւոց :

Յուվենս խրթով խստութեամբն ցածու-
ցեալ զանդուլ ապստամբութիւնս նոցա ,
ապա ՚ի քաղցրութիւն փոխեցաւ և թեթևա-
ցոյց զլուծ ծառայութեան նոցին , և զհարկն
կարգեալ՝ փոխեաց ՚ի ոսկիկ զինուորա-
կան : Եւ վտահացեալ ՚ի քաջութիւն նո-
ցա ՚ի կատարումն փառասէր խորհրդոցն ,
խառնեաց ՚ի լեգէոնս իւր զընտիր ընտիրս
՚ի նոցանէ , յաղթանակեաց նոքօք ՚ի վերայ
Հռովմայ , և իբր ՚ի վարձ փոխարինի ճո-
խացոյց զնոսա մեծութեամբ և փառօք , և
համարձակ արար նոցա վերադառնել ՚ի բարձ
անգամ աւազութեան պինդկիտոսին :

Օգոստոս կայսր և յաջորդք նորա բա-
զում զինուորական գաղթականս հաստա-
տեցին ՚ի Գաղղիա , և Լուգդոն , որ և Լիոն
քաղաք , եղև աթոռ իշխանութեանն Հռով-
մայեցւոց : Եւ Գաղղիացիք բազում ան-

դամ ապստամբեալք ընկալան ապա զքաղաքաբանութիւն և զկրօնս հռոմայեցւոց. և միայն Դրուիդացն կրօն եկաց մնաց անփոփոխ, և հալածեալ ի կայսերաց ամփոփեցաւ ի կղզին Բրիտանիոյ:

Գաղղիացիք օր ըստ օրէ ի քաղաքականութիւն ենթակայեալ, զարդացան յարուեստս երկրագործութեան և վաճառականութեան և ի հանդէսս պերճախօսութեան: Յոլով ի քաղաքաց նոցա, ընդ որս և Արելատ (Արլ), Լուգդոն, Մասսիլիա և Նիմ ծաղկեցան յոյժ յոյժ. և գտանին իսկ ի քաղաքս յայսոսիկ, որպէս և յայլ գաւառս, հոյակապ ջրանցք և թատերք և այլ ևս յիշատակարանք հռոմէական ճարտարապետութեան:

Առ Օգոստեաւ բաժանեցաւ Գաղղիա ի չորս մեծամեծ մասունս. ի Բելգիա, ի Լուգդոնեան Գաղղիա կամ ի Կելտս, յԱկուիտանիա, և ի Նարբոնեան Գաղղիա: Այս նահանգք մեծամեծք բաշխեցան յեօթն և տասն գաւառս, և մի մի իշխանք հռոմայեցիք նստէին ի նոսա. և գաւառքն դարձեալ բաժանէին ի բազում վիճակս ընդ իշխանութեամբ ծերակուտին՝ որ յաղնուականաց ազգին գումարէր, և քաղաք իւրաքանչիւր ունէր իւր ազատ վարչիչս ի տանուտեարց աշխարհին: Յողովուրդ Գաղղիոյ առ հասարակ ի կրկին դասս բաժանէր, յազատս և ի ստրուկս. տանուտեարք կամ կալուածոց տէրք և արուեստաւորք ազատք էին, և մեծ մասն

ժողովրդեանն որ յերկրագործութիւն պատրաստէր՝ ի սորուկս համարեալ էր :

Ի սկզբան անգ ազատ վարչութիւն քաղաքաց և ծաղկել երկրագործութեան բաղում բարեաց լինէին պատճառք, և ժամանակս ինչ յաջողեաց Գաղղիացւոց բարեբաղդս լինել ընդ տէրութեամբ Հռովմայ : Այլ երբև պետութիւնն հռովմէական երթայր և անկանէր, և ոչ ևս օրինօք լինէր ինքնակալացն յաջորդութիւն, զորքն ցրուեալք ի գաւառս գաւառս՝ բազում այն էր զի ձեռներէց լինէին ընտրել իւրեանց ինքնակալ զոք. իսկ ի քաղաքական պատերազմունս յաղթականին վիճակէր բաղդ ինքնակալութեան :

Յետ մահուն Ներոնի Գաղղիացիք զկողմն կալան զԳալբայ, ապա ձեռն հասուն Վիտելիոսի : Երբև անկաւ և սա, խորհեցան այլ նուհեւս թօթափել զլուծ Հռովմայեցւոց : Կիվիլիոս ոմն բաւաւացի խրախուսեալ ի գուշակութեանց մեծանուն քրմուհւոյն Վելլեսայ՝ գումարեաց ընդ դրօշս իւրով զհաւաւացիս զազգակիցս իւր և զհեղգիացիս : Յայնժամ ելին քուրմքն ի մայրեացն իւրեանց և աւետեցին ազգին՝ թէ ինքնակալութիւն Գաղղիացւոց յաջորդեացէ հռովմէականին, և տարածեցաւ խառն ասպատամբութեան ընդ աշխարհն ոչ յոյն. այլ ապա ի ձեռն նոցին իսկ Գաղղիացւոց ցածեաւ ի սպառ, և ձերբակալ եղեն Վելլեսա և Կիվիլիոս :

Դէպք նշանաւորք են և որ զՅաբինոսէ

ումեմնէ աւանդին և զկնոջէ նորա : Յուլիոս Սաբինոս այր գաղղիացի ազգաւ , յաւուրս խռովութեան Վիտելիոսի ամբարձ զձեռն իւր ինքնակալել ՚ի Գաղղիա . և ՚ի պարտութենէն մասնեալ յերեսաց զօրացն Վեսպասիանոսի հրձիգ արար զտունն իւր, և ինքն չոգաւ Թագեաւ ՚ի սաորերկրեայ ինչ վայրս : Եփոնինա կին նորա կարծիս ՚ի մոխ եդեալ Թէ հրկէզ լեալ էցէ այրն ընդ տանն՝ առ ցաւոց սրտին կամէր դեղամահ լինել . այլ Սաբինոս աճապարեալ ծանոյց կնոջն Թէ կենդանի է : Ընդ որ Թէպէտ և խնդաց յոյժ Եփոնինա , այլ լաւ համարեալ կեղծել միշտ զայրութիւն և զողբս անմխիթար , գալաւ ՚ի գիշերի երթայր առ այր իւր : Ա յսպէս եկաց Սաբինոս ՚ի Թագաւոր զամս տասն յերեսաց խնդրակաց Վեսպասիանոսի . այլ յետ տասն ամաց ոչ զնոյն զգուշութիւն պահեալ՝ մատնեցաւ կնաւն հանդերձ և որդւովք ՚ի ձեռս կայսեր : Անկան մանկունքն յոտս ինքնակալին աղերս արկանել վասն ազատութեան կենաց ծնողացն . և կայսրն խանդաղատեալ ՚ի գութ ապստոյն եղեաց . այլ զի քրէական էին յանցանքն , հրամայեաց անդէն ՚ի մահ վարել զՍաբինոս : Անդ Եփոնինա յառաջ մատեաւ քաջութեամբ և խնդրեաց յինքնակալէն զի և ՚ի մահուն անբաժան կացցէ յամուսնոյն , և ընթացաւ ՚ի մահ : Յետ մահու նոցին հրամայեաց կայսրն յաղքատս դարմանել զմանկունս նոցա :

Յետ այնորիկ զամս երեքհարիւր ասպա-

րեզ անընդհատ պատերազմաց եղև Գազ
ղիա, և զօրավարք յափշտակել յիւրեանց
գկայսերութիւնն ջանային. որով ժողո-
վուրդն հարատահարեալ ի բռնաւորաց և
ընդ ծանր ծանր հարկիք տուայտեալ ապ-
քառացան յոյժ. քաղաքն նոցա աւերեցան
և անգստանիք յատականուելիւն եգան առ
ի ջգոյէ մշակաց, և ոչ ևս էր ի միջի տուր-
ևառիկ շահուց վաճառականութիւն. և
այնուհետև բազումք յաշնուականաց մարդ-
կանէ ի տարկութիւն գրեցան առ ի զեր-
ծանելոյ ի հարատահարութենէ հարկաց:
Օր քան զօր առաւելեալ թշուառութեանն,
գրգռեաց զատուկս յատստամբութիւն,
որք ի վախճան երկոտգի գարուն ի զէն
գիմեալ հրձիգ տրարին զբազում քաղաքս
և զգիւղօրէս: Ընկճեաց, հնազանդեցոյց
զնոսա Մաքսիմիանոս կայսր, այլ ոչ այնու
ի լատագոյն ինչ փոխեցաւ բազդ Գաղղիոյ.
զի և պետութիւն չառավելեցոյց անդէն
մերձ յանկումն իւր ծանրանայր յոյժ ի վե-
րայ հպատակացն իւրոց:

Քաղաքական ինչ յեղափոխութիւն մեծ՝
մօտալուտ ի վերայ հասեալ կայր կերպա-
րանափոխ առնել զաշխարհ. այն իսկ էր
քրիստոնական կրօնիցս ծաւալումն. զի մէկ
պէտ և ջնջել զայն յերկրէ ձգնէին կայ-
սերք, այլ նա տարածէր ծաւալէր ընդ ա-
ռնոյն ամէնեսին ի միջի անդ դառն հալա-
ծանաց. բազինք կուռց կործանեցան առա-
ջի նորա, և մեռեալ ոչ ուրեք այնպէս հաս
տատմամբ հիմնեալ՝ փառաւորեցաւ քրիստո

նէութիւն պատուական վկայիւք Բրիատոսի որպէս ի Գաղղիա 1։

Մեծն Կոստանդիանոս և յաջորդք նորա ընկալեալ զքրիստոսական հաւատս, և ոչ այնու ինչ կարող եղեն զերծուցին բարուց հռովմէական ժողովրդեանն ածել յուղղութիւն, հաստատեալ զնոսա յօրինս քրիստոնէութեան և վայելել ի շնորհս բազմաշահ օգտից նորին։ Նորոց աշխարհի պէտք էին գոգցես ի հրաշալի կառավարութիւն իրացս, և նորոց ժողովրդոց։ Եւ յարոյց Աստուած ժողովուրդ նոր ի կառավարութիւն նորհրդոց իւրոց. երագեաց զկործանութիւն պետութեան Հռովմայ՝ որ ինքնին իսկ դիմէր ի նոյն՝ քաղաքական պատերազմօք, և վատութեամբն, և մեղկ և ապականեալ բարուք։

1 Թէ երբ և յորմէ ժամանակի սկիզբն հաստատութեան քրիստոսական հաւատոյ ի Գաղղիա, չէ ինձ յայտնապոյն։ Ասանդ է աշխարհին՝ երկեր յերկրորդ ամի սկսեալ խալեղութեան երկրին Գաղղիոս Բարբիկան Տէառն հանդերձ երբեմն Մարիայիւ և Մարթայով, և առաքեն Մատթիոս ի յերօնանաւանէ և այլ ոմանք արկեալ ի ծով ի հրեից՝ եկին սփանէլէօք ի Մասսիլիա, և քարոզեցին զհաստատութիւն քրիստոսի։ Այս ինչ յայտնի է, զի յերկրորդի դարուն առաքեն Փոքիոս աշակերտ Պողիկարպոսի հաստատեցեալ ոմամբք եկեալ ի Լուգդուն Գաղղիացւոց, եղև առաջին եպիսկոպոս քաղաքին. և առ յաջորդս նորա առ մեծաւն Երանոսիւ քարոզեցաւ յոյժ քրիստոնէութիւն։

Ոանակոխ եղև խուժադուժ ազգաց, և եկեղեցին միայն անասան եկաց ի բուռն յարձակմանէ նոցա, զորս երբեմն և նուա-ձեալոց իսկ էր ընդ իւրև:

ԳԼՈՒԽ Գ.

Աշխատանք խուժադուժիւ, և կործանումն հռովմայեցւոյ արևմտեան կայսերութեան:

406 – 476.

ՈՐՔ ի հիւսիսոյ գիմեցին բարբարոսք ի կործանումն հռովմայեցւոյ, յերկիս գվնասաւոր ազգս զատանէին. ի Գերմանացիս, ի Գոթացիս և ի Սկիւթացիս. և մէն մի ի նոցանէ բաժանէր ի բազում ժողովուրդս: Գերմանացւոցն ազգ մեծաւորապոյն էր և սահմանակից Գաղղիոյ, և ժողովուրդք ի նմա գլխաւորք՝ Փրանկք էին և Բուրգոնտեանք, Ալամանք և Սաքսոնք: Փրանկքն, ընդ որս միացեալ էին նախնի ժողովուրդք Սիկամբրացւոց, բնակէին յայնկոյս Հռենոսի, սկսեալ ի Մենայ մինչև ցծովք և անուանիք էին նոքա, և ի բազում ազատ իշխանութիւնս բաժանէին, և առաջինք ի նոսա Սալեան Փրանկք և Ռիփուէրքն: Բուրգոնտեանք ի նոյն կողմն Հռենոսի բնակէին յոր և Փրանկքն, այլ սոքա ի Մենայ ցԲասիլեա: Իսկ Ալամանք բնակէին հա-

մասիւբա 'ի Հեբրեահա, և Սաքսոնք յա-
փուշնա Ովկիանու 'ի հիւսիսակողմանս Գեր-
մանիոյ ընդ մէջ Օտեր և Վեզէր գետոցն:
Գոթացւոցն ազգ բաժանէր յայլևայլ ցեղս,
'ի Վանդալս, և 'ի բնակիչս գետափանցն
Դանուբայ՝ Յոստրոգոթս, 'ի Վիսիգոթս և
'ի Կեփիտեանս: Իսկ Ալանք և Հոնք՝ ազգք
Սկիւթիոյ՝ ունէին զԵւքսինեանն Պոնտոս:

Ի ժողովրդոց սոսի բազումք, բնակիչք
հիւսիսոյ և հարաւոյ, ձգեալք 'ի քաղցրու-
թենէ օդոց և յառատութենէ արգասեաց
գաւառացն պետութեան Հռովմայ՝ խուժե-
ցին ի յԻլլին անդր. և ժամանակս ոչ սակաւ զկայ
առին 'ի սահմանապլուխս պետութեան. այլ
քանզի դեռ ևս հզօրք էին Հռոմք, վանեցին
զնոսա 'ի հարուածս սաստիկս: Ընդհրաժեշտ
հարկ 'ի վերայ կայր նոցա պահել զբազմու-
թիւն զօրաց 'ի ծայրս սահմանաց աշխարհին
'ի դէպս իսկ ապստամբութեանց և քաղա-
քական կռուոց, յորս ակամայ իսկ խմբէին
զօրք 'ի ներքս աշխարհին: Ա յապէս բազում
անգամ բացան Թուրքք պետութեան առա-
ջի հեղեղօրէն արշաւանաց բարբարոսաց,
և յորով ուրեք սոսկացաւ Հռոմ գաշինս
կռել ընդ խուժան, և զբէնս օգնականու-
թեան նոցա 'ի հատուցումն իւր վարել:
Իբրև սանձարձակ անիշխանութիւն տիրեալ
ունէր 'ի պետութեանն, պակասեալ խիժիցն
կարևորն ուժիկ, յարձակեցան յաւարն
առնուլ զքաղաքս. վայրապար յայնժամ
խոնարհէր Հռոմ առաջի բազմութեան
վայրագ ամբոխին՝ հարկատու նոցին լինել,

և յետ ուրեք ուրեք յաջողութեանց զինուց ընկճէր ընդ նոքօք ի սպառ։

Յամին չորեքարիւրորդի վեցերորդի յարձակեցան Վանդալք ի Գաղղիա, և անտի մինչև ցամին 476 Թագաւոր ոմն ի խժից արկ յաթոռոյ զվերջինն ի կայսերս Արեւմտեան պետութեան. և յաւուրսն յայնոսիկ սպառ էր պատերազմաց Իտալիա և Գաղղիա. կոտորածք զկոտորածս մղէին, և յամենուստեք աւեր և քանդմունս էր տեսանել. ժողովուրդք առաւել քան զքան ցանգ պատերազմաւք ընդ իրեարս՝ ի ձեռաց միմեանց զաշխարհն յափշտակել չնային։ Հալածական լեալ Վանդալք յերբեմն Գաղղիացւոց անցին ի Սպանիա և անտի խուժեցին յԱֆրիկէ առաջնորդութեամբ Գենսերիկոսի։ Իսկ Վիսիգոթք ընդ քաջին Ալարիկոսի կալան զՀռոմ և յաւարի առին. ապա դաշինս խաղաղութեան ընդ Ննորիոսի եդեալ, Թողին զԻտալիա, և անցեալ բնակեցան ի Գաղղիա։

Զայսու ժամանակաւ Թօթափեաց զլուծ ծառայութեան Հռոմայեցւոց մեծն Բրիտանիա. նշխարեցին զնոսա և արեւմտեան գաւառք Գաղղիոյ Արմորիկեանքն անուանեալք։ Ուր ուրեմն յամին 420 Փրանկք ընդ առաջնորդութեամբ Փարամոնտայ անցին ընդ Հռէնոս և կալան զՏրեւս. յորում ժամանակի տարածանէին և Բուրգոնտեանք զձեռն իշխանութեան իւրեանց յափանց անտի Հռէնոսի մինչև ցսահմանս Ալպեանց։

Ինքնակալէր յայնժամ յարևմուտս կենդանարդին Վաղենտիանոս, ամրացեալ ի Հռաւենննա, և Աչեոիոս սպարապետ էր զօրուն: Վերջին եկաց սա ի քաջ զօրավարս Հռոմայեցւոց. զի ի միում անդ ժամանակի մարտս մղէր ընդ Արմորիկեանս, ընդ Փրանկս, ընդ Վիսիգոթս և ընդ Բուրգոնտեանս. և ահա նոր ազգք խժից ի վեր երևեցան: Հոնք ժողովուրդք Սկիւթիոյ խժադոյնք և անգութք քան զամենայն հիւսիսականս, ելին յափոնց Պոնտոսի, և առաջնորդեալք Ատտիղայ անթիւ բազմութեամբ հեղեղեցին զԳաղղիա. հրոյ եառուն Հարակ, ապականեցին զաշխարհն մինչև ցԱբրեղիոն, և զերծաւ ի սպառնալեաց նոցա Լուտեթիա (Փարիզ) աղօթիւք սրբուհւոյն Ժենովեեայ 1: Զատեղի Հառ Ատտիղաս ի դաշտին Շալօն առաջի քաղքին Աչեոիոսի և Թէոդորիկոսի արքային Վիսիգոթաց. մղեցաւ անդ մարտ, և չարաչար խորտակեալ խռուժն հազիւ Հոդը

1 Սուրբ օրիորդն ԺԷնովիէվ ծնաւ ի Նանթ յամի 422, և խրատուած սրբոյն Գերմանոսի Աւտէրացւոյ ոսկեքեալ պիտաւորիճն, հոգ անոյշ եղև սրբութեամբ վարուց, ճգնութեամբ, աղօթիւք և սիրովն Աստուծոյ: Պատուեաց զնա յոյժ և կարվիս արքայ, և խորհրդով նորա կառոյց պատճառ սրբոյ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որ պինի ամաց կոչեցաւ յանուն սրբուհւոյն՝ Սուրբ ԺԷնովիէվ. ուր և ննջեցաւ սրբուհին, և ընդ նորա բազում հրաշիւք սքանչելեաց պատուեցաւ ի Փրանկաց:

ՀԱՅԿ ՍԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՒ
ՏՈՒՆ ԱՄՍՈՑՍԻ ՀԱՅԳԱՅԱՆ
A/1891

պրեաց զանձն ի սպառ ջախջախանաց: Նի-
զակակից էր Այետիոսի ի պատերազմին և
Մերովէ Թագաւոր Փրանկաց որդի Կղոդիո-
նի, Թոռն Փարամոնտայ. որ և բազում ա-
րուեստիւք եւթող անուն անմահ ի տոհմի
իւրում:

Ընդ Այետիոսի, զոր ինքնին ձեռամբ
իւրով սպան կայսրն, մեռաւ և ակնկալու-
թիւն պետութեանն. երթայր այնուհետև
և անկանէր նա ընդ վատ և ընդ կնամար-
դի կայսերաց, մինչև ցամին 476. յորում
Ոդոագր զօրավար Հերուլացւոց կալաւ զՀռո-
մի, և էարկ յանթոռոյն զՕգոստու-
ղոս՝ զվերջինն յինքնակալս արեւմտից. և հը-
նազանդեցաւ Իտալիա ընդ ձեռամբ նորա:
Իսկ Գաղղիա լարաբաժին էր յայնժամ ի
ձէջ Վիսիգոթաց, Արմորիկեանց, Բուր-
գոնտեանց, Սալեան Փրանկաց և Հռոմայե-
ցւոց, որք ընդ իշխանութեամբ Սիակրիո-
սի ունէին գեռ ևս զմնան ինչ Բելգեան
Գաղղիոյ:

Ա՛ս սովիմբ արշաւեցին Անգղիացիք և
Սաքսոնք ի մեծն Բրիտանիա և կալան զաշ-
խարհն. ի տոցանէ փախուցեալ բազմաց ի
Բրետոնաց անցին ի Գաղղիա, և բնակեցան
յարևմտակողմն Արմորիկեան գաւառաց,
կոչեցեալ զերկիրն յիւրեանց անուն Բրի-
տանիա կամ Պրեդայն: Սակս և ցեղ ինչ
ի Սաքսոնաց հալածեալ ի Գերմանիոյ մտին
ի Գաղղիա, և զահեղ կալան ի տարրինն Նոր-
մանտիա, և միւս այլ ցեղ գաղթականու-
թեամբ անցեալ բնակեաց ի Մէն և յԱնժու:

Ա յս կացք էին ահա Գաղղիոյ յորժամ Կղոդովիկ կամ Կլովիս 1 որդի Փիլեբիկոսի և Թոռն Մերովիկեայ կամ Մերովեայ առաջաւոր յաթոռ Թագաւորութեան Փրանկաց: Այլ չև սկիզբն արարեալ պատմութեան Թագաւորութեանն Կլովիսայ, այն որ հիմնադիր եղև արքայութեան Փրանկաց և նախահաւր Թագաւորացն՝ որ զվիմեանց կինն մինչև ցաւուրս մեր ունէին զգահ պետութեան Գաղղիոյ, խօսեացուք սակաւուք զծագմանէ ազգին Փրանկաց և զարշաւանաց նոցա և զնախակին Թագաւորաց: Քանզի անպատեհ մեզ Թուի ի տալ զհամառօտագիծ և զՀշդրիտ պատկեր Եւրոպայ առ կործանմամբ պետութեանն Հռովմայ, և ի խօսել զազգացն բարբարոսաց որ ընդ գաւառս գաւառս Եւրոպայ սփռեալք, և մանաւանդ ի

1 Ա՛ռ բարբարոս ազին՝, բազում այն է ւէի առնուանք արանց և կանանց ցուցանէն զնոցա զառանձին ինչ յիւրս բնութեան. օրինակի վասն Մերովէի կամ Մերուի սպասգաբանի առնուա՝ ձեզ պատերազմող. կերտելք կամ կերտելք նշանակէ՝ ձեզանուն օրիորդ: Դարձեալ անուանք բարբարոսացն ըստ ձեզի մասին խիստ գոլով և դժուարին ի հնչել, յաճախ առընթութեամբ ճոխեալ է ի հնչիւն ձայնիւ և ախորժալուր. զոր օրինակ Մերովէի՝ ի Մերովէ ճոխեալ. Կղոդուիկ կամ Կլուդովէի՝ ի Կլովիս. Պրունհելք՝ ի Պրունհոյ. Թէոդորէի՝ ի Թէոդրէ. Կոնպպալք՝ ի Կոնպեպոյ. Կարլոս կամ Վարլ՝ ի Շարլ. Լէոպոլդ՝ ի Լէոպէր. Հոդոլֆ՝ ի Ռոդոլ. Աւրէի՝ ի Աւրէլի կամ Աւրէլիոս:

Գաղղիա կալեալ զբնակութիւն, այսպէս համառօտս անցանել զծագմանէ ազգին՝ զոր մէ առեալս եմ՝ ի պատմել:

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ուստի՛ ազգն Փրանկաց, և որչա՞փ նոցա և ի՞նչ եմէջն կլովիս:

Ամանի համարեցան՝ ի Հեկտորէ որդւոյ Պրիամու արքային Տրովադայ սերեալ զազգըն Փրանկաց. քանզի զՓրանկ ունն անուն յորդւոց Հեկտորի անցեալ ասեն՝ ի Գերմանիա և լեալ նախահայր Փրանկաց. այլ նոքին իսկ խոստովանին գոլ զայս անհիմն և գիւտ կեղծեաց առ աղնուացուցանել զբնկիզբն ազգին: Ալլք կարծեցին զնոսա հաստուածս՝ ի գաղթականացն նախնի Գաղատացն և Կիմբրացն. սակայն և սոքա չունին իբրեւանցն կարծեաց հիմն հաստատուածեան: Վասն որոյ հաւանականագոյն Թուի սերել Փրանկաց՝ ի ցեղից անտի Թեւտոնեանց՝ որք առ հասարակ Գերմանացիք անուանակոչէին, այլ՝ ի բազում յայլ և՝ այլ ժողովուրդս բաժանեալ, ի Սիկամբրացիս, ի Բրուկտերս, ի Փրիզացիս, ի Սալեանս, ի Կամավացիս և ի Կօշս: Եւ կէսք ի ժողովըրդոցս յայսցանէ առաջնորդութեամբ Սիկամբրացւոց և Սալեանց միաբանեցին

դաշնակցութեամբ իբրև 'ի մի ժողովուրդ՝ պաշտպանել ազատութեան իւրեանց ընդդէմ հռովմէական զինուց. և ասէն առին իւրեանց զանունն Փրանկ, որ ազատ լսի: Թէպէտ ժամանակ դաշնակցութեան նոցա չէ ինչ յայտ, այլ մարթիմք կարծել զայն յաւուրս Թագաւորութեան Կոմոդոսի և Պերտինաքսայ, յորում ժամանակի երթայր և խոնարհէր զօրութիւն զինուցն Հռովմայ:

Վայրագ և անընկճելի էր ազգս այս 'ի խաղաղութեան՝ յորս պարապէալք, և 'ի պատերազմի յաւար և յասպատակութիւն 'ի գաւառս Թշնամեաց, որպէսզի զհանճար իւրեանց և զկորով 'ի հմտութիւն մարտի: Զքաջս և զյանդգուն ընտրէին իւրեանց յառաջնորդս. զսէր ազատութեան քան զամենայն ինչ 'ի վեր դասեալ համարձակ գային 'ի ապանութիւնս և 'ի գողութիւնս: Կռապարիշտք էին նոքա, այլ ոչ իբրև զՅոյնս և զՀռովմայեցիս. և պաշտէին զաստեղս և զտարերս և զայլ և այլ դիւոչեաս, դնէին աստուածս բարիս և չարս, և մարդապուհս իսկ երբեմն առնէին չարացն աստուածոց. քաջմք նոցա մոգք էին, և մեհեանքն անաստառք խաւարինք և անձաւք մեծամեծք:

Ցեղից իւրաքանչիւր էր առանձին թագաւոր, զոր ընտրութեամբ հաստատէին մինչև ցմահ. այլ կէսք զքաջս ընտրէին և զարիագոյնս, և կէսք զաղնուականս և զընչեղս:

Չէնք էին նոցա ազգ ինչ կացնոյ և դեղարդն և պարսատիկ. վահանք նոցա յո-

ունուց էին կամ ՚ի կեղևոյ ծառոց, և լան-
ջասանակ զրահից պատեալ մորթովք գա-
զանաց. էին ոմանց ՚ի զօրականէն և սաղա-
ւարտք, ցցուն յապեաց ձիոց վերբերելով:

Վասն առաջին արշաւանաց նոցա չու-
նիմք ինչ տեղեկագոյնս տալ. այսչափ ինչ
գիտեմք զի սկսեալ յամէ անտի երկերիւ-
րօրդէ քառասնորդէ առաջնոյ խլրտեցան
ելին ՚ի տեղեաց բնակութենէ իւրեանց յաս-
պատակութիւն գաւառաց պետութեանն
Հռովմայ. թէպէտ խորտակեալ հալածէին
՚ի կայսերաց, այլ կրկին անգէն ՚ի նոյն գաւ-
նային: Կոստանդին Քլորոս և Մաքսիմիա-
նոս ընդ երկար պատերազմեալ չկարացին
ինչ ընկճել զազգն խրոխտ. այլ ապա զհետ
եկեալ Մեծն Կոստանդիանոս եհար զնոսա
՚ի հարուածս սաստիկս և ձերբակալ արար
զթագաւորս նոցա զԱքաբրիք և զՀոռակէզ և
մատնեաց զնոսա գազանաց ՚ի Տրեւս քաղա-
քի: Այլ առ յաջորդաւ Մեծին Կոստան-
դիանոսի գարձեալ դլուխ ամբարձեալ
Փրանկաց, փառօք գաշինս խաղաղութեան
կռեցին ընդ ինքնակալին Կոստասայ՝ նիզա-
կակից և բարեկամ նմին լինել: Այլ ընդ
հուսկ ապստամբութեամբն Մագնենտիոսի,
որ էր յազգէ Փրանկաց, խռովեցաւ խաղա-
ղութիւնն. և զկնի մահու բռնաւորին յար-
ձակեալ Փրանկաց ՚ի Գաղղիա, քաղաքս
քառասուն և հինգ մեծամեծս յապակա-
նութիւն եդին, մինչև ՚ի վերայ հասեալ
Յուլիանոսի հալածական տարաւ զնոսա ՚ի
Գերմանիա:

Յետ այնորիկ չկան ինչ զոյգք ի վեպս զարշաւանաց Փրանկաց, այլ յիշատակին առանձին իշխանք նոցա որք առ ինքնակալքն Յառայելին պետութեան, որպիսիք ոմանք էին Մելլոպաւտոս, Արպոկաստոս, Սիղոխանոս, Պաւտոն, Մերոպաւտոս: Եւ այս մինչև ցամն 420, յորում Թագաւորեալ ասի Փարամոնտ և ասպատակաւ մըտեալ ի Գաղղիա. այլ զտորա Թագաւորութիւն ընդ առաստաբար համարին ոմանք, և զայն իսկ Թէ Փարամոնտ ոք անուն կացեալ իցէ յաշխարհի: Այլ այն յայտ իսկ է զի Կղոդիոն՝ այն որ Հերապանծն կոչեցաւ, Թագաւորեաց Փրանկաց, Թէպէտ Սալեանց միայն, որ և ութերեաց գաւառացն որ ընդ մէջ Հռենոսի և Սոմմայ: Զառաջինն խորտակեալ յերեսաց Ասէտիոսի հալածեցաւ ի գաւառէն. այլ ապա յաւելեալ ի գաշնակիցս պետութեան՝ կալաւ զմասն ինչ աշխարհին:

Յաջորդեաց զկղոդիոն Մերովէ, որ և Մերովիկ. և քաջութեամբ նահատակեալ ի պատերազմին ընդդէմ Ատտիլայ ի Շալոն, եթող յազգի իւրում անուն փառաւոր: Իսկ Քլաեբիկոս որդի Մերովեայ պայազատեալ զհայրն, և անմասն հայրենականացն առաքինութեանց, վասն պանդոյր շնաբարոյ գնացից հալածեցաւ յիւրմէ անտի ժողովրդենէն, որք առ Եգիտիոս զօրավար հռոմայեցի ապաւինեցան ազատել զինքեանս ի ձեռաց բռնաւորին: Այլ դարձեալ մերժեալ զօտարն, կոչեցին Փրանկք

զբնիկն Իւրեանց Թագաւոր զՔրիզերիկա՝ որ ապաշաւեալ էր ընդ առաջին գնացան։ Եւ Քրիզերիկեայ էղև որդի Մեծն Կլովիս, որ էղև հիմնադիր Թագաւորութեան Փրանկաց և նախահաւ Թագաւորաց նոցա, որպէս ասացաք։

ՏՈՀՄ ԲՈՒԺԱՆԻՆ

ՄԵՐՈՎՔԵՄՆԻՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԼՎԻՈՆ Ա. ԱՀԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ ՆՈՐԱ ԵՒ ԳԱՂՏ Ի ԵՐԻՒՍՂԷՄԱՅԻ ԿՐՕՆԱ:

481 – 496.

ԻՐՐԵՒ ամբարձաւ Կլովիս ի գահ Թագաւորութեան Փրանկաց, զեռ ևս յանձուկ գաւառի ամփոփեալ էր տէրութիւն նոցա, բաժանեալ զաշխարհն չիւրեանս Բուրգունեանք, Վիսիգոթք և Հռովմայեցիք: Քանզի Բուրգունեանք ունէին զգաւառս որ ընդ միջ Սաւնիոյ, Հռոդանոսի և Ալպեանցն. Վիսիգոթք զհարաւայինն Գալղիա՝ սկսեալ ի Լուարայ գետոյ մինչև ցՊիրենեեանս. իսկ Հռովմայեցւոցն իշխանութիւն ձգէր ի գետոյն Հռենոսէ մինչև ցԼուար և ցՈվկիան:

Մինչդեռ այս իրք էին ի Գալղիա, Կլովիս առաւելեալ ի քաջութեան քան զնախ-

նիա իւր վառէր յաչխոյժս պատերազմանս, և ի սկզբանէ անտի Թագաւորութեան իւրոյ մեծամեծ խորհուրդս աշխարհակալութեան երկնէր ի մտի: Եւ ոչ ևս հանգարտել կարացեալ, յամի հինգերորդի արքայութեան իւրոյ մինչդեռ ինքն էրի-տասարդ քառնամեայ էր՝ ժողովեաց զամենայն հասակ բանակն ի զէն, և ձեռն էարկ սկսել ի վերայ գեղեցիկ գեղեցիկ և բազմահարուստ գաւառացն Գաղղիոյ. յորս բազում անգամ ձեռնամուխ եղեալ յաւել քան զնա Թագաւորք փառասիրելք և ոչ յաջողեցան:

Երևելի էր Կլովիս ի գաղտնութիւն խորհրդոց և յարագութիւն արշաւանաց. քանզի յանկարծ չու պատերազմի հրամայէր, և ոչինչ զկայ առեալ ի պաշարուձին առնմանակալ քաղաքաց Թշնամւոյն, խաղայր ի Սուասոն, յիշխանանիստ քաղաք Սիագրիոսի կուսակալին Գաղղիոյ և սպարապետի զօրացն Հռոմոց. չտայր նմա պատրաստ ի զօրաժողով, և գրգռէր զնա ի մարտ պատերազմի: Եւ Հռոմայեցին ըստ սովորական իւրոխա արուեստին, և կամ զի անմարթ էր նմա տևել տոկալ ընդ երկար պաշարման, յանձին կալաւ զպատերազմին, յոր յեցեալ էր բազդ Գաղղիոյ: Իբրև ձակատեցան կարգեցան բանակքն երկոքեան, խոյացաւ Կլովիս ի վերայ Թշնամեաց՝ վառեալ ի սուսեր և ի տապար. խուժեցին և իւրքն զկնի ի գոչիւն ահաւոր: Ի տեսիլ երկայնադէզ, կապուտաչկն, չիկահեր խաժիցն

հակայից, որոց ընչացք Թաւք ծածկէին զե-
րեսս, և վարսք կապեալք ի ցցունս կախէին
ի գագաթանց, և մարմինք մերկանդամք լի
ապեօք, ահաբեկ եղեն Հռովմայեցիք, և ան-
դէն ի բախել մարտին խորտակեալ ի փա-
խուստ գարձան յերեսաց նոցա։ Իսկ Սիա-
գրիոս միաձի ձողսպրեալ անկաւ ի Տոլովա
առ Ալարիկոս Թ Թագաւոր Վիսիգոթաց։
Եբաց Սուասոն զդրունս իւր առաջի յաղ-
թականին. և նուաճեաց Կլովիս բազում
այլ ևս քաղաքս, որք ոչ իշխեցին հակառա-
կել յաղթող զինուց. և այսպէս ի միում
ամի ևհան նա ի Հռովմայեցւոց զամենայն
գաւառս, որք ընդ մէջ Հռենոսի և Լուա-
րայ։

Աստանօր սէգ Փրանկն ոչ անթերի հա-
մարեալով զիւր յաղթութիւն ցորչափ կենդա-
նի էր Սիագրիոս, զօրավար Ճարտար ի զօ-
րաժողով և ի գումարել հակառակ Փրան-
կաց զԹագաւորս դրացիս, պատգամաւոր
եղև առ Ալարիկոս Թագաւոր և խնդրեաց
զնա ի նմանէ, սպառնացեալ դիմել զինուք
յերկիր նորա։ Թէպէտ ծանրացաւուն լի-
նէր Թագաւորն Վիսիգոթաց ընդ խրոխ-
տումն Կլովեայ, այլ երկուցեալ զի մի յան-
պատրաստից ըմբռնեսցի ի պատերազմ,
մատնեաց զՍիագրիոս ի ձեռս նորա։ Եւ
մահուամբ տարաբաղդ զօրավարին բարձաւ
անուն իսկ Հռովմայեցւոց ի Գաղղիոյ (486)։

Կլովիս զբռամբ ածեալ զՀոն և զմարդա-
էս գաւառս աշխարհին, հաստատեաց
սիրեանց բնակութեան զհին բնական, շնոր-

հեալ նոցա զազատութիւն և զտէրութիւն իւրաքանչիւր ազգաց: Կամեցաւ և յիւրոց անտի Փրանկաց նստուցանել՝ ի գահառանն. և օրինակ առեալ՝ ի Բուրգոնտեանց և՝ ի Վիսիգոթաց, բաժանեաց զերկիրն յերիս. զկրկին բաժինս ետ Փրանկաց և զմին եթող նախնի բնակացն:

Եւ զի ոչինչ նուազ ձարտար էր Կլովիս՝ ի տեսչութիւն քան յարուեստ պատերազմի, դիտաց քաջ լեզ քանիօն ևցե երկիւղ նորոց հպատակաց նուաճելոց ընդ լծով խժի և կռապարիչս Թագաւորի, և չանացաւ ըստ կարի քաղցրացուցանել նոցա զլուծն. ամիս վեցաց որչափ մատեր էր զազատութիւն զօրականին, լռեցոյց զյափշտակութիւն գիւղօրէից, և մանաւանդ հնարեր ընդ միտ մատանել եպիսկոպոսաց, որով և սիրելի ժողովրդեան զանձն ընծայել: Քանզի յետ պատերազմին Սուասոնի իբրև բոլոր եբարձ սուրբն Հռեմիգիոս եպիսկոպոսն Հռեմայ վասն արքազան անօթոց իրիք յափշտակելոյ, Կլովիս յոյզ և խնդիր արար և եգիտ զայն առ զօրականի ումեմն, աւարտանան վիճակեալ նմին. այլ յայլմէեցին օրէնք զինուորականք կամաց Թագաւորին, և զինաւորն խրոխտաբոյնս մերժեաց զնդիր նորա: Կեղծեաց Թագոյց Կլովիս զցասումն իւր առ ժամն, և յամին երկրորդի իբրև հանդէս առնէր զօրուն, եգիտ զնժամիտ զօրականն անփոյթ զգինուքն արարեալ. «Ցիշեա գու, ասէ, զանօթն Սուասոնի». և հարեալ տապարաւն՝ էարկ զգլուխ նորա

'ի մարմնոյն յերկիր : Այս գործ պատուհասախս Թէպէտ անագորոյն Թուի մեզ այժմ, այլ յայնժամ արդարութիւն երևեցաւ անաչառ. և 'ի վեր քան զամենայն օրէնս ուսոյց յաղթողաց խնայել 'ի պարտեալսն :

Տիրապետեալ Կլովիայ մեծի մասին Գաղղիոյ, խորհեր Ճահաւոր իւրումն մեծուԹեան ածել զոք օրինորդ 'ի կին. և հարեալ 'ի գեղ Կղոտիլդեայ դստեր Քիլբերիկոսի եղբօր Թագաւորին Բուրգոնտեանց, զոյց քաջ դիտեր 'ի համբաւոյ զառաքինուԹիւն, իննդրեաց զնա 'ի հօրեղբօրէ նորա 'ի Կոնգեբաւդոսէ, և էառ զնա իւր 'ի կինուԹիւն (491) : Թէպէտ յայնքունիս արիանոսաց անեալ օրինորդս այս, սակայն անարատ պահէր զհաւատս ՃշմարտուԹեան զոյգ ընդպրուԹեան վարուց : Սիրեցեալ նա առն իւրում, և մտերիմ նորա յամենայնի, յաջողեցաւ հեռացուցանել զնա 'ի հայրենի անուսիասպաշտ կրօնից և ածել 'ի սէր առաւածպաշտուԹեան, և զսերմանց բարեպաշտուԹեան իւրոյ զարդիւնան յետ ամաց ինչ ժողովէր : Եւ քանզի հարկ էր մեծի և կարևոր գարձի Թագաւորին 'ի հաւատս քրիստոնէուԹեան նպաստս ունել հրաշս սքանչելեաց զուգընԹացս իրացն 'ի վկայուԹիւն հաստատուԹեան ժողովրդեան, Թէ գործ և սա սքանչելեաց ամենակալ հզօր ձեռին Աստուծոյ, և ոչ մարդկեղէն խորհրդով ինչ վճարեալ, այսպէս իմն անօրիներ սեաչուԹիւնն Աստուծոյ :

Ալամանք բնակեալք ընդ մէջ գետոյն

Մէնայ, Հռենոսի և Դանուբայ, մինա-
ցեալ ընդ աշխարհակալութիւն և ընդ մուտ
Փրանկաց ՚ի Գաղղիա, խորհեցան թափել
զայն ՚ի ձեռաց նոցա. և զանտառախիտ և
ջնարուտ զիւրեանց բնակութիւնն՝ փոխել ՚ի
քաղցր և յարգաւանդահող դաշտաւս աշ-
խարհին: Խաղացին գունդ առ գունդ ՚ի պա-
տերազմող ազգէս, և տարածեալ ընդ գա-
շտաւս՝ որ ընդ Մէօզ և ընդ Հռենոս, ըս-
պառնային ոտնակոխ առնել զերկիրն առ
հասարակ: Գաստրաստագոյն և քաջակազմ
գտաւ Կլովիս քան զՍիագրիոս, ժողովեաց
համագունդ զզօրս իւր և եհաս ՚ի վերայ
Թշնամւոյն ՚ի դաշտն Տոլբիակ: Անդին
էր սեպել մարտին ՚ի մէջ երկուց քաջազանց
փառախնդիր և ազատասէր ժողովրդոց:
Զկնի յամառ դիմակալութեան յետս ըն-
կրկեցան Փրանկք. որով առաւել ևս խրա-
խուսեալ Ալամանաց, ՚ի հարուածս սաս-
տիկս փախստեայ զնոսա տանէին առաջի իւ-
րեանց: Ի տագնապ անձկութեան ժամուն՝
յիշեաց Կլովիս զխրատս ամուսնոյ իւրոյ,
աղաղակեաց ՚ի ձայն մեծ. «Աստուած Կղո-
տիլդեայ, հաս ինձ յօգնութիւն. եթէ տա-
ցես ինձ զայս յաղթութիւն, չքինիցի ինձ
այլ Աստուած բայց ՚ի քէն տէր»: Եւ այն
ինչ բանքն ՚ի բերան էին, տեսեալ զիւրան կըր-
կին խրախուսեալս, և ինքնին Կլովիս անգէն
զգեցեալ նոր ինն զօրութիւն կարգեաց որ
զիւրին էին օրինօք մարտի, և խաղաց փոքու
ջոկատիւն ընդգէմ բազմութեան յաղթա-
կան Թշնամւոյն: Եւ մինչդեռ նոքա գիմեալ

ջուրջանակի 'ի մէջ առնուլ զնա գնդաւն հանդերձ փուխային, խոյացաւ Կլովիս 'ի վերայ քաջացն Ալամանաց, և զբազումս անդէն առ եռել սատակեալ ահաբեկ առնէր զնոսա, մինչև ոչ ևս հանդարտեալ նոցա մոլեգին սրոյն՝ խորտակեցան 'ի սպառ. անկաւ և Թագաւորն նոցա ընդ այրընակը զօրուն (496):

Դշխոյն Կղոտիլդէ ընդ լուր չքեղ յաղթութեան առն իւրոյ, որում բաժանորդ էր և ինքն, եկն ընդ առաջ նորա 'ի Հռեմս: Ընդ Կլովիս, կանխեալ հրահանգեալ գալոյ 'ի Տաւատոյս, ընկալաւ զմկրտութիւն 'ի ձեռանէ սրբոյն Հռեմիգիոսի հանդերձ երեք հազար իշխանօք 'ի սպայից զօրուն: Ի մկրտել զնա սրբոյ եպիսկոպոսին, ասէր ցնա. "Խոնարհեցո զգլուխ քո վայրագդ Սիկամբրացի, պաշտեա յայսմհետէ զոր այրէիր, և այրեա զոր պաշտէիրդ":

Առ 'ի տալ համառօտիւ զնկարագիր նորընծայ հաւատացելոցն Քրիստոսի, յաւելումք զգեցոյց զայս: Քանզի երբև առաքեալ եպիսկոպոսն Հռեմիգիոս զբարբարանաց տեառն իւրոյ առաջի նորահնուաք արքայիս, և նկատողեալ զձաղկանս Քրիստոսի, յանկարծ յոտին կանգնեալ Թագաւորն գոչեաց. "Եւ զիարդ չէի ես անդ արիագունդ բանակաւս":

Յետ այսորիկ և ճնացորդաց ժողովրդեանն զհետ օրինակի Թագաւորին գնացեալ, պարծանս համարէին պաշտել զԱստուածն զոր ետ ինքեանց գյաղթութիւն:

Եւ նուաճեաց կլովիս ընդ իւրև զԱլամանս՝ ձգեալ զձեռն իւր անդր քան զՀռենոս, և յաւել ի սերուելիեն իւր և զՊաւարիս: Իսկ յետ տարւոյ մերոյ Արմտիկեանք ինքնակամ անձնատուր եղեն նմա, և Բուրգոնեանք ընդ զինուք նորա խոնարհեալ՝ հարկատու կացին նմա:

ԳԼՈՒԽ Բ.

Յաղթութիւն կլովիսի ընդդէմ արեւմտեան վիզիթոտաց, և փրապէտէլ գաւառաց նորա: — Մահ կլովիսի և բէ որդիսի ոտ էիւց նա Թագաւոր:

496 — 511.

Յաձախութիւնս դեզեցիկ յաղթանակաց կլովեայ յուզեցին զմտախանս Ալարիկոսի Թագաւորին Վիսիգոթաց. և զի չէր խակ մուռացեալ նա զվերոխտ պահանջանս նորա՝ տալ զԱիտգլոս ի ձեռս, վասն որոյ լի ցասմամբ ի բազում ամաց հետէ երկինէր ի մեծ առնուլ զվրէժ նախատանացն. և Թերևս խնդալով խակ ի վերայ Թագաւորութեան իւրոյ յերեսաց արքային Փրանկաց՝ պատրաստեր ի ծածուկ անկանել ի վերայ նորա: Խնացեալ կլովեայ զպատճառս պատրաստութեան Ալարիկոսի, խորհեցաւ կանխել քան զնա ի մարտ պատերազմի. ծանոյց զխորհուրդ իւր զօրացն, և վառեալ զնոսա

ընդդէմ Արիանոսացն, զօրացաւ և ևս օրհ-
նութեամբ և ալօթիւք սրբոյ եպիսկոպոսին
Ղեմիգիոսի : Անկաւ ի չու , էանց ընդ
Լուար գետ , և եկն զկայ էառ առաջի գե-
տոյն Վէննայ, որ ուռուցեալ յորդեալ գայր
գարխ և գարխ : Եւ իբրև յուսահատ ար-
գելեալ մնային անդ Փրանկք , յեղակար-
ծում պահու էլ եղնիկ մի յանտառէն, էանց
ընդ հուն մի գետոյն , ընդ որ խրախուսեալ
անցին և զօրքն : Միեցաւ Կլովիս յերկիր
ոչխրութեան Թշնամւոյն , և տեսեալ Թէ
խուսափէ նա ի պատերազմէն՝ յապակա-
նութիւն էդ զգաւառս նորա :

Վխիդոթք վշտացեալ ընդ տեսիլ աւե-
րած ոչխարին իւրեանց՝ ի տրտունջ լու-
ծանէին ընդդէմ արքային . « Ո՛ տայր մեզ ,
ասէին , առաջնորդ զոք քաջ , և հարկանէաք
վանէաք զԹշնամին » : Իսոր խոցեալ Թագա-
ւորն ընդ այս նախատինս , զայրացաւ յան-
ձին իւր , և յանդուգն անզգուշութեամբ
էած զզօրս իւր ի գաշտն Վոյլէ ընդդէմ
Փրանկաց . եւ նա զաջ Թև բանակին իւրոյ
ի Գաղղիացիս ի գաշնակիցս իւր և զձախն
և զբուն կալաւ ինքն իւրովքն : Իսկ Կլովիս
կարգեր յաջ Թևն զԿլոտերիկոս զաբբայն
Կոլմնիոյ Ռիվուէր Փրանկօքն , զահեակն
տայր ի Կոնդեբաւդոս ի Թագաւորն Բուր-
գոնտեանց , և ի բուն բանակին կայր ինքն
Գաղղիացւովքն և Փրանկօքն իւրովք :
Խառնեցաւ մարտն անհնարին սաստկու-
Թեամբ . Վխիդոթք՝ որ սոխպեցին ածին
զԹագաւորն իւրեանց ի պատերազմ , ոչ

բաւելով կալ ընդդէմ բուռն յարձակման Փրանկաց՝ զոտս արձակեալ փախստեայ գընային: Այլ անդանօր դէպք անակնկալք արգելուին առ ժամն զհարուած կատորածին. քանզի Կլովիս և Ալարիկոս Թագաւորքն երկոքին հանդիպեալ միմեանց՝ ի խառնուրդս մարտին, ծանեան այր զընկեր, խոյացան՝ ի վերայ միմեանց, բախեցան ընդ իրեարս, հարին և հարան. և հզօրագոյն՝ ի վերջ գտեալ Կլովիս և յաջողակ, արկ զախոյեանն իւր յերիվարէն յերկիր, և ուժգին կշռեալ զհարուածն՝ գիտեցաւալ կացոյց յարիւն իւր:

Ի սպառ՝ ի սպուռ բեկան Վիսիգոթք զայն օր. Կլովիս ըստ ժիրաժիր խորհրդոցն, զօրացեալ յաղթութեամբ տարածեաց ըզսահմանս Թագաւորութեան իւրոյ մինչև ցՊորտոյ և ցՏոլոսա (որ է Թուլուզ) և զբռվանդակ գաւառս աէրութեան Վիսիգոթաց՝ ի Գաղղիա էարկ ընդ իւրով Թագաւորութեամբ. և անդր ևս իսկ ձգեալ էր արդեօք զնէնս իւր, եթէ Թէոդորիկոս ալքայն Ոստրոգոթաց՝ որ Թագաւորէրն յայնժամ Իտալիա՝ չէր կրճխիճն ընդ ժէջ անկեալ, հարկանելով զզօրս նորա առ պարսպօք Արեւլատայ: Յամենայն աւուրս Թագաւորութեան իւրոյ՝ ի մի յայս եւեթ նուագ պարտեցաւ Կլովիս՝ ի Թշնամւոյն. սակայն և ոչ այսու ձեռնթափ լինէր՝ ի մեծամեծ խորհրդոցն պիեզերականութեան (507):

Ապաքէն աէր փառաց գիտէ երկրակալս հզօրս տալ աշխարհի, սակայն նոյնպէս և

բռնակալս անիրաւս յարուցանէ յաթոռս։ Կլովեայ էին ընդ իշխանութեամբ Թագաւորք ոմանք հարկատուք նմին, յորոց ոմանք ազգակիցք իսկ էին նորա. այլ ցանկութիւն միահեծան ունելոյ զիշխարհն՝ վարեաց մեզեաց զնա արկանել զնոսա յաթոռոցն. և արար կատարեաց զկամս իւր ի ձեռն եղեռնագործ արիւնրուսուցս մարդկան, և ժանտացեալ նա այսու զիրաւս անուան իւրոյ։ Եւ թէպէտ հաւանականագոյն Թուին բանք ոմանց ի մատենագրաց՝ եթէ Թագաւորքն այնոքիկ հնազանդեալք ընդ ձեռամբ Կլովեայ՝ ի ծածուկ գաւաճանել զնա խորհէին, սակայն այս ինչ հաւաստի է, զի անագորոյն և խժամիտ մարդոյ է զայսօրինակ սպանութիւնս գործել։

Յետ այսորիկ սիրեր Կլովիս յանխնայ ղգանձս իւր ի բարգաւաճանս կրօնից աստուածպաշտութեան. զի թերևս այսու ինչ ի վերին երեսս բարեպաշտելովն՝ սրբեսցէ զկեղտս անուն անարժան գործոցն զոր գործեաց, և ցածուսցէ զյաստուծն երկնից։ Բայց նախատեսչութեան սեառն և արդարութեան նորա վճիռ չեթող նմա ժամանակ հասանելոյ ըղձիցն, և ի քառասներորդ ամի հասակին վճարեաց նա զկեանսն ի Թագաւորեալ-քաղաքն իւրում՝ ի Փարիզ (511)։

Եկաց Կլովիս զօրավար մեծ, օրէնագիր իմաստուն, քաղաքավար հմուտ, ճարտար միջա ի հնարս յաջողութեան բազդին. ընկալաւ Աստուածասաց կայսերէ զպատիւ հիւպատոսութեան, և մեծարանաց անուամբ

կոչեցաւ Օգոստոս, որ ինքնակալաց միոյն պահեալ էր կամ նոցին գահակցաց: Մեծարեաց կլովիս զկրօնն զոր ընտրեաց և մեծարեցաւ ի նմանէ, կոչեցեալ Որդի անդրանիկ եկեղեցւոյ. այլ սակաւ զի ոչ կարաց ի չափու ունել զտարապայման գահասիրութիւնն. որով ի կառապաշտութեան զարմանալի երևեալ յատաքինութիւնս, ի քրիստոնէութեան սոսկաբեր հաճ զփառաւքն և զանմեղութեամբ վարուցն:

ԳԼՈՒԽ Գ.

Թոփաւորութիւն որդւոց Կլովիսայ. արշաւանք նոցա և աշխարհակալութիւնք և անիրաւ սպանութիւնք:

511 – 535.

ԵՒ զի Կլովիս առաջին եկաց թագաւոր և աշխարհակալ ի Գաղղիա, այսու իշխան էղև և միահեծան տէրութեան ժառանգեցուցանելոյ որդւոց իւրոց. ուստի ապա օրէնք եղեն ի Փրանկս ժառանգութեամբ յաջորդութիւն գահուն:

Թէոդորիկոս կամ Թիերրի Ա անդրանիկ նորա կալաւ զընդարձակագոյն մասն տէրութեան զԱւստրասիա, այն է Արևելեան Գաղղիա՝ տարածեալ երկուստեք Հռենոս գետոյ, և զմեծ մասն Ակուիտանիոյ.

և եդ զաթոռ իւր ի Մէս։ Կղեմէմիոս Թագաւորեաց յԱլբելիոն (յՕրլէան)։ Փիլիբերտոս ի փարիզ, և Կղոտարիոս ի Սուասոն։

Ի սկզբան Թագաւորութեանն զարմանալի էր համաշունչ միաբանութիւն նոցա, արգասիք խոհական խորհրդոց մօր իւրեանց սրբուհւոյն Կղոտիլդեայ. այլ ապա իւրաքանչիւր ուրուք զանձին ինդրելով շահ քան զազգասոհմին, ի բազում գործս անիրաւս ձեռն արկին։ Քանզի իբրև հաստատեցան յիշխանութեան իւրեանց չորեքին եղբարք, երիտասարդք աշխոյժք և քաջամարտիկք՝ ածին անդէն միաբան զղէնս իւրեանց ի վերայ Թագաւորացն Թուրինկիոյ, Բուրգոնտիոյ և Վխիգոթաց, որք զկնի պարտութեան Վոյլեայ եգեալ էին զաթոռ Թագաւորութեան իւրեանց ի Նարբոն։ Խոնարհեցան զհետ միմեանց Թագաւորքն առաջի քաջութեան արքայորդւոցն Փրանկաց։ Քանզի եմուտ յանկարծ Թէոդորիկոս նիզակակցութեամբ եղբօր իւրոյ Կղոտալիոսի ի Թուրինկիա, և զՀերմանիբերտոս Թագաւոր երկրին, որ տարածեալ զիշխանութիւն իւր ի վերայ Վարնացւոց և Հերուլացւոց, և յեղբարց իւրոց զմին սպանեալ և զմիւսն տարագրեալ յաշխարհէն, ի խաղաղութեան զանձն կարծէր, սպան զինա նենդութեամբ. ոտնակոխ արար զաշխարհն, և ելից զայն արեամբ բնակչաց, ընդսուր հանեալ զմեծամեծս երկրին և զբազումս ի ժողովրդենէն, և մարզ կացոյց զայն սեպհութեան Փրանկաց։

Եւ յետ այնորիկ երեքին եղբարքն կլոդիմիրոս, Փիլդիբերտոս և Կլոտարիոս յարձակեցան ի վերայ Սիգիսմունդոսի արքային Բուրգոնաիոյ որդւոյ Կոնդեբաւդոսի: Եւ զրկիւռ պատերազմին լինելը կղտակղէ մայր նոցա ի վրէժ քինու տարապարտ մահու հօր իւրոյ և մօր և եղբարցն կոտորելոց ի վայրենաբիտ հօրեղբօրէ իւրմէ ի Կոնդեբաւդոսէ: Սիգիսմունդ ոչ կարացեալ զդէմ ունել Թագաւորացն Փրանկաց՝ փախուցեալ հալածական երթայր առաջի նոցա, և ծըպտեալ ի հանդերձս անապատաւորի Թագոյց զանձն ի մենաստան ուրեք. այլ անտի մատնուեցեալ անկեալ ի ձեռս Կլոդիմիրայ չարամահ կորեաւ, արկեալ ի ջրհոր մի հանդերձ կնաւ իւրով և որդւովք (524):

Իսկ Կոնդեմարոս ծանրացաւուն լեալ ընդ անողորմ մահ եղբօրն՝ զօրաժողով եղև, յարձակեցաւ յեզակարծում ի վերայ Փըրանկաց, զբազումս ի նոցանէ կար, և զինացեալն փախուցեալ տարաւ, և զնա ինքն զԿլոդիմիր զսպանող եղբօր իւրոյ սպան ի պատերազմի: Թէպէտ Կլոտարիոս և Փիլդիբերտոս հանին զվրէժ արեան եղբօր իւրեանց՝ ի սպառ չախչախեալ զզօրութիւն Թագաւորին Բուրգոնաիոյ և մերժեալ զնա յարքայութենէն, այլ անդէնացան յոյժ յորդիս նորա: Քանզի նախ զերկիր իշխանութեան հօր նոցա զՕրլէան բաժանեցին յիւրեանս ընդդէմ իրաւանց երեցութեանց դառնահասակ արքայորդւոցն. ապա յաւելին յանիրաւութիւնն յայն և ոճիր անլուր:

Մինչդեռ դշխոյն Կղոտիլդէ մեկուսացեալ ի թուր մերձ ի շիրիմն սրբոյն Մարաւինոսի ինամ առնէր դասախարակութեան արքայորդւոցն որբացելոց Թոռանց իւրոց՝ յուսով ամբառնալոյ նոցա յաւուր միում յաթոռ Թագաւորութեան հօր իւրեանց, Քլդիբերտոս և Կղոտարիոս խնացեալ զմիտս դշխոյին, զոր ոչ իսկ ծածկէր, զայրացան յոյժ, և խորհեցան խորհուրդ անզգամութեան անլուր ի վեպս ազգաց: Եկեալ եկին ի փարիզ մինչդեռ Կղոտիլդէ հանգերձ Թոռամբք իւրովք անդ էր, և նենգութեամբ բան եգեալ ընդ միմեանս՝ խնդրեցին ի դշխոյէն զարքայորդիսն՝ պատճառանօք Թագաւորեցուցանելոյ զնոսա շքեղ հանդիսիւ: Կղոտիլդէ անգէտ ամենևին չարութեան մտաց նոցա, առաքեաց զմանկունսն յատենս Քլդիբերտոսի, որք անդէն ձերբակալ եդան ի դիպահոջ: Եւ աճապարեցին արձակեցին Թագաւորքն առ դշխոյն զոմն ի սպասից՝ առաջի մատուցանել նմա մկրատ և սուր, յայտ լիմն այսպէս արարեալ զի նմա յընտիր առնէին զբախտ Թոռանց իւրոց, կամ հրաժարել ի Թագաւորութենէ՝ հաւեալ զկերս, և կամ զմահ յանձն առնուլ: Սոսկացաւ դշխոյն ընդ խիստ պայմանան և սկսաւ կշտամբել զնոսա, և առ գառնութեան արտին աղաղակեաց ցասմամբ. «Լաւ է ինձ տեսանել զդիակունս նոցա անշունչս քան զլսել զնոսա ի հայրենի Թագաւորութենէ»: Այլ ինչ պատասխանի ոչ ինալով պատգամաւորին, տարաւ

զբանն առ Թագաւորան՝ի լուր ալքայոր-
գւոցն, ոլք կանխաւ իսկ իմացեալ էին ըզ-
վտանգ իւրեանց: Անգէն կլոտարիոս ա-
ռանց ինչ ընդ բանս ածելոյ կալեալ խժա-
բար զանդրանիկն՝ մանուկ տասնամեայ, է-
արկ յերկիր և մեռեալ զդաշոյն՝ի սիրտ նո-
րա: Ընդ երկրորդն մանուկ ուԹամեայ վա-
զեաց յոտս Քլդխբերտոսի, և ասէ կակա-
նաւ. «Խնայեա, Հայր բարեգուԹ, ազատեա
զիս, զի մի անկայց իբրև զեղբայրն իմ»: Խռովեցան ազիք անագորոյն Քլդխբեր-
տեայ ընդ ողորմ արտասուս և ընդ կական
եղկելի մանկանն, և սկսաւ արտասուօք ա-
ղաչել զԿլոտարիոս չմեռանել զձեռն իւր՝ի մա-
նուկն, և անձամբն իսկ պաշտպան կայր նմա:
Այլ գազանացեալ սրտմտուԹեամբ վերագն
մարդախաշոշ, ամբարձ զդաշոյն՝ի վերայ
նորին իսկ Քլդխբերտոսի բարկացայտ ա-
ջօք և գոչեաց. «Դու առ այս զիս մղեցեր,
և գեղեխս այժմ՝ի խորհուրդս. Թող զդո-
ծոյս կատարումն, ապա Թէ ոչ՝ մեռցիս և
դու»: Ասաց զայս և յափշտակեալ զմանուկն
խողխողեաց՝ի վերայ գիսական եղբօրն: Խըն-
դրէր գազանն արիւնարբու և զերկրորդն,
այլ նա՝ի խռովուԹեան անդ արացեալ՝ի
միջոյ ծածկեցաւ, և ապա առեալ զձև կրօ-
նաւորական՝ արբուԹեամբ վարուցն յաւել
պարծանս վիակեցական կենաց. և այսպէս
բարեբաղդ գտաւ՝ի Թողուլ զերկրաւորն
ԹագաւորուԹիւն, զի փոխանակ վաղան-
ցուկ և մահկանացու փառացս, ստացաւ
յերկինս փառս յաւէժ կենդանականս, Թո-

ղեալ յերկրի զանուն իւր առնլը Կղոդիոս (532)։

Յետ անգութ կոտորածի արքայորդւոցն խաղաց ցասմամբ մեծաւ Քլղխբերտոս ՚ի վերայ Վխիգոթաց ՚ի վրէժ անարգանաց քեռւ իւրոյ Կղոտիլդեայ։ Բանզի օրիորդս այս առաքինասէր և սրբութեամբ վարուց ազանչելի՝ հարանացեալ արքային Վխիգոթաց Ամալարիկոսի, և վասն ուղղափառ կրօնից արհամարհեալ յաչս Արիանոսաց և բազմօք չարչարեալ յառնէն իւրմէ, ժողովեաց զարիւն իւր ՚ի քօղ գլխոյն, և ՚ի ձեռն հաւատարիմ պաշտօնէի առաքեաց առ եղբարն առ Թագաւորս Փրանկաց։ Տեսեալ զարիւնաթաթաւ քօղ քեռն իւրոյ Քլղխբերտոս վառեցաւ խրխն զբոց, յարձակեցաւ յերկիր աէրութեան Վխիգոթաց, և հալածական առեալ առաջի իւր զմատաղոր նոցա զԱմալարիկոս՝ փակէր պաշարէր զինա ՚ի Պարչելլոնա։ Եւ յետ նենգութեամբ սպանութեան Ամալարիկոսի, դարձ առնէր Քլղխբերտոս ՚ի Փարիզ բազում աւարաւ։ Այլ քոյր իւր զոր ածէրն ընդ իւր՝ մեռաւ ՚ի Ճանապարհի։

Զայսու ժամանակաւ Թէոդորիկոս անդրանիկն յորդիս Կլովեայ պատառեալ ՚ի պատերազմունս ընդ Աւերնացիս, որ Թօթիեցին զբուռ աէրութեան իւրոյ, յայրեաց յաւեր դարձուցանէր զաշխարհն նոցա, որով և չեղև ինչ ամենևին հալորդ պատերազմաց եղբարցն և ազգակոտոր խժդժութեանն, սակայն և ոչ փոյթ ինչ կալաւ

'ի վրէժխնդրութիւն գործոյն, այլ մանաւանդ բաժանորդ իսկ գտաւ անօրէնութեանն: Եւ մեռաւ սա 'ի թագաւորեալ քաղաքի Իւրում 'ի Մէտս, Թողեալ զդահ սէրուեհեան Արևելեան գաղղիոյ, որպէս իւրում Թէոդեբերտոսի:

Սա այս Թէոդեբերտոս Թագաւորեաց փառաք, ահաւոր ցուցեալ զանձն ամենայն պետութեանց Եւրոպայ: Ի սկզբան Թագաւորութեան իւրոյ նիզակակցութեամբ հօր եղբարցն 'ի սպառ ընկճեաց զԹագաւորութիւն Բուրգոնաիոյ և բաժանեաց զայն ընդ նոսա: Եւ այս Թագաւորութիւն չորրորդ էր որ 'ի ժամանակի վաթսուն ամաց անկանէր ընդ յաղթող ձիւնուքն Փրանկաց (534):

ԳԼՈՒԽ Դ.

Աշխատութ Թէոդեբերտոսի յիշելիս և դիպուածք նորա կատարեալք 'ի գաղղիա:

535 – 561.

Յամս ժամանակացն այնոցիկ ձինի մահուն Թէոդորիկոսի երթայր և վաթսարէր Թագաւորութիւն Ոստրոգոթաց յիտալիա նեղբին գժտութեամբք, և Յոյնք յայնժամ պատեհ առեալ յառնէին պատերազմաւ 'ի վերայ նոցա. և 'ի գժտարել մարտին երկուսաւեք՝ և Յոյնք և Ոստրոգոթք խնդրէին

ընկալակցութիւն Թէոդեբերտոսի. և բարբարոսն պատրեալ և զՅոյնս և զՈմեայս, եհար զնոսա ի հարուածս սաստիկս. յաւար մատնեաց զման ինչ Խոսրովայ, հրձիգ արար զՓաւիա և զԳենուա: Ալ ի գեղեցիկ գաւառն չարաչար զեղծեալ բարբարոսացն, Ճարակեցաւ ի նոսա ախտ մահու, մինչև հազիւ Ճողոպրել ինացելոցն ի Գաղղիա:

Յետ այնորիկ կրկին փորձ փորձեցին Փրանկք տիրել Խոսլոյ, այլ ոչ յաջողապոյն ինչ բաղդի քան զառաջինն արշաւանսն հանդիպեցան: Սակայն ոչինչ ձեռնթափ լեալ Թէոդեբերտեայ ի խորհրդոցն, դաշնակցեր ընդ Տոսիլայ ալբային Ռատրոսմացց ընդդեմ Յուսաւինիանոսի կայսեր՝ ընդ որում ցասմամբ էր: Եւ իբրև պատրաստէր յարձակել մինչև ի Թագաւորեալ քաղաքն ի Բիւզանդիոն, ի վերայ եկեալ մահուն արգել զնա ի խորհրդոցն, և պայազատեաց զԼմագաւորութիւն նորա Թէոդեբալտոս որդի նորա (548):

Քան զամենայն Թագաւորս տոհմին Մերովեանց ահարկու էր օտարաց Թէոդեբերտոս, յանդուգն և քաջ իբրև զհայր իւր և զհաւն՝ զնոցայն ունէր խորամանկութիւն առ արտաքինս, այլ առ ազգ իւր և առ ժողովուրդն մարդասէր գտաւ և բարեբարոյ: Քանզի և ի ցոյց գերաշխարհիկ առաքինութեանց նորա պատմեն զնմանէ Լէ յաւուր միում իբրև եպիսկոպոսն Դիգիերոս մատոյց նմա գումար մեծ արծաթոյ, զոր տուեալ էր

երբեմն ի փոխ Վէրահնացւոց, չառնոյր նա
յանձն յետս առնուլ զիօսին, և զայս առ-
նէր պատասխանի. « Երանելի եմք երկոքին,
դու զի պատճառս բարեաց ինձ առնեցեր,
և ես զի ոչ ապախտ արարի զայն »: Զկնի
մահու մեծի Թագաւորիս մեռանէր և սըր-
բասուն դշխոյն Կղոտիլդէ առ ցաւոց սրտին
ընդ անպիտան գնացս որդւոց իւրոց:

Մինչդեռ այս ինչ գործէր ի Թագաւո-
րութեան Արեւելեան Գաղղիոյ, Թագաւորք
Փարիզու և Սուասոնի՝ Քիլդիբերտոս և Կլո-
տարիոս անհանգարտք միշտ ի պատերազմ
և ի յափշտակութիւնս, զօրու ծանուս ան-
ցանէին ի Սպանիա ի վերայ Վիսիգոթաց,
և հեղեղօրէն ծածկեալ զերկիրն որ ընդ մէջ
Երբոս գետոյն և Պիրենեանցն, գայլն պա-
շարէին զԱարակոսա քաղաք: Բնակիչք քա-
ղաքին անզօրք ի դիմակալել հզօր զօրու-
թեան Թագաւորացն Փրանկաց, և խնդա-
լով զի մի նոյն աղէտք որ ընդ այլ քաղաքս
անցին՝ դիպեացին և ինքեանց, ձարտարեցին
հնարիւք բարեպաշտութեան Թափել զան-
ձինս ի սրոյ խժիցն: Եկին ի քաղաքէն Թա-
փօրաս, տանելով յառաջոյ սաղմոսերգու-
թեամբ զպատմուճան սրբոյն Վինկենտիո-
սի. և կանայք պատգեստք՝ հոդ ի գլուխ
ցանեալ, երթային ախորհեամբ: Տեսեալ
Փրանկաց զբարեպաշտութիւն քաղաքացւոց
երկեան զի մի գուցէ շարժեացեն զցասումն
երկնից ի վերայ իւրեանց, և Թողեալ զպա-
շարումն գարձ արարին յաշխարհ իւրեանց:
Պատմեն Սպանիացիք՝ Թէ առեալ Թագաւո-

լին իւրեանց կալեալ զԿիլիկիա Պիրենեանց, և՝ի սպառ ջախջախեալ զզօրութիւնն Փրանկաց, մինչ հազիւ փոքու ջոկատիւ ձողոպրել թագաւորացն նոցա. այլ չունելիք լինչ յիշատակ՝ի տուգութիւն պատմելոցս՝ի Գաղղիացւոցն մատենագրաց. վասն որոյ կալցի զայս որպէս ոք և ախորժէ:

Յամին ժամանակի Թէոդեբալա սրբոյ Արևելեան Գաղղիոյ ոչինչ նախանձաւոր լեալ քաջութեան հօրն յետ կարճատև թագաւորութեանն վաղամեռիկ լեալ վճարէ զաւուրս (555): Իսկ գահատէրն Կլոտարիոս աճապարեալ գրաւեաց կալսւս զողջոյն իսկ զթագաւորութիւնն նորա, արհամարհեալ զնրաւունս եղբօր իւրոյ Քիլդեբերտոսի, որ առ խօթութեանն չէգիտ պարտսդ թափել զիւր մասն՝ի նմանէ. և զի գիտէր զտկարութիւնն իւր, լռեաց առ ժամն՝ պատեհի միշտ մնալով: Եւ ահա ոչ յետ բազմաց այսպիսի լինչ ժամանակ քաջագէպ լինէր նմա առաջի:

Կրամնէ, որդի սրբելի Կլոտարիոսի զկատարեալ՝ի հեշտութիւնս, ոսկ ոսկ յառաջ խաղայր և յոգիրս եղեռանց, մինչև ընդդէմ գառնալ հօրն և նշկահել զնա: Եւ Քիլդեբերտոս ոչինչ ամօթ համարեցաւ ձեռն տալ և խրախուսել զսոսամբակ պատանին ընդդէմ հօրն. և եթէ չէր մահուն՝ի վերայ եկեալ, թերևս տեսանէր Քիլդեբերտոս զարդիւնս խորհրդոցն: Զօրացաւ բարձրացաւ Կլոտարիոս միապետեալ զաշխարհն, և Կրամնէ լքեալ յիւրոցն անձնասուր եղև հօրն: Ընդունեաց նմա Կլոտարիոս, այլ ընդ

հուպ զղջացաւ ընդ գթութիւն իւր՝ի վերայ անարժան որդւոյն։ Քանզի անհանգստա և խռովասէր պատանին՝ի նոր աղմուկս ձեռն արկեալ, զինեաց զբնակիչս Պրեգայն գաւառին ընդդէմ հօրն։ Նորս այս Աբեսողոմ նմանող եղեռանց նախնւոյն, զնորին գոգցես ընկալաւ զպատուհաս. զի չարաչար խորտակեցան Պրեգոնք, և սա ինքն կրաւնէ զօրավար նոցա սեսեալ զկորուստ իւրոյն զոտս արձակէր՝ի փախուստ և գիմէր՝ի ծովափն կոյս։ Հասին հետամուտքն զինի, փակեցին զնա՝ի հիւղ ուրեք. և հայր նորա Կլոտարիոս հուր մատուցեալ տեղւոյն, այրեաց զնա՝ի ներքս։ Այս եղև ահա վախճան Կրաւնեայ, ստահակ և ապստամբ որդւոյ (560)։

Իսկ հայր նորա Կլոտարիոս զինի բազմաղէտ յաղթութեանն ոչինչ աւելի քան զամ մի երկարակեաց լեալ մեռանի։ Զայս զնմանէ պատմեն ասացեալ մեծ՝ի վախճան կենաց իւրոց, զոր ապաքէն պարտ էր նմա խորհել՝ի կեանս. «Բաւ է, քանի՞ մեծ իցէ զօրութիւն երկնից Թագաւորին որ յաւիտեան միայն առնու զոգիս զՀզօրագունից իսկ՝ի Թագաւորաց երկրի»։ Զեկաց ոք՝ի Գաղղիա Թագաւոր ապերասան քան զնա, որ չամաչէր ամենևին ընդ շամբուշ և ընդ անապօրոյն կեանս իւր։ Ննդգաժոտ, անգութ, արիւնարբու, գահիճ եղև բազմաց յաղգականաց իւրոց, կոտորեալ զնոսա խըժաբար. և ոչ այլ ինչ բարեմասնութիւն գտաւ՝ի նմա քան զքաջութիւն՝ի պատե-

բազմանան և զհմտութիւն յարուեսա հնարից. և այսոքիկ գոգցես էին ձիրք ժառանգութեան որդւոյ Կլովիսայ:

ԳԼՈՒԽ Ե.

Թէ որպէս՝ ի պատճառս դէպոյին Բրունեհուլդայ և Փրեդեգոնդայ ապարէզ եղև Գաղղիա արիւնըռուզ պատերազմաց՝ ի մէջ որդւոյ Կլոփորենայ:

561 – 584.

Եւ բաժանեաց Կլոտարիոս զթագաւորութիւն իւր ըստ օրինակի հօրն իւրոյ Կլովեայ՝ ի մէջ չորեցունց որդւոցն. Քարիբերտոսի անկաւ՝ ի բաժին թագաւորութիւն Փարիզոյ. Կոնդրանոսի թագաւորութիւն Բուրգոնացւոյ. Քիլբերիկեայ գաւառ Սուասոնի, և Սիգեբերտոսի Արևելեան գաւառք Գաղղիոյ:

Ի չորեսին եղբարս թագաւորս՝ հեզասահմբոյր էր Քարիբերտոս, խաղաղասէր, արդարակորով, նրբամիտ և հանճարեղ: Բանք նորա և խորհուրդք իբրև զպատգամս Աստուծոյ ոչ անկանէին յերկիր առաջի իշխանաց նորա: Այլ սակաւ, զի թագաւոր այսպիսի իմաստուն զակատեալ զհետ մեղկ գրգռանաց երագեաց զմահ իւր, և մեռաւ՝ ի ծաղկի հասակին անզաւակ (568):

Ոչինչ նուազ գոսա քան զսա եղբայր նորա Կոնգրանոս՝ ի բարեմասնութեան սակի. Թէպէտ պակասէր՝ ի ձարտար վարչութենէ նորա և՝ ի հանճարոյ մտացն, այլ արքունեամբ առաւելոյր քան զամենեսեան: Իսկ մնացեալ երիս եղբարքն Սիգեբերտոս և Քիլբերիկոս, ամենեքին հակառակ կալեալ Ճանապարհ, տարապայման սիրով պատերազմաց յաղթութ և յաջակացութեան վարեցին զաշխարհն: Եւ՝ ի գրգիռս առելութեան միջա յառաջամարտիկ ցուցաւ Քիլբերիկոս, վասն որոյ և յիւրաքանչիւր համարեցան նա չարեացապարտս անօրէնութեանցն որ յորդէին յայնժամ՝ ի Գաղղիա:

Սիգեբերտոսեայ առեալ էր իւր՝ ի կնութիւն զՀռոչակաւորն Պրիւնհոյ կամ Բրունեհոլտա, զդուստր արքային Վիսիգոթաց՝ ի Սպանիա: Եւ Քիլբերիկոս՝ որ յայնժամ զաղբիան մեծացուցանէր անձնաստուր՝ ի տափանս, չարժեալ յօրինակէ եղբօրն, էառ և ինքն զԿալսուինոսա զքոյր Բրունեհոլտայ իւր՝ ի կին սակայն և այսու ոչ ինչ զգաստացեալ հարաւ՝ ի գեղ միւսմ՝ ի սիկնանից արքունեաց, որ էր Հռչակաւորն Փրեդեգոնդա: Եւ վտանգակ զի իշխեաց գչնոյն Կալսուինոսա բողոքել ընդդէմ ապիրատութեան առն իւրոյ, յեա աւուրց գոսա մեռեալ յանկողնի: Ի սկզբան կասկածք միայն եղեն զՓրեդեգոնդայ վասն անկրաւ ապանութեան գընծոյին, այլ յորժամ յայտնի ամբարձաւ նա՝ ի տեղի նորա՝ ի դշխոյութիւն՝ հաւաստեցան կարծիքն: Եւ այս եղև գրգիռ սիսերիմ

աստուածեան ընդ Փրեգեգոնդա և ընդ Բրունեհոլտ, և պատճառաբ այնչափ հեղձման արեանց ի տանէ Թագաւորութեան։

Քանզի գրգռեալ Սիգեբերտոս ի կնոջէ իւրմէ ի Բրունեհոլտայ ի վրէժ քինու մահուան քեռ նորա, յարոյց զօր սաստիկ ի բարբարոսաց Գերմանիոյ և էած պատերազմ գԺնգակ ի վերայ Քիլբերիկոսի եղբօր իւրոյ, ծածկեաց հեղեղօրէն զաշխարհն և յատականուաճիւն եզ զայն. էառ զՓարիզ և ապականեաց զամենայն ի սուր և ի հուր։ Անտի խաղաց ի վերայ եղբօրն և չարաչար խորտակեալ զնա փախստական տարաւ ի Թուրնէ, և ինքն եկեալ նստաւ ղքաղաքաւն։ Իբրև ի տագնապ տարակուսի պաշարեալ Քիլբերիկոս՝ չգիտեր զեզր իրացն գտանել, աճապարեաց կին նորա ամբարիշտն Փրեդեգոնդա և զերծոյց զնա ի վտանգէն ի ձեռն երկուց սրիկայից բարձեալ ի կենաց զՍիգեբերտոս (575)։

Գովութեամբ չիշատակեն պատմաբանք զանվեհեր արուեստիւն Սիգեբերտեայ, զազնուական բնաւորութիւն նորա, զեր բարերարելոյ այլոց, զԺուժկալութիւն՝ ըզգԺուարագիտան յայնժամ առաքինութիւն ի Թագաւոր ժամանակին։ Բայց ի գերգոռութենէ քինախնդիր կնոջն ի մոլեգնութիւն փոխեալ՝ ոչ խնայեր և յաշխարհն հայրենի և ոչ ի կրօնն քրիստոսական. հրայրեաց առնէր, աւար հարկանէր զվանորայս, ի պղծութիւն դնէր զաեղիս սրբոց Թեան. մինչև ըստ բանից սրբոյն Գրիգորի եպիսկո-

պոսի Տուրոնէի՝ բազմօք առաւելեան չարիք նորա ընդդէմ հաւատացելոց քան զհալածանս Դիոկղետիանոսի. վասն որոյ և արժանի անօրէնութեանն չարաչար ընդունէր զմահու վախճան:

Այսու անօրէն սպանութեամբ փրեզբոնդայ կերպարանափոխ եղև ամենայն. զօրացաւ Քլըբերիկոս կրկին զբռամբ աձեալ զիւր թագաւորութիւն. և Սիգեբերտեայ յաջորդեր որդին Քլդիբերտոս Ե, մաղապուր զերծեալ ի ձեռաց Մշնամեաց:

Ի սկզբան անգ մերժեցաւ Բրունեհոլտ ի խնամակալութենէ որդւոյ իւրոյ, այլ յետոյ եմուտ անդրէն ի նոյն, որպէս առաջուք ի մեծոյ: Իսկ անօրէն Փրեզբոնդա էառ կորուսանել մի ըստ միոջէ զարքայորդիս՝ զծնեալս յառաջին կնոջէն Քլըբերիկեայ, սպան չարաչար տանջանօք և զմայր նոցին, զարձակեալն ի Քլըբերիկոսե:

Իբրև յայս ամենայն անօրէն սպանութիւնս չաղախէին զձեռս իւրեանց անգութըն Քլըբերիկոս և կին նորա Փրեզբոնդա, Գաղղիա ի սով և ի սրածութիւն և յառանին սպմուխս պատերազմաց առաստղեր. և ի կռիւս անդ մարտից Քլըբերիկոս նկուն լեալ յերեսաց Թագաւորացն արևելեան Գաղղիոյ և Բուրգոնտիոյ, բռնամահ բարձաւ ի կենաց: Քանզի գարձ արարեալ նորա յորոց ընդ երեկս յիջանելն յերիվարէն, անծանօթ ոք այր խառնեալ ի գունդս ծառայից՝ միևնոյն զդաշոյն ի կողս նորա և սպան զնա. և ինքն խոյս տուեալ

'ի խաւար գիշերի փախեաւ: Եւ ոչ եկն 'ի յայտ առաջնորդ գաւառաձանութեանն. ոմանք զՓրեդեգոնդա ասացին լինել ապաստնութեանն պատճառս. քանզի այր նորա Փիլբերիկոս խմացեալ զանօրէն սէր նորա ընդ ուժեմն յարքունեացն՝ ցասմամբ էր ընդ նմա. իսկ այլք զԲրունհոլտ ասացին, իբր 'ի վրէժխնդրութենէն քեռն իւրոյ Կալսուինտայ և առն իւրոյ Սիգեբերտոսի: Զհաւասարն չունիմք ասել. այլ այն յայտ է, զի ըստ անգիտութեան և ըստ անառակ գնացիցն և ըստ ամբարշտութեանն ընկալաւ Փիլբերիկոս զարժանին վախճան՝ կարգեալ ընդ չարախտաւոր Թագաւորս, զորս Աստուած 'ի բարկութեան իւրում առաքէ 'ի վերայ ժողովրդոց (584):

ԳԼՈՒԽ Զ.

Թէ ինչպէս յերկնչելոյն առաքին պատերազմանէ ինքն ոդիոպէպել ինչանութենէն կատարեալ է:

584 – 628.

ԿԱՏՈՒԹՈՍ Բ որդի Փիլբերիկոսի մանուկ ստանգիաց 'ի մեռանել հօրն ընդ ձեռամբ Փրեդեգոնդայ մօր իւրոյ եկայց Թագաւոր 'ի Սուասոն: Ոչ ինչ յեանեալ գտաւ դշնոյս այս 'ի խորամանկ հնարս քան 'ի գործ չարեաց. և քանզի խիթայր 'ի Փիլբեբեր-

տոսէ յարքայէն արևելեան Գալղիոյ, որ յուզեալ վառէր ի ցասումն առելութեան ընդդէմ նորա ի մօրէն իւրմէ ի Բրունեհոլտայ, վասն որոյ Թիկունս իւր արար զԿոնդրանոս զարքայն Բուրգոնտիոյ, զայր անբիծ վարուք և անկեղծ. և ընդ խնամակալութեամբ նորա ելծող ղԹագաւորութիւն որդւոյն:

Ազնուական վեհ առաքինութեամբն նեբեաց Կոնդրանոս գչխոյին, որ արեամբ Թագաւորաց շաղախեալ էր զձեռն. և խոհական մտօք և իմաստուն խնամով ի վերայ եղբօրորդւոյն զդէմ կալաւ չարեաց և առելութեան և նախանձու մարդց նոցա Բրունեհոլտայ և Փրեդեգոնդայ, որոց երկաքանչիւր յանուն որդւոց իւրեանց Թագաւորէին: Այլ հեզահամբոյր և Թոյլ գնացք Կոնդրանոսի, և ամօթ հնազանդելոյ ընդ ձեռամբ երկուց կանանց՝ յարոյց զԱկուիտանիա և զՊրովինկիա յասպատամբութիւն, որք Թագաւորեցուցեալ իւրեանց զԿոնդեբաւդոս զոմն ի հարճորդւոցն Կլոտարիոսի՝ զօրացան ի սկզբան՝ տիրեալ քաղաքաց բազմաց. այլ իբրև միաբանեալ Կոնդրանոս և Քիլդիբերտոս խաղացին բազմութեամբ զօրաց ընդդէմ ապստամբացս, խուճապեալ նոքա Թողին զԿոնդեբաւդոս: Եւ սա փախստեայ անկաւ ի քաղաքն Քոմինժ, այլ ընդ հուզմամբ ետանեցաւ ի ձեռս Թագաւորաց, և քաղաքն ողջոյն ամայացաւ ի սուր և ի հուր, ի զայրոյթ կատաղութեան յաղթականացն:

Յետ այնորիկ նոր դաշինս եդին յիւ-

բևանս Կոնդրանոս և Փիլիբերտոս՝ ի իշ-
նամս օգտի հասարակաց, և՝ ի պայմանս
ուխտին ծանուցաւ Փիլիբերտոս ժա-
ռանգ Կոնդրանոսի: Այսպէս ահա դաշ-
նակցութեամբ ընդ Կոնդրանոսի և հանձա-
րով մեր իւրոյ զօրացեալ Փիլիբերտոս
Թօթաւիեաց զլուծ աւագայ իւրոց, և զո-
խերիմ Թշնամիս իւր՝ ի նոցանէ զդաւա-
դիրս կենաց իւրոց կորոյս մի առ մի. յորս
ահաւորագոյնք կացին Հռաւգինկոս և Մակ-
նովալտոս, զոր՝ ի գազանամարտի ուրեք
ինքնին ձեռամբ իւրով կառափնատէր Թա-
գաւորն:

Մինչդեռ՝ ի սուր և՝ ի կոտորած զօրա-
նայր Թագաւորութիւն Փիլիբերտոսի՝ մե-
ռաւ Ծերունին Կոնդրանոս զկնի պարտու-
Թեան իւրոյ յերեսաց Վխիգոթաց և Վան-
քոնաց կամ Կուասքոնաց, և ևս մեծացաւ
Փիլիբերտոս միահեծան կալեալ զՓարիզ
զԱուրելիան և զԲուրգոնտիա (593):

Յետ մահու Կոնդրանոսի համարձակ եղեն
դշխոյքն՝ ի գործ առելութեան իւրեանց,
որով մանայլն միշտ ընդ իրեարս: Եւ Փիլ-
դիբերտոս առաքեաց զօրու ծանու զզօրա-
վարս իւր՝ ի Սուասոն ընդդէմ Փրեդեգոն-
դայ և մանկանն Կլոտարիոսի: Ոչինչ մարա-
կուսեալ վհատեցաւ արիասիրտ դշխոյն ընդ
բազմութիւն Թշնամւոյն և ընդ վտանգն մո-
տալուտ. գումարեաց անդէն զիւրան, հան-
դէս արար նոցա՝ ի Պիրիէն, և տանտամեայ
որգուիլն իւրով Կլոտարեաւ չուրջ անցեալ
ընդ կարգս զօրացն խրտխուսեր զնոսա՝ զը-

նել զանձինս ի կշիռ վասն մանկան տեառն իւրեանց և Թագաւորի, և դրամս Ճապաղեղով յորդորագոյնս առնէր զնոսա: Եւ մինչ գեռ ի նոյն աշխոյժս արուեստեան վառէին զօրքն, խաղացոյց զնոսա ի վերայ Թշնամեաց: Պատմէն ոմանք թէ եւս ի ձեռս զօրացն սալարեթախիս ոսոս ծառոց, և պատրեաց այնու զսեռութիւն Թշնամեաց՝անոտառս կարծել զնոսա, և անակնկալ ի ծագել աւուրն անկեալ ի վերայ խուճապեցոյց զնոսա ի հարուածս սաստիկս, խորտակեալ զահաւոր զօրութիւն Փիլիպպեբատոսի:

Զկնի ամենայնի պարտութեանն ոչնչ երկարակեաց լեալ Փիլիպպեբատոս մեռանի, Թողեալ զիշխանութիւն իւր երկուց որդւոց իւրոց Թէոդեբեբատոսի Ե, որ նըստաւ յարևելեան Գաղղիա, և Թէոդորիկոսի Ե, որ Թագաւորեաց ի Բուրգոնիա:

Ի նոյն աւուրս մեռաւ և Փրեդեգոնդա հասեալ ի ծագ բազդին. որ զօրութեամբ զինուց ընդարձակեալ զիշխութիւն Սուասոնի, յաւել ի նոյն զփառսիլ, ամրացոյց զգահ որդւոյն, սրբեաց գոգեես զհամբաւ եղեռանց իւրոց, և զփառսն միայն եթող տեառնել ժամանակակից մարդկանն. այլ որ զկնի եկին ազգք՝ անաչառագոյնք գտեալ, առեալ զնա տեսին և արհամարհ (596):

Բրունեհոլա զերծեալ յոխերիմ Թշնամւոյն կարծէր այնուհետև ազատ վայելել յիշխանութեան իւրում՝ յանուն երկուց Թոռանցն. այլ ի յարբունս հասանել նոցա

յանկարծ կերպարանափոխ լինէին իրքն։ Քանզի գրաւեալ յիւրեանս զիշխանու-
Թիւնն միաբանեցին ընդդէմ Կլոտարիոսի, և
խոնարհեցուցին զնա առաջի զինու զօրու-
Թեան իւրեանց. ապա գժտեալ եղբայրք
ընդ եղբօր՝ ի կռիւ գային ընդ միմեանս, և
վախճան լինէր նախանձու հակառակու-
Թեանն մահուամբ Թէոդեբերտոսի, որ գե-
րի վարեալ՝ ի պատերազմի՝ սպանաւ հան-
դերձ որդւովն հրամանաւ եղբօր իւրոյ
Թէոդորիկոսի, կամ ըստ այլոց՝ հանոյն իւ-
րոյ Բրունեհոլտայ։ Սակայն և ինքն Թէո-
դորիկոս ոչնչէ ընդ երկար վայելեաց յար-
գասիս յաղթութեանն, և՝ ի գնալն ընդ-
դէմ Կլոտարիոսի պատերազմաւ՝ վախճա-
նեաց զկեանս իւր՝ ի ձանապարհի։

Ընդ Կլոտարիոս անակնկալ յեղափոխու-
Թեամբ բաղդին յիւր կողմն ձգեաց զիշըշ-
նամիս իւր՝ զիշխանս արևելեան Գաղղիոյ և
Բուրգոնիոյ. ձերբակալ արար զԲրունե-
հոլտ և զերկուս որդիս Թէոդորիկոսի, յո-
րոց զերկուսն սպան և զմին տարագիր ա-
րար։ Այսպէս միահեծան կալեալ զաե-
րութիւնն, ամբաստան եղև զԲրունեհոլ-
տայ, ոչ մոռացեալ և զչարիս մօր իւրոյ
Փրեդեգոնդայ. արկ զնա՝ ի գառն կատանս
զաւուրս երիս, ապա ետ կապել ընդ ապ-
խատերսին երիվարի, և՝ ի քարշ ածեալ
յօշ յօշ պատառեալ զմարմին վատաբախտիկ
դշխոյին (613)։

Սա այս դշխոյ ընդ նրբամիտ ձարտարու-
Թեան Փրեդեգոնդայ կցորդեալ ունէր և

զառաքինութիւնս ըստ վկայութեան սրբոյ քահանայապետին Գրիգորի, և եպիսկոպոսին Տուրոնի: Ոմանք ի մաաւենադրաց գովեն զսա իբրև օրինակ պատշաճից՝ բարեկրօն և առաքինի. և այլք պարսաւեն չարաչար իբրև զանգուած, զնենգաւոր և զգոմասակայն առգիւտքս այսոքիկ առաւել արդեօք ի ձահ պատահիցեն Փրեդեգոնդայ քան նմա: Սակայն չմարթիմք անպիտանալ զի վկայիցն գրութեան նորա տեղիչ անյապ՝ պատճառք լինէին կործանման տան իւրոյ և ինքեան անագորոյն մահուն: Բազում յիշատակս շինութեանց ի զարդ եկեղեցի Թագաւորութեանց Թոռանց իւրոց եթող դըժխոյս այս:

Ի միապետել Կլոտարիոսի ի վերայ աշխարհին շինաւ անդէն և բոց քաղաքական պատերազմաց, որ ի մահուանէ Կլովիսի անդուլ ի բազում երկպառակութիւնս ձեղքէր զԳալղիա:

Ընտուր էր զօրութեամբ իւրով Կլոտարիոս ամենայն շրջակայ ազգաց, և հարկատու էին նմա Պաւարացիք, Լոնգոբարտացիք և Դանիք. այլ ինքն Կլոտարիոս ազատ ի փառասիրութենէ՝ միտ եդ զգուշութեամբ երջանկութեան ժողովրդեան, և սիրելի նոցա զանձն ընծայեցոյց: Ի բարեպաշտութեան սակի առաւելաւ յոյժ քան զնախորդըս իւր, և աղքատասէր էր և նախանձաւոր օրինաց եկեղեցւոյ: Սպատանելի է ի նմա միայն անիրաւ և անգութ մահ Բրունեհոլտայ Թշնամւոյ մօր իւրոյ:

ԳԼՈՒԽ Ե.

ԴԱԳՈԲԵՐՏՈՍ Ա, ՃՈՒՐԻՆ ԱՐԴՈՒՆԵՑՈՑ ՆՈՐԱ, ՎԱՐՈՒԻՆԱՆՑ, ԵՒ ՄԱՀ: ԿԼՈՎԻՈՍ Բ ԵՒ ՀԵՔԱՆՈՍ ԴԱՒՈՅ ԲԱՓԻԶԸԷ:

628 – 673.

ԴԱԳՈԲԵՐՏՈՍ Ա *որդի Կլոտաբիոսի, որ առ կենդանութեամբ հօրն Թագաւորեալ յարևելեան Գաղղիա, դեռ 'ի մանուկ հասակին ցուցեալ զարութիւն ոգւոյն դիմագրաւէր 'ի պատերազմ ընդդէմ Բերտուալդայ դքսին Սաքսոնաց. որում ապա հասեալ և հայրն յօգնութիւն, սպանանէր զապստամբն:*

Սա զհետ հօր իւրոյ յաջորդեալ, Թողցոյր զԱկուիտանիա եղբօր իւրում Քարիբերտոսի, և 'ի վաղամեռիկ լինել նորա և սպանանել անդրանկին 'ի խռովութեան ուրեք, զայլ երկու որդիս նորա կացուցանէր գուքսս ընդ ձեռամբ իւրով: Այսպէս Դագոբերտոս 'ի սկզբան անդ Թագաւորութեանն ոչինչ նուազ երևեալ քան զհայր իւր 'ի խոհական գնացս և յարդարութեան, յինքն ձգեաց զսէր ժողովրդեան և մեծապոյ ցուցաւ յայնս աւագաց:

Այս բարեվայել գնացք Թագաւորին արդիւնք էին խրատուց սրբոյ Եպիսկոպոսին

Արնոլդոսի հազարապետին արքունեաց։ Այլ երբեմն յաջողութեամբն զերծաւ Դագոբերտոս, և ձոխութեամբ գանձուցն և փառաց առաւելեալ քան զամենայն թագաւորս Եւրոպայ՝ ի զեղխութիւն եւս զանձն, յեաս եկաց այնուհետեւ ոչ ևս լսել խնամատուն խրատուց պաշտօնէին, և սիրա նորա զհետ գնաց սիրոյ կանանց։ Եւ յորմէ հետէ եթող նա զառաքինութեան շաւիղս, երթալով երթայր և ընկղմէր ի մոլութիւնս ախտից, մինչև զիշատակ անառակ գնացից թագաւորացն առաջնոց ի մոռացօնս արկանել։ Սակայն անաղօտ մնացին ի նմա բարեբաւութիւնք սրտին և աղքատասիրութիւն, որ բնածինք գոգցեա էին ի նմա առաքինութիւնք։

Ած ի ցուցանել զնաժդժութիւն բարուց այնր ժամանակի փրանկացն, ի գէպ է պատմել ստուգիւր զանցս կոտորածին Բուղղարաց։ Հասուած ի սոցանէ գաղթէր իւրև բիւր մի դերդաստանաց ի Գաղղիա՝ հալածեալ յերեսաց Հոնաց ի Պաննոնիոյ։ Զառաջինն սիրով ընկալան զնոսա փրանկք և թագաւորն նոցա Դագոբերտոս. այլ ապա տակաւ խնդացեալ ի բազմութենէ նոցա, ի միում գիշերի ընդ սուր հանին զնոսա նեղդաւ։ Այս անպարտ կոտորած անմեղաց՝ հաւաստի ցուցանէ մեզ՝ թէ յոր բարբարոսութեան կային յայնժամ փրանկք, թէպէտ լուսաւորեալք ճշմարտութեամբ քրիստոսական կրօնից։ Դէպ լինէր ի նմին ամի արշաւել Սլաւեանց ի Գաղղիա զօրավա-

բուլեամբ վաճառականի ուրուն գաղղիացւոյ Սամին անուն, որ ուրացեալ ՚ի հաւատոցն Թագաւորէր ՚ի վերայ Նոցա: Զօրացան սոքա ՚ի սկզբան. մինչդեռ մեծամեծք արևելեան Գաղղիոյ հակառակուլեամբ գոլով ընդ Թագաւորին՝ խոնարհեցուցանել զնա չկանային. այլ երբեմն ընկալան զնեղիլսն Թագաւորեցուցանել զորդի նորա զՄիգեբերտոս մանուկ եռամեայ ՚ի վերայ իւրեանց, հաշտեալ ընդ արքային հալածեցեալն զբարերարոսս ՚ի սահմանաց իւրեանց:

Ինքնին և արքայն Դագոբերտոս զօրացաւ ՚ի վերայ Կուասքոնաց և Պրեգոնաց. և ՚ի ծագ հասեալ փառաց՝ մեռաւ, և ամփոփեցաւ ՚ի տաճար սրբոյն Դիոնեսիոսի [1], զոր իւր իսկ կառուցեալ էր և Ճոխացուցեալ պարգեւօք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց (638):

Առ Թագաւորս Լեամբ Կլոտաբիոսի և որդւոյ նորա Դագոբերտոսի [2], որպէս առ-

1 Տեսանի ցարդ ՚ի խոշոր փանդակս ՚ի վերայ որմոց եկեղեցւոյ սրբոյն Դիոնեսիոսի ընդ այլ հրաշալիս և խոխ- ինչ պարմանալի ընդ ճեղ սրբոյս և դիւաց առ ՚ի յափշտակել ՚ի յեռաց ոմանց վհոգի Դագոբերտոսի յելանել նորա յաշխարհէս:

2 Երեսելի եղև ՚ի ժամանակի երկոցունց թագաւորացն հօրն և որդւոյն՝ առաքեն Ելուա ճարտար յոսկերչութեան. որ և ամբարձեալ ապա ՚ի կարգ սահմանութեան ընտրեցաւ եպիսկոպոս Նոյոնի: Սա յօրինեաց ոսկեայ գահոյս արքային

սաքն, ի ծայր փառաց և յաջողութեան բաղդի եհաս պետութիւնն Փրանկաց: Ալ զայս գեղափայլ նշոյլ փառաց վաղ ընդ փոյթ առացուք խրթնացեալ երկպառակութեամբ իշխանաց, կամ մանաւանդ վատութեամբ ապիկար թագաւորաց, որք ըզտեսչութիւն պետութեանն ի ձեռս հազարապետացն արքունեաց թողեալ ի սպառ յոյզք և թուլամորթք, ուր ուրեմն ապա և զիարդն թողին նոցա՝ անբաւականք ի բառնալ զնորին ծանրութիւն:

Յետ մահու Դագոբերտոսի բաժանեցին յիւրեանս զաշխարհն որդիք նորա. Կլովիս ի հառ զԲուրգոնդիա և զարևմտեանն Գաղղիա. իսկ Սիգեբերտոս ի զարևելեան Գաղղիա:

Յառաջ քան զամս ինչ օրիորդ ոմն Անգղիացի Բառիլդէ անուն յափշտակեալ ի հինից վաճառեցաւ իշխանի ումեմն արքունեաց Գաղղիոյ: Եւ ամենայն իսնամով սքնաւ աղջիկն ի տան իշխանին և յառնին խոնարհ սպասաւորութեան եցոյց յանձին առաքինութիւնս սքանչելիս, յայտ իսն այ-

Կլոպարիոսի, և այլ գահ նուվին ճարպարութեամբ, անհամեմատ գերազոյն նորա Դագոբերտոսի: Այսուհի յերաշտարձակ հանճարոյ ի ցոյց ճարպարութեան և ճոխութեան քանանաչին՝ պահեցան ամս հազար երիսերիս ի գանձս եկեղեցւոյ սրբոյն Դիոնեսիոսի. այլ առ խոռվութեամբ Գաղղիացւոց, խուճանն անդիպ եղեալ ապականեաց զայնոսիկ և ցրուեալ անյիշատակ արար:

նու ևս արարեալ զի աղնուականի էր ծը-
նունդ: Իսկ Թագաւորն Կլովիս տեսեալ
զբերմորդն՝ հարաւ ընդ գեղ նորա և ընդ ա-
ռաքինի բնաւորութիւն բարուցն, և ցանկա-
ցաւ ածել զնա ՚ի հարանութիւն: Եւ ար-
գարև ոչ զլքացաւ ընդ ընտրութիւն իւր.
քանզի Բասիլդէ յաղախնութենէ ՚ի տիկ-
նութիւն ամբարձեալ՝ եղոյց գնացիւք իւ-
րովք յայնապակս զի առաքինութիւն ծած-
կէ զանկածութիւն բազդի:

Զբարուց Կլովիսեայ՚ի հակառակ կարծիս
են պատմագիրք. և գովեն զՍիդեբերտոս
իբրև Թագաւոր արդար, և սրբութեամբ
պաշտօնէից իւրոց երջանիկ, յորս երևելի էր
Պեպինոս Տը Լանտէն հազարապետ արքու-
նեաց: Ունէր Գրիմուալդոս որդի Պեպինոսէ
և պայազատ իշխանութեանն, ոչ իբրև ըզ-
հայրն հաւատարիմ ցուցեալ տեառն ի-
րում և Թագաւորի, զամենայն իսկ զվարչու-
թիւն տէրութեանն յինքն գրաւեաց, զերկ
անուն Թագաւորի Թողեալ նմա: Եւ յետ
մահու Սիդեբերտոսի ժպրհէր իսկ անժա-
ռանգ առնել զորդի արքային՝ Թագաւորե-
ցուցեալ զնոր որդին փոխանակ նորա: Սա-
կայն նշկահեալ իշխանացն ապանին զբռնա-
ւորն, և ընդ սուտ համբաւ մահու արքայոր-
դւոյն Դագոբերտոսի, որ աքսորեալ էր յԻռ-
լանտա, Կլովիս հօրեղբայր նորա միաբե-
տեաց զաշխարհն, Թէպէտ և ոչ երկարա-
կեաց լեալ վախճանեցաւ (656):

Եմոզ Կլովիս զտէրութիւն իւր երից
որդւոց իւրոց աղայոց: Ընդրանիկն Կլոտա-

բիոս Գ առնոյր իւր բաժին զարևմտեան Գաղղիա ընդ Բուրգոնաիոյ. Քլդեբերիկոս Ա զարևելեանն Գաղղիա. իսկ Թէոդորիկոս մանուկ դիեցիկ գոլով դեռ ևս, չհանին նմա մասն ի հայրենի ժառանգութենէն: Եւ զայս այսպէս կարգելին իշխանք ընդդէմ օրինաց Մեծին Կլովիսայ, որ վասն Թագաւորութեանն հրամայեր: Եւ այս առաջին ոտնփոխ լինէր իշխանաց յիրաւունս ընտրութեամբ կացուցանելոյ Թագաւոր. և պատճառք երացս անփոյթ առնել Կլովիսի Ա առ կենդանութեամբն բաժանել զտէրութիւն իւր յորդիան:

Ոչ ինչ անցք անցին արժանի յիշատակաց առ Թագաւորութեամբ արքայից. միայն գովութեամբ յիշի խոհական քաղցրութիւն և արդարութիւն մօր նոցա Բասիլդէ դըշխոյին, որ խնամակալ կացեալ որդւոցն՝ յոտին պահեաց զնոցայն Թագաւորութիւն. և զԳաղղիացիս էև ևս ազգախառնութեամբ միացեալս ընդ Փրանկաց, որք ի ծանր ծանր գլխահարկաց ստգնապեալք զանձինս ի դերութիւն վաճառէին՝ փրկանաւորեալ, և զծանրութիւն հարկացն եբարձ ի թիկանց նոցա: Եւ ինքն մեծանուն գլխոյս այս Բասիլդէ ընդ սուրբս եկեղեցւոյ կարպեցաւ (668):

Զկնի սակաւամեայ Թագաւորութեանն իւրև մեռաւ Կլոտարիոս, միահեծան կալաւ գլխանութիւնն Քլդեբերիկոս եղբայր նորա, և ընտրեաց ի հազարապետս զսուրբն Լէոտհէր կամ Լէժէր եպիսկոպոս

Ոմանք, տարագիր արարեալ զանգուածն Եբրոյենոս ի մենաստան ուրեք: Այլ վաղ իսկ տաղտկացեալ Թագաւորն ի յանդիմանութենէ սրբոյն, որ ոչ դադարէր ի խրատել զնա յեաս կալ յանառակ գնացիցն, աքսորեաց և զնա ի նոյն մենաստան, յոր Եբրոյենոս արգելեալ կայր: Եւ Թօթիլա եպիսկոպոսն Քլերմոնի յանձնէ զլուծ խմաստուն խրատուց առաքինի պաշտօնէին, և գերի վարեալ ի բռնութենէ ախտից, երագեաց զմահ իւր: Քանզի ցասկոտ և վայրագ բնաւորութեամբն՝ բարկացեալ յոյժ յաւուր միում ի վերայ Պոտիլիոնի ուրուճն առն աւագի վասն համարձակ յանդիմանութենէ նորա, հրամայեաց կապել զնա ի ցից, և բազմեծ առնել խրճուկ ոք: Զայրացեալ Պոտիլիոնի լի ցասմամբ ընդայս պատուհաս անարգանաց՝ եդ ի մոխ ինդրել զվրէժ քինուն. գարանեցաւ նմա ի մայրիս, և յանկարծ հասեալ ի վերայ խողխողեաց զարքայն Թագուհուին հանդերձ և երկուք որդեկօքն (673):

ԳԼՈՒԽ Ը.

Ընտրեալ քահանայ առ Տէրունեան թագաւորէ, և զբռնաւալ հալածապետացդ արժանեացդ. յորս երևելի լինին Պետինոս և Կարոլոս Որոն:

673 – 732.

Թէոդէս և ապրեցաւ պատանեակ մի ի չարաղէտ կոտորածէ տանն Քլոդերիկեայ, այլ իշխանացն արհամարհեալ զնա՝ թագաւորեցուցին զՀօրեղբայր նորա զԹէոդորիկոս Գ., զորդին Կլովիսեայ:

Եբրոյինոս պատեհ գտեալ զնեղբին յոյզս խռովութեան, խոյս ետ ի բանտէն. և յինքն ձգեալ զժողովուրդս արևելեան Գաղղիոյ՝ յարձակեցաւ նոքօք ի մենաստանն ուր էր սուրբն Լէոտակէր ոսոխ նորա, և խժաբար ետ բրել զաչս նորա և կտտամահ ապանանել: Եւ անտի զէն ի ձեռին ահաբեկ արարեալ զնորընտիր թագաւորն ըզԹէոդորիկոս, կալաւ բռնութեամբ զիշխանութիւն արքունի հազարապետութեան:

Մինչդեռ զայս օրինակ ծփէր ի յոյզս շփոթից տէրութիւնն, Դագոբերտոս ի տարագրեալն յԻռլանտա, հրաւիրանօք իշխանաց եկն և թագաւորեաց յարևելեան Գաղղիա: Չամառօտ եղև թագաւորու-

Թիւն նորա. քանզի իբրև բռնութեամբ անիրաւութեան և անօրէն զէզծ գնացիւք վարեր զիշխանութիւն իւր, նշկահեցին ըզնա իշխանքն, և Եբրոյինոս ետ սպանանել զնա յանգորրութիւն գաւառին: Սակայն և անգութն Եբրոյինոս ոչ վայելեաց ընդ երկար յանօրէնութեան իւրում: Բնակիչք արևելեան գաղղիոյ երկուցեալ ի բռնակալութենէ նորա, ջննկալան իւրեանց ի Թագաւոր զԹէոդորիկոս. սակայն և հաստատուն կամեցեալ պահել զիւրաւունս ընտրութեան Թագաւորաց, զՊեպինոս հէրիստալ յաթոռն ի զարմէ կարգեցին իւրեանց յիշխան: Իսկ Եբրոյինոս զկնի երկար տիրապետութեանն ընդունէր զարժանահաս պատուհաս անմիտ անափառութեանն. քանզի ի խորհէն և զոմն յիշխանաց իւրոց սպանանել, աճապարեալ նորա ի մի հարուած տապաստ էարկ զբռնաւորն, և զերծոյց զպետութիւնն յանագորոյն գահճէն (683):

Սակայն Թէոդորիկոս ոչ ինչ բնաւ զգաստացեալ այսու, և ոչ փութացեալ ի ձեռն առնուլ զերասանական տեսչութեանն, կացոյց անդրէն այլ բռնակալս, և օր քան զօր յաճախեր Թիւ հատուածելոցն յիւրմէ յարևելեան գաղղիա: Անագան ուրեմն սթափեալ Թագաւորն ի խոր Թմբրութենէն, փութացաւ խափանել զնիւթալն վտարանդութիւնն, և էլ պատերազմաւ ի վերայ դէպսին արևելեան գաղղիոյ: Այլ զի անագան էր յոյժ այս զգուշութիւն և անխորհուրդ,

ոյժն ծանր եղև նմա յոյժ. քանզի պատեալ էարտաքսեալ յերեսաց դքսին Պեպինոսի՝ զԹարմատաւր ևեթ զանուն կարացեալ պահել զԹագաւորէն, և Գաղղիա ողջոյն անկաւ ընդ ձեռամբ դքսին, որ հանճարեղ վարչութեամբ երջանիկ զաշխարհն արարեալ՝ սիրելի եղև ամենեցուն (690):

Յետ այնորիկ վաճառեցաւ տունն Մերովեանց, կորուսին նոքա զալքայտավայել փառս, յորացան՝ ի գրգանս փափկութեան, բնութեամբ կարծես անարժանք երևեալ արքայորդիս գոլ և փառազունս: Սոքա այսպիսի Թագաւորք՝ ի խորչ մի արքունեաց Թագուցեալ գոլանային զանձինս՝ ի տեսութենէ հասարակաց. և՝ ի տարուընջ՝ ի յայտնի ինչ աւուրս ևեթ արտաքս երևէին շրջելով ընդ քաղաքն՝ ի սայլս լծեալս յարջառոց: Եւ չէր ումեք իշխանութիւն յանդիման լինել Թագաւորին անհրաման՝ ի հաղարապետէն:

Իսկ Պեպինոսի համբաւ անուանն երթայր և մեծանայր, շքեղ յաղթութեամբք և քաղցրութեամբ ըղձակերտ բերելով յինքեան բարս, և մանաւանդ նախանձու բարեպաշտութեան՝ ի հաստատութիւն քրիստոսական ուղղափառ կրօնից և բարօրութեան հասարակաց, ընտրելացուցանէր զնա Փրանկս ընդ իշխանութիւն իւր:

Յետ Թէոդորիկոսի կացին Թագաւորք վատք և իգացեալք. Կլովիս Դ, Քիլդիբերտոս Գ, Դագոբերտոս Գ ընդ ձեռամբ Պեպինոսի. որ միանգամ նոքա ընդամա-

ցեալ ննջէին ի վերայ գահոյիցն, ինքն պե-
պինոս հակէը ի վերայ նոցա, վանեալ ընկ-
ճեալ զնշանաժիս սէրուբեանն զՄաքսոնս,
զՊաւարացիս, զՀունեոս, զՓրիզոնս և զայլ
ամենայն խուժս ընդունէցս իշխանութեան
Փրանկաց և ոխերիմն Գաղղիոյ: Եւ վախ-
ճան առնէր գեղափայլ արուեստիւնց իւրոց
այրն քաջակորով յետ քան և եօթն ամաց
իշխանութեանն (714):

Յետ մեռանելոյ Պեպինոսի Փիլբերի-
կոս ի որդի Փիլդերիկեայ որ ապրեցաւն
ի կոտորածէ տան հօր իւրոյ, ամբարձաւ ի
գահ հայրենի: Քաջ ի բաց տեսանելմբ զսա
ի գնացիկ կնամարդի Թագաւորացն առաջ-
նոյ • ոչ ի Ճարտարուեստիւնէ և ոչ ի մեծա-
խոհուեստիւնէ վերջացեալ, փուեթացաւ Թա-
գիւել զանձն ի խնամակալութիւնէ արքունի
հազարապետութեան, այլ անկաւ ընդ զօրու-
թեամբ Ճարտարագունի քան զինքն և առն
քաջի: Քանզի կարծրոս Ուռն որդի Պե-
պինոսի՝ նմանող առաքինութեանց հօրն,
ժառանգ եկաց և փառաց աւագութեան
նորա: Թիկունս ունելով ինքեան զժողո-
վուրդս արևելեան Գաղղիոյ զերծաւ ի
բանտէն՝ յոր արկեալն էր ի հօրէն իւրմէ. և
յաղթանակեաց ի վերայ հակառակորդաց
իւրոց, հազարապետին Հռագինփրետոսի,
դքսին Ակուիտանիոյ Եւդէոսի և ի վերայ
Թագաւորին Փիլբերիկոսի, զոր և դարձու-
ցեալ յապարանից դքսին Ակուիտանիոյ՝
կալաւ ի պատուի Թագաւորութեան. և
Թէպէտ զամենայն արքայավայել մեծա-

բանս ընծայէը նմա, այլ զվարչութիւն աշխարհին գլխովին անձին սեպհականէը, իբրև ի վարձ յաղթող ընտուցն և ոչ լոկ ժառանգութիւն: Ոչ զարտուղեցաւ երբեք կարոլոս յիմաստուն շաւղաց հօր իւրոյ Պեպինոսի. հանապազ զէն ի ձեռին շուրջ գայր զսահմանօք աշխարհին՝ արգելուլ զարշաւանս Սաքսոնաց, Փրիզոնաց, Ալամանաց, Շուեռաց և Պաւարացւոց, որք յամէնուսաւ դիմէին յաշխարհն Փրանկաց: Եօթնիցս մըխեցաւ կարոլոս յերկիրն Սաքսոնիացւոց՝ որք ի թանձր կռապաշտութեան կէին, այրեացաւէը արար զաշխարհ նոցա, այլ անմարթ եղև ածել զնոսա ի քրիստոնէութիւն: Եւ զայլ ժողովուրդս Գերմանիոյ երկիցս և երիցս նուաճեալ՝ առաքեաց նոցա քարոզս հաւատոց 1, և ծանօթութեամբ աւետարանին ընդելացոյց տակաւ զվայրենի մարդիկն ի հնազանդութիւն հպատակութեան և ի համբոյր լինաւնի կեանս:

Ի մեռանել Փիլբերիկեայ Բ, խորհեցաւ կարոլոս Ուռն միաբանութեամբ իշխանաց Թողուլ զորդի նորա և ժառանգ, և նստուցանել յաթոռ թագաւորութեան զԹեոդորիկոս Դ զորդի Դագոբերտոսի Գ:

1 Սուրբն Վիլլեբրորդ առաքեալն փորձ եկաց հաւատոց առ Փրիզոնս, սուրբն Հոբերտոս Թուռանփրիացւոց: Այլ գերաւոր փորձ հաւատոց ի Գերմանիա սուրբն Վոնիֆակիոս, որ արժանապէս իսկ իւրեցաւ առաքեալ Գերմանիոյ, ուր և վկայութեան ընկալաւ պսակ:

ԳԼՈՒԽ Թ.

Ընծաւոն Աբաբայոց ի Գաղղիա, ի սպա-
սպօս խորհուրդն նոցա ի չեռն փոլին կար-
լոսի, և բարձրն Թագաւորութեան ի փառն
Մերովենց։

732 – 750.

Ջ ՈՑՆՈՒ ժամանակաւ դէպ եղև արշա-
ւել Արաբացւոց ի Գաղղիա. զի չետ ա-
ւերելոյ ընդ դրօշաւն Մահմետի զմեծ մասն
Ասիոյ և Ափրիկեայ, և բառնալոյ ի Սպանիոյ
զթագաւորութիւն Վիսիգոթաց, տիրապե-
տեալ ընդարձակ գաւառին, անցանէին նո-
քա անտի ընդ Պիրենեանս քառասուն բիւ-
րու զօրաց ընդ առաջնորդութեամբ Ան-
թիւրրահմանայ յարձակեալք ի Գաղղիա։

Ողորմելի էին յայնժամ իրք աշխարհին. արևելեան և արևմտեան գաւառք ի մի-մեանց ձեղքեալ՝ ոչ չայլ ինչ փութային քան ի վաճառել զտէրութիւն Փրանկաց։ Բուրգոնտիա ի վերին երեսս հպատակեալ, ինքնագլուխ իշխէր ազատ։ Նոյնպէս և ընդարձակ գաւառք Ակուիտանիոյ ընդ իշխանութեամբ դքսին իւրեանց անկախ ի թագաւորէն վարէին. իսկ հիւսիսակողմեան և արևելակողմեան Հռենոսի գաւառք ոտնակոխ արշաւանաց բարբարոսաց Գերմանիոյ,

յապականութիւն դնէին: Մինչդեռ Փրանկք զայնու ալիկաւն էին, գիմէր Ապիւերտահման որոյ տալ Ճարակ զբնակիչս աշխարհին, կամ տարաշխարհիկ յօտարութիւն վարել զնոսա, և զիւրան անդ բնակեցուցեալ՝ զմայմէտականութիւն վոխանակ քրիստոնէութեան կարգել: Ժողովուրդք երկրին պակուցեալ՝ տարագէմ փախստեայ երթային յերեսաց նոցա: Չարաւ ընդ նոսա Եւդէոս դուքս Ակուիտանիոյ, և չարաչար խորտակեալ՝ն նոցանէ, անկաւ առ Կարոլոս՝ն խնդիր օգնականութեան: Ոչ ինչ յապաղեալ Կարոլոս զօրաժողով եղև՝ն քաջացն Փրանկաց, և աճապարեալ՝ն գիմի հարաւ Թշնամւոյն՝ն Տուրոնէ:

Ապիւերտահման և Կարոլոս, երկոքին մեծանուն զօրավարք՝ն ժամանակին, ունէին ընդ ձեռամբ իւրեանց զօրականս սովորեալս՝ն յաղթութիւն, որով և անյաղթելիք Թուէին յաչս անձանց. Ապիւերտահմանայ զօրացն Թիւ առաւելոյր բազմօք, սակայն Կարոլոսի հնարագիտութիւն ընոյր զայնը զտեղի:

Սկիզբն եղև մարտին երկուստեք հաւասար քաջութեամբ: Արաբացիք զսակաւութիւն Թշնամեացն արհամարհեալ՝ վստահք էին՝ն յաղթութիւն. իսկ Փրանկք յաղթանդամք և հակայաձիք իբրև զգաճճս անդոանէին զԱրաբացիս: Եւ արդարև անդէն՝ն բաղխել մարտին՝ առաջի քաջացն Փրանկաց խորտակէր Ճակատ զօրաց Թշնամեացն. այլ նոցա վերատին կարգեալ՝ն

ազամ, անդ Ալտիւրրահման ընդ ամենայն կարգս զօրուն անցեալ նորա՝ և անխանջս ՚ի զօրուէն հանելով միշտ ՚ի ճակատ՝ ծածկէր և Թագուցանէր զմեծ կոտորած իւրոցն : Եւ իբրև այսպէս ընդ ժամս ձիգս երկաբեր գործ պատերազմին, ահա յանկարծ լսելի եղև ՚ի հեռուստ աղաղակ ողբոց ՚ի բանակէն Արաբացւոց. քանզի կարծէաց զօրահասոյց արարեալ գունդ մի ՚ի Փրանկաց՝ արձակէր ՚ի բանակ Թշնամեացն. որոց սուր ՚ի վերայ եդեալ կոտորէին զզօրականս, զկանայս և զմանկունս յանխնայ : Թէպէտ խռովէր զօրն Արաբացւոց ընդ ձիչ և ընդ գոչիւն բանակին և ընդ բոյ հրոյն որ ճարակէր, այլ Ալտիւրրահման ոչ Թողոյր նոցա գառնալ ՚ի Թիկունս, քաջութեամբ տեւեալ մինչև ՚ի մուտս արեւուն ընդդէմ Փրանկաց: Այլ իբրև անկաւ քաջ զօրավարն ՚ի խռան մարտին, խառն ՚ի խռուն ՚ի փախուստ աճապարեցին Արաբացիք ՚ի բանակն, կարծելով անդէն քաջութեամբ պաշտպանել անձանց: Անդ ևս տեսեալ ըզկանայս և զմանկունս խողխողեալս, ընդ խաւար գիշերին փախստեայ գնացին յոսպաբեկք՝ Թողեալ զվրան և զաղխս իւրեանց ՚ի ձեռս Փրանկաց աւար ճոխ և մեծագանձ : Ի Փրանկաց անկան արք հնգետասան հազար միայն, իսկ Արաբացւոց անթիւ կոտորեցան աւելի քան զերեսուն բիւր մարդիկ (732) :

Յահապին կոտորածէն զարհուրեալ Արաբացւոց, ոչ ևս իշխեցին յետ այնորիկ մը-

առաքեալ վերատին յաշխարհակալութիւն Գաղղիոյ. և կարօղ յայնժամ կալաւ ըղձաքեզ զանուանն զայն Ռուն, Լախիչ զօրութեան Արաբացւոց: Սովաւ ոչ միայն Գաղղիա, այլ Եւրոպա իսկ ողջոյն զերծաւ ի լծոյ անհաւատից, որ առ գուբս սպառնային կլանել զաշխարհն բովանդակ:

Յետ վախճանին Թէոդորիկոսի Դ չկացոյց զոք յաջորդ Կարօլոս, այլ գքսութեան անուամբ միապետեաց մինչև ցմահ: Խոնարհեցոյց նա զԲուրգոնտիա և զՊրովինկիա յիւր ի հնազանդութիւն, ի հարկի կացոյց զԱքսոնա և Փրիզոնս, և զԱկուիտանիա հաճ ընդ հպատակութեամբ (741):

Սակաւք ոմանք արդեօք գտանիցին հաւատար առաքինութեանց քաջին Կարօլոսի և ոչ ոք գերազանց: Նախատեաս էր այրն, ժիր, խոհական, ուժեղ, քաջասիրտ. համառօտ ասացեալ զմեծամեծ առաքինութիւնս քաջի զօրավարի և թագաւորի՝ քաջ լծորդեր նա յանձին: Ա յսու ևեթ գտաւ սպգտանելն, զի ի վարձ զօրականին տայր նա աթոռս՝ տաճկանս և կեղեցականս, որով զեղծան կարգք եկեղեցւոյ. զի վարժեալ նոցա զինուորական ազատութեամբն՝ զնոյն մուծին և յեկեղեցւոջ. ոչ թողին ի բաց ղշրահս իւրեանց, և քան զայսոսս առ իշխանն այլ ինչ ոչ գիտէին, և յոլով ի զինուորելոց եպիսկոպոսաց ազատօրէն վարուք իւրեանց ծանր ծանր գայթակղութիւնս մուծին ի տուն տեառն:

Կարօլոս Ռուն երիս ևթող որդիս, յո-

րոց Կարլոմանոս եկաց դուքս արևելեան Գաղղիոյ իբրև հայրենի ժառանգութեամբ, Պեպինոս իշխան Գաղղիոյ իբր հազարապետ, և Կրիսիոն զինան ինչ աշխարհին կալաւ առանձին իշխանութեամբ:

Ի մեռանել Թէոդորիկեայ Դ. դասարկ կայր արքունի գահն. մարթ էր Պեպինոսի ինքնին գահակալել կամ Թողուլ այնպէս, այլ զի մի յաչս յաշխարհս խեղճ լիցի՝ զՔլըդերիկոս Գ. զայր ասլիկար զորդի Քլըդերիկոսի ամբարձ 'ի գահ Թագաւորութեան՝ զամենայն իշխանութիւն տէրութեան յինքն կալեալ որպէս զառաջինն: Երկոքին եղբարքն Պեպինոս և Կարլոմանոս միաբան հաւանութեամբ զրկեալ զեղբայր իւրեանց կրտսեր 'ի դոյզն իշխանութենէն՝ կառավարելին զպետութիւնն, և քաջութեամբ խորտակեալ զՇնաամիս աշխարհին զԱլամանս, զՊաւարացիս, զԱքսոնս, զԱկուիտանացիս՝ զարմանալի եղեն ժողովրդեան իւրեանց և ահաւոր օտարաց: Իբրև Թուէր անխափան վայելել նոցա յարգասիս վաստակոց իւրեանց, Կարլոմանոս այր արբանեկր վաղ ընդ փոյթ տապալեցաւ 'ի կենցաղականացս և արհամարհեալ զՄեծութեամբ աշխարհի և զյաղթութեամբ՝ կրօնաւորեցաւ և մեռաւ արբանեկութեամբ (746):

Պեպինոս միահեծան ժառանգեալ զտէրութիւնն, ահաւոր ցուցաւ դրացի ազգաց, մեծարոյ յաչս աւագաց, պատուեալ յեպիսկոպոսաց և սիրելի ժողովրդեան: Խորհէր նա այնուհետև առնել զվերջին քայլափոխ

'ի գահ անդր, զորոյ ցայնժամ զբեռն միայն բառնայր: Բայց ըստ արդարութեան և ըստ օրինաց աշխարհին կամեցեալ զայն գործել, միաբանութեամբ Իշխանաց և հաւանութեամբ Ազաթարխայ պապին եւս ընտրել զինքն Թագաւոր Գաղղիոյ. և արկեալ զՔԻԼԴԵՐԻԿոս յաթոռոյն արգել 'ի մենաստան ուրեք (750):

Ա յսպէս բարձաւ Մերովեան կարգ Թագաւորաց զինի երկերիւր վաթսուն և չորից ամաց, յարշաւանաց անտի Կլովիսի 'ի Գաղղիա: Սակաւք եղեն 'ի նմա Թագաւորք առաքինիք. առանին գժտութիւնք և նեղքին պատերազմունք վաստակեցին նախ զջորութիւն նորա, ապա վատ և կնամարդի կեանք վերջնոցն 'ի Թագաւորաց 'ի կործանումն հասուցին զպետութիւնն զայն հզօր:

ԲԱՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

ՓՐԱՆԿԱՑ

ԱՒՐ ԹԱԳԱՒՈՐՕՔ ԱՒԱՋՆՈՑ ՏՈՀՄԻՆ

Ա.

Նկարագիր հերպարանաց Փրանկաց և բարուց նոցա և վիճակաւորութեան: Դարձեալ պայմանք ապքաճանի ի նոսա, բարբառ նոցա, ընտրութիւն թագաւորի, և իշխանութիւն նորա և իրաւունք յաջորդութեան:

ՄԻՆՉ ԶԵՒ միացեալ Փրանկաց ընդ Գալղիացիս և ընդ Հռովմայեցիս, սուրբն Սիդոնիոս Ապողինար քերթող անուանի առ Կլովիսաւ՝ այսպէս զկերպարանաց նոցա և զբարուց տայ զնկարագիրը: «Յաղթահասակք են, ասէ, և սպիտակամորթք, աչք նոցա կապոյտ, երեսք գերծեալք, ընչացս միայն կրեն: Շիկահերք են, և թողուն աձել հերացն ի ձակատու, ի յետ կուսէ փոքրեալ: Կարձք են հանդերձք նոցա, մինչև ի վեր քան զծունկս հանգրիձեալ և ղուսապք՝ զմերկ մարմնոց բերելով զձև: Ածեն ընդ մէջ գօտի լայն, զորմէ ծանուննքն

նոցա կախին վաղակաւորք: Ճարտարք են քան զամենայն բարբարոսս ի հրահանգս ընծայից և ի կրթութիւն պատերազմի. և րագունք քան զնետս իւրեանց յարձակին ի վերայ թշնամեաց. քաջասիրտք և կորովիք, սան անհոգ զկեանս իւրեանց ի մահ, և ոչ երբէք խառնեն վատութիւն ընդ արութիւնս քաջութեան իւրեանց»:

Չեռակք էին զօրք Փրանկաց, և զինք նոցա սուսեր, գեղարդն և սակր երկայրի: Առաջնորդ կայր բանակին Թագաւորն, զօրագլուխ նոյն ինքն և յառաջամարտիկ զօրական: Ցետ յաղթութեան հաւասար բաժանէին զաւարն յամենեսին, և քանզի չէր յայնժամ այլ ռոճիկ զօրուն, վասն որոյ հարկ ի վերայ կայր պարտեզոցն ի յափըշտակութիւն մատնել յաղթականին: Եւ յետ վախճան լինելոյ մարտին, զարձ առնէր զօրն առ ընտանիս իւր, քանզի գեռ ևս ի ժամանակին յայնմիկ անծանօթ էր նոցա կանոնաւոր զինուորութիւն. այլ ի կարևոր գէպս զինուոր էր ազգն ողջոյն, և ամենայն ոք զէն առեալ գումարէր ընդ զօրավարի գաւառին իւրոյ:

Ցերիս բաժանէր պայմանս կենաց կամ յերիս կարգս ազգն Փրանկաց. առաջին ազնուականք, երկրորդ ազատք և երրորդ ստրուկք, կէսք ծննդեամբ և կէսք իրաւամբք մարտի գրաւեալք ի սարկութիւն: Ամբ աւագք յազնուականաց Փարոնք կամ Պարոնք կոչէին. և յազնուականաց անտի ընտրէին գուքսք՝ առաջնորդք զօրուն, կոմսք՝

տեղակալք Թագաւորին, փոխանակք դքսից
ի սեաչուելիւն առանին իրաց պետութեան.
Մարգիզք (Մարքիզ) կոչնականքն՝ որք ի
մարզս աշխարհին առաքէին ի վարչու-
թիւն. և հազարապետք արքունեաց, որոց
ի սկզբան լոկ սեպուհք գոլով պաշտօնէից
արքունի պալատան, տակաւ ապա ամբար-
ձան յառաջին բարձ աստիճանս թագա-
ւորութեան:

Նախնի Փրանկք զգերմանական խօսէին
լեզու, և յորժամ մտին ի Գաղղիա՝ ա-
նին էր յայնժամ բարբառ բնակչաց աշ-
խարհին, սակայն յեղափոխեալ յոյժ ի
խառնուրդս գաղղիական բառից: Յաղ-
թողք տակաւ ջլաղթելոցն առին զբարբառ.
այլ այնպէս այլափոխ եղեւն նմա կերպա-
րանս, մինչ զի ի վախճան Մերովեան թա-
գաւորաց զառաջ լսելին լեզու ի ռամիկ
բարբառոյն, և կոչեցաւ Հռովմէական:
Այսպէս ահա ի վեր երևեցաւ այժմեա
գաղղիացի բարբառ՝ խառնուրդ ելեն ի լա-
տինացւոյն, ի գաղղիացւոյն և ի գերմանա-
ցի լեզուաց:

Յամենայն ժամանակս և յամենայն ազինս
ընտրութիւն Թագաւորի կամ մեծ նորա
յիշխանութիւն մեծահանդէս կատարէր ազ
նիւք, վասն որոյ և նախնի Թագաւորացն
Փրանկաց սովորութիւն էր ի բանակի առ-
նուլ զիշխանութիւն ասպրութեան. ազնուա-
կանք և ժողովուրդն վառեալք ի զէն և ի
զարդ զինուորութեան ամբառնային զնո-

բապատակ Թագաւորն ի վերայ վահանի, և երից շուրջ ածէին զբանակաւն ի գոչիւն բազմութեան: Հաւանականի Թուի զի Կլովիս և յաջորդք նորա յաւելուին ի հանգէան և զօծումն Թագաւորական. քանզի յայտնի է և հռչակեալ առ Գաղղիացիս աւանդութիւնն այն հրաշից դիպելոց ի ժամ մկրտութեան և օծման Կլովեայ, իջանել աղաւնոյ շիշ ի բերան առ Հռեմիգիոս եպիսկոպոս, որ և պահէր շիշն այն երկնառաք՝ յօծումն Թագաւորաց Գաղղիոյ:

Իսկ վասն իշխանութեան Թագաւորի տեսանեմք ի վէպս պատմութեան Կլովիսի և յաջորդաց նորա, զի ազատք էին նոքա և ինքնիշխան անօրէնք պատերազմի, խաղաղութեան, դաշանց, նիզակակցութեան, արկանելոյ հարկս ի վերայ հպատակաց, և կարգելոյ ըստ կամի զօրավարս, կոմսս և Թագաւորս:

Ժառանգութեամբ էր յաջորդութիւն նոցա, և ամենայն որդիք արքայի ժառանգակիցք էին Թագաւորութեանն անխտիր. վասն որոյ միշտ լարաբաժին լինէր Թագաւորութիւնն յարքայորդիս: Ա՛յլ յետ կլովեայ Բ զօրացեալ իշխանացն ձեռն արկին յիրաւունս ընտրութեան. նախ ի մէջ որդւոց արքային վախճանելոյ սահմանեալ ընտրութիւնն, և ապա ի մէջ իշխանաց Թագաւորեմ տոհմին:

Բ.

Ժողովի Փրանկաց, արքունիք, օրէնք, դատաւորք, ի՛նչ տնօրինեան ի դատս, ինամարք, դպրութի՛ւն և գի՛րք։

Ի տալոյն միանգամ և երկիցս լինէր ժողով ազգախնամք ի դաշտ Արեսի։ Սակայն ժողովս այս գումարեալ յեպիսկոպոսաց և յիշխանաց աշխարհին՝ չմարթէր լինել լինքնին սահմանել, և միայն առաջի առնէր Թագաւորին զկարծիսն, ազգարար լինէր նմա ի բարեկարգութիւնս կարևորս, և բողոք ունէր զղեղծմանց ի նեըքս սպըդելոց. իշխան էր Թագաւորն յեա լսելոյ նոցին՝ մեղմել ըստ կամի և սահմանաւորել զօրէնս պետութեան։ Որով յայտ է զի անգամին ի ժամանակէ անտի միապետական էր վարչութիւն գաղղիոյ։

Արքունիք Թագաւորաց առաջնոյ տոհմին չէին իբրև զյետնոցն մեծափարթամք. զի նցեն Թերևս ձոխագոյնք քան զնոսա սպարանք արդի մեծատանց. քանզի էին նոցա անտառք և լինք, երամակք անասնոց, անգեայք և հօտք, և տրուկք ի ծառայութիւն, և տեսուչ ոք նոցին իշխան։ Ամենայն լինչ նոցա կարևորք էին առ ի պէտս, և ոչ հաճոյից լինչ սպասք։ Առաւել քան զհարիւր վաթսուն էին արքունիք ընդ ամենայն

աշխարհն. քանզի Թագաւորք Մերովեանք յառնուլ պարտ՝ի պատերազմաց՝ շրջէին ընդ գաւառս պետութեանն. և գիւղք և տիրոյք և արբայարանք որ՝ի վերայ Ճանապարհին՝ հանդերձէին զկարևոր պէտս Թագաւորին, զկառս, զբնակութիւն և զկերակուր: Մեծածախ և հոյակապք էին հանդերձանքն, և նուէրս իակ արքայավայելս արծաթեղէնս և ոսկեղէնս մատուցանէին նոքա Թագաւորաց:

Առաջին և նախնի մատեան օրինաց առ Փրանկս՝ էր Սալեանն, ի Սալիոցւոց Փրանկաց առեալ զանուն, զոր կրկին յաւելուածով յօրինեաց Կլովիս: Յօրէնս յայտնի էր և այն զի երկիր զինու զօրութեամբ ստացեալ՝ մի անցցէ ժառանգութեամբ ի կանայս, և մի Թագաւորութիւն զինուք ընդարամբ ածեալ. վասն որոյ առ Փրանկս ոչ երբէք Թագաւորեաց կին մարդ: Իակ ի պատուհաս յանցանաց օրէնք սալեանք ոչ սահմանէին զմահ, այլ տուգանս ըստ մեծութեան եղեռան կարգեալ. օրինակ իմն որ ոք վիրաւորէր զեղբայր իւր՝ի գլուխն, տուժէր գահեկանս ոսկիս հնգետասան. դերեզմանակրկիան տուգանէր երեսուն, նոյնպէս և մարդասպանն և շնացող: Զգոյին բանաք և արգելանք վասն պարտուց. պատուհասք ամիոփէին ի դրաւել զինչս յանցաւորին, և ի յետին չքաւորութիւն զնա արկանել, արգելեալ մի ումեք ձեռն տալ նմա. որպէս ընկճեալ յանցաւորն խոնարհէր, կամ Թողեալ զհայրենիս՝ իւրովն տար-

աշխարհիկ գնայր: Պարտաւորէին տեառքը վան գողգոթեան սուրկայ իւրեանց, և ընդ վեսասուց գործելոց յանապանց նոցա: Ի գէպս սպանութեան՝ 'ի վերայ ընտանեաց առ հասարակ անկանէին յանցանքն, և հարկ էր նոցա պատասխանի առնել դատաւորին 'ի Ջատագովութիւն իւրեանց. ասոի փոյթ էր իւրաքանչիւրոց ընդ ուղղութիւն ազգատոհմին առ հասարակ:

Յաւուրս նախնի Թագաւորաց առ Փըրանկս ոչ գոյին դատաւորք առեներակալք 'ի պետութեան, այլ իւրաքանչիւր կարգի մարդկան և արուեստաւորաց էին առանձին առեանք և օրէնք և սովորութիւն: Ի գիւղս հարիւրապետք էին դատաւորք, 'ի քաղաքս կոմսք, 'ի մայրաքաղաքս գաւառաց դուքսք. սակայն ազատք էին յառնել առցա եկեղեցականք և վիճաւորք. քանզի գլխոց դատաւորք էին եպիսկոպոսունք, և զօրաց զօրավարք. ասոի սկիզբն առին Փարիք կամ Սեպուհք Գաղղիոյ, այսինքն առեան եպիսկոպոսաց և իշխանաց: Աշխարհական դատաւորք ըստ պատուականեալք՝ այնպէս ասէին զվճիռ, որոց ընդդէմ 'ի Թագաւորն միայն մարթ էր բողոքել. որ եթէ անիրաւութիւն ինչ դատանէր 'ի վճռան պատժէր զդատաւորս: Փըրանկք սակս առեան օրինաց վարէին. Գաղղիացիք հռովմէականաց և քնիկ սովորութեանցն կարգաց: Իսկ այրեաց և որբոց տեսուչք էին եպիսկոպոսունք՝ որոց մեծ էր իշխանութիւն յայնժամ, և իբր օրէնսդիրք էին ժողովոցդ, և բանք նոցա որպէս պատգամք

համարեալ առաջի խուժադուժ Թագաւորացն:

Ի դէպս տարակուսանաց և՝ ի խնդիրս գժուարինս՝ ի փորձ անմեղութեան ամբաստանելոյն՝ սովորութիւն էր վխել զձեռն նորա՝ ի ջուր եռացեալ, կամ տալ նմա՝ ի ձեռս երկաթ շանթացեալ, կամ դնացուցանել զնա ընդ կայծակունս հրոյ, և այլ ինչ սոցին նման: Եւ եթէ հանդուրժէր փորձոյ սանջանացն, հաւաստէր անմեղութիւն նորա. ապա թէ ոչ, պարտաւորէր. և փորձն այն կոչէր Դատ Աստուծոյ: Վայրապար զինեցան ընդդէմ նանրահաւատ կարծեացս կրօնք ամենայն զօրութեամբ և բանաւոր փաստք մտաց. ընդդէմ բանադրանաց եկեղեցւոյ եկաց մնաց այն մինչև ցչորեքտասաներորդ դար:

Սոյնպէս սովորութիւն էր ոչնչ ընդհատ՝ ի անապաշտութենէ և ի հաստակարագոյն քան զայն՝ մեռամարտել՝ ի ցոյց արդարութեան անձին. քանզի երէք մարտին հաւատացեալն զերաւունս ամբաստանելոյն կամ դատախազին: Այս գործ խժութեան՝ ի հիւսիսականաց անտի ժողովրդոց տարածեցաւ Եւրոպա, և իբրև Թուէր նմին օրինօք Թագաւորաց արագ արագ բառնալ՝ ի միջոյ, ընդ հակառակն և ևս յաճախեաց. քանզի ամենայն ոք այնուհետև ըստ կամի՝ ի պաշտպանութիւն անձին խորհելով՝ նախատինս համարէր դանդաղել գալ՝ ի մենամարտ վասն գոյնն իսկ պատճառաց. ուր ուրեմն ապա՝ ի տպաւ ընկճեցաւ այս մոլե-

գնուելիւն մենամարտի՝ խիստ հրովարտակաւ Լուդովիկոսի Ա.Դ: Բայց Թէպէտ և այս անհետեւեալ և միաստակար կանխակալ կարծիք պատուոյ բարձան ի միջոյ, սակայն Թողեալ Ճապաղիս արեանց և աւերս բազում տանց աղնուականաց:

Ի մոռանել Փրանկաց ի Գաղղիա՝ մեծաբէր յոյժ գիտուելիւն յաշխարհին. բազում դարոցք էին ի նմա բարգաւաճեալք, և քաղաքն Ոլեան իբր նախանձորդ Իտալիոյ և Եգիպտոս հանգիստանայր ի գիտուելիւնս: Ա.Դ Ժողովուրդն աշխարհակալ զակատեալ ի սէր փառաց զինուց՝ արհամարհեաց որ ինչ գիտուեան և արուեստից էին մասունք. յաչս վայրենեացն և ի կորով զօրուելեան իւրեանց պանծացելոց Թուէր այն ամենայն վատաց և խգացելոց բաժին: Վասն որոյ ի պակասել պաշտպանուելեան և քաջալերուելեան՝ արագ արագ շինջանէին գիտուելիւնք. և եթէ դար մի ևս յապալէր անկումն Թագաւորուելեան առաջնոյ տոհմին Մերովեանց՝ ի քաղաքական ամբոխս շփոթից ի սպառ սպուռ խժուելիւն զառաձանէին Գաղղիացիք:

Ժամանակն այն՝ զորմէ վիպագրեմք, ամուլ դեռ ևս էր ի գիւտս կենցաղօգուտս. առ Քլղիբերտեաւ առաջնով սկսան ապակեայ պատուհանք յեկեղեցիս, Թէպէտև գիւտ հալելոյ զապակին երիցագոյն է յոյժ ժամանակաւ, և առ Օգոստեաւ հնարեալ: Ի վեցերորդ դարու սկսան ձուլել զանպակս մեծազանգուածս առ ի նշան ժողո-

վոյ և ի հանգէաս կրօնից բարեպաշտու-
թեան : Ալ տէս ինձ զհամարուելիւն
զայնր ժամանակի Փրանկացն. զի ի գալ
նոցա ընդ զօրավարութեամբ Թագաւորին
Իւրեանց Կլոտարիոսի Ե առ ի պաշարել
զԱանս քաղաք, ի լուր հնչելոյ զանգակաց
քաղաքին ահաբեկ լեալ ցրուեցան, յերկ-
նուսա ինչ որոտումն համարեալ զայն : Ի
ժամանակէ անտի եմուտ ի Գաղղիա սո-
վորութիւն կանգնելոյ ի հնչումն զանգա-
կաց աշտարակս բարձունս, որ զարդ մեծ
յաւելին քաղաքաց, փառաւոր յաղթանակ
կրօնից՝ երկնաբերձ զնշան խաչին ի գագա-
թունն բերելով :

Յետ երկուց դարուց առ Կարձահասակն
Պեպինոսիւ երևեցաւ ի Գաղղիա երգիոնն
բազմափող, զոր առաքեաց կայսրն Կոս-
տանդին Կոպրոնիմոս առ նոյն ինքն Թա-
գաւորն Գաղղիոյ : Եւ մատենագիրք ժա-
մանակին նկարագրեն զայն նուագարան ինչ
հազմեալ ի փքոյ և ի պղնձի խողովակաց,
որ էր զի երբեմն զօրոտմանց, և էր զի զարնդի
ածէր զհնչումն : Աւանգեն և ևս, զի մի ի
կանանց ի լսել զհնչիւն նորահրաշ գործ-
ուոյն՝ անկաւ յանզգայ ապշութիւն և մե-
ռաւ : Դարձեալ ի ժամանակի անդ Պեպի-
նոսի յամին 743 սկսան Փրանկք վարել
Թուականութեամբ վիրկիլն. քանզի յառա-
ջագոյն ազգ իւրաքանչիւր հաշուէր զամս
Թագաւորաց, ուստի շփոթք ի ժամանա-
կագրութիւնս յաձախէին :

ՏՈՀՄ ԵՐԿՐՈՐԴ

ԿԸՐՈՒԼՈՍԵՆԵՍ

ԳԼՈՒԽ Ա.

Թէ վճռեցաւ Պեպինոս կարճահասակ սկիզբն եղեալ Ռագաուրայ կարոլոսեան փոհմին: — Գործք արու-
ընեանց նորա և մահ:

751 — 768.

Ի ՄՐԱՐՁԱՒ Պեպինոս յաթոռ թագաւորութեան Գաղղիոյ՝ պայծառութեամբ զարմին, քաջութեամբ անձին և հաւանութեամբ փրանկաց. և ոչ լինէր ի ջանից ոչ եթող առ ի հաստատելոյն առնել զթոռ իւր իմաստուն վարչութեամբն, միանգամայն և մեծարոյ ընծայել զայն յաչս Ժողովրդեան: Գիտեալով նա զհամբաւ արքունեան Վռնիփակիոսի արքեպիսկոպոսին Մագունտիոյ, որ քարոզ եղև հաւատոյ Ժողովրդեան Դերմանիոյ՝ ցանկացաւ ընդունել ի ձեռաց նորա զօծումն թագաւորութեան: Այս

չքեղ արարողութիւն եկեղեցւոյ գրոշմեալ ի թագաւորս զնշան արքունեան, ցուցանէ զնոսա յաչս հպատակացն իբրև զարս կրնքեալս աստուածային նշանաւ:

Սկիզբն նորոյ թագաւորութեանս երևեցաւ ի եղև կարևոր ինչ գործով յօդուտ եկեղեցւոյ և պետութեան: Քանզի երկերիւր ամք էին, յորմէ հետէ թագաւորութեան Ասորոգոթաց Իտալիա փոխանակեալ էր գոբարգացւոցն աէրութիւն, հզօր զօրութեամբ ոնէր զաշխարհն: Եւ Ատոլփոս թագաւոր նոցա հալածեալ ի Հռաւեննայ զփոխարքայն Յունաց, աչս արձակէր զբռամբ ածել և զՀռոմ քաղաք: Ստեփանոս Բ քահանայապետան Հռոմայ դիմեաց յօգնականութիւն Կոստանդեայ Կոպրոնիմոսի արևելեան ինքնակալին, այլ նա զհետ գնալով անօրէն աղանդոյն պատկերամարտից, և հալածելով զհաւատարիմ ծառայս իւր, փոխանակ ձեռնտուութեան՝ խորհեցաւ բռնագատել զՀռոմայեցիս յաղանդ իւր: Յայս յետին վտանգ՝ դիմեաց քահանայապետան ապաստան լինել ի թագաւորն Գաղղիոյ, և յանձն արար զեկեղեցի ընդ հովանաւորութեամբ ձեռին նորա:

Եւ մինչդեռ պաշարեալ կայր Հռոմ, աղաչեաց Պեպինոս զարքայն Լանգոբարդացւոց Թոյլ տալ քահանայապետին անցանել ի Գաղղիա: Ատոլփոս Թէպէտ խնդայր ի փախստեանէ նորա, սակայն չկամեաց արգելուլ զնա. և քահանայապետան անցեալ ընդ Ալպեանս եգիտ արժանավայել իւրում

մեծութեանն ընդունելութիւն ի Գաղղիա, և եռեւս զթագաւորն և զիշխանս պատրաստս ի պաշտպանութիւն հռովմէական եկեղեցւոյ ընդդէմ բռնակալութեան Լոնդոբարդացւոց: Այլ մինչ չև ձեռն արկեալ նոցա ի մարտ, պատգամաւոր եղեն առ թագաւոր Լոնդոբարդացւոց՝ յեռս կալ յանիրաւ աշխարհակալութենէն. և ընդ ամբարտաւան պատասխանիս նորա ցասուցեալ Պեպինոս էանց զօրօք ընդ Ալպեանս, կոտորեաց զԼոնդոբարդացիս և պաշարեաց զթագաւոր նոցա ի փաւիա մայրաքաղաք տէրութեան նորա: Աստոլփոս ի նեղ անկեալ դաշինս կնքեաց ընդ արքային Գաղղիոյ յեռս կալ ի գաւառաց փոխարքայութեան Հռաւեննայ և յըղձից տիրապետութեան Հռովմայ:

Իսկ Պեպինոս զգաւառսն, զորս էառ ի Լոնդոբարդացւոց օրինօք մարտի, շնորհեաց եկեղեցւոյ. և զի ձեռն ի վերայ կայր, դարձ արար ի Գաղղիա յաղթական զօրօքն:

Ի հեռանալ Պեպինոսի զմնաւ ածեալ Աստոլփեայ զծանր ծանր տոյժս հաշտութեանն, հնարեցաւ եգիտ բաղբաղանս առ ի թափել անդրէն զՀռաւեննա. և վերատին յարձակեալ ի Հռոմ պաշարէր զքաղաքն. Հռոմայեցիք օգնականութեամբ Փրանկաց, զորս Պեպինոսի թողեալ էր անդ, զդէմ կալան Լոնդոբարդացւոց մինչև եկն էհաս ինքնին թագաւորն Պեպինոս, և պաշարեաց զփաւիա: Երկուցեալ Աստոլփոսի զի մի ընդառնուլ մայրաքաղաքին կորուսցէ զողջոյն իսկ զտէրութիւնն, յանձն էառ խիստ պայ-

մանաք զՀաշտուԹիւն, տալ ի հարկ երկոտասան հազար սկուԹս ոսկիս: Բանալիք քաղաքացն ընդհեղոց եկեղեցւոյ ածան եդան ի վերայ շիրմին արքային Պեպինոսի ի պատիւ, ժառանգելով յաջորդաց նորա զնշխանուԹիւն քաղաքացն: Այս եղև սկիզբն աշխարհական ԹագաւորուԹեանն Քահանայապետացն Հռովմայ, և ազատ իշխանուԹեան նոցա (756):

Յետ այնորիկ Պեպինոս դարձ արարեալ ի Գաղղիա էհար զԱքսոնս, որ ասպատակաւ աւար հարկանէին ի սահմանս իւր: Այլ քան զամենայն պատերազմունս նորա գԺնդակագոյնք այնոքիկ եղեն, զորս մղեաց ընդ Վայիփերայ դքսին Ակուիտանիոյ, որ էր ի ցեղէ անտի Մերովեանց Թոռնորդի Եւդեոսի: Երկարեր մարտն զամս ինն, աւերեին գաւառք երկուստեք ի սուր և ի հուր անխնայ, մինչև ի նեղ անկեալ Վայիփերայ սպանաւ յիւրոցն, և Պեպինոս մարզ կացոյց զԱկուիտանիա տէրուԹեան իւրոյ: Էառ յետ այնորիկ ի ձեռաց Արաբացւոց զԱեպտիմանիա գաւառ, որ այժմ Լանկըտոք ասիկաւլաւ և զՆարբոն քաղաք պաշարեալ զամս երիս (768):

Ապա յետ քաջագործուԹեանցս այսոցիկ իսնջ յերկար վաստակոց քան ի ծերուԹենէ Պեպինոս, մեռաւ ի սուրբն Դիոնէսիոս, և Թաղեցաւ առ գրան եկեղեցւոյն ըստ հրամանի իւրում, զերեսս յերկիր մածեալ ի ձև ապաշխարողի:

Եկաց սա Թագաւոր քաջ, առաքինի հայր,

ձարտար քաղաքավար, աննկուն պատերազմող, նախանձաւոր պաշտպան կրօնից, և համառօտ ասացեալ, յամենայնի եղոյց զի առ՝ի թագաւորութիւնն էր ծնեալ. և վասն իմաստութեան նորա՝ի տեսչութիւնն՝ յառակս եղև ասել. « Իմաստուն իբրև զՊեպինոս »: Առաքինի քաջութեամբք նմանեալ դիւցազանց նախնեաց, յաւել և ևս՝ի փառս որ գործն իւրով, որ այն ինքն է Մեծն կարոլոս:

Ոչ է արժան անյիշատակ առնել զանցան՝ որ զնկարագիրս առնս մեծս՝ի յայտ ածէն: Լուեալ նորա զի ծագը առնէին իւրքն ըզկարճութեամբ հասակի նորա, նորօրինակ արուեստիւք եղոյց թէ քաջութիւն և թագաւորավայել արուեստիւն ոչ՝ի հասակին է, այլ՝ի սրտի. և յաւել հաստատել նովաւ զիւր թագաւորական իշխանութիւն: Քանզի դէպ եղև երբեմն կալ նմա ընդ իշխանս իւր՝ի զինին գազանամարտի՝ յորում առիւծ ընդ ցլու մարտնչէր. ասաց Պեպինոս ցիշխանան. « Աղէ, ո՞ բաժանել զգազանդ իշխիցէ յիրերաց »: Իբրև ամենեքեան երկուցեալ լռեցին. Ես ինքն, ասէ. և անդէն յարձակեալ յասպարէզ անդր, հարկանէ առաջաւոր զկառավին առիւծուն, և ապա գարձեալ զցլոյն: Ընդ՝ի ձայն մեծագոչ աղաղակի վկայեաց ժողովուրդն, զի արժանի էր նա թագաւորութեան իսկ տիեզերաց:

ԳԼՈՒԽ Բ.

Մէծն Կարոլոս յաջորդէ հօրն իւրոյ Պիպինի գահուրիւնն Լանգոբարդացւոց յԻտալիա, և երիւր պատերազմօք նուաճէ զԱստուռնս:

768 – 787.

Եթէ ոչ դուշնաքեայ փառք են Թագաւորի ընդ հայրենի աթոռոյն և հայրենական նացն առաքինութեանց լինել ժառանգորդ, որչափ առաւել ևս իցեն փառք Կարոլոսի որդւոյ Պեպինեայ, որ անցոյց զանցոյց ըզհայրենի առաքինութեամբն, ամբարձ զթագաւորութեան Գաղղիոյ զփառս գեր՝ի վերոյ քան զամենայն ժամանակաց, և իրաւամբք իսկ Մեծ կոչեցաւ: Առ կենդանութեամբ հօրն իւրոյ օծաւ Կարոլոս ընդ եղբօր իւրոմ Կարլոմանոսի՝ի Թագաւոր, և զկնի մահու հօրն բաժանեաց զթագաւորութիւնն ընդ եղբօրն:

Խակղբան անդ միաբան սոքա ածին զղէնս իւրեանց ընդդէմ Հունալդոսի դքսին, որ՝ի վրէժ սպանութեան որդւոյն իւրոյ Վայֆերայ Թողեալ զմիակեցական վարս, զիներ զԱկուիտանացիս՝ի պատերազմ, այլ անդէն վաճառեալ առաջի երկուց Թագաւորաց՝ հալածական փախստեայ երթայր յԻտալիա: Յետ այսր մեծի յաղթութեան փառասիրու-

Թեան պրպիւռ ածէր զերկոսին եղբարս ընդդէմ միմեանց. այլ կանխեալ մահուն կալումանեայ, անաշխատ միահեծան կալաւ զամբուլթիւնն կարոլոս (772):

Մինչդեռ կարոլոս ահ արկանէր զինուք ի կասքոնս և ի Սաքսոնս 1 և ընկճէր զնոսա, Ադրիանոս քահանայապետ կոչեաց զնա Թախանձանօք յիտալիա ընդդէմ Դիդիերոսի արքային Լոնգոբարդացւոց, որ բռնակալէր Թուէր ոչխոյն Իտալիոյ: Տեսեալ կարոլոսի Թէ ոչ ողբանք և ոչ սպառնալիք ազդեն ինչ կասեցուցանել զվայրագ Լոնգոբարդացին, կազմէր պատրաստէր ի մարտ պատերազմի: Անկաւ ի ջուս անց ընդ Ալպեանս, և վանեալ զԼոնգոբարդացիս սիրեաց ի հիւսիսակողմն Իտալիոյ առ հասարակ, ձերբակալ արար զԴիդիերոս ի փաւիա, և եբարձ զաԹոռ Թագաւորութեան Լոնգոբարդացւոց որ տեւեաց զամս երկերիւր և վեց:

Յետ այսորիկ եհար վերատին զԱսքսոնս

1 Ի Էպպոպպատմացս այսոցիկ պատմէ և գործ ինչ սքանչելեաց այսպիսի: Իբրև յԱթ բազում աշխատութենաց և հոգսոց առին փրանկք զամրոն Էհրէսպուրկ, և խոնջ վաստակեալ արեանէղ ծարաւահար փանջէին, նախանձ էրնստանի կրօնից ապստամբպաշտութեան վառէր զբազում նոցա և կորճանէին զպատճառ հոգոյն Հերմանսուլայ, և անդէն ահա ի մօտաւոր լեռնէն հանեալ ջուր յորդ՝ ծածկեաց զբոլոր ոյժգուրդ ծարաւոյ զօրականին և երիվարացն:

և խոնարհեցուցեալ զնոսա ՚ի հնազանդութիւն, էանց անտի յայլմոզ զինուքն ՚ի Սպանիա, ուր Արաբացիք երկպառակեալ ՚ի յոյզ ընտանի խռովութեանց՝ կոչեցին զնա ՚ի թիկունս. նուաճեաց նա զՍպանիա մինչև ցիբեր գետ: Ա՚յլ ՚ի գառնալ յարշաւանացն կորոյս զվերջապահ գունդս զօրաց յարձակմամբ Կասքոնից, ուր անկան բազումք յերևելի զօրավարաց իւրոց, յորս և մեծահռչակն Հռոլանտոս, որ քաջութեամբ իւրով և բազմադիմի արկածիւքն արար անուն մեծ յառասպելապատում վէպս ժամանակին (778):

Ո՚չ դադարէին Սաքսոնք յաշխատ առնելոյ զՄեծն Կարոլոս. և ամ յամէ յարձակեալ ՚ի սահմանս աշխարհին ՚ի կոլին գետոյն վէգերայ յալարտ վարէին զերկիրն: Ջաղխէր միշտ Կարոլոս զսասահակութիւն խժիցն, և յերդումն հաւատարմութեան նոցա ապաստանեալ՝ նեղէր պայմանաւ առաքելոյ նոցա քարոզս հաւատոյ ՚ի հրահանգել զանհամբոյր բարս անընդհատելի բարբարոսացն: Ա՚յլ վիթխինտոս ումն կացեալ ոխերիմ թշնամի Կարոլոսի, ոչ իւիք զինչ նէր գալ ՚ի հնազանդութիւն. և առաջնորդ կացեալ ապստամբաց՝ ՚ի խորտակել նոցին խոյս տուեալ թագչէր, յամառեալ ՚ի միտս ջնռնարհել բնաւ առաջի յաղթականին: Սա ինքն ՚ի հեռանալ Կարոլոսի՝ շարժէր վերատին զիւրն յատատամբութիւն, որք ՚ի ձայն խրախուսանաց նորա մոռացեալ զերդումն, և յանկարծ գազանացեալ տապալէցին զե-

կեղեցիս, կոտորեցին զքահանայս և զիմ-
ցին ի սպառ սպուռ կոտորած զօրացն Փրան-
կաց, որք երկպառակութեամբ զօրապետացն
մնացեան ի ձեռս նոցա:

Ընդ դոյժ աղեխին ծանրացաւսն լեալ
Մեծն Կարոլոս, զօրաժողով եղև անդրէն,
էանց ընդ Վէզեր, եմուտ ի Սաքսոնիա, և ի
համբաւ գալստեան իւրոյ ցրուեալ զյաղ-
թական զաղտաւամբ զօրն, կոչեաց զժողո-
վուրդն զառաջեաւ. Նոքա ահաբեկ լեալ
զամենայն զինեան զվ Լմնիբնեաւ արկա-
նէին, և ի խնդրել Թագաւորին տալ ի ձեռս
վնասուիչն, ասէին. «Ձէ նա ի մեր ձեռս, զի
խոյս եառ ի Դանիա». պատասխանեաց Թա-
գաւորն. «Եթէ նա զերծաւ, բայց մեզաս-
կիցք նորա որք աւերեցին զահմանս իմ և
կոտորեցին զծառայս իմ, ասա են. ի նոսա
ցուցից զահաւոր զգաստութիւն իմ, զոր չառ իսկ
յապաղեցի ցարդ»: Եւ յակնարկել նորա
իւրոցն՝ գիմեցին ի վերայ, և զինաթափ ա-
րարեալ զՍաքսոնս՝ որք էին արք չորեք հա-
զար առաջնորդք չարեացն, վոշոտեցին ըզ-
նոսա անդէն ի տեղւոջն: Ընդ ահագին պա-
տուհան զահի հարան ի սկզբան Սաքսոնք,
այլ ապա առ կատաղութեան և անյուսու-
թեան դրդեցին դղրդեցին զաշխարհն. և վ Լ-
մնիբնեաս չուրջ յածեալ ընդ նահանգս
աշխարհին Սաքսոնիոյ վառեալ բոլորքեր
զաղտաւամբութիւնն դժնդակ քան զառա-
ջինան: Բայց Կարոլոս յաղթեաց զգօնու-
թեամբ զայրագին կատաղութեան նոցա:

Երկոյս ի հարուածս սաստիկս խորտա-

կեաց զնոսա մինչև ցԼևպա կղզի, և յապա-
կանութիւն եդ զերկիրն. այլ ապա խոնջ
յանդուլ պատերազմից, խորհեցաւ քաղց-
րութեամբ ածել զնոսա զնւրև, յուսացեալ
պատրաստագոյնս գտանել զնոսա աղե-
տիւքն: Առաջի արար Վիթիքինտոսի զջաղա-
յամառութեան. և խոստացաւ ոչ միայն
ներել նմա, այլ և բարերարել, եթէ միայն
վստահացեալ գայցէ առ ինքն: Ի սկզբան
անգ ոչ կարէին հաւատալ Վիթիքինտոս և
կուսակիցք նորա ընդ խոստումն Թագաւո-
րին, այլ ապա հաւանեալ եկին յարքունիս
'ի ՅԱԹԹիլն, ուր կարօղս մնայր նոցա իշ-
խանութքն հանդերձ: Սաքսոնք մարդասիրու-
թիւն մեծ գտեալ 'ի Թագաւորէն և հեղու-
թիւն բազում, ոչ միայն բարեկամացան ընդ
պետութեանն, այլ և ընկալեալ զքրիստո-
սական հաւատս, զամս ինչ 'ի հնազանդու-
թեան կալան զժողովուրդ իւրեանց. և Վի-
թիքինտոս հաւատարիմ եկաց 'ի խոստման
իւրում մինչև ցամահ (787):

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆՁԵԼ ԿԱՐՈԼՈՍԻ ՊԱՊՊԱՄԲԻ Ի ՓԷՐՈՒԼԷՆԷ ԻՐՄԷ, ԵՒ ԻՐԱՒԱՒԷԼ ՆՈՐԱ ԶՀՈՒՆՍ:

787 – 800.

ՅԱՑՍՈՒ ժամանակաւ Փրիզոնք, Պրեգոնք և Պաւարացիք նշխահեցին զԿարոլոս, և վաստիարեալ առաջի զօրութեան նորա՝ կոչեցին իւրեանց ի թիկունս զՀունս Աւարս: Եմուտ Կարոլոս վերստին ի Պաւիերա, ձերբակալ արար զիշխան գաւառին զԹրասիկոն զազգակից իւր, և գաւառստանաւ ի մահ զնա գաւառապարտեաց: Այլ ապա խնայեալ ի կեանս նորա, փակեաց զնա հանդերձ որդւովքն ի մենաստան ուրեք, և զաշխարհն մերոյ կացոյց տէրութեան իւրոյ: Անտի խաղաց ի վերայ Հունաց, որք բռնակալէին յայնժամ յԱւարիա և ի Մաճառս. և խորտակեալ զնոսա չարաչար, էառ աւար ի նոցանէ զամենայն, զոր միանգամ յերից գարուց հետէ ասպատակութեամբ իւրեանց ածեալ կուտեալ էին խուժքն ի գաւառաց գաւառաց Եւրոպայ: Ընկճեաց կրկին զՀունս դոքաւրգացիս, որք գրգռութեամբ Յունաց խլրտէին յապստամբութիւն, և ամրացոյց զիշխանութիւն իւր Իտալիա և ի Գերմանիա:

Եւ յամին երկրորդի յետ խորտակելոյ զՅոնա մինեցաւ Կարոլոս ի գաւառս Ալաւեանց անդր քան զԼիպպա գետ. և օգնականութեամբ միոյ մասին Ժողովրդեան երկրին կալաւ զամենայն երկիրն մինչև ցգետան Օաէր: Իսկ որդի նորա Պեպինոս տարածեաց զբազում աերութեան հօրն անդր քան զԻտալիա և զԼիբուրնիա մինչև ցԱաւստա գետ:

Յետ այսորիկ փոքր ի հանդիստ առեալ Կարոլոսի յերեսաց անդուլ պատերազմացն, յերջանկութիւն Ժողովրդեանն պարապէր. կառուցանէր շահմարանս յորենոյ ծախիւք իւրովք, և բաշխէր անաւ առատապէս աղքատաց. առաքէր և նպաստս քրիստոնէից Աֆրիկէ, Եգիպտոս և Անտիոք, և պատարագս մեծամեծս առ ամիրապետն Չաբուն՝ աղաչելով զնա գթութեամբ վարել ընդ քրիստոնեայս հպատակս իւր (793):

Մինչդեռ այսպէս ի փոյթ բարօրութեան քրիստոնէից Կարոլոս, յանկարծ պատերազմունք գԺնդակք կուռ զմիմեանց կին անհետ ի վերայ եկեալ, վեր ի վայր արարին զամենայն: Նախ բարբարոսացն Հոնաց ոչ կացեալ յուխտին, աւերէին ընդսահմանս Գերմանիոյ: Յարձակեցաւ Կարոլոս յաչխարհն նոցա ի Պաննոնիա, արոյ և հրոյ ձարակ առեալ զամենայն՝ ապականեաց զերկիրն. այլ ոչ նոյն յաջողութիւնն եղև նմա յանցանելն անտի ի Ռաթիսպոնա: Խորհեցաւ անդ Կարոլոս խորհուրդ մեծ և կարեւոր, կցել միացուցանել զՀռէնոս գետ ընդ Դանուբ, այլ ոչ յաջողեաց նմա:

Յետ այսորիկ նոր խռովառանին յառնէր
ի վերայ մեծի Թագաւորիս. Պետինոս որդի
նորա մականուանեաւն Պոսիւ վասն ան-
հետեւի անգետեայ մարմնոյն, զաւ նիւթէր
ընդդէմ արքայի հօր իւրոյ. այլ ընկալեալ
զաւակացն զպատուհաս մահու, և արքայ-
որդին արդեալաւ ի մենաստանի ուրեք: Ի
նմին ժամանակի և այլ ազէաք ի վերայ
գային. Սաքսոնք գլուխ ամբարձեալ ըստ
իւրեանց յաճախ սովորութեան, խորտա-
կէին զքրօս Կարոլոսի. և Մաւրիտանացիք
զօրավարութեամբ Ապտիւլմէլիքայ անցեալ
ընդ Պիրենեանս անկան յԱկուիտանիա, ուր
Թագաւորէր Լուդովիկոս արքայորդին ընդ
խնամակալութեամբ Գուլիէլմոսի գքսին Տո-
լոսայ, և խորտակեալ զքրօս նորին, և հրկէզ
արարեալ շուրջ զնաւրբոնաւ զդիւղս, բա-
զում աւարաւ դարձան ի Սպանիա: Կարո-
լոս զբազմեալ յայնժամ ի նուաճել զապըս-
տամբութիւն Սաքսոնաց, չէգիտ պարապ
գիմել ինքնին ի վրէժ ապստամբութեան
թշնամեաց. այլ առաքեաց զորդի իւր զՊե-
պինոս արքայ Իտալիոյ, և զՀերվի գուքս
Փրիուլայ յերկիրը իշխանութեան Հոնաց.
որք հասեալ յաղթութեամբ մեծաւ մինչև
ի Թագաւորեալ քաղաք նոցա, ապանին
զԽաքանն, և զքաղաքն հիմն ի վեր կործա-
նեցին: Փառաւորեալ չքեղ յաղթութեամբն
Կարոլոս՝ ընկալաւ յԱկուիսկրանա ի Թա-
գաւորեալ քաղաք իւր զդեսպանս Թագա-
ւորացն Ալփոնսոսի Հպօնի արքային Ա-
ստուրիոյ, Հոնացն, զարևելեան կայսերն

և զԱպոստոլահայ ամիրապետին Քորտուվայ, յորոց կէաք ՚ի խնդիր բարեկամութեան, և այլք ՚ի հարկ հպատակութեան գային:

Համբաւ անուան Կարոլոսի հռչակեցաւ մինչև ցծագս արևելից. և խալիֆային Արաբացւոց Հարուն էլ Ռէշիտ պակուցեաց, առաքեաց պատգամաւորս առ նա մեծադանձ պատարտիք, յորս էին և բանալիք սրբոյ քաղաքին և առղեացն սրբութեան. ընդ որ ուրախ եղև յոյժ Թագաւորն բարեպաշտ:

ԳԼՈՒԽ Դ.

Կրկին հռոմփոլիէն արևմտեան կայսերութիւնն ՚ի յետ Մ էջին կարոլոսի. վերջին գործք կենաց ինքնակալին, և համառօտ նկարագիր բարուց նորա:

800 – 814.

Յետ յաջողութեանցս այսոցիկ Կարոլոս ՚ի վարձ փոխարինի պատերազմական արութեանցն, և գերակայ խմաստութեանն և նախանձուն ՚ի գործս ուղղութեանց զհեթանոս ՚ի քրիստոսական կրօնս, և պաշտպանութեան հռոմէական եկեղեցւոյ, ընկալաւ զպատիւ ինքնակալութեան: Զի ՚ի գալ նորա յոգնութիւն Լևոնի Գ. ընդդէմ հալածչաց նորա, քահանայապետն ինքնին մատոյց նմա զպատիւն. այլ նա առ խոնարհութեան կամ առ

երկիւղն գրգռելոյ զինքնակալս արեւելից ընդդէմ իւր, բացէ՛ի բաց հրաժարեցաւ՛ի պատուոյն, և ազաչեաց զքահանայապետան մի ևս խօսել զայնմանէ: Լռեցին առ ժամն քահանայապետն և իւրքն. այլ իբրև՛ի գիշերի ծննդեան գայր Կարոլոս յեկեղեցի սրբոյն Պետրոսի՛ի պաշտօն ասաուածծայինն, և խոնարհեալ առ աւազակ սեղանոյն աղօթէր, Լևոն՛ի շքեղ քահանայական զգեստս հանդերձ կղերջքն մերձեցեալ առ բարեպաշտ Թագաւորն, եդ՛ի գլուխ նորա զթագն կայսերական, և հնչեաց եկեղեցին համօրէն «կեցցէ Կարոլոս Օգոստոս աստուածծապսակ, ասացեն երկինք կեանս և յաղթութիւն մեծի և խաղաղարար ինքնակալիս Հռոմայեցւոց»: Այսպէս յամին 800 կանգնեցաւ դարձեալ վերստին արևմտեանն ինքնակալութիւն՛ի ձեռն Թագաւորին Փրանկաց, զկնի 325 ամաց անկման Հռոմուղոսի Օգոստուղեայ:

Իբրև ամբարձաւ Մեծն Կարոլոս յինքնակալութիւն յարևմուտս, առաքեաց առ Հեղինէ դշխոյ արևելից՝ առնուլ զնա իւր՛ի կնութիւն, և՛ի մի զօգել զնախնոյ ինքնակալութեան Հռոմայ զգաւառս. այլ երկուցեալ Յոյնք զի մի գուցէ կորուսանիցեն զիւրեանց իշխանութիւն, կանխեցին արկին յաթոռոյ զդշխոյն, և ամբարձին յայն զնեկեփորոս պատրիկ, որ խորտակեալ առաջի Կարոլոսի յԻտալիա՝ խոնարհեցաւ՛ի հաշտութիւն, և դաշինք խաղաղութեան կռեցան՛ի միտս ինքնակալին արևմտից:

Յետ այնորիկ Թաւիեաց Կարոլոս զՊոյեմիա ի ձեռաց Սլաւեանց, ընկձեաց ի սպառզէնս, և գաղթական ի Պանոնիա առաքեաց ի քաղաքականութիւն և ի հլութիւն օրինաց ածել զնուաժան: Ի խորտակել զնոցա տապարանոց զսաստիկ յամառութիւն Ժողովրդեան Սաքսոնաց, առաւել քան զերեսուն հազար տունս ի խռովչաց ազգին յերկուեաց ընդ բոլոր գաւառս տէրութեան իւրոյ, և զբազմագոյնս ի Փլանդրիա բնակեցոյց, որք զնոյն իւրեանց զոգի ապստամբութեան մուծին ի բնակիչս երկրին, որպէս տեսցի ի պատմութեանս: Այլ և զԳերմանիա առ հասարակ մինչև ցվ. խմբուլ գետ և ցծովն Պալդիկ ի քաղաքականութիւն ածեալ, դարձոյց ի հաւատս Քրիստոսի: Այլ անմարթ եղև ի սպառ կարձել զոտս հուպ կահարացն Նորմանաց ի ծովախնեայ քաղաքաց տէրութեան իւրոյ. որք բազում անգամ խորտակեալ ի նմանէ, ոչ Թողին ի բաց զնորոխատու ձին իւրեանց:

Յետ երկար և դժնդակ մարտից պատերազմաց նուաճեալ Կարոլոս զամենայն ըզԹշնամիս իւր և խաղաղացուցեալ զեկեղեցի և միխիթարեալ, զգեղեցիկ հանգիստ խաղաղութեանն անցուցանէր ի բարեկարգութիւն Փրանկաց, և ի զարգացումն ածել զարուեստս, զդպրութիւն և զգիտութիւնս: Ընդ Սալեան օրէնս ի մի կցորդեաց զՈւիփուեբացն Փրանկաց, զԼոնգոբարդացւոցն և զՍաքսոնաց: Սահմանեաց կրկին ազգախումբ ժողով ի տարւոջ, խորհել զօգուտ

աշխարհին և զբարեկարգութիւն. որով մի-
այն մարթ էր գիտել զպէտս ժողովրդոց մե-
ծատարած ինքնակալութեան: Երևելի են
քան զամենայն չինուածս նորա՝ դպրոցքն
ուր ուսուցանէին զքերականութիւն, զը-
նթռւաբանութիւն, զերաժշտութիւն և զայլ
կարևոր ուսմունս: Յամենայն վանորայս և
յեպիսկոպոսարանս հրամայեաց դպրոցս և
ուսուցիչս, որոց ընդհանուր կարգեցաւ
տեսուչ մեծանունն Ալկուինոս միանձն
անգլիացի: Հատուածեաց և յատկարանս իւր
ժողով իմն իմաստնոց, յորս գլխաւորք էին
Պետրոս բիզացի, Անդիլբերտոս և Ալկուի-
նոս անգլիացիք, ի նոսա և ինքն կարոլոս:
Իւրաքանչիւր ոք ի ժողովականաց առնոյր
իւր անուն ի սուրբ գրոց, զոր օրինակ Կարո-
լոս՝Դաւիթ կոչէր. և սովորական խօսք նոցա
էին զարամաբանութենէ, զձարտասանու-
թենէ և զաստղաբաշխութենէ: Ջարմանալի
էր կարոլոս ի գիտութիւնս յիւրում դա-
րուն. խօսէր անսայթաք ի լատին բարբառ
իբրև յիւր բնիկ լեզու, իմանայր համարձակ
զՀելլէնն, և էր ներհուն թուաբան և աստե-
ղաբաշխ, ոչինչ վերջացեալ ի պերճախօսու-
թենէ, ի տրամաբանութենէ, և ոչ անտե-
ղեակ աստուածաբանութեան. գոգցես ի
բնուստ էր նմա շնորհ ի խօսս, և ձառս ամի
յաւիտ ղերաց իրաց յօրինէր բազում վայել-
չութեամբ: Իսկ ի հանճար առաջնորդա-
կան և ի թագաւորավայել յատկութիւնս՝ մեծախորհուրդ էր նա և լայնահան-
ճար ի կատարումն խորհելոցն, չհաւատա-

լի գիւրութեամբ զմեծամեծս և զզարմանալիս գործեր. ամենուստ վտանգ ի վերայ կայր պետութեան, արշաւանք բարբարոսաց և թշուառութիւն և աղէտք, իսկ նա զամենայն ի խաղաղութեան տեսանէր. և զէն ի ձեռին շուրջ զընդարձակ պետութեամբն հսկելով՝ ատա խորտակեալ վանէր զթշնամիս, անդ ի սպառ ընկճէր, և յամենայն տեղիս ածէր զքաղաքականութիւն ընդ լուսոյ աւետարանին: Ի մեծամեծ աշխարհակալութենան միշտ զնոյն բերէր սիրտ խոնարհ քրիստոնէական առաքինութեամբ, քաղցր ի բարս, պարզ ի գնացս, չափաւոր ի ծախս: Իսկ աստուածպաշտութեան նորա վկայեն արդիւնք նախանձու նորա ի վերայ կրօնից, և զի ինքնին ընդ կղերս երգէր յեկեղեցւոջ, և խոնարհութեամբ սպասաւորէր ահաւոր խորհրդոյ պատարագին. զսուրբս յարգէր, և զարմանալի խաստութիւն պահոց և մեռուցումն բերէր յանձին. զարդարութիւն ընդ հայրապետի խնամոց յեռեալ՝ աստուածապետականին նմանող լինէր առաքինութեան. և խնամոց նորա առ աղքատս, առ որբս և առ այրիս չէր սահման. համառօտ ասել, զքրիստոսական գեղեցիկ առաքինութիւնս ընդ աշխարհակալութեան զարմանալի կցորդեաց մեծանուն այս ինքնակալ: Յարդի մատենագրաց ոմանք սոգտանեն զնա տկարացեալ զհետ կանանց. այլ ի կանխակալ անկեալք ի կարծիս, և ոչ հաստատուն վկայութեամբք:

Ի ծերութեան իւրում կարօտս քաժա-

նեաց զընդարձակ գաւառս տէրութեանն յորդիս իւր, գիտելով թէ չիք ոք ի նոսա որ բաւական լինի ինքնին առանձին ունել զերասանական մեծի ինքնակալութեանն: Եւ բազմացոյց Կարոլոս զառիվեղս նաւաց իւրոց ընդ ծով ընդդէմ հինից Դանեաց, այլ չմարթացաւ ինչ արգելուլ զասպատակութիւն խրոխտ ազգին. և յաւուր միում ինքնակալն տեսեալ ի հեռուստ զառիվեղ նաւաց նոցա, յարեաւ ի տեղանոյ թողեալ զճաշ, և յեցեալ յարմունկն ի պատուհանի արտասուս մեծամեծս հեղոյր: Եւ ի վաղն էին հարցանել ի բարեկամացն, ասէ. «Ձերկընչիմ ես յարշաւանաց նոցա ցորչափ իցեմ կենդանի. այլ եթէ այժմ այսչափ յանդգնին, քանի՞ չարիս ոչ հասուսցեն որդւոց իմոց և ժողովրդեան յետ իմ»:

Հանդերձ սրբիմբք և առանին վիշտք գաւառացուցին զինացորդս աւուրց մեծի ինքնակալիս. զանպարկեշտ գնացս ասեմ զգաստացն, և զմահ անդրանկին ի նոսա, և մանաւանդ զմահ որդւոցն Պեպինոսի և Կարոլոսի՝ որ ի բազում արուեստիւնս ընդդէմ թշնամեաց հանդիսանային: Իսկ նա ի վիշտս իւր կրծնիւքն միայն մխիթարէր:

Յետ այնորիկ զՌեռնարդոս զմաուն իւր կացուցեալ թագաւոր Իտալիոյ, զորդին իւր զԼուդովիկոս գահակից իւր արար, և ինքն պատրաստեր ի մահ. և ըմբռնեալ ի տենդէ յելս ի բաղանեաց, անկաւ ի մահիճս մահու, և վախճանեաց զաւուրս իւր փառօք յեօթանասներրորդի երրորդի ամի հասա-

կին Թագաւորեալ զամն քառասուն և եօթն. և ամիսս եւթ մարմին նորա յԱկուիսկրա-նա (814):

Ասի զնմանէ, Թէ Թիկնաւէտ էր, քաջակազմ, աւարտահասակ. գանկն բոլորաձև, աչք խոշորք և եռանդունք, արծռունդն, գանգրահեր, գեղագէմ և զուարթ: Պահեաց զպարզութիւն նախնեացն հանդերձից. շապիկս և վարտիս զգենոյր բամբակեայս, և պատմուճան մետաքսեիւ զսպեալ գօտեաւ, արուինք երիզապատոք և սանդալք յոտս. իսկ ի ձմերայնի կրէր մուշտակ ջրընկենի պարածածուկ բոլոր անձին: Նոյն պարզութիւն էր և ի կերակուրս նորա և յըմպելիս, և ի ժամ սեղանոյ տայր ընթեռնուլ կարևոր պատմութիւնս կամ զդիրս սրբոյն Օգոստինոսի: Ի գիշերի երից և ջրից ընդհատեալ զքուն իւր յառնէր ի հոգս երից պետութեան. իսկ վասն ուսումնասիրութեան նորա և իմաստութեան շատ խոկ ի վեր անդր ասացաք:

ԳԼՈՒԽ Ե.

Ինքնակալութիւն Բարեպաշտն Լուդովիկեայ, և անհանգիստ կեանք նորա և մահ չերբեսոյ անդրանիկ պսակեալ որդւոյ նորա։

814 – 840.

Ինքնակալն Լուդովիկոս զգոյժ առեալ զմահու հօրն իւրոյ Կարոլոսի, աճապարեաց յԱկուիտանիոյ ի յԱկուիսկրանա. և ի ձմեռնապարկի իշխանք գաւառաց և բնակիչք երկրին մեծարէին զնա ակնկալութեամբ յաջող ելից հանձարոյ նորա և առաքինութեանց, զորոց զփորձ առեալ էր նոցա։ Լուդովիկոս բարեպաշտութեամբ միայն նըմանող հօրն, որոյ վասն Բարեպաշտ և Հեզ անուանէր, այլովք առաքինութեամբք յոյժ սաստիկ քան զնա գտաւ, որով անմարթ եղև նմա յոտին ունել զիշխանութիւն թագաւորութեանն։ Տարապայման ներողամտութեամբ՝ համարձակագոյնս գործեաց զյանցաւորս. և անկասկած վստահութեամբ յիշխանն՝ արհամարհ եկաց յաչս նոցա, յորոց բազումք արք աղմկաւէրք ի յանկած բաղձէ խորամանկութեամբ իւրեանց ամբարձեալք յեկեղեցական պատիւ՝ որում կցորդ էր աշխարհական աւագութիւն, զեղծան չարաչար տկարութեամբ

թագաւորին, և զպարգև նորա զէն առին ընդդէմ պարգևատուին:

Անգամին 'ի սկզբան թագաւորութեանն սիաղեաց Լուդովիկոս մեծապէս, գահակից իւր առնելով զանդրանիկն իւր զԼոթարիոս, և լարաբաժին առնելով զինքնակալութիւնն յորդիս իւր, Պեպինոսի զԱկուիտանիա, և Լուդովիկոսի զՊաւիերա տուեալ. զի այս իսկ ամենայն ազգեցոյց նորա եղեն պատճառք: Յարեաւ յայնժամ առուընէն պատերազմ Բեռնարդոս թոռն Մեծին Կարոլոսի, եղբօրորդի Լուդովիկեայ, անկեալ 'ի բանս չողմարար անձիւս մարդկան, գժկամակեր ընդ ընտրութիւն Լոթարիոսի 'ի գահակից հօրն, անձին պատուհաս և իրաւացի վարկուցեալ զպատիւն որպէս երիցագունի հասակաւ 'ի կայսերական տոհմին, և ձգեր զձեռն իւր յինքնակալութիւն: Այլ վաղ խորտակեալ առաջի զօրութեան Լուդովիկոսի, և լքեալ յիւրոցն ձերբակալ եղև: Անդ ինքնակալն հակառակ իւրումն մարդապէր բարոյից գրգռեալ յամբարտաւանն կնոջէ իւրմէ Յերմենկարդայ, հրամայեաց խափել զաչս նորա, յորմէ մեռաւ եղկելին (818): Սկան յայնժամ ապստամբել ժողովուրդք, և մարտ պատերազմի տային Փրանկք մերձ 'ի Պիրենեանս, Յէլտա և յափունս Սաւայ. նուաճեցին վերսին զՊրեգոնա, այլ անմարթ եղև ընկճել զզօրութիւն Թագաւորին Աւարաց Լիւթվիտայ, որ զամենայն ազգս Սլաւեանց յարուցանէր 'ի վերայ ինքնակալութեան:

Յետ այնորիկ, իբրև մեռաւ Երմինկարդա դվնոյ ինքնակալին, յերկրորդէ կնոջէ նորա ի Յուդթայ ծնաւ նմա որդի Կարոլոս անուն, որ ապա ձաղատ անուանեցաւ: Յայնժամ ի միս էառ ինքնակալն՝ զի սկսալեաց ի բաժանել զաէրութիւնն յերիս որդիս իւր, քանզի չմնայր ինչ ջորրորդին, և ձեռն էարկ ուրաքար հատանել ի նոցանէ զգաւառս և տալ ի ժառանգութիւն կալոլոսի. նոքա բողոք բարձեալ, զէն առին միաբան ընդդէմ հօրն իւրեանց, համախոհս ունելով իւրեանց արս խռովարարս, եպիսկոպոսունս և վանահարս: Յայնժամ լքեալ կայսրն յաւագանւոյն, անձնատուր եղև ի կամս որդւոցն: Եւ Լոթարիոս առ ոտն հարեալ զօրէնս, բռնակալեաց ինքնիշխան զաէրութիւնն, զանուն և եթ ինքնակալի Թողեալ հօրն: Եւ թէպէտ ոչ ժպրհեցաւ գրաւել և զայն, սակայն չանհնար լինէր գաղտագողի ի ձեռն մտերիմ կրօնաւորաց ոմանց յորդորել զհայրն հրաժարել ի թագաւորութենէն և մեկնել ի մենաստան ուրեք: Այլ բարեպարիշտ կրօնաւորքն հաւատարիմք տեառն իւրեանց, թիկունք եղեն նմա. և առ ի քակտել զմիաբանութիւն և զապստամբութիւն արքայորդւոց. ոմն ի նոցանէ այր յաջողակ և ձարտար ի խօսս, երթեալ առ երկուս եղբարս Թագաւորս Պաւիերայի և Ակուիտանիոյ, և խղճմտեցուցեալ զնոսա ընդ անիրաւ գործն զոր արարին հօր իւրեանց և Թագաւորի, հարցանէր ապա, թէ զինչ ընտրեալ էր նոցա, ունել

իւրեանց իշխան զհայր քաղցրահամբոյր և լի գթութեամբ, եթէ եղբայր խիստ և բուռն, որ իբրև ոչ ևս կարօտ էցէ ողնակա-նութեան նոցա՝ բռնասցի և զնոքօք: Ազդե-ցին բանքն 'ի միտս արքայորդւոցն, և ամա-պարեցին հաշտել ընդ հօրն իւրեանց՝ խոս-տացեալ հպատակել նմա հաւատարմու-թեամբ: Լոթարիոս 'ի տագնապ տարակուսի ընկղմեալ չգիտէր զինչ առնել. ոմանք 'ի համախոհից նորա խորհուրդ տային մեկնել յերկիր աէրութեան իւրոյ, և այլք յարձա-կել 'ի կայսրն՝ մինչ չև էր նա ամրացեալ թիկնապահօք: Եւ մինչդեռ նա յերկմիտս էր, իրազեկ լեալ կայսեր՝ ազդ արար նմա ան-երկիւղ գալ առ ինքն: Լոթարիոս վստահա-ցեալ 'ի աէր հօրն, չոգաւ առ նա. և արդա-րև ոչ խաբեցաւ յահնկալութենէն, քանզի գիրկս արկեալ նմա հայրն մեծաւ քաղցրու-թեամբ խօսեցաւ ընդ նմա, մինչև յանցա-ւորին անկեալ առ ոտս նորա արտասուօք՝ խոստանայր անդրժելի հաւատարմութիւն վոխարէն վրիպանացն: Այլ 'ի պատիժ ծան-րագոյն յանցաւորութեանն՝ անկաւ նա 'ի գահակցութենէ, և թողաւ նմա միայն իշ-խանութիւն Իտալիոյ: Իսկ որք ձեռնտու ապստամբութեանն լեալ էին, տարապիր եղեն ըստ խրատու դշխոյին, որ կարևոր դա-տեր զնուռվիչ և զաղմկայոյզ իշխանան հեռա-ցուցանել 'ի աէրութենէն (828):

Այլ ինքնակալն ոչ կարացեալ մինչև 'ի ապառ առնել զնստութիւնն, զկնի ամաց մինչ յետս դարձոյց զամենայն զաքսորեալս.

բայց միայն առաջնորդն Քոլպիոյ Վալա, որ յամառեալ սինդեալ կայր ի ջատագովել զապստամբութիւնն արքայորդւոյն ընդդէմ հօրն, մնաց անդարձ յօտարութեան (830)։

Ոչ յամեաց ինքնակալն սորչանալ ընդ ներողամտութիւն իւր. քանզի որդիք նորա ապաշնորհք, ոչ ի բարութենէ նորա ակն ածեալ, և ոչ ընդ երդումն իւրեանց խղճեցին։ Պեպինոս նախ ի նոցանէ գլուխ ամբարձ, միաբանեալ ընդ իւր զեղբարս իւր և զեպիսկոպոսունս և զառաջնորդս՝ որոց ներեալ էր ինքնակալն։ Եւ ի ժողովեննէ իսկ յաւելան բազումք ի նոսա. քանզի Լոթարիոս առ ի յինքն ձգել զնոսա հնարագիտութեամբ, հրաւիրեաց զքահանայապետն Գրիգոր Դ ի բանակ իւր որպէս միջնորդ հաշտութեան ի մէջ արքայի և արքայորդւոց. և համբաւեաց ատութեամբ իբր թէ քահանայապետն ի կողմն իւր լեալ, կամէր նզովս կարդալ ինքնակալին։ Որով թօթափեցան յարքայէ և հաւատարիմ ծառայք նորա. և ինքն ձեռնթափ լեալ յամենայնէ՝ բռնագատեցաւ երկրորդ անգամ անձնատուր լինել ի ձեռս որդւոցն։ Ժողովեցան առաջնորդք զօրուն. և այս խառնուածոյզ ժողով, յորում էր և վանահայրն Վալա, էարկ զնուդովիկոս յամուռս, և կացոյց ի տեղի նորա զԼոթարիոս։ Ընդ ուրեմն բացան աչք Վալայ, և ասէ. «Ամենայն ինչ քաջ սահմանեցաւ ի ժողովին, և իւրաքանչիւր ուրուք խնդրեցաւ օգուտ, այլ ոսկոր եղեն կրօնք և արդարութիւն»։ Զայս ասա-

ցեալ գառն սարջանօք զի բաժանակից եղև անօրէնութեան գործոյն, մեկնեցաւ անտի: Դարձաւ և պատն 'ի Հռոմ, զերջ լեալ մտաց նորա զի ակամայ զօրաւիգն եղև տիրադրուժ խռովչացն (833):

Մանուկն Կարոլոս, անպարտական պատճառք խռովութեանցն, և մայր նորա դըժխոյն Յուդիթ փակեցան 'ի մենաստանի ուրեք 'ի դիպահոլ: Եւ թէպէտ Լուդովիկոս անկաւ յիշխանութենէ, այլ տակաւին երկընչէր որդի նորա Լոթարիոս թէ գուցէ ապստամբութիւն ինչ գարձեալ յուզեսցի. և առ 'ի հաստահիմն առնել զաթոռ իւր, և բառնալ 'ի հօրէ իւրմէ զամենայն ակնկալութիւն, ամբաստան եղև զնմանէ առաջի ժողովոյ եպիսկոպոսաց արկեալ զնովաւ բազում ազգի ազգի յանցանս, զի ըստ օրինաց եկեղեցւոյ արկցէն զնա ընդ կանոնական պատժովք, մի զէն առնուլ և մի ձեռնամուխ լինել 'ի գործս հասարակաց զամենայն աւուրս կենաց իւրոց: Այլ այս կանոնք վասն սոսկականաց սահմանեալ էին, և ոչ վասն թագաւորաց: Եպիսկոպոսք և իշխանք կուսակիցք նորա գումարեցան 'ի Սուասոն առաջնորդ ունելով իւրեանց զՆիփոն արքեպիսկոպոս Հռեմայ, զայր անպիտան և խժաբարոյ, արհամարհեալ մոլութեամբքն և խորամանկ հանճարով:

Ինքնակալն ապիկար մեծարեալ զեպիսկոպոսական իշխանութիւն, որով չարաչար վարէին նոքա, խոնարհեցաւ ապստամբ ծառայից իւրոց, զորս անկ էր նմա գառեալ:

Ածաւ առ ոտս սեղանոյ, և անկեալ 'ի վե-
րայ խորգոյ՝ ամբաստան եղև զանձնէ յան-
գիման ամենեցուն, թէ ոչ բարւոք վարեաց
զնշխանութիւնն աւանդեալ նմա յԱստու-
ծոյ, և խնդրեաց զպատիժ կանոնական:
Վայելվաղակի առին 'ի նմանէ զսուրն, զգա-
ւազանն, զձիրանին կայսերական. և արքե-
պիսկոպոսն Եփփոն արկեալ 'ի թիկունս
նորա խարազն ածին զնա 'ի մենաստան սըր-
բոյն Մեգարգոսի 'ի Սուասոն, և փակեցին
'ի խցկան:

Իսկ որդի նորա Լոթարիոս անկարեկից
սրտիւ տեսանէր զաղէտսն, ընդ որս յուզէր
գութ բազմութեանն, որ գառնայր անտի
տխուր լռութեամբ, և որոց համբաւ հռչա-
կեալ ընդ գաւառս՝ 'ի զեղջ և 'ի սուգ հա-
մակէր զամենեսին:

Եւ ահա յետ ոչ բազմաց ինչ աւուրց
յառնէին ժողովուրդք և իշխանք վրէժխըն-
դիրք ինքնակալին Իւրեանց. և քան զերախ-
տագիտութիւն և զգութ հայրասէր բռնա-
նայր 'ի սիրտս որդւոց նորա Լուդովիկեայ
և Պեպինոսի փառասիրութեանն գրգիռ
նախանձընդդէմ մեծութեանն Լոթարիոսի:
Որով համակամ ընդ ժողովրդեան անցին 'ի
կողմն հօր Իւրեանց, հաստուցանել նմա ըզ-
հարկ հպատակութեան, և պատուհասել
զանդրանիկ եղբայր Իւրեանց վասն յանցա-
նացն, որոց մեղսակիցքն էին: Իմացեալ Լո-
թարիոսի զգալուստ նոցա զօրօք բազմօք,
Թողեալ զաէրութիւնն խոյս ետ յԻտալիա:
Ջերծեալ Լուդովիկոս յարգելանացն 'ի

ձեռն հաւատարիմ եպիսկոպոսաց, ամբար-
ձաւ վերատին ի գահ ինքնակալութեան.
և ժողովն գումարեալ ի սուրբն Դիոնեսիոս
նզովեաց զյար ժողովակին Սուասոնի (834):
Ձերբակալ եղև նենգաւորն Եփիմն պատ-
ճառ և առաջնորդ անօրէն ժողովոյն, որ և
յայլ բազում ինչ իրս յանդգնաւոր գտեալ,
արկաւ յեպիսկոպոսութենէ. բայց չնոր-
հեաց նմա կայսրն զկեանս, որ արդարև ար-
ժանին էր մահու:

Իբրև նուաճեցաւ Լոթարիոս և հաստա-
տուն կարծէր այնուհետև խաղաղութիւն
աշխարհին, ահա արշաւանք Նորմանաց և
Արաբացւոց խռովեցին զամենայն: Նորմանք
անդադար էին յասպատակութիւնս. իսկ
Արաբացիք յանկարծ ի վերայ հասեալ կա-
լան զՄասսիլիա:

Եւ մինչդեռ յայսոսիկ ոչ ի թեթև ինչ
վիշաս տագնապէր աէրութիւնն, մահուամբ
Պեպինոսի նորանոր շփոթք առանին խռո-
վութեանց յառնէին, և Լուդովիկոս արքայ
Պաւիերայ դարձեալ ապստամբեր ի հօրէն:
Եւ ինքնակալն ի խաղալ ընդդէմ օտարա-
խորթ որդւոյն, իբրև եհաս ի Մոգունտիա,
առ գառնութեան վշտացն անկաւ ի խո-
թութիւն մահաբեր, որով և մեռաւ իսկ:
Եւ յաւանդել հոգւոյն ասաց նուաղաձայն.
“Ներեմ ապստամբ որդւոյս, այլ յուշ լինի
նմա, զի մահաւիթ եղև ինձ”: Եւ մեռաւ
Լուդովիկոս, արժանապէս ընկալեալ զա-
նունն Բարեպաշտ. երջանիկ էր, եթէ չէր
ծնեալ ի թագաւորութիւն: Ոչինչ այլ ա-

ուսքինուԹիւն պահատեաց նմա, քան զանյողդողդ հաստատուԹիւն. և ոչ այլ ինչ դիտուԹիւն, քան զառաջնորդականն:

ԳԼՈՒԽ Զ.

ԹԷ որպէս պատահեալ յիւրեանս որդւոց Լոդովիկեայ փաղփական մարդի- էրագեղին պնործանուծի պէրուէան: — Ե- ՒԷ Ռագատրէալ կարոլոս ճաղատ 'ի Գաղղիա, վախուէամբ իւրով մանկաց զայն յատար Բարբարոսաց Ե 'ի Բլոնալուի- ն իշխանաց:

840 – 877.

Արքեպիսկոպոսն երեքին յարուցեալք ընդդէմ հօրն իւրեանց և Թագաւորի՝ պատառեցին զտէրուԹիւն մեծին կարոլոսի, և ապա ընդ իրեարս գժտուԹեամբ և քաղաքական մարտիւ երագեցին զկործանուծին նորա: Կարոլոս ճաղատ պայազատեաց ըզհայր իւր 'ի Գաղղիա, Լուդովիկոս 'ի Պաւիերա, և Լոթարիոս կրկին գրաւեալ զինքնակալուԹեանն իշխանուԹիւն, անխաղաղասէր բնաւորուԹեամբն յինքն որսայր զՊեպինոս ի զեղբօրորդի իւր զարքայն Ակուիտանիոյ, և փառասիրէր միահեծան ունել զտէրուԹիւնն՝ ընկեցեալ զեղբարս իւր յաԹոռոյ: Նոցա աճապարեալ, դաշինս միաբանուԹեան յիւրեանս հաստատեցին,

և գումարեալ զզօրութիւն իւրեանց էլին ընդդէմ նորա մինչ արշաւէրն 'ի Գաղղիա: Եւ իբրև տեսին զի ոչ կրնային նա 'ի հաշտութիւն, զերկինս և զերկիր վկայ կոչեալ, զի անպատրաս էին ձեռք նոցա յարեանցն հեղլոց, հարան ընդ եղբօր իւրեանց 'ի Փոնդնէ: Ահագին էր մարտն, և կոտորած սաստիկ 'ի տեղւոջն լեալ, անկան հարիւր հազար Փըրանկք 'ի Ճակատուն, և յաղթեաց կողմն արդարութեան: Ընդ Թագէցան փառք մեծութեան Փրանկաց, 'ի մի իրաւունս հաւասարեալ ազգաց առ հասարակ այլազգուաց: Եւ Լոթարիոս չարեացասպարտ ապերեցն յուսահատեալ խոյս ետ 'ի Թագաւորութիւն իւր Իտալիա. և դադարեցին եղբարք նորա 'ի հալածելոյ զնա, շատ համարեալ զնոսնարհել նորա: Յետ այնորիկ վերատին որոշեցին միաբանս զվիճակ իւրաքանչիւր. գաւառք՝ որք ընդ մէջ Մէօզ, Սաոն, Եսքոյ և Հռենոս գետոց՝ տուան 'ի բաժին Կարոլոսի. Գերմանիա ողջոյն Լուդովիկոսի, և Թագաւորութիւն Իտալիոյ և գաւառք Լորենայ կամ Լոթարինեայ Լոթարիոսի. և այսպէս հաստատեցաւ 'ի նոսա խաղաղութիւն:

Գաղղիա մեան Թագաւորութեան Կարոլոսի 'ի բազում առանձին պատերազմաց աւերեալ, և մահուամբ յոգունց յիշխանացն՝ նուազունք ումանք բռնակալեալ էին զգաւառս. Կարոլոս յամենայն Թագաւորութեան իւրում ոչ գտաներ հանգիստ յերեսաց նոցա: Նոմինոյէ դուքս Բրիտանիոյ

ապստամբեալ ի նմանէ, մինչ կապեաց յաշխարհին իւրում: Թօթափեաց զծառայութեանն լուծ և դուքան Սեպտիմանիոյ և Պարչելոնայ Բեռնարդոս. և թէպէտ սպասնաւ ինքն պաշարեալ ի Տոլոսա քաղաք իւր, այլ որդի նորին Գուլիելմոս զօրացաւ քան զհայրն օգնականութեամբ Պեպինոսի Թագաւորին Ակուիտանիոյ. սոքա զամս բազումս աշխատ արարին զԿարոլոս, և հրաւիրեալ զԱրաբացիս յաշխարհ իւրեանց յոռնակոխ անհաւատից եռուն զԳաղղիա: Թագաւորութիւն այսպիսի ձեղքեալ ի բազում իշխանութիւնս, և յար ի յուզմունս պատերազմաց, չարժէր զցանկութիւն բարբարոսաց յաւար և ի կողոպուտ: Յառնէին անդէն Դանիք և Նորմանք գեռ ևս կռապարիշտք և պաշտօնեայք Ոտինոսի, և բազմութեամբ նաւացն ծածկէին զգետս Գաղղիոյ, և ի նոցանէ ասպատակք սփռէին ընդ ամենայն գաւառս, տարածէին զաւեր և զկործանումն, և գարձեալք լի աւարաւ ամրանային ի կղզիս: Անմարթ է ի միտ առնուլ զաղէտս թշուառութեան աշխարհին. անմարդաբնակ լինէին այնուհետև գաւառք և հեռք անգամ ընտանի կենդանեաց չերևէին ի նոսա: Եւ բնակիչք գիւղօրէից իբրև զՀոկս գազանաց հալածեալք գիմէին ի խորս անտառաց: Եկեղեցիք, վանորայք և քաղաքք իսկ ողջոյն հրոյ լինէին ճարակ. չէր ուժք ազատութիւն ի խժից, բայց յազնուականաց՝ որք անհոգ ամրացեալ նստէին ի բերդորայս: Եւ յամին 845 ոմն ի Թա-

գաւորաց ծովու, քանզի այսպէս կոչէին Դանիք զԹագաւորս Իւրեանց, Ռանեար անուն, եմուտ բազմութեամբ նաւաց յաշխարհն ընդ Սենա գետ. յապականութիւն եղ զգաւառս, վախստական արար զԿարոլոս, եմուտ 'ի Փարիզ, և ելից զքաղաքն արեամբ բնակչացն: Իսկ վասն և կինամարդի արքային, վոխանակ քաջութեամբ ահ արկանելոյ նոցին' գանձուք գնոց առնոյր 'ի նացանէ զխաղաղութիւն, եօթն հազար լտերս արծաթոյ կշռեալ նոցա, և զդուռ և զվայրապաղն ցանկութեամբ գանձուց 'ի նորանոր արշաւանս գրգռէր: Ձէր այնուհետև չափ չարեաց նոցա. յարձակեցան մինչ դարձեալ 'ի Փարիզ, և զհոյակապ զՀռչակաւոր եկեղեցին սրբուհւոյն Ժենովիեւայ հրոյ մատնեցին (857): Եւ իբր էին ինձ զմեծութիւն աղէտից յանդիման առնել, բայց եթէ ականատես ածից վկայ. գոչէ ոմն 'ի ժամանակակից պատմագրաց. «Ո՛ոչ վշտադնեացն տեսեալ զխախուտս զօրականին, մինչ չև 'ի մարտ Ճակատեալ, մինչ չև բուռն զընուց հարեալ, մինչ չև վահանացն ընդ միմեանս բախեալ: Խարբարոսք ձայն տան միմեանց յաւար, վասս զի ողովուրդ երկրիս կոչելով և քան զմեռեալս անարգ»: Դարձեալ և միւս ոմն առ դառնութեան ցաւոց սրտին գոչէ առ իւրան. «Արքայդ Գաղղիոյ, և իշխանք աշխարհիս, մինչև ցերբ խոյս տայցեք յերեսաց Թշնամեաց, կացեք, զդեմ կալարուք, մարտերուք վասն որդւոց ձերոց և անուան և տոհմի, վատուութեամբ ձերով և

անմիաբան երկպառակութեամբ մատնեցէք զթագաւորութիւն քրիստոնէից՝ ի ձեռս անօրէնն կռապաշտից »: Իսկ Կարոլոս անզգայ գոգցեաս ջարեացս այսոցիկ, կուտէր ժողովէր զոսկի և զարծաթ, և լցեալ նոքօք զձեռս խժիլն, պարապ առնոյր յերեսաց նոցա դարձուցանել զլինս իւր ընդդէմ Նոմինոյէ արքային Պրեգոնաց, որ ամրացուցեալ զաերութիւն իւր, սարածէր զբաղուկս ի վերայ մերձակայ գաւառաց: Իբրև յետ մահու թագաւորիս սկն ունէր Կարոլոս ընկճել զՊրեգոնս, քաջագունի քան զհայրն հանդիպեցաւ որդւոյ Նորա Հերիսփոյեայ, և հարեալ վաասարեալ յերեսաց Նորա՝ խոնարհեցաւ ի հաշտութիւն, թողեալ ի նա զաշխարհակալութիւնս հօրն (875):

Կարոլոս զկնի մեռանելոյ Լոթարիոսի և որդւոյ Նորա Լուդովիկեայ ինքնակալեալ, ջարար ինչ արժանի մեծի իշխանութեանն, և որպէս զԼոթարիոս կամելով տիրել ի վերայ պայազատաց կայսերական տոհմին, խորհակեալ փախեաւ յաշխարհ իւր ի Գաղղիա կոր ի գլուխ լի ցասմամբ. և յանցանել ընդ կիրճս Սենի լերին՝ դեղամահ սպանաւ ի Սեդեկեայ Հրէէ ի բժշկէ իւրմէ (877):

Կարոլոս անբաւական ի վարչութիւն թագաւորութեանն մեծի, արհամարհ և սակաւ լինէր ժողովրդեան. ի ժամանակէ անտի թագաւորութեան Նորա իշխանք և կուսակալք գաւառաց, դուքսք, կոմսք, և մարգիզք ձգեցին զձեռս իւրեանց ինքեանց համարձակ բռնանալ ի վերայ իշխանու-

Թեանց, և Թողուլ պայազատաս զորդիս իւրեանց. ուստի սկսանէր Ժառանգական տէրութիւնն և հրովարտակաւ իսկ Կարոլոսի հաստատեալ՝ յօրինս համարէր այնուհետև: Եւ ի Ժառանգական իշխանութենէ անտի, որ հանգոյն ինն նախարարութեան էր, բազում ջարիք եկին հասին ի վերայ սեռութեանն և աշխարհին:

ԳԼՈՒԽ Է.

Թէ ջիւրդ առ ապիկար Բոգուորօթ կարոլոսեան պոհին, յոգնակոխ Բշնամէս մոգնէցաս Գողղիա:

877–887.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Թողով պայազատեալ ըզհայր իւր Կարոլոս, ոչ ինչ քան զնա առաւելաւ ի քաջութիւն և ի հանճար. և սակաւակեաց լեալ յետ ամ մի և կէս Թագաւորելոյ մեռանի, Թողեալ զերկուս որդիս զԼուդովիկոս և զԿարլոմանոս յառաջին ամուսնոյն. և յերկրորդէն զԿարոլոս Պարզամիտ որ յետ մահու նորա ծնաւ: Եւ զի առանց օրինաց բաժանելոյ զԹագաւորութիւն իւր մեռաւ Լուդովիկոս, իշխանքն ի հաստատութիւն նախկին իրաւանց ընտրութեամբ Թագաւորութեան, որով վարեցան առ վերջնովք մերովեան Թագաւորօք, բաժանեցին զԹագաւորութիւնն յերկուս,

զարևմտեանն Գալղիա Հռոմ Լուդովիկոսի և զԱկուիտանիա Կարլոմանոսի (879)։

Սոքա եղբարք երկոքին միաբանեալ ընդ իւրեանս զԿարոլոս Գ զՅոյրն, որ ինքնակալէր յայնժամ, խաղացին ընդդէմ Բոզոնի դքսին, որ ամբարձեալ զձեռն իւր հակառակ Լուդովիկոսի թոռոմովն Թագաւորէր ի Փրովանս և տարածէր զիշխանութիւն իւր ի բազում մերձաւոր գաւառս, և եկին պաշարեցին զԼիննա քաղաք։ Երկարաձգեցաւ պաշարումն զամս երկուս և քաջութեամբ զդէմ ունէր Թագաւորացն Երմենկարդա կին Բոզոնի. այլ ուր ուրեմն անձնատուր եղև քաղաքն։ Ընտի խաղաց Լուդովիկոս ընդդէմ Նորմանաց, եհար զնոսա չարաչար. սակայն զկնի փառաւոր յաղթութեանն պակասեցաւ ի կենաց։ Թագաւորեաց Կարլոմանոս եղբայր Լուդովիկոսի ընտրեալ հիշխանաց. զառաջինն եհար զՆորմանս, ապա լքեալ հիւրոցն՝ հարաւ ի նոցանէ, և հարկս ծանուցնս տուեալ դարձոյց զնոսա. և յետ ոչ բազմաց մեռաւ և ինքն անորդի։ Սոքա եղբարքն երկու չաւտիակ ցուցին զքաջութիւն և զհանճար, այլ աւաղ, զի համառօտ եղև ժամանակ Թագաւորութեան նոցա (884)։

Իբրև դառարկ մնաց գահն և անպայազատ, միաբանեալ իշխանաց կոչեցին իւրեանց ի Թագաւոր զԿարոլոս Յոյր, զազգական Լուդովիկոսի Գ, որ ինքնակալէր ի Գերմանիա. որ և աճապարեալ յաւել և զտէրութիւնն զայն յիւր ինքնակալութիւնն, և ձգեալ տարածեաց զսահմանս Թագաւո-

բուլեան իւրոյ լերդ զնախահաւուն իւրոյ զԿարոլոսի Մեծի. այլ տկարութիւն նորա ընկձեցաւ ընդ ծանրութեամբ փառաց: Տէր կացեալ բազմութեան գաւառաց և առաջնորդ ժողովրդոց, ոչ կարաց պահել զնոսա յարշաւանաց անտի Նորմանաստացւոց, որ յապականութիւն դնէին զգաւառան: Սաստկացուցին խուժադուժքն զասպատակութիւնս, և տեսեալ զի չէք ոք վրէժխնդիր հակառակորդ, համարձակեալ անցին ընդ Սէնա աւելի քան զեօթն հարիւր նաւակօք գալ պաշարել զՓարիզ (886):

Ի ժամանակին յայնմիկ մայրաքաղաքս այս ամփոփեալ էր միայն ի կղզին որ այժմ Սիդէ ասի, որ և ամենուստ կցորդեալ ընդ ցամաք կամրջովք և ամրացեալ էր աշտարակօք: Հզօր էր քաղաքն ի բնէ գրիւքն, և մանաւանդ ամուր պարսպօք, այլ պահեաց զնա առաւել քաջութիւն Եւդէոսի կոմսին՝ որ քաղաքապետն էր և եղբօր նորա Հռոբերտոսի որդւոց քաջին Հռոբերտոսի դքսին Անժուի որ ի պատերազմունս ընդդէմ բարբարոսաց հռչակեալ քաջութեամբ, այլիսպէս էր նահատակեալ ի վերայ ժողովրդեան ազգին իւրոյ: Ոչ ինչ նուազ քան զսոսա նպաստեցին վրկութեան մայրաքաղաքին և չանք կոսղին եպիսկոպոսին և քաջ զօրավարացն:

Յետ երից բուռն յարձակման ի հիւսիսային աշտարակն, Նորմանաստացիք վանեալք միշտ, զհետ եղեն զդիշերն ողջոյն ընդ խրամն: Եւ ի ծագել առաւօտուն տեսեալ զի պահապետին փայտակոյտք, սկան և զդէշս

երիվարաց արկանել անդր և զարջառոց՝ զորս այն իսկ ապանանէին. և իբրև այս ամենայն չէզև բաւական, ձեռն արկին ի գժնեայ խժդժութիւն: Կուտեցին զգերին ի մի վայր, և խողխողեալ զնոսա յանգխման ամրականացն Փրանկաց՝ ամայեին ի խրամն: Եպիսկոպոս մայրաքաղաքին Կոսղին կացեալ ի վերայ միոյ ուրուք յաշտարակաց, ի տեսիլ ողորմ գործոյն՝ կոչեաց զերկինս ի վրէժխնդրութիւն անգթութեան պաշարողաց. և վառեալ պատերազմական նախանձու՝ եհար նետիւ զզօրավար զառաջնորդ Թըշնամեացն և էարկ ընդ երկիրն ապանդան ի խրամ անդր: Տեսեալ Նորմանաացւոց զյուսահատ քաջութիւն Փրանկաց, ոչ ևս յարձակեցան ի վերայ, այլ չանային բաղխասր ի գործ արկեալ, հարուածովք քարանց ջըրուել զպահապանս և մանգլիոնաւ տապալել զպարիսպս, և գողուղն բրել զհիմունս աշտարակին, այլ այս ամենայն չանք նոցա ի գերև ելին. քանզի կոմսն Եւգէոս և քաջ նիզակակիցք նորա խարխարեցին զբաղիսպն, հարին խորտակեցին զմանգլիոնս, աւերեցին զգողուղն Ճանապարհն և վանեցին զԹշնամին կորակոր գառնալ ամօթով ի բանակն իւրեանց. և եպիսկոպոսն խոց վիրալից՝ խրախուսէր զզօրականն, միխիթարէր զանկեալսն և վառէր զոգի ամենեցուն նահատակել ի վերայ օրինացն և ազատութեան ժողովրդեանն Աստուծոյ:

Սակայն պաշարիչքն ոչինչ սրտաբեկեալ ի ձախորդ ելից գործոյն, պինդ կացին առա-

ջի քաղաքին զամ մի և կէս աշխատ առնելով գնա, մինչև գալ հասանել կարոլոսի զօրու ծանու յօդնութիւն պաշարելոցն: Անշուշտ էր յաղթութիւնն՝ի վերայ տկարացեալ թշնամւոյն՝ եթէ՝ի սով արկանէր զնոսա Թագաւորն կամ՝ի զէն կոչէր. այլ ընտրեաց նա հատուցանել եօթն հարիւր լիտր արծաթոյ, և թողուլ նոցա ձմերել՝ի Բուրգոնիա մնանելոյ զգաւառն՝ի յափշտակութիւն նոցին: Ընդ այս ամօթալի պայման՝ի ցասումն բարկութեան շարժեցան ամենեքեան, և զարհամարհանս իւրեանց յաղթութիւն փոխեալ Փրանկք, Խաչացիք և Գերմանացիք, լքին Թողին գնա. որով և բըռնագատեցաւ նա մերկանալ զծիրանիս, և՝ի գահոյից անտի ելանել՝ի հիւղ փոքրիկ, ուր և մեռաւ առ վշտին (888):

Ընդ մահ կարոլոսի գ. հնչեաց շուինդն համաստիւռ ընդ աշխարհն կարապետ խաղաղութեան և մարտի. և ոչ էառ երկիրն խաղաղութիւն մինչև ցընտրութիւն Ոկոսի Գաբէթի:

ԳԼՈՒԽ Ը.

Թագաւորութիւն Եւդէոսի և Պարկամիդն Կարոլոսի։

888 – 923.

ԿԱՐՈԼՈՍ Յոյր վերջին եկաց թագաւոր յօրինաւոր ժառանգաց Մեծին Կարոլոսի. անկաւ ապա գժտութիւն յիշխանս վասն ընտրութեան թագաւորութեան. մերժեցին զԿարոլոս Պարզամիտ իբրև հարձորդի, և յաղթեաց կողմն քաջին Եւդէոսի, որ հանդերձ քաջութեամբն արժանի գտաւ թագաւորութեան և աշխուական տոհմիւն, քանզի սերեր նա ի Հերիտաւալ Պեպինոսէ և ի Մերովեայ։

Եւ ամբարձեալ Եւդէոս յաթոռ թագաւորութեան, յառաջին ամի անդ իշխանութեան իւրոյ ջնջել ընծայեցոյց զթագաւորութիւն իւր սքանչելի գործովք արութեան, չորեքհազար ևեթ հեծելովք ըզգունդ մի իննևտասան հազարն Նորմանտացւոց խորտակեաց մերձ ի Մոնֆոքոն. ցանկայր Եւդէոս ջնջել մերժել զասպատակաւորս զայնոսիկ աֆաբեկս յերեսաց իւրոց, այլ խափանեցաւ ալմկօք և ապստամբութեամբք գլխաւոր իշխանաց իւրոց, որոց իւրաքանչիւր առանձին թագ կապեալ ինքնագլուխ

սիրէին. և նախանձու վառեալ ընդ մեծու-
թիւն Թագաւորին, որ երբեմն հաւասարա-
կից ոք էր ինքեանց, ջանային խոնարհեցու-
ցանել զնա, կամ՝ ի ձեռն խռովութեանց
սարսափանել զնուրբ իշխանութիւն: Գը-
լուխ սմբարձին յայնժամ և հակառակորդք
Թագաւորութեան նորա, և զի չյաջողէր նո-
ցա զօրաւոր ոք ոտից կացուցանել ընդդէմ նո-
րա, հրաւիրեցին զԿարոլոս Պարզամիա, որ
զօրացեալ ընդդէմ Եդէոսի կալաւ զկէս
Թագաւորութեանն. և շնորհեաց զայն նմա
Եդէոս առանց հակառակելոյ, և մեռաւ
պատուով, զի դիտաց Թագաւորել քաջու-
թեամբ, և առ սէր խաղաղութեան հաւարա-
կաց զգօնացաւ Թողուլ համազգւոյն զկէս
Թագաւորութեան իւրոյ:

Եւ բաժանէր յայնժամ ինքնակալութիւն
Գաղղիոյ՝ ի բազում ինքնիշխան պետու-
թիւնս. Թագաւորութիւն Պրովինկիոյ, ուր
Թագաւորէր Լուդովիկոս որդի Բոզոնի.
Թագաւորութիւն Ակուիտանիոյ, և Թագա-
ւոր նորա Հռայինուլփոս Բ կոմս Պիկտա-
ւայ. դքսութիւն Կուասքոնիոյ, որում սի-
րէր Սանկիոս մականուանեալն Աբերիչ.
Թագաւորութիւն Բրիտանիոյ, ուր իշխէր
Մեծն Ալֆրէդ: Իսկ կոմսութիւնք ոչինչ նը-
ւազ աղատք քան զԹագաւորութիւնս էին՝
Բուրգոնիոյ, Փլանդրիոյ, Վերմանդուայ,
Անժուի, Աբերնիոյ, Փերիկորայ և մարգ-
գրաւութիւն կոմի:

Յետ մահուն Եդէոսի միապետեալ
կալաւ Կարոլոս զողջոյն իսկ զԹագաւորու-

Թիւն Գաղղիոյ. և Թէպէտ չէր անման ամենևին ի քաջութենէ, այլ վերջացեալ ի հանճարոյ և ի խոհականութենէ՝ յիրաւի իսկ Պարզամիտ կոչեցաւ, զի խաղալիկ եղեալ խաբեբայից՝ որոց գործ էր պատրել զնա հանապազ ի ճնաս աերութեան, ի բազում վիճականս անկաւ (898):

Հռոլֆն զօրավար Նորմանտացւոց ոխերիմ Թշնամի Գաղղիոյ, այր ժխրաժիր, ձեռներէց, յանդուգն, անխոնջ, կալաւ զՌուան, և արար իւր զայն քաղաք զինուց. և անտի աստաստակս սփռեալ յամենայն մարզս աշխարհին՝ աւերէր զերկիրն, սպառնացեալ ընչել զթագաւորութիւն Գաղղիոյ: Բռնադատեալ Կարոլոս ի բողոքոյ իւրոցն՝ փորձ փորձեաց յինքն յանկուցանել զԹշնամին, զոր ոչ կարէր զինաթափ առնել. և մատոյց նմա զդուստր իւր ի կնութիւն, և զգաւառս ինչ Նեւստրիոյ եւս պաշտաւտական, բայց միայն զի հատուսցէ զհարկ հպատակութեան վասն դքսութեանն, և գարձցի ազգովին ի քրիստոնական կրօնս: Հռոլֆն որ ազգաւ ևեթ խուժ, իսկ բարուք ճոպոլ ոք էր և հանճարեղ, ընկալաւ զառաջարկութիւնն, և չգտաւ յանդիման լինել արքային. ողջունեաց զնա իբրոխատագոյնս իբր յաղթող և ոչ հպատակ, և ընկալեալ ի նմանէ զտէրութիւն երկրին՝ շնորհս մատոյց նմա: Եւ իբրև ազդարարին թէ օրէն է ի ցոյց շնորհակալեաց ի ծունր իջեալ համբուրել զոտս արքային, ազաղակեաց. «Լաւ է ապա լուծանել զդաշինքն քան յանձն առնուլ զայդպիսի պայման»:

Եւ իբրև կարի սիրեցին, հաւանեցաւ և՝ի ձեռն միոյ ուրուք՝ի սպայից իւրոց հատուցանել զսպան: Սպայն նորմանատացի՝ դոռոզ իբրև զտէր իւր, կալեալ զոտս Թագաւորին՝ի համբուրել, այնպէս իմն՝ի վեր ամբարձ զայնոսիկ՝ մինչև անկանել նմա յաթոռոյ յերկիր. և փրանկք սպիկալք՝ի պատուհասել զժպրհութիւնն, սկսան ծիծաղել (911):

Իսկ դուքն Հռոլլոն հաւատարիմ գտեալ պայմանացն, գարձաւ միրտեցաւ ազգովին. և կերպարանափոխ եղև ազգն առհասարակ: Ինքն իսկ օրէնագիր եկաց նոցա, և տարագիր արար զգողութիւն և զյափշտակութիւն յաշխարհաբարոյ յարիւնահեղ ժողովրդենէ. և խնամատուն և քաջ վարչութեամբ իւրով բարգաւաճեալ ծաղկեցոյց զնորմանական, որ՝ի բնակչաց անուն էառ զկոչումն՝ մինչդեռ այլ կողմանք Գաղղիոյ կային խոպան:

Կարողս եկաց զամս ինչ՝ի զաղփաղփուն գահ տէրութեան իւրոյ, խաղալիկ ծառայից իւրոց, որք ըստ կամ վարէին զնա, և իշխանացն որք հակառակեալ ընդ իւեարս և ընդ Թագաւորին Թշնամութեամբ խեռային բառնալ և զմնացորդս Թագաւորական իշխանութեան: Յետոյ ապա տեսեալ իշխանացն կուսակցաց Հռոտոլփոսի կամ Հռաուլայ, զի կորնչէր պետութիւնն ընդ ապիկար Թագաւորաւն, և զի եղբայր նորա Հռոբերտոս դուքս Գաղղիոյ արժանաւոր էր գահոյն, կոչեցին զնա՝ի Թագաւորութիւն:

Հռոբերտոս սերեալ՝ի Պեպինոսէ Հէ-

բիւտուլայ օրինաւոր ժառանգ համարէր գահուն, զոր հարձորդին կալեալ ունէր: Օծաւ նա ի Հռեմս, և հանդիպեալ պատերազմաւ Կարոլոսի ի Սուասոն, անկաւ ի ձակատու մարտին. և մեծն Ուկոս որդի նորա որ զօրավարէր ի բանակին՝ խնդրեալ զվրէժ հայրենի, խորտակեաց չարաչար զՇիամին, և զԿարոլոս ձերբակալ արարեալ, եգ ի բերդն Փերոն (923):

Յետ այսորիկ անկ էր Ուկոսի Թագաւորութիւնն, և իշխանքն իսկ կամէին Թագաւորել նմա. այլ նա առ բնածին չափաւորութեան, կամ առ երկիւղն վտանգաց՝ յորոց շուրջ պատեալ սեռանէր զգահն, յանձն արար զնորոգութիւնն ի քոյր իւր ի կին Հռոտոլփոսի դքսին Բուրգոնիոյ, ընտրել զմի յերկուց՝ զեղբայր իւր կամ զայր. և ի յօժարել նորա մատիւրագոյն յայր իւր քան յեղբայր, Ուկոս անհակառակ կացոյց զՀռոտոլփոս Թագաւոր Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ Թ.

Հռոմանոս, և բռնանալ նախարարութեան ՚ի փանէ կարողեանց:

923 – 987.

Ի սկզբան թագաւորութեան Հռոմանոսի փոսի անդադար էին ապստամբութիւնք և դաղանի դաւաճանութիւնք յիշխանս նորա, յորոց բազումք հզօրագոյնք քան զնա ազգօրն, Թևակոխէին յազատ տիրապետութիւն:

Իշխանութիւնք գաւառաց որ երբեմն պարգևք եւանէին ՚ի թագաւորաց, յայնժամ բնիկ ժառանգութիւն էր համարեալ և թագաւորութիւն հաստատեալ օրինօք ժառանգութեան, ընտրութեամբ ըստ հաճոյից անցանէր յայլմէ յայլ: Հզօրագոյնք ՚ի դուքս էին, իշխանքն Նորմանաւոյ, Ակուիտանիոյ, Բուրգոնիոյ և դուքն Գաղղիոյ Տիւք ոլ Ֆրանս կամ Տիւք աէ Ֆրանսէ կոչեցեալ: Ունէին սոքա զամենայն երկիրն որ ընդ Լուար և ընդ Սենա գետոցն և ընդ երկարութիւն Սենայ ցհիւսիս: Դուքսքն իբրև հպատակք թագաւորին հարկս հարկանէին նմա, և ինքեանք զնոյն հարկ ծառայութեան պահանջէին ՚ի կոմսից որք էին յերկրի դքսութեան իւրեանց: Նոյնպէս և

կոմսք ունէին ընդ ձեռամբ այլ իշխանս, այնպէս և նոքա մի ըստ միոջէ մինչև յիշխանս աւանաց և գիւղից՝ որոց բնակիչք սորուկք կոչէին: Նէին և կոմսք հզօրք զօրութեամբ որք յաճախ գլուխ ամբառնային ընդդէմ Թագաւորին, որպիսիք էին կոմսքն Փղանդրիոյ (Ֆիանտրայ) և Կամպանիոյ: Խոհական, հանճարեղ և անվեհեր Թագաւորի պէտք էին զօրանալ՝ ի վերայ փոքրիկ բռնաւորացս, և ջլինել նոցին խաղ, երկեղուկս արկանել նոցա միանգամայն և սիրելի և մեծարոյ զանձն ընծայել, պատեհ ինքեան առեալ ձարտարութեամբ զնստուածիւն նոցա և ըզ նախանձընդդէմ հակառակութիւն ընդ իրեարս, ըստ պատշաճի պատուհասել երբեմն զժպրհութիւն նոցին: Զհետ նկարագրիս եկեալ Հռոտոլփոս, հաստատեաց զաթոռն:

Քանզի՝ ի սկզբան Թագաւորութեան նորա բազումք՝ ի գաւառաց, մանաւանդ հարաւայինն Գաղղիա չընկալան զնա՝ ի Թագաւոր: Հռոտոլփոս խնդարհեցուցեալ նուաճեաց զդուքսն Ակուիտանիոյ, խորտակեաց զնորմանս: Եւ իբրև ոչ առնուլ կարծէր յերեսաց արշաւանաց նոցա, նոր ազգ բարբարոսաց՝ ի վեր երևեցան խժադոյնք քան զորս ցայնժամ տեսեալն էր Եւրոպա: Սոքա էին Մաճառք կամ Հունգարացիք՝ ժողովուրդք Սկիւթիոյ. որք հալածական յերկրէ իւրեանց մեծցան՝ ի Պաննոնիա, և անտի աստիճանեցին՝ ի Լանգոբարտիա, և իբրև զգազանս վայրենիս յարձակեալ ապականէին զերկիրն համօրէն: Եւ կենցաղ իսկ նոցա

ոչ ինչ ընդհատ էր՝ի գազանաց. գիշախանձք էին և արիւնարբուք, իբեալ զսերտս գե-
րեզոյն Թշնամեաց, ուտէին անյապ: Ա՛յլ
մինչ չև մեծ ինչ չարիս անցուցեալ սոցա ընդ
Գաղղիա, միաբանեալ իշխանաց ընդ Թա-
գաւորին՝Հարին զնոսա: Վերսաին երևեցան
նոքա՝ի սահմանս Լորենայ և Կամպանիոյ
(որ Շամփայն), և իբրև յարշաւանս անդ նո-
ցա խաւարէր լուսինն, և ժողովուրդն որ-
պէս՝ի չարագոյժ ինչ նշան զահի հարեալ
երկնչէր, աճապարեալ Հռոստովիոս քաջու-
թեամբ եհար զնոսա՝ի սաստիկ հարուածս,
և հալածական արար յաշխարհէն: Եւ մինչ
պատրաստէր խաղալ անդրէն Ա՛կուիտա-
նիա, որ նշկահեալն էր զնա, վախճանեաց
զաւուրս իւր: Զայսօրինակ Հռոստովիոս
քաջութեամբ տարեալ անընդհատ պա-
տերազմաց, զՀզօրագոյնս յիշխանաց նուա-
ճեալ խոնարհեցոյց, և խաղաղացոյց փոքր
մի զԳաղղիա. և զնուաղութեան և զգժտու-
թեան գրգիռս ցածուցեալ, անուանի եղև
յոյժ: Ա՛յլ ընդ մեռանել նորա չփոթեալ
աշխարհն, ՚ի բազում Թագաւորութիւնս և
յիշխանութիւնս և յանգուլ պատերազմունս
տառապեր (936):

Լուդովիկոս Դ որդի Պարզամիան կարո-
ղոսի, ՚ի պարտել հօր նորա յերեսաց Թշնա-
մեաց և՚ի գերութիւն մատնել, խոյս ետ մեկ-
նեցաւ առ հաւն իւր առ արքայն Անգղիա-
ցւոց, ուսոյ և զկոչումն ընկալաւ Տ՛Ուէթր-
մեր: Յետ մահուան Հռոստովիոսի՝ Թագա-
ւորն Անգղիոյ Ճարտարութեամբ հաւանե-

ցոյց զմեծամեծս Գաղղիոյ թագաւորեցուցանել զԼուդովիկոս։ Ուկոս հզօր քան զամենեսեան՝ ի նոսա՝ հրաժարեաց գարձեալ ի թագաւորութենէ, և եամ զիրաւունս իւր նմա։

Իբրև ամբարձաւ ի գահ թագաւորն մանուկ, խորհուրդ ի մտի եդ հեռացուցանել զՈւկոս, և միայնակ ինքնապետեալ։ Այլ զի անձիւք էր խորհուրդն և անհնարին մերժել զայր, որ առաջնորդ լեալ էր ընտրութեան իւրոյ. վասն որոյ ի դերև ելեալ խորհրդոցն՝ ընկճեցաւ յիմաստութենէ Ուկոսի, ամփոփեալ զտէրութիւն իւր ի Լան քաղաք, և բռնագատեալ թողուլ զթագաւորութիւնն դքսին Գաղղիոյ, որ քան զթագաւոր մեծարոյ էր յաչս ժողովրդեան։ Ոչ պակասէին Լուդովիկեայ արուեստիւն և ճարտարութիւն. բայց ի կանգնել զկործանեալ մեծութիւն թագաւորութեան՝ գիւցազնական քաջութեանց պէտք էին, և նուազագոյն զօրութեան հպատակաց։ Մեռաւ սա անկեալ յերիվարէն, մինչդեռ Մաճառք աւերէին զկողմն մի զաշխարհին (954)։

Զկնի Լուդովիկոսի Դ Ուկոս Մեծն կացոյց ի տեղի նորա զԼոթարիոս որդի նորին. և ինքն վարեաց զտէրութիւն իւր մինչև զմահ. գրաւեաց զդքսութիւն Բուրգոնիոյ, և մինչ ձեռն արկանէր և յԱկուիտանիա, ի վերայ հասեալ մահուն վախճանեաց զկեանս։

Պայազատեաց զպատիւ դքսութեան և իշխանութեան նորա որդին նորա Ուկոս, որ

վան առաքինի խոհականութեան գաբէթ ասացաւ 1: Որչափ հայր նորա առելի էր նո- դովիկոսի, առ այնչափ սիրելի եղև Լոթա- րիոսի, և կալաւ զաէրութիւնն զամենայն ժամանակս թագաւորութեան նորա հաւա- տարմութեամբ: Լոթարիոս աերա կապեալ ընդ Ոէկոսի, և նովաւ մեծարոյ լեալ յաջս ժողովրդեան՝ կալաւ զիշխանս՝ի հնազանդու- թեան. և պահեալ զնրաւունս ինչ թագա- ւորի, ոչ սակաւ բարձրացոյց զիշխանութիւն թագաւորական: Եւ իբրև եղբայր իւր կա- րոլոս չնորհս գտեալ առաջի Ոթոնի կայսեր Գերմանիոյ՝ ընկալաւ՝ի նմանէ զդքսութիւն Սաորին Լորենայ, Լոթարիոս նախասահմն անձին համարեալ՝ կայսեր զգաւառս աէրու- թեան իւրոյ իշխանաբար այլուս՝ չնորհել, յեղակարծում դիմեաց յաշխարհ նորա, և խաղաց մինչև ցԱվուխակրանա: Մազապուր եղև Ոթոն. այլ անդէն զօրաժողով լեալ յարձակեցաւ՝ի Գաղղիա, յատականութիւն եդ զԿամպանիա և եկն եկաց յանդիման մայրաքաղաքին. և՝ի նախասահմնս թագաւո- րին Լոթարիոսի և ազգին՝ եռս նուագել զերգս ննջեցելոց: Ա՛յլ ապա ամենով հա- լածական եղև առաջի զօրութեան Գաղղիա- ցւոց և քաջութեան թագաւորին և դքսին Մեծի Ոէկոսի. և անկեալ՝ի Գերմանիա խոնարհեցաւ՝ի հաշտութիւն (978): Ի մե- ծամեծս արդեօք մտաբերէր Լոթարիոս,

1 Ընտ ասէն վան Ռէյտ-Ռիէան գլխոյն և համ խոտրին:

այլ ի ծայրկի հասակին զբաւեցաւ ի կենաց դեղամահ լեալ ի կնոջէ իւրմէ Լիմմոյ, ի դաւերէ Թագաւորին Խաղիոյ (986):

Լուդովիկոս Ե որդի նորա Թագաւորեաց ընդ նորա, ձեռամբ Ուկոսի, այլ զկնի ամի միոյ մեռաւ անպայազատ. ընդ նմա շինեաւ և զարմն Կարոլոսեանց, զկնի երկերիւր և երեսուն ամի Թագաւորութեան (987): Սկզբնապատճառ անկման նորա եղև տապալման զօրութիւն Եկեղեցւոյ, և ապա սպիկար յուզութիւն բազմաց ի Թագաւորաց: Եւ զոր օրինակ մերձ ի վախճան Թագաւորութեան Մերովեանց բռնացեալ էին հալածանաւք արքունեաց, նոյնօրինակ և մերձ յանկումն Կարոլոսեանց բռնացան իշխանք ի վերայ Թագաւորին, և զպիտակ անուն հպատակի կրէին՝ բռնակալք արդեամբք յիւրաքանչիւր տէրութեան:

ԲԱՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

ՓՐԱՆԿԱՑ

ԱՒ ԹԱԳԱՒՈՐՕՔ ԵՐԿՐՈՐԴԻ ՏՈՀՄԻՆ

Աղաչեմ ես ձեզ վրանիս, իմ ազնուագունի, բնակարանի, արուեստի գինուորութեան, զբօսանաց որոց, վաճառականութեան, դրամի նոցա և դիպուածից:

Փոխանակ ժողովոյն՝ որ ի գաշտ Արիսի, ուր մերովեան թագաւորք զօգտից հասարակաց խորհէին, յայլորդեաց այլ ժողով ազատախումբ յաւուրս կարողսեանց, ոչ ինչ այնչափ կարևոր օգտու թեամբն, սակայն ձոխ հանդերձանօքն երևելի: Երկիցս ի տարուոջ գումարէր ժողով, ի ծննդեանն Քրիստոսի և ի Յարուցեան, և ամէնքն զաւուրս ունէր: Ի հանգիստաւոր աւուրս նստէր թագաւորն ի սեղան թագ ի գլուխ հանդերձ աւագանւովն և իշխանօք ի տեսիլ ժողովրդեան: Եւ ի հանգիստս սեղանոյն ի բառնալ ղսպասս ի բաց, օրէնք էին ի ձայն

սինդի և փողոց, և ի ձայն քարոզի երիցս գոչէը «Ընորհք առաւտաձեռնութեան հզօրագունին ի Թագաւորս», և սիրէլ լիաձեռն ոսկի և արծաթ զժողովրդեամբն, որ ցնծալից ամբոխիւ ժողովէր զայն: Զբօսանք երեկոյին էին հանդէսք խաղոց, որպք ձկանց և երիոց, միջկաւակ, լարախաղ և գազանամարտ, յորս բազում գանձք ծախէին. քանզի ի մի վայր գումարէին անդ ազնուականք բազմութեամբ ապաւաւորաց, և Թագաւորն հանդէս առնէր անդ գանձուց իւրոց: Եթէ անօթի ինչ ծանրագին էր նորա, կամ գոհար ակն քննազագիւտ ի Թագին, ընծայէր զայն ուժեք յիշխանաց ըստ պատշաճի: Դարձեալ և պարտ էր նմա զգեցուցանել զապաւաւորս իւր և զԹագուհւոյն և զիշխանացն, ուստի եմուտ սովորութիւն միաւարազ գրաւոիցն զգենլոյ ապաւաւորաց: Ա յս սովորութիւն ժողովոց տևեաց մինչև ցհնգեաւաւանեւորդ գար, և զի առաւել և է զի նուազ ծախուԹեամբ պայծառութեան առ երկրորդ և երրորդ տոհմիւ Թագաւորաց. և ապա յաջորդեցին հանդէսք ոչ այնչափ ծախք և բազմածախք առ ի գիւրութիւն Թագաւորին և իշխանացն:

Ի զգեաւուց Մեծին Կարոլոսի մարթիւք իմաստասիրել զաւարազ հանդերձից Փըրանկաց առ երկրորդ տոհմիւ. քանզի Թողեալ զնորայն որ ի հանդէսս զկերոլ արքունի, սովորական նորա ձև ոչինչ իւիք գոգցես զանազանէը ի ժողովրդենէն: Ի ձմերանի ագանէր նա մուշտակ ընդի զա-

սուէիւքն. և ընդ մուշտակն՝ ի վայր կախէին վէղկք հանդերձից կապոյտք՝ ի գօտւոյն մինչև ցազդերս. և վերարկու զնոքօք երկայն մինչև ցոտս յառաջոյ և՝ ի թիկանց ի ջանէր, առ՝ ի կողից զսպեալ ցծունկս: Իսկ ապա նէլիք ոտից էին՝ ի գոյնզգոյն ժապաւինաց խաչաձև հիւսիկն:

Ի ձմերանի ժողովէին ընտանիք՝ ի սենեակ ինչ հասարակաց ծխոտեալ ղվառարանաւ, որոյ ծխնելոյզ ընդ ծակ ձեղուանն՝ ի վեր ամբառնայր. զի և նա էին յայնժամ այժմեան եւրոպական հանձարոյ գեղեցիկ գիւտք վառարանաց՝ հանդերձ ջերմութեամբն և զարդս յատելոյ սենեկաց: Աշտանակք ձոխք և մեծապոծք հալիւ ուրեք յատակ բանս թագաւորաց սեաւանէին, քաղաքայնոց առհասարակ կանթեղս վառելով, իսկ մեծաստանց զմախր: Պատուհանակալս զսեղանովք ոչ արկանէին, և գուն ուրեք էր՝ ի սեղանս գինի. իսկ՝ ի գաւառս՝ ուր չգոյին այգիք, առ գեղավաճառս միայն գտանէր այն իբրև գեղ կաղգուրիչ:

Չինուորականն արուեստ զարգացաւ փոքր մի առ երկրորդ տասմիւ թագաւորաց. սովորութիւն ազանելոյ սաղաւարտ և զրահս, ազեղնաւորութիւն և նետաձգութիւն անծանօթ առ նախնեօք՝ սահմանեցաւ՝ ի հրահանգս զինուորականս. յատելան՝ ի հեռաւոյս և հեծեալք: Փրանկք՝ ի գերմանացւոց ուսեալ յառնել զջու պատերազմի երգէին զարշաւանս գիւցազանց զինաւնեաց ազգին. և՝ ի բազում յիշատակարանաց ազ-

դին յայտ է, զի և ի չորեքտասաներորդ դարուն չև էր մոռացեալ զօրաց զերգս յօրինեալս ի պատիւ երևելոյն Հռոլանոսի ասանելոյ ի Հռոնսըվոյ:

Յաւուրս առաջնոյ Թագաւորացն մի ի յաձախելոց զբօսանացս զուարճութեան նոցա և իշխանացն էր յորս ելանել հեծելոյ Թեամբ կամ որսական Թռչնովք. և նոցա էր պահեալ ածել ընդ խուրեանս բազէս կամ այլ որսականս, մինչև գուն ուրեք երևել նոցա հրապարակաւ առանց այսր նշանի պատուոյ: Որ ոք ըմբռնէր ի գողութիւն բազէի, պարտ էր նմա տուժել գահեկանս վեց ոսկիս, կամ տալ Թռչնոյն ձարակել ի մարմնոյ նորա ունկիս վեց: Ա յսքան պատուական էր ազատանուոյն ի ժամանակին յայնմիկ ի հրահանգս որսոց յետ պատերազմականացն կարևոր մարզից,

Երևելի կարգաւորութիւնք եղեն յաւուրս Կարոլոսեանց քաղաքական և եկեղեցական օրինաց: Ժողովն օրէնսդիր Վերակոյս կոչէր կամ Սիւնհոդոս. քանզի եպիսկոպոսաց և ի սեպհոց գումարէր, և իշխանութիւն սոցա ըստ հանգամանաց ժամանակի և ըստ զօրութեան Թագաւորաց առաւելոյր կամ նուազէր: Զի որ առ Պեպինոսիս և առ Մեծն Կարոլոսիս հպատակէր նոցա յամենայնի, առ ապիկար յաջորդսն նոցին զօրացեալ ինքնիշխան հրամայէր:

Յաւուրս երկոցունց առաջնոց տոհմից Թագաւորաց, ի բաց առեալ զժամանակ Թագաւորութեան Մեծին Կարոլոսի, յոյժ

յետնեալ էր վաճառաշահութիւն առ թէ բահոդ տեսչութեան, թէպէտ և վաճառականք Գաղղիացիք երթային գունդագունդ առ հիւսիսային ազինս ի տուրևառ, և արդելեալ միայն էր նոցա չտանել զէնս: Ի Սպանիոյ առնուին Գաղղիացիք էրիվարս. յԱնգղիոյ՝ երկաթ, անագ և կապար. ի հիւսիսոյ՝ մուշտակս, յարևելից շղարշ, մագաղաթ և ձէթ, ածեալ անդր փոխարէն առնօթս խեցեղէնս, ձեռագործս պղնձիս, ապակիս, մեղր, և այլն: Եւ երեսելի քաղաքք վաճառականութեան էին Լուգդոն, Արեւլատ, Մասսիլիա և Նարբոնա. իսկ ի նեղբ. սագոյն կողմանս աշխարհին վաճառանոցք էին միայն և տօնավաճառք: Հռչակեալն յոյժ ի տօնավաճառս ժամանակին էր Կոլխակրանա հաստատեալ ի Մեծէն Կարոլոսէ՝ որ ապա փոխեցաւ ի տուրբն Դիոնեսիոս. ուր ժողովէին վաճառականք ոչ միայն յամենայն գաւառաց աշխարհին, այլ և յողջոյն Եւրոպայ. յորմէ գանձ մեծ յաճախէր տէրութեանն:

Յառաջին գարս անդ թագաւորաց սովորութիւն էր բաց ի գրամոյ վարել քծուարս ոսկւոյ և արծաթոյ կշռով. այս սովորութիւն ի Հռովմայեցւոց մուծեալ՝ տեւէր գայր մինչև ցչորեքտասաներորդ գար: Վասն որոյ ի հաշիւս միայն վաճառականութեան պէտք էին գրամոյ. և գլխաւոր գրամք էին սուկամ գահեկան ոսկի՝ որ իբրև հնդեսասան ֆրանքաց ունէր արժէս. և գահեկան արծաթի, դենար և գանդ: Առ ի ծանօթու-

Թիւն արժէից հին դրամոց, պարտ է գիտել զի կշիռ արծաթոյ ունկիայ՝ արժէր քառասուն և ինն Ֆրանկս. զի լերային գաղղիական, կշիռ երկոտասան ունկիայ արծաթոյ, առ Մեծն Կարոլոսիւ արժէր հօթանասուն Ֆրանկս. իսկ դահեկանն արծաթի, քանեերորդ մասն լերայն, արժէր Ֆրանկս երիս, և երեքտասան փող. ասասի մարթիմք իմանալ և զարժէս արծաթի դէնարին՝ որ էր երկոտասաներորդ մասն դահեկանին ոսկւոյ. իսկ դանգն էր կէս դէնարին: Այլ լերայս այս Մեծին Կարոլոսի ոչ գնոյն ընդ երկար կալաւ արժէս. այլ տակաւ նուազեալ՝ փոխեցաւ յայժմու լերայն և ի Ֆրանկն: Նիւթք ոսկւոյ և արծաթոյ էլանէին ի բովուց՝ որ բազում ուրէք էին ի Գաղղիա, մանաւանդ ի Բրիտանիա և ի Լուգդունեան գաւառս. տասանորդեր միայն անտի Թագաւորն, Թողեալ զամենայն ի ձեռս առաջնորդաց գործոյն: Տակաւ պակասեցին հանք և ի գտանել Ամերիկայ՝ ցանկութեամբ նոր գանձուց բոլորովին լքեալ Թողան:

Առ Թագաւորութեամբ Մեծին Կարոլոսի ամբարձաւ գիտութիւն ի փառս, ի խրատնամոց ալքուննի, նոյնպէս և առ յաջորդօք նորին. քանզի ոչինչ նուազ սիրոյք կացին գիտութեանց Բարեպաշտն Լուդովիկոս և Կարոլոս ճաղատս: Այլ անտի ապա յոյզ խռովութեանց աղմկեալ զպետութիւն, ի սպառ աղաւաղեալ ամայացուցին զվարժեարս. և վերստին դլորեցաւ աշխարհն ի բարբարոսութիւն, յորմէ զերծեալ էր հանճարով

մեծի ինքնակալին։ Ընդ անցեալ ամաց հաբիւրոց՝ այնպէս սիրեաց առ հասարակ արդիւնութիւն, մինչ և զայք ազնուականք և իշխանութեամբ երևելիք՝ ոչ գիտէին ընթեռնուլ և գրել, ի պատիւ իմն համարեալ այն նոցա և ի ցոյց ազնուականութեան։ Առ եկեղեցականս միայն պահէր խուն ինչ նշոյլ գիտութեանց, և մանաւանդ ի մենաստանս, ուր խնամով պահեցաւ կայծակն պատուականն, որ ապա յետ դարուց բազմաց արծարծեալ՝ հալածեաց զմանձր խաւարին արգիւնութեան, և էած զբեղեցիկ աւուրս այժմեան գալոց։

ՏՈՄ ԵՐՐՈՐԴ

ԳԻԲԵԼԹԵՆԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Պատ աշխարհին Գաղղիոյ, և թագաւորութիւն Ռոլոյ Գաբէրի։

987 – 996.

Ա՛ՒՆՉ ԶՍՒ զԳաբէլեանցն սկիզբն առեալ՝ ի պատմել, պարտ համարիմք տալ տեսութիւն ինչ համառօտ զտասներորդի դարուն, որ անփառունակ և ապեստագոյն Գաղղիոյ քան զամենայն ժամանակս որ յառաջ և որ ի կին։ Վասնզի ամենայն օրէնք աշխարհին և կարգք յեղծումն գիմէին, կրօնք բարեպաշտութեան խրթնացեալ, իշխանութիւն օրինաց անզօր և արհամարհ, և երկիրն համօրէն յաւար և յափշտակութիւն առաջի ազգաց բարբարոսաց։ Բերդորայք միայն ապաւէնք էին յերեսաց սրոյ տառապանաց, ա-

կայն և ի նոսա իշխանք ինքնաստեղք ամրացեալք յանհոգս՝ իբրև զանարգ գերիս վաբկին զառամիկն՝ ի զոհ անհեթեթ հաճոյից իւրեանց: Քաղաքք բնակեալք ի վաստց և ի աւրկաց, ոչ տուրևատւ վաճառուց երթևեկ էր յաշխարհին, ոչ ձեռական արուեստից ձարտարութիւն. ամենայն ինչ խառն ի խուռն և անկարգ: Այս ամենայն ազէտք և տառապանք ժամանակին, իրաւամբք ետուն կարծել ժողովրդեան, թէ հասեալ էցե վախճան յաւիտենից, և ի լրումն ատենէրորդի գալուն լցցի ժամանակ սիեզերաց: Այսպէս աչա նորս այս կարգ ժառանգականի իշխանութեան բռնացեալ՝ ի նախկին վայրենութիւն անդրէն էած զԳաղղիա:

Մինչդեռ ի շփոթս յայսոսիկ խուովութեան տառապէր Գաղղիա, մեռաւ Լուդովիկոս Ե, և ըստ ժառանգութեան օրինաց անկանէր թագաւորութիւնն Կարոլոսի դըստեր Լորենայ, որ էր ի տանէ Կարոլոսեանց. այլ զի տեղի էր նա Գաղղիացւոց որպէս ոչ օրինաւոր որդի, և որպէս անարգուէր իշխանութեանն՝ մտանելով ընդ հպատակութեամբ արևմտեան կայսեր, որ նստէին ի Գերմանիա՝ մերժեցաւ ի գահոյն. և զի Լուդովիկոս ալքայ ի մեռանել իւրում՝ զՈւկոս Գաբէթ ցուցանէր իւր պայազատ գահուն, իբրև միակ ժառանգ, հզօր քան զամենայն իշխանս սեեռութեան, գուքս Գաղղիոյ, կոմս Փարիզու և Աբրեղիոնի, եղբայր դքսին Բուրգոնտիոյ և փեսայ գըքսին Նորմանտիոյ, վասն որոյ գումարեալ

իշխանաց՝ ի նոյն միաբանեցան ամբառնալ զՈւկոս ի գահ թագաւորութեան աշխարհին: Ամբարձ զձեռն իւր ի թագաւորել և կարողս գումբան Լորինայ յուցեալ զիւր հայրենի իրաւունս. այլ Ուկոս ձարտարութեամբ յինքն յանկուցեալ զսէր ժողովրդեան իւրոյ՝ քաջութեամբ զդէմ կալաւ նմա, ի դերև եհան զամենայն հնարան, և ձերբակալեալ զնա ի Լան, արգել յամրոց ուրեք անել:

Ձերծեալ Ուկոսի ի հզոր թշնամւոյն՝ կալաւ խաղաղութեամբ զմագաւորութիւն իւր, և զօրացաւ ի վերայ ամենայն իշխանաց իւրոց. այլ լաւ համարեցաւ բնիկ քաղցրութեամբն և մարդասիրութեամբ սիրելի լինել ամենեցուն, քան զօրութեամբ զինուցն ահաւոր: Եւ քանզի ի յոյժ անձուկս ամփոփեալ էին յայնժամ գաւառք սէրութեան թագաւորին Դագպերտ, յաղաս իշխանութիւնս կարգելով Բուրգոնտիոյ, Ակուխտանիոյ, Պրովինկիոյ, Նորմանտիոյ, Վէրմանդուայ, և մեան թագաւորութեան Դագպերտ ի Փլանդրիա. վասն որոյ հանդերձ ամենայն քաջութեամբն և հանճարով Ուկոսի, արհամարհ էր յոյժ յայնժամ իշխանութիւն թագաւորի, որ և ի դիպաց սատի ի միս առնուլ է: Իշխան ումն Փերիկորայ Ակրետոս անուն՝ էլ յանկարծ զինուք ի վերայ Տուրոնէի. և առեալ զքաղաքն, կոչեաց զանձն կոմս Տուրոնէի: Յառեաւ թագաւորն, և առաքեաց եհարց զապստամբն ի որով իշխանութեամբ զկոմսութիւնն

կալեալ, և կամ ո՞ կացոյց զնա կոմն: Իսկ գոռոզ իշխանն արհամարհեալ զդեսպանսն, արար պատասխանի. «Եւ զնա ո՞ կացոյց Թագաւոր Գաղղիոյ»: Եւ հարկ եղև Թագաւորին լռել:

Առանձինն խնամ մեծ կալաւ Ուկտա և կրօնից բարեկարգութեան: Յառաջ քան զնա բազում եկեղեցական ժառանգութիւնք, աբբայութիւնք և առաջնորդութիւնք՝ ի ձեռս իշխանաց անցեալ էին. յորոց յոլովագոյնք արք պատերազմողք, և կանանց և որդւոց էին տեարք: Սա հաստատեաց՝ ի մաի անհետ առնել զայն օտարոտի և գայթակղելի զեղծումն: Նախ ինքնին իսկ հրաժարեաց՝ ի ձոխ եկամտից աբբայութեանցն՝ որ իւր անկ էին, և եթող զայնոսիկ կրօնաւորաց. և ապա իշխանացն ևս հարկ եղև զհետ երթալ օրինակի Թագաւորին, որ չքնաղ գործովս արդարութեան և բարեպաշտութեան պաշտպան եկեղեցւոյ կոչեցաւ:

Օրինակաւ դերածայրեալ իմաստութեան և առաջնորդականին հմտութեամբ՝ օրէնս եդ յաջորդաց իւրոց. և քանզի զիտէր թէ քանի՛ անկարգութիւնք ապրդին՝ ի նեղքս՝ բաժանմամբ Թագաւորութեանն և ընտրութեամբ՝ եբարձ զպատճառս չարեացն, հաւանեցուցեալ զաւագանին առ կենդանութեամբ իւրով Թագաւորեցուցանել զորդի իւր զՀռոբերտոս: Զնոյն ապա կարգ կալան և յաջորդք իւր Գաբէթեանք:

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈՌԲԵՐՏՈՍ Ե ԴԷՊ ԱՇԽԱՐՀԻՆ ՄՈՒ ՌՈՓՈՒՐՈՒԼԻՄՔ ՆՈՐԱ:

996 – 1031.

ՀՈՌԲԵՐՏՈՍ որդի Ուկոսի առանց ուրուք հակառակելոյ կալաւ զաթոռն հայրենի: Սկսաւեաց նա յոյժ, զի ած 'ի կնուն զազգական իւր զՌԵՐԼԱ. յորմէ բազում չարիք հասին նմա: Քանզի քՀնյապետան Գրիգոր Ե իբրև եառն զի ոչ հրաժարէր նա 'ի իննամուԹՀՆ՝ որ արգելեալ է յօրինաց եկեղեցւոյ, ընդ բանիւ արար զինա, և եհատ 'ի հաղորդուԹՀՆԵ հաւատացելոց: Այնչափ զօրացան նզովքս այս, զի ոչ միայն ժողովուրդն՝ այլ և իշխանք և պաշտօնեայք արքունեաց Թողին զինա և հեռացան: Երկու և եԹ ամացին սպասաւորք առ նմա պատրաստել զկերակուր. և նոքա ընդ հուր անցուցանէին զանօԹս՝ յորոց ուտէր նա կամ ըմպէր, առ 'ի սրբել զայնոսիկ որպէս սլԼՃեալս 'ի նմանէ, որ հատեալն էր 'ի հաղորդուԹՀՆԵ հաւատացելոց: Հռոբերտոս անկոծան 'ի հաւատոց, բայց ցայնժամ հուրացեալ 'ի տուփանաց սիրոյ, ուր ուրեմն ապա զգաստացեալ զատաւ 'ի կնոջէ իւրմէ 'ի ՌԵՐԼԱ, և խոստովանեալ հրապարակաւ

զյանկյանս նա՝ ապահօք և առողջութ.քաւեայց զմեզանան, և ընկալաւ զարձակումն (998):

Եւ յետ այնուհետև անարատ քահանայութեամբ կենցեաւ ազգային Հռոբերտոս՝ իմաստուն վարչութեամբն իւրով՝ ի հպատակութեան կալաւ զստամբակիչսնանա նա, և երեքտասանամեայ անդուլ պատերազմօք ընկճեալ զԲուրգոնտիա (Պուրկոյն) ժառանգեցոյց զայն որդւոյ իւրում Հենրիկոսի (1015): Եւ անուն նորա հռչակեցաւ անդր քան զսահմանս սերութեան իւրոյ, և Իտալիա հրաւէր կարդայր նմա երթալ թագաւորել անդ. այլ ինքն Հռոբերտոս խոհական խորհրդով և իմաստութեամբն ոչ կամեցեալ՝ի փառացն՝հրաժարեցաւ՝ի պատուոյն, զի մի վտանգեսցէ զխաղաղութիւն աշխարհին իւրոյ:

Այլ այսպիսի ոք խոհական և զգօն թագաւոր չէգիտ առանին խաղաղութիւն յետ բեաց ամբարտաւան կնոջ իւրոյ Կոստանդայ, որ դուստր էր Տրովայ դքսին: Որմն՝ի ժամանակակից պատմագրաց՝ի յիշէլ զայս խնամութիւն թագաւորին ընդ Անկուտանացիս, ողբայ դառնապէս զջարիսո՝ որ անուն յորդեցին՝ի Գասկոնիա. «Լացաւ, ասէ, Գասկոնիա և Բուրգոնտիա վատ և ուռնայնասէր մարդկամբ. տարազ կենաց նոցա, ձիք հանդերձից և զինուց, կազմածք երիվարացն օտարոտի էին և անհեթեթ. և քեանք նմանեալք միմոսաց. ծնօտք սափրեալք, անդրավարտանք նոցա և կօշիկք նեղ և նուրբ՝ նշանակ ծաղրական վարուցն և

լութեան նոցա: Եւ զի անկրօնք խակ էին, անօրէնք և անամօթք, օրինակ ապականութեան բարուց նոցա Ճարակեալ նըմին ըզժանտ ախտ, խանգարեաց զբեղեցիկ պարզութիւն գաղղիացւոց, և յանդառակութիւն և յեղեռնս զնոսա զառաջեցոյց»: Եւ թէ յորդիսուիմ անմեղ ոգիսութեան էին յայնժամ գաղղիացիք, անտի խակ'ի վիտառնուել է, զի ըստ վարկապարզն մեկնութեան պրոց յայտնութեան, համարէին թէ'ի վախճան ամին, որ էր հազարերորդ ամ վրկչին, հատանէր կատարած աշխարհս: Իբրև այս կարծիք տարածեալ ընդհանուր՝ հաստատութեան առնուին, անդ էր տեսանել այնուհետև, զի մարդիկ թողեալ զգործ իւրեանց և զյոյս և զերկրապարծութեան, վինջս իւրեանց'ի մենաստանս նուիրէին՝ պատրաստեալ զանձինս կատարած յաւիտենից: Եւ'ի կարծեցեալ աւուր կատարածին ժողովեցան բազմութիւն յոյժ յեկեղեցիս, և տարածեալ առաջի սեղանոյ ճիայն լսել վոտից հրեշտակին:

Զայսու ժամանակաւ Մանիքեցիք հաստատեալք յարևելեան կողմանցն՝ դիմեցին յարևմուտս. և'ի տոցանէ ծագեցաւ աղանդ ինչ ապականիչ'ի Դաղղիս, յոր գայթակղեցան բազումք'ի մեծամեծաց, և ոմանք խակ'ի քահանայից: Հռոմէորտս եկեղեցական ժողովով ՅԱբրեղիոն դատապարտեալ զնոսա, աշխարհական ատամբս ընձեռաց զանդն''ի հուրմատանեալ զգեղտաւորս'ինցինէ:

Սակայն ոչ ի սպառ խլել կարաց զորումն ապականիչ, և յետոյ ուրեմն ի նոցանէ ի վեր երևեցան Ազբիգեանք:

Հասին և այլ սագնասք ի վերայ Հռոբերտոսի ի պատճառս գոռոզ դէմսյին. քանզի անդրանիկ որդի նորա Ուկտա, որ գահակիցն էր հօրն՝ ոչ սարեալ ամբարտաւանութեան մօրուն իւրոյ Կոստանդայ՝ նշկահեաց զհայրն. և իբրև մահուամբ որդւոյն վշտացեալ՝ սիրտքեր ի յոյս խաղաղութեան, կրասերագոյն որդիքն նորա երկու նովին տաեղութեամբ ընդդէմ դշխոյին Թոզեալ զփարիզ, անցին բռնակալեցին զբազում քաղաքս Թագաւորութեան հօրն իւրեանց և ինքնիշխանք կացին ի նոսա: Իսկ արքայն ծերունի առ վշտաց սրտին ընդառանձին վրդովի՝ մեռաւ սքանչելի բարեպաշտութեամբ (1031):

Ելաց Գաղղիա համօրէն զմահ նորա, և կոծեցին զնա աղքատք և որբք և այրիք. քանզի գիտաց քաջ Հռոբերտոս ընտրել ըզպարտս Թագաւորի և եթ պաշտօնեայս արժանաւորս տեառն, և կանգնեաց բազում եկեղեցիս և վանորայս: Ձեզև զբ ի Թագաւորաց և յիշխանաց քան զսա չերեմեռանդն ի պաշտօն տաճարացին, յոր անձամբ մեռեալ ընդ կղերս երգակցեր յեկեղեցւոջ: Ընչասի էր սէր նէր առ աղքատս, մինչև ի միում աւուր կերակրել հազարս ի նոցանէ: Պատմեն բազում ինչ զարմանալիս զաղքատասիրութէ նորա: Յաւուր միում մինչ կերակրէր նա ի սեղանի իւրում զաղքատս զբ,

դոլացաւ այլն զծոպ ոսկի զՀանդերձից ար-
քային : Եւ ի տեսանել զայն դշխոյին , և ի
ցաւումն բերել ընդ սպեբախաւսութիւն
առնն , որքայն բարեպաշտ ասէ Հանդար-
տութեամբ . « Ընչուչա կարօտի նա այնմ
առաւել քան զիս » : Եւ յայնժամ նուագի
ի յաղօթս կալ Թագաւորին , յանդուգն ոք
գոլ մերձեցեալ և հատ զքղանցս վերարկուի
նորա : Դարձաւ ի նա ալքայն , և ասէ քաղ-
ցրութեամբ « Թող զկնի այլոյժ » : Ոչ
շահացեալ ազքատասիրութեամբն , այլ և ի
սուրբ հինդշաբաթիդ աւուր խարտոյն զգե-
ցեալ լուանայր զոտս ազքատաց , և ապա-
տաւորէր նոցա . և զհօթացեալոց ի նոսա ըզ-
վերս որբեր և պատէր ձեռամբ իւրով . վասն
որոյ և Աստուած եաս նմա շնորհս բժշկու-
թեան , նշանաւ խաչի և հպմամբ ձեռին
ապաքինելոյ զիսյլս : Ասեն եղև սովորու-
թիւն Թագաւորաց Գաղղիացւոց յաւուր
օծմանն հպել զձեռս ի խոյլս հիւանդաց :

ԳԼՈՒԽ Գ.

Թագաւորութիւն Հենրիկոսի, և պէտս պատերազմին հին յերեսաց Ռէյի ռովոյն և սրածութեան և յանդուգն փաղփական մարդոյ պապերապետ։

1031 – 1060.

Հենրիկոս՝ անդրանիկն յորդիս Հռոբերտեայ գահակալեաց ՀԵ հօրն. այլ մայր նորա Կոստանդա, որ ամբարհաւաճ գոռոզութեամբն գառնացոյց զաւուրս կենաց առն իւրոյ, անհաշտելի ոխութեամբ էր ընդ Հենրիկոսի, և ոխութեանն պատճառք անպիտելի. վասն որոյ չանայր ընկենուլ զնա յաթոռոյ, և ընդ նորա ամբառնալ զորդի իւր զՀռոբերտոս։ Այլ արիական քաջութեամբն և հզօր օգնականութեամբ Երուսաղէմի Հռոբերտոսն զքսին Նորմանաիոյ՝ ահաբեկ արար Հենրիկոս զամառիական, և նահանջ էարկ չանից խռովարար գչնոյին. և եղբօրն նեբուալ, կացոյց զնա դուքս Բուրգոնիոյ։ Զայս օրինակ զսաստ ընդ քաղցրութեան խառնեալ, բաս պահանջելոյ հարկին, եցոյց զանվեհ հեր արութիւն յընկճել զըմբռոստս յիշխանսն և զթշնամիսն Թըշնամին։ Յաղթահարեալ ձերբակալեաց զեղբայր իւր զԸնդգէս, որոյ գլուխ ամբարձեալ էր ընդդէմ Թագաւորութեան. և յետ

ոչ բաղմաց ինչ աւուրց նեղեալ նման գայ-
ցանն՝ ազատեաց զինա ի կապանացն: Այլ
Եւգէոս այր մարդ՝ մարգպան ևս վարեաց ըզ-
կեանս, և աւազակաբար առաքաւակեր ի
Թագաւորութեան եղբօր իւրոյ, մինչև վա-
ղամեռիկ բարձաւ յաշխարհէ:

Ած Թագաւորութեամբ Հենրիկոսի եղև
սով սաստիկ ի Գաղղիա. քանզի անաւոյր
անհաղթութիւնք օդոյ և անընդհատ անձ-
րևք զամս երիս արգելին առաքանալ հնձոյ
և պտղոյ: Եւ սաստկացաւ յոյժ յոյժ սովն
ի Բուրգոնացիս. բնակիչք աշխարհին սպա-
ռեցին զանգեայս և զհօտս ի դաշտի, և զա-
մենայն խոտ դալար և զտերևս ծառոց. և
իբրև չմնաց ինչ ի յագուրդ բարւոյ, գիմե-
ցին ի գերեզմանս մեռելոց, և գիակամբք և
ոսկերօք մարդկան Ճարակեալ, սպա և ի
կենդանիս իսկ ձեռն արկանէին: Ընդ էր
սեռանեալ զարս ի բռնութենէ կարեացն
գազանացեալս, և զհետ միմեանց յարս է-
լեալ, և գարսն յանցս Ճանապարհաց գոր-
ծեալ ոչ ի կողոպուտս ընչից սեազակու-
թեամբ, այլ ի գիշատել զմարդիկ: Մերձ
ի Մասն ըմբռնեցաւ պանդոկապետ ոք,
որոյ խողխողեալ զարս քառասուն և ութ
յանցաւորաց անաւ, կերակուր էր պատրաս-
տեալ իւրոյն, և գլուխք սպանելոցն առ
նմա գտան. և ինքն զպատուհաս մահու ըն-
կալաւ այրեցեալ հրով: Ըմբռնեցաւ և մե-
սագործ ոք, որ զվիս մարդկեղէն յանդգնէր
յայտնի վաճառել, և նովին պատուհասիւ
կորեաւ:

Յետ սովոյն ի վերայ Էհսան սրածուելի ահաւոր, և անթիւս կոտորեաց ի բնակչաց երկրին, մինչև գիտակուն նոցա անկեալք անեծալ ի փողոց՝ չարչագոյն ևս սղետս զհետ ձգեցին: Քանզի գայլք ի դիակունս մարդկան սովորեալք ձարակել, սկսան և ի կենդանիսն իսկ ի մարդկին յարձակել, ոլք ոչնչ ընդհատ ի մեռելոց անզօր էին ի պաշտպանութիւն անձանց ընդդեմ նոցա: Իբրև յայս ոլորմ վիճակ ի կործանումն գիմէր աշխարհն, անպատմելիան ամաչն յաչխորդեաց նոր օրինակ առատութիւն. և ի 1034 ամին հունձք առատ գոան քան զսովորական երից ամաց հունձս, և մոռացաւ Դաղղիա զանցեալ վիշս: Քանզի սով և մահ՝ վաղանցիկ են ազէտք, և հարուածք երկնառաքք՝ որ ածեն արդասիս ապաշխարութեան. և առատութիւն յաչխորդեալ զհետ՝ ածէ սպեղանիս զվիրաքն. այլ անգութ սրոյն և ոխակալ թշնամութեանն հրդեհ, եղծեալ ապականէ զամենայն, և ոչ երբեք շնչանի յաւերական իսկ. մանաւանդ յորժամ առանին և քաղաքական իշխեն կռիւքն: Ա յսպէս ահա ի Դաղղիա՝ թէպէտ սովոյն և սրածուելեան և մարդակեր գազանացն անցին չարիք, այլ թշնամութեան իշխանացն հրդեհ բորբոքեալ քան զամենայն ժամանակս յապականութիւն գնէր զաշխարհն: Տեսեալ զայս անմոռութեան սոցա կղերք Դաղղիոյ, միաբան ժողովով զառաջադոյն իշխանութիւն ի կիր արկեալ, դաշինս լինչ կռե-

յին հաշտութեան՝ խաղաղութիւն անուա-
նեալ զայն Աստուծոյ, անէծս գառնագինս
կարգալով ի վերայ յանդգնելոցն դրժել
սրբազան ուխտի խաղաղութեան:

Իբրև հասին յամենայն գաւառս պայ-
մանք խաղաղութեան, առ ի գործել զայն ահա-
ւորագոյն ի միտս Թանձրամիտ մարդկան,
գումարեալ աւրհնաւորդացն ժողովուրդն
յեկեղեցին՝ յետ ընթերցուածոց աւետա-
րանին ի բեմն անուն որոտային զանէծսն
ընդդէմ դրժողաց խաղաղութեան Աստուծոյ:
«Անիծեալ ամ՛ չարագործք եւ առատաձեռնոցին:
Անիծեալ վէնք նոցա, անիծեալ երիվարք
նոցա: Ընդ երբայրատան կայենի և ընդ
մատնիչն Յուդայի բաժինք նոցա: Ընկըղ-
մեսցին կենդանեաւ ի ժժոխս ընդ Դաթանայ
և ընդ Աբիրոնի: Շիջցի ուրախութիւն նո-
ցա առաջի հրեշտակաց Աստուծոյ»: Եւ ի
վախճան անիծից՝ քահանայք որ մոմով
լուսեղով կային անդ, շրջեալ զմոմն գլխո՛
ի վայր ի գետին, շիջուցանէին զայնոսիկ,
և ժողովուրդն ի ահիւ և սարսափմամբ գո-
չէր. «Այսպէս շիջուցցէ աւր զուրախու-
թիւնն նոցա, որք չկամիցին ընդ խաղաղու-
թեան Աստուծոյ և ընդ լրութեան արդարու-
թեան»:

Այլ յետ ահաւոր հանդիսին եւ քան զեւս
ւառելին ուշք բազմոց ի պատերազմ և ի
յափշտակութիւն. դրժել ուխտին եւ առա-
կոխել զխաղաղութիւնն Աստուծոյ և զդա-
շինս: Եւ առաւել պաշտօնէից Աստուծոյ
զի անմարթ էր դադարեցուցանել զնոսա ի

պատերազմաց, յեւ հնդից ամաց փոխեցին զդաշն խաղաղութեան ի դուլ վինուց, և եդին օրէնս չառնուլ զէն յերկիցէ չորեքշաբաթուն մինչև ցծագել երիւշաբաթի աւուրն, նղովս գարձեալ ի վերայ եդեալ անսասանողաց դաշինն: Այս խնասուն և բարերար օրէնք ընդունելի եղեն նախ յԱկուիտանիա. և անտի ամն ամն յառաջ խաղացեալ սարածեցաւ յամենայն գաւառս Գաղղիոյ: Երդուան իշխանք ամենայն ի պահպանութիւն օրինացս. և թէպէտ բազում ուրեք զհակառակս օրինացն գործէին, սակայն բազում չահս օգուց գործեցին օրէնքս այս թանձրամիտ մարդկան և զբարս խաղաղութեան նոցա ամոքեցին:

Ձայսու ժամանակաւ Հռոբերտոս գուքս Նորմանաց, մականուանեալն Երևելի կամ Դև, գարձ սրտի եալ ի սկզբոյ երկրէն՝ մեռաւ. Թողեալ Ժառանգ իշխանութեանն զԳուլիելմոս հարձորդի իւր, որ ապա Տիեզերակալ կոչեցաւ: Եւ մինչ ի խաղս շփոթութեան վիճակէր Նորմանիա ի պատճառս ազգութեան գբանն, Հենրիկոս արքայ խաղաց անդր վինուք, և խաղաղացոյց զդաւառն. այլ ի խաղալ նմանէ անդր միւսանգամ, հարեալ ի նոցանէ չարաչար՝ ձեռնթափ վինէր ի գործոյն (1054): Մեռաւ Հենրիկոս Թողեալ զորդի իւր զՓիլիպպոս, զնեալն ի գառերէ Եարոսլաւայ Թագաւորին Ռուսաց, զոր ածեալ էր իւր ի կնութիւն (1060):

ԳԼՈՒԽ Դ.

ՓԻԼԻՊՊՈՍ Ա, անուանի գնաց նորա և մահ ապաշխարութեամբ:

1060 – 1108.

ԹԱԳԱՒՈՐԵԱՑ Փիլիպպոս մանուկ ուղղամեայ ընդ խնամակալութեամբ Բաղդուինոսի և դքսին Փլանդրիոյ (Ֆլանդրա). և բազմապիսի դէպք երևելիք պայծառացուցին զժամանակ Թագաւորութեան նորա: Անկանել Անգղիոյ ընդ ձեռամբ Գուլիելմոսի դքսին Նորմանաիոյ, և հպատակել իշխանին Թագաւորութեանն Գաղղիոյ. առաջին զօրաժողով խաչակրաց, յաջողութիւն արշաւանաց նոցա, քաջութիւնք Կոդեփրեատոսի Պուլյոնի, ազատութիւն սուրբ երկրին 'ի ձեռաց անհաւատից, և հաստատութիւն քրիստոնեայ Թագաւորութեան 'ի Սուրբ քաղաքն: Այլ ամենևին չէղև ձեռնամուխ Փիլիպպոս 'ի գործս արշաւանացն, ամենայն փառք ազատանուցն էր և աղքին Փրանկաց. և անուն քաջութեան նոցա հնչեցուցանել յաւուրս ոչ աղօտացուցանել զհամբաւն:

Իբրև ամենայն Գաղղիա դրդեալ շարժէր 'ի պատճառս խաչակրաց՝ Փիլիպպոս զանկասուկ զինեա առվանաց՝ յանփոյթ գա-

տարկուելեան վարեր զկեանս, ժանտացու-
ցեալ այնու զանուն իւր և զփառս Թագա-
ւորութեան: Հարեալ վատթարացաւ նա՛ի
պատերազմին ընդէմ Հռոբերտոսի Փրիսքնի,
յոր քաջութեամբ քան խմաստութեամբ
ձեռն էր արկեալ, ի պաշտպանութիւն այր-
ոյն Բաղդովինոսի կոմսին Փլանդրիոյ:

Փիլիպպոս զամս երիոտասան պատերազ-
մաւ էր ընդ Գուլիելմոսի Տիեզերակալի
արքային Անգղիոյ, և Թէպէտ չմիւեցաւ մինչ
Ճակատամարտ երևելի՝ այլ վաւելալ նոցա հա-
կառակութեամբ ընդ միմեանս՝ զհպատակս
իւրեաց յատատամբութիւն գրգռէին, և
Փիլիպպոս ձեռն տայր Հռոբերտոսի որդւոյ
Գուլիելմեայ ընդդէմ հօր իւրոյ և արքայի:
Իբրև գուլ լինէր զինուց և անկանէր Գու-
լիելմոս ի խօճութիւն, Փիլիպպոս ընդդէմ
պատուհասից Թագաւորի ծալը առնէր զաղջն-
դեր գերութիւն Գուլիելմոսի, Թէ երբ հան-
դիպեսցի արդեօք ծնունդն: Ընդ որ ցասու-
ցեալ նա զօրու ծանու վխեցաւ յերկիր Թա-
գաւորութե Փիլիպպոսի յաղարտ վարելով
զաշխարհն. այլ անդէն ի վերայ հասեալվախ-
ճանի մահուն մեռաւ նա՛ի Ռուան (1087):
Անգղն իշխանք նորա մեկնեցան յաւերտս
իւրեանց, և ծառայքն կոչոպտեալ զամե-
նայն ինչ նորա Թոզին զնա կիսամերկ ի վե-
րայ սայլին: Ասպետն ուրուն տեսեալ յո-
ղորմ հիւծութեան զախեզերակաւն մեծ, ծա-
խիք իւրովք նա պատել զնա, և զհանգըս-
տեան արարեալ զաղօթս իբրև կամէր ծած-
կել ընդ հողով, նոսմանուտացի ոմն ի վերայ

հասեալ արդեւ զնա ասելով. « Իմ է երկիր այս, և ասա տուն իմ հայրենի, զոր գա յափշտակեաց յինէն յանկրաւի. յանուն անմահին հրամայեմ քեզ չծածկել զնա ընդ հողովս՝ որ իմ է »: Եւ զինչ քան զայս օրինակ ազգու ունայնութեան աշխարհիս. և յարացոյց Ճշգրիտ արդար և անաչառ դատաստանացն Աստուծոյ՝ ի վերայ այնոցիկ՝ որք զնշխանութիւն իւրեանց հասատատեն՝ ի յափշտակութիւնս, յաւեր և՝ ի սուգ ժողովրդոց: Այսչափ ինչ վասն Գուլիելմոսի, իբրև հպատակի սերութեան Գաղղիոյ:

Իսկ Փիլիպպոս սաղտկացեալ յամուսնոյն, արձակեաց զնա պատճառանօք ազգակցութեան անվաւեր համարեալ զամուսնութիւնն: Եւ ոչ այսչափ միայն, այլ և առևանկեաց զԲերթրանսա զկին իշխանին Ընժոսի, և եւս օրհնել զանօրէնն ամուսնութիւնն ժողովրդապետի ուժիք՝ որ կամաց Յոպատառոյին անսայր քան օրինաց քահանայութեան (1097): Ապա Ջանայր՝ ի կամս իւր գողանալ զմիսս քահանայապետին կամ ահացուցանել զնա. բայց Ուրբանոս Բ առնելին ոչ մեղկացեալ յօրինաց քրիստոնէութեան, ի չկամել Փիլիպպոսի յետս կալ յանարժան գործոյն՝ եհատ զնա ի հաղորդութենէ եկեղեցւոյ: Փիլիպպոս երկուցեալ ի նզովից անտի, կեղծաւորեցաւ հպատակել, և խաբկանօք լուծաւ ի կապանացն. այլ ոչ հետ բաղմաց կոչեաց վիրապին զԲերթրանսա, և ի լուծն անօրինութեան գործոյն՝ հանդիսիւ եւս պատակել զնա ղչնոյ Գաղղիոյ:

Ալ իբրև նորանոր նզովք յաջորդեցին յանցանացն, սաստանեցաւ Փիլիպպոս յերկիւղն: Առնէր և արհամարհ լեալ յաչս ժողովրդեան իւրոյ վասն շամբուջ անառակ գնացից, և նզովքն ի վերայ յաւելեալ, յարուցին զնշխանս ընդդէմ նորա յիրաւացի ապստամբութիւն. այլ նա գժպատեհ հանմարելը թագաւորութեան իւրոյ խոնարհել ժողովրդեանն. վասն որոյ երթայրն և յաձախէին աղէտք չարեացն, և պետութիւնն ոչնչոյն վերդովեալ յուզէր, և սպառնալիք չարագուշակ աղէտից ի վեր երևէին: Փութացաւ Փիլիպպոս զառաջս առնուլ չարեացն, և գահակից իւր արար զորդի իւր զԼուգովիկոս, թողեալ ի ձեռս նորա զվարչութիւնն աշխարհին (1108):

Աբբայն գեռահասակ մարդասէր քաղցրութեամբ, խմաստուն գնացիւք, և զօրութեամբ իշխանութեանն կարաց զդէմ ունել խլրտեցելոցն. զոմանս յինքն յանկուցեալ, զայլս վինաւթափ արարեալ, կանխեաց արգել զմօտալուտ սպառնալիս խռովութեան աշխարհին ի պատճառս անմիտ կուրութեան հօրն: Չկինի ամաց բազմաց զբաստատեալ հեշտասէր արքայն՝ թօթափեաց յանձն զլուծն ամօթալի. և բոկոտն ի ձի ապաշխարելի յանդիման եղև ժողովոյ եպիսկոպոսաց ի Փարիզ. անդ խոնարհութեամբ պարզեալ զնիրս իւր առաջի նոցա՝ երդուաւ թողուլ զնարձն, և լուծաւ ի կապանաց. և առեալ զքեմ բենեդիկտեան՝ մեռաւ ուժգին զղջմամբ, հրամայեալ առ խոնար-

խուԹեան չԹաղել զմարմին իւր ՚ի դերեզմանս Թագաւորաց (1105)։ Սա զանառակ գնացին միայն եԹող գնիշատակ, Թէպէտ և էին նորա և բարեմանուԹիւնք, զի էր նա բարեկազմ, Ճարտարախօս, սիրելի և չափաւոր յամենայնի, բայց յանսանձ կրէին՝ որովք կորոյս զնաղաղուԹիւն իւր և զաշխարհին։

ԳԼՈՒԽ Ե.

ԴԷՊ ԽՍԼԻՐՈՅ։

ԵՒ զի սկզբան ՚ի վեր անդր զնաչակիր զօրաց՝ որ յազատուԹիւն սրբոյ երկրին գումարեցան, որոյ վասն արժան համարիմք տալ ասա տուղ բանիւք տեղեկուԹիւն գնոցանէ։

Եւ քանզի ՚ի բազմաց հետէ բռնակալէին Մահմետականք ՚ի Պաղեստին և յերկիրն սո՛ր, հաւատացեալք գարուն ՅերմեռանդՆ յուխտ սրբազան տեղեացն յաճախէին անդր խմբովին. և ամանք յասպնեստաց ուխտաւորաց փորձ փորձեալ Թափել զտեղիան ՚ի ձեռաց անհաւատից՝ անկան ընդ սրով նոցա, և լուր փառաց նահատակուԹեան նոցա վառեաց զմիտս եւրոպականաց ՚ի նախանձ բարեպաշտուԹեան։ Մինչդեռ այս խորհուրդ յածէր յԵւրոպա, Պետրոս ումն անապատաւոր ամիանեցի ուխտագնաց եղև ՚ի Պաղեստին. և վառեալ յեռանդն աղա-

առաքեան առաւաւածակոխ վայրացն, զարձ արար յԵրուսաղէմ. և մատուցեալ առ քահանայապետն Հռովմայ Ովրբանոս Ե, յորդորեաց զնա առաքինորդ կալ ազգաց Եբրայեցւոց յաղաւթս սրբոյ Երկրին. և առեալ թուղթ ի նմանէ առ ամենայն հաւատացեալ իշխանս, դիմեաց յարևմուտս, և վառեաց զիւրս Թագաւորաց իշխանաց և ժողովրդոց, խոստանալով եկեալ հասեալ նոցա զվրկութիւն եթէ խրախուսեսցին դիմել ի Պաղեստին: Քահանայապետն Ովրբանոս արար ժողով մեծ ի Քլերմոն, ուր եկին բազմութիւն իշխանաց և ազնուականաց և յամենայն կարգաց. և երեքտասան եպիսկոպոսունք ընդ նախագահութեամբ պապին: Ձկնի բարեկարգելոյ զկրս եկեղեցւոյ, նկարագրեաց քահանայապետն ազգս բանիւք զաղէտս սրբոյ Երկրին, ողբալով ընդ վիշտս հաւատացելոց Պաղեստինու, մինչև յարտասուս շարժել զլսողսն: Եւ ապա գարձեալ էցոյց զչանգուդն ժըպիտութիւն Թշնամեաց Քրիստոսի, և արտասուաւք ընդ նախատինսն գոչեաց առաքեալ ինն հոգւով. «Ձօրաժողով լերուք ազք, ընդ նշանաւ Քրիստոսի, առեալ ընդ մէջ ածէք, գրոհ առաք սրպէս Հզմարիտ սրդիք Իսրայէլի Երկիրն խոստացեալ. բացէք ձեզ Հանապարհ ընդ մէջ մատակաց անհաւատից և ընդ կոյս դիականց նոցա, անշուշտ լերուք՝ յաղթող և յաղթեալք նշան խաչին Քրիստոսի. Թափեցէք զգենուկի գաւառան ի ձեռաց յափշտակելոց,

բնակչինչ բարձէք անոի զմոլորութիւնս և
զամպարշտութիւն. երկիր նոցա լուսաւորեսցէ
ձեզ արմաւենիս յաղթութեան, և աւարտք
նոցա կանգնեսցին սիւնեանք ի փառս կրօ-
նից սրբութեան և ի պարծանս ազգին Գող-
գիացւոց »: Ընդ այս բան խրախուսեաց
ամբոխն, և զայրագնեալ գոչէր անժոյժ.
« Ընթացարուք, խաղացարուք ի մարտն աս-
տուածահրաւէր »: Եւ քահանայապետն
ասէ « Ելիցայք երթայք քաջ նահատակք
Քրիստի, խնդրեցէք զնորայն վըէժ. և առա-
քինի շահատակութեանդ ձերոյ լիցի նշան՝
Մարտ աստուածահրաւէր: Եւ նշանակ զօրացն
էր խաչ ի կարմիր դիպակէ յայլ յուսն նոցա,
յորմէ և խաչակիրքն կոչէցան: Իշխանք և
աւագանին ի ձեռանէ քահանայապե-
տին ընկալան զայն նշան. իսկ ժողովուրդն
խուռն դիմեալ ի ձեռաց կարդինալացն և
եպիսկոպոսաց ընդունէին զայն: Եւ գնա-
ցին խաչակիրքն ուրախութեամբ ի տունս ի-
րեանց, ժամ եդեալ գալ ի մի վայր ժո-
ղովել ի բանալ գրանց պատնայնոյ:

Վաւեցան միաք խաժամուժ ռամկին յու-
սով յաւիտենական փրկութեան, և զեր-
ծանելոյ ի Թշուառ կենաց: Այլ ընդ ամ-
բոխացմունեն և գաւառկաշըխիկ մարդիկան-
կեալ ի չուս առ ի խնդիր բախտի յոտար
երկիր, կէսք ընդ առաջնորդութեամբ պե-
արոսի անապատաւորի, և այլք ընդ Կոմիկ
ասպետի, կայր նախանձու կրօնից անօրինե-
ցան նախ ընդդէմ Հրէից, ընդ սուր հա-
նեալ զնոսա զձանապարհային, և զգուաստս

ընդ որս անցանէին՝ յաղագս վարեալ առ
ի գառանել Իւրեանց պաշար: Որով զայրա-
ցուցեալ զազգս, և դրդռեալ զնոսա ի զէն
ընդդէմ Իւրեանց, կորեան գրեթէ առհա-
սարակ մինչ չև հասեալք յերկիրն սուրբ՝ ի
սովոյ, յաշխատութենէ և ի թշուառու-
թենէ:

Ի հասանել գարնայնոյ ելին քաջընտիր
զօրապետք Եւրոպայ, առին զգէն և զնշան
խաչին, և հանդերձեալ զամենայն՝ անկան
ի ջուր, յերիս բաժանեալ յահեղ բանակս,
առաջինն ընդ զօրավարութեամբ Հռոբեր-
տոսի դքսին Նորմանաիոյ որդւոյ Գուլիել-
մոսի Տիեզերակալի, երկրորդն ընդ առաջ-
նորդութեամբ Կոդեփրեատոսի Պուլյոնի դքսին
Ստորին Լոթարեայ, և երրորդն ընդ ձեռամբ
կոմսին Հռայիմոնատայ: Եկաց Կոդեփրե-
ատոս սպարապետ զօրուն, բիւր մի հեծելոց
էին ընդ նովաւ, և եօթն բիւրք հետևակաց:
Անցին սոքա ընդ Բիւզանդիոն, ուր Թագաւո-
րեր յայնժամ Ալէքս Կոմնենոս. որ թե-
պէտ առ երեսս ընկալաւ զնոսա և անցոյց
ընդ Վոսփոր, այլ ի սրտէ մախայր առե-
լութեամբ: Խաղացին անդէն խաչակիրք,
և բազում արեանց ձեռսպառեօք առին զՆի-
կիա և զՆոմիոքիա, և ապա եկեալ պաշարե-
ցին զԵրուսաղէմ: Եւ յետ մեծամեծ նա-
հատակութեանց առին զքաղաքն զվեհ քա-
ռասնօրեայ պաշարման. և յայնչափ բազ-
մութենէ խաչակրաց քան հազար միայն
մնին ՅԵրուսաղէմ. և ընդ սուր հանեալ
զանհաւատս, Թագաւորեցուցին զԿոդե-

փրկեսոս . այլ առաքինի և բարեպաշտ զօրավարն չէաւր յանձն Թագդնել ՚ի քաղաքի՝ ուր փրկիչն փշեայ էաւր պսակ . և շատ հաւմարեցաւ կոչել Պարոն կամ Իշխան գերեզմանին սրբոյ : Եւ կարգեցան Իշխանութիւնք, կոմսութիւնք և զանազան աւագութիւնք ԱՆտիոքիա , ԱԵդեսիա , ՚ի Տրիպօլիս , ՚ի Յոպպէ , ՚ի Գալիլեա , ՚ի Սիդոն . և անուն Փրանկաց հռչակեցաւ յոյժ ԱՆրևելս . վասն որոյ և ցարդ իսկ արևելեայք զԵւրոպացիս առհասարակ Փրանկս սովորեն կոչել , որ Գալղնացւոց միայն է անուն : Ա յս եղև առաջին պատերազմն խաչակրաց , որոց տասներորդ մասն միայն դարձ արար ԱԵւրոպա :

ԳԼՈՒԽ Զ.

Համառօտ պէսուԻն վարգոյ տապէպոյ :

Եւ քանզի զնեցաց պատմութեան բազում ուրեք ԱՀշատակ լինի զատպետացդ , վասն որոյ ՚ի գէպ վարկաք կանխել խօսել տասն սակաւուք զկարգսդ նոցա , որոց ԱՀշատակ դարուց ՚ի դարս հռչակեալ է հաս մինչև առմեզ : Աբք հմուտք զպատմութիւն նոցա , յօրինեցին , ձեռն արկեալ ցուցանել զծագումն նոցա և զուշ նպատակի և զգործս արութեան , այլ ոչ լիով յաջողեցան . զի անյայտ իսկ է սկիզբն նոցա , և այս միայն

և գիտելի, զի յերկոտասաներորդ դարս՝ի վերբերեցան։ Օրէնք էին ասպետաց՝ի գործ պատերազմի և յամենայն իսկ առաքինութիւնս բարոյականս իբրև՝ի սրբազան ինչ նահատակել, կարդ և վինուորութիւն սահմանեալ յիւրեանս։ Պարտ էր պաշտպան կալ հարատահարելոց այրեաց և որբոց։ Սպառազինք, նիզակ՝ի ձեռին, վահան՝ի յուս և կապարճակիր կամ զինակիրս՝ի թիկանց, որպէս ուղղիչք անկարգութեանց և սպառէնք հարատահարելոց շուրջ յաձէին, և զհարատահարողսդ ձայն տուեալ՝ի մենամարտ, սպառէին զսակաւս՝ի ձեռաց նոցա։ Անհրաժեշտ և կարևոր պարտք էին նոցա հաւատարմութիւն և սպաս առ տիկնայս իւրեանց, պահպանութիւն երդմանն, պաշտպանութիւն ճանապարհորդաց, մարդասիրութիւն, արութիւն և փոյթ՝ի գործս բարեպաշտութեան, հանապազորդ առաջնակայ լինել պատարագի, և ժուժկալութիւն պահոց յաւուրս ուրբաթու։ Խրատքանչիւր ոք յասպետաց ընտրէր իւր զաղնուական ոք տիկին կամ օրիորդ՝ կոչել զնա Տիկին խորհրդաւոր. և վասն որ յամենայն վտանգս դիմագրաւեալ, նմա ընծայէր զփառս զինուց իւրոց։ Ոչ բազումք այնպէս անձնանուէր՝ի տիկնայս իւրեանց եղեն, մինչև՝ի խեղաթիւրութիւնս զառածանել, զորս չէ առեալս պատմել։ Հարկ էր ասպետաց հաւատարմ վինուք եղանել՝ի մարտս, և ոչ ումեք մարթի էր հրաժեշտ առ՝ի մարտէ, բայց եթէ յորժամ առաւելութիւն թշնա-

միք Թուռվքան զերկուս և քան զերիս : Ե-
թէ ՚ի մէնամարտի ոչ ժուժեալ ոք ընդդէմ
ասխին՝ Թողոյր զնիզակն, պարտեալ հա-
մարէր . այլ եթէ խոնջեալ՝ խնդրէր զհան-
գիստ, պարտ էր ասխին չնորհել նմա զայն :
Եւ բռնմեալ յայնժամ ասխացն երկո-
յուընց ընդ ծառով կամ առ աղբերբը, ոչ-
րոզաքար իսօսակից լինէին իբրև զելբարս
հարազատս . և ապա անդրէն դիմեալք մա-
լեգին ՚ի մարտ, մինչև ցյեսին չուռնչ զայ-
րագինս մաքառէին : Եւ եթէ անկանէր մին
կարեվէր, միւսն գթասիրաբար յանձանձէր
զնա : Եթէ ասպետ ոք գերի անկանէր ՚ի
պատերազմի, ոչ երբէք այնուհետև կա-
նայր յազատութիւն փախատեամբ կամ
նենգաւ, զոր անարժան քան զգերութիւն
համարէր : Առ ՚ի չգոյէ մարտի մղէին կէզծ
պատերազմունս առ ՚ի խաղ : Ժողովէին ՚ի
մի ասպետք յամենայն ազգաց, և մարտն-
չէին առանց ատելութեան և ցասման ՚ի
զնին բամբշանուոյն, ՚ի ցոյց քաջութեան իւ-
րեանց և ՚ի հրահանգս զինուց : Եւ գու-
պարայազգք ՚ի հանդիսին մատուցեալ առ
դչնոյն հանդիսադիր, առնուին ՚ի նմանէ
մրցանակս՝ զէն կամ լանջագեղ կամար . էր
զի և ժապաւէն կամ թամբպան և կամ պսակ :
Յերեկոյին բազմեալք յամրոցին ՚ի մի սե-
ղան յաղթողք և յաղթեալք ՚ի սրահս զար-
գարեալս յաղթանակօք, ճաշակից լինէին
՚ի նոյն համագամն, կազմեալս ՚ի սիրամար-
գէ և յայլոց ազնիւ թռչնոց, և ամճովք է-
րեոց և որսովք, պարտ էր գտանել ՚ի սե-

զանս նոցա և գինի Սպանիոյ և Խաղիոյ։ Դշխոյն հանդիսադիր և իշխանք ամրոցին յառաջագահք բազմէին, և քերթողք զնա հատակացն զքաջութիւնս և զարշաւանս նոցա և զմահ յերգ արկեալ պանծացուցանէին, յաւելեալ և զախինացն գրուատել զգեղ։

Ոչ թեթև ինչ էր յատկետուէ հասանել 'ի պատիւ. զի որ զատկետուէ թևին ածէր, պարտ էր նմա 'ի մանկութենէ ընդ սակաւ հանս ամբառնալ 'ի նոյն։ Ընդեալ ընդ վեց տորին պաշտամունս, իբրև մերձենայր յատկետութիւն, պատրաստակր զանձն պահօք և աղօթիւք, և յառաջնում գիշերի վառեալ 'ի ջէն և 'ի զարդ՝ կայր կանգուն և սքնէր առ դուրս եկեղեցւոյ կամ մատրան։ Յաւուր երկրորդի ժողովէին ամենայն ազգք գաւառին և ծնողք և մերձաւորք և բարեկամք նորընծայ ազգականին, և առեալ տանէին զնա յեկեղեցին, կախեալ վահան զպարանոցն նորա։ Տիկնայք և սրիորդք հանդիսականք զգեցուցանէին նմա զպատառազինութիւնս, և ապա ումն 'ի ծերոցն ազգին ազատակեալ զնա մեղմիկ, արկանէր նմա սուր յազգեր, և գիրկս արկեալ նմա ասէր. « Ի գիմաց Աստուծոյ և Տիրամօր կուսին և առաւն մերոյ սրբոյն Դիոնիսեայ՝ ազգեա զքեզ կացուցի այսօր »։ Յայնժամ ածէր զինակիրն զնժոյգն պատերազմական, և ազգականն նորընծայ 'ի ձի աստանակեալ՝ ձօձէր զնիզակն, և շուրջ յածեալ երիվարաւն շողացուցանէր զսուսերն։

Որչափ շքեղ էր հանդէս ամբառնալոյ յառաքեալսն, այնչափ խիստ և ամօթալից օրէնք պատուհասի առաքելոց նենգաւորաց և մատնչաց: Ածէին զյանցաւորն ի տեղի մահապարտութեան, ուր դահիճն առեալ զչինս նորա խորտակէր և ընդ ոտիւք կոխատէր. իսկ զվահան նորա նետիւք կապէին յապի դրաստու, և ընդ քարշ ածէին ընդ տիղմն: Արկանէին և ջուր ջերմ ի գլուխ յանցաւորին ի նշանակ ընկճելոց ըզկինիք համբուրից. ապա ձգեալ զնա ի վայր ի տեղւոջէ կառափման ի գագաղս սպասուք մեռելոյ տանէին՝ ի նշանակ մեռելութեան ի կենաց պատուոյ:

Ի կարգաց սոսկ առաքելութենէ յառաջ եկին երեւելի կարգք զինուորութենէ, Հիւրընկալք, Տաճարականք, Ասպետք Հոդոսի, և այլք բազումք՝ որք ուխտիւ կապէին զանձինս պատերազմել ընդդէմ անհաւատից, ձեռն տալ խաչակրաց և պանդխտից: Սոքա նախ քաջասէր մարտեան ի նպաստ ուղղափառ կրօնից, կէսք տակաւ բարձան, և այլք ուծացան ի քրիստոնէից՝ Թողեալ զանձանց անուն առելի:

Այսպիսի էին առաքելութենէն կարգք, խառնուրդ լին քրիստոսական հաւատոց և Թևտոնական կռապաշտութենէ. ընդ վեմ և ընդ մեծամեծ առաքինութիս, որովք նուիրէին զանձինս ի սէր ընկերին, խառնէին ծայրալից և մեղանչական ախտք, սարկութիւն ի հաճոյս սիկնաց, բաղդախնդիր Թափառականութիւն, անառակ կեանք, և զա-

կառուցին ի սէր կանանց: Այլ այն անժըխտելի է, զի կէղծ նոցայն առաքինութիւնք օգտակարք եղեն յոյժ ի հրահանգս բարուց բարեբարոյից, և կարապետք եղեն այժմեան քաղաքականութեան:

ԳԼՈՒԽ Է:

Լուդովիկոս Զ Յոյր, պատերազմունք ընդ Մղեծ նա, և մահ նորա:

1108 – 1137:

Ի շինութիս կայր և յանիշխանութեան տէրութիւնն Գաբէթեանց մինչև յԱրևիլիպաս Ա, այլ ի վախճան մեռուսանեբօրդի գարուն ոգի էառ Գաղղիա ի բազմաղէտ ատենսպանացն: Սկսան բազմանալ բնակչօք գաւառք, յառելան ճարտարութիւնք արուեստից, և ռամիկն գլուխ ի վեր ամբարձ թօթափեալ ջծանր լուծ աւագաց ի պարտնոցէ իւրմէ. և սկիզբն եղև ծաղկելոյ գաղղիական բարբառոյն և գրականութեան:

Այս իրք էին ի Գաղղիա, յորժամ ամբարձաւ Լուդովիկոս ի գահ ալքայութեանէ. տէրութիւն նորա ամենափոքր հասիս ի քանեբորդ մասն այժմեան սահմանաց աշխարհին, և շուրջ բնակեալ էին խշխանք հզօրք՝ դքսութիք կալեալ զգաւառս: Այլ զի որպէս ասացաքն, հասեալ էր ժամա-

նակ կերպարանափոխ լինելոյ Թագաւորու-
Թեանն, ի միտ էառ Լուդովիկոս Թէ ժա-
մանակ էր ԹօՀափելոյ զբռնութիւն ժա-
ռանգական իշխանութեան, և քաջայաղթ
մարտիւ ընկձեալ զայն՝ նախկին եկաց ի
Հզօր Թագաւորս ԳաբէԹեանց: Գիտաց նա
ի փառամոլ իշխանաց իւրոց զոմանս պա-
տուհասել, զոմանս նուաճել, և փառաք
յոսին ունել զԹագաւորական մեծութիւն:
Հզօրագոյն ի Թշնամիս նորա եկաց Հենրի-
կոս արքայ Անգղիոյ և դուքս Նորմանաց.
սա ընդդէմ ուխտի դաշանցն՝ կալաւ զամ-
րոցն Կիզորի՝ որ բաժանէր զսահմանս երկուց
Թագաւորութեանց: Լուդովիկոս յեա
վայրապար աշխատ լինելոյ բանիւք խաղա-
ղութեան՝ յեաս գարձուցանել զամրո-
ցըն, ձայն էառ մարտի. այլ նորա ծաղր ա-
րարեալ զկորխտութիւն նորա, չէն ինձ պէտք
ասէր, վերամարտիկ լինելոյ քաղաքի զոր
ընդ ձեռամբ ունիմ: Վաւեցաւ պատե-
րազմ սաստիկ. և Լուդովիկոս զայրագինս
յարձակեալ ի վերայ արքային Անգղիոյ,
հալածական առաւ զնա մինչև ցգուռն
ամրոյն Կիզորի: Թէպէտ յաղԹեցաւ Հեն-
րիկոս, սակայն ոչ եԹող զաէրութիւն քա-
ղաքին. և անտի սկիզբն եղև անհաշտ հա-
կառակութեան ի մէջ Գաղղիացւոց և Անգ-
ղիացւոց (1119): Որով և զկնի մարտին՝
մահացին միշտ Թագաւորքն ը իրեարս, էր
զի ի զէն ձեռնարկեալ, և էր զի ի խաղաղու-
Թիւն խոնարհեալ. այլ բազում այն էր՝ զի
վաԹաքրէր զօրութիւն Լուդովիկեայ ա-

ուսքի Հինամեայ, Հէպէտ և ոչ երբէք վեր-
ջանայր նա յարիական քաջութենէ: Դէպ
եղև զի ի պատերազմի ուրեք երբև դիմա-
դրաւեր նա որպէս բախտաւիճդիր ոք զո-
րական ի վտանգս, ումն ի քաջայց ազգիցն
Ընդղիացւոց կալեալ զսանձից երիվարի
նորա ազաղակեր մեծաձայն. «Գերի անկաւ
Թագաւորն.» Ընդ որ անվեհեր քաջու-
թեամբ Լուդովիկոս. «Եւ չդիտեցէք, զի ի
սահմանի չէ օրէն ըմբռնել զԹագաւորն.» և
անդրէն ի մի հարուած սասպատ էարկ
զնա յերկիր: Այսպէս ի պատերազմունս
անցուցեալ նորա զկեանս իւր, մեռաւ ի
սուգ Դաղղիոյ, զի բարեբար էր նա, քաղ-
ցրը, սիրող արդարութեան և բարեպաշտու-
թեան կրօնից: Եւ եթէ ընդ հասատատու-
թեան մտացն, ընդ անարատ քաղաքավա-
րութենէն, ընդ արիական քաջութեան, և
ընդ անբիծ սասուսած պաշտութենէն կցոր-
դեալ էր նորա և զհմտութիւն վարչութե
և զփոյթ խնամոց ի շահ օգտի աշխարհին
ընդդէմ չանից Թագաւորին Ընդղիոյ, զոր-
դակչիւ արդեօք հանդիսանայր նա ընդ մեծ-
անուն Թագաւորս Դաղղիոյ (1137):

Առ Թագաւորութեամբ սորին Լուդո-
վիկեայ երևեալ եղեն ի Դաղղիա խմասատա-
սիրացն աղանդք. յորոց կէսք Պղատոնի
զհետ երթեալ Իրականք կոչեցան, և կէսք
Արիստոտէլի աշակերտեալք՝ Անուանա-
կանք: Յանուանականաց անուն եկաց Պե-
տրոս Աբեղարտոս ներհուն տրամաբան և
Հարտարախօս քաջ, որ փոխանակ զի զնոր-

հուրդս հաւատոյ կամեցաւ խելամուտք բանից բացատրել, նզովեցաւ ի ժողովն Սուասոնի. և իբրև կրկին զօրացեալ՝ բարձր ի գլուխ շրջէր սպառ առեալ յաշակերտաց իւրոց, յարեաւ Ջախիչ ապանդոյ նորա սուրբըն Բեռնարդոս՝ այր ճգնաւոր, մեծահանճար և սքանչախոս. որ և յաղթահարեալ զնա ի ժողովի գումարելոյ ի Սանս, եւ փակել զնա ի վանս Քլունի մինչև ցմահ: Ապելարտ յարգելանս անդ հաշտեալ ընդ սրբոյն, մեռաւ խաղաղութեամբ:

ԳԼՈՒԽ Ը.

ՋԻՆՈՒՐԵԼ ԿՐՕՆԵՐՈՅՆ ԼՈՒԴՈՎԻԿՈՍԻ ԸՆԴ ԽՈՐՀԻՐԴ ՅԱՂՕՓՈՒԹԻՆ ՍՐԲՈՅ ԷՐՏԷՆ, ԵՒ ՅԱԽՈՂ ԵՒ ՊՕՊԵՐԱՊՂԱՅ ՆՈՐԱ:

1137 – 1180.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ կրասեր ի սկզբան թագաւորութեան իւրոյ փոյթ կալաւ ի նուաճել զսաստիկութիւն իշխանաց իւրոց, մանաւանդ զԹիպաուտոսի (Թիպոյ) կոմսին Կամպանիոյ՝ որ անհնազանդաբար բնաւորութեամբն անդադար էր ի յոյզ խռովութեանց: Արիասիրտ և աշխոյժ արքայն էր Թող անպատուհաս զժպիրն յանդգնութիւն նորա, անցուցեալ իսկ ըստ չափ զվրէժխնդրութիւն: Դիւեաց զօրու ծանուս յեր-

կիր տէրութեան իշխանին, աւերեաց զաշխարհն, կալաւ զքաղաքն Վիմրի, և յամիսն գաառեցաւ զային՝ մնանելով ի հուր աւելի քան զնաղար երեքհարիւր մօրգիկ, և յերկեցեալ անգամ ոչ խնայեալ (1142)։ Եւ ապա հարեալ ի խիղճ ընդ անգթութեան գործոյն, ուխտեաց առաջի ամենեցուն երթալ անձամբ յօգնութիւն արքոյ երկրին՝ որ ի վտանգի կայր յերեսաց բարբարոսաց։

Յարեաւ յայնժամ ոչն Բեռնարգոս՝ որ մեծարէրն յեկեղեցւոյն Գաղղիոյ երբեւ պատգամ Ընտուծոյ, և հրամանաւ քահանայապետին ջոգաւ առ ժողովն ազգախառնմբ, ուր էր Թագաւորն իշխանօքն հանդերձ և եպիսկոպոսօք, հրատարակել զկամս Արքոյ գահին ի գումարութիւնն խաչակիր զօրաց։ Մեծ եռանդն ըղձիւք խօսեցեալ անդ ոչն, զամենեցուն զսիրտս վառեաց ի սէր բարեպաշտութեան. մինչդեռ նախ էին Թագաւորն նահատակեալ առնոյր զնաչն, ապա զկետ օրինակի նորա բազմութիւն մարդկան յամենայն կարգէ։ Սակայն հարկ ի վերայ կայր Թագաւորին գտանել զոք բաւական ի վարչութիւն աշխարհին, պահել զայն ի խաղաղութեան ցորչափ էին ի բացակայ էրվանն որոյ խորագէտ խորհրդով զմնաւ ածեալ թէ յօժարակամ լուիցեն իշխանք երեսկալին, յորժամ ընտրութիւնն խորհրդով նոցին լիցի, եթող զայն ի կամս նոցա։ Նոքա միաբան կացուցին զՍուգերոս (Սիւժէր) աբբայ արբոյն Գիոնիսեայ, զայր երեւելի առաքինի, վարուքն և խոհատուն

խորհրդով. գերածայրեալ յամենայն բարեմասնութիւնս, մեծահանճար, հնարագէտ, զարմանալի ի յիշողականին, ճարտար ի խորհուրդս կարևորս, և յաջող ի խելամուտ առնել զայլս. ծանրաբարոյ և համեստ, մեծարոյ յաչս աւագանւոյն և առաջի Թագաւորին իսկ, և իբրև հայր և վարդապետ համարեալ հանուրց (1147):

Ա յս օրինակ Լուդովիկոս անեղկեան հաստատեալ զնաղդութիւն ի Թագաւորութեան իւրում, ճանապարհ արար յԱսիա ուղևորուն հազարզօրօք: Հասեալ նորա ի Բիւզանդիոն, պատուեցաւ յոյժ ի կայսերէն Յունաց ի Մանուէլէ Կոմնենոսէ, մեծամեծ խոստմամբ հանդերձ. սակայն կեղծաւորապատիր պատուոյ և խոստմանցն եղեալ ի չարաչար մատնութիւս յանկեցան: Ի նմին ժամանակի և Գոնրատոս կայսր Ազամանաց ընդ խաչակիր զօրս անցեալ յԱսիա, ի նոյն ծուղակ նենգուեալ կայսերի Յունաց ըմբռնեցր, և կորուսեալ գոգցես առ հասարակ զզօրս, Թողեալ զոսկերս նոցա յանապատս կապադովկիոյ սովաբեկս և արոյ ճարակս: Իսկ Լուդովիկոս գումարեալ զողորմ մնացորդս զօրացն իւրոց առ Նիկիաս՝ ընդ այլ ճանապարհ հասանէր ի Զմիւռնիա, և անտի յԵփեսոս և ի Սէանդր, ուր հարկ լինէր նմա ի սայր սուսերի բանալ իւր ճանապարհ: Հեռի էր տակաւին Թագաւորն յԱնտիոք քաղաքէ քրիստոնէից՝ ուր գաղթական յաւուրցն խաչակրաց անուն բնակէր. և զի ձմեռն էր ի վերայ կայր և զօրքն անպատշար

տագնապեալ յերեսաց Յունաց և Արաբացոց, անխոհական յանդգնութեամբ միոյ ուրուք ի զօրավարաց անկաւ ի տագնապ անհնարին ազէտից: Քանզի չպարտ էր զօրացն երանել ի լեառն մի բարձր, և զի ծըշնամիքն չէին հեռի, հրամայեն զօրավարի յառաջապահ գնդին յառաջ խաղալ զգուշութեամբ, և ինքեանք ի լերին անդ վերջապահ զօրացն. այլ նորա պատրեալ ընդ առեալ զուարճալի գաշտին ուր ակն ունէր գտանել իւր կերակուր առատ, անմտացաւ անցանել յառաջ՝ թողեալ զբարձունսն: Ականատեսք Արաբացոց գրաւեցին վաղվաղակի զտեղին, և լրիւկ գտրանեալ անդ պատեհի ինայլին: Եւ ահա վերջապահ գունդն խաչակրաց յառաջ խաղաց վստահութեամբ, և հաս ի ստորոտ լերին. և մնաւ ի կիրճս, և ըմբռնեցաւ անդէն ի տարափոյ նետից ծշնամեաց և ի քարանց հոսելոց ի բարձանց, և ոչ օգնէին քաջութիւնք քրիստոնէից ընդդէմ անմատոյց ամրացելոց անհաւատից. վասն որոյ ստասիկ եղև ի նոսա կոտորած, և ի սպառ սպուռ հարուածեալ ցրուեցան: Անդ թագաւորն Լուդովիկոս յուսահատ եղեալ, եդ ի մտի մեռանել քաջութեամբ. մարտեաւ մինչև ցերեկոյ և մնացեալ անդ միայնակ, ձգտապարտեալ ընդ ծառ մինչ ի վեր եւ ի ծայր ժայռի միոյ սեղացելոյ: Ոմանք ի ծշնամեաց տեսեալ զնա, գիմեցին անդր. կէսք նետաձիգ ի նա լինէին, այլք փորձ փորձէին տղոտակեալ ընդ ծառն հուսկ մատչել առ նա. իսկ Լու-

դովիկոս զրահիւք պատապարեալ զանձն ի նեռից, վաղակաւորաւն վանէր զանդրդնեալն: Եւ քանզի ոչ գիտէին Թշնամիքն՝ Թէ ընդ Թագաւորն մարանչէին, Թողին զնա, և դիւրագունի որսոյ զհետ եղեն: Յայնժամ իջեալ Նուգովիկոս ի ժայռէն, և գըտեալ անգ էրիվար մի, Թափառեր ժամս ձիգս ընդ անծանօթ վայրսն, մինչև ուր ուրեմն առ խարխափ յաջողեաց նմա անկանել յանցս լերին, և անտի հասանել ի յառաջապահդունդ զօրացն, որ մերձենային ժողովել զապրեալսն ի կոտորածէն: Որոց առեալ զԹագաւորն իւրեանց՝ զոր ոչ անեալ կամ գերի վարեալ կարծէին, մխիթարեցան ոչ սակաւ ի վերոյ ահագին կոտորածոյն:

Ազետագոյն էր այս պարտութիւն զօրացն Դաղղիացւոց քան զայլ ամենայն հարուածսն, ոչ այնու միայն զի ընտիր ընտիր զօրականքն անկան, այլ և զի պատրաստութիւնք համբարոց առհասարակ և ամենայն սղան գոգցես կորեաւ. զանձք և իմ ինայկին, զոր առաւութեամբ բաշխեր Թագաւորն զօրականին ի պին ուաեբեաց, զոր ծանրագնի ի բնակչաց գաւառին առնուին՝ լցուցեալ զագահութեան նոցա անյագ ցանկութիւն՝ առնլ առ սակ սխերիմ առեղծուածեան: Ապա ի չոր անկաւ զօրականն և անցեալ ընդ բազում վտանգս, հաս ՅԱՌաղնա, և անդ ընկալաւ զվերջին հարուած ի նենգաւթենե Յուդայ: Քանզի սոքա խոստացեալ էին առ նոցա նաւս, անցանել ընդ ծով Ատլանտեան. այլ յետ դեղեր-

ցուցանելոյ զնոսա ընդ երկար, ածին նոցա նաւակս ինչ փոքրիկս: Յայնժամ ոչ ևս հանդուրժեալ զօրացն, զի և Թագաւորն բաժանորդ ընդ նոսա լինի նեղութեանցն, սոխակեցին զնա նաւել ընդ գլխաւորս աւազակաց. բայց Լուդովիկոս մեկնեցաւ ակամայ և ցաւագին սրտիւ, զի Թողոյր ի ձեռս Յունաց և Ապաբացւոց զընակիչ զօրականն. որ ընդունայն աշխատեալ բանալ իւր ճանապարհ, սովալուկ, վաստակաբեկ կորեաւ, կէս ի Թշուառութենէ և կէս ի սրոյ Թշնամեաց: Եւ յայնմի եղև ամենեցուն բազմավաստակ փորձովս, Թէ քանի՛ օգտակար էր անսալ խորհրդոց իշխանաց ոմանց, որոց առնուլ կամէին նախ զԲիւզանդիոն ի վերջ առաջին մատնութեանցն Յունաց, և վերծանել միանգամ ի խաբէպատիր նենգութենէ նոցա (1148):

Գալատեամբն Լուդովիկոսի ի սուրբ երկիրն՝ քաջալերեցաւ յոյժ Թագաւորն Երուսաղէմի. բայց այս նորա մեծայոյս ակնկալութիւն վաղ ի դերև եղ: Քանզի պաշարեալ նորա զմեծ քաղաքն Դամասկոս, իբրև զօրանայր ի վերայ նորա, քրիստոնեայք բնակիչք քաղաքին կաշառակուրծք ՅԱպաբացւոց՝ զէն առին ընդդէմ եղբարց իւրեանց, որով ձախողեալ իրք հաւատացելոց ձեռնթափ եղեն ի գործոյն, և Լուդովիկոս դարձ արար իւրովք փառօք, դիւցազնաբար նահատակեալ յարշաւանսն: Սակայն անմարթ էր նմա մոռանալ զկորուսեալ Թառն Հաղարացն, զոր ետ Թոզ նա

Թաղեալ ՚ի լեռնամէջս վոքուն Ախոյ։ Ա-
ֆթաստանեցաւ ՚ին Ռեւնարդոս իբրև ա-
ւելի չարեացս ՚ամի, և հարկ եղև նմա դրել
ջաստպովուԹիւն զանձնէ. յորում էցոյց
անժխտելի զի այն ամենայն ձախորդուԹիք
վասն մեղաց խաչակրաց հասին ՚ի վերայ
նոցա։ Քանզի և պատմիչք ժամանակին
վկայեն, զի անհնարին էին եղծագործ ա-
նառակուԹիւնք զորացն յարշաւանս անդ,
նոյնպէս ապականեալ էին բարք և արուե-
ստք քրիստոնէից։

Իբրև դարձ արար Թագաւորն ՚ի Գաղղիա,
անկաւ ՚ի մեծ վրիպանս ընդդէմ առաջնոր-
դական կարգաց, որով մեծամեծ հասին
ՀՀաք ԹագաւորուԹեանն Գաղղիոյ։ Քանզի
զի լուեալ ինչ ինչ անպատեհ զգնացից Է-
լէոնարայ Թագուհւոյն, որ ժառանգն էր
Ակուիտանիոյ՝ արձակեաց զնա, բաղբաղե-
լով իբր ընդդէմ օրինաց եկեղեցւոյ զաղ-
գական իւր ածեալ ՚ի կնուԹիւն։ Յարձա-
կեցին զգշխոյն՝ հարկ եղև նմա դարձուցա-
նել ՚ի նա և զօժիտան զԿիեն, զՓուաԹու,
զԿասքոնիա և զայլ կարևոր գաւառս ընդ
մէջ Պիրենեանց և Լուարայ։ Զորս յետ
ոչ բազմաց տարաւ գշխոյն յօժիտս Փլան-
դաժէնի Հենրիկոսի գքսին Անժուի, ամուս-
նացեալ ընդ նմա։ Հենրիկոս, որ տիրեալն
էր գաւառացն, Թուրենայ, Մենայ, Բրե-
տանիոյ և Նորմանտիոյ, հրաւիրեալ և ՚ի
գահ Անգղիոյ՝ զորացաւ յոյժ յոյժ։ Եւ
ասաի իրաւունք եղեն Թագաւորաց Անգ-
ղիոյ ՚ի վերայ գաւառացն, և զորացեալ գը-

լուխ ամբարձին իշխանք պետութեանն ընդդէմ թագաւորին Լուդովիկոսի: Յետ այնորիկ աւուրք թագաւորութեան Կրտսերոյն Լուդովիկոսի՝ ի յոյզս շփոթ մխցանցին, ի պայմանս դաշանց և ի պատերազմունս և ի գուլ զինուց ընդ թագաւորին Ընդղլոյ (1180):

Երջանիկ գտաւ այնու, զի եթող նա Գաղղիոյ որդի և պայազատ՝ որ ոչինչ յետնեալ ի նմանէ ի քաջութեան, գերազանցեաց ի ձարտարութեան և ի հմուտ քաղաքավարութեան:

ԳԼՈՒԽ Թ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՕԳՈՍՏԵՈՍ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ Ի ԶԻՆՈՑ ՆՐԱ ԸՆԴԴԷՄ ԼՇԱՄԵՈՑ ԻՒՐՈՑ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԳԱՀՒՈՒՆ:

1180 – 1214.

ՓԻԼԻՊՊՈՍ որ վասն գեղեցիկ ալուէնչն և մեծամեծ յաջողութեանց թագաւորութեան իւրոյ Օգոստոս կոչեցաւ, ի հնգետասաներորդ տարին ամբարձեալ ի գահ, զամս մանկութեան իւրոյ ոչ խթրև զայլս ի թագաւորաց անցոյց. այլ գիտաց նա խորշել ի բազմավատանգ տափանաց սիրոյ, և անդամին ի մատաղ հասակին եցոյց զհանգերձեալ զնւր մեծութիւն: Իբրև Հենրի-

կա Ա Թագաւոր Անգղիոյ զմանկութեամբ նորա արհամարհեալ՝ ժամանակ դիպաւոր հաճարէր արշաւել ի սերութիւն նորա, փիլիպպոս քաջութեամբ խաղացեալ ընդ առաջ նորա, և հարկեցոյց զնա զէն ի ձեռին հաստատել զառաջին դաշինան: Եւ ի նեղ խակ հարկ զիշնամին՝ ձեւաւն առեալ ապատամբ որդւոց նորա: Նոյնպէս և յարհամարհել ոմանց յիշխանացն Գաղղիոյ զմանուկ արքայն՝ զայն առին քաջութեան նորա, և խելամուտ եղեն թէ դժուարին է խաղալ ընդ Թագաւորական իշխանութիւն:

Յետ քաջութիւն հանդիսանալոյ ի կռիւն, բնակինէ արար փիլիպպոս և զմեհենակազնեն՝ որ խնդրելին ասպատակէին ի գիւղս գիւղս, աւար հարկանելով զհետիւքս և աւերելով զամուրս. և ետ վայելել ժողովրդեան իւրում յարգասիս խաղաղութեան: Հալածեաց և զՀրէայս՝ որ անիրաւ վաշխիւք կեղեքէին զքրիստոնեայս. նոյնպէս և զծաղրածուս՝ եղծիչս բարուց ժողովրդեան. կարգեաց և խիստ պատուհաս ընդդէմ հայհոյչաց. ոտասար եղէ և ձեռնաւու նորածին Փարիզեան համալսարանին: Խորհեցաւ և խորհուրդ նոր, կարգել զօրականս կալմն միշտ՝ ընթանալ ուր փառք Թագաւորին և օգուտ սերութեանն կոչեսցէ:

Մինչդեռ Թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս Օգոստոս յայսպիսի արքայավայել գործս պարապէր, զօրացեալ յարևելս Սուլթանն Եգիպտոսի Սալահատտին, առնոյր զՀրէաստան, զԴամասկոս, զՀռեբիա և զՏի-

դրանակերտ, տարածեալ զբազուկս իշխանութեանէ իւրոյ ի ծովէն Հնդկաց մինչև ցկիլիկիա Հայաստանի. և անմարթ էր այնու հետև քրիստոնէից կալ առաջի զօրութեան նորա: Թէպէտ և հար ընդ քաջութիւն Ռաղդովինոս Դ Թագաւոր Երուսաղէմի, այլ յաջորդ նորա Կի որ Լուսինեան ոչ կա կարացաւ զդէմ ունել աճապին զօրութեան նորա զկնի մեծի և ազնուական պատերազմին առ Տիբերեաս, ուր երեսուն հազարք ի քաջացն քրիստոնէից անկան, կորոյս և զկենդանի խաչն: Եւ իրրև պատրաստեր Սալահատտին ընկճել ի սպառ զքրիստոնեայս, գրդեցաւ ողջոյն Եւրոպա առհասարակ ի զօրաժողով խաչակիր բանակաց, և Թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս ընդ արքային Անգլիոյ Հռիքարտոսի կազմեցան գիմել յօգնութիւն սրբոյ երկրին ընդդէմ յաղթող զինուց Սուլտանին (1187): Յետ մահու քաջին Փրեդերիկոսի Պարպարոսայ կայսեր Գերմանիոյ և կտորածի հարիւր հազարաց Գերմանացւոց, հասին ի քաղաքն Պտղոմայիս (Ակեա), և պաշարեցին զայն՝ յուսացեալք նախաշաւիղ մեծամեծ յաղթութեանց առնել զնուաճութիւն քաղաքին. այլ գժտեցան ընդ իրեարս Թագաւորքն երկոքին. քանզի անհնեթեթ և խրոխտ բնաւորութիւն Հռիքարտոսի յուզեաց զամբարտաւանութիւն Փիլիպպոսի, և տագնապեալ ի խոնարհելոյ յամենայնի ի կամս իշխանին՝ զոր հպատակ իւր համարէր, եթող

զսուրբ եկեղեցին, և դարձ արար յաթոռ իւր:

Իսկ Հռիքարոս յետ մեծամեծ քաջութեանցն իւրոց դարձ առնէր յԱնգղիա, անկաւ ի գերութիւն ի ձեռս դքսին Աւստրիոյ ոսոխի իւրոյ, որ և մատնեաց զնա կայսեր (1193): Իբրև ի գերութեան կայր իշխանն հեգ, արշաւեաց Փիլիպպոս ի Նորմանիա. այլ ոչինչ կարացեալ սահանել քաջութեան բնակչացն, կորակոր յետս դարձաւ: Եւ զկնի աղաւտութեան Հռիքարոսի, վառեցաւ վերստին հրդեհ պատերազմին ի նոսա: Եւ գոգցեա յար ի պատերազմունս կացեալ, փոփոխ բազդիւ դառնային անտի՝ հատասալք ի քաջութեան և ի ճարտարութեան: Սակայն ի կռիւս յայսոսիկ երևելի եղև ուրեք և արժանի յիշատակի քաջութիւն Փիլիպպոսի. քանզի մինչ ի Մանեթայ երթայր նա ի կիզոր եկեղեցիւր հեծելովք միայն, Հռիքարոս բանակաւն ողջոյն արտել փակեաց զանցս ճանապարհի նորա. խորհուրդ եառն նմա իշխանքն յետս ընդ կրունկն դառնալ. այլ նա ասէ. «Ե՞ս յետս դարձայց յերեսաց հպատակիս. քա՛ մի լեցի՛ ինձ երբեք զայդ գործել վատութիւն»: Զայս ասացեալ ղյարձակեալն, զհարկանելն և զվանելն զիրըն նամին մի առնէր, և բացեալ իւր ճանապարհ հասանէր ի կիզոր յաջողակի յանդգնութեամբ, զոր յաջողութիւն գործոյն միայն կարէր արդարացուցանել:

Զկնի ոչ բազմաց մահուամբ Հռիքարոսի զերծաւ Փիլիպպոս յահաւոր ոսոխէն,

որ թէ կենդանի մնացեալ էր, խոչընդոտ
սրդեօք լինէր նմա յաջորդի աշխարհակա-
լութիւնս և ի փառս պերճանալ. քանզի
առ ի հանգէս գիւցազին ոչ ինչ նուազ
քան զառաքինութիւնս և հանգամանաց
ժամանակին պէտք էն (1199):

Ա առաւիմբ եղև յորորդ զօրաժողովն խա-
չակիր զօրաց. և զի Փիլիպպոս ընդ բանիս
էր վասն արձակելոյ զկին իւր և զայլ փո-
խանակ ընդ նորա ածելոյ ընդդէմ քրիս-
տոսական օրինաց, չկարաց ի գլուխ կալ
զօրուն. և զօրավարք կացին գուքսն Փլան-
դրիոյ, և գուքսն Վենեաւկեայոց Տանտոլոս
ծերունի ուխտանամուտ և կոյր:

Եւ մինչդեռ խաչակիրք կանգնէին զգրօշ
յաղթութեան իւրեանց ի Կիւզանդիոն՝
հասանաւեալ անդ ի նոր թագաւորութիւն
Լատինաց զԲալդովինոս գուքս, Յովհան-
նէս մականուանեալն Ընէրկիր յաջորդ
Դուքսարտոսի գաւաճանութեամբ և բռնա-
կալութեամբ վարեալ զիշխանութիւն իւր
սայր ապականել զեղբօրորդի իւր Արթուր
զդուքս Բրիտանիոյ և՝ յափշտակէր զեր-
թիւն նորա (1202): Զայս պատեհ առեալ
Փիլիպպոսն, գաղտնաժանաւ ժողովոյ Ա-
հաց ի մահանութիւն և ի գաւաճանութիւն
գաղտապարտեաց զԹագաւորն Անգղիոյ, և
զի իբրև գուքս Նորմանդիոյ և հպատակ
Թագաւորին Գաղղիոյ՝ չէր երևեալ ամե-
նևին յանդիման արքային ըստ օրինին,
իբրև ապստամբ զինս գաւեալ՝ զամենայն
գաւառս, զոր ունէր նա ի Գաղղիա,

յարքունիս գրաւեաց : Եւ անդէն յարձակեցաւ Փիլիպպոս հզօր բանակաւ ի Նորմանդիա, և զգեղեցիկ գաւառն մարզկացոյց աւերութեան իւրոյ զկնի երեքարիւր ամաց Թողոյ զոյն Պարզամիան Կարոլոսի ի Հռոլֆն և ի Նորմանդացիս : Նովին յաջողութեամբ կալաւ և զԹուրէն և զՄէն, զփուաթոու և զԱնժու, մինչ զի ընդ ցամաք կիւն և եւթ ինաց ի ձեռս Թագաւորին Անգղիոյ (1206) :

Այսպէս զօրացեալ բարձրացաւ Փիլիպպոս չորեքպատիկ տարածեալ զտէրութիւն հարց իւրոց . ամրացոյց զմայրաքաղաքն պարսպաւ , ըզ արձակեալ զնոյն . սալայատակ յօրինեաց զմեծամեծ փողոցս , կառոյց շինուածս օգտակարս , հիւանդանոցս , ուրկանոցս , գաւառատանարանս . փոյթ մեծ ունէր խաղաղութեան աշխարհին , հանգստութեան իշխանաց , շինութեան և զարգանալոյ գիտութեանց :

Յաւուրսն յայնոսիկ երիտայր և տարածանէր Աղբիգեանցն աղանդ ի Լանկրտոք և բազումք ի մեծամեծաց յաւելուին ի նոսա , առաջնորդ իւրեանց ունելով զՏղայ կոմն Տոլուսայ զՏոմայիմնոս : Աղանդս այս չարաշուք ծնունդ էր Մանիքեցւոցն մոլորութեանց՝ նման ամենևին Թոնդրակեցւոց աղանդոյն , որ երևեցաւ երբեմն ի Հայաստան : Աշակերտեալքն մոլորութեանս խաբէապատիր կեղծաւորութեամբ զամենայն հաւատս և զարբազան օրինամարդկութեան առ ոտն կոխէին : Ըստ իսկ ջա-

նոց քահանայապետան Ինոմկենոխոս քաղ-
ցրութեամբ ածել զմոլորեալսն յուղղու-
թիւն ապաշխարութեամբ, այլ երբև խոստա-
ցան նոքա և ձեռն արկին հալածել զքա-
րոզս Ճշմարտութեան. մինչէ ապանանել
ևս ի նոցանէ, յայնժամ ապա ի բռնու-
թիւն ձեռնարկեալ քահանայապետին խա-
չակիր զօրս եհան ընդդէմ նոցա: Ահաբեկ
երկուցեալ Հռայիմոնտ իշխան նոցա, կեղծ
ապաշխարութեամբ յաւելաւ ի խաչակիրս
ընդդէմ հպատակաց իւրոց: Եմուտ գունդ
խաչակրացն արանց յիսուն հազարաց ի
Լանկրոտք, և սուր ի վերայ եդեալ կոտո-
րեաց զբնակիչս անխնայ: Անողորմ էր կո-
տորածն և անգութ, այլ արժանի թերևս
այնպիսեաց մոլեգնելոց, որք այրեացաւեր
զեկեղեցիս առնէին, արահոզիսող զծառայս
Աստուծոյ, և ի պղծութիւն դնէին զսըր-
բութեանց վայրս: Վաղ դասալիք անցա-
նէր Հռայիմոնտ յիւրան, և կոչեալ իւր ի
թիկունս զՊետրոս Բ զաթքայն Արագոնայ,
ուխտաւն հալածաւ եղ ընդդէմ հազար և
հինգ հարիւր զօրացն խաչակրաց: Առաջ-
նորդ և զօրավար նոցա Սիմոն Մոնֆոր երբև
նոր ոմն Մակաբէ ապաւինեալ ի զօրութիւն
ձեռին տեառն, բախեցաւ ի պատերազմ. և
անգ ի խառնուրդ մարտին ապանաւ որ-
քայն Պետրոս, և զօրքն խորտակեալ ցրուե-
ցան: Նոր օգնականութեամբ զօրացեալ
Սիմոն Մոնֆոր եկն և պաշարեաց զՏոլով-
սա քաղաք. այլ ի պաշարման անդ քաղա-
քին հարեալ քարամբ՝ ապանաւ զօրավարն

քաջ պարծանք Գաղղիացւոց, անխոնջ ՚ի գործ, անվեհեր ՚ի վտանգս, անխռով ՚ի պատերազմունս, դիւցազն առաքինի և հզօր նահատակ եկեղեցւոյ (1218)։ Եւ ոչ յիւր բազում ինչ ամաց մեռաւ և Հռայմունիոս կոմս Տոլովայ։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղթութիւն Փիլիպպոսի Օգոստեայ ընդդէմ Յայնէր և բազմաբոյ ընդհարեաց իւրոց, և յաղթութիւնն թագաւորութեան նորա։ — Պայազատել Լուդովիկոսի Ը գահուն, և սակաւամեայ թագաւորութիւն նորա։

1214 – 1226։

Մինչ դեռ այսքիկ այսպէս իրագործէին, բազումք ՚ի Թագաւորացն Եւրոպայ մախացեալ ընդ յաջողուածս գաղղիոյ ըստ գրգռելոյ Յովհաննիսի արքային Անգղիոյ, միաբանեցան խորտակել զզօրութիւնն՝ որ երթայր և ահարկու լինէր. յորս էին կայսերն Գերմանիոյ Ոթոն Դ, կոմսքն Փլանդրիոյ, Պուլոնի, Հոլանդիոյ, Լիմպուրկայ, դուքսք Լոթեննայ, Պրապանայ, Սաքսոնիոյ. և գումարեցան առաւել քան ութևտասան բիւր արանց պատերազմողաց հաստատեալ ՚ի խորհուրդս զբռամբ նուաճել զգաղղիա և աշխարհաբաժին յիւրեանս առնել։ Փիլիպ-

պոս Հիսուն հազար այրընակիր զօրօք յաղա-
տանէսն՝ կազմեցաւ ընդդէմ նոցա. սակայն
էին և ի գլխաւոր աւագաց իշխանք ոմանք՝
որ գայթ ի գայթի կային, անփոյթ արա-
րեալ զփառաց Գաղղիոյ, և ըղձային խա-
նարհեցուցանել զթագաւորն՝ որ միապե-
աեէն Թուէր։ Իրազեկ լեալ Փիլիպպեայ
խորհրդոց նոցա, առ ի յինքն յանկուցա-
նելոյ զնոսա՝ մնաբեերեաց ի գործ վտան-
գաւոր։ Քանզի յառաջ քան զգործ պա-
տերազմին՝ որ հանդերձեալ էր որոշել զբաղդ
Թագաւորութեան նորոյ, եդ զթագ նոր ի
վերայ սեղանոյ պատարագի, և ցուցեալ
զայն զօրականին՝ որ շուրջն կայր, ասէ.
«Գաղղիացիք, եթէ իցէ ի ձեզ ոք արժանա-
ւոր քան զնա բառնալ զայս Թագ, պատ-
րաստ եմ Թողուլ նմա զայն. այլ եթէ ոչ
անարժան համարիք զնա, փրկեցէք այսօր
զթագաւոր ձեր, զկանայս ձեր և զորդիս,
զինչս և զանուն քաջութեան»։ Աղաղակե-
ցին ամենեքեան. «Կեցցէ Փիլիպպոս, կեց-
ցէ Թագաւոր մեր, մեռցուք վասն նորա և
վասն փրկութեան Գաղղիոյ»։

Պատահեցան միմեանց բանակքն երկոքին
ի կամուրջն Պուվինայ ի մէջ Լիլլայ և Թուր-
նեայ։ Գաղղիացիք այնպէս յօրինեցին ձա-
կատս, զի ի ժամ մարտին տատ արեգական,
հողմն և փոշին հարեալ յաչս Թշնամեաց
խոչընդոտն մեծ լինէին ի կռիւ։ Սատակ
էր պատերազմին ի բուն բանակի, ուր Թա-
գաւորն խնամատարութեամբ քաջի զօրավարի
և արութեամբ զօրականի ընդդէմ հակա-

հաւոր յարձակման գերմանացւոց: Ի նա դէտ ակն կալեալ Թշնամիք ուղղէին զհարուածս, այլ նա Հարտարութեամբ և զօրութեամբ և յաջողութեամբ նհանջէր զհարուածս նոցա: Բայց մի ոմն 'ի զօրացն գերմանացւոց կալեալ զնա Ճանկաձև ժանեօք՝ զոր 'ի հնումն 'ի գործ ածէին փրանկք, չարաչար քարշեալ զնա ընկէց յերկիր: Զօրացաւ փիլիպպոս, եւ կանգնեցաւ 'ի վեր, այլ մինչ չև զերծեալ նորա 'ի ժանեաց գնաւորին, կայսրն ինքնին՝ որ մերձ կայր՝ ընթացաւ Թիկնապահ զօրօքն հարկանել զնա. և եթէ ոչ դիւրահիւր նորա ազնուական քաջութեամբ պաշտպանէր նմա անձամբն՝ վանեալ սուսերաւ զյարձակողս, ոչ ապրէր Թագաւորն: Ա յայնժամ պարապ գտեալ Թագաւորն զերծոյց զանձն. և յերիվար աշտանակեալ, և առեալ զիւրև խումբ մի Գաղղիացւոց խառնեցաւ 'ի մարտ: Սաստկացաւ պատերազմն յոյժ. և գերմանացիք Թէպէտ և բազումք էին Թուով՝ կորացան առաջի Թշնամեօն, և կայսրն ձերբակալ լեալ 'ի զինուորէ ոմեմնէ՝ փախստեամբ զերծանէր 'ի վտանգէն, և ամաչապարեալ Թողոյր զզօրս, և խոյս տայր: Ոչ ևս կարացին Թշնամիք տակաւ ընդդէմ արուեստից Գաղղիացւոց, և սաստիկ եղև Հարուած կոտորածին: Գերի անկաւ կայսերական դրօշն, և գերեցան բազումք 'ի զօրականացն, ընդորս և դուքսն Փլանդրիոյ, որ ապստամբութեամբն իւրով և նենգութեամբ պատճառք լեալ էր պատերազմին և մեծի վտան-

գին յոր անկեալ էր Դաղլնա: Խնդութիւն մեծ եղև Դաղլնացւոց ընդ յաղթութիւնն. և ոմն մեծ վասն այնորիկ կառուցին ի Փարիզ զեօղն որ և զեօղն գիշէր (1214):

Արդարև այսու յաջողութեամբ զինուց ոչ լինէ յաւել Փիլիպպոս ի տէրութիւն իւր. բայց որ մեծն էր քան զաշխարհակալութիւնն՝ զօրացաւ ի վերայ հպատակաց իւրոց, և յաձախեաց զսէր ժողովրդեան առ ինքն: Գերազանցեաց քան զամենայն նախորդս իւր բայց ի Մեծէն Կարոլոսէ, ունելով զաղքայավայել առաքինութիւնս, անխոնջ աշխատութիւն, արութիւն քաջութեան, խոհականութիւն, առատաձեռնութիւն, սէր արդարութեան, մեծարանս կրօնի և զայլ ամենայն կարևոր բարեմասնութիւնս: Յառաջ քան զինա Թագաւորք Դաղղիոյ զանուն ևեթ Թագաւորի ունէին. սա և արդեամբք Թագաւորեաց, Ճարտար և հզօր գտեալ քան զամենեսեան: Նորմանիան և այլ գաւառք քաջութեամբ նորա Թափեալ ի ձեռաց Անգղիացւոց, յաւելան ի տէրութիւնն. իսկ Աւերն, Արթուա, Ռիքարտիա և այլ գաւառք առանց զինուց՝ խոհականութեամբ նորա միացան ընդ Թագաւորութեանն: Այսու աշխարհակալութեամբ բարձրացաւ գաւազան արքունի իշխանութեան, և ընկճեցաւ ըմբոստութեան աւազորերոյն (1223):

Լուդովիկոս Ը որդի և յաւանդ Փիլիպպոսի Օգոստեայ վասն արիական քաջութեանն Առիւծ կոչեցեալ, առ կենդանու-

թեամբ հօրն հրաւիրեցաւ ի գահ Անգղիոյ
ման դիւցազնական արուեստեանցն, այլ ոչ
կարաց հասատահիմն առնել զայն իշխանու-
թիւն. քանզի ոչ միշտ ընկերը է բաղդն ի-
մաստութեան և քաջութեան: Պայազա-
տեաց սա զգաշն հայրենի մեծայոյս ակնկա-
լութիւք ժողովրդեան իւրոյ, այլ միջ չև մեծ
ինչ գործեալ քաջութիւն, վաղամեռիկ լի-
նէր, ոչ ժամանեալ ի հանդէս առաքինու-
թեանց հաւասարել ընդ պայծառ պատ-
կառս Գաղղիոյ՝ որ յառաջ քան զնա փայ-
լեցին յաշխարհի: Քանզի զկնի երից ամաց
թագաւորութեանն դարձ արարեալ ի պա-
տերազմէն՝ որ ընդդէմ Ալբիգեանց, յեր-
կորդումն գումարման խաչակիր զօրաց, ան-
կաւ ի ծանր խօթութիւն: Առաջի արարին
նմա բժիշկք դեղ ինչ դարմանոյ ընդդէմ
օրինաց քրիստոնէութեան. այլ բարեպաշտ
թագաւորն մերժեաց զայն ցաւամբ, յայտ
արարեալ՝ զի նախամեծար ընտրէր զմահ
սրբութեամբ քան զկեանս մեղաւք: Եւ զկնի
աւուրց ինչ մեռաւ, ի վերայ պահպանու-
թեան օրինացն Աստուծոյ, մահ արժանի հօր
սրբոյն Լուդովիկոսի (1226):

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թագաւորութիւն սրբոյն Լուդովիկոսի, և գալ-
յաղի արութիւնք նորա ընդ դէմ Իշնամէից պե-
ղիեան ֆրոյ:

1226 – 1244:

Էր ամաց մեռանելոյ Լուդովիկոս Թ՛ի թագաւորել իւրում. և Պլանշ մայր նո-
րա, դուստր Թագաւորին Կաստիլիոյ, ինա-
մակալ եկաց արքայի մանկան: Սա կին ֆրագլուսի, Ճարտար, անվեհեր և արիա-
սիրտ, իրաւունք իւրովք մարզեաց զարքայ-
որդին, և ընծայեաց զնա աշխարհին Գաղ-
ղիոյ Թագաւոր մեծ և առաքս: Սովոր էր նա
ասել. «Որդեակ իմ, դիտե տէր որչափ սի-
րելի ես դու ինձ, սակայն նախամեծար ըն-
արեալի ես ինձ տեսանել զքեզ մեռեալ քան
մեղուցեալ մահու ջափս»: Լուդովիկոս հզու
իրաւունս բարեպաշտ մօրն, անգամին՝ ի
մանկութենէ ետ ժողովրդեան զառհաւատ
չէայ ապագայ առաքինութեանցն և զկրօ-
նից սրբութեան:

Ի ժամանակս տղայութեան նորա յու-
զէր պետութիւնն և ծփայր. մեծամեծք
տէրութեան, իշխանն Բրիտանիոյ, կոմսք
Կամպանիոյ և Մարշի՝ բազում անգամ զհետ
լեալ Ջանային Թօթափել զլուծն՝ զոր ե-

պին՝ ի վերայ նոցա Փիլիպպոս և Լուդովիկոս. այլ Ճարտարութիւն խնամակալուն մերն և դշխոյին՝ ի հպատակութեան պահեաց զնոսա, և զօրացոյց զիշխանութիւն որդւոյն: Ընկճեաց զԱղբիգեանս, խոնարհեցոյց զդուքս նոցա զՀռայիմոնս և, գալ՝ ի հաշտութիւն՝ յանձն առեալ զամենայն ծանր ծանր պայմանս, տալով և զդուստր իւր Ալիենաոսի եղբօր արքային Լուդովիկոսի, որով ապա այս դքսութիւն յաւելաւ յիշխանութիւն Թագաւորին Գաղղիոյ:

Լուդովիկոս քան և մի ամաց էր յորժամ կալաւ զանձն պետութեան, և յոր ինչ մեր նորա յաջողութեամբ ձեռն արկեալ էր, և ևս հաստատեաց զայն ամենայն, և ոչ զարտուղեաց բնաւ՝ ի խորհրդոց նորա, յամենայն կեանս իւր պատուեալ միշտ զՀնարապետութիւն մեաց դշխոյիս: Ի խորհուրդ կոչեաց Լուդովիկոս զնոսա և զարդարակորով իւրոյ Թագաւորութեան, ամիսս ինն՝ ի սահման և՝ ի չափ զպահանջանս աշխարհական և եկեղեցական դատաւորաց, արդարացն գաշամբք յաւել զբաղում գաւառս՝ ի տէրութիւն իւր, և զամենայն չան՝ ի գոլ ձեզ յերջանկութեան տէրութեանն և՝ ի բարօրութիւն հասարակաց:

Խոռվարար ոք յիշխանացն համարձակեցաւ աղմկել զնաղաղութիւն աշխարհին. և նա պատճառս Լուդովիկեայ ցուցանել աշխարհի, զի առանց փառախնդիր գոլոյ՝ մարթ է դիւցազնական առանձ փառս:

Քանզի ի ժամանակին յայնմիկ կոմն Մար-
շի ընկալեալ նեղուածն վասն առաջին ապըս-
տամբութեանցն, վերստին ձեռներէց լինէր
ի խռովս. և Թիկունս իւր արարեալ զՀեն-
րիկոս Գ արքայն Անգղիոյ, այնքարձ զգրօշ
ապստամբութեան: Թագաւորն Լուդովի-
կոս ընդ հեզութեանն և արդար վրէժխն-
դիր, յանկարծ յարձակեցաւ յերկիր ան-
ըուածեան կոմսին, խոնարհեցոյց նուաճեաց
զերկիրն առաջի իւր, և խաղաց մինչև ի
Թայլսուրկ: Անգղիացիք կացեալ յայնկոյս
գետոյն ունէին զկամուրջն արգելուլ զանցս
Թշնամւոյն: Մինչդեռ Լուդովիկոս պատ-
րաստէր վանել զնոսա անտի, զօրականք
նորա անժոյժք ոչ ճնալով նշանին՝ գիմեցին
ի վերայ կամրջին: Թշնամիք անխռով զգէմ
կալան յարձակմանն. և իբրև յետս ընկրկէին
Դաղղիացիք, սուրբ Թագաւորն վառեալ
քաջութեամբ՝ հատատառեաց զոտս իւր յեր-
կիր, անկաւ սուր ի ձեռին ի խառնուրդս
պատերազմին, և անվեհեր զամենայն զընդ-
դիմակացս իւր տապաստ յերկիր կոտծա-
նեալ՝ կալաւ նա զկամուրջն: Այլ այս յաղ-
թութիւն վատնգաւոր եղև նմա յոյժ. զի
յանցանել զօրականին կարգաւ ընդ կա-
մուրջն՝ չունելով տեղի ի կռիւ ոտից, ինքն
փոքու գնդաւ մնաց առաջի զօրութեան
բանակի Թշնամեացն առ հասարակ, որք հա-
րիւրապատիկ առաւելուին բազմութեամբ:
Սակայն քաջութիւն իւրոցն եղեալ զբազմու-
թեան տեղի, և յետս ընկրկեալ զԹշնամին՝
կալաւ Թագաւորն զվայրն: Անգղիացիք զա-

հի հարեալ յանվեհեր արուեստիւն նորա, զոտս արձակեալ ի փախուստ՝ ցկիր և ցան վարատեցան: Իսկ զօրք Թագաւորին հետամուտ փախստէից սուր ի կոտս եդեալ կոտորէին մինչև ցքաղաքն Սէնէ, ուր գիմեալ ապրեր մնացորդք բանակին Անգղիացւոց (1242):

Ի վաղիւ անդր Լուդովիկոս առպաստակ սփռեր մինչև յՍէնէ քաղաք, և Թշնամիք գէպ բարեպատեհ վարկուցեալ զայն ի վրէժ ամօթոյ կոտորածին, անկան ի վերայ առպաստակացն: Թագաւորն Լուդովիկոս զտեղի կալեալ, կարգեաց զիւրան ի ճակատ. և ինքնին յառաջ խաղաց մինչև տակաւ վառեալ զհուր մարտին առաւ և անտի. Գաղղիացիք ի յիշատակ փառաց յաղթութեան խրախուսեալ, և Անգղիացիք ի վրէժ քինու առաջնոյ պարտութեանն, և առ ի կանգնել զնախկին կորանան, արիաբար մարտնչէին: Անդ Լուդովիկոս քաջութեամբ գիմագրաւեալ յամենայն վտանգս, հալածական առաքաւ անդրէն զԹշնամին ի Սէնէ: Ազգ եղև ալբային Անգղիոյ յերթալ խրտամ ի սեղան՝ թէ Թշնամիք հասեալ պաշարեցին զքաղաքն առնուլ զնա, և ահաբեկ լծողեալ զկերակուրն, և հեծեալ յերկիւար, խոյս եառ ի կիեն. զհետ նորա գիմեցին ամենայն իշխանքն շտապաւ, և զօրքն արքունի հեծեալք և հետևակք վայրատեալք ի միմեանց ցրուեցան անղէն և անպաշար: Պընդեալ Գաղղիացւոց զկնի փախստէից, անհնարին կոտորած հասուցին նոցա, առեալ

աւար բաղում, գերիվարս, գասյլս և զաղխս բանակին, և զսպասս մատան Հենրիկոսի զծանրագինս: Բայց Լուգովիկոս խօթացեալ փարասխօք ինչ հեաի ի Սէնէմայ, սահպետաս զեռղն ունել. և Հենրիկոս արքայ անցեալ ընդ կարան գետս, առաքեաց ի Պորտոյէ՝ խօսել ի հաշտութիւն: Դեպք բարեպատեհ Թուէին յայնժամ գաղղիացոց՝ հալածել բնաւ զկղեցին ի ցամաք երկրէն, ուր զոտս հաստատեալ միանգամ՝ ոչ դադարէին ի խռովելոյ զհաղորդութիւն հաստատակաց, ձեռնտու և Թիկունք լեալ սպառատեաց: Ալ ասէին աւուրք, և սխտ սպրտփոխիկ ձարտարեալ ի զօրն՝ յոր և Թագաւորն ընթանէր, և մանաւանդ քրիստոնէական բարեպաշտութիւն Լուգովիկոսի՝ որ ի փառաւոր յաղթութիւնս անգամ ի քաղցրութիւնս հակամիտեր, պատճառք եղեն շնորհելոց նոցա զհաղորդութիւն. այլ իբրև յաղթող՝ պահեալ զաշխարհակալութիւնս իւր, զկապտնիա գաւառ և եթ Թողոյր Հենրիկոսի ի ցամաքին: Եւ անգ ահա կամն Մարչն եկն անկաւ առ ոտս ահն իւրոյ. որում ներեաց Լուգովիկոս, և եթող նեն գաւառին զքաղաքս ինչ, որ առ այլովք Թագաւորօք զմնաց արդեօք ընդունէր զպատուհաս: Այսպէս աւարս եղև պատերազմին ի յաչողութիւն գաղղիոյ և ի փառս Թագաւորին, հաւատաեալ զի առաջապաշտութիւն չէ արգել պատերազմական արուեստից. զի և Թագաւոր ոք աւուրք կաքն լինել աշխարհակալ հզօր. յորժամ յան-

իրաւասութենէ Թշնամեաց պատճառս առնուցու։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՋԻՆՈՒՈՐԵԱՑԻՆ ԼԱՏԻՆԱԿԱՆԱՑ ԸՆԴ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԻՒՆ ՅԱՂԹԱՀԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԲԱՑ ԵՒՐԷՊԻ։

1244 – 1254.

ՅԱՒՈՒՐՍՆ յայնոսիկ հակառակութիւք էր կայսրն Փրեդերիկոս ընդ քահանայապետին Հռովմայ Գրիգորի Թ։ Քանզի քահանայապետան ը բանիւ ապարեալ զկայսրն, և արկեալ զնա յանիծս, հրաբերէր ՚ի նոյն զԼուգդովիկոս արքայ Գաղղիոյ. այլ նա ՚ի բաց հրաժարեալ յիշխանութենէն, չանաց միջնորդ հաշտութեան կալ ընդ քահանայապետան և ընդ կայսրն։ Ի վերջոյ էին յայնժամ հաւատացեալք ՚ի Գաղեստին վասն հաշտութեան Փրեդերիկոսի կայսեր ընդ Ընտբացիս, որպէս ինքնակալն Թոյլ տայր անհաւատից պաշտել զաստուած իւրեանց յԵրուսաղէմ և ՚ի Բեթղեհէմ, և զոդջեսա զանգակից նոցին լեալ՝ հայհոյիչ Աստուածորդւոյն գտանէր։

Եւ աղետագոյն քան զայս չարիք ընդ հուսկ ՚ի վերայ հասանէին աշխարհին, արշաւանք Մողղացն՝ որ հեղեղեցին զԱսիա ողջոյն, հալածական տարեալ առաջի իւ-

բանց զԱթագաւորս, զԺողովուրդս, զքա-
ղաքականութիւն և զմարդկութիւն համ-
բոյն: Ի ծովէն Ազախու մինչև ցկղզիս Յա-
պոնիոյ արեւամբ լուացին զերկիրն. ոմանկա
նոցին եղև աշխարհն Սինեացւոց, Խո-
րասան, Պուխարա, աշխարհն Պարսից,
Վրաց, Հայոց, Լեհաց, Ռուսաց և Հրէ-
աստան. սուր ի վերայ եդեալ կոտորելոյն
զմարդիկն, առին և զերեսաստէմ. ոչ խնայ-
եցին ի հասակ անմեղ և ոչ յայլս ծերու-
թեան, և յապականութիւն եդին զսրբու-
թիւնս: Ընդարձակ իսկ է զբաւիս նոցա ի հա-
մար արկանել. և թէպէտ վաղ հալա-
ծեցան նոքա յերեսաց Նաճմեանին Սուլթա-
նին Եգիպտոսի, այլ այնու ոչ ինչ ի լա-
ւագոյն փոխեր բազդ հաւատացելոց: Փո-
փոխէին բռնակալքն, այլ նոյն բռնակա-
լութեան լուծ ի վերայ կայր:

Իբրև լուր ազետիցն հասանէր ի Գաղ-
լիա, Թագաւորն Լուդովիկոս անկեալ ի
խոհութիւն մահաբեր, երբեք երբեքնուա-
զէր ցմահ, մինչև բազմաց կարծել զնա
մեռեալ: Յաւուր միում յանկարծ յանձին
եղեալ ի նուազմանէն, ուխտ եդ երթալ
յօգնութիւն սրբոյ երկրին և յազատու-
թիւն հաւատացելոց արևելից: Եւ ապա բժըշ-
կեալ աքանչելիօք ի մահաբեր հոհմութենէն՝
սկսաւ խորհել ի կատարումն ուխտին: Բա-
րեպաշտ սովորութիւն էր ժամանակին, զի
որ առնոյր սբ վնաչ՝ անցանել յարևելս,
իբրև ի մահ՝ պատրաստէր զանձն ի ճանա-
պարհ: Կարդէր զարտաքին իւր իւր, և զբ-

տացն արբեալ զևիզ՝ հաշտէր ընդ Թշնա-
մեացն, և գարձուցանէր ի տեարս զամե-
նայն ինչ տացեալ յանիրաւի : Թէպէտ
էին և որք յետ գործոց արդարութեան և
առաուածպաշտութեան՝ ի ձանձռոտարհի ի
նոյն գործս յափշտակութեանց, բռնու-
թեանց և անառակութեանց վերստին շա-
րախէին, տակաւին լինէին և ոմանք՝ որք ձըշ-
մարտութեամբ և հաստատութեամբ գար-
ձեալ յուղղութիւն բարեպաշտութեան,
մնային ի նոյն հաստատուն : Ուստի բարե-
պաշտ առաքինութեան զհետ երթեալ և լա-
գաւորն, առաքեաց կրճնաւորս յամենայն
գաւառս տէրութեան իւրոյ, հրատարա-
կել զի եթէ ի հպատակաց նորա ոք որը-
տուընջ ունիցի զարբայէն, պատրաստ է նա
հատուցանել զամենայն : Այլ ոչ զարմա-
նացս . չգտաւ ոք՝ որոյ գոյր զինանէ բողոք :

Չքառ ամ պատրաստեալ ի չու, մեկ-
նեցաւ ընդս Լուգովիկոս նաւատորմաւ
յԷկմս – Մորթ , և անտի ուղևորեցաւ յԵ-
գիպտոս (1248) : Սուլթանն ազդապրհին զօ-
րացեալ յոյժ , տիրեր յոյնժամ և արբոյ
երկրին : Մտեալ քրիստոնէից նաւատորմաւ
ի բերան Նեղոսի , տեսին անդէն զմեծ
պատրաստութիւն Եգիպտացւոց, և զբազ-
մութիւն Սարակինոսաց յափշտակ անդ՝
Թանձրախիտ ոլիգօքն և տաւերօք զնմանեալ
լինին բերդիւ զմաւտա անառասխ : Այլ
ոչինչ խնայեալ ընդ այս ահաւոր տեսա-
րան եռանդն խաչակիրը զօրականին , խու-
ժեցին ի ցամաք : Եւ Թագաւորն ոչ միա-

լով մերձենալոյ նաւուն ի ցամաք, էարկ զանձն ի ծով սուր ի ձեռին և իւրքն զինի նորա։ Արաբացիք ահարեկ լեալ յերեսաց նոցա ցրուեցան. և քաղաքն Տամիատ անդրէն անձնատուր եղև ի յաղթականն, որք թափօրաւ մտին ի նէրքս. և Թագաւորն յառաջոյ նոցա բոկոտն իբրև նոր ամն Դաւիթ յաղթական յերկինս վերառաքեալ օրհնութիւն, եմուտ ի քաղաքն։

Ամրացուցեալ Լուդովիկեայ զնոր աշխարհակալութիւնս իւր, խաղայ ընդ նեղոս գետ ի Գահիրէ մայրաքաղաք աշխարհին։ Թշնամիք աշխարհաժողով բազմութեամբ գումարեալ ի հանդիպակաց ափունսն մնային քրիստոնէից։ Սոցա անցեալ ընդ հուն գետոյն՝ որ անպատասան Թողեալն էր՝ անկան ի վերայ Թշնամեաց. որք նորահնար ինչ ահաւոր հրով, որ անշէջ ի ջուր՝ ընդմանէր ի զգեստս և ի զէնս զօրականին, չարամահ զնոսա կորուսանէին։ Սակայն քրիստոնեայք զօրացեալ, և սուր ի վեր առեալ կոտորելով զԹշնամիս, փախստեայ սպարն զնոսա։ Անշուշտ ի ձեռս էր նոցա յաղթութիւն ի սպառ, եթէ Հռոբերտոս կոմն Արթուայ, եղբայր Թագաւորին, խոհականութեամբ չափ դնէր Թափոյ արութեան, և ոչ յանդուգն չահսպառակէր։ Քանզի առեալ նորա զհարուածս Թշնամւոյն, մնացեալ զսմանն սրբոյն հրամանին, և զհետ ածեալ զհեծելազօրն՝ վանեաց զԵգիպտացիս ի Մասուր քաղաք և յայզուքեանն չլսցեալ միաբնորա ինք-

նին զՀեսա նոցա խուժեաց ի նեղըս ի քա-
ղաքն ընդդէմ խորհրդոց խմաստուն զօրա-
վարացն, և գուբ կորսեան պատրաստեաց
զայն անձին: Քանզի անհաւատից ամենե-
ցեալ յառաջոյ գոյըն գնդի Թշնամւոյ գնալ
փախստական, յետս ընդ կրունկն գարձան
ի վերայ կոմսին, և բռնադատեալ մուծին
զնա վերսին ի Մասուր: Ընդ երկուստեք
անխնայ լեալ կոտորած, անկան բազումք
ի Գաղղիացւոց. և կոմսն պաշտպանեալ
անձին քաջութեամբ, և նախձիրս արեան
առ ոեղեաւն գործեալ, խոնջ վերայլից ան-
կաւ ի վերայ դիականց Թշնամեաց իւրոց:
Մահ փառաւոր, եթէ չէր յանդգնութեն
արգասիք, և կարասկա հանդերձեալ ահա-
գին հարուածոց (1249):

Ընդ հեծելազօրն գոգցես առ հասարակ
կորեաւ յաղետալի մարտին. և ի լուսին ա-
զեսից գիակունքն գիշեալ յափունս նե-
ղոսի՝ ապականեցին զջուրն, և սկսաւ սրա-
ծութիւն ձարակել ի բանակին խաչակրաց,
և բանակն հզօր ի հիւանդանոց մեծ և ի
գերեզման փոխեր: Սրածութեանն յաջոր-
գեաց սաստիկ. Թշնամիքն կալեալ զդաշտն
հասին զՏաղորդութիւն բանակին ընդ Տա-
միատ: Հարկեցաւ Թագաւորն ի գժուա-
րին նահանջ, քանզի նուազեալ էր զօրա-
կանացն Թիւ, և ինայեալքն ուժասպառք և
խօթք: Խմաստութեան և քաջութեան պէտք
էին Լուդովիկեայ ի խնամս չարեացն, որ
պատէս ի պատերազմի՝ նոյնպէս և ի մէջ
խօթացեալ զօրուն ոչինչ խնայելով անձին,

միջամուխ լինէր ի հոգ խնամոց նոցա. որով և ինքն ի նոյն ըմբռնեալ սխալ՝ ածաւ յոլորմ պայման, և գերի անկաւ ի ձեռս բարբարոսաց եղբարցքն հանդերձ և աշխարհաղօր բանակաւն:

Ոչինչ նուազ մեծանձն ցուցաւ Լոդովիկոս ի շղթայն քան ի գահուն: Հաստատուն նորա ակաթեկ արար բազում անգամ զԱրաբացիս, և այնչափ մեծարոյ և զարմանալի եղև նոցա, մինչև ի մահ Սուլթանին և ի դառնարկանալ գահուն՝ զնա խորհէին ամբառնալ իբրեւանց թագաւոր, եթէ երկիւղ քրիստոնէութեան նորա ոչ կասեցուցանէր զնոսա ի գործոյն: Եւ գաշինս խաղաղութեան կռեցին ընդ նմա՝ պայմանս եդեալ զի տացի Տաճիատ ի փրկանս թագաւորին, և ջրեքհարիւր հազար ֆրանք արծաթոյ վասն այլոց կալանաւորաց առաժեայլ:

Ի ժամանակի յորում ի բացեայ կայր թագաւորն յաշխարհէ իւրմէ, յարեաւ խռովութիւն ի Գաղղիա: Կրօնաւոր ոմն Մաճառ ազգաւ Յոբ անուն, իբրև յառաջագոյն ազդեալ, քարոզէր ապերախտ հաւատացելոց՝ և գերութեան թագաւորին պատճառս ընդ ինքն գնացս իշխանաց և զճոխութիւնն եկեղեցականաց: Վասն որոյ և իրաւամբ իբրև ի սեառնէ՝ ժողովէր զաղքատս ամենի զարս անմեղս, և նոքօք վանել զանհաւատս, ազատել զաղքսն, և փրկել զերկիրն սուրբ: Եւ պերճախօսութեամբ իւրով ձգեաց մինչև զբազմութիւն գիւղականաց, ծա-

ասելց, փախստականաց և անօրէն մարդկան բիւրս ասան, որք յարձակեալ ի գաւառս գաւառս յաւէր և յոտնկանութիւն զաշխարհն գնէին: Ազատարեալ դշխոյն Պլանշ, հար ընկձեաց զնոսա ի սպառ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Գործ սրբոյն Լուդովիկոսի յարեաւ է-ը, օրէնք բարեկարգութեանց նորա, և արտաքսումն վարդապետին: Թագաւորել կարգոսի եղբօր սրբոյն Լուդովիկոսի ի Նեապօլիս, և անցանել Լուդովիկոսի պատերազմս յԱֆրիկէ և մահ նորա:

1254 – 1270:

Յայն Լուդովիկոս արքայ ազատեալ ի գերութենէն՝ նաւարկեաց ի Պաղեստին, և անդ զամս չորս պարապեր յամրացուցանել զքաղաքս ընդդէմ անհաւատից: Ապա ի մեռանել Պլանշայ դշխոյին, զոր խնամակալ թագաւորութեանն թողեալ էր, հարկեցաւնա գարձառնել ի թագաւորութիւն իւր ի Գաղղիա. և ծածկաձայն ցնծութեամբ ընկալեալ ի ժողովրդենէն, ի խաղաղութեան եգիտ զաշխարհն և բարգաւաճ որպես եթող: Առաջին փոյթ նորա եղև խաղաղութիւն առնել և ընդ թագաւորին Հէնրիկոսի Դ. թողեալ ի նա քաղաքս քանի մի. այլ խաղաղութիւնս այս ի

ՙին առաջ էրկու Գաղղիոյ : Ընդուել և անխոնջ ջհեան էր առաքը Թագաւորն յերջանիկու. Թիւն Ժողովրդեան , առհմանեալ օրէնս ի. մատուցանս, միանգամայն և փոյթ արարեալ ՙի պահպանուելնոցին : Կարդեցոյց և Ժողով ինչ գառաւորաց , որ կոչեցաւ Փարլամէնթ, կազմեալ յերից ումանց յատկապօրեցոյն , և յերից եպիսկոպոսաց , յիններեսանն ազ. նուականաց և յուԹուսանն օրէնադրաց : Ի կարևոր և ՙի պիտանի օրինաց նորա մի և այն էր , մի առորակարգ իշխանաց ըստ կամի ՙի պատերազմ յառնել ՙի վերայ միմեանց, որ առ դոյզն պատճառաց ՙի կռիւ գային ընդ իրեարս . Թէպէտ առ ժամն ՙի պատ. ճառս խաչակիր զօրաց հանդարտեալ Թը. ւէին : Արգել յիշխանուԹեան իւրում և զմեծամարտուԹիւն ՙի փոքր անմեղուԹեան: Ուրմանից ումանց իշխանաց իրաւունք էին յայնժամ ՙի Գաղղիա դրամս հատանելոյ. իւ. րաքանչիւր նոցա դրամոց գինս եդ , և զիւր. սին հնարեցաւ յարգունս ընդ ամենայն տե. ղիս կացուցանել :

Ի զբաղմունս անդ արժանավայել առն Թագաւորի համբաւ անուան նորա վասն արդարակորով և առաքինի գնացից նա. րատածանէր ընդ Եւրոպա . և ի արքայն Անգ. ղիոյ Հենրիկոս Գ , և առագանի նորա ՙի բազմաց հետե երկպառակեալ էին յիւ. րեանս , զառաւոր ընտրելոյին վնաս ինքն Լու. դովիկոս ՙի լուծ ուին հակառակուԹեան իւ. րեանց : Ընդ Թագաւորն առեալ զանձամբ զԹագաւորական իշխանուԹիւն՝

աւանդեալ նմա ի նոցունց գաւառացն, կո-
չեաց զնոսա ՅԱմիէնս առաջի իւր. նոքա և
զարմանահրաշ իրք. Թագաւոր ոք և իշխանք
միաբանին զշահ օգոլ իւրեանց յանձն առ-
նել օտարի ոմեք իշխանի, և գաւառեն
զհանձար նորա և զիմաստութիւն և զար-
դարութիւն: Լուեալ սրբոյ Թագաւորին
զաղերս երկաքանչիւր կողմանն, եւս վճիռ
ընդգէմ նորամուտ ձեռնարկութեանց ա-
ւազանեցին՝ որ հակառակէր Թագաւորա-
կան իշխանութեան, և ի նպաստս հաստա-
տութեան վաղեմի սովորութեանց՝ որոց
հակառակ ջանայր Հենրիկոս սարսածանել
զիշխանութիւն իւր (1264):

Ի փառս կարևորացս այսոցիկ իրաց ջան-
փանէր սուրբ Թագաւորն ի դիւրամատոյց
լինելոյ և յեանոց իսկ ի հպատակացն. և
բազում անգամ խոյս առեալ ի տաղտուկ
Թախանձանաց ատադանեցն, երթայր ի
Ձեմ յանտառն Վենսենն. և անդ ազատ յար-
քունականացն փառաց, նստէր ընդ կաղ-
նեաւն. և բազմեցուցեալ զիշխանս ի վե-
րայ խոտոյ առ իւր, ոմանք մատուցանէր
մերձեցելոցն առ ինքն յաղերս դիմումէ.
և չէր ոք ատատաւոր կամ Թիկնապահ ար-
գելուլ զոք ի մերձենալոյ առ նա համար-
ձակ: Եւս ևս կառուցանել գրասուն հա-
տարակաց ի փարիզ, և հիւանդանոց կամ
աղքատանոց վասն երից հարիւրոց: Յա-
ւուրս Թագաւորութեան նորա կանգնեցաւ
և Սորպոնեանն մեծահռչակ ուսումնարան՝
ի ձեռն Հռոբերտոսի Սորպոնի:

Ոչ է արժան անյիշատակ առնել և զդէպս թագաւորութեան Կարոլոսի զքսին Ընժուի եղբօր սրբոյն Լուդովիկեայ՝ ի նէապօլիս: Քանզի՝ ի լինելն շքեղ տոհմին Սուապեանց, և՝ ի մեռանելն Փրեդերիկոսի Բ՝ ի կռիւս ընդ Հռովմայ, և՝ ի դեզամահ լինել Գոնրատեայ՝ ի ձեռն Մանֆրեատոսի հարձորդ[ւ]ոյն Փրեդերիկոսի, որ զօրացեալ թագաւորէրն՝ ի նէապօլիս, քահանայապետն Ուրբանոս Դ խրատեաւքք իշխանութեան իւրոյ՝ ի վերայ աշխարհին՝ մատոյց զայն թագաւորութիւն սրբոյն Լուդովիկոսի: Այլ նորա չառեալ յանձն, և առ՝ ի հեռացուցանել յաշխարհէն զևղբայր իւր զԿարոլոս գոչքս Անժուի զիշխան փառասէր և անգութ՝ նմա մատոյց զայն: Իսկ Կարոլոս աճապարեալ անդէն զօրօք իւրովք հանց՝ ի նէապօլիս, և ապանեալ զԱնդիրեասս, ախրեաց աշխարհին. և յետ հնգետասան ամաց ապանեալ և զԳոնրատինոս ժառանգ գահուն, հատուտեաց անկասկած զթագաւորութիւն իւր (1266):

Զայսու ժամանակաւ երկներ՝ ի միաս Լուդովիկոս յայլ նոր արշաւանս ընդդէմ անհաւատից. կորուսեալ էին յայնժամ Լատինք զինքնակալութիւն Բիւզանդիոնի, վերստին թափեալ զայն Յունաց՝ ի նոցանէ. և փնտռուխտաւոր Սուլթանն Եգիպտոսի արագ աշխարհակալութեամբ իւրով՝ ի Պաղեստինն սկրեալ էր քաղաքաց բազմաց, և առեալ զՆիսիոք, և զսուրս հարիւր հազար՝ ի քրիստոնէից ընդ սուր հանեալ: Ընդ այս լուր

աղէսից ՚ի գուբի խանգաղատեալ Լուդո-
վիկեայ՝ միւսանգամ զօրաժողով արար խա-
չակիր զօրաց. և յետ զառանիլն հոգացեալ
նմա, ջու արար խալաց ՚ի Տունուս (Թու-
նուզ) և պաշարեաց զքաղաքն, որ պատուա-
րըն էր Սարակինոսաց և կենդրան պետուե
նոցա ԱՆփրիկէ: Իշխան աշխարհին այնորիկ
խոստացաւն էր տուեալ արքային Լուդովի-
կեայ քրիստոնեայ լինել. և զի երկնչէր յիւ-
րոցն, կամէր տալ նոցա կարծիս՝ Թէ ՚ի վինուց
բռնագատեալ քրիստոնէից գայր յայն ա-
կամայ. վասն որոյ ած շարժեաց զԼուդովի-
կոս յարշաւանս յաշխարհն իւր, որ եԹէ
յաջողէր՝ բնաջինջ բառնայր ԱՆփրիկեայ
մահմետականացն ազանդ: Բայց առ ակա-
րաւԹեան, եԹէ առ յողդողդ բարուց, կամ
առ նենգաւԹեան՝ ոչ գիտեմ, չեկաց Թա-
գաւորն մահմետական ՚ի բանս իւր. և ընդ-
դեմ դարձեալ, քաջաւԹեամբ զդեմ կալաւ
պաշարողացն:

Յետ այնորիկ ՚ի սաստիկ ասԹոյ և յախ-
տաբեր ըմպելեաց և ՚ի կեղտակրոց՝ Ճարակե-
ցաւ ՚ի բանակին առնգ սաստիկ, և ՚ի սակաւ
ժամանակի կոտոյս զերիվր մասն բանակին:
Ա՛Հ Լուդովիկոս միշտնոյն, միշտ յաղԹող
բազդին, ոչ դադարեր ՚ի խնամ տանելոյ
աղեխից զօրականին, և հակէր աքնուԹեամբ
առ Տիւանգա՝ մինչև ըմբռնեցաւ ՚ի նոյն և
ինքն խակ. և զգացեալ զի էր մահաբեր նմա
ախտն, արիական և վեհանձն ոգւով սպասաւ
օրհասի մահուն: Եւ օր քան զօր ակարա-
ցեալ Թագաւորն սուրբ՝ իրրև հասեա Թէ

մեռանի, կոչեաց զորդի իւր զՓիլիպպոս, և զվերջին խրատս առանդեր նմա լի բարեպաշտութեամբ. և ապա ընկղմանեալ ի վերայ մահուրց, եդ զբազուկս խաչաձև ի կուրծս, և զաչս յերկինս ամբարձեալ՝ առանդեաց զհոգին, առեալ զբան առաքեալական Թադէոսին. «Ահա ես ընտ բազում ողորմութեան քում մնից ի տուն քո, և երկիր պագից ի տաճար սուրբ քո»:

Մեռաւ Աբգարիկոս ի յիսներորդի վեցերորդի ամի հասակին. Թագաւոր ըստ սրբոյն Ասուծոյ, օրինակ Թագաւորաց, հոյր ժողովրդեան, և քան զհայր գորովագութիւն ինամածու նոցին: Հանդերձ սրբութեամբն եղև կերիլ և զօրաւոր ի գէն, խնամատուն և արդարագատ ի գատաստան, պաշտպան մեծ և նախանձախնդիր կրօնից քրիստոնէութեանն. իշխան հսկող, չափաւոր, առաստաձեռն, մեծագործ. Թագաւոր մեծարոյ ի Թագաւորութեան իւրում. և ցանկալի յաչս արտաքնոց, և գառաւոր առյգ ի մէջ օտար Թագաւորաց իւրոց հպատակաց իւրոց: Սիրէր նա յոյժ և զառաքինական գործս և զնոնարհ հրահանգս կրօնից, զսիրոյ առեալ, զողորմութեան և զնոնարհութեան, և զբարեգործութիւն զինի հատարակաց գործոց յայնս պարտական: Բայց նուաստութիւնքն այնպիսի ազնուացեալ յարքունական անձինն՝ զվեհ մեծութիւն զգենուին. և խոնարհ քրիստոնեային այն՝ ահաւոր էր ի Թագաւորական գործս իւր, և ի հնազանդեցուցանել զապստամբս. քանզի և ոչ

ոք ՚ի Թագաւորաց կարաց այնպէս քաջ յոսին ունել զպատիւ իշխանութեան իւրոյ իբրև զնա:

Մահ սրբային ահաբեկ արար զբոլոր մարտադիլ, այլ սակայն երկարեին մնային ՚ի պաշարումն քաղաքին, և բազում անգամ հարեալ զՍարակինոսս՝ ուր ուրեմն ապա խնարհեցուցանէին զնոսա ՚ի հաշտութիւն՝ հատուցանել զծախս պատերազմի, ազատել զբիւրաւորս գերեաց, միանգամայն թողուլ քրիստոնէից ազատօրէն պաշտել զկրօնս Ձշմարտութեան և քարոզել յերկրի անդ անհատոյց:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Թագաւորութիւն Փիլիպպէոսի Գ, և իշխանք գաղղիացւոց ՚ի Սիկիլիա:

1270 – 1284.

Անվեհեր և անընկճելի արութեամբն Փիլիպպոս ՚ի պաշարման Տունուսի՝ զՅանդուքն մակդիր ընկալաւ: Եւ ՚ի դառնալն իւրում յաշխարհ իւր ալեկոծութեամբ կորոյս առ Սիկիլիաւ ութեւտասն նաւս հանդերձ հինգ հազար զօրականօք, և գանձիւքն զոր առեալ էր ոսկւոյ Ալբայացւոց անտի: Եմուտ Փիլիպպոս ՚ի գաղղիա բերելով ընդ իւր զտխուր զաճիւնս հօր իւրոյ, զինոլն

և զորքսն և զեղբօրն և զքեռ և զմեսային:

Յամին երկրորդի ի մեռանել Ալփոնսոյ զքսին Տոլվայ անժառանգ, անկաւ սերութիւն ընդարձակ գաւառաց նորա ի ձեռս Թագաւորին Գաղղիոյ, և գքսութիւնն Վնեսենայ Թողաւ քահանայապետին Հռոմայ ի կալուածս, որով զամն հինգ հարիւր կալան քահանայապետքն զՎինեսն ի ժառանգութիւն: Յաւետաց մեծապես արքայն մահ անգրանկին իւրոյ Լուդովիկոսի, որ գեզամահ կորեաւ, և չէկն ի յայտ գործնեայն ամենալսութեան: Պաշտօնեայ Թագաւորին Պետրոս Տը լա Պրոս անուն ամբաստան եղև զդշխոյէն Մարիամայ մօրեւ արքայորդւոյն. այլ արդարացաւ դշխոյն, և ինքն պարտաւորեալ ի նոյն եղեռն՝ ի կախաղան մահու հանաւ. և անյայտ իսկ է յարդ արդարութիւն վճռոյն (1278):

Յետ այսորիկ երկու մեռաւ Հենրիկոս դուքսն Կամպանիոյ և Նաւարայ, ամուսին նորա զքսուհին Հանգերձ եռամեայ զաւակաւ թողեալ յերեսաց ապստամբաց՝ անկաւ յալքունիս Փիլիպպոսի. Թագաւորն ձեռն եառ նոցա և զալջիկն զՅովհաննա ամուսնացոյց որդւոյ իւրում Փիլիպպոսի, որով միացոյց ընդ սերութեան Գաղղիոյ և զԿամպանիա և զՆաւարա: Այսպէս իշխանութիւնն Գաբէթեանց երթայր և ատրածանէր, սկսեալ յամաց անտի Լուդովիկոսի Յորն կոչեցեալ մինչև ցՓիլիպպոս. որով փոխէր և վարչութեան տարազ:

ի թագաւորութեան նորա երևեալ էզև
ի վեպս պատմութեան յիշատակ ազեաալի
կառարածին Սիկիլեան : Քանզի ամք ոչ բա
ղումք անցեալ էին յորմէ հետէ Կարոլոս
դուքան Ընժուի եղբայր արքային Լուդովի
կոսի կալեալ էր զնեապօլիս և զՍիկիլիա
ի ձեռաց բռնաւորին Մանփրեոսի : Ի
սկզբան սիրելի էր իշխանութիւն նորա նո
րոց հպատակաց . սակայն ապա խառնու
թեամբն իւրով, և անիրաւութեամբ ընչա
քաղց իշխանացն առեալ եղև յոյժ . մանա
ւանդ և զկին իւր գաղթականք գաղղիա
կանք անառակ ազաւութեամբ իւրեանց և ա
խտութիւնն զժողովուրդ երկրին : Վասն որոյ
միաբանեցան բազումք ի բնակչաց կղզւոյն
ի գաղանի դաւաճանութիւն ընդդէմ առ
իւրեանց . և յառաջ քան զպայմանա
դրեալն ժամ ի վեր առին զապստամբու
թեանն զգրօշ դրդռեալք յանօրէնութենէ
գաղղիացւոց ուրումն զինուորի : Քանզի առ
յերկուշաբաթի զատկին ի հարկանել երե
կոյեան ժամուն ի փալերմոյ՝ ժպրհեցաւ
յայնահապէս ձեռն արկանել ի կին ոք՝ որ
հանդերձ ընտանեօք իւրովք մեռանէր յե
կեղեցին : Ընդ ազատակ կնոջն բռնաբարե
ցեալ դղրդեցաւ քաղաքն ողջոյն, և զայրագին
շունդ ազատակի նոցա բարձրացաւ ի պա
տուհասել զժպիրհ բռնաւորս : Եւ գիմեալ
անդէն առ հասել յոշ յոշ պատառեցին
զզօրականն , և ի յայնի ապստամբութենէն
թեւակոխեցին : Եւ անտի յարձակեցան ի
վերայ Գաղղիացւոց անխնայ , ոչ ազգոյ ո

զորամէին և ոչ ի կանայս գԹային և ոչ յայլ նուաստանաց ակն ածէին, մինչ զի և ոչ ուժք զերծանել ի բուռն մոլեգնութենէ ամբոխին. կէսք գանակոծ սպանան, այլք խողխողեցան, ոմանք հեղձամահ կորուն, և ոմանք գարձեալ ի հուր գասեցան: Արդարև անգութ էր վրէժխնդրութիւնն, այլ յոյժ նուազ եպերելի՝ եԹէ լսես պատմելոյ Սիկիլիացւոց Հնամարիսք իւեն գժնդակք եղբոնք Գաղղիացւոց: Յաւուրն երկրորդի սկսաւ այս գործ գառնութեան և յայլ քաղաքս Սիկիլեոյ, և Թիւ անկելոցն Գաղղիացւոց աւելի եղև քան զքսան հազար արանց: Եւ զի ոչ ամենևին կոյր էր մոլեգնութիւն ոտիկին, յայտ անօն է զի խնայեցին յազնուական ոք բարեհամբաւ վասն զգօնութեան և բարեպաշտութեան: Պետրոս Թագաւոր Արագոնայ գրգիռ ապստամբութեանն՝ վայելեաց յարգասիս նորին՝ քանզի կալաւ զՍիկիլիա, և եԹող զնէապօլիս միայն յաջորդացն Կարոլոսի (1282):

Ի լուր անողորմ կատարածիս երդուաւ Փիլիպպոս արքայ Գաղղիոյ վրէժ խնդրել արեան ազգակցաց իւրոց. գիմեաց անձամբ ի վերայ Արագոնացւոցն, խորտակեաց զզօրս նորա, և կալաւ զԺիրոն: Բայց Թէպէտ և վաստնարեալ էր Պետրոս առաջի Փիլիպպոսի, և մահացու իսկ առեալ վէրս, այլ օրհաս մահու արքային Գաղղիոյ արգել զյաղԹող զինս նորա, որ Թերևս բազում այլ ևս արեանց պատճառք լինէին:

Փիլիպպոս ժառանգութեամբ գոգես

կալաւ՝ ի հօրէ իւրմէ զկոտով արուեստեան, զսիրա բարեբարոյ, զառաստաձեռնուեթիւն և զանկեղծ և զսիրելի բարեպաշտուեթիւն. եթէ ընդ առաքինուեթեան էր նորա և խոհեմուեթիւն ճանաչելոյ զմարդիկ. Թերևս ոչինչ իւիք պակաս գտանէր քան զհայր իւր զսուրբն Լուդովիկոս:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վան Խաֆաուրուեան գերեզմին Փիլիպպէոսի և պատերազմաց նորա:

1284 – 1314.

ՓԻԼԻՊՊՈՍ Դ մականուանեալն գեղեցիկ վան վայելչուեթեան կերպարանացն, միացոյց ընդ Գաղղիոյ և զհպատակուեթիւն նաւարայ, զոր յօժիա էած նմա գչխոյն Յովհաննա՝ դուստր միամօր Թագաւորին նաւարայ: Փիլիպպոս անընդհատ պատերազմաւ էր ընդ Արագոնացիս, վինչև բռնադատեաց զհպատակ նոցա Թողուլ որդւոյ Կարոլոսի արքային նէապօլսոյ երեթաւ Թագաւորել՝ ի ժառանգուեթեանն հայրենի:

Եւ յետ այսորիկ պատճառանս պատճառեր ըն Թագաւորին Անգղիոյ Եդուարդայ, կոչելով զնա՝ ի գատ յատեան աւագանւոյն Գաղղիոյ վասն նաւուցն՝ զորս գերեալ էր Անգղիացւոց՝ ի նոցանէ: Եւ իբրև ըմ-

բռատացեալ Ժիսեւոց նա զՀպատակութիւն առ Թագաւորն Գաղղիոյ որպէս զդուքս Կիւենայ, և էլ ի պատերազմ ընդդէմ արքային՝ նիզակակից իւր առնելով զԱտոլփոս՝ նաեւ զԹագաւորն Հռովմայեցւոց, զդուքսն Բրիտանիոյ, զդուքսն Պրեպանտայ, զկոմսն Փլանդրիոյ և զայլ բազում իշխանս հրաւիրս Փիլիպպոս յարքունիս գրաւեաց զԿիւեն և դաշնակցեալ ընդ Յովհաննու Պայլէօլայ արքային Սկովատացւոց՝ սկսաւ պատերազմել ընդ նմա (1295)։

Նախ զհռովմարար բարս Փլանդրացւոց սանձահարեաց քաջութեամբ, ընդարձակեալ զիշխանութիւն տէրութեան իւրոյ։ Քանզի օրէնք էին ի վերոյ իշխանաց՝ որ ժառանգութեամբ առնէին զիշխանութիւն, մի առնուանացուցանել զորդիս իւրեանց առանց հաւանութեան Թագաւորին։ Ընդդէմ օրինացս կոմսն Փլանդրիոյ խոստացաւ զդուստր իւր որդւոյ Թագաւորին Անգլիոյ, և յաւել դաշնակից լինել ընդ նմա ընդ Թշնամւոյն Գաղղիոյ։ Փիլիպպոս պատճառանաք կոչեաց զկոմսն ի Փարիզ, և ոչ եթող զնա մինչև հաս ի պատանդ զորիորդն խոստացեալ։ Այլ նա դարձ ուրարեալ յերկիր տէրութեան իւրոյ, յանդգնաբար պատգամ յղէր լի սպառնալեօք՝ առաքել յետս զդուստր իւր։ Ի պատասխանի սպառնալեացն նորա մեծ Փիլիպպոս ի գաւառս տէրութեան նորա, ձերբակալ արար զկոմսն, և անգէն ուստր Թագաւորն Անգլիացւոց ահաբեկ ձեռնեցաւ լինել ի նա-

նէ : Եւ անշուշտ զգաւառն զայն մարզ կայսուցանէր Փիլիպպոս աէրուեթեան իւրոյ, եթէ հոգացեալ էր նորա խնամատուն ոք և հանճարեղ գաւառակալ կարգել անդ : Քանզի կուսակալն Թոլեալ անդ 'ի Թագաւորէն, կարծելով թէ առանց խաղաղութեան ոչ էր մարթ 'ի հնազանդութեան պահել զնոր հպատակս, ձեռն էարկ 'ի գժնդակ խաղաղութիւն : Ժողովուրդս այս վայրագ 'ի բնէ և աղաւաղեր՝ 'ի քրիստոնէիւն լուծեալ, նշկահեաց զլուծն ծանր, և հալածեաց զԴաղլնացիս 'ի գաւառէն . և առաջնորդ յանդուգն գործոյն ասպատնական ոք էր և մահագործ : Խորհեցաւ Թագաւորն զի անարգանք մեծ էին անվրէժխնդիր Թողուլ զապստամբութիւնն . և առաքեաց 'ի Փղանդրիա զօր ասպատիկ առաջնորդութեամբ կոմսին Արթուայ, Թոռին սրբոյն Լուդովիկոսի : Սա Թէպէտ զօրավար քաջ, այլ վայրագ էր բարուք , և պատերազմեամբ իսկ ընդ Փղանդրացիս՝ ոչք զերկիր աէրութեան նորա յաղարտ վարեալ էին , արհամարհեաց զնշանսին սակ զամբոխ անհրահանգ մարդկան արուեստաւորաց և գեղջկաց . և անարժան վարկաւ քաջութեան իւրոյ խոհեմական վարել զգուշութեամբ : Քանզի Թողեալ զնմանատուն և զհնարաւոր խորհուրդ 'ի սով ընդունելոյ զնոսա , լաւ համարեցաւ խաղալ ընդդէմ Թշնամեաց 'ի տեղի անմատոյց՝ ուր ամրացեալն էին մեծ 'ի Քուրթրա : Ա՛ւ 'ի մօտ մատչել նոցա հարկ էր անցանել ընդ խրամ ինչ խոր ընդ սրզ-

մուսուրբ յանխորհուրդ եւ անդն վառեալ Գաղղիացւոց արկին զանձինս ի նեղսն, եւ ի մօրուաս անդ ըմբռնեալք՝ ոչ յառաջել եւ ոչ յետս ընկրկել կարէին. եւ կոտեան բիւրաւորք խորասոյզք ի ցամին, ոչ կարելով եւ ոչ ձեռն ի սուսերս ձգել. հարաւ եւ զօրավարն նոցա վիրաւոր: Համարձակեալ յաջողութեամբս Փղանդրացիք ելին ի պատնշոց իւրեանց, եւ անկան ի վերայ մնացեալոցն Թշնամեաց. հարին զնոսա ի հարուածս սաստիկս, մինչ ահիւ խառն ի խուռն ի փախուստ ձգեալ էին: Զանհնարին կօրօստա Գաղղիացւոց անոխ խակ ի միս առնուլ է, վի չորեքհազար զոգք ոսկեզօծ մարակաց անկան յաւուր յայնմիկ յաւար Փղանդրացւոց (1302):

Ողբաց Գաղղիա զմահ անկելոցն ի Քուրթրա, և Թագաւորն գառն ցաւովք խրատեսեր վիրսն քաջանալ ի վրէժ արդարադատ քինու: Ընդէն զօրաժողով եղև վերսին, և դիմեալ անձամբ ի Փղանդրիա, եգիտ զԹշնամին բանակեալ մերձ ի Մոնզանփուէլ: Խմաստութեամբ փիլիպպոս կարգեաց զբազմախումբսն հեծելազօրն յընդարձակ դաշտին, և արգել փակեաց զամենայն պարսիս Թշնամեաց: Խակ ապատամբք յանդուգն քինու վարեալք ի մարտ քան զօն խոհականութեամբ, և ոչինչ ամենևին փոյթ կալեալ զհամբարոց, անդէն ի նեղ անկան անձնատուր լինել ի Թշնամիս, կամ մեռանել սովալլուկ՝ վակեալ ի պատուարս իւրեանց. քանզի գաւառին էր խոյս տալ

'ի վինուց հեծելազօրուն Գաղղիացւոց: Յայսմանէ անձկութեան 'ի յուսահատս խորհուրդս մտաբերեցին. քանզի 'ի գիշերել աւուրն՝ անկան յանկարծ 'ի վերայ բանակին Գաղղիացւոց, կոտորեցին զգիշերապահս բանակին, և հասին մինչև մեռ 'ի վրանն արքունի կոտորեալ և 'ի փախուստ դարձուցեալ զղիմակացան: Այլ արիացեալ արքայն Փիլիպպոս ապրեցոյց զչորս իւր, և սուր 'ի ձեռին մարտակից իւր ունելով զարս քան յայնուսականաց անոյ, կատեցոյց զզայրագին գիմեցումն բազմութեան ամբոխին, գիսկամբք նոցա պատնէշ գոր, ծեալ աւասլն իւր: Սակայն ձշնամիք ամենեին ոչինչ ընկրկեալ կենան՝ աւաւել ևս վառէին 'ի գիմակալութիւն. և եթէ հեծելապետին ոչ էր աճապարեալ յօդնութիւն թագաւորին և քաջացն, վասնզ պարտութեան առասլն կայր նոցա: Փիլիպպոս հանգերձ հեծելովք գիմեալ 'ի վերայ հետևակացն Փղանդրացւոց, և անհնարին շտապ տագնապալ 'ի վերայ հասուցեալ մինչև ցմուրճ գիշերոյն, 'ի սայր սուսերի զբազումն 'ի նոցանէ գիամեռուցեալ յերկիր արկանէր, և զինուցեալսն փախստական առնէր:

Մեծ էր յաղթութիւնս այս. վասնզի Փղանդրացիք քան և հինգ հազար՝ եռուն զվեց ք հինու պատերազմեանն Քռութիայ. և Փիլիպպոս պայմանօք հաշտութեան եհատ 'ի Փղանդրիոյ զգաւառս՝ որ յայս կողս Էին գետոյ, և զինուցեալ գաւառն էա 'ի ձեռս ապստամբ կռնիին, շատ համարեալ նմա

զերկար կապանս բանտի և զկօրուստս գա-
ւառաց պետութեանն (1305)։

Զայսու ժամանակաւ՝ վախճան լինէր
Թշնամուէն Փիլիպպոսի ընդ արեղ գահին։
Քանզի խրոխտ ամբարտաւանութեամբ Թագա-
ւորին գրգռեալ Լիւրաւայի նզովից քահա-
նայապետին, զինուց բռնութեամբ ձերբա-
կալ զնա արար և բանտարկել։ Յորմէ մահ
ի վերայ հասեալ քահանայապետին, յա-
ջորդեաց նմա Բենեդիկտոս ԺԱ. և խաղա-
ղացոյց զգժտութիւն արքային Գաղղիոյ ընդ
Հռովմայ։

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Բարձր կարգի Տաճարական սպէտք։

Զկնի երից ամաց ձեռն էարկ Փիլիպ-
պոս ի գործ մեծ և կարևոր, ի բարձումն
կարգի Տաճարականաց։ Քանզի այս կարգ
առաջեւոյ հիմնեալ ի 1118 ամին Լերու-
սաղէմ ի ձեռն աշնուականաց Գաղղիա-
ցւոց, հանգերձ կրօնաւորական ուխտիւք
նուիրէին երգմամբ ի պաշտպանութիւն
ուխտապնդացից ի սուրբ երկիրն։ Առաջին
վանք նոցա էր մերձ ի տեղին ուր էր եր-
բեմն տաճարն Սողոմոնեան, և սոյն Տա-
ճարականք կոչեցան։ Սկիզբն արշաւանաց
ընդդէմ անհաւատից, և ձեռնտուութիւք
հաւատացելոց ժողովեցին կառավարին ճո-

խուճիւնս անբաւ . որով և պէղէցին իբ-
րեանց գլուխ կորուսեան : Քանզի ընդ Ա-
խուճեան սպրդեալ մտին ի նոսա ամբար-
տաւանութիւն , շռայլութիւն , արբեցու-
թիւն , անառակութիւն . որովք զառաջեան
յանկուսս բռնութիւնս և յեղուզակաբար
յափշտակութիւնս ընդդէմ ժողովրդեան՝
որոյ պաշտպանք հաստատէին : Դարձեալ և
միանային նոքա յաձախ ընդ մահմետականս
ի մատնութիւն իշխանաց քրիստոնէից , և
բագէլ զկորուստ երկրին : Թէպէտ առ
թագաւորութեամբ Դէղէցիկն Փիլիպպոսի
վատանուն էին առքա , այլ դեռ ևս ոչ ամե-
նայն անզանազատութեամբ անօրէնութիւնք նո-
ցա և շամբուշ անառակութիւնք ի յայտ
էին եկեալ :

Ուր ուրեմն տեսա խայտառակեցան է-
ղեռնաւոր գաղանիք նոցա ի ձեռն երկուց
ոմանց ձեղքելոց ի միաբանութենէ նոցա .
առքա թէպէտ կասկածելիք էին , այլ շարժե-
ցին զմիտս թագաւորին գատաստանաւ կղե-
մեսի և քահանայապետին զերն վճարել .
և հրամայեաց ի միում աւուր ըմբռնել
բազում Տաճարականս ի թագաւորութեան
իւրում (1307) : Ի վերայ հասեալ լուցն և
քահանայապետն ինքնին , և ի հարց փորձ
մատուցեալ զօրհանաւսն և երկուս ի Տա-
ճարականաց անտի , ընկալաւ ի նոցանէ
խոստովանութիւն զծանր ծանր յանցա-
նացն՝ որոց վասն ամբաստանութիւն էր զնո-
ցանէ : Նոյնպէս և առաջի այլոց գատաւո-
րաց բազումք խոստովան եղեն պյանցանան

ընդ առաջնորդին իւրեանց Յակոբայ Մո-
ւսայի. երեք միայն գոան ՚ի նոցանէ՝ որ ա-
բանային զամենայն: Յայսքան հաւատաւոր
իրացն, ծանոյց քահանայապետն Թագա-
ւորացս Եւրոպիոյ՝ խորհել զնոցանէ զար-
ժանն: Եւ ձեռնակալ եղեն Տաճարականք
առհասարակ Եւրոպա, և արկան ՚ի բանս:
Մինչ չև էր յայտնեալ գաւանիւնք նոցա,
այլք հարիւր քառասուն և լինն յայնցանէ՝
որ յետ այնչափ վկայից ուրանային զիրան,
և կամ խոստովանեալ միանգամ՝ յետս
դարձեալ կոչէին զայն, այրեցան ՚ի փարիզ.
այլք ոմանք գաւառապարտեցան ՚ի բանս
մշանջենաւոր, և այլք ՚ի կանոնական ա-
պաչխարութիւն. և բազումք խակ անմեղ
գտեալ արձակեցան յաղաւութիւն: Մնաց
գաւան ՚ի վերայ իշխանին նոցա և երից գլխա-
ւորաց: Քահանայապետն շատ համարէր
արգելուլ զնոսա ՚ի դիպահոջ, ՚ի խոստո-
վանել նոցա զյանցանսն՝ զոր բազում ան-
գամ առանձինն խոստովանեալ էին: Եր-
կուք ՚ի նոցանէ հնազանդեցան. խակ Մոլա
հանգերձ ընկերաւն յուրաստա լեալ, յու-
ցանէր ժողովրդեան սուրբ զկարգ խր, և
յանձն առնոյր մեռանել ՚ի վերայ ազան-
դոյն: Եթէ չասացեալ էին առքա առանց
՚ի սպառ արգարացուցանելոյ զՏաճարա-
կանս՝ ցուցանել թէ ոչ ամենայն ամբաս-
տանութիւնքն զնոցանէ ճշմարիտք էին,
թերևս հաւատասիմ լինէին բանք նո՛. այլ
յամառութիւն նոցա ՚ի պաշտպանել զկարգ
իւրեանց ընդդէմ աշխարհածանօթ և հա-

եասան ասուպուԹեանց՝ խառապոյց զվերս Ժողովրդեան, և վՀաս գասաւորաց՝ այրեցան կենդանեօքն ի փայիղ ի կղզեակ մի Սենայ գետոյն (1314)։

Ընդ այսէս վախճան եղև գԺնդակ պատին զորմէ բազում առասպելք և ջարդխօսուԹիւնք յաձախեցին. իսկ Թէ բանուԹեամբ ասնջանաց առեալ ի բերանոյ Տաճարականաց զխոստովանուԹիւն յանցանաց. և Թէ Մոլայ ի միջոց բոցոյն կոչեալ զքահանայապետն և զմագաւորն երևել ի նմին ամի յասեներ Ասուածոյ, որում մահ կղեմայ և փիլիպպոսի ի նմին ատրուոջ հանդիպեալ էս պատճառս։ Սակս է և այն Թէ ազգուԹիւն կղեմայ և փիլիպպոսի առիԹք լեալ իցեն առելուԹեան նոցա ընդդէմ Տաճարականաց. զի աշխարհաքարող հրաչակեցաւ սահմանել ընչից նոցա ի հիւրընկալս և յայլ կարգս ազգեսցոյ։ Դարձեալ և շատ իսկ հաւասարք են արդարուԹեան գործոյն երկար հարցափորձքն, և բազմուԹիւն վկայից որ ի Գաղղիա, ի Կաստիլիա, յԱրագոնա, յԻտալիա, յԱնգղիա, ի Գերմանիա. ընտրուԹիւն եկեղեցական և աշխարհական դասուց որք էին արք ականաւորք և բարեհամբաւք. միաբան հաւանուԹիւն ամենայն քրիստոնէից ի պատուհաս նոցին, և պատմագրաց ժամանակին չհաւանել ինչ հակառակ իրացն. և համառօտ ասացեալ, հաստատել ընդհանրական ժողովոյ վՀննայի զվճիռն ի բարձումն Տաճարականաց։ Յիրաւի է ասել համարել Թէ

փիլիպպոս գործոնէն այնուհետև կարևոր ինչ ծառայութիւն մատոյց եկեղեցւոյ:

Յետ բառնալոյ կարգի Տաճարականացն, որպէս ասացի, զամ ի ևս կեցեալ Փիլիպպեայ՝ վախճանեաց զաւուրսն: Էր նա վանական, եռանդուն և լի աշխուժիւք, անվեհեր և առատաձեռն առաւել քան զչափ: Գերեցիկ առաքինութեամբ անշուշտ էր նման սիրելի լինել Տէրոջն, այլ օտարոտոյց զնոսա յինքեանէ ծանր ծանր հարիւք ի ընուլ զչարչարութիւն իւր, և զկարևոր պէտս աէրութեան, մանաւանդ փոփոխելով զտուիղական գրաման: Եւ որք ի պատմագրացդ պարտաւէնն զնա այլովք բազմօք, անպատաւելի զբարս նորա լռութեամբն հատատաւեն:

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Թէ որպէս Թագաւորէ Տէրէն յաջորդեաւ Գերէնիմն Փիլիպպէայ, առանց կարևոր ինչ յիշատակի վարուց նորին:

1314 – 1328.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Ժ. կերպարանօք հեթ նման նախ հօրն իւրոյ Փիլիպպեայ, զուարթամիտ էր բնութեամբ, յեղյեղուկ, աղուսբարոյ, սիրէր յոյժ զծաղր և զբազմապոյծ խաղս: Ի մանկութեան զուարճութեն յոյժ

էր նմա խաղալ ընդ հասակակից ազնուական մանկունս, կարգել զնոսա ըստ պատերազմական օրինի, և հրահանգել յամենայն զինուորական շարժմունս: Այս ծաղրասէր և պատերազմական բնաւորութիւնք նորա, եւսուն նմա զյորջորջումն խեռ: Իսկ ի Թագաւորութեան իւրում ակարամիտ ատրամ ցուցաւ նա. և արժանի դեպք յիշատակի ի Թագաւորութեան նորա է՝ զնա անիրաւ մահ Տ' Ընկեւան Մարիյին գանձապետին, զոր մահանաց յատելութիւն ամբոխին: Եւ պատճառք մահուն եղև Կարոլոս կոմս Վալուայ Հօրեղբայր Թագաւորին, որ զինի ամաց ինչ անկեալ ի խօժոութիւն անբուժելի՝ ծանեաւ զՀեռն աեւան. և չանացեալ առնել հատուցումն ինչ անիրաւութեանն՝ կառոյց չիրիմ ի վերայ Մարիյնի իշխանին, և սիրեաց ոլորմութիւն առաւ ի փարիզ՝ հրամանաւ ազքատաց ազաչել զԱստուած վասն Մարիյնի իշխանին և Կարոլոսի կոմսին Վալուայ: Միւս ևս գեղք եղեն՝ խեղդամահ պատուհաս Թագուհոյն Մարգարիտայ ի պատճառս շնութեան:

Եւ մեռաւ Լուդովիկոս, վասն զակաւելոյ իւրոյ զհետ խաղաց. զի յաւուր միում ջեռեալ ի գնոտակախաղն, և խիթ ի կոզս նորա անկեալ, մեռաւ ի ծաղկի հասակին: Եւ յետ մեռանելոյ նորա, ծնաւ դշնոյն զաւակ ապա՝ որ կոչեցաւ Յովհաննէս Ա. այլ զինի աւուրց մեռաւ մանուկն. և զայս առաջին նուագ յետ Ուկոսի Գաբեթի

անկաւ Թագաւորութիւնն 'ի կոչնական ցեղ Թագաւորին վախճանելոյ (1317)։

Ժառանգութիւն աթոռոյն Թուէր անկ Յովհաննայ գաւառք Լուդովիկոսի, քեռ արքայորդւոյն վաղամեռիկ եղելոյ. այլ Սալեան օրինօք մերժեցաւ նա յանթոռոյ, և կրկին հաստատեցաւ կնոջ մարդոյ մի Թագաւորել 'ի Գաղղիա. և Յովհաննա եկաց դշխոյ Նաւարայ։ Փիլիպպոս մականուանեալն Երկայն՝ վասն երկայնութեան հասակին, երկրորդ որդի Գեղեցիկին Փիլիպպոսի, մերձաւոր ժառանգ աթոռոյն՝ գիտաց խնամատարութեամբ բառնալ 'ի բաց զնախկառավարութիւն իշխանացն ոմանց, և հաստատութեամբ աղգին Թագաւորել 'ի վերայ Գաղղիոյ։

Խոհականութիւն Թագաւորիս և բարեպաշտութիւն և առատաձեռն ազնուականութիւն՝ յոյս առաջի դնէր ազգին, որ և չխաբեցաւ ի նմա. և Թէպէտ համառօտ եղև Թագաւորութիւն նորա, այլ գովելի բազում խնամատարութեամբք։ Բայց եպաշտ Թագաւորս այս խորհուրդ 'ի մտի ունէր անցանել յարևելս ընդդէմ անհաւատից, որք օր ըստ օրէ տարածանէին զաշխարհակալութիւնս իւրեանց 'ի վերայ քրիստոնէից։

Երկուցեալ իշխանացն մահմետականաց 'ի խորհրդոց Թագաւորին՝ յորմէ վտանգ մեծ 'ի վերայ կայր անձանց, յայտնեաւ առնագործն հնարս ձևոն արկին 'ի խափանումն նորին։ Գխաբեալ նոցա զի Հրեայք

բաղում անգամ հալածանս կրեալ ի Գազ-
զիա՝ առելութեամբ էին ընդ ազգին, ա-
ռաջի արարին նոցա այսպիսի ինչ գաւա-
ճանութեի անլուր, գնել զամենայն ջրամ
բարս և զաղբիւրս աշխարհին, որով անմատ-
չի արարեալ զերկիրն՝ խափանեսցեն զչր-
խաչակրաց: Հրեայք երկուցեալ ի լուս-
ացս կարգելոց ի վերայ իւրեանց՝ երկեան
անձամբ կառարել զայն, և յանձն արարին
բորոտից՝ որոց բազմացեալ էր յայնժամ
թիւ ի Գազղիա, հաւանեցուցեալ զնոսա
թէ ոչք միանգամ ոչ մեռանիցին ի թիւ-
նից անտի՝ բորոտեսցին. և այնուհետև հե-
ւանդութիւնն այն ոչնչէ ի նախաձինս գը-
րեսցի, և ոչ ևս հալածեսցին բորոտք կեն-
կենութենէ մարդկան: Գառրեալ ի տուա
յուսոյ տասն, մանաւանդ կաշառակուր
լեալ Թշուառացն, նախ զջուրս կնճնայ
և փոսանոսն գեղեցին. և սկսաւ ան-
հնարին կոտորած ի գաւառան յայնոսիկ:
Ընդէն վազվազակի տարակոյսք անկան ըզ-
Հրեից վասն իրացս, և խնդրակք յուզեալ ի
վեր հանին զահագին գաւն: Յանցաւորքն ի
բորոտից կալեալ, կենդանւոյն այրեցան. և
այլք անկան ի բանտ մշանջենաւոր: Կէսք
ի Հրեից ընոյն պատուհաս ընկալան. և ոմք
ապրեցանն ի հոյ՝ տարագիր եղեն ի թա-
գաւորութենէն: Այնուհետև Թագաւոր-
Թեամբ Փիլիպպոսի յարեաւ խառնիճա-
ղանձ ամբոխ մարդկան, զոր օրինակ առ
Պետրէ գչխոյիւ ի պատճառս ապատու-
Թեան սրոյ երկրին, և ապստամբեցին զգա-

ետուս աշխարհին. այլ վասն ընկճեալ ընչից եան։

Փիլիպպոս Լուկայն՝ մեռաւ անօրդի, և անց թագաւորութիւն նորա յեղբայր նորին ի Կարլոս Դ, որ Գեղեցիկն կոչեցաւ (1322)։ Եւ սա առաքինութեան նմանեալ եղբօրն, խանդարեցոյց զարքայն Անգղիոյ Եդուարդ Բ ի հաշտութիւն հպատակութեան. և զկնի սուղ թագաւորութեան մեռաւ, վախճանեալ ըստ իւր զառաջինն ցկղ Դաբելեան տոհմին, յորմէ կացին հնգետասան թագաւորք որդի ի հօրէ ժառանգեալ զթագաւորութիւն Դաբելի Ուկոսի (1328)։

ԲԱՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

ԳԱՂՂԻԱՑԻՈՑ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐՕՔ ԱՌԱՋՆՈՑ ՅԵՂԻՆ
ԳԱՒԲԷԹԵԱՆՑ։

Ա.

Մ՚ԱՐԷՒ ԱՆՈՒԱՆ Գ՚ԱՂՂԻՈՅՈՑ, ՓՈՐՁ ԱՓԷՈՓՈՑ ՆՈՅԱ, ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՀԷՐԱՒՈՑ, ՊԱՏՄԱՓԱՆ Գ՚ԱՍՏՈՒԱԾ, ՅԻՒՍ ԱՂՈՒԱՒԱՆ ՓՈՒԹՑ Ե ԳՈՂՈՎՈՒՐԴ։

Ի ՍԿԶԲՆ Թագաւորութեան էին առ Փրանկս մակդիր անուանք, այլ յետոյ ուրեմն յաւուրս Կարոլոսեանց հնարեցան, որպէս Հռոբերտաս Լը Ֆոր (ուժեղ), Ուկոս Լը Պլան (սպիտակ), և այլն։ Իսկ ապա առ Գաբէթեան Թագաւորօք վայելուչ ևս համարեցաւ մականուամբ վարել, և ազնուականք՝ ի գաւառաց իւրեանց և՝ ի քաղաքաց առին իւրեանց մականուանս. օրինակ լինի Վիլլառ, Մոնմորանսի, Թիւրէն, Ռոնգէ, և այլն. իսկ քաղաքացիք՝ ի գաւառէ ծննդեան իւրեանց Բէքար, Նորման, և այլն.

կամ յարուեսոխց և ի բնական բարեմասնուԹէ և կամ ի ԹերուԹենէ. որպէս յաձախեն ցարդ առ արեւելեան ազինս:

Ընժանի իսկ է յիշատակել և զձև զգեստուց այնր ժամանակի որ երցի, զի արկանէին նոքա պատմուճան պճնաւոր, զուսպ զբոլոր անձամբն. իսկ ԹեզանիքԷն լայն և երկայն մինչև ծածկել և զձեռն: Աջնուականք և աւագանին արկանէին զպատմուճանաձև վերարկու ամիոսիեալ զաջոյ ուսոյն. իսկ զիջով ածէին գօտի՝ ծոց ի վերոյ գործեալ, զոր փոխանակ քաակի վարկին, որպէս ցայժմ արեւելեայց է սովորուԹիւն: Բայց միայն վաճառականաց ի տան կուԹիւն անկեալոց ոչ էր օրէն ածել զգօտի: Գվնարկ նոցա ոչ այժմեական էր սովորական խոյր, այլ տարազ ինչ գգակի՝ ի ձև կնգղոյ աւարտեալ, տանաւոր ի Թիւականց: Իսկ զօրականաց նախնի տարազ զգեստուց ազգին էր նեղ և կարճ, որով և ծառայք վարէին ի քաղաքս:

Յաւուրս Փիլիպպեայ Գեղեցկի ծայրք կօշկաց երկայնք էին մինչև ցերկուս ոտնաչափս, կիսոց ուղղաձիք և այլոց կռածագ, բերեալ զձև եղջեր, զՁիւրանոյ և կամ զեղջերաւաքսակ պատկերաց: Կօշկացս այսոցիկ յաջորդեցին հողաԹափք կարձք և լայնք երկոտանեան կամ հնդեւոտեան բնաչափ, այլ այս ձև ընդ հուպ արհամարհեալ Թողաւ:

Ծաղրական էր յոյժ և կանանցն ապականօշ, երգաձև անհեԹեԹ ամբարձեալ, ի

կաս զկարդաց իւրաքանչիւր բերելով առնելոցն զարդս՝ որք իբրև զդրօշս առ առանէին ընդ օդս :

Ձախաւորք էին յոյժ Գաղղիացիք՝ ի կերակուրս . յընթերս՝ որ էր զվնասու ժամ կերակրոյ նոցա , որպէս այժմ արևելեայց , կրկին ևեթ առաւակ կերակրոց էին , և Թան . իսկ՝ ի ձաշուն պահասէր Թան , և առաւել Թևթևք էին կերակուրքն : Այլ որ ևս զարմանալին է , այս պարզութիւն էր և յարքունիս Թագաւորաց . ոչինչ աւելի քան զերիս առաւակս կերակրոց սպասաւորէին համեղագոյնք՝ ի սեղան նոցա : Եւ գինի յայգեստանեայց ևեթ արքունի պաշտէր Թագաւորին , որ ոչ՝ ի Կամպանիա էին և ոչ՝ ի Բուրգոնիա , այլ յԱրքեղիոն : Ուր արդ և հասարակ քաղաքացիք քաջ՝ ի լայ են՝ ի ժուժկալութենէ առաւ , և կրծատ լոյց պահլ այս սեղան :

Տեսաք՝ ի կարգի պատմութեանս , զի յաւուրս Մերովեանց և Կարոլոսեանց բաժանէին միշտ հաւասար գաւառք Թագաւորութեան յարքայորդիս . այլ Գաբէթեանց առաջ զղեկաս չարեաց՝ որ առաւ , Թողուին միւսոյն ևեթ զմարդն , առլով այլոց արքայորդւոց գաւառս պաշտաւտականս՝ ի ժառանգութիւն . առկայն և յայսմանէ ոչինչ նուազ զՀնա էին չարիք : Վասն որոյ Գեղեցիկն Փիլիպպոս առ՝ ի խափանել զչարիս ինքնիշխան ժառանգութեան գաւառացն՝ յաւել եդ օրէնս , զի՝ ի պահասել արու զաւակի՝ ի ժառանգութիւն հայրենի

իշխանութեան, գարձցի գաւառն անդրէն
ի սեբուէթիւն թագաւորին: Այսու խոս-
տուն օրինօքս մուծան տակաւ յիշխանու-
թիւն թագաւորին գաւառք մեծամեծ պաշ-
տաւտականք, որ պատակեին զթագա-
ւորութիւնն ի բազում մասունս:

Ընդ թագաւորութեամբ Փիլիպպոսի Ա, յաւուրս առաջին արշաւանաց խաչակիր զօրաց յարևելս՝ հնարեցաւ կնիք ի նշան ազնուականութեան տոհմից: Քանզի զանազան դրօշուց պէտք էին յորոշումն գնդից բազմութեան իշխանացն գումարելոց յայլ և այլ ազանց. և վասն երկաթապատ ապաւազնութեանն՝ հարկ էր նոցա կրել նշանս առ ի զանազանութիւն: Վասն որոյ իշխանք իւրաքանչիւր յաւելին նշանս ի վերայ դրօշուց իւրեանց, և զտոհից և վասհանաց. և զկնիկ խաչակրաց մնացին նշանքն ի ցոյց պատուոյ ազնուականութեան: Թագաւորացդ Գաղղիոյ նշանք էին շուշան ծաղիկ: Նախ Լուդովիկոս Ե սկսաւ կրել զայն. բայց նա և յաջորդք նորա մինչև ցԿարոլոս՝ բազումս ի մի փունջ կրէին շուշանս. իսկ Կարոլոս Ե սահմանեաց երիս հատ ի նշանակ:

Մինչև յԼուդովիկոս ցմանկանուանեալն Յոյր, ոամիկն գոգցեա առ հասարակ, բայց յաշնուականաց և յեկեղեցականաց, ըստ արուկք էին իշխանաց. Լուդովիկոս երարձ օրինօք զայս բռնութիւն իշխանաց, և հաստատեաց արար քաղաքաց գրաւել զհոգի առնելոյ զիւրեանց ազատութիւն, և

ընտրելոյ առանձին քաղաքապետս և վերա-
կացուս : Եւ առաի սկսաւ ազատ վարչու-
թիւն քաղաքաց , որ իբրև փոքրիկ հանրա-
կապետութիւնս կացեալք՝ զօրաժողով լի-
նէին ուրոյն , և խրատքանչիւր ժողովոդա-
պետութիւն ընդ դրօշս իւրոյ սրբոյն հան-
դէպ ՚ի մարտ : Լուդովիկոս մանանուա-
նեալն խեռ ընդարձակեաց զազատութիւնս զայս
և ՚ի գիւղս , և եբարձ ՚ի Գաղղիոյ զանուն
ստրկութեան : Եւ այսպէս զօրացեալ ռա-
ժիկն կարգեցաւ յերրորդ կարգ քաղաքա-
ցւոց , և առացաւ զօրութիւն մեծ յաղթա-
հանութեամբ ժողովս :

Բ .

Ոսկեվառ դրօշ, պէնէ, ջինուորական իշխանու-
թիւնք, ազգ մարդկ և տազտկ :

Ասկ առ Յոյնն Լուդովիկոսիս ՚ի վեր
երևեցաւ մեծահռչակ դրօշն (օրիֆլամ)
ոսկեվառ , որ էր դրօշ կարմիր ՚ի ծայր ա-
կեզած նիզակի : Ի սկզբան անդ դրօշս այս
բերէր զնշանակ աբբայութեան սրբոյն Դիո-
նէսիոսի . այլ իբրև դուքսքն Գաղղիոյ պահ-
պանք աբբայութեանս ամբաւձան ՚ի գահ
թագաւորութեան , և այս դրօշ ընդ արքու-
նի դրօշս կարգեցաւ , և երթայր յառաջոյ
Գաղղիական բանակին : Ի խառնել ուրեք
սրբոյն պատերազմաւ , երթայր նախ շքեղ

պայծառութեամբ առնուլ զայն ի սրբոյն Դիոնիսեայ, և յանձն առնէր ուսեք յիշխանացդ, որոյ վկայեալ էր արութիւն քաջութեան: Ա՛յս սովորութիւն եկաց մինչ մինչև ցկէս հնգետասաներորդ դարուն:

Հանգերձեալքն սպառազիներ յոտից մինչև ցգլուխ, սաղաւարտ երկաթի ի գլուխ ունելով, վահան ի ձեռս, զրահս վերայ, լանջապանակս ի կուրծս, բազպանք և ձեռնէք և բարձպանք երկաթիք: Դժուարին էր երթիծանել զինուց յատրութիւն զայս օրինակ սպառազինելոց զօրաց. այլ յանկանել նոցա միանգամ յերիվարէն՝ անմարթ էր կանգնել վերայիս, և յաշխոյժ մատանէին ի ձեռս թշնամւոյն: Զէնք նոցա էին սուսեր, վաղակաւոր, նիզակ, սակր և լախտ. երկայնութիւն լախտին էր չորս ոտնաչափ, բերելով ձեռինց ծայրին կախեալ շղթայիւ գունտս կրկին երից կամ չորից լտերց ծանրութեամբ, էր զի և սատանայ խակ և երկոտասաներից ըստ զօրութեան բազկի քաջի զօրականին:

Հեռաւակախաւմբն՝ որ չէր այնչափ ի յարդի, պատերազմէր աղեղամբ, պարսատկաւ և տիգաւ: Ի պաշտպանութեան քաղաքաց մանգղիոնս ի կիր արկանէին, և ամբառնիգ մեքենայս ի կործանել զմարտկոցս. ական հատանէին՝ ի բրել զհիմունս պարսպաց. աշտարակս փայտակերտս գնայուն կանգնէին՝ ի վանել զպաշարեալսն ի պարսպաց: Ուխտն էին յայնժամ հրահանգաց մասին հնարիք: Բազումք ի զօրավարաց ազգս էին

արուեստի բանակ հարկանելոյ, պատրաստելոյ զպաշար զօրաց, և հնարիլ պաշտպանելոյ անձանց՝ յընկրկիլն ի հակառակարտ. ամենայն հարստարուեստութիւն նոցա ամփոփէր՝ ի յարձակիլ ի խառնուրդս մարտի, ի մղել զպատերազմին առատութեամբ, ի նեղել զթշնամին, հատանել անցանել ընդ մէջ զօրաց. որ առ հասարակ զնախնի ժամանակաց գեռ ևս զպարզութիւն առաջի առնեն մեզ:

Հնարէին անուանք պատուոյ՝ գունդ գլխատակ (սպարապետ), Մարեշալ (զօրավար), Ամիրալ (ծովապետ) առ երրորդ տոհմիւ Թագաւորաց: Ի սկզբան գունդատակն էրն ալբունեաց, և տակաւ առաւելեալ յիշխանութեան՝ յերկուտասանեորդ դարուն ամբարձաւ ի Փիլիպպոսէ Օգոստեայ ի սպարապետութեան պատիւ: Ընդ սմին Թագաւորաւ կարգեցաւ և իշխանութիւն Մարեշալի, որ զառաջինն մի ոք ևէթ էր. ապա յաւուրս սրբոյն Լուդովիկեայ յաւելաւ և երկրորդ. առ Փրանկիսկեառ Ա, և երրորդ ոմն: Իսկ առ յաջորդօք տակաւ բազմացեալ թիւ նոցա, առ Լուդովիկեառ Ժ.Գ եղեն անհամար: Եւ ի բառնալ պատուոյ անուան գունդատակին՝ յաջորդեաց յայնժամ իշխանութիւն Մարեշալի, և ամբարձաւ յառաջին տեառնէն զինուորական իշխանութեան: Իսկ ծովապետութեան անուն մեծարանաց՝ յաւուրս սրբոյն Լուդովիկոսի հնարեցաւ, ի սկսանել Գաղղիոյ զօրանալ

և ընդ ծով նաւատորմիւ, և պատկառելի լինել օտարաց:

Իսկ յոյժ արտաքոյ բնութեան պատերազմի որպէս այժմ՝ ի ձեռն գետանոյց սպդ լինելը, յետս դնոյս կոչելով. այլ այն՝ ջրեղ պաշտօն, է զի և վտանգաւոր իսկ, ասէնդէր սինկքոր մարդկան՝ որ քարոզք պատերազմի կոչէին, և սրբազանք անձինք նոցա հանդերձէին: Յանդիման լինէին առքա յալքուածիս Թագաւորաց Թշնամեաց, և տային զպատերամ և զբոլոք առաւն իւրեանց. և ի հետաձել նոցա ապառնային զմարտս, և այս լինէր նշան կռուոյ և Թշնամութեան:

Քաղաքաց ժամանակին՝ որ բազմօք զանազանէին յայժմեան քաղաքաց, անձուկք էին փողոցքն և նեղք, բազմապատոյտք, հեղձամղձուկք և ապականիք, որով միապաղաղք առողջութեան էին: Խնամս հրամայէր ի վերայ քաղաքացոց միանգամ յեօթնեկի մաքրել զաղտեղութիւնս կուտակեալս առաջի դրանց. այլ անգործ հրամանն այն լեալ յաճախ, և անանց լինէին փողոցքն: Զայս ապականութեան մարմինք համարել պատճառս տարափոխիկ ախտից յաճախելոց յայնժամ, զորս խնամատուն տեսչութիւն ի բազմաց հեռակ եքարձ յաշխարհէն:

Սովորութիւն էր միշտ յերկոտասանեւորդ գալ, սպդ առնել ի ձմեռանն ի հնչիւն զանգակի յեօթնեւորդ ժամու երեկոյին՝ մեկնել իւրաքանչիւր ի տուն իւր, և խափանել զկրակ ի զգուշութիւն ի վտանգէ հրդեհի. և արգելուն կարևոր իսկ

էր զգուշութիւնս այս ի ժամանակին՝ յորում փայտաշէնք էին տունք և ձարտարութեն հնարիս ի շինուցանել զերդեհս չև ևս էր ծանուցեալ: Դարձեալ գիշերի ի մայրաքաղաքն և յայլ երևելի քաղաքս գոնդ մի քաղաքացւոց հսկէին ի գիշերապահ զգուշութիւն, շուրջ եկեալ ընդ լճաղս:

Գ.

Փարլամէնի կամ խորհրդարան, դաշտ, գէ-գտ, հանապարհ և բանապէզիտ:

ՅԱՒՈՒՐՍ Մերովէանց և կարողսաէանց աւենայն դասատուանք և վճիռք ի ձեռն ազքային կամ փոխանորդի նորա կոմսին արքունեաց խորհրդով աեպհաց լինէին: Ապա յաջորդեաց խորհրդարանն, յաւելեալ ի թիւ քան տասնածելոյ իշխանութեան թագաւորաց ի գաւառս աս գաբէթեան տոհմիս: Առաջին ժողով նոցա կարգեցաւ ի Փարիզ. այլ թէ երբ, անյայտ է ամենեքեան:

Հարկ ի վերայ կայր գասատիպին անձամբ յանդիման լինել գասատուաց յաւուրն, և խօսել զերատուսն իւր. և յորժամ յայլմահարերն, ամօթալից և կորագլուխ եղանէր յերեսաց տեառնին: Ուր տուողութիւն ի սկզբան անտի թագաւորութեան եկաց մեծաց մինչև ցհնգետասաներորդ

գար: Ընդ ամենասաստիկն քաղցրութիւն առնէին միշտ: Եթէ ազնուական ոք ամբաստանէր էր կամ՝ ի կղերոյ կամ՝ ի կրօնաւորաց, մարթ էր նմա՝ ի ձեռն փոխանորդի տալ պատասխանի. նոյն ազնուութիւն էր և կանանց: Բայց սրանց այնքան էր իշխանութիւն՝ ի վերայ կանանց իւրեանց, մինչև դանել իսկ զնոսա, բայց միայն առանց վասանդի կենաց կամ հաշմանդամն զնոսա գործելոյ:

Այսպէս յեանեալք էին գեռ ևս յայնժամ Գաղղիացիք՝ ի քաղաքականութեան. սակայն ոչինչ նուազ ծաղկէին՝ ի գիւտս արուեստից: Ա. Ուկոմս Գաբէթաս հնարեցաւ ժամացոյց ձօճանակաւ. զրկեթ՝ ի նոյն ժամանակս և արաբացի նշանադիրքն վոխանակեցին ընդ հռոմէականացն, և զարգացման թուաբանութեան էզին ձեռնտու: Ամօք ինչ զկնի կի արևնոացի եգիտ զարուեստ երաժշտութեան բազում մասամբք, և հարթեալ գիւրացոյց զայն՝ ի վարժ մանկըտաց: Ի ժամանակին յայնմիկ զարգանային և ճարտարապետութիւն. քանզի ամենայն մայր եկեղեցիք Գաղղիոյ, յիշատակարանք հանճարոյ և ճոխութեան և բարեպաշտութեան մարդկան ժամանակին, երկատասանեւորդ և երեքտասանեւորդ դարուց են շինուածք: Եւ թէպէտ գոթացի էր յայնժամ ճարտարապետութիւն, այլ վեհմութեամբ և հոյակապ շքեղութեամբ զարմանալի. ընդ որս եթէ զնեաս այժմեան շինուածս՝ ի կշիռ համեմատութեան ած-

ցուք, գծուծս գտանիմք զսոյա և անշուքս: Ի ժամանակին յայնմիկ մուծան ի Գաղղիա և հռչակաժ աղօրիք, գիւտ Արտաքսուց ածեալ ի ձեռն խաչակրաց Անտիոք: Մեծ եղև յերկոտասանեւորդ դարուն և գիւտ կոլմնացոյց գործոցն, զոր Գաղղիացիք իւրեանց համարին գիւտ, այլ խնգիր է անհատասան, նոցա արդեօք թէ այլոց իցեն պարծանքն:

Երևելի էր յայնժամ համալսարան Փարիզու, յորում ընդ լեզուագիտութեան ուսանէին և գքերականական մակացութիւնս, գբանասիրական գոլորութիւնս, գբժշկութիւն, գնիրաւաբանութիւն և գաստուածբանութիւն: Հիմնեցաւ համալսարանս այս ի մէջ կոյս երկոտասանեւորդի դարուն, և յետ ամաց ինչ այնպէս ծաղկեալ գոլ գտցաւ, մինչև օրինակ կալ ամենայն համալսարանաց: Բազում էր յոյժ թիւ կաճառորդաց նորա, մինչև ի ժողովն ուրեք համարել բիւր մի գուէից: Բազում և մեծամեծ շնորհս ազատութեանց ընկալաւ նա ի թագաւորաց ժամանակին, այլ ոչ գիտաց խնամոութեամբ վարել նոքօք. վասն որոյ առեալ հարկ լինէր գտաւորաց նուաճել զընթացս համբակաց համալսարանին՝ խրոխտ և յանդուգն երիտասարդաց: Իսկ ի վերջ երկոտասանեւորդի դարուն կարգեցան և առանձին ուսումնարանք բժշկութեան, յորում տակաւին յետնեալ գտանէին յոյժ Գաղղիացիք:

Ընդ թագաւորութեամբ Կրսերոյն Լու-

գովելոյ սկսան ելանել զառաջինն բանաստեղծ՝ Թրուպատուր յորջորջեալք, որք նախաշաւիղք կացին գողղիական բանաստեղծութեան: Սոքա ի Փրովանս ի հայրենի իւրեանց գառաւէն ամուսնացան ընդ ամենայն Գաղղիա նուագարանօք. և ցնծութեամբ ընկալեալ զնոսա ժողովրդեան, զի և նոքա զիմաստութեան ի լոյս սքանչելի ներգաշնակութեանցն: Իսկ ի սակաւ ժամանակի այնպէս հռչակեցաւ անուն քերթողացն՝ մինչև մուսա գառանել նոցա և յարքունիս: Յառաջ ի Թագաւորական հանդէս հասեալ, և ընդ հոգիահրաշ բանաստեղծութեան՝ զգողալ զերաժշտութիւն կցորդեալ, յառաջեկին զնուագահան դիսից. և Գաղղիացիք առ հասարակ սկսան քերթութեան և երաժշտութեան՝ ծափառանձայն գովութեամբ խրախուսել զքերթողն, մեծապատիւս զնոսա մեծարել:

ԹԱԳԱՒՈՐՔ

ՎԱԼՈՒՆԵՑՒՆ ՅՆԳԻՆ

ԳԱՐԻԹԵԱՆՑ.

ԳԼՈՒԽ Ա.

Թագաւորութիւն Փիլիպպէոս Ա. Վալուայ, և խորհիլ նորա պատերազմաց ընդդէմ Եդուարդայ:

1328 – 1338:

Յետ անդր երկու ամաց ածէին Թագաւորութեան Գաղղիոյ, առաջինն՝ Եդուարդ Գ. ազգային Անգղիոյ՝ որդի դստեր Գեղեցկին կարգեալ, և երկրորդն՝ Փիլիպպոս կոմսն Վալուայ Հօրեղբօրորդի նորին կարգեալ. բայց Սալեան օրինօք մերժեալ Եդուարդ՝ ի գահէն, ամբարձաւ յայն Փիլիպպոս միաբան հաւանութեամբ ազգին. և՝ ի նմանէ սկիզբն էառ ցեղն Վալուեանց: Երկեալ եղև ժամանակ Թագաւորութեան նորա

յաջող և ձախող դիպաք. այլ այս խոկը էզև ապեւսալն, զի սուղ են յաջողութիւնք զինի երկար տրկածից, որով սասանեալ Թագաւորութիւնն ընդ անակնկալ գան հարուածովք՝ առ յաջորդաւ նորա անկաւ ի տապնագ անհնարին:

Սկիզբն Թագաւորութեանն Փիլիպպոսի բարեդուշակ հանդիսացաւ վասնաւոր յաղթութեամբն ընդդեմ Փղանդրացւոց: Քանզի ժողովուրդս այս սղմկասէր և խլրտուն՝ նչկահեաց զինչման իւր զկոմն աշխարհին. Փիլիպպոս ձեռն էառ կոմանին, որ ապատան լեալ էր յիւր օգնականութիւն. անց զօրօք ի Փղանդրիա, և պաշարեաց զՔասսէլ: Եհաս անդէն բանակն ապստամբաց գումարեալ ի բազմութենէ անհրահանգ մարդկան, յարուեստաւորաց, ի ձկնորսաց և ի գիւղականաց վառելոց ի զայրագին կատաղութիւն: Զօրավար նոցա ձկնավաճառ ոք Ծաննէք անուն՝ այր հանճարեղ և յաջողաձեռն, փոխանակ պատերազմական արուեստի և հմտութեան՝ ունէր յանդուգն համարձակութիւն և խորամանկ նենգութիւն: Թէպէտ այսպիսւոյ ուրուք զօրավարի և այսպիսի զօրաց նորա էլանէին ընդդեմ Փիլիպպոս՝ հզօրն ի Թագաւորս աշխարհի և ազատակոյտ քաջքն Դաղլիացւոց, սակայն գժուարաւ ապրէին ի բուռն յարձակմանէ խառնիճաղանճ ամբոխին: Որով ժպրհեալ նոցա և ևս, կալան զանմատոյց բարձրաւանդակն յանդիման Քասսէլայ. և դրօշս ամբարձին ի գլուխ գնդի իւրեանց,

նկարեալ ունելով ՚ի վերայ ապտակ, և այսպիսի արձանագիր ծաղրական.

Ի ԲԱՐԲԱՌԵԼ ԱՔԱՂԱՂԻՍ ԱՅՍ Ի ՍՄԱ ԼԻՑԻ ՏԻՐԵԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՓԱՍՍԵԼԱՑ:

Ընդհանարհեցին Գաղղիացիք զժպիրհ համարձակութիւն Փղանդրացւոց, այլ վասն յանդուգն արհամարհանացն փոքր միւս ևս և ձախողէին իրացն եղք: Քանզի իբրև ՚ի դիներբուս մտեալ զօրքն ՚ի խաղս, ՚ի կաքաւս և ՚ի հանգիստ քնոյ անցուցանէին զօրն ՚ի բուն, իրաղեկ լեալ Ծանննեքայ խորհուրդ յանդուգն կալաւ՝ յարձակել ունել զձմեռոցն արքունի, և զինքն իսկ զԹագաւորն ձերբակալ առնել. վասն որոյ զմիջաւուրբ մերձեցաւ լռիկ ՚ի բանակն Գաղղիացւոց, և յանկարծ անկեալ ՚ի վերայ, մինչև ցվրան Թագաւորին: Կոտորած բնաջինջ ՚ի վերայ կայր բանակին, եթէ ոչ Թագաւորն իբրև զԳեղեցիկն Փիլիպպոս՝ որ քան և զբիւք ամօք յառաջ ՚ի նոյն գէպս շահասահակեաց, յարձակէր դիմագրաւ ՚ի փրկութիւն զօրացն իւրոց: Քանզի ՚ի լսել զաղաղակ սագնաւորին՝ եղ յերկիւղ, և փոքու դնդաւ ազատութեան քաջութեամբ զդէմ կալաւ դազանաբար յարձակմանն Փղանդրացւոց և կասեցոյց զնոսա. մինչև սմաստեալ Գաղղիացւոց, և ռազմ գործեալ յամենուսին դիմեցին ՚ի վերայ: Ընդ հեծելազօրն հասոյց հարուած մեծ ՚ի վերայ հեռևակ գնդի ազգսասանութեան, սասանակեալ ՚ի նոցանէ արս քան

հազար զօրավարսն հանդերձ : Այսպէս խորասոյզ առնէին ծածկեցաւ ապրստամբութիւնն ի գաշտին Քասեւոյ, և փիլիպպոս լծորդեալ ընդ քաջութեանն և զառաջնորդութիւն, դարձոյց ի կոմսն զամենայն զքաղաքս Փղանդրիոյ :

Համբաւ մեծի յաղթութեանս շարժեաց զԹագաւորն Անգղիոյ զԵդուարդ գալ ընտանեաբար օրինացն անձամբ՝ նախանձանել զսպաս հպատակութեան իւրոյ Թագաւորին Գաղղիոյ վասն դքսութեան Կիենոյ : Քանզի այս օրէնք էին նոցա, գալ բացաւ գլխով անկեն առաջի Թագաւորին և ի ձեռն իւրեաց երդնուլ զհաւատարմութիւն : Թէպէտ դժուարաւ ընկճէր իրոխոպն արքային Անգղիոյ յայս նուաստութիւն, սակայն մեծաւ դժկամակութեամբ մնայր հատոյց զայս նարկ ծառայութիւն : Այլ այս նեղքին ցաւուն դժկամակութեան ոչ յապաղեաց ի վեր երևել, քանզի գոռոզ փառասիրութեան վառեալ և ևս զհուր ցասման յարոյց զինս ընդդէմ Թագաւորին Գաղղիոյ :

ԳԼՈՒԽ Բ.

Վասն պատերազմաց որ ի մէջ Խաչառօրին Անգղիոյ և Փիլիպպոսի, և պարտութեան Գաղղիացոց և ի Քրէսի.

1338 – 1346.

Զ ինչ պակասեն բաղբաղանք զայրագին և վիժխնդիր ոգւոյ, և բազում այն է զի անհեթեթքն ի պատճառաց ազդոզագոյնք համարին. և ահա փոքմով եցոյց զայս յանձին Եգուարդ Թագաւոր Անգղիոյ: Թէպէտ եղև, դրդռեաց զՓղանդրացիս նիզակակից լինել ինքեան, և սեսեալ զի նոքա Թէպէտ ըղձակեր լինէին իրացն, այլ խղճմտէին զի մի երդմնազանց գտցին, քանզի ուխտեալ էր նոցա մի ևս զէն առնուլ հակառակ Թագաւորին Գաղղիոյ. խորհեցաւ կրկին ձեռն արկանել յիրաւունս իւր ի վերայ Թագաւորութեան աշխարհին, և հռչակեաց զանձն Թագաւոր Գաղղիոյ: Ըստ եղև այս անհեթեթ գիւտ մտաց ի բառնալ զնիզակ Փղանդրացւոց, և անդրկեայ այնուհետև գիմեցին ընդ գրօշս Եգուարդայ (1339): Եւ սկսաւ յայնժամ մարան բազմանալ որ երբէք երբէք ընդհատեալ՝ զայրագին ևս անդրէն սկսանէր, և սեպր վինչև տամն 1450, գոգցես իմն բնա-

ջինչ կորուստ Թագաւորութեանն ապահովացեալ:

Յառաջնումն Ճակատամարտի անդ՝ Փիլիպպեայ յաջողեցան երկու, այլ մեծ եղև ոտիճ կորստեան նորա ի նաւամարտին Էքլիւզայ: Նաւատորմին Դաղղիացւոց ի հարիւր քան մեծամեծ նաւուց կազմեալ, և քառասուն հազար նաւամարտիկս ունելով, զափամբք քէրեր Փղանդրիոյ՝ արգելուլ ընդ ուարդ ի ցամաքէն: Փիլիպպոս հաստատեր պնդութեամբ զամենայն ինչս յաջ եղեալ խափանել զանցս արքային Անգղիոյ ի Փղանդրիա, պատուէր տայր զօրավարացն զգոյշ կալ. զի եթէ մոռանէր Թշնամին ի նեղքս, մնայր նոցա մահ չարաչար: Զախողեցին եղք խիստ և անխոհուրդ հրամանին, քանզի յերևիլ անգղիական նաւատորմին ի բարձունս Էքլիւզայ, և Փղանդրացւոցն նաւք հասին անդէն յօգնութիւն, և զօրավարացն Դաղղիացւոց սոխակալ մարտ դնել ընդ հզօրագունին քան զինքեանս, քաջութեամբ ոգւոյ կամ Ճշգրտագոյն ևս ասել՝ յուսահատմոլեգնութեամբ բախեցան ընդ Թշնամւոյն, առաջի աչաց նկատելով յաղթութիւն կամ անձնապրկելի մահ: Զառաջինն՝ յիւրեանց կողմն Թուէր յաղթութիւն, այլ Անգղիացիք Ճարտարք ի նաւավարել, կէզծ փախստեամբ կալեալ ի նպատս իւրեանց զհոլմն յաջող, և օգնութեամբ Փղանդրացւոց ի մէջ առեալ պատերազմին զԴաղղիացիս. և առաւ և անտի հարեալ կոտորելին զնոսա ի սպառ ի սպառս

ջախջախանս: Ա յսօրինակ ահա անխոհական խառնութիւն փիլիպպոսի՝ հասոյց կորուստ երկոտասան հազար արանց, հանդերձ զօրավարօք և գոգչես ամենայն ծովային զօրութեամբ (1340):

Յետ պատերազմին Էքլիւզայ՝ որ չէած գետ ևս յեղափոխութիւն ինչ մեծ ընդ միջ երկուց թշնամեաց, եղև գոլ զինուց. այլ անդէն յամին երկրորդի վերատին բորբոքեցաւ հրդեհ մարտին վասն գքսութեանն Բրիտանիոյ: Քանզի գուքսն Յովհաննէս իշխան գաւառին մեռաւ անորդի, և ելին հակառակութեամբ ընդ միմեանս ազգակիցք նորա Կարոլոս որ Պլուա և Մոնֆոր՝ յինքեանս գրաւել վիշխանութիւն գաւառին. Կարոլոսի ձեռն տայր արքայն Գաղղիոյ և Մոնֆորայ Թագաւորն Անգղիոյ: Եւ սակաւ պատերազմն այս զամն քան և չորս. ուր բազում մեծամեծ արութիւնք գործեցան, ոչ ինչ նուազ և նենգք և խորամանկ ապանութիւնք 'ի նեըքս խառնեալ: Քանզի և Թագաւորն փիլիպպոս անարժան արքայավայել մեծութեանն, 'ի խազս ուրեք ընդ Բրետան իշխանս, կալաւ նենգութեամբ զարս երկոտասան 'ի կուսակցաց Մոնֆորայ, և խժադար 'ի մահ ետ զնոսա. սակայն այսու ոչինչ օգտեալ, և ևս յաձախեաց զիւր թշնամիս: Յարեաւ ընդդէմ նորա և սիկին ոմն այրի Օլիւիէի Քլիսոնի՝ որ էր մի յանիրաւի կոտորելոցն, կին այրասիրա՝ որ լի ցասմամբ յարձակեալ յեղակարծումն յամրոց ուրեք արքունի, կո-

առեալ զպահակապանս, և ի բուռն հառ
նեմուրն:

Գրգռեցաւ յոյժ ամ վերոմն և ար-
քայն Եգուարդ, զկնի բազմամեայ ար-
շաւանացն և յաջողութեանց և աւերե-
ց զբազում գաւառս՝ թափել յանկարծ
զկամն ձիոյն բազդին՝ մինչդեռ յանհոգս
նառէր փիլիպպոս: Վասն որոյ թողեալ զկին
յարձակեցաւ ի Նորմանիա, և ընդ Մե-
նա գետ հասեալ մինչև ի Փարիզ՝ արկեալ զահ
իւր և զերկիւղ և զաւեր զգաւառաւքն, ընդ
որս էանց: Զօրաժողով եղև փիլիպպոս, և
բազմութեամբ քաջաց Գաղղիացւոց զա-
ռաջս էառ արշաւանաց թշնամւոյն. վասն
որոյ ոչ համարձակեալ Եգուարդայ գալ ի
կռիւ, մեկնեցաւ ի Բիքարտիա, և խորհեր
գրոհ առնել անակն ի Փլանդրիա, այլ հա-
սեալ ի Սոմ, եգիտ զկամուրջն գրաւեալ
ի թշնամեաց: Եկն եհաս և փիլիպպոս
զօրօք խրտովք ընդդէմ նորա. և եթէ ոչ
առաջնորդութեամբ Գաղղիացւոյ ուրուք
վասն գերելոյ ի մարտին՝ զերծեալ Եգուար-
դայ անդր քան զԱպեվիլ քաղաք, և անակ
անցեալ ընդ գետն ամրանայր ի բարձրա-
բանդակն մերձ ի Քրէսի, կորուսեալ անզեր-
ծանելի նմա ի վերայ կայր: Եկեալ հասին
Գաղղիացիք զայրագին ցասմամբ, և անդէն
յառաջապահս գունդն ընդդէմ հրամանի
թագաւորին խառն ի խուռն գիմեցին ի
պատերազմ թշնամեաց: Ընդդիմացիք ամրու-
թեամբ տեղւոյն և խոհական խնամոու-
թեամբ զօրավարին արիացեալ, վանեցին

զարթնակութիւն, և զնախահակարգ ռազմ զօրացն ի վերայ երկրորդականացն արկեալ, խռովեցին զբանակն ողջոյն, և զփախստեից դիմեալ զհետ՝ անհնարին կոտորած ի վերայ հասուցանէին: Այլ սպարապետ Թագաւորն Փիլիպպոս վերջապահ զօրօքն յառաջ խաղացեալ ձգնէր վերատին ձակատ յօրինել. քանզի ահիւ մեղկացեալ իւրոցն ցկուր և ցան վարատէին. միայն արք վաթսուն վասն կենաց և փառաց Թագաւորին զոգիս ի բուն եդեալ, մարտական սաստկապէս ցշունչ յիւսին, և քաջաբար անկան առ նմա: Ընդ և Փիլիպպոս յուսահատ խորհրդով ըղձայր մեռանել ընդ նոսա, այլ իւրոցն բռնի զանձից երիվարին ձգեալ, արտաքս հանին զնա ի բանակէն. Թողեալ զհեղձակոյտ դիականց անկելոց ի քաջայն Գաղղիացւոց և յաղաս սրերոյ սպանչ երեսուն հազարաց:

Պատմին ասա ի պատերազմիս սկսեալ Ընդղնացւոց ի գործ արկանել զհրազէն անօթս, և նոքօք ահ արկեալ Թշնամեաց. այլ հաւաստի է, զի անխոհականութեամբն և անհոգ վստահութեամբ Գաղղիացւոց՝ զօրացեալ կալան նոքա զայս մեծ յաղթութիւն. և մեծանուն հռչակեցաւ ի մարթիս արքայորդին Ընդղնոյ իշխանն Կեսաւ՝ պատանի հնգետասանամեայ:

ԳԼՈՒԽ Գ.

ԴԷՊ՚ ՊԱՇՐՄԱՆ ՔԱԼԵԱՅ, Ե ՎԵՐՋԻՆ ԱՄՔ ԲԱ-
ՀԱՈՐՈՒԵԱՆ ՓԻԼԻՊՊԵՈՅ:

1346 – 1350.

ԴԱՐՁՈՑՑ անդէն Եդուարդ զյաղթա-
կան զինս իւր ՚ի վերայ Ծովեզերեայ մեծի
և կարևոր քաղաքին Քալեայ: Չզօր էր
քաղաքս և ամրացեալ պահակապանօք,
որոյ և քաղաքապետ էր յայնժամ մեծա-
նուն Յովհաննէս Վիէննացի (ՙյան որ
Վիէն). սակայն զինի մեռանելոյ պա-
շարմանն և քաջապէս արիանալոյ քաղաքա-
ցւոց, չմարթացեալ և ընդդէմ սովոյն հը-
նարս ինչ հնարել, խոնարհեցաւ ՚ի հաշ-
տութիւն հպատակութեան: Բայց Եդուար-
դայ ցաւուցեալ ընդ երկար դիմակալութի
բնակչացն՝ պայման խիստ և անգութ ա-
ռաջի արար նոցա զի ամբ վեց յերևելեաց
անտի ՚ի քաղաքացւոց, բոկոտն, մերկ, շապկօք
միայն ՚ի թիկունս, և չուան ՚ի պարանոց,
ածցեն նմա զբանալիս քաղաքին, և ին-
քեանք անդէն ՚ի ձեռս գահճացմանեսցին:
Ժողովեալ քաղաքացւոց ՚ի հրապարակ,
իբրև սիրտ ՚ի բերան եղեալ պատգամաւորու-
թեանցն մնային, ընդ լուր անաւորոյն հրա-
մանին յապուշ կրթեցան՝ յուսահատեալք

ընդ եւս իրացն : Ընդ եր լսել զհառաչանս ամբոխին , ղողբս և զաղաղակ : Հասանէր ժամն տալոյ պատասխանի պատգամացն . և իբրև չէր ոք որ համարձակէր խորհուրդ ի մէջ արկանել, ահա յանկարծ յականաւոր այց ոք ի քաղաքացւոց Եւստաքէոս որ Ոչն փիլեր եկաց ի մէջ, և դարձուցեալ զերեսս իւր առ քաղաքացիսն , ասէ . « Տեարք , ակն ունիմ հաւատով Թողութեան մեղաց իմոց ի Քրիստոսէ , նուիրեալով զանձն իմ ի վըկայութիւն Ժողովրդեանս . ահաւասիկ եւ ես : Վէհագն արիութեան նորա նմանողք եղեն և երեք ոմանք յաշնուականաց քաղաքին , յաւելան ասել և երկու այլք , և լցեալ այսպէս եղիցի թիւ՝ երիցային ի զոհ վասն ազատութեան հայրենեաց : Գերարուսար կականաւ ոլորց յուզարկեալք ի քաղաքէն, եղիցի կացին յանդ իսան Թագաւորին Եդուարդայ , որ խոժոռ ակնարկեալ պատուէր եւ անգէն ածել զնոսա ի տեղի պատուհասին : Ի գուր զօրավարք Թագաւորին և իշխանք աղերսէին վասն եղիկերացն . քանզի անողոքելի յամառեալ կայր Թագաւորն , և եթէ ոչ անդ ի բանակին դիպեալ էր գըշխոյն , անշուշտ ի գլուխ եւանէր անգութ վճիռն : Քանզի նա ինքն գշխոյն Փիլիպպէ նա անկեալ առ ոտս արքային առն իւրոյ՝ և ցոյց արտառուչ հզօր բանիւք Թէ քանի աբատաք իցեն վտառաց անուան Թագաւորի այս գործ անողոքմ. և շինուցեալ զցաւուն նորա , ազատեաց զԵւստաքէոս ընկերօքն հանդերձ :

Յայնժամ առեալ Եդուարդայ զքաղաքն դաժարկեաց զայն ի բնակչաց, և փոխանակ նոցա Անգղիացւոց հաստատած բնակեցոյց ի նմա (1347)։ Այս կարևոր քաղաք էրկու պահակ Թագաւորութեանն է կաց ի ձեռս Անգղիացւոց աւելի քան զամս երկերիւր։ Եւ յետ այսորիկ միջնորդ խաղաղութեան լեալ քահանայապետն Հռոմայ ընդ երկուս Թագաւորսն ընդ Եդուարդ և ընդ Փիլիպպոս՝ գուլ լինել վիճաց զամս վեց։

Յամին երկրորդի ի համաշխարհական պէտս Գաղղիոյ յաւելաւ և հարուած ահաւոր քան զպատերազմին։ Ախտ տարափոխիկ, անլուր ի վեպս ազգաց, ձարակեցաւ ընդ ամենայն երկիր։ Սպականեալ զԱսիա և զԱֆրիա, հանոյ Եւրոպա և տարածեցաւ մինչև ի սառուցեալ բևեռն, անհնարին կոտորած արարեալ յազգս, և ի գաւառս գաւառս զքաղաքերորդ մասն միայն Ժողովրդոց Թողեալ։ Անապատացան քաղաք և գիւղք, և ոչ կարէին բաւել կենդանիք ի Թաղել զմեռեալս իւրեանց։ Ի փարիզ անկեալոցն Օմեկ-Տիէօ զօր ամենայն հինգ հարիւր մեռեալս տայր ի գուբս ի Թաղումն։ Յուշ եղև Ժողովրդեան երկրին նենգն Հրէից, որ յաւուրս Փիլիպպեայ Երկային, և պատճառս ալեւոյն զնոսա ամբաստանեցին. և ի գաւառս գաւառս յախուռն գիմեալ կոտորեցին զնոսա անխնայ։ Իսկ բնակիչք այլոց գաւառաց համարեալ զհարուածն մահաբեր առաքեալ ասացաւ

առնսա, երկիւղիւ ի վեղջ և ի բարեպաշտութեմ դառնային. և բազումք ի մեզաւորաց պատուղ արժանի ապաշխարութեան ցուցանէին: Ձարմանէին այս ամենա և ՅՈՎՀԱՆՆԷՍ և արքայ կոստրած մեծ, որով արդեօք Եդեսարդ ի ձգելոյ անդր և զաշխարհակալութիւն իւր յետ առման Քաղէի:

Ոչ երկարակեաց լեալ վճիռն չարեացս աստենային Փիլիպպոս մեռանիլ՝ թողեալ զանուն քաջութեան, սակայն և անխոհակաութեան նորա գործք չէին ի մոռացօնս: Քանզի բարի էրնա, այլ ոչ աչալուրջ, սիրող արդարութեան, այլ անկարդ անուանութեամբ դանձուն յոգիս ապաստան առաքար զժողովուրդն ծանր ծանր հարկօք: Ընդառաջացաւ, զի ընդ Թշնամւոյ՝ որպիսի ոչ Եդեսարդն էր՝ ի կռիւ կաքաւեաց, ոչ կարելով զինամաւք առնել զնա, կամ հարկանել:

Ի յետին ամս թագաւորութեան Փիլիպպեայ մարզ եկաց աերութեան Գաղղիոյ և գաւառ գքսութեան Տափէնայ. քանզի վերջին իշխան գաւառին Հռոմբերտաս եմոզ զերկիր իշխանութեան իւրոյ Փիլիպպոսի, պայմանաւ զի արքայորդին ժառանգ իշխանութեանն Տափէն կոչեսցի, և զի հաւատացին նմա երկիւղիւ հպատակ ճշմարիտ գրամբ: Այլ Գաղղիացիք ի խնդիրս նորա յաւելին և զայն զի յետ այնորիկ զՏափէն անուն պահեցին անդրանկան թագաւորի և պայազատաց գահուն: Դարձեալ ի սմին ժամանակի էառ Փիլիպպոս արծաթոյ զՄանիկ-

Լիկ քաղաք՝ ի Յակոբայ Թագաւորէն Մայորիկայ։

ԳԼՈՒԽ Դ.

Ասպնին յայտ խռովութենան առ Թագաւորն Եւրոպիոյ Յովհաննու Բ. և գերութիւն նորա՝ ի ձեռս Անգլիացւոց։

1350 – 1356.

Անցեալ էր վերնամեծիւք Յովհաննէս յորժամ ամբարձաւ յաթոռ հօր իւրոյ. ՚ի սկզբան Թագաւորութեանն յաջողութեք ամամբք յոյս ետ ժողովրդեան վայելելոյ յաւուրս բարութեան քան առ հարքն, այլ առ սուաւ ծանրացան յաձախութիւնք չարեաց գաղղիոյ։ Տարապայման եւանդն և աշխոյժ քաջութեան նորա, նեղութիւնք Թագաւորին Նաւարայ փեսային իւրոյ, արշաւանք ալբային Անգղիոյ, ածին կուաեղին զամենայն ալէտս ՚ի գլուխ Թագաւորին, և կարասիս եղեն անհնարին ապահանութեան աշխարհին ՚ի բազմաղէտ ժամանակին։

Իբրև Թագաւորեաց Յովհաննէս, առաջին փոյթ նորա եղև ՚ի մահ տալ զԳուենգատասպն զՀրաւուլ Տը Նէսլ իբրև մատնիչ Թագաւորութեան և ձեռնտու ալբային Անգղիոյ։ Եւ կարգեաց փոխանակ նորա

զկարօտս սպանիացի, որ ոչ ընդ երկար վայելեալ յիշխանութեան՝ սպանաւ ի կառոլոսէ ալքայէն Նաւարոյ՝ որ յիրաւի կոչեցաւ Ազգ: Էր սա բազում յառաջամտութեամբ ի բնէ ճոխացեալ, որովք մարթի է չարաց զերծանիլ. աւարտահասակ էր, և գեղեցկագէմ, խորագէտ և նրբամիտ, սեր ճախոս, յաչողակ, քաջասիրտ, առաստաձեռն մինչև ցվատնումն. և ըստ արտաքին քաղցրը բնաւորութեանքն քօղարկեալ ունէր ոգի նենգաժոտ, վրէժխնդիր, անգութ, աչառակ ի դժնդակ պատրանս և յանապարոյն եղբուռնս: Սովորական զբօսանք էին նորա գաւառաձանութիւնք, գաղտնի մատնութիւնք, յայտնի ապատամբութիւնք, սահմռկմունք, սպանութիւն և գերատուութիւն. ծնեալ ի պատուհաս Հայրենեաց իւրոց, զի Գաղղիացի էր և իշխան հպատակ գահուն:

Տաղտկացեալ Թագաւորն ի գաւառաձանութենէ նորա, կալաւ զնա. և սպանեալ առաջի աչաց զկուսակիցս նորա, եդ զնա ի խիստ բանտի: Խնամատարութեամբ արար զայս Յովհաննէս, եթէ ոչ պակասէր նմա և խոհական զգուշութիւն պատրաստ կալ ընդդէմ համախոհից նորին կարօղսի. քանզի ի լսել նոցա Թէ ըմբռնեցաւ իշխանն՝ անդէն ի զէն դիմեցին: Եդուարդ կալմ միշտ աչխատութիւն հատուցանել Գաղղիոյ, ձեռն էտ սպատամբից. և յամենուստ բորբոքեցաւ հրգէն մատնին ի Թագաւորութեան: Մինչդեռ Յովհաննէս զանազը զբաղեալ Նորմանական զկուսակիցս Նաւա-

բացուցն նուաճել ի հնազանդութիւն, իշխանն կալլէսի անդրանիկ որդի Եդուարդայ էլ ի կիենայ, և ասպատակել զԱբերնա, զԼիմուզէն, զՊերի, խաղայց մինչև ցսահմանս Օվէան գետոյն: Եւ խոստեալ թէ գայ Յովհաննէս բազմութիւք զօրաց, քանզի տան հազար ևեթ էին զօրք իւր՝ աճապարեաց խոյս տալ անտի. այլ չգտեալ պարապ, ըմբռնեցաւ ի Գաղղիացւոց՝ որք վէցիցս առաւելուն բազմութիւք քան զնա, և մեծագոյն մասն ի նոցանէ հեծելազօրք՝ մերձեցան առ Պիկարաւայ (Փուաթիէ) քաղաքաւ: Ինոյն գիպ ըմբռնեցաւ յայնժամ իշխանն կալլէսի, յորում ամսեք յառաջ հայր նորա Եդուարդ առ Քրէսեաւ: Զի եթէ յիշատակ Քրէսեայ չափ գնէր բուռն եռանգեան Գաղղիացւոց՝ վասնզ բնաջինջ կորուսեան առաջի կայր Անգլիացի իշխանին, որ քան և ջորից ևեթ ժամուց ունէր պաշար. և զի ի թողուլ զբարձրաւանդակն պաշարեալ ի թշնամեաց՝ սրոյ լինէր ճարակ: Խելամուտ լեալ նորա անձնոտպրելի վտանգին հրեշտակագնաց եղև ի հաշտութիւն. խոնարհեցաւ թողուլ զամենայն աշխարհակալութիւնս իւր, և զամն ևօթն մի ևս զէն առնուլ ընդդէմ Գաղղիոյ: Մերժեցին Գաղղիացիք զպայմանն. և ոչ միայն նեղել զթշնամին ի տուոյ՝ գիմեցին ի վերայ անմասոյց բլուրն: Նախատինք մեծ Գաղղիոյ. ի վանել յառաջապահ գնդին՝ զօրքն ամենայն ի փախուստ աճապարեալ ցրուեցան: Ա յսպէս

վառումեամբ լքեալ յիւրոցն Թագաւորն՝ ինքնին քաջութեամբ պաշտպանէր անձին, յափշտակել խնդ կամելով զյաղթութիւն ի Թշնամեաց՝ ընդ որոց բազմութեամբքն ընկճէր: Ի զուր ազատակիցն ամենուստ անձնատուր լինել. նա անպատասխանի, սուր ի վեր առեալ հարկանէր զանդադար նետեան մերձենալ առ ինքն. ի վախճանի ապա պակասեալ ի զօրութենէն ասիպետացաւ զինքնիկից անձնատուր լինել:

Ընժոնաւոր ցուցաւ փառաց յաղթութեան նշանն Կալլէսի. քանզի ոչինչ ամբարտաւանեալ ընդ շքեղ փառս զինուց՝ իբրև ընդ Թագաւորի վարեցաւ ընդ կալանաւորին խրոմ. զի ի նմին երեկոյի եան նմա մեծահաց ընթրիս, և ինքն ի սպասու կացեալ ոչ կամեցաւ լսել Թախանձանաց Թագաւորին սեղանակից նմա լինել, համեստութեամբ և քաղցրութեամբ պատճառեր զպարտաւպաշաճ յարդութիւն վեհմտիտառ անձին (1356):

Ածաւ Յովհաննէս ի Պոլտոյ, և անտի ի Լոնտոն, ուր եդուարդ օտար ամենևին յաղնուական մտաց որդւոյն՝ պահեաց զինա, խնդրելով պարապ տիրել Թագաւորութեան Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ Ե.

Վասն փաղաքական պատերազմաց Գաղղիոյ ա-
գերութեամբ Յովհաննա, և արքա-
անաց Անգլիոյ:

1356 – 1364.

Ընդ լսել պերճութեան ազգային յաղթու-
թեանցն • բնա-
կիչք Փարիզու առաջնորդութեամբ Հռո-
բեռատան ուրուն, և Սեբաստիանոսի Մարկե-
լեայ քաղաքապետի ընդդէմ ելին արքայու-
դոյն կարոլոսի՝ որ զնոսա թագաւորու-
թեան ունէր: Զառաջինն սակեցին զնա
ազգախտումբ ժողով գումարել, ուր զնե-
զվարճութեան թագաւորութեանն, քան-
նալ զգերծմունս և յարդարել զերջանիկու-
թիւն ժողովրդեան: Սակայն անդէն բըռ-
նացան իշխանքն ի ժողովն՝ և ի նեղ ար-
կին զարքայորդին արձակել զհաւատարիմ
պաշտօնեայն յերկմէ և ամփոփել զինչնա-
նուիրեալ իւր • ի լուծն ջարեաց հանին և
զՀարն կարոլոս յարդեանացն:

Իբրև արձակեցաւ գաղտնս այս ի գա-
ռազէն՝ յարդեցին ընդ նմա և ազմուկք
անկարգութեանց, և անդարմանելիք եղեն
հատարակաց ջարիք: Մխաբանեալ էին գրե-
թէ առհասարակ երկիր և իշխանք, ազնուա-

կանք և քաղաքացիք, զորքն և շինականք ՚ի կործանումն աշխարհին: Բազմութիւն վարձկան զօրուն գումարելոց յօտարոտի ազգաց, յեա խորտակման Պիկատաւայ ճնացեալ անառնիկ և անսանձ, դիմէին ասպատակութեամբ ՚ի գիւղս գիւղս, և աւար առնուին: Շինականք զայրագնեալք առ յուսահատութեան՝ բողոք բարձին զազատորերոյն վասն չարեացս ամենայնի, և յարձակեալ կողոպտեցին զերկիր նոցա, և հրձիգ արարին զամուրս. և ՚ի պատուհաս վատութեան նոցա ՚ի պատերազմին Պիկատաւայ՝ կոտորեցին որոց միանգամ պատահեցան: Եւ ազատորեարն խուճք գործեալ, յարձակեալ ՚ի վերայ գիւղականաց, զոր ՚ի ձեռս բերէին սուր ՚ի վերայ եդեալ կոտորէին: Իսկ ՚ի մայրաքաղաքին Մարկեղոս արքանեկոք իւրովք հանդերձ մտեալ առ արքայորդին առ զակաղ գահուն՝ առաջի նր փողոտեալ յօշ յօշ պատառեցին զերկուս ՚ի զօրավարաց Գաղղիոյ. ատիպեցին և զարքայորդին դնել ՚ի գլուխ իւր զնշան խռովարարացն, որ էր գլխարկ ինչ կարմիր և կապոյտ. զայս ամենայն ժպրհութիւն անպատուհաս գործէր Մարկեղոս՝ զթիկունս իւր հատատ ՚ի թագաւորն Նաւարայ արարեալ:

Յեա այսորիկ արքայորդին Կարոլոս, որ փակեալ կայր յայնժամ յապարանս իւր Լրրև ՚ի բանակի, հնարս գտեալ՝ խոյս ետ ՚ի մայրաքաղաքէն, և գնաց ՚ի Փուավանս, ուր գումարեալ էր յայնժամ ազգախռնճ ժողովով Կամպանիոյ: Երդուաւ նմա ժողովն աղ-

պահուն յերգուին հաւատարմութեան, և միաբան խոստացան ժողովականք ընդդէմ ապստամբաց մայրաքաղաքին՝ տալ մասդիւր զինչս և զկեանս: Ընդ այնուական հաւատարմութիւն կամզանիցացոց, խրախուսեաց և զայլ գաւառս ձեռն տալ Յաղաւորին, և կարողս օգնականութեամբ նոցա գումարեալ զաղատակոյտ բազմութիւն գաւառականաց խաղայր գայր ի պաշարումն մայրաքաղաքին: Յահ և յերկիւղ ընկեալ Մարկեղեայ՝ առաքարեաց ամբոցոյց զՓարիզ, և ընդհանուր ապստամբեաց քաղաքացոց կացոյց զՉարն Կարոլոս: Յայնժամ ժողովուրդք գիւղօքէից անզօրք ընդդէմ հարստահարութեանց, և ծանր ծանր հարկահանութեանց աւագանւոյն, մատնեալք յարհամարհանս քաղաքացոց և յատար զօրականին, շարժեցան գումարեցան ի մի, երդուան մահու չափ կռուել ընդդէմ աղնուականաց: Յարձակեցան հուր հրոյն զամրոցաց նոցա, և չարաչարանք սպանին զբնակիչս. սպականեցին և խողխողեցին զկանայս և զկուսանս, յայն կատաղութիւն ժամանեալ՝ մինչև բռնագատել զմանկունս ուտել զմիս հարցն խորովեալոց ի հուր առաջի աչաց իւրեանց: Թէպէտ այսչափ և այսպիսի չարիս հասուցին խռովարարքս ժաքքի կոչեցեալք, այլ չկարացեալ յաղթել ամրակազմ դնդի ազնուականաց, խորտակեցան չարաչար առաջի զինուց Չարլին Կարոլոսի:

Իսկ անօրէնն Մարկեղոս տեսեալ թէ չէք

հնար Հռոմպրեղոյ յերեսաց ալքայոբղոյին՝ որ պաշարեալ նսեմր զքաղաքաւն, և սեռաներ զանձն ըմբռնեալ յարժանահաս պատուհաս, խորհեցաւ ընուլ զջուր եղեռանց և այնու թերևս թափել զանձն՝ ի վերսահաս կորսաներէ: Եւ զի Թագաւորն Նաւարայ զակիզ ածեալ նսեմր ի սուրբն Դիոնեսիոս, պատեհ ժամու մնալով ի գործ չարուելոյ յարիշտակել զարքայութիւն Գազղնոյ, խոստացաւ նմա Մարկեղոս գիշերապահն մուծանել զնա զօրօք իւրովք ի փարիզ և կոտորեալ զբնակիչս քաղաքին՝ որ հաւատարիմքն էին օրինաւոր Թագաւորին իւրեանց, նսեմցանել զնա ի գահ Թագաւորութեան Գազղնոյ: Իբրև պատրաստեցաւ ամենայն, և Մարկեղոս մերձենայր ի գաւառն քաղաքին բանալ ի մուտ Նաւարացւոյն, Յովհաննէս Մալեստ ոմն ի քաղաքացւոց՝ այր արդարամիտ և քաջակորով խմացեալ զխորհուրդ դաւաճանութեանն՝ յանկարծ եհաս ի վերայ անօրինին, հար զգլուխ նորա վաղակաւորաւն և ձեղքեաց: Եւ այսպէս ի մահ յանգուգն եղեռնագործին՝ վախճան եղև ապստամբութեան, եմուտ արքայորդին ի քաղաքն, և անխափան կալաւ զպետութիւնն (1358):

Պատրեալ ի յուսոյն Չարլ Կարոլոս առ ի քէն վերիժուլ կոչեաց զԹագաւորն Ընդլոյ յօգնութիւն իւր: Եդուարդ՝ որ հանապազ զաշխարհակալութեամբ Գազղնոյ յաճէր զմիտս, զայն ժամ պատեհ վարկուցեալ՝ խաղաց յերկիր Թագաւորութեանն

Յովհաննու, պաշարեաց զՀռոմն քաղաք, դնել անդ զթագ Գաղղիոյ: Զդէմ կալան քաջութեամբ քաղաքացիքն, և չետուն մուտ թագաւորին. և նա թողեալ զպաշարումն, այրեացաւեր ոտնակոխ արար զբազում գաւառս, և եհաս մինչև ի Փարիզ: Խոնջեալ Գաղղիացիք յերկար և ի բազմաղէտ պատերազմաց, խնդրեցին զհաշտութիւն օրինաւոր պայմանօք. բայց թագաւորն վըտահ ընդ որսն՝ զոր ընդ ձեռամբ կարծէր ունել, ոչ մատոյց ունկն դաշանցն: Իբրև յայս սահման էին իրքն, անսովոր ինչ դէպք, վկայեալ յամենայն պատմագրաց ժամանակին՝ ողոքեցին զնա ի խաղաղութիւն: Քանզի մինչդեռ բանակեալ էր նա մերձ ի Շարթր, ահա յանկարծ մրրիկ սոսկալի էջ ի վերայ զօրաց իւրոց՝ և բռնութեամբ խլէր զվրանս. և կարկուտ ծանրակշիռ կոտորեաց որեար բազում ձիան. և զհետ կարկտին յաջորդեալ հեղեղ ջուրց, մղեալ տարաբաւ զամենայն՝ զոր եգիտ առաջի: Հազար այր ի զօրացն Եդուարդայ, և երիվարք առաւել քան զվեց հազար սատակեցան. և մինչ մնացեալ բանակն ի տագնապ տարակուսի կայր, թագաւորն ահաբեկեալ կարծելով զերկինս ընդդէմ իւր զինեալ, եմուտ ի մայր եկեղեցին Շարթրի, և ուխտեաց ուխտ նուիրել զվրաւունս իւր ի սէր խաղաղութեան: Եւ ի դադարել մրրկին՝ պահեաց նա զխոստումն իւր. և յանկարծ այս հաշտութիւն խաղաղութեան կնքեցաւ ի Պրեթինի ծանր ծանր պայմանօք: Չարկ եղև

Թողուլ Անգղիացւոց զփուսաթու, զՍԿՆ-
Թունժ և զ Խմուզէն, որք յաւելան ՚ի կիւն
և ՚ի ման Բնքարտիոյ, որով երկրորդ մասին
Գաղղիոյ իշխան կացին Անգղիացիք: Եւ ՚ի
վերայ այսր ՚ի փրկանս Թագաւորին Յով-
հաննու երեք հարիւր բիւր վահան ոսկի:
Անմարթ էր Գաղղիացւոց գտանել զայն-
չափ գումար ոսկւոյ, և Թագաւորն ոչ կա-
մեցեալ արտասել զարդարութիւն իւր և
զքաջութիւն ՚ի խոյս տալ որդւոյ իւրոյ
յԱնգղիոյ, ուր պատանդն կայր՝ գարձաւ
ինքնին ՚ի Լոնտոն անդրէն ՚ի գերութիւն
իւր, և զինի ամաց ինչ մեռաւ: Եւ յեր-
թալն իւրում, զայս ինչ արժանի Թագա-
ւորի ասաց. «Ի տաբտպիր լինել հաւատալ-
մունէ յայլոց ՚ի մարդկանէ՝ պարտ է գտա-
նել նմա օթևան ՚ի սիրտս և ՚ի բերան Քա-
գաւորաց»: Յովհաննէս Բ եղև արդարև
քաջ և իրաւասէր տասլետս, այլ նուազեալ
՚ի խոհականութեան մասին և ՚ի քաջախոր-
հուրդ մտաց՝ առթեաց զերշուառութիւն
ազգի միոյ ոչջոյն, յորոյ ՚ի բարեբաստու-
թիւն նուիրեաց զգահ իւր և զկեանս:

ԳԼՈՒԽ Զ.

Թէ որպէս Ֆագուրէալ կարուս և Զիճ ի-
նարսան վարդապետն Ֆիլիպոս պէտրամ գա-
տաս իւր ի յէտաց Ադգիոցոց:

1364 – 1380.

Ընդ եղև արքայորդւոյն մահ հօր իւրոյ Յովհաննու, և ինքն Թագաւորեաց: Ոչ շատացաւ նա ի փառաց Թագին, և ոչ ընկճեցաւ ընդ ծանրութեամբ նորա: Ի բազում առնց չեաւ կալեալ զանձն պետութեանն՝ ուսեալ էր ի վաղնջս և ի յոյզս չերկնչել ինչ յիւրաց, և հնարս գտանել ընդդէմ անկարծելի դիպաց: Որ յառաջ քան զնա Թագաւորք, վաղեալ յաշխոյժ պատերազմական արութեանց ելանէին ընդ զօրս ի մարտ, և բազում այն էր՝ զի աշխոյժն այն անխուսուրդ՝ ի սաստիկ վտանգի հասուցանէր զնոսա և զԹագաւորութիւնն: Կարոլոս պիտանեգոյն վարկաւ ի գէպս վտանգին զխանձար առնուլ ի գործ քան զզօրութիւն բազկի. քանզի ոչինչ նուազ փառք են իշխանի պահել զԹագաւորութիւն իւր խոհական խնամատարութեամբ քան ի սուր սուսերի: Համառաւել արդ ի մեծ հակել ի քաջախորհուրդ կարգս առնչութեան, ընտրեաց իւր պաշտօնեայս հաւատարիմս և

իմաստուն, զօրավարս քաջս և հանճարեղս, և եա՛ ի ձեռս նոցա զդունդս զօրաց իւրոց: Ա յսպիսի պարզ միանգամայն և հզօր հնարիւք՝ ի գլուխ տարաւ զգործն, զոր հայրն իւր և հաւ բուռն արուեստիւք ոչ կարացին վճարել: Յարոյց կանգնեաց զԳաղղիա՛ ի նախաստանաց՝ յոր արկեալ էին վիխանք նոցա. խոնարհեցոյց զմագաւորս Նաւարայ և Անգղիոյ, թափեալ՛ ի նոցանէ զգաւառս յափշտակեալս. թիկունս եա դաշնակցաց, հաստատեաց կարգս և հիմնեաց գնաղատելութիւն ժողովրդեան իւրոյ, տալեալ նոցա վայելել՛ ի բարօրութեան ո՛րում՛ ի բաղմաց հետէ անձաշակքն էին: Համառօտ ասել, առեալ զայս ամենայն գործս նորա Թշնամիքն իսկ արժանի գաւեցան տալ նմա զանունդ Զգօն և իմաստուն, ընդ մագաւորս անուանիս կարգեալ գնա: Արդարև իսկ բաղում ազգ են մեծութեան մագաւորաց. և է ուրեք գի նուիրեալ գփառս անձանց վասն բարւոյ հպատակաց, պատրաստեն ինքեանց այլ փառս հաստատուն և անկորուստս: Ա յս օրինակ ահա փառաց ժառանգորդ եկաց Կարոլոս:

Արժան է դասել գԲերթրանա կէսքլէն ընդ քաջ զօրավարս Կարոլոսի՝ որ՛ ի նախնի պայծառութիւն առեալ կացոյց զԳաղղիա: Սա փառք իւրումն դարուն և հայրենեաց, ի ձառանչ նշանաւոր արուեստից ամբարձեալ՛ ի պատիւ ազարտաւորութեան՝ որ Գունդստապլն կոչէր, արուեստիւք քաջութեան և յաղողութեամբ բաղդի վարեաց

զայն իշխանութիւն. և առաջին յաղթութիւն նորա եղև ի սկզբան թագաւորութեան կարոլոսի ընդդէմ զօրաց թագաւորին Նաւարայ, զորս խորտակեալ ի փշրել՝ հնազանդեցոյց զնորմանական դրեթէ առ հասարակ. և մեծապարգև պատուեալ յաղթայէն, ամբարձաւ ի կոմսութիւն Լոնկվիլայ:

Յետ այսորիկ ի նախանձ փառաց տեառն իւրոյ առաւելազանց վառեալ կէսքլէն՝ յարձակեցաւ ի Բրիտանիա գաւառ, և անյաջողութեամբ բազդին անկաւ ի գերութիւն: Այլ ի խաղաղել գաւառին մահուամբ կարոլոսի Պլուայ՝ փրկանաւորեաց թագաւորն զքաջն կէսքլէն, և խմաստուն խորհրդով ի մաքրել զաշխարհն յասպատակութենէ խաղմարար մարդկան՝ ժողովեաց զնոսա ընդ ձեռամբ նորա, և արձակեաց յօգնութիւն Թրանսթամարին Հենրիկոսի: Զառաջինն զօրացաւ յոյժ կէսքլէն, և հալածեաց զանգութ բռնաւորն զՊետրոս յաշխարհէն. այլ իբրև ամբարձաւ արքայորդին Անգլիոյ իշխան Կալէսի յօգնութիւն բռնաւորին, երկրորդ անգամ գերեցաւ կէսքլէն. այլ վաղ զերծեալ ի գերութենէ՝ կրկին զօրացոյց զձեռս Հենրիկոսի, որ իբրև նոր ումն Եաէոկլէս ապան զնզբայր իւր զՊետրոս Անգութ, և թագաւորեաց ընդ նորա (1369):

Մինչդեռ խոհական խմաստութեամբ ուղղեր թագաւորն կարոլոս զառանին երջանկութիւն թագաւորութեան, դեպ լի-

նէր նմա որբել և զնախասահմն Գաղղիոյ՝ որ վերջին դաշամբք խաղաղութեանն ընդ Անգղիացիս: Քանզի բնակիչք կիւնայ բոզոք բարձեալ քրիմնջէին ընդդէմ ծանր ծանր հարկաց արքայորդւոյն Անգղիոյ. Կարօղաս բան նախնի օրինաց Թագաւորութեանն ի դառ կոչեաց զնշխանն արքայազն. այլ նո բա արհամարհեալ զնա, և սպառնալեօք յետս գարձոյց զպատգամաւորսն. ուստի լինէր սկիզբն մարտի, որում ցանկայինն Գաղղիացիք: Զառաջինն զօրացան Անգղիացիք, ածասպարեաց Թագաւորն տալ վերսին զսուր սպարապետութեան ի ձեռս կէսքլէնոյ, որ ընդ ծով և ընդ ցամաք օգնականութեամբ Հենրիկոսի Թագաւորին կատարէալ հարեալ զԱնգղիացիս, և որպէս Թանկն կոչնձիչ գլխոց նոցա լեալ, Թափեաց զբազում քաղաքս ի նոցանէ, նուաձեաց և զԲրիտանիա գառաւ: Ձեռ այսպիսկ իբրև Անգղիացիք սպասատակաւ սրտռեալք ընդ Գաղղիա ի հիւսիսոյ մինչև ցհարաւ՝ այրեցին զբազում գիւղս և սպականեցին զհունձս՝ խմասութեամբ կէսքլէն ոչ գիմագրաւեալ ընդ նոսա ի ձակատամարտ՝ արգել փակեաց զամենայն քաղաքս ընդդէմ նոցա, և ի սով և ի հիւանդութիւն ըմբռնեալ զնոսա կորոյս առ հասարակ: Եւ հուպ ընդ հուպ ի միջոց երից ամաց ամենայն գառաւք հատեալք ի Գաղղիոյ գային խառնէին ընդ իշխանութեամբ բնիկ տէառն իւրեանց, և կիւեն միայն և Քալէ մնային ի ձեռս Եդուարդայ: Եւ այս ամե-

նայն եղեն արդասիք խնամոցն Թագաւորին, քաջութեան կէսքլենայ, և հաստատութեան ազատարերոյ և ժողովրդեան:

Յետ այսորիկ դուլ եղեալ վինուց միջնորդութեամբ Հռովմայ քահանայապետին, մեռանէր Եդուարդ, և զհետ նորա որդի նորին իշխանն կալլէսի առ ցաւոց սրտին. և Թագաւորեաց ի գահ Անգղիոյ մանուկն Հռիքարտոս Բ: Անդէն վերստին զէն առին Գաղղիացիք, և ամենուստ հարին զԱնգլիացիս. ծովապետն Յովհաննէս վէն նացի էջ զօրօք յերկիր կոմսութեան Փէն Թայ. կէսքլէն ի Նորմանիոյ յիշխանութենէն Շարին կարծրոսի. Օլիվիէ Քլիսան ազգաւ Բրետան, երևելի եղև ի Բրիտանիա քաջութեամբ. և գուքան Ընժուլ էառ զկին բաց ի Պօրտոյէ: Ա յսպէս մեռաւ ի ձեռս Անգլիացւոց Քալէ, Շէրպուրկ, Պրէսթ և Պօրտոյ քաղաքք (1370):

Վերջին արշաւանք կէսքլենայ եղև ի վերայ Շաթոյ Ռանտոն ամրոցին: Ուր յետ տարտապայման վաստակոյն աշխատութեց՝ իբրև աճապարէր առնուլ զամուրն անկաւ ի հենդ աստիկ, և զգայեալ զի ոչ գոյր նմա յառնել յանկողնոյն՝ յոր անկաւն. նա որ ի յոյզս խոկ պատերազմաց երբէք չէր մոռացեալ զաստուածպաշտութիւն, նուիրեաց առաւն զվերջին վայրկեան ժամանակի կենաց իւրոց, պատրաստեցաւ յընդունելութիւն սուրբ խորհրդոց՝ եւ անել կալ յանդիման Փրկիտոսի: Մեռաւ յաւուր՝ յորում հանդերձեալ էր անձնա-

առաւ լինել քաղաքն, այլ փառաւորեցաւ շքեղ յաղթանակաւ և զինի մահուն: Քանզի հաստատուն կացեալ ի բանս խոստման իւրոյ քաղաքապետան, զոր առ կենդանութեամբ քաջի զօրավարին խոստացեալն էր, հաւոյց զոյն մեռեալ մարմնոյն: Ելեալ եկն ընդ գլխաւոր սպայս ամրոցին ի խոտան՝ ուր էր մարմին սպարապետին ի միհձս զարդարեալս, եդ զբանալիս քաղաքին յոտս նորա, և մեծարեաց զնա որպէս զզօրավար յաղթող. և ի նորոգինակ նշան յարգութեան՝ եցոյց թէ ոչ ինչ պակաս քան զԳաղղիացիս ի պատիւ մեծարանաց առնն մեծի յառաջադէմ լինէին և թշնամիք ինքնին: Ելաց զկնքելէն պետութիւնն ողջոյն, և թագաւորն ինքնին ողբաց զկորուստ նորա. և մեծապէս պատուեալ զդիակն հրամայեաց թաղել ի տուրքն Դիոնեսիոս ի գերեզմանս թագաւորաց՝ շքեղ հանդիսիւ յուղարկաւորութեան (1380):

Ոչ ինչ երկարակեաց եղև յետ այնորիկ և արքայն Կարոլոս. քանզի երթայր և ախտանայր առաջնութիւն նորա. և պատճառք երկարատև հիւանդութեանն եղև գեղմահու հիւծողական՝ զոր ետ նմա թագաւորն Նաւարայ: Թօթափեցան անկան ամենայն հերք գլխոյ նորա, թափեցան և եղունգունք ձեռացն և ոտից, ցամաքեցաւ մարմինն ողջոյն. և իբրև ոչ ևս գոյր նմա յոյս կենաց, գերմանացն ոք բժիշկ ձեռն էարկ ի գարմանել զնա: Խափանեաց զծաւալումն մահադեղին՝ խառնեալ բացեալ ի բազուկ

նորա առ ի Թաւիթ արտաքս զչար հիւթն. և ապդ արար նմա, զի ի ցամաքել խարանին՝ անձնասպրեալն մահ առաջի կայր նմա: Յետ քանի ամաց դալով չարի բանի բժշկին, հաւատեաւ ի վերայ եհաս Թագաւորն Թէ մահ մօտաւոր մնայր նմա. և ըմբռնեալ յամր աենդիւ՝ ակարացաւ յոյժ, և զինի աւուրց մեռանէր ի քառասուն և ի չորս ամի հասակին:

Ի ձանձրանալ զչարդ անձին իմաստուն Թագաւորիս՝ արժան է յուշ ածել Թէ յոր ո. ղորմ վիճակ էր հասեալ Գաղղիա ի Թագաւորել նորա, և յոր փառս և ի յաջողութիւն ամբարձաւ ի վեցերորդ ամի Թագաւորութեան նորա: Դատարկ գտեալ զգանձս, զի ելմոզ. երրորդ մասն Թագաւորութեանն ընդ Անգղիացւոց աերութիւն էր գրաւեալ, և ի մահուան իւրում զպորտոյ միայն, զէրպատուրկ և զՔալէ ելմոզ նոցա. անընդհատ պատերազմաւ ընդդեմ Անգղիացւոց յոտին կանգնեաց զչքնութիւնն զծովային, և կացոյց նաւատորմիղ չքոր ընդ Ովկիան: Խոնարհէր նա յօժար ի խորհուրդս աւագանւոյն. և յամախ ըստ կամաց նոցա վարէր զառաչութեան կարգս: Սիրոյ գոլով զխաղութեանց՝ պաշտպան եկաց խնամանոց, և հաւաքեաց ինն հարիւր հատորս գրոց. որ մեծ ինչ էր ի ժամանակին: Բայց առաւել պայծառ ընծայեցոյց զչքնչիկ բնաւորութիւնս կարողսն անբծութիւն վարուց նորա և անյողդողդ չքմեռանդն աստուածպաշտու-

Թիւն: Հանդերձ գեղեցիկ զգուշութեամբ հրամայեալ պահոց եկեղեցւոյ՝ յաւելցուր և ինքնին պահել միանգամ ի շաբաթու անուսալ անցուցեալ զօրն: Եօթնեակ յեօթնեւկէ ոչ պակասէր ի մերձենալոյ ի խորհուրդն տպաշխարութեան՝ նախաշաւիղ օրինակ իւր ունելով յաստուածպաշտութեան զՆոյեվիկոս զոր սիրէր յոյժ: Զուարթառատ էին ոգւովքիւնք նորա, և բազում ուրեք անձամբ բաշխէր. զԲրիստոս ինքնին հոգւոյ աչօք նշմարեալ յաղքատս, կալեալ զձեռս նոցա համբուրէր: Ի հաւատովք հպատակէր աստուածախնամ տեսչութեանն, շնորհակալ գոհութեամբ միշտ ի յաջողուածս, և խոնարհ հլութեամբ ի ձախողակս: Ա յսպիսի ոք եկաց խմաստունս այս և բարեպաշտ Թագաւոր: Սիրեաց յոյժ զժողովուրդ իւր, և սիրեցաւ ի նոցունց: Յաւուր միում ի խօսել ուրուք ի բարեկամաց նորա զերջանկութենէ Թագաւորութեան նորա. «Գիտցէք, ասէ Թագաւորն, որ լեմ երջանկութիւն Թագաւորի. այն զի կարող է բարեբարել»:

ԳԼՈՒԽ Ի.

Թագաւորութիւն Կարլոսի Զ, երէց պապերացմանն Նորա և արիւծ խելագարութեանն։

1380 – 1392.

ԿԱՐՈԼՈՍ Զ *մանուկ երկոտասանամեայ ամբարձաւ 'ի գահ Թագաւորութեան։ Ի ժամանակս մանկութեան Նորա անկաւ վարչութիւն Թագաւորութեանն 'ի ձեռս երից հօրեղբարց իւրոց, որք փոխանակ պաշտպանի լինելոյ գահուն, ընչաքաղց ցանկութեամբն իւրեանց, և փառասիրութիւն հարստահարողք և բռնաւորք կացին. որով ընդունկէց լինէին քաղաքք՝ յոգիս ապստամբանալ 'ի բռնակալութենէ Նոցա։ Յարեաւ աղմուկ խռովութեան և 'ի փարիզ, սակայն պատուհասակոծ կորեան գլխաւորք 'ի խռովէ ժոց։*

Կարոլոս գոռ և պատերազմասէր անգամն 'ի տղայ ասէոց եցոյց թէ քանի՛ արժանաւոր էր հայրենի գահուն։ Փղանդրացիք խռովահեղք միշտ, և հեատոզք առանց իւրեանց՝ նչհաւէցին զկոմսն իւրեանց. Թագաւորն ոչ սակաւին չև էր մեռեալ 'ի հնգետասաներորդ ամ՝ հասակին, խաղաց ընդդէմ ապստամբաց ձեռնհաս օգնական իշխանին. և հար խորտակեաց 'ի նոցանէ քա-

ռասուն հազար այր, և տարաւ յաղթու-
թիւն մեծ ի Ռոզպեկք (1382)։ Սասալ մե-
ծի յաղթուելեանս եկաց Օլիվիէ Քլիսոն,
նախանձորդ քաջութեան կեսքլէնայ, յա-
ջորդ սպարապետութեանն և ժառանգ
պատերազմական հանճարոյն։ Մատնեցան
քաղաքք և դիւղք Փղանդրացւոց ի հուր և
ի սուր և յաւար։ Եւ անգութ հօրեղբարք
արքային խստացուցանէին զմանուկ արքայն
անողոք՝ շաղախել յարիւն պարտելոց, և
Քուրթրէ հիմն ի վեր տապալեցաւ, և բնա-
կիչք նորա առ հասարակ սրախողխող եղեն։
Յաղթող զինուքն դարձ արար Թագաւորն
ի Փարիզ. ժողովուրդք քաղաքին ուրախու-
թեամբ վառեալ ի զէն՝ ընդ առաջ ելին
յաղթական Թագաւորին. հրամայեաց ար-
քայ իշխանօքն հանդերձ դառնալ նոցա ան-
դրէն ի քաղաքն, և զէնըննկեց լինել։ Եմուտ
ցասմամբ Թագաւորն ի մայրաքաղաքն, և
քաղաքն ողջոյն զարհուրեալ մնայր կատա-
րած ի իրացն. կանգնեցան անգէն կախաղանք
մահու, և արք հարիւր ի գլխաւորաց ժո-
ղովրդեանն ի մահ ածան. յորս էր և երևե-
լին Ժան Տէմարէ, այր արդարակորով և
խաղաղասէր, որ փոխանակ զի միջնորդ խա-
ղաղութեան եկաց ընդ Թագաւորն և ընդ
ժողովուրդն, յանցաւոր գտաւ յաչս կա-
րողսն։ Իբրև յորդորէին զնա շնորհս
խնդրել յարքայէն վասն կենաց իւրոց,
պատասխանեաց այրն քաջ. «Ծառայեցի
հաւատարմութեամբ փիլիպպոսի հաւուն
նորա, Յովհաննու և կարոլոսի անարատ

ամենևին. նոյնպէս և ամա ծառայէին՝ եթէ ձանաչէր նա զայր, այլ չնորհս Աստուծոյ միայնոյ խնդրեմ և ոչ ի մարդոյ »: Ընկճեցան բնակիչք մայրաքաղաքին. լինչք հառաչակաց յարքունիս գրաւեցան, յաւէլան հարկք, և կորոյս քաղաքն զազատութիւնս իւր: Ջնոյն և այլ երևելի քաղաք կրեցին պատուհաս. և լցան աւարաւ հօրեղբարք Թագաւորին:

Յետ այնչափ կոտորածոց չէ ևս էր ընկճեալ խաղաղութիւն փղանդրացւոց. և մինչդեռ բնակիչք քաղաքին կանգուն քաջութեամբ պահէին զազատութիւն իւրեանց օգնականութեամբ Անգղիացւոց, զոյն լուեալ Կարոլոսի խաղաց վերստին ի փղանդրիա: Անդ էր տեսանել զողորմ վիճակ փղանդրացւոց. փակեալ ի մէջ ալիւնահեղ պատերազմաց յաւէր և յապականութիւն դառնայր աշխարհն նոցա. մինչև քաջութեամբ բնակչաց Կանդայ, և մահուամբ դքսին նոցա Լուդովիկոսի խաղաղութիւն առնոյր աշխարհն, և անցանէր ի ժառանգութիւն դքսին Բուրգոնտիոյ, հարսին նորա՝ որ ժառանգ դքսութեանն էր՝ պաշտպանական բերելով զոյն առն իւրում:

Յամի 1385 սկսաւ վերստին թշնամութիւն ընդ Անգղիացիս և ընդ Գաղղիացիս. և առաքեաց Կարոլոս զբոլ զՅովհաննէս վիննայի զծովակալ Գաղղիոյ ի Սկովտիա. որ էլ Էխմմպուրկ քաղաք, ուր ջրեք. հարիւր ևեթ տունք էին յայնժամ վինակաձագոյնք: Իսկ երկրորդ գունդն զօրաց խա-

ղաց ՚ի Կաստիլիա ընդդէմ Յովհաննու դքեսին Լանքաստրայ. և ինքն Թագաւորն և հօրեղբարք նորա հանդերձէին արշաւել յԱնգղիա: Եւ մինչդեռ ահաւոր պատրաստութիւնք լինէին, և նաւատորմիղ մեծ կազմէր ՚ի հազար հինգ հարիւր նաւաց, յանկարծ յետս եկաց Թագաւորն ՚ի խորհրդոյն, և արձակեաց զզօրս զինի այնչափ անհոգաւոր ծախուց. և զօրքն առաքեալ ՚ի Սկովտիա և ՚ի Կաստիլիա խորտակեցան (1389):

Ոչ ուրեմն ապա եբաց Կարոլոս զաչս իւր, սկսաւ ունկն դնել վաղեմի խորհրդականաց հօրն, և սիրանել զգանձ աշխարհին մատնեալ յատար, զարդարութիւն ոանակոխ, զապահովութիւն հասարակաց յերկրի, զկրթութիւն զօրաց ապահաս լեալ, և զամենայն ինչ խառն ՚ի խուռն, և զբազում դունդս աւազակաց զօրացեալ սիրեալ յամրոցս, և չարեացս ամենայնի պատճառ զինչխանս պետութեանն: Վասն որոյ զանձամբ կամեցեալ առնուլ զինչխանութիւնն, ԹօԹափեաց զլուծ բռնակալ ոսոխականաց իւրոց զհօրեղբարցն: Ընդ նոքա ՚ի վճիռ քինու, նախ զեղամահ ապանին զկարդինալն Լանայ, որ խորհուրդն ետ առքայի ինքնին վարել զպետութիւնն. և ապա խորտանկեալ չարութեամբ խափան լինէին պատանի խորհրդոց Թագաւորին ընդդէմ Թըշնամեաց: Սակայն հակառակ խափանարար խոչից նոցա ամրանայր իշխանութիւն արքայի. ինքնին շրջէր նա ընդ գաւառս պետութեան իւրոյ, և զամենայն եղծմունս

բանակալուԹեան բարձեալ, իրաւունս առ-
նէր ամենեցուն, հաստատեալ զարդարու-
Թիւն և զնաղդուԹիւն: Եւ Թագաւորէր
արդեօք փառաք, եԹէ դեպք ինչ անակն-
կալ և բազմազէտ ոչ վեր ի վայր առնէին
զամենայն: Քանզի անձամբ առաջնորդ կա-
ցեալ նա զօրուն, խաղաց ընդդէմ դքսին
Բրիտանիոյ, ընդ որում հակառակուԹեամբ
էր. այլ ծառայք նորա և գլխաւորք ի սպայ-
ից բանիւք և գործովք գժկամակէին ընդ
այս: Յետ աւուրց ինչ հրաման ետ արքայ
ի մարտ պատրաստել. և ինքն սպառազէն
յառաջ խաղայր տեսանել զհանդէս զօրացն
ի գաշտին մերձ ի Մանս: Եւ ահա յան-
կարծ այր ոք գժոխագէմ ձեղքեալ
ըբազմուԹիւնն միջամուխ լինէր, հասանէր
առ արքայ, ձեռն արկանէր զսանձից երի-
վարին՝ և գոչէր ահագնաձայն. «Ո՞ւր դի-
մես, տէր արքայ, մնասնեցին զքեզ ծա-
ռայքդ, Թողին ի ձեռս Թշնամւոյն»: Պա-
կեաս Կարոլոս. և անդէն տեսեալ զսուր
ուրուք յիշխանացն առ իւրև պատենազերծ՝
խռովեցան միտք նորա, զայրագնեալ գա-
զանացաւ՝ կարծելով Թէ դարանի նա կե-
նաց իւրոց. հար սպան զնա, և զերիս այլս
ընդ նմա: Եւ իբրև սուր ի վեր առեալ կա-
մէր հարկանել զմերձակայն առ հասարակ,
խորտակեցաւ վազակաւորն՝ և առեալ տա-
րան զնա ի Մանս, ուր զկնի կատաղուԹեն
կալաւ զնա ԹմբրուԹիւն խոր: Յաւուրն
երրորդի զգաստացեալ, զահի հարկանէր ի
լուր անցելոցն՝ որ անցին ընդ նա: Բայց ապա

վերսոյն ի նոյն կառավարութիւն զառաջա-
նէր՝ մինչև անբուժելի համարել ախտին։
Եւ այնպէս սկարացաւ գլուխ նորա, զի և
ի ժամանակս զբաւորութեան իւրոյ ի խոր
ապշութիւն ընկղմեալ՝ անկարող էր ի տես-
չութիւն աշխարհին։ Եւ որ ապերասելին և
է, հօրեղբարք ջուաձ Թագաւորին մեր-
ժեալ զպաշտօնեայս նորա՝ կալան զամե-
նայն իշխանութիւն, և գժառութիւնք նոցա
և կռիւք՝ կարապետ եղեն ապագայ աղետից
Դաղղիոյ (1392)։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ որպէս առ խելագարութեամբ արքային կա-
րուսոյ ջհոնէալ խաղաղութիւն աշխարհին Գաղ-
ղիոյ՝ վերսպին զջրացան Անգղիացիք յաղթու-
թեամբն Ազինքուրայ։

1392 – 1413.

Յետ ամաց ինչ բռնակալութեան հօրեղ-
բարց արքային, զորացաւ Լուգովիկոս գուքս
Աւրելիոնի՝ (Օրլէանի) եղբայր Թագաւո-
րին, և նախնչեան հեռեզակալ կացեալ գա-
հուն՝ էարկ յիշխանութենէ զՀօրեղբարս
իւր։ Ապաքէն ոչ զոք զրկեաց նա ի նո-
ցանէ, բայց զդուքսն Բուրգոնեայ միայն,
զկրտսերագոյնն և զյաջողակն ի հակառա-
կորդս իշխանութեան իւրոյ, որ զջրացեալն

էր յոյժ զգբսութեամբն փղանդրիոյ: Այլ այս նորա յաղթութիւն՝ ձեռաստակարածոյն եղև նմա. քանզի ի մեռանելն իւրում գուբան եթող որդի և ժառանգ զՅովհաննէս զմահանուանեալն Աներկիւղ, ի գործոց իւրոց առեալ զանուն: Եւ զի էր սա այր քինախնդիր, յանդուգն և վայրագ, մխայլ զայրագին ընդ գուբան Աբեղնոնի ընդ Լուգովիկոս՝ սեռեալ զնա ի բարձ աւագութեան, զոր անձին կարծէր անգ: Եգ ի մեկ կորուսանել զհակառակորդն, և զի քաջ անկասկած զնա գործեացէ՝ կեղծաւորեցաւ խօսել ի հաշտութիւն խաղաղութեան ընդ նմա: Երդուան միմեանց իշխանքն պահել բարեկամութիւն մշանջենաւոր, և ի նշան հաշտութեան մերձեցան ի միասին ի խորհուրդ ահաւոր սեղանոյն: Այլ Յովհաննէս ի ժամ անուն մոաբերքեր յահագին ուխտադրուժ նենգութիւն, զոր յետ երից աւուրց ի գործ եդ ապանեալ զգուբաղն Աբեղնոնի: Ասեն տունն սերութենն Աբեղնոնի և Բուրգունտիոյ անհաշտ թշնամիք եղեն միմեանց, և գժտութիւն նոցա յետ խեղապարտութեան Կարոլոսի՝ առաջնի առիթ եղև ապերախ աշխարհին, որ ծանրացաւ յոյժ յոյժ քան զայլ ամենայն ջաղիս գխլեալս ի պետութեանն (1407): Զի նենգեան երիգբին կողմանքն ընդդէմ միմեանց, և բախէին ընդ իրեարս յանուն Թագաւորին, զոր մերթ առքա և մերթ նորա ի կողմն իւրեանց առնուին. և ոչղեցին արեամբ զմայրաքաղաքն և զգաւառս սերութեան:

Զարթեաւ Ընդղնա ընդ երկարաձգութիւն իշխանացդ Գաղղիոյ. և Հենրիկոս Ե, այն որ սպանեալ զվտարաբախան Հռիքարատոս Ք զորդի Եգուարդայ, և անցեալ ի գահ նորա՝ թագաւորէր յայնժամ, այր փառասէր և ձեռներէց յամենայնի, մեծահանճար խորհրդական, զօրավար մեծանուն ի թագաւորութեան իւրում, և անվեհեր առնետ ի ժամանակին՝ առաւել քան զնախորդս իւր հետամուտ եղև թագաւորութեան Գաղղիոյ և քան զամենայն Թշնամիս նորա և քան զԵդուարդ խակ Գ, ահաւոր եկաց: Ընշաւեալ յԱրքէօր նստաւ զնովաւ, և զկնի երկար դիմակալութեան էառ զայն: Զօրք թագաւորին խոնջք յերկար պաշարմանէն, ջեռան յախտ մահու, և բազմութիւք կորեան անդէն: Խակ Հենրիկոս թէպէտ ցանկայր տարածանել զաշխարհակալութիւն իւր ի ժամանակին՝ յորում արկեալ էր զահ իւր և զերկիւղ զաշխարհսն, սակայն բռնագաւեալ դարձ արար ի Բիքարտիա, երթալ ուներ զՔալէ՝ յանքոյթ հանեալ զմնացորդս զօրացն: Բազմավաստակ էր յոյժ այս նահանջ. քանզի գունդ մի Գաղղիացւոց քառասնամեայ հզօր քան զնովաւն՝ էլ ընդ առաջ նորա և բանակեցաւ, խորոց արկեալ ընդ նա և ընդ Քալէ: Հարկ էղև նմա խորհել որպէս երթեալն Եգուարդ և զկնի նորա իշխանն Կալլեսի խորհեցաւ ի նոյն գնալս ըմբռնեալ, առաքեաց խնդրել զնաշաւութիւն. և զի խիստ բանիւք մերժեցաւ ի նոցունց՝ ծանրացաւսումն և յուսա-

հաս լեալ՝ եդ առաջի աչաց իւրոց պայ-
ծառելոյն համ զմահ: Բախեցան բանակքն
երկոքին. և այս պատերազմ Ակինքուրայ ա-
ղետալի եղև Գաղղիոյ քան զԿրէսեան և
զՊինկուրայ, և՝ ի սուգ նատոյց զերկիրն ոչ-
ջոյն. քանզի անկան՝ ի տէղւոջ մարտին տասն
հազար Գաղղիացիք. յորս էին իշխանք եօթն
և առաւել քան զսուք հազար ազատակոյտ
մարդիկ. և զերի վարեցան չորեքտասան հա-
զար այլք հանդերձ հինգ իշխանօք: Ա-
րքայական հարուած բախմանէա՝ ի յուշ
էած զանցեալն ըստ ամենայն հանգամա-
նաց. քանզի առ Գաղղիացիս տեսանէիք ա-
ռաւելութեան աշխատհախտութիւնք զօրաց, յան-
դուգն համարձակութեան և անմիտ աշխոյժ
՝ի մարտ ընդ թշնամւոյ՝ զոր առանց վինուց
մարթ էր ընկճել և ցրուել. խակ առ Ան-
գղիացին՝ քաջապետութեան վայրաց, հրա-
հանգ, իմաստութեան և անվեհեր քաջու-
թեան: Ա՛յս երեքկին ազինահեղ կատա-
րածք Քրէսեայ և Պիկուատայ և Ակինքու-
րայ իրաւս իմաստութեան եւտուն նախ-
նեացն Գաղղիացւոց՝ ուղղել զանմիտ յան-
դգնութիւնս իւրեանց և զյանձնապատման վըր-
տահութիւն. այլ չէած ինչ օգուտ զգու-
շութեան ազնուաբերս չարեացն, յոր քաղա-
քական գժտութեամբ արկին զանձինս իւ-
րեանց և զաշխարհն (1415):

ԳԼՈՒԽ Թ.

Թէ ուրպէս՝ ի պապճաւա իպատիլայ գլխոյին վայրացեալ առաքին խառովութեան՝ ի փալափական անաւգուրոյն պապիերապետութեան յանկէր և՝ ի մախանութիւն հաւգատուրութեան՝ ի յետս հինրիկոսի արքային Անգղիոյ:

1415 – 1422.

Արքայորդին կարոլոս հնգեաատանասներորդ յայնժամ, և սպարապետ կոմսն Արմանեաք կուսակից լեալ Աբրեղիոնեան առհասին՝ յայտնապէս ելին՝ ի կռիւ ընդդէմ դքսին Բուրգոնիոյ մերժել զնա յարքունեաց և՝ ի պետութենէ: Այլ աշխարհալուր մեծահռչակ պատարագի դէմսն ի-պակէլ զկողմն ունելով կոմսին՝ արկ զթագաւորութիւնն յանդունդս չարեաց: Դրժեցին այս վատանուն՝ վասն անարժան գնացից իւրոց տարադիր լեալ՝ ի Տուրոնէ (Թուր), եպիսկ. իւր գանձս՝ ի տեղեաց տեղեաց ժողովեալ, և վասնիչ շուայլութեամբ վերին կենօքն անցուցանէր զաւուրս: Սպարապետն և արքայորդին բարձին՝ ի նմանէ զինչս՝ առեալ զայնս՝ ի գանձն արքունի, որ՝ ի բազմաց հետէ գաւառակեալ էր. և եմուտ այսուիկ առելութիւն անհաշտ՝ ի մէջ որդւոյ և մօր, զոր ոչ ամաչ չկարէ, և

ոչ աղետալի արկածք մարթացան մեղ՝ եալ ողոքել: Ջանացաւ Իշտափել Թօխթափել յանձնել զկատանս բանակին, և յաջողեաց յաղէտս Գաղղիոյ: Քանզի դառնացեալ Թշուառութեամբն կիներն Ջաւուկ, և զգըդեալ՝ի բուռն հարկէն, և ծարաւեալ անյապ՝ի քէն վրիժու, ոչնչ ամօթ համարեցաւ կուսակից լինել Յովհաննու, որ յանգուգն սպանող եղև դքսին Աւրեղիանի՝ տագներ իւրոյ, որ և Թշնամի էր առն իւրում և ողջոյն աշխարհին: Մտին սոքա՝ի միասին՝ի Փարիզ, հեղին արիւն բազում Ա՛րմանագեանց անսի՝ այն է՝ի համախոհից Աւրեղիանեանց: Նոյնպէս և սոքա՝ի բազում ուրեք զօրացեալ կոտորածս մեծամեծս հասուցին՝ի վերայ Բուրգոնեանց (1418): Գաւառք առ հասարակ երկպառակեցան, և զեղոյր յորդէր զաշխարհաւն աւարհարութիւն, հրդեհ, սպանութիւն. և քաղաք և գիւղք պատուարաւիակ ամրացեալ՝ և մարդիկն զէն՝ի ձեռին՝ի քաղաքս մարտից դիմէին: Գաղղիա ողջոյն՝ի մոլեգին վառեալ՝ի զայրոյթ, փութացեալ ածնապարէին կործանել զերեսաս ընդ աւերակօք հայրենեաց: Անգէն ահա զարթուցեալ և Անգղիացիք ձեռնտուս իւրեանց առին զառանին յոյզս խռովութեանց նոցա, և վերսին միջամուխ եղեն՝ի Գաղղիա. կալան զամենայն Նորմանախս, անարգել դիմեցին և՝ի մայրաքաղաք Թագաւորութեանն:

Ա՛ռ ժամ վառանգին հարկեցաւ արքայորդին խոնարհել՝ի հաշտութիւն ընդ

դքսին Բուրգոնացոյ. և մինչ կարծէր ժողովուրդն վախճան լինել երկպառակութեանն՝ ի փրկութիւն աշխարհին յերեսաց արտաքնոց անտի Թշնամեաց, անակնկալ յանկարծ նորանոր եղեւամբք և նորանոր աղէտիւք վէր՝ ի վայր խառնվեցաւ ուրախութիւն հասարակաց: Քանզի հասուսաւեցին լշնանքն յիւրեանս՝ ի խորհուրդ ժողովել միաբան՝ ի Մոնթէռոյ վերայ աշխարհին, և ժամադիր եղեալ հասին անդր առաջնորդք հերձուածոցն: Անդ իբրև մատչէր առաքելորդին Յովհաննէս Անթրկիւղ, սպանաւ առաւելեաւն՝ ի պաշտօնէից Թագաւորին՝ ի վրէժ մահու դքսին Աւրելիոնի: Թէպէտ ոչ ոք այնպէս առաջեցաւ՝ ի մահ դքսին Բուրգոնացոյ իբրև զառաքելորդին, սակայն ոչ պէրծաւ նա այսու յամբաստանութենէ անաստուածն սպանութեանն (1419):

Զայս գործ անիրաւութեան ձեռնառու Թշնամութեան իւրեանց առեալ սիրելիմք նորա՝ զինեցան մերժել զնա յամօռոյն՝ զմիակ օրինաւոր ժառանգ աէրութեանն: Առաջնորդ եկաց Թշնամեաց նորա դշխոյն Իզաբէլ՝ մատնիչ և օտարախորհ ամուսնին և մայր, և քան զԱնգլիացիս ճշտագործագոյն սան իւրոյ: Եւ միաբանեալ դշխոյիս ընդ նորոյ դքսին Բուրգոնացոյ Փիլիպպեայ, որ մականուանէրն Բարի, և յարդեանց անսիտ բարութեան հեռի ամենևին գտանէր, մինչև յանկոյց ղամանս յիշատացն, և արար խաղաղութիւն ընդ Հենրիկոսի՝ ի Թրուա: Հաշտութիւն ամենատարած և՝ ի

նախասինա Գաղղիոյ, անլուր երբեք ՚ի վե-
պըս ապին. քանզի Թագաւորն Անգղիոյ
հաս իւր ՚ի կնութիւն զդուստր Կարոլոսի,
և հանդիսիւ ծանուցաւ մերձաւոր ժառանգ
Թագաւորութեան, ընդդէմ Սալեան օրի-
նաց ՚ի բաց հանեալ զտոհմն արքունի իբրև
ապիկար ՚ի Թագաւորութիւն (1420): Այլ
չէր անմոռութեան գործոյն բաժանորդ ժո-
ղովուրդն համօրէն. քանզի ամենայն գա-
ւառք Հարաւակողման Լուարայ բաց ՚ի
Կիւենայ զկողմն ունէին արքայորդւոյն. իսկ
հիւսիսակողմանք գետոյն և մայրաքաղաքն
ինքնին անցին ՚ի կողմն Բուրգոնտեանց և
Անգղիացւոց, կէսք ինքնակամ և կէսք բըռ-
նութեամբ:

Կարոլոս այսպէս ընդդէմ ամենայն իրա-
ւանց անժառանգեալ և տարագիր իսկ լեալ
՚ի Թագաւորական տոհմէն, ոչ երբեք Թու-
լացեալ քաջ. բողոքեաց առ աէր և առ
սուաեր իւր պողովատիկ զանիրաւութիւնէն,
և մեկնեցաւ ՚ի գաւառս՝ որ գետ. ևս յիւր
կողմն էին: Սակայն եթէ ոչ վաղամեհ վախ-
ճան հասեալ ՚ի վերայ արքային Անգղիոյ
Հենրիկոսի ազատէր զինա յահաւոր Թշնա-
մւոյն՝ կարուստ անձողոպրելի ՚ի վերայ կայր
նմա: Ընդ հուպ և հայր նորա Կարոլոս զկնի
վեցամեայ իւրոյ մեռանէր՝ ոչ ինչ զգացեալ
ամենևին Թէ յոր չարիս հարկ զաշխարհն
խեղաթարութեամբն իւրով, և բուռն կա-
տաղութեամբ կնոջ իւրոյ Իզաբելայ: Մին-
չև ցվախճան պահեաց Կարոլոս զանունն
Սիրելի՝ որ ՚ի մանկութենէ կալեալն էր. և

աշխարհին չարիք թշուառութեանց չկորզեցին զայն ի նմանէ, քանզի չէր ոք անգէտ՝ եթէ առաւելագոյն վշտակիր ազեաւին նա ինքն էր Թագաւորն:

ԳԼՈՒԽ Ժ.

Թագաւորութիւն Կարոլոսի Ե, և պարսութիւնք նորա առաջի ընծամեայ ի բուռ:

1422 – 1424.

Ընդ մահու Կարոլոսի վեցերորդի հրաշակ հարաւ ի գաղղիա Թէ Թագաւորեաց Հենրիկոս Զ, որդի արքային Անգղիոյ մանուկ դեռահասակ. և ինամակալ Թագաւորութեանն պէթֆոր հօրեղբայր մանկանն: Բուրգոնաւանք և իշխանք կուսակից Անգղիոյ ինդացին ընդ այն, այլ քաղքենիքն ժողովուրդն:

Ձեր երբէք յայս ոլորմ բազդ անկեալ Թագաւորութիւնն Գաղղիոյ. մեծ մասն աշխարհին և մայրաքաղաքն իսկ ընդունէր զարքայն Անգղիոյ, և ամենայն իրք պետութեան յանուն արքայորդւոյ մանկանն գործէին. իսկ բնիկ արժանաժառանգ և յաջորդ արքայն Լուդովիկոսի իբրև տպատամբ ոք և ամբարիշտ՝ քաշեալ Թափառէր ի հարաւային գաւառս ակրութեանց իւրոց. և ինքն պատանի իննևտասանամեայ, անփորձ, ան-

ձնասուր՝ ի հաճոյս, անզօր՝ ի յաղթահարել զայնչափ բազմութիւն թշնամեաց իւրոց: Ո՛ մարթասցի պատմել և զերկար քաղաքական պատերազմացն զորիս՝ ի հիւսիսակողմանս աշխարհին. գիւղօրէք հրոյ լինէին ճարակ, և ամենայն չէնք յաւեր և յապականութիւն. յաճախեալ ամենայն ուրեք մեկնազէնք, աւազակք անագորոյնք ընթանային ընդ չէնս, բազում չարիս ածեալ կուտեալ՝ ի վերայ մարդկան: Դարձեալ և յայլ ուսոեք և Անգղիացիք անդուլ՝ ի պատերազմունս, երկարաձիգ պաշարմամբ առնուին զքաղաքս, և զհաւատարիմ քաջ բնակիչս քաղաքացն իբրև զապստամբս կրատամամ առնէին. քանզի և մարդիկն որ՝ ի մայրաքաղաքին զհետ էին թագաւորեցուցանելոյ զտուն Գաբէթեան, փակեալք՝ ի քուրձս՝ արկան՝ ի Սենա գետ:

Յայս պայման էին իւրք աշխարհին յորժամ լուաւ ալբայորդին Կարոլոս զմահ հօր իւրոյ, և անդէն՝ ի ձեռն հաւատարիմ իշխանացն ոյք ընդ իւրն չքէին, թագ եդ հանդիսիւ՝ ի փոքրիկ ուրեք եկեղեցւոջ, և դարձաւ անտի՝ ի Պիկտաւ հաստատել անդ զիւր արքունիս:

Թէպէտ առնուլ էառ Կարոլոս զթագաւորութենն նախնեաց իւրոց, այլ զանուն միայն դոգյես ունէր զթագաւորի, զբոլոր մասն եւթ տէրութէ ունելով՝ ի ձեռին. ՝ի թափել զինացեալսն՝ ի ձեռաց թշնամեաց իւրոց առաջի կայր նմա ոչ ընդ Անգղիոյ միայն՝ ի վեց գալ, այլ և ընդ դքսին Բուրգոնիոյ

որ աղաչաւանելով ընդ վերջին կոմսին Փլանդրիոյ՝ զողջոյն իսկ զՄաորին նահանգն յաւելեալ էր յիւր տէրութիւն, և իբրև զԹագաւոր ոք զօրացեալ պերճանայր: Զօրավար կայր Թշնամեաց արքային խնամակալ Թագաւորութեան մանկանն Հենրիկոսի գուքան Պէդֆոր, այր յաջողակ, հմուտ իրաց վարչութեան և քաջ, որ օր քան զօր ձգեալ տարածանէր զբազուկ իշխանութեան իւրոյ՝ ի վերայ գաւառաց Գաղղիոյ. և ընդ հակառակին կարծրոտս ընդդէմ հզօր զօրութեան Թշնամեաց իւրոց չունէր առաւել քան զքաջապինդ արութիւն իւր և զիշխանաց իւրոց: Վասն որոյ՝ ի սկզբանն խորամանկեցաւ՝ ի նոցանէ բազում անգամ. և Անգլիացիք համարեալ Թէ անդէն իսկ մերձ է բնաջինջ կործանումն նորա՝ առ ծաղու Թագաւոր Պուրկայ, ուր նաեւքն նա՝ կոչէին զնա: Եւ իբրև հարաւ Կարծրոտս չարաչար և՝ ի վէրնէօլ, և կորոյս զընտիր ընտիրս՝ ի զօրաց իւրոց և զբազում քաղաքս, լքեալ այնուհետև յուսահատ եւ զանձն՝ ի գրգանս մեղկութեց, և հաղիւ կարելով զչափաւորն գտանել զսէտս՝ եթող զամենայն հոգս տէրութեան իւրոյ Ռիչմոնդ իշխանի Եղբօր դքսին Բրիտանիոյ: Ոչ ևս էր նմա յոյս օգնականութեան՝ ի հաւատարիմ հպատակաց իւրոց, որ՝ ի բազմաց հեռի՝ ի յետին թշուառութիւն ածեալք՝ չարամահ կոտորէին իբրև ապստամբք: Մինչդեռ յայս տագնապ ատրակուսի կայր Թագաւորն Կարծրոտս, և իբր

նորա ի վաճառն գիմէին միշտ, յանկարծ ահա գէպք ի բարի յաջողեալ եմուտ գըժտութիւն ընդ Անգլիացիս և ընդ Բուրգոնեանս, և դադարեցին յերանելոյ ի վերայ Կարոլոսի, որով ժամ եգիտ նա, և ոգի առեալ զերծաւ ի սպառասպուռ չարչարանաց (1424):

ԳԼՈՒԽ ԺԱ.

Պաշարումն Աւրէլիոնի յԱնգլիացւոց, և ապաստանութիւն նորա էրինառափ այցելութեամբ ի յԱւրէլիոնեան օրիորդին:

1424 – 1429.

Դուքսն Պէտֆոր յետ ջորիցս անգամ պատգամաւորութեան և պայմանաց ի մէջ Անգլիացւոյ և նիզակակցաց իւրեանց՝ ժամ պատեհ վարկանէր անգրկին ձեռն արկանել յառաջին իւր աշխարհակալութիւնս, խաղալ անցանել ընդ Լուար գետ և տարածանել զբազուկ իշխանութեան ի վերայ հարաւային գաւառաց. վասն որոյ եկն և պաշարեաց զԱւրէլիոն քաղաք: Պատուար էր սա սերութեան Կարոլոսի, և ի սա յետ կորուստ և վրկութիւն Թագաւորութեան նորա. քաջութեամբ յարձակեցան Թշնամիք, նովին օրինակաւ զգէմ կալան և պաշարեալքն: Վաքսկոտով կոմսն Տիւնուա

և մեծանուն զօրավարքն լա Հիր և Քահն-
Թրայլ ընակիր ընակիր ազատախառնեմբ սպայ-
իւբ անկեալ էին ի քաղաքն : Այլ իբրև
Հանդերձ զարմանալի արուեստիմբ քաջա-
մարտակաց այսոցիկ երիտայր և ընկճէր քա-
ղաքն , և Թագաւորն խոնջ ի կռուելոյ
ընդ ձախող բաղդին խորհէր մեկնել ի լե-
բինա Լանկլուտքայ , Աստուած նոր օրինակ
ինամովք , զորոյ պնդանն ի սուրբ գիրս
միայն է տեսանել, ազատեաց զքաղաքն Աբ-
բելինո , և եհան զԳաղղիա յանդնդոց՝ յոր
ընկղմէրն : Զի որպէս առ Հրեայս ի ձեռս
Դեբովրայ և Յուդիթայ , և առ Գաղղիացիս
իսկ երբեմն ի ձեռն Ժանուիեւայ , նոյնպէս
և աստ ի ձեռն Յովհաննայ կամեցաւ զնոյն
հրաշս գործել :

Այս Յովհաննա Տ' Արք մեծահռչակ ի
վեպս պատմութեան Գաղղիոյ , յիշեալ ի
բազում տեղիք անուամբ Օրլեորդ Աբբելին-
նեան , էր աղջիկ գիւղական ծնեալ մերձ ի
Վոքուլէօր , քաջակազմ, արիասիրտ , զար-
դարեալ ամենայն առաքինութեամբ , ան-
մեղ, Համեստ , ամօթխած , բարեպաշտ և
աշխուժիտ : Սա յայտնութեամբ ի վե-
րուստ ի ձեռն զուարթնոյն բազում ան-
գամ ազդեցութեան , եկն եկաց առաջի
քաղաքապետին Վոքուլէօրայ և ծանոյց նմա
զառ ի տեսանէ զՀրամանն երթալ բան-
նալ զպաշարումն Աբբելինոնի և ածել զԹա-
գաւորն ի Հռեմս յօծութիւն Հանդիսաւոր ի
Թագաւորութիւն : Քաղաքապետն երա-
զապատում ոք զնա Համարեալ յետս դար-

ձոյց արհամարհանօք : Կրկին անգամ յայտնեալ առւլեանն ազգէր Յովհաննայ՝ մի ևս ժամուաձառ լինել, զի 'ի նմին իսկ աւուր անհնարին հարուածս զօրն արքունի կրէր մօտ Աբելիան : Եւ յետ աւուրց սակաւ դեցաւ՝ թէ արդարև Գաղղիացիք առ 'ի համբարս հասուցանել պաշարելոցն՝ խորամակեալ էին չարաչար : Եւ զի 'ի պահս քառասնորդայ էին և ըստ խաստութեան ժամանակին զօրականն իսկ չէր ազատ 'ի պահոց , և մեծ մասն համբարոցն աղծեալ ձուկն էր , նմին իսկ և կոտորածն այն՝ կոչեցաւ կոտորած Ռինկայ : Յայնժամ կուսակալն Վրքուլէօրայ սկսաւ ակն ածել 'ի Յովհաննայ , և առնացն զգեստուք ծպտեալ առաքեաց զնա առ Թագաւորն 'ի Շինոն :

Ազգ եղև Կարոլոսի գալուստ օրհորդին, և առ 'ի փորձ ճշմարտութեան՝ առեալ զանձամբ հանդերձս իշխանի , խառնեցաւ ընդ զօրս : Մտեալ 'ի ներքս Յովհաննա ծանեաւ յամբոխի անդ զԹագաւորն՝ զոր ոչ երբէք էր տեսեալ, և անվեհեր համարձակութեամբ հանդերձ մեծարանօք խօսեցաւ ընդ նմա , և ասէ . « Տէր առաքեաց զիս առնել զԱբելիան, և ածել զքեզ ինքն արքայ 'ի Հռեմս » : Ապա առեալ առանձինն զԹագաւորն , առհասուստէայ երկնառաք պատգամաւորութեանն ասէ . « Յուշ լեսցին քեզ, տէր արքայ , աղօթք քո զոր 'ի հաղորդելն քում 'ի Տուսէն մատուցեր , զի եթէ չեցես օրհնաւոր ժառանգ գահուն , բարձցէ 'ի քէն տէր զկար կամ զկամն պաշտպանելոյ

անձին. և զի եթէ չև ևս բարկութիւն նորա
ելեալ ընդ վերայ Գաղղիոյ, անկցի պա-
տուհաս ցասման նորա ի վերայ քո և մի ի
վերայ ժողովրդեանդ: Եւ զինչ անհատատ
Թուխցին քեզ բանքս, տէր արքայ, ուր և
նախահաւն քո սուրբն Լուդովիկոս և կա-
րոլոս Մեծն՝ անկեալ առաջի աթոռոյն
Առաւածոյ վասն Գաղղիոյ խաղաղութեան
և վասն քո մաղթեն »:

Զարմացեալ Թագաւորին ընդ պատմեալ-
սըն ի նմանէ և ընդ Հշմարիտ առաւգու-
թիւն աղօթիցն մատուցելոց ի նմանէ, ոչ ինչ
այլ երկբայեցաւ Թէ ելեալ յօրհորդն գեր-
մարդկային ինն և առաւածական զօրու-
թիւն: Այլ մինչ չև ձեռն ի գործ ար-
կեալ և հարց զկամս աւագորեցոյն և իմաստ-
նոցն ի Պիկառաւ, ուր յետ անկանելոց մայ-
րաքաղաքին ի ձեռս Անգղիացւոց, հաստա-
տեալ էին զբնակութիւն: Ածաւ անդ Յով-
հաննա ի հարցուփորձ և ի քննութիւն ա-
ռաջի արանց իմաստնոց ժամանակին: Կա-
խաղախ, խորհրդականք, կրօնաւորք,
բժիշկք՝ երկիւղի և պատ ի պատ հարց-
մունս առաջի առնէին առ ի շփոթել զնա:
Իսկ նա ամենայնի տայր կշիռ զպատասխա-
նին. և ուր ամենեքեան կանխակալ կար-
ծեաք գային զերազատաւումն ոք տեսանել,
շինեալ ընդ համեստութեն տատուածազգե-
ցիկ օրիորդին՝ խելամուտ եղեն զի ի տես-
նէ առաքինորդեր ի փրկութիւն աշխար-
հին: Զկնի այսչափ և այսպիսի վկայու-
թեանց նոր օրինակ առաքելութեանս, ոչ

ևս յապաղէր Թագաւորն յօգուտ ի կիր առնուլ զօդնութիւնն երկնառաք:

Մինչ ևս յայլ ինչ ձեռնամուխ լեալ Յով հաննայ, եւս մերժել զաշխարհն ցոփ կա նոյս ի բանակէն, և ամենայն զօրականաց մերձենալ ի խորհուրդ ապաշխարութեան: Եւս կազմել և գրոշ նոր ասիտակ՝ կրելով շուշանս ի վերայ և զպատակեր փրկչին՝ տո պագրեալ ՑԻՍՈՒՍ և ՄԱՐԻԱՄ. և ապա եւս առնել համբարս յԱբրելիոն: Անցին նաեւ պաշարաբարձ ի միջօրէի ընդ զօրանիստ ձմե րոցս Անգղիացւոց, և հանդարտութիւն մտին ի քաղաքն յանդիման Թշնամեաց, գոգցես ինն կապեալ բազուկ նոցա յաներեւոյթ զո րութենէ: Յետ այնորիկ բախեցաւ ընդ նո ա Յովհաննա, եառ ի նոցանէ զամենայն առուբս. որք անգէտ պատճառաց ահին՝ ո րով ըմբռնեալն էին, հանդերձ բազում առաջիւք աճապարեալ մեկնեցան խառն ի խուռն ամբոխիւ: Հետամուտ եղև նոցա Յովհաննա աշտանակեալ յերիվար իբրև հմուտ ոք հեծեալ. և սուր ի ձեռին՝ զոր առանց տեսանելոյ երբեք խնդրեալ էր ա ծել ի մատրանէ սրբուհւոյն Կատարի նայ, ուր յաւանդի կայր ի բազում ամաց: Ոչ այսպէս կանգնեալ յաղթութիւն մեծ ի վերայ Անգլիացւոց ի Փաղէյ, գարձ արար ի Շինոն, ուր եգիտ պատիւ մեծ ի կարողսէ՝ իբրև ազատարար Թագաւորու թեան նորա: Ամենայն ոք այնուհետեւ յար քունիս և ի բանակին ականատես և ական ջալուր անակնկալ յաջողութեանցս՝ հայէր

'ի նա իբրև յօրինուդ ոք յարուցեալ սքան-
չելեօք 'ի վիրուխիան Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Օծանել Կարլոսի 'ի Հռէմս 'ի թագաւոր, և
զջրանալ նորա ընդդէմ Բնչահեաց էրոց: Գէ-
րութիւն Յովհաննայ 'ի յետս Անգղիացոց և
ողբմ մահ նորա:

1429 – 1431.

Յովհաննա կատարեալ զառաքին գործ
պաշտաման իւրոյ, հանդերձեցաւ ընուլ և
զերկրորդն, ածել զթագաւորն 'ի Հռէմս
յօծուման: Անհնարին թուէր գործն զօրա-
վարաց զօրուն. ուխտաւն տապարիլաւ հե-
ռի էին 'ի Հռէմսոյ, և քաղաքն այն և բոլոր
խակ գաւառն՝ ընդ որ առաջի կայր նոցա
անցանել՝ 'ի ձեռս էր Բշնամեաց: Այլ Յով-
հաննա վառահութեամբ 'ի աէր՝ հաւանե-
ցոյց զթագաւորն ընդդէմ անյաղթելի գը-
ժուարութեանց արշաւանին: Անկան 'ի Հա-
նապարհ երկոտասան հազար զօրք առանց
պաշարաց և պատրաստութեան հրազինուց.
և ըստ բարեգուշակ բանից դիւցազն օրիոր-
դին՝ ամենայն խոչ և խութ հարթեցան ա-
ռաջի զօրաց Թագաւորին, և ոչ խակ հարկ
եղև զէն վերացուցանելոյ: Անճնաւոր ե-
ղեն անդէն Ադքսեր, Թրուա և Շալոն քա-

զաբք, և Հռէմն մերժեալ զանգղիացի պա-
հակապանս, էթայ զդրուշս առաջի կա-
լոլոսի. որ եմուտ փառաք ՚ի նեղքս, և ՚ի
վայելս անդր օծաւ ՚ի Թագաւոր: Առաջի-
կայ գոսա գեղեցիկ հանդիսիս և Յովհան-
նա վառեալ ՚ի զէն և ՚ի զարդ՝ դրօշ ՚ի ձե-
ռին մերձ առ Թագաւորն, և ամենեցուն
հանգիսականացն աչք ՚ի նա, հայէին: Ի
կատարել հանդիսի օծութեանն՝ արտա-
սուաքից անկաւ նա յոտս Թագաւորին, և
զինի խնդակցութեան ընդ սքանչելի հով-
նաւորութիւնն Աստուծոյ ՚ի վերայ գոր-
ծոց նորա, յաւել աղաչել զԹագաւորն
շնորհել նմա գառնալ առ ծնողս իւր, և ՚ի
նախկին պայման կենացն, կատարեալ զա-
մենայն՝ ուստի որոց առաքեալն էր ՚ի սեպա-
նէ: Ի գովել խանդաղատեցաւ արքայն ըստ-
նուաստութեն Յովհաննայ, այլ չէած յան-
ձին Թողուլ նմա երթալ. զի ասէր Թէ ան-
շուշտ կամք են Աստուծոյ լի բովանդակ կա-
տարել զգործն, և հալածել ՚ի սպառ զՍնգ-
լիացիս ՚ի Թագաւորութենէս:

Եւ հռչակ համբաւոյ օրհորդին սփռե-
ցաւ ընդ ամենայն կողմանս աշխարհին. և
ժողովուրդք սեպհական զի Աստուած է
ընդ Կարոլոսի, գունդագունդ գիմէին առ
օրինաւոր իշխան իւրեանց. և զօրականք
քաջայոյս ընդ յաղթութիւնն ՚ի մարտս իրա-
խոսէին: Իսկ Անգղիացիք յուսահատեալ լեալ,
և հարեալ ՚ի բազում տեղիս ՚ի փախուստ
խուճապեցան: Ընդ դուքսն Պէտֆոր զա-
մենայն ջան ՚ի գործ գնէր խոհականութիւ

և քաջութիւն չէինել ամենևին ձեռնհասք ի
Գաղղիոյ : Վասն որոյ ի սարսռելիսկ չփոթե
անդ խռովութենէ կամեցեալ խրախուսել
զնոսան , չոգաւ պաշարեաց զՓոմբիէյն :
Եւ թէպէտ չկարաց առնուլ զայն , այլ մեծ
մեծ հասոյց Գաղղիոյ . քանզի ի նմին աւուր
ի յարձակել քաղաքացւոց արտաքս քան
զդրունս քաղաքին՝ ձերբակալ եղև Յովհան-
նա որ ի քաղաք անդր անկեալն էր : Ար-
դարև փառք մեծ էր օրիորդիս սարսռալման
ուրախութենի Ընդղիացւոց և Բուրգոնեաւանց
ըստ գերութենի նոր : Հնչեաց բանակն ողջոյն ի
ձայն ցնծութենէ , և խռովն դիմէին զօրականք
ի սեա , յորոյ անուանէն յամաց հեռէ
սարսէին : Էին ոչք զանէծս արձակէին ի
վերայ իւրեանց ոխերիմ թշնամւոյ իւրեանց . և
էին ոչք վհուկ ոմն համարէին զնա , ի ձեռն
դիւթութենեանց զօրացեալ ի վերայ նոցա :
Եւ ամենեքին համարէին պնդել ընդ նմա
հղթայակապ և զբաղդ Գաղղիոյ , և ձեռն
արկեալ այնուհետև ի նախկին արշաւանս՝
ի սպառ ընկճել զայդն : Այլ խաբեցան
նոքա յակնկալութենեան իւրեանց , և զայ-
րագնեալք զառաջեցան ի գործ վատ և
անգութ վրէժխնդրութենեան : Պկեղծորէած
զօրիորդն կալանաւորք ի Ռուան , և հրա-
ման արար տեսանել զդատ նորա : Ոչ թու-
լացաւ յարութենէ սրտին Յովհաննա , ի-
մաստութեամբ և անյողդողդ արար պա-
տասխանի և եղծ զանհեթեթ ամբաստա-
նութիւնն կռտռեալս ի վերայ իւր , մինչև
յամօթ առնել զդատաւորս : Այլ թշնա-

միք նորա լի ցասմամբ ծարաւի արեան նորա՝ եաւն ընդ վերս գառապարտութեան, ի հոգւոյսրել զնա իբրև զաղանդաւոր ոք վհուկ և կռապաշտ. ուր նա մինչև ցյետին շունչ կենացն զիխաւս կարդայր: Եւ մեռաւ օրինորդս այս աքանչելի ի քահանորդ ամի կենաց հասակին: Այս անգութ անօրէնութիւն, երկցնախատանօք վաստութեամբ զգուքան պէթֆոր, որ զհետց զանմեղն և զառաքինին վասն չարաշահ քաղաքավարութեան իւրոյ, և զեպիսկոպոսան պէօվէ՝ որ նախագահ էր գառաւորացց Յովհաննայ, և զամենեսեան իսկ որ գովութք երեն գառաքինեալ օրիորդիս: Զկնի ամաց իբրև եմուտ ընդ իշխանութեամբ գաղղիացւոց քաղաքն Ռուան՝ քննեցաւ անդ վերստին այս անիրաւ վճիռ գառապարտութեան, և նշաւակեցաւ անիրաւութիւն և անգթութիւն գահին: Տեղեկացեալ և արքայ գահին իրացն, հռչակեաց զանմեղութիւն Յովհաննայ: Կանգնեցին նմա գաղղիացիք արձան յիշատակի ի Ռուան, և սահմանեցաւ հանդէս մշտընջենաւոր՝ կատարելամ ըստ ամէ Թափօրով ի տեղւոջ մահու նորա:

Մատենագիրք ոմանք ուղղափառանեղորդ գարուն, որ հնարին մերժել ի պատմութէ՝ որ ինչ միանգամ յաշխարհն փառս կրօնից, փորձեցան առուերծս ածել նորօրինակ առաքելութեանն Յովհաննայ: Այլ որ ամենայն ուրեք նախանձաւորք են ի սէր հայրենեաց, չկամեմ առ ինչ նախատինս համարին գաղղիոյ, երկնից օգնականութեամբ

զիրկումբիւն գտանել: Առաջին ի սոցանէ էզև Ռափին Թոյրաս որ զինեցաւ հակառակ այմ հատարակաց հաւատոց: Ոչ ինչ է հարկ երկարատատուիմ ձառիցատ ի մեր ժեղ զբանս նորա. շատ իսկ է գիտել զի կալուինական էր պատմագիրս. և յայտ է զի նա և հետևորդք իւր զսուղ կարծիս իրենց փոխանակեալ ընդ սուտգատատում անցս, յայտնապես հակառակին ոչ ընդդեմ պատմագրաց հետ ժամանակին, այլ և ամենեցուն որք զինի նոցա կացին վկատպիրք մինչև ի սկիզբն անցեալ դարու: Այսքան ի հատատատուիմբիւն իրացս. գարձցուք անդրէն ի կարգ պատմութեանս:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թէ որպէս ի սպառ հալածեալ կարելոյ զինեալ ի Գաղղիոյ զօրացս ի ներգործութիւն, և վերստին նահ նորա յերիսաց սպառման:

1431 – 1461.

Յետ այսորիկ սկսաւ թագաւորն իրրև ի քնոյ՝ հետոզ զմեզկատեր կեանն, և սկսաց բառնալ խնատութեամբ զնոչ մեծ յոր մինչև յայնժամ գեղեկը բախտ իւր: Հաշտեցաւ ընդ դքսին Բուրգոնատոյ, և զրատցեալ մերժեաց զՆիպզնատցիս ի մայրա-

քաղաքէն. քանզի մեռեալ էր գուքան պէթ-
ֆոր ինամակալ թագաւորութեան ման-
կան Հենրիկոսի և գչեռյն Իզաբէլ: Եւ
թէպէտ աւեաց մարան ընդ երկար, բայց
կարողաս յաղթող եղեալ՝ միշտ հալածա-
կան առաքս զԱնգղիացիս յամենայն քա-
ղաքաց աէրութեան իւրոյ. և առեալ՝ ի
կնութիւն թագաւորին Անգղիոյ զդուստր
իշխանին Պրովինկիոյ զՄարգարիտա, գու-
արար մարտի (1444): Եւ այնուհետեւ խնամա-
ութեամբ ձեռն էարկ՝ ի գարման չարեաց
թագաւորութեանն՝ որ ակարացեալ էր
յոյժ բազմազէտ արկածիւք: Ընդել մեծ
էր բարեկարգութեան աշխարհին խառ-
նուրդ ջրականին՝ ի զանազան կարգացմարդ-
կան գումարեալ՝ ի Գաղղիացւոց, յօտա-
րաց և՝ ի գիւղականաց, որք անհրահանգ և
անճոշակք աւազակաբար յարձակու-
թեամբ կէին. ժողովեալ զառաս կարողս
արս յիսուն հազար եւ արքայորդւոյն գնալ
յօգնութիւն Փրեդերիկոսի Գ, ընդդէմ
Հելուեաիացւոց: Եւ պարապ առեալ թա-
գաւորն յերեսաց խռովարարացն, յաջո-
ղեաց հաստատել գունդս բարեկարգս մըշ-
տակաց՝ ի պինուորութեան ընդ ձիւղ հրա-
հանգօք, անձին պահեալ զիշխանութիւն
հանելոյ զրաք՝ ի պատիւ սպայից: Այսր ա-
զագաւ հաստատեցաւ գիսահարկ ընդ մըշ-
տնջենաւորս տուրս պետութեան. և սահմա-
նեցաւ այն՝ ի ռոճիկ զօրականին. ժողո-
վուրդն միահաւան ընդ թագաւորին ուրա-
խութեամբ էարկ զանձն ընդ թեթեւ օրի-

նաւոր պատուէրքն, որով անհնար լինէին յա-
փըշտակութիւք զօրականին, և հաստատէր իա-
ղաղութիւն քաղաքաց և դիւղից: Այս փըր-
կաւէտ օրինադրութիւն բաւական էր ի
պայծառութիւն Թագաւորութեանն՝ որ
կանխաւ իսկ բազում յաջողութիք արժանի
էր յիշատակի. քանզի այսու օրինօք զինի ո-
րոշէլոյ Ժողովրդեան ի կարգս կարգս ի
կրասեղոյն Լուդովիկոսէ, արագ արագ զօ-
րացաւ սէրութիւն Թագաւորին և իսնայր-
հեցան իշխանք: Եւ պայազատք Կարոլոսի
չէին գնացեալ շաւղաց նորա, ոչ ևս զօ-
րէին իւրաքանչիւր իշխանքն ընդեմ առնուն ի-
րեանց, որ միշտ զինեալ կայր. քանզի և ոչ
կարացեալ միաբանել յիւրեանս ի նոյն
ցանկութիւն չահու՝ քակտեալ լուծանէին:
Այսպէս տակաւ ընկճեցան նոքա, և Թա-
գաւորք Գաղղիոյ ընդ ձեռամբ ածին զմիա-
հեծան սէրութիւն ի վերայ ամենայն գա-
ւառաց Թագաւորութեան, զոր բռնակալ
սիրապետութիւն իշխանաց յաւիշատակեալ
էր ի յաջորդաց մեծին Կարոլոսի:

Իբրև այն ինչ Գաղղիա խնամատուն առա-
ջութեամբ Թագաւորին գարման գտանէր
չարեացն՝ հաստատեալ յառաջին զօրութի
իւր, ահա Անգղիացիք լուծին զգուլ զի-
նուց. և զի երկպառակեալ էին յիւրեանս
ի տոհմն Եորքայ և ի տունն Լանքաստրայ,
որ նախանձընդդեմ իրերայ հետամուտ էին
գահուն, անմտութիւն էր նոցա գրգռել
յայիժամ զարտաքին Թշնամին ի կորուստ
իւրեանց: Յառաջնում ձակատամարտին

կալաւ Կարոլոս վնասմանախա, և յիրկրոր դաւին զԿիևն առ Հաւատակ. և ի սակաւ ինչ ամս հալածեաց վնասս բազումս ի Գաղղիոյ, և յաշխարհակալութեանցդ նոցա ի ցամաքի զբաղել ևս եթող ի ձեռս նոցա (1453):

Ա յսոցիկս Կարոլոս յաղթանակեալ ի վերայ ամենայն արտաքին թշնամեացդ իւրոց, մեծապարգև վարձահատոյց եղև զօրավարացդ և զօրուն, որ հաղորդ գտան վաստակոյն և յաջողութեանցդ: Խաղաղութիւն անվրդով, օրէնք իմաստուն, և հայրախնամ վարչութիւն զարգացուցանէին զվաճառականութիւն, և սիրէր առատ լինութիւն յամենայն կողմանս աշխարհին, և նորօրինակ բարեկենդանութիւն հաւատակից փոխանակէր անցեալոյն աղետից: Բայց թագաւորն ի փառս անդ իւր ողբոց գտաւ արժանի: Հայր եկաց թշուառ, որպէս երբեմն թշուառ որգի. ցաւ մեծ էր նմա տեսանել զպայազատան իւր զանգրանիկն ապստամբեալ ընդդէմ իւր, և յամառեալ հեռի կալ յաղքատնեաց առ փիլիպպոսի դքսին Բուրգունիոյ: Ա յս ըմբռստ և չարաշուք բարք ալքայորդւոյն, չարագոյժ հօրն առ յապայն, ի խոր խոցեր վնաս, և սկզբնէ կարեր զբաժանագնացնել վնաս ի միմեանս հոգոյն: Եւ ասէր իսկ յաճախ, թէ «Ցածէ գուքան Բուրգունիոյ զաղուէս՝ որ յաւուր միում կերիցէ զձագս նորա»:

Ազգ եղև յայնժամ, թէ կաշառակուրծք ոմանք ի հրապոյրս ելեալ որգւոյն՝ գեղա-

մահ վնաս կամին առնել: Եւ այս անխոր-
հուրդ ազգս յուժ թուն մաև լինայ նորա, Հարկ
վնաս յապդ լինչ ցնորս մտայ, որով զաւուրս
ուղի ոչ լինչ Ճաշակեր, կարծելով գեղեալ
զամենայն զոր մատուցանէին նմա: Ուր ու-
րեմն հաւանեցուցեալ վնաս բժշկայ՝ զի ան-
պայման երկիւղ մահուն հիւծեր վնաս և
մաշեր, կամեցաւ առնուլ լինչ. այլ խոհա-
ցող նորա և ազնիւ կծկեալ ցամաքեալ ոչ լինչ
'ի նեղքս ընդունէին. և յետ աւուրց լինչ
մեռաւ՝ գառնապէս ողբալով զյանցանս կե-
նաց իւրոց, մանաւանդ զանառակ գնացն,
յոր ոչ զգաց ունէր իւր 'ի նախնեացն օրինակ
մոլուելոյ, և եթող իւր չարաչար հե-
ւանոցս:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Թագաւորութիւն Լուդովիկեայ ԺԱ, ծնրդո-
րութիւն նորա յամսոցել զպատմութիւնս իշխանաց Ֆ-
րոց, անխնայել նորա 'ի գերութիւն, և ազատ-
նել ընծել 'ի սպառ զամենայն իշխանս Ֆ-
զօրացելս:

1461 – 1477.

Լուդովիկոս ԺԱ առ կենդանութեամբ
Տօրն երևեալ սրտիկ անառակ, և ոչ փո-
խեալ ամենևին զդնացս իւր 'ի հասանել գա-
հուն: Խարուեր խիտս, կասկածոտ, խո-

թամանիկ և անգուեմ, կալաւ նա իւր շաւիղ հակառակ հօրն. էարկ ի պաշտամանէ զամենայն հաւատարիմ պաշտօնեայս հօր իւրոյ, և կացոյց ի տեղի նոցա արս վատթարս՝ յորոց ոչինչ կասկած երկիւղի էր նմա. զբժիշկըն եդ ի սենեկապետ, զթերթաճին յառաջնորդ զօրուն, զվարսավիրայն կարգեաց ի գեսպանութեի: Տեսեալ իշխանաց զայս չարաչուք և անհեթեթ գնացս նորա՝ սկսան խիճալ զհանդերձելոցն. և յօգուտ արկեալ զորտունչ համաշխարհական՝ միաբանեցին ի զէն. և զապստամբութիւն իւրեանց կամեցեալ առագաստել պատրուակաւ բարւոյ, կոչեցին զայն «Դաշնակցութիւն հայրենասէր». Կարոլոս մականուանեալն Յանգուգն որդի Փիլիպպոսի դքսին Բուրգոնացւոյ զօրավար կացեալ ապըստամբաց, խաղաց մինչև ի Թագաւորեալ քաղաքն: Դէպք ի բարի յաջողեցին, զի ժողովուրդն անցելովք աղետիւքն խրատեալ՝ ոչ կամեցաւ զկողմն ունել աւազակաց, մանաւանդ բնակիչք մայրաքաղաքին ցուցին զհաւատարմութիւն մեծ, ոչինչ թուլացեալ ի զօրութենէ Թշնամեաց. վասն գնալով օրինակի նոցա և այլ քաղաքք ընդգէմ կայսին գաշնակցեցան: Լուդովիկոս Թէպէտ աեսանէր պատրաստ յօգնականութիւն զարութիւն քաջութեան, սակայն յետ միանգամ բախելոյ մարախու պատերազմաւ՝ լաւ համարեցաւ դիմել ի սովորական իւր զէնս, ի նենգութսպատիր հնարս խաբկանաց ի ձեռք եր կպատուակութեամբ զմիաբանեալսն:

Զինաւթափ արար զապստամբան, կատա-
րելով զամենայն կամս նոցա. քանզի ակն
ունէր գաղանիւ հնարիւք թափել ՚ի բաց որ
ինչ առ Տարկի բռնութենէն շնորհէր (1465):

Կարօղոս կալեալ զբռամբ զինչհանութենի
դքսութեան Բուրգունախոյ, շահատէս հա-
մարեցաւ իւրումն օգտի ՚ի խորհուրդ գալ
ընդ Թագաւորին: Այլ Թագաւորն երկիւ-
ղիւ խնթայր ՚ի Կարօղոսէ քան յայլ ամե-
նայն առնմից աւագ իշխանաց. և զի Ճանա-
չէր զնա բուռն, եռանդնոտ քան խոհական,
յուսայր ածել զնա ՚ի կամս իւր, կամ գէթ
՚ի վերայ հասանել խորհրդոց նորա: Ա յ-
սպէս մեծայոյս ընդ խորագէտ քաղաքավա-
րութենեանն ջոգաւ ՚ի Փերոն՝ յամենայն քա-
ղաք դքսութեան նորա: Այլ նենգաժոռ
բարուցն Լուդովիկեայ ալիժանահայս պա-
տուհաս եկեալ հասանէր ՚ի վերայ: Քան-
զի ՚ի ժամանակի յորում էր նա ՚ի Փերոն
ընդ ձեռամբ դքսին, զանխոով ՚ի զէն գըր-
գռեաց զԼիեժացիս ընդդէմ Կարօղոսի, և
վառեաց զնոսա ՚ի զայրոյթ: Ընդ այս լուր
պատուիրակ ցասեաւ Կարօղոս, և վաղվաղա-
կի եաս փակել զԹագաւորն յամուրսն Փե-
րոնի: Եւ բնաւորեաւն ՚ի նմա խրոխտ վայ-
րագութիւն ածէր մղէր զնա ընդդէմ կե-
նաց Թշնամւոյն, սակայն երկիւղ հեռաւա-
նացն կասեցուցանէր զնա. այսպէս զաւուրս
բազումս անցուցանէր նա ՚ի սասպիկ յուզ-
մունս մտաց: Իսկ Լուդովիկոս անգէտ ա-
մենևին Թէ զինչ հանգիպեալ էր նմա
պատահար, առէր զինեցութիւն իւր և ոչ

բայլ վկայլ վատահութիւն՝ որով անկաւ ի ծուլակ Հշնամւոյն: Յորչափ ատանէր ընդ լուսանցոյց բերդին զաշտարակն, ուր կայր Պարզամիտ վախճանեաց զկեանս իւր, ընդ ախտս ատելին յաձախէր երկիւղ նորա: Ապա դուքն ըստ խրատուս իմաստնոց իւրոյխորհրդականաց՝ զարդարացեալ ցոտումն իւր ի բաց Թողեալ վատն քաղաքավարութեան, և զկնձա վրէժխնդրութեան վատն օգոն՝ զոր պատրաստակին նմա հանդամանեք ժամանակին, շատ համարեցաւ սակս զԹագաւորն ի նոր գաշինս և յերդումն հաւատարմութեան ի սուրբ խաչն: Այսուհետ գոգցեա նմին կատարել կաշկանդեաց զՆուգովիկոս, որ ընդ նենգաւոր չարաբարոյ գնացին՝ ձախողակի երկիւղածութիւք կարծէր Թէ սակրգինութիւն ի սուրբ խաչն ածցէ նմա մահ անշուշտ ի նմին իսկ սաբաթոջ: Ա՛ռ ոչ ինչ գրեր նա զերդումնազանցութիւն և զկոխել առ ատն զօրէնս սրբութեան. այլ չարաչար երկիւղ մահուն կաշկանդէր զբնաւորական նորին չարութիւն, և յակամայս հաւատարիմ գործէր բանիցն: Արդարև ոչ միշտ զօրացաւ այս երկիւղ ի նուաձել զանխիղճ միտս նորա. բայց յո՛ր ժամուծ ելեւմտնս զանձն ոչ արկանէր նա՝ եթէ ընդ չարաբարութեանն և արհամարհանք կրօնից սրբութեան սպրդեալ մուտ նէին ի նէրքս:

Հանդերձ ակամայ ծանր պայմանօք գաշնագրութեանն բռնագատեաց զինա գուքան անդէն վաղվաղակի խոտալ ի վերայ Լին-

Յայցոց՝ զորս ի զէն էր գրգռեալ։ Եւ ամենապատրաստ կորանօք Տարկեցաւ Թագաւորն առաջիկայ գտանել աւարառութեանն քաղաքին, և ականատես լինել ազանց ինձական կցայց իւրոց մատնելոյ յանգուիծ ցասումն յաղթականին (1468)։

Դարձաւ ապա Լուդովիկոս ի Գաղղիա, այլ յետ բազմագիմի նախատանաց անբերելեաց սոսկականի իսկ ուրուք. Թէպէտ և Թագաւորն անփոյթ ամենևին զպատուոյն՝ զամենայն ինչ առնէր, զկիզծուպատիւ շողոմութիւն, զվատ սուտակատպատութիւն, միայն զի հասցէ ի կատարումն խորհրդոցն։ Ազատեալ ի վտանգից ասպի, եգիտ բազբազայս Թափելոյ զանձն յամօթալից պայմանացն փերմնայ. և գուքան փառասէր միանգամայն և յանգուգն՝ եաս նմա իրաւայն պատճառս։ Յայնմ հետէ ապա անդուլ կուռ զմիմեանց կին անհետ ի վերայ գայլն պատերազմունք և դաշնագրութիւնք, յոյգք խաղութենանց և հաշտութեանց խաղաղութեան. ուր ջանային երկոքին կողմանքն ի կործանումն իրեարց. եւ միշտ յորոգայթ պատրանաց Թագաւորին ընկնէին գուքան Կարոլոս։ Թագաւորին սովորական մեքենայք էին՝ անդուլ նորանոր գրգիռս յարուցանել ընդդէմ նորա, արկանել զնա ընդ գրացիս, Թշնամիս յարուցանել ի վերայ. որոց ընդդէմ անխորհուրդն Կարոլոս յարձակէր Թափով ուժգնութեան, մինչդեռ Թագաւորն գէտ ակն կալեալ ընդունայն ապշեանացն՝ ի մեծութիւն աերութեան իւրոյ

միտ գնէր: Այսպէս կարօղաս խաղալիկ լինալ հնարիմաց քաղաքավարութեանն Թագաւորին, ուր ուրեմն եդիտ վկայութիւն իւր զմահացու առնալ վէրս ի պաշարման Նանսեայ, զոր կամէր կորզել ի ձեռաց դքսին Լորենայ (1477):

Ընդ լուր մահու դքսին՝ աճապարեաց Թագաւորն յափշտակել զԲուրգոնիա, միացուցանալ զայն ընդ ալքունի իշխանութեանն. և այսու զերծեալ նա ի հզօր և ի բազմավտանգ իշխանէն, էտ զմահաբեր հարուած ժառանգական իշխանութեան: Զնոյն կամէր առնել Լուդովիկոս և Փլանդրիոյ, այլ չէղև ձեռնհաս գլուխ հանել և զայս փարթամ գաւառ. քանզի Մարիամ դուստր միամօր Կառլոսի՝ էած օժիտ զգաւառն զայն ընդ Աստրին Նահանգս՝ Մաքսիմիլիանոսի մեծի դքսին Աւստրիոյ, որ ամբարձաւ ապա ի գահ ինքնակալութեան: Այսու խնամութեամբ զօրացեալ յոյժ ապա տունն Աւստրիոյ, ի վտանգ արկանէր զԳալլիա, և զԵւրոպա առ հասարակ ի հուր մարտի վառէր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Մահ Լուդովիկոս և նկարագիր բարուց նորա:

1477 – 1483.

Եհաս Լուդովիկոս աներջանացն, որոց յօրէ անտի ամբառնալոյ յանձոր Թագաւորութեան անգուլ զհեա էր. անկաւ ոտն Բուրգոնտիոյ, խոնարհեցաւ իշխանն Բրիտանիոյ ի հաշտութիւն հնազանդութեան, ընկճեցաւ դուքսն Ալժուի, որոյ ընդարձակ գաւառքն անկան ապա ի ձեռս Թագաւորին. ձերբակալ եղև դուքսն Ալանսոնի և արկաւ ի բանտ և աերութիւն նորա յարքունիս գրաւեցաւ: Ապանաւ կոմսն Արմանեապ. և աերութիւն նորա միացաւ ընդ իշխանութեան գահոյն, զնոյն պատուհաս կրեալ և կոմսն Սէն Փոլ փեսայ ալբայիին վասն համախոհութեանն ընդ դքսին Բուրգոնտիոյ. մահին ընդ լծով իշխանութեան Թագաւորին և կոմսքն Ֆուսայ, Փերիկորայ, Ռուսիլոնի և Սերտայնի. միայն ապրեցան դուքսքն Պուրպոնի և Աբեվլնոնի մտերիմ բարեկամութեամբն իւրեանց ընդ ալբայի: Այսպէս ահարկու եղև Թագաւորն գալ ղնոյ, մինչև ոչ ևս իշխանաց նորա խլրտել ի ղէն: Այլ ընդունայն եղեն Ճգունք նորա, զի յահմայ կամն աեւանէր մերձե-

նալ ահաւոր Աշնամեաց՝ որոց ընդդէմ ոչ ինչ զօրէր առնանել խորամանկ Հարտաւրու-
Թիւն նորա, ծերութեան առեմ և մահու: Ամիսուկաւ ի բերդն Փլէսի մերձ ի Տու-
լուին, ի սկզբան անդ զամենայն մարդ-
կային հնարս հնարեցաւ ի հեռացուցանել
լոյ յանձնէ զօրն մահագոյժ: Այլ ոչինչ
յայնցանէ օգտեաւ՝ դիմէր ի գերմարդկայ-
ինս, ի հանդէսս առեմ Թափօրից, յօ-
տագնացութիւնս, և ի բարեխօսութիւն
նշխարաց սրբոց: Եւ ի վախճանի տայր ա-
ծել ի ծագաց անտի Խաչելոյ զառաքն Փրան-
կիսկոս Պաւլայեցի, զհոչակեալն յայնժամ
սքանչելագործութեամբ. անկանէր յոտս
նորա արտասուալից աղաչանօք խնդրել ի
սեաւնէ զերկարութիւն աւուրց. այլ այլն
Աստուծոյ խրատ տայր նմա հոգ տանել
մանաւանդ փրկութեան հոգւոյ իւրոյ՝ քան
ի կեանս զառամ և նուաղեալ մարմնոյն:
Լուաւ Թագաւորն փրկարար խրատու սրբ-
ոյն, և խնդրելով մեծաձայն մինչև ցյե-
րին շունչն զողորմութիւնն Աստուծոյ և
զպաշտպանութիւն Սրբոյ կուսին՝ մեռա-
նէր:

Եթէ Թագաւորս այս ընդ խորագնին, ընդ-
արձակ և բազմածնութիւնդ մտացն ի գիւտ
հնարից՝ ունէր կցորդ և սիրտ ուղիղ, ընդ
մեծանուն Թագաւորս Գաղղիոյ կարդէր.
այլ չքնաղագիւտն հանճար ի քաղաքավա-
րութիւն և գեղեցիկ ձիրք բնութեան, ա-
պականեցան ի նմա չարաչար վարելով նո-
քօք: Կասկածոտ բնաւորութիւնն առնէր

զնա անխիղճ և անգութ, խոհականութիւն զառածանէր՝ ի նմա՝ ի խորամանկութիւն, և քաղաքականութեան արուեստ՝ ի նենդութիւն. առաստաձեան գոտւ միայն առ լսեսանեաւ կաշառակուրծ մատնիչս գաղտնեաց ալքունեաց Եւրոպիոյ: Օրինակաւ նորա արուեստ իաբէութեան զաշնուակատնութիւն զգեցաւ, և առ մերձաւոր ազգս հասարակ ինչ գործ համարէր, ոչք գրէին առ գեսպանս իւրեանց. զի «Եթէ սուեն ձեզ, անխիղճ և գուք սուեսջիք նոցա»: Եւ թէպէտ այսպէս անհեթեթ էր նա և ախտաւոր, սակայն ըստ իւրում պայմանի սուէպ կայր ջերմեռանդն պաշտամանց կրօնի. երթայր յուխտ սրբոց, մատնէր՝ ի պաշտամունս եկեղեցւոյ՝ ի հանդերձս կղերց, կրէր՝ ի խոյրն զպատակերս Տիրամօրն և սրբոց պղնձի կամ կապարեայ. և այս ոչ առ կեղծաւորութեան, այլ առ իօլամիտ խորհրդոցն, որովք ղկարևորն աստուածպաշտութիւն Թողեալ՝ արտաքին եւեթ գործոց ջերմեռանդութեան պատկառ կայր, յաճախ մանրաքննին խուզարկու իղձի մտաց, ի ջնջինս երկիւղած, ի ծանուցն անխիղճ անօրինեալ՝ ի սպանութիւնս անբուրս: Սակայն ոչ ոք՝ ի թագաւորաց իւրև զնոգովիկոս ժո. պայծառացոյց զգաւազան Թագաւորութեանն Դաղղիոյ, զօրացոյց զիշխանութիւն ալքունի առեւնակալաց առ ընկճելոյ նոքօք զբռնաւորութիւն աւագորէից: Թէպէտ ծանրացոյց նա զՀարկս ժողովրդեան իւրոյ, այլ՝ ի չինուածս ճանապարհաց, ի կառոյցս

նաւահանգստից և հասարակաց կարևոր շինուածոց վարեաց զայն ամենայն: Սկիզբն եղև առ սովաւ բարգաւաճելոյ արուեստից, վաճառականութեան և գիտութեան ի Գաղղիա: Քանզի եւ ածել Լուդովիկոս ի Յունաստանէ և յԻտալիոյ ձարտարս՝ ուսուցանել ժողովրդեան իւրոյ անկանել կերպասս ազնիւս, և հասատաւեաց գործատանս հանելոյ մեռսքս: Օրինագրեաց զնոյն վարել չափ և կշիռ ընդ ամենայն Գաղղիա, եգ և կայանս թղթաբերաց: Յաճախեաց զշնորհս ազատութեան համալսարանին փարիզու և յաւել կանգնել այլ ևս համալսարանս ի Վալենսիան (Վալանս) և ի Պուրկ. հասատաւեաց և դպրոց բժշկութեան:

Տպագրութեան գիւտ՝ որ հանգերձեալ էր կերպարանափոխ առնել զաշխարհ՝ հնարեցաւ առ Թագաւորութեամբ Լուդովիկեայ ի ձեռն Յովհաննու Կուտենբէմպերկայ ի Մոգունտիա. և արքայ ի շնորհս աղաչանաց երկուց ոմանց աստուածաբանից էս հասատատել զառաջին տպագրատուն ի Գաղղիա առ Սորպոնս:

Ախտէս ամբարձեալ Լուդովիկեայ զպատիւ Թագաւորութեան իւրոյ, ի նմանէ սկսաւ և անուն վէհափառութեան Թագաւորաց Գաղղիոյ. քանզի անտի և յառաջ կայսերաց ևեթ էր պահեալ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՐՈԼՈՍԻ Ը, Ե ՊՐՈՒՍԱՆՈՒ ՆՈՐԱ ՅԻՊՈԼԻԱ:

1483 – 1498.

ԿԱՐՈԼՈՍ Ը *մանուկ երեքտասան ամաց ՚ի թագաւորել իւրում, ընդ խակուԹեան հասակին խակ էր և ՚ի կրԹուԹենէ հրահանգաց: Քանզի հայր նորա Լուդովիկոս երկուցեալ զի մի որդի իւր ասլըսամփուԹիւն ինչ նիւԹեացէ ընդդէմ իւր, որպէս երբեմն ինքն ընդդէմ հօրն, ունէր զնա ՚ի խոր ապիտուԹեան, տպաւորելով և՚ի միտս նորա. զի «Թէ ոք կեղծաւորել ոչ գիտէ, անգէտ է այնպիսին արուեստի ԹագաւորուԹեան»: Կարոլոս բարեբաղդ գտեալ մուռացաւ զայս խրատ, և ամենայն գնացիւքն իւրովք ցուցաւ աննման խրատատուին իւրոյ: Լուդովիկոս հայր նորա փոխանակ խնամակալ կարգելոյ նմա զոք յաւագաց աշխարհին, եԹող տեսուչ արքայորդւոյն և վարիչ պետուԹեն զդուստրը իւր զանգրանիկ զաիկինն Աննա: Կին հանճարեղ և խմաստուն բաւական ՚ի գլուխ տանելոյ զնորհուրդս հօրն:*

Իշխանք պետուԹեանն ընդ երկաԹի գաւազանաւ Լուդովիկեայ խոնարհեալք,

ամբարձին զգլուխ իւրեանց ՚ի մահու նո-
րին ընդդէմ խնամակալուն արքայորդւոյն,
և առաջնորդ ապստամբացն եկաց Լուդո-
վիկոս դուքս Աբեղինոնի՝ պատանի աշխոյժ
և փառասէր. այլ անդէն զգաճ առին և-
մասուն խոհականութեան Աննայի, որ
գումարեալ ժողով ազգախուռն, և հաւա-
նութեամբ նոցա հաստատեալ յիշխանու-
թեան իւրում, եհար զապստամբս միան-
գամ և երկիցս և խոնարհեցոյց զնոսա, և
յերրորդումն քաջ զօրավարն Թրէմոյլ խոր-
տակեաց զմիաբանեալսն, ձերբակալ արար
զդուքսն Աբեղինոնի զԼուդովիկոս, և զնշ-
խանն Օրանժ, և զայլս բազումս: Իսկ դուք-
սըն Բրիտանիոյ խոնարհեալ ՚ի խնդիր հաշ-
տութեան, մեռաւ ոչ յետ լինչ բազմաց:
Ցայնժամ արքայն Կարոլոս ամուսնացու-
ցեալ լինէր զԱննա զժառանգ դքսին,
յաւէտ ՚ի տէրութիւն իւր զգեղեցիկ զայն
գաւառ (1491): Եւ ՚ի հզօր հարկաւոր իշ-
խանուց որ այնչափ աշխատութիւն հատու-
ցին Թագաւորաց առաջնոց, մնաց միայն իշ-
խանն Փլանդրիոյ, աւագ դուքս Աբս-
պուրկոյ. ընդ որում խաղաղութիւն արա-
րեալ Թագաւորն, եմոյղ ՚ի նա զգաւառս
լինէ. և ՚ի հաշտութիւն խօսելով ընդ Ա-
րտակոնացիս գարձոյց ՚ի նոսա զՌուսիլլոն
և զԼէրտայն:

Իրրև եաեւ Թագաւորն Կարոլոս թէ ՚ի
հանգստութեան վայելէ գտղղիա, փա-
ռասէր աւնէր աշխարհակալութիւն անկաւ ՚ի
միտս նորա՝ տիրել Նէապօլսոյ, այսպիսի

ինչ իրաւունս պատճառեալ. քանզի կա-
րօղս դուքս Անժուի, եղբայրս արքային Լու-
դովիկեայ՝ առեր էր Ղէսպօլսոյ. և առհմ
Թագաւորաց Արագոնեայ յանիրաւի բռնա-
ցեալ ի Թագաւորութենէն՝ անժառանգ.
արարին զառաջին կարօղսն, վասն որոյ ցան-
կայր Թագաւորն Թափել զայն ի ձեռաց
բռնակալացն հաստատելոց անդէն ի բա-
զում ամաց հետէ:

Խառնիս բաժանեալ էր յայնժամ ի զա-
նազան իշխանութիւնս՝ յորս երևելի էին
դքսութիւն Մեդիոլանու, հասարակապե-
տութիւնք Գենուայ, Փլորենտիոյ և Վե-
նետկեցւոց: Եւ սոքա ամենեքեան ի սկզբ-
բան կամակից ցուցան Թագաւորին Գաղ-
լիոյ, կէղծեօք երէկ սուտգութեամբ չգի-
տեմ, յուսով ընդարձակելոյ զսահմանս
սէրութեան իւրեանց ի վերայ Թագաւո-
րութեան Ղէսպօլսոյ: Թէպէտ ոչինչ իւիք
ձեռնտու եղեն Թագաւորին ըստ խոստման
իւրեանց, այլ նորա զօրութեամբ մեծաս
հաղցեալ առ նոքօք, և անցեալ ընդ Ի-
տալիա իշխանաբար, եմուտ իբրև յաղթող
ի Բիզա և ի Փլորենտիա, և ետ ի սահմանս
Թագաւորութեան Ղէսպօլսոյ: Ի մերձե-
նալ նորա երկիւղ կալաւ զքաղաքս և զգա-
ւառս, և ամենայնեւնց մայրաքաղաքն բա-
նալ զգրուեաս առաջի նորա իբրև իւրումն
ազատարարի ինդութեամբ. քանզի Թա-
գաւորն արտակոնացի Ալփոնսոս վաղուընջ
փախուցեալ էր ի քաղաքէն: Եւ այսպէս
ալքայն կարօղս ի քսան աւուրս յանկուն

գործոյն հասանէր մեծաւ աշխարհակալու-
թեամբն (1495):

Նիզակակից կարոլոսի իշխանք Իտալիոյ
սեսեալ զանակնկալ և զանաշխատ երագ
աշխարհակալութիւնս նորա զարհուրեցան
յոյժ, խնդացեալ ընդ կորուստ ազատու-
թեան իւրեանց. և ամենեքեան բայ՝ի փլո-
րենասացոց միաբանեցան ընդ Մաքսիմի-
լիանոսի կայսեր և ընդ փերդինանտոսի թա-
գաւորին Սպանիոյ արգելուլ զդարձ յաղ-
թականին, բնաջինջ կորուսանել կամ՝ի
գերութիւն վարել զնոսա: Անդրկիւղ ա-
մենևին կարոլոս կալաւ զձանապարհ գաղ-
ղիոյ եօթն հազար արամբք միայն, և իջեալ
ընդ Ապեննեանս՝ պատահեաց երեսուն և
հինգ հազար վառելոց մերձ՝ի Ֆոռնովոյ:
Անմարթ էր այնուհետև խոյս տալ գաղ-
ղիացոց՝ի մարտէն. և առաջի կայր նոցա
կամ կորուսա անձողոպրելի կամ յաղթու-
թիւն ընդդէմ մեծի բազմութեան թշնա-
մեաց, և ձեղքեալ անցանել զթանձրութիւն
բանակի նոցա: Թագաւորն արիացեալ՝ի
տագնապ ժամու՝ի գլուխ փոքու գնդին
չու արար խաղաց, հարաւ ընդ նոսա, և
անվեհեր քաջութեամբ զդէմ կալաւ յար-
ձակմանն. սակայն եթէ դէպք ինչ բարե-
պատեհ, որ պիտէ երբեմն և յանյուսից
գործ մեծ գործել՝ չէր կարոլոսի՝ի թի-
կունս հասեալ, անմարթ էր նմա դոյզն գըն-
դաւ տևել տոկալ ընդ երկար, և ապրեցու-
ցանել զանձն: Քանզի ոմանք՝ի հեծելազօ-
րուէ թշնամեաց անկան՝ի վերայ անպա-

հապան կահուց Գաղղիացւոց. և ի տեսա-
նելն զաւարն Ճոխ, միացորդ հեծելազօրուն
ցրուեցան յաւարառմանսն: Ջայս պատեհ
ի ձեռն առեալ Թագաւորն՝ հրամայեաց
Թիկնապահացն և ազատախումբ զօրուն
զհետ իւր խուժել. անկաւ նոքօք հանդերձ
ի վերայ հեռևակազօրուն խաալացւոց, մը-
ղեաց զնոսա առաջի իւր ի հարուածս մեծա-
մեծս: Յերկուս ժամս ի գլուխ տարաւ զայս
մեծ յաղթութիւն՝ երկերիւր Գաղղիացիս
Թողեալ միայն ի տեղւոջ ձակատուն: Շա-
տացեալ Կարոլոսի զի եթող յաղթութիւս
Ճանապարհ ի Թագաւորութիւն իւր, էանց
ընդ այն յաղթանակաւ: Բայց արշաւա-
նացն յԽոռալիա արդասիք՝ էին միայն փառք
այսր յաղթութեան. քանզի այն ինչ եհաս
Թագաւորն ի Լուգդոն գժտեալ ընդ մի-
մեանս հրամանատարքն կացուցեալ ի նէա-
պօլիս, Թողին անդէն զաշխարհակալութիւն
մեծ ի տուն Ապահոնայ:

Տաղտկացեալ Կարոլոս ի գործոյս՝ յոլ-
մէ ոչինչ այլ շահեցաւ, քան չարժել զմա-
խանս ազգայ մնասուրայ. և զի տեսանէր
զանձն ուժասեմսի և խօթացեալ՝ զմտաւ
էած այնուհետև զմիացորդս աւուրց ան-
ցուցանել ի բարօրութիւն ժողովրդեան
իւրոյ: Եւ մինչ յայսմ խորհրդի էր, հա-
րեալ ի կաթուածոյ մեռաւ ի ծաղկի հա-
սակի: Գնացք նորա ոչ միշտ զերծ գտան
ի պարսաւանաց, այլ նորօրինակ ցոյցք բա-
րեպաշտութեան ի վերջին աւուրս կենաց
նորա հաւատոյն մեզ զոլորմութեանն

Աստուծոյ զաղբիւրս հոսեալ ՚ի նա: Եր-
կիցս խոստովանեցաւ զմեզս իւր յեօթնեկի
անգ վախճանին, հաստատուն եգեալ ՚ի
մեխ, որպէս և վկայեաց առ ոմանս ՚ի մեռ-
մաց իւրոց, չյանցանել երբեք նեբելի խակ
մեղաք՝ եթէ հնար լինի ինձ յայնմ հետէ,
և գործել արբութեամբ խղճի զիրկութեի
անձին. յայս միտս մեռաւ Կարոլոս Ը:
Քաղցրութեամբ բարուց իւրոց և մարգա-
սիրութեամբ և գործովք բարեաց սիրելի
ամենեցուն ոզք մերձենային ՚ի նա, մինչ եր-
կուք ոմանք ՚ի սպասից առ ցաւոց սրսկ մե-
ռան ՚ի նմին խակ աւուր յուղարկաւորու-
թեան նորա: Ոչ եթող Կարոլոս իւր պայ-
ազատս, և ՚ի նմա վախճան եղև առաջնոյ
ցեղին Վալուեանց տոհմին:

Ա թագաւորութեամբ Կարոլոսի գեներ-
ացի ոմն Քլիսոսափոր Քոլոմպոս անուն,
եկն յաղքունիս խնդրելով ձեռնտուութի
յաղքայէ ՚ի գիւտ նորոյ աշխարհի՝ Ճանա-
պարհ առնելով անդր քան զարևելեան
Հնդկաստան: Ապահաս եղեն բանք օտա-
րականիս, և յետ ամաց ինչ յաջողութի
գործոյն Ճոխացոյց նա զթագաւորութիւնն
Կաստիլիոյ բազմահարուստս ընտձակ գաւա-
ռօք Ամերիկոյ:

ԲԱՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

ԳԱՂԱՓԻԱՑԻՈՑ

ԱՌ ԹԱԳԱՒՈՐՕՔ ՎԱՂՈՒԵԱՆՑ։

Ա.

Խորհրդարան, յետագրծք, վճռոք և հերձուած։

Խորհրդարանն զոր Գեղեցիկն սահմանեաց Փիլիպպոս, բաժանեցաւ ասպա առ յաջորդաւք նորա ի բազում ատեանս. յորս էին երկոտասան ատենաւք, զորք նախադահք, քառասուն եկեղեցական խորհրդականք, և աշխարհականք նոյնչափ, ուր վերակացուք աղերսագրոց, և ընդ ամենայն արք հարիւր։ Ի սկզբան երկից՝ ի տարւոջն գումարէր ժողով նոցա հրամանաւ Թագաւորին, և տևէր զամիս երկուս. այլ յաղմուկս և յաղէտս Թագաւորութեան Կարոլոսի Զ զորացեալ խորհրդարանին, ամրացոյց զիշխանութիւն իւր՝ փոխեալ զայն ի միջնելենաւոր։ Յայնմ հետէ դադարեցաւ գոգցեա սեպհոյն ժողով, ատուբերք իմն նախնի պաշտամանց իշխանութեան նոցա մնացեալ՝ իրաւունք մտանելոյ ի հանդէս ժողովոց։

Գաղղիացիք չև էին հեռամուտք վաճառականութեան, և դեռ ևս օտարք ունէին զայն. նա և ի ձեռագործս իսկ յաւուրս Կարոլոսի Զգօնի սկսան զարդանալ. և երբեմն էլնէր ի նոսա կացին Ռուան, Ամիէն և Հռէմս քաղաքք: Այլ ոչ չատացեալ նոցա հաստատուն և խոշոր ձեռագործովքն, արտաքուստ յօտար ազգաց տային բերել նուրբս և հաճոյականս ի զարդ շռայլութեան: Տեսեալ Լուդովիկոսի ԺԱ թէ քանի՛ բազմութիւն գանձուց էլանէր յաշխարհէն ի պատճառս նանիր զարդուցն, եւ ածել ի Յունաստանէ և յԻտալիոյ Հարտարս ի հիւս ոսկեթել, արծաթի և մետաքսեայ դիպակաց. ուստի սկիզբն մեծահռչակ ձեռագործաց Լուգդունի եղև:

Մեծամեծ փոփոխութիւնք եղևն ի ձև զգեստուց յաւուրս Փիլիպպոսի Վալուայ. կանայք զատորաքարշ հանդերձին իւրեանց զքղանցս հանդրիճեալ, այլ ընդ այնր ի ներքս մուծին տարազս ծաղրականս: Եւ վիսանակ բրգաձև ապարօշին, սկսան յօրինել լայնս իբր կէս կանգնաչափ, սկսան Ջաւորս երկուստեք, ոչինչ նուազ քան զառաջինն անհեթեթս: Եւ ուր ի պատճառս բրգաձև ապարօշին բարձր յառաջագոյն գործէին դրունք, սկսան յայնժամ ընդարձակս զդրունսն գործել, ընդունայնութենէ կանանց Հարտարապետականքն հպատակեալ արուեստք: Իսկ վիսանակ արանցն պճնաւոր զգեստուց յաջորդեցին բամկունակք՝ զսպեալք ժապաւինաւ ընդ մէջս,

երկուսանէք զկողնէք ուռոյցս գործելով և ծալս առ՝ի քաջալանչս երևելոյ: Ի ծաղրականս յայս՝ի ձև զգեստու յաւելուին և հերքն դիզադէզ զճակատուքն խրիւ զբըբուկս հաւուց՝ի վեր ամբարձեալք. և շրջեալ զպարանոցաւ, թևզանիք լայնք և կարասեալք, և կօշիկ երկայնաքիմք կէս կանգնաչափ, անհեթեթ իմն՝ի գեղապատշաճ և յաւարտահասակ մարդիկ ժամանակին գործէին տեսիլ: Թագաւորքն միայն և արքայազունք պահէցին անփոփոխ զիւրեանց զվաղեմի զերկայն զգեստուցն սահ, յորմէ ապա մեծ մասն ազգին կալաւ անդրէն զնոյն ձև նախնեաց: Առ կարողսիւ և ծաղկիկ քանդակեալս ածէին զլեզանեօքն որ քան զասղնեգործեալս և քան զժապաւինեալս հատատաւուն էր: Ի ձևոյ սաղաւարտիկ զինուորաց հնարեցաւ յետ ժամանակաց խոյրն եւրոպական թագեայ կամ՝ի մարմոյ կլբոց յօրինեալ. ՚ի մէջ կոյս հինգերորդի դարուն սկսան ազնուականք կրել զայն, յաւելեալ զնովաւ զարդս՝ի վեսարոյ կամ ձեղենակս: Սահմանեալ էին զգեստք կարգաց իւրաքանչիւր, և արգելեալ անդամեսս կանանցն գօսի ոսկեղէն ածել ընդ մէջ. և քանզի նոքա ոչ կայլին յօրէնսն, սիկնայք պարկեշտուհիք թողին՝ի բաց զզարդն զայն. ուստի յառակս եղև «Լաւ է անուն բարի, քան զգօսի ոսկեղէն»:

Սովորութիւն կերակրոյ՝ի չորեքտասաներորդ դարուն առ Գաղղիացիս՝ այլազգ էր

յոյժ յայժմեան սովորութէ: Ի տան կամ ի մեռանելոցդ ժամու առաւօտուն ձայն էին, և յետ մռանելոյ արեգականընթերքին: Մինչ չև էին առ պարապորդութեան և առ անժուժութեան խանգարեալ բնութեանս օրէնք, առաւոտուն քան զձայն գործէին ընթերքիք: Բազմականք ի սեղանի ըստ վաղեմի սովորութեան, որպէս և այժմ ուրեք ուրեք յարևելս՝ ի միոջէ բաժակէ ըմպէին. յարքունիս իսկ ի մեծաշուք հանդէսս ևեթ այլ և այլ բաժակաց էր սովորոյթ, որ արծաթիք էին կամ պղնձիք և կամ խեցեղէնք. յախճապակեայքն յետոյ ուրեմն հնարեցան բաժակք առ Կարոլոսիս հինգերորդիս, որ սկսաւ մուծանել զվայելուչ ճոխութիւն յարքունիս: Ի հիւրընկալել նորա ի փարիզ զկայսրն Կարոլոս Դ, չորիցս տուեալ ձայն մեծ, յիւրաքանչիւր նուագի ետ պաշտել ի սեղանի սպասս համագամոյ ութսուն: Ի խրախուսս մեծամեծս և յանուանի վորս՝ պաշտէին զարքայ ի սեղանի սպասաւորք հեծեալք յերիվարս պատերազմականս: Սրահ կոչնոցն լուսաւորէր ոչ ի ճրագաց լուցելոց ի վերայ աշտանակաց, այլ ի բազմութենէ սպասաւորաց՝ որ պայծառապեացք ջահ ի ձեռին կարգեալ կային:

Բ.

Տէսպոտն, գէպռոնիքն և գէպտ:

ՅԱՒՈՒՐՍ վաղուեան Թագաւորայ և մուտ սովորութիւն տեսարանաց ի գաղղիա, ուր գԺպատեհս ինն առաջի առնէին զնորհուրդս սրբազանս, տևելով հանդիսին ժամս չորս: Չփրկիչն մեր անդ ի տեսիլ ածեալ՝ ըստ պատմելոյ ժամանակակցի ուրուք մատենագրի, Ճաշակելով զնիձոր, կամ զտերունականն արտասանելով զաղօթս ընդ առաքեալսն, յարուցանելով զմեռեալս և գատելով, և երանելեացն անդ լսելի լինելով երգակցութիւնք ընդ հրեշտակս, և ողբոց գատապարտելոցն ի գԺոխս ի խաւարչային և ի գարշահոտ վայրս ի մէջ դևաց բերկրեալոց ընդ նոցայն Թշուառութիւն: Չարմանք խակ են եթէ ոչպէս քրիստոնեայք ժամանակին սովոր էին յանդիման առնել ի Թատերս զՔրիստոս, զՏիրամայրն և զառաքեալս, որ հակառակ է ամենևին մտաց մերոց, մանաւանդ արդեաց Գաղղիացւոց: Այլ ժողովուրդն այն պարզամիտ և Թանձրը, որ առանց լսելոյ ինչ և տեսանելոյ ջառնոյր ի միտս, համարէր զայն ոչ սակաս և պատկառանս կրօնից. քանզի և զոմն խակ սրբազան սովին զգալի օրինակաւ կատարէր: Օրինակ էին Առաւելապայծառութեան

ոճն այսպէս առ Նոսա կատարէր. քահանայք երէք զգեցեալ զձև մոգուցն երեցունց, առաջնորդելով նոցա աստեղ՝ որ զնկեղեցեաւն երևէր, գայլն՝ և մատուցանել զընծայս, և զամենայն ինչ զպատմեալս յաւետարանի անդ կատարէին:

Հանգոյն ինն և քաղաքական հանդէսք առնե՛ կատարէին: Ջոր օրինակ գշնոյն Իզաւպէլ՝ ի մատանել իւր՝ ի մայրաքաղաքն, առնայնէր՝ ի դուռն արբոյն Դիոնեսիոսի զերկինս աստղանկար, և զԱստուած նատեալ՝ ի բարձրութեան անդ, և զդունդ մանկտուց շուրջ զնովաւ՝ ի դէմս հրեշտակաց երգելով նուագ քաղցրաձայն. և զՄուրբ կոյսն աստուածորդւոյն՝ ի գիրկս իւր, որ մանկականօք զբօսնոյր բժժանօք: Եւ յանցանել գշնոյին կառօք ընդ սառնաբակերպ երկնիւքն, և ահա յանկարծ իջին հրեշտակք երկու պատակ ոսկի՝ ի ձեռին՝ պատակել զգրշնոյն երգով ուրախութեան: Յետս դրանն՝ ի բարձրաւանդակի հեծեալք քրիստոնեայք և արտաքոյիք կռվջ՝ ի կռվջս տային ընդ իրեարս պատերազմ. և՝ ի բացեայ՝ ի յուրուական անտառի՝ առիւծ փայտեղէն և արծուի թղթակապեմ խոյանային՝ ի վերայ էղջերուի, և ամաղունք երկոտասան սուր՝ ի ձեռին դիմեալ յօգնութիւն էղջերուին, զերծուցեալ զնա բերէին յոտս գշնոյին: Եւ որք զնուէրս իսկ ղբնակչաց մայրաքաղաքին ածէին յատարանս գշնոյին, զարջոյ և զմիեղջերուի բերէին զկերպարանս:

Թէպէտ ձև էր փոյթ ազգին յուսումն

գիտութեանց, և Թագաւորն Կարոլոս Ե ա-
ռաւել քան զքսան դպրոցս կանգնեաց ՚ի
մայրաքաղաքին, յորս էր ՚Թիւ ուսանողաց
քան և հինգ հազար, սակայն վարժիցն եղա-
նակ հեղձուցանէր առաւել զսերմանս հան-
ճարոյ քան աճումն տայր նոցա. ումպէտ ՚Թը-
ւէր նոցա ընդհերցումն մատենագրաց Յու-
նաց և Հռովմայեցւոց. և զինի քերակա-
նութեան ՚ի տրամաբանութիւն ՚Թևակո-
խէին, և ՚ի նմա ոչ այլ ինչ ուսանէին՝ բայց
վիճաբանել անճահս և անօգուտս. վասն
որոյ գիտնոց ժամանակին հմտութիւնք
էին, քան կարգ ՚ի հմտութիւնան և դեղեցիկ
հանճարոյ ճաշակ:

Ախտարաց գիտութիւն բարձր ՚ի գլուխ
պանծայր յաւուրս Կարոլոսի հինգերորդի.
այս ծաղրական և արհամարհ արուեստ գու-
շակելոյ յատեղաց զբազդ մարդկան՝ առ
մեծ ինչ գիտութիւն համարէր ՚ի ժամա-
նակին. և այնպէս գրաւեալ ունէր զմիտս
ոամկին և զաղնուականաց, մինչև չհամար-
ձակել ումեք առնուլ զանուն բժշկի կամ
բնախօսի առանց լինելոյ աստեղագէտ. և
որ ևս զարմանալին է, Թագաւորն ինքնին
Կարոլոս Զգօն բաժանակից էր անմտու-
Թեան ոամկին, և ընդ յարտագոյժ գուշակու-
Թիւն աստեղագիտի ուրուք վասն որգուոյ
իւրոյ՝ բազում տառապէր ՚ի հիւանդու-
Թեան իւրում: Ընդ ախտարամիտ աստեղա-
գիտութեան մարթ է դասել և զսակս խնդիր
տարրախուզութիւնն ոչինչ նուազ ընդու-
նայն և խաբէպատիր: Հետամուտք գիտու-

Թեանս այսմիկ ընդ երկար ջանացան գտա-
նել զդասանիս յոսկի փոխեալոյ ձամենայն,
և կոչէին զայն փիլիսոփայական քար: Ա-
կայն ոչինչ անօգուտ եղեն ջանքն. քանզի
Ճգանց նոցա արդասիք եղեն բազում գիւտք
օգտակարք այժմեան բնաւրուծութեան:
Ոչինչ նուազ այլ գիւտք կենցաղօգուտք
ձայնու ժամանակաւ 'ի վեր երևեցան: Ի
չորեքտասաներորդ դարու եղև գիւտ ակ-
նոցի, այլ աւաղ, ով անուն գտողին ոչ է
յայտ: Ի հնգետասաներորդ դարու զառա-
ջինն երևեցաւ 'ի մայրաքաղաքին ժամացոյց
անուաւոր ժամահար, և անդէն տարած եցաւ
ընդ ամենայն գաւառս. քանզի յառաջ քան
զայն արեգակնայինք էին ժամացոյցք կամ
յաւազոյ, և 'ի ջրոյ: Ձի Թէպէտ և յերկուց
դարուց հետէ լեալ էր գիւտ անուաւոր
ժամացուցի, սակայն չև ևս էր տարած եալ.
և ջամս գիշերոյ ցուցանէր մոմ չափա-
կան, զոր կոչէին Մոմ հսկման: Դարձեալ
և 'ի քաղաքս մեծամեծս սահմանեալ էին
արք, որք ջղջեալ ընդ փողոցս 'ի գիշերի ազդ
առնէին զժամս իւրաքանչիւր, որպէս և
ցարդ իսկ պահի այս սովորութիւն 'ի քա-
ղաքս Գերմանիոյ, Հելուետիոյ, Հո-
լանտայ և յարևելս:

Ի նմին դարու 'ի սկիզբն զարգանալոյ
գիտութեանց հնարեցան գործարանք թըղ-
թոյ 'ի գաղղիա, ուր յառաջագոյն մագա-
ղաթ և թուղթք եգիպտականք 'ի վար ա-
կանէին:

Գ.

Թուղթ խաղոյ, ղէնք և օրէնք պատերազմի և երկոցն:

Ջատոն ժամանակաւ հնարեցաւ՝ ի գալ ղնա և Թուղթ խաղոյ առ՝ ի զբօսացուցանել զընորս խօթուբեան մատց արքային Կարոլոսի Զ. սակայն ոչ յետ բազմաց այնպէս տարածեցաւ՝ մինչսակարս այս խաղ բազդի, մինչև յոլովից զեղծանել նուաւ և՝ ի տանկուբիւն ընկանել. վասն որոյ Կարոլոս Զգօն տասնիկ հրովարտակաւ արգել զայն, ընդ նմին և զայլ ամենայն խաղս՝ որ՝ ի հրահանգ ձարտարութեան հանճարոյ և՝ ի կորով բազկի օգնէին. զոր օրինակ են տաւլինկն, նարան և այլք. և փոխանակ այնոցիկ յորգորէր զԺողովուրդ իւր յարդնկէց և՝ ի տեգրնկէց խաղարկութիւնս, յաղեղնաւորութիւն, ի հեծելութիւն, և յայլ նոյնպիսիս՝ կարևորս՝ ի հրահանգ մարտի:

Թէպէտ Գաղղիացիք մինչև ցայնժամ վըտահ՝ ի կորով մարմնոյ և յարութիւն սրտի՝ անգամանէին զաղեղն իբրև զղէն վատաց, ջան համարեալ քաջաց զաէգ և զտուսեր, այլ տեսեալ ապա թէ քանի՛ ահաւորք են՝ ի պատերազմունս Անգղիացիք աղեղամբ, սկսան և ինքեանք վարժել՝ ի նոյն. և յայնմ հետէ կարգեցան գունդք աղեղնաւորք և

բաղատրաձիք: Մանաւանդ յետ գիւտի վառօդին բոլորովին կերպարանափոխ եղև պատերազմականն արուեստս, և անկաւ առաջատական արուեստ քաջուեն. զի ոչ ևս էր այնուհետև առն քաջի վտանգել՝ ի կորով բազկի և յամրութիւն զինուց, զի և վատ ոք և նկնճահասակ հեռի՝ ի բացեայ կալով հարիւր իսկ քայլաչափ՝ կարէր՝ ի մահ զոսոխն հարկանել. վասն որոյ ընդ զօրութեան մարմնոյ փոխանակեաց աչողութիւն՝ ի չարժուածս և՝ ի չուս. ընդ ժկի արուեստին՝ անյողդողդ և անվեհեր քաջութիւն, նկատել առաջի աչաց միշտ զմահ: Ա՛յս ահա առաջին եղև պատճառք անկման առաջատական կարգաց՝ որ երբեմն բարձր՝ ի գլուխ պերճանային:

Երթայր և՝ ի կատարելութիւն գիմէր՝ ի հնգետասաներորդ գարու անդ արուեստ պաշարման և վերամարտութե՛ք քաղաքաց: Ոչ ևս շատ համարէին ընդեմ ընդեմ զնաամեաց զպատիսպս ամուրս աշտարակօք, այլ կրկնապատիկ և եռապատիկ ամրանային պատնիշիւք: Ի սկզբան անդ առաջութիւն էր ականս հատանել, և առաջերկրեայ գողութի անցիւք հասանել՝ ի պարիսպս անդր, և պեղեալ զհիմունս մարտկոցաց, հրձիգ առնել զինեցուկան, և հիմն՝ ի վեր զամուրն կործանել: Նովին հնարիւք ականահատութեան և պաշարեալքն վերամարտիկ պարտպոյն լինէին: Դարձեալ և որպէս՝ ի վեր անդր ասացաք, բազմաեւսակ մեքենայք էին նոցա քարաձիգք, որք՝ ի գիւտ հրազինութեանն անպիտանք լեալ դադարեցին:

Վաղեմի դրօշ ազգին էր՝ ի կապոյտ ենթակայի՝ խաչ կարմիր, այլ երբեմն յաւուրս Հենրիկոսի Ե սկսան և Անգլիացիք վարել դրօշաձն այնուիկ, կարծես Ի փոխեաց զնաչն՝ ի սպիտակ. և յաւել իւր դրօշ առանձին բովանդակ սպիտակ, որ ե՞ղև ապա նշանակ Թագաւորութեան Գաղղիոյ:

ԹԱԳԱՒՈՐՔ

ԱՒՐԵՂԻԱՆԱՅՆ ՅՆԴԻՆ

ԳԱԲԻԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

Թագաւորութիւն Լուդովիկեայ ԺԲ, փիլոպէ-
պել նորա զթութեան Մէդիոլանոյ և թագա-
րութեան Ենովայեայ:

1498 – 1507:

Ի մեռանել Կարոլոսի անորդի՝ անցա-
նէր գահաւորութեանն Գաղղիոյ
ի ձեռս Լուդովիկոսի զքսին Աւրեղիանի,
որ մերձաւոր արենակից էր արքունի զար-
միին՝ Թոռնորդի գոլով Կարոլոսի Ե: Իչևանս
այս վեհագոյն ի թագաւորս ժամանակին,
զժամանակ մանկութեան անցոյց ի մե-
ծութիւնս քան յառաքինութիւնս: Քանզի
զակատեալ նորա զհետ խաղաց և անառակ
շռայլութեանց, անկզնաւոյր և յայլ ա-
մենայն անկարգութիւնս՝ յորս երիտասարդ

աղնուաւտոհմ մարմին համարձակ զառա-
ծանել: Եւ ի չարեաց ի չարիս մղեալ,
աճենչ փառաց և գահասիրութիւն վինեցին
զնա առ մանկութեամբ նախորդին իւրոյ
ընդդէմ հայրենեաց. այլ վաղ նկուն լեալ,
արկաւ ի բազմամեայ կապանս բանտի ի
պատուհաս յանցանացն. և աղէտիւք ան-
ձին զգաստացեալ փոխեցաւ յայր այլ ա-
մենեւին, և յայնմ հետէ կալաւ իւր նոր
չաւիղ կենաց բարեկարգ և արժանի հաւա-
տացելոյ. և գահուն յոր ամբարձաւ՝ արժա-
նաւոր ցուցեալ, առաքինութիւնք աս-
տուածպաշտութեան մեծապէս՝ինամ փայ-
լեցին: Այսպէս նոր ինն և սքանչելի երևե-
ցաւ նա ի վեպս աղգաց, զի ուր բաղումք
իշխանութեամբ թագաւորութեան զեղ-
ծեալ թիւրին, սա ի կատարելութիւն ա-
ռաքինութեան անդր գերածայրեալ դի-
մէր: Ի սկզբանէ իսկ թագաւորութեան
իւրոյ վսեմամիտ ցուցաւ Լուդովիկոս ըստ
ակնկալութեան յուսոյ ժողովրդեանն. զի
ի յորդորել զնա ոմանց արկանել յիշխա-
նութենէ զայնոսիկ՝ որք երբեմն հակա-
ռակորդքն էին նմա, գեղեցիկ առնէր պա-
տասխանի. «Ձէ անկ, էէ վայելուչ թագաւո-
րին գաղղիոյ վրէժինդիր լինել նախատա-
նաց գբսին Աբեղիոնի»:

Իբրև ուղեաց նա զերս աշխարհին, թե-
թևացուցեալ զհարկս, նորոգեալ զօրէնս
արդարութեան, և նուաճեալ զապերասա-
նութիւն զօրականին, գարձոյց զաչս իւր
յԻտալիա: Քանզի Աբեղիոնեան տոհմին

Ժառանգ էր աէրուԹեան Մեգիոլանու վան ամուսնուԹեան գաառը գքսի նց ընդ հաւուն Լուգովիկոսի ԺԲ. այլ այս Ճոխ ժառանգուԹիւն անկեալ կայր յայնժամ ի ձեռս զօրականի ուրուք սոսկականի Լուգովիկոսի Սֆորցայ առն անօրինի, որ ի բռնակալուԹիւնն իւր յաւել և զնուժ սիրասպանուԹիւն: Յայս իրաւունս Լուգովիկոս անց ընդ Ալպեանս, և գիմեաց ի սահմանս Մեգիոլանու. և ի քան աւուրս սիրեալ կալաւ զամենայն երկիրն: Խրախուսեալ ապա յաջողուածովն, և գաչնակից եղեալ փերտինանտոսի Թագաւորին Արագոնայ և Կաստիլիոյ, խաղաց ի Նեապոլիս, և սիրասպեալ անդ, ըստ գաշանցն պայմանի բաժանեաց զայն ընդ նմա (1501):

Բայց փերտինանտոս իւրև կալաւ զբաժին իւր, պատեհ առեալ զհեռանալ գաշնակցին՝ յարձակեր ի վերայ պահապան գնդին Գաղղիացւոց, առ ի սիրել և նորա բաժինն: Եւ Գոնցալվոս քորտուվացի սպասպետ Թագաւորին վանեալ տակաւ զԳաղղիացիս յաշխարհակալուԹենէ անտի, յաղԹուԹեամբն ի Սէրինեօլ հալածէր զնոսա ի սպառ յերկրէն, և բառնայր ի նոցանէ զԹագաւորուԹիւնն անգարձ: Եւ ինքն փերտինանտոս առ ի Թափել զանձն յարդար վրէժխնդրուԹենէ գաւաճանուԹեան՝ մինչեւնայեաց հնարս, յորմէ ոչինչ կասկածէր Լուգովիկոս: Կեղծաւորեցաւ դալնիս կռել ընդ նմա. և անկալուԹիւնս մեծամեծս և պարգևս նմա առաջի եդեալ՝

ջացուցեալ Թմբրեցոյց զԹագաւորն Գալղիոյ պատճիր դաշնադրութեամբքն. և մինչ դեռ անկատած ՚ի դաշնան կայր Թագաւորն Լուդովիկոս, նա յայնժամ ամիրապնդեր զանձն ՚ի բռնակալութեան իւրում, խնդամեալ ՚ի սրտին ընդ յաջողութիւն ձարտար քաղաքավարութեան իւրոյ:

Յետ այսորիկ պատուհասակոծ արար Լուդովիկոս զառաստաւթիւնն Գենուայ, որ ընկձեալ միանգամ ընդ ձեռամբ նորա յանդգներ Թօթափել զայն լուծ: Եմուտ Թագաւորն տուր ՚ի ձեռին ՚ի քաղաքն, և մեծատաստ հրամանաւ ձերբակալ արար զառաջնորդս խռովութեան զարս եօթանասուն և ինն, ՚ի մահ եւս գնոսա և հարկս ծանուցանէ ՚ի վերայ եդեալ քաղաքացւոց աՀաբեկ արար զամենեսեան:

ԳԼՈՒԽ Բ.

Պատերազմ Լուդովիկեայ ընդ հասարակապետութեան Վենետկոյ և մերձեալ Պաղեհոցոց յիշխանին:

1507 – 1510.

Զգացումն ժամանակաւ գժգոհեալ Լուդովիկոս ընդ Վենետկեցիս, որ՚ի ծանր վտանգս օգնականութիւն գտեալ ՚ի նմանէ՝ ապաշնորհ մտօք ապահով զգաստամտիւ իւ-

բանից արարին: Եւ քանզ խնդրեաց Թագաւորն զի հաւատացցէ նոցա վանգ հասանէր գքսութեան Մեդիոլանու, յարոյց ընդդէմ նոցա զդաշնագրութիւն Քամպրեայ, յոր եմուտ և կայսրն Մաքսիմիլիանոս՝ իշխան ձեռներէց ամենայնի և յողդողդ քան զամենայն մարդ, և քահանայապետն Յուլիոս Բ. և նոյն ինքն Փերդինանոս՝ որ բազում անգամ պատերազմեցաւ զԳաղղիացիս: Հաւատարակապետութիւնն վենետկոյ, ծովակալ իշխան յայնժամ վաճառաշահութեան աշխարհի, զօրացեալ էր սիրելութեամբ ի վերայ գրացի ժողովրդոց և նիզակակից իշխանաց ի ցամաք երկրի: Ի սպառնալ մեծազօր սերութեանց, անդէն գոգացեալ ինն խոնարհեալ ընկձեր հաւատարակապետութիւնն հռչակաւոր, և եկեալ հաւանէր մօտալուտ կորուստ փառաց իշխանութեան և ազատութեան նորա:

Թագաւորն Գաղղիոյ ժրագոյն գտեալ ի գաշնակիցս, և հաւատարմագոյն ի գաշինս ուխտին՝ աճապարեալ միաբան նախ ի մարտ. և բուռն արար վենետկեցւոց խառնել ի մարտ մերձ Ռավինատէլ. և անդէն ըստ բնիկ անհնգուն քաջութեանն միաբան ի խառնուրդս մարտին: Եւ երբեմն ոմանք յիշխանաց անուն իւրոց՝ յուշ, ասէին նմա ցուցեալ զվանգ անձին իւրոյ, նա ծաղրելով ասէր. «Երկչոտքն զնեա իմ ետկեցին»: Օրինակաւ Թագաւորին խրախուսեալ զօրուն, ցրուեալ վանգեցին զմիջ-

նամիս՝ հարեալ ի նոցանէ առաւել քան զառանն հաղար այր. և յինքեանց երեք հարիւր այր անկան ի ճակատուն: Լուդովիկոս ընդ արուեստանն լծորդեալ զեղեցիկ բարեպաշտութիւն, չև ի մարտ մտեալ՝ խոստովան եղև. ըստ նմին օրինակի և զօրքն առհասարակ: Եւ իբրև կալան զյաղթութիւն, ի՛չեալ յերիվարէն՝ ծունր եդ, շնորհս գոհութեան մատոյց աստուն զօրութեանց, յորմէ համարէր զամենայն փառս ղինուց:

Խրախուսեալ յաղթութեամբն կալան գաղղիացիք զՔրեմոնա, զՊառաւիոն, զՏրիդենտոն և զամենայն երկիրն Վենետակեցւոց ի ցամաքի: Այլ վեհմամիտ յաղթողն՝ անդէն բաժանէր ընդ նիզակակիցս իւր զքաղաքս և զդաւառս առեալս ի թըշնամեաց:

Իսկ փերոնիանտոս իբրև ի ձեռն էած զոր ինդրէրն, գումարեցաւ ապա ընդ վենետակեցիս հանել զԼուդովիկոս յիտալիոյ՝ խիթացեալ յահաւոր զօրութենէ նորա, միաբանեաց ընդ նոսա և Յուլիոս: Այս անակնկալ յեղափոխութիւն նիզակակցաց ի սկզբան անդ մեծապէս սաստկ լինէր փառաց ղինուցն գաղղիոյ. գուքն Նէմուր կասէն աը Ֆոա եղբօրորդի Լուդովիկեայ՝ երիտասարդ առոյգ և ծաղկահասակ, սպարապետ եկաց բանակին և զընթացս կարճառօտ կենացն փառաւորեաց չքեղ արուեստիւ իւրով. քանզի յերիս ամիսս ազատեաց զՊոլոնիա զպաշարեալն ի գաշ-

նակից իշխանաց, կալաւ անդրէն զՊրեչիա, զկրկնապատիկ առաւելեալն զօրութեամբ. վասնեաց զերկուս գունդս թշնամեաց և մեծութեամբ և արագութեամբ արշաւա- նացն՝ էառ զփառաւոր անունս Ջանիթ Ի- տալիոյ: Ի վախճանի յարձակեալ պաշա- րեաց նա զՀռաւեննա:

Դաշնակիցք կորակոր ընդ այնչափ ոյժս ՚ի հասուց՝ կամեցան փորձ փորձել միւսան- գամ, եկին Ճակատեցան հանդէպ պաշա- րողացն: Դուքսն, որ յօժարէրն ՚ի պատե- րազմ, և ՚ի գրգռել իսկ զթշնամիս ձեռն արկեալ էր յայն գործ պաշարման, աճա- պարեաց չեռ նոցա պարապ խորհելոյ, յար- ձակեցաւ ՚ի բանակ նոցա: Սաստիկ էր պա- տերազմն և արիւնահեղ. քաջք ընդ քաջաց պատահեալ գոռային ՚ի վերայ միմեանց, առքա չան ՚ի գործ արարեալ ձգնէին ձեռ- քել զպատնէշս, և նոքա ռազմ գործեալ ոտղաբար՝ զնմանութիւն բերէին հզօր փա- ղանգի նիզակախուռն ամրացեալք: Ան- մարթ եղև վերկաթեայն հերձանել պա- րիսպ, մինչև ՚ի հակայազօր սպայից ոք գեր- մանացւոց այր հուժկու՝ առեալ զեկնուժ- գին զօրութեամբ անկաւ ՚ի վերայ նիզա- կաց թշնամեացն և խոնարհեցոյց զնոսա. թէպէտ և ինքն անկաւ անդ, այլ արիական քաջութեամբն սկիզբն լինէր յաղթու- թեան. քանզի որք զհետ նորա խուժէին մտեալ ընդ խրամատն ՚ի նեղութս, սուր ՚ի վեր ա- ռեալ՝ անհնարին հարուածս հասուցին փա- ղանգին կազմելոյ ՚ի Սպանիացւոց անտի

զօրաց: Լիսաբն ի գլուխ եւ յաղթութիւնն, և խուռն ի ևեթ ի Թշնամեաց, զերծեալ գարձառնէր պատերազմական օրինօք: Ընդ դուքան Ղէմուր ոչ կամեցող Թողուլ զնոսա ապրել, զիմեաց հեծելովք ոմանքք ունել զանցս, ուր մանաւանդ գիւրագոյն էր ի Թիկանց պատել զնոսա: Մահաւիթ եղև նմա վայրն . քանզի հարեալ ի նիզակաց, չորեքտասան վիրօք անկաւ մեռեալ (1512): Ընդ կորստեան գիւցազն պատանւոյս ջրջեցաւ բազդ Գաղղիոյ, և հուսկ ի վախճան մարտին կորոյս զամենայն երկրակալութիւնս Իտալիա և ի բաց մերժեցան զօրքն ի պատառէն:

ԳԼՈՒԽ Գ.

Դաշնակցութիւն ընդհանուր Գաղղիոյ ի լարեալ ձին առնել պաշարհն յերուսաղէմ, և ճարպարութիւն Լուդովիկեայ ի Թափել զերերութիւն իւր ի պատառելոյ զինուց նորա:

1512 – 1515.

Յետ մեծի պարտութեանն Գաղղիացւոց Իտալիա և ի սպառ մերժելոյ նոցին ի պատառէն, ի լուումն ազգասիցն, միաբանեալ կայսրն Մաքսիմիլիանոս, Թագաւորն Ընդղոյ Հենրիկոս Ը. Փերդինանտոս և Հելուետացիք յարձակեցան ի Գաղղիա,

'ի մեծ եգեալ բաժանել յիւրեանս զաշխարհն. կայսրն և Թագաւորն Անգղիոյ առ յաջակոտնախանձուն, փերմինանտոս առ շահախնդրութեանն, և Հելուեթիացիք առ զայրոյթ սրտմտութեան: Քանզի սոքա ազգ ազքատ և պատերազմող, անծանօթ Եւրոպա, 'ի հարիւր ամաց հետէ զկնի նըշկահելոյ իւրեանց զառնն Աւստրիոյ առնէին ինքեանց անուն: Ի սկզբան ռոճկօք զինուորեալ Թագաւորաց Գաղղիոյ, մեծապէս ազնւացան յերկրակալութիւնս նոցա յիտալիա, այլ վերացեալ ապա յայլմուէեամբքն իբրև առաւելագոյն պահանջէին Թոշակ, ցասուցեալ Լուդովիկեայ ընդ նոսա՝ խրատիւ արար պատասխանի. «Զարմանամ, ասէ, ընդ Թշուառս լեռնականագ, որոց անծանօթ երբեմն էր ոսկի և արծաթ, մինչ չև զինուորեալ ձեր իմոցս նախնեաց, և այսպէս այժմ խրոխտայք օրէնս տալ Թագաւորին Գաղղիոյ »: Հելուեթիացիք ոչ նեղեցին նմա զանխորհուրդ կշտամբանան. և առեալ 'ի նմանէ զՄեդիոլան, կացուցին անդ զորդի բռնակալին զհալածեալն առաջ զՄաքսիմիլիանոս Սֆորցա: Եւ ոչ շատացեալ այսու վրէժխնդրութեամբ, խաղացին մտին 'ի Բուրգոնիա, և նստան զՏիժոն քաղաքաւ: Դուքսն Թրէմոյլ Թէպէտ և էր զօրավար քաջ, այլ առ 'ի չգոյէ զօրաց և արծաթոյ՝ հրեշտակագնաց եղև առ նոսա 'ի խաղաղութիւն, խոստացեալ յանուն Լուդովիկոսի՝ կատարել զամենայն կամս նոցա: Հելուեթիացիք քաջամարտիկք, քան

խորագէտք՝ վատահացեալ ՚ի բանս գքսին, ասկնեցան. այլ Թագաւորն Լուդովիկոս ազատ կացոյց զանձն ՚ի պարտուց գաշանցն կռեղոց առանց իւրոյ գիտուԹեան, որպէս և Թրէմոյլ իսկ նախագէտ էր այսմ: Եւ քանզի ձմեռն ՚ի վերայ կայր, ոչ կարացին Հելուեախացիք դարձ առնել ՚ի պատերազմ, և պատրեալք զպարզմտուԹիւն իւրեանց ասացեցին:

Ոչ այսպէս գիւրաւ կարաց զերծանել Լուդովիկոս և յայլոց Թշնամեաց: Շուրջ պատէին զնա ՚ի հարաւոյ Խաղացիք և Սպանիացիք, յարեւելից Հելուեախացիք, և ՚ի հիւսիսոյ Անգղիացիք և կայսրն. և հարկ էր նմա բաժանել զզօրուԹիւն իւր ընդդէմ նոցա, և սակաւանայր կալ առաջի հզօր միաբանուԹեան Թշնամեաց: Հենրիկոս Ը և Մաքսիմիլիանոս պատնէշ պաշարմամբ նրսաէին զԹեռուանաւ, տագնապէր անդէն քաղաքն սովաբեկ. և Թէպէտ հեծելազօրն Գաղղիացւոց միջամուխ եղեն պաշարս հասուցանել մարդկան, այլ առաւ քաղաքն. քանզի ՚ի տեսիլ Թշնամեաց անկաւ երկիւղ անակնկալ զհեծելազօրքն, և մարակ ՚ի կուշտ երիվարացն արարեալ ցրուեցան: Եւ ոչ Թիկնագարձոյց փախստեամբն յաջողէր նոցա ապրել ՚ի սաստիկ կոտորածէ, եԹէ քաջն Պէյար հնդեւտասան արամբք միայն կալեալ զգլուխ կամրջին ժամ մի և կէս ոչ ունէր զդէմ խուռն յարձակման Թշնամեացն: Մինչև Թշնամիք ընդ հուն գետոյն անցեալ յայն կոյս, պաշարեցին ՚ի

Թիկանց զքաջս ի Գաղղիացւոց: Ոչ մոռացաւ զանձն քաջազօրն Պէյար ի բազմավաստիպ ժամանակին. տեսեալ զոք ի տապկին Անգղիացւոց ընկողմանեալ ընդ ծառով ի նինջ, հուպ մերձեցաւ ի նա, խմեաց զկողս նորա, և սուր ի վեր ամբարձեալ, կամ մահ, ասէ, կամ գերութիւն: Ա՛ռ հարկի բռնադատեցաւ այրն անձնատուր լինել: Յայնժամ Պէյար յիշեցուցեալ Թէ ո՞ր էր, ինքնակամ տայր զինքն ի ձեռս նորա: Յետ աւուրց լինէ « Տաղտկացեալ եմ, ասէ, ած զիս ի բանակն Գաղղիացւոց »: Եւ ապայն ասէ. Եւ զինչ տայցես ինձ ի փրկանս: Եւ Պէյար ասէ. Եւ դու լինիր զինչ, զի որպէս ես քո, նոյնպէս և դու գերի իմ ես: Ա՛յս նորօրինակ վէմ ածաւ յատեան կայսեր և Թագաւորին Անգղիոյ. և յաղթող էլ ի գաւաչն Պէյար:

Վախճան եղև պատերազմին ի կինէկաղ որ և պատերազմ մորակաց ասացաւ. զի Գաղղիացիք Թողեալ զսուսեր, մորակ ի կուշտ երիվարաց՝ խոյս եառուն ի մարտէն: Լուդովիկոս հարեալ ամենուսա խոնարհեցաւ ի գաշինս հաշտութեան, և յաջողեացնէա Ձեղքել զմիաբանութիւն Թշնամեաց իւրոց և զինաթափ առնել զնոսա. ահա գին մարտս այս, որ ապառնայր զկործանումն Թագաւորութեանս, ոչինչ սոնանել կարաց նմա, և ելմոլ զայն չիւր նախկին մեծութեան:

Յետ հաստատելոյ խաղաղութեանս, ոչ երկարակեաց եղև Թագաւորն Լուդովիկոս:

Եկաց նա իշխան վեհանձն և առաքինի քան զամենայն Թագաւորս Ժամանակին, նա-
խանձ նորա ՚ի սէր արդարութեան, ար-
թուն խնամք, ժրաջան գործունէութիւն
՚ի յանձանձանս տեսչութեան աշխարհին,
գութ նորա առ ժողովուրդն, անքծու-
թիւն վարուց, հաւատարմութիւն, առա-
տաձեռնութիւն և առատաձաշութիւն
կատարեալ, և այլ ամենայն գեղեցիկ բնա-
ւորութիւնք, յորս պայծառացաւ ՚ի Թա-
գաւորութեանն, զարմանալի ևս ընծայե-
ցուցին զնա ՚ի կշիռ եկեալ ընդ յոռու-
թիւնս Թագաւորաց Ժամանակին, ընդ գեղձ
բարս նոցա, ընդ ուխտադրժութիւնս և ընդ
անիրաւութիւնս: Քանզի և քան զամե-
նայն Ժամանակս Թագաւորաց հզու եկաց
առ նովաւ ազգն Գաղղիացւոց՝ ՚ի խաղա-
ղութեան և յերջանկութեան վայելեալ:
Թէպէտ հասանել հասին և աղէտք վշտաց
առ նովաւ, այլ իմաստուն տեսչութեամբ
եգիտ նա զելս հնարից, քանզի և անընդ-
հատ պատերազմաց տարեալ, ոչ ինչ ծան-
րացաւ Ժողովրդեան իւրում: Վասն որոյ և
՚ի բամբասել յաւագանւոյն յընչասիրու-
թիւն, արար պատասխանի. «Լաւ է ինձ
ծաղր լինել պաշտօնէիցս վասն ագահու-
թեան, քան տարապայման ծախիւք՝ ողբոց
Ժողովրդեան լինել պատճառք»: Թա-
գաւոր՝ որոյ այսպիսի են իմաստք՝ արժանի
իսկ է մեծի սիրոյ Ժողովրդեան, և մահ նորա
կորուստ անհնարին համարեսցի. քանզի և ՚ի
հոչակել մահու Թագաւորին ՚ի ձեռն սուր-

հանդակաց, որոց զանդակս ի ձեռս ընդա-
ցեալ ընդ վողոց քաղաքին աղաղակ բառնային,
« Առաքինի Թագաւորն Լուդովիկոս, հայր
ժողովրդեան մեռաւ։ ամենայն աշխարհն
զարհաւաւս, և ձայն ողբոց ժողովրդեան լսե-
լի եղև յամենայն կողմանս քաղաքին : Այլ ո՞
պատմեսցէ զողբս հառաչանաց ոչխոյն խակ
սերունդ Գաղղիոյ, և մանաւանդ գիւղակա-
նաց, որոց անպատմելի էր սէր առ Թա-
գաւորն իւրեանց. զի յանցանել Լուդովի-
կեայ ընդ երկիր նոցա, Թողեալ զվաստակս
իւրեանց, ընթացեալ կային երկուստեք
առ Ճանապարհաւն, և ոտաս ծառոց սփռեալ
զոտիւք նորա, հնչէցուցանէին զօդս բար-
ձրագոչ ձայնիւ խնդութեան : Եւ որոց
միանգամ յաջողեր հպել ձեռաք ի ջորի
Թագաւորին կամ ի հանդերձս և ի կօշիկս,
այլք զձեռս այնոցիկ դիմեալ համբուրէին
յարգանաք, և գոհութիւն վեր յերկինս ա-
ռաքէին որ այնպիսի Թագաւոր շնորհեաց
նոցա : Երջանկութիւն, յոր վայելեցին ա-
մենայն կարգ մարդկան առ նուաւս, արգա-
սիք էին իմաստուն օրինաց նորա և խնամոց
զգուշութեան : Հանճարեղ ընտրութեամբ
պաշտօնէից, յորս վստահանայր, եղեն նորա
պաշտօնեայք՝ արժանաւորք հայրապետի
խնամոց նորա. յորս եկաց երեւելի կարդի-
նալն Տ' Ամպուազ բարեկամ Թագաւորին, և
գլխաւոր ձեռնտու անդուլ խնամոց աշխա-
տութեան նորա. յերջանկութիւն գաղ-
ղիոյ :

ԳԼՈՒԽ Դ.

Խորհիլ Փրանկիսկոյ զՀելոեփոյին և փրկագործել նորա զԹուրքիան Մեդիոլանոս:

1515.

Եւ ի մեռանել Լուդովիկոսի ԺԲ անորդի՝ անց Թագաւորութիւնն ի Փրանկիսկոս զոքս Անկուլէմի մերձաւորագոյն ազգական նորա, սերեալ ի Զգօնն Կարոլոսէ՝ վերջին Թոռն զքսին Աբրեվիոնեանց, այն որ ապան զդուքան Բուրգոնիոյ: Կոլովի հանճարոյին, ջինալ յառաջամանութեամբք, քաջութեամբք և վեհմական ոգւով այր արժանի գահուն: Երջանիկ ինքն, և երջանկացուցանէր արդեօք զԳալղիա՝ եթէ ի ջերել առաքինութիւնս իւր յաւելաւ էր և զօգտակարագոյնսն, զնոհական չափաւորութիւն և զմտադրութիւն, որք թէպէտ և արտաքոյ անձաձանչք՝ այլ ի գեղեցիկ արգիւնս նոցա վայելէ աշխարհ:

Զսկսաւեալ Փրանկիսկոս ըստ օրինակի հարցն իւրոց զկնի փառաց աշխարհակալութեան, հանգոյն նոցա պահանջելով զնբաւութիւնս գքսութեան Մեդիոլանու, հզօր բանակաւ միջամուխ լինէր յերկիրն: Հետևեալքն՝ որք ոխութեամբ էին միշտ ընդ Գալղիացին՝ յարեան ընդդէմ Փրանկիսկոս

սի, և Էրեսուն և վեց հազար արամբք զա-
ռաջս նորա կալեալ՝ կազմեցան պատրաս-
տեցան ի մարտ ի Մարինեան գաշտն։ Յա-
ռաջնումն գիշերի Փրանկիսկոս ցանկացեալ
զաստեղութեան առնուլ զպատիւ ի ձե-
ռանէ Պէյարայ, ի վայելիս անդր արժա-
նաւոր զանձն կացուցանելը չքեղ պատուոյն,
որ ի բազում ամաց հետէ կարգեալ էր
մրցանակ արիացելոցն քաջաց։ Հելուետիա-
ցիք ըստ արժանի համբաւոյ իւրեանց արիա-
ցան ի մարտի, նորօրինակ քաջութեամբ
բախեալք ընդ Գաղղիացիս։ Թագաւորն հե-
տիոտս նիզակ ի ձեռին ի գլուխ հետեւա-
կազօրուն զդէմ կալաւ յարձակմանն, և
խրախուսանօք զմի միւրոցն ըմբիշս քա-
ջակորով յարդարէր։ Երկարեցաւ գործ
մարտին ցգիշերն, և ոչ դէպք ի լուսանակի
մինչ ի մեռանան ժամ գիշերին. և ի թան-
ձրանալ տապ խաւարի, բաժանեցան ի մի-
մեանց։ Իսկ արքայն Փրանկիսկոս զինացորդ
գիշերոյն անցուցանէր ընկոմանեալ ի
սայլ մի Թնդանօթիկ՝ միտն քայլ հեռի ի
միջէ ի գնդացն Հելուետիացւոց։ Ի ծա-
գել աւուրն հնչեաց ամենուստեք նշան
մարտի, և նովին նախկին բուռն խիզախ-
մամբ խառնեցաւ ճակատամարտն։ Ի վախ-
ճանի Հելուետիացիք խոնջք յերկար գիմա-
կալութենէ թշնամեաց, և վաստակեալք
ի հրձգութենէ Թնդանօթիկ Գաղղիացւոց
որ զդաշտն առ հասարակ քայքայեալ էին ձա-
նէր, ձեռնթափ եղեն ի մարտէն՝ և խոց
վիրաւորք թողեալ հնդեւասան հազար

մեռեալա՝ի տեղւոջն, մեկնեցան: Այս շքեղ յաղթութեան փառք նախ քաջութեան սպարապետին Պուրպոնեանն կարօղան, և յետ նորա արութեան Թագաւորին արգասիք էին, որով անարգել մտին Գաղղիացիք՝ի Մեդիոլան: Արիական քաջութիւն Թագաւորին առաւել ցոյց զյաղթեալս, և վեհական ոգի նորա յինքն յանկոյց զնոսա, և մտին վերստին՝ի ծառայութիւն Գաղղիոյ. և յայնմ հետէ զինուորեցան միշտ ընդ դրօշու Գաղղիացւոց (1515):

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս պատերազմի Փրանկիսկեայ ընդ Հայսեր և վասն գերութեան նորա:

1515 - 1525.

Զառնուն ժամանակաւ՝ի մեռանել Մաքսիմիլիանոսի, մինչգեռ անժառանգ էր աթոռ ինքնակալութեան, Փրանկիսկոս Թեկին ածէր զնշանութեան. այլ նախանձընդդէմ ահաւոր հակառակորդ նմին կայր Կարօղոս Աւստրիացի, որ ապա Կարօղոս Ե կոչեցաւ: Եւ իբրև երեք ամանք ւ՝ի կայսրըն-

ւ Եօթն էին կայսրընտիր թուով. Ալեքսանդր Մոգոնպիոյ, Տրէ-իրոյ, Կողնիոյ. Թագաւորն Պոհեմիոյ, դուքսն Սաքսոնիոյ, Մարկիրեվէ Պրանդէպուրկի և իշխանն Փալատինի:

որոց վկոյնն Փրանկիսկոսի անէին, կարո-
ղս զինուցեալ չորեսին յիւր կամս ձգեալ՝
յաղթանակեր: Այս էղև սկիզբն հակառա-
կութեանց Թագաւորացս, որ և՛ի յաջորդս անց
եալ՝ վառեաց զերդեհ պատերազմաց ընդ
Եւրոպա ողջոյն: Անմարթ էր Փրանկիսկոսի
զօրանալ՝ ի վերայ Թագաւորի՝ որոյ ուշ
մաց, ներհուն քաղաքավարութեանն և խո-
րամանկ ճարտարուն հակառակէր ամենևին
յողդողդութենէ, շռայլութենէ և յանդուգն հա-
մարձակութեան նորա: Եւ որ մեծն էր
Փրանկիսկոս Գաղղիոյ ևեթ էր իշխան, իսկ
Կարոլոս ընդ արևմտեան ինքնակալութեան
սիրեր և Թագաւորութեանց Սպանիոյ,
Նէապօլսոյ և Հոլենդեացն Սաորին նահան-
գաց և ամենայն գանձուց Ամերիկոյ. գար-
ձեալ զի և ճարտար էր՝ ի յանկուցանել
յինքն զբազումս ի Թագաւորաց Եւրոպիոյ,
և զՀենրիկոս Ը զարքայն Անգղիոյ զահաւո-
րագոյնն քան զամենեսեան: Այս իրք էին
՝ի սկիզբն մարտին՝ ի մէջ նախանձընդ-
դէմ Թագաւորաց: Յառաջին պատերազ-
մունս մերթ այս ոք և մերթ այն յաղթող
հանդիսանայր, մինչև կորուսանել վերըս-
ական Գաղղիացւոց զՄէդիոլան (1522):

Յաւուրն յայնոսիկ ապարատչեա իշխանն
Պուբլոնի ցասուցեալ ընդ նախատինան ըն-
կալեալս յարքունեաց՝ փախստական եր-
թայր՝ ի Գաղղիոյ, և անցեալ՝ ի կողմն կայ-
սեր ոխերիմ Թշնամի յառնէր հայրենեաց
իւրոց: Բանակն գաղղիական կորակոր հալա-
ծեալ առաջի Ժկրաժիր և ոխերիմ Թըշ-

նամբոյն, յոգիս լիներ ապաստան, և վա-
րսահել կրուէր. յայնժամ ասպետն պէյ-
ար՝ որ պատրաստն էր միշտ ոտք զանձն
վասն զինուորակցայ իւրոյ, յարձակեալ
կանգնեցաւ ի յետին կարգ վերջապահ
գնդին ընդդէմ բուռն Թափոյ Թշնամւոյն.
և հարեալ ի հրացանէ յոտկը Թիկանց ի
հարուած մահացու, եաս իջուցանել զանձն
յերիվարէն և դնել ընդ ծառով միով ղե-
բեաս առ Թշնամիս, զի ոչ երբեք, ասէ,
գարձուցի զԹիկունս իմ ի նոսա: Զաս-
տուածապաշտութիւն զոր եբեր նա յան-
ձին ի չփոթս իսկ զինուց, ոչ եԹող և ի
յետին ահաւոր վայրկենին. խոստովան
եղև, և պատրաստեցաւ յանդիման լինել
տեառն, տուեալ զանձն ի զոհ ի վերայ աշ-
խարհին: Հասեալ անդր յայնժամ ասպետ-
պետն Պուրպոն, ծանեաւ զնա և ասէ. «Վչնա
է լինձ յոյժ, քաջդ Պէյար, տեսանել զքեզ
յողորմ ազէտագ»:

Ընդ որ պատասխանի եաս Պէյար. «Մի՛ լի-
ցի քեզ վշտանալ վասն իմ, զի ես արուեստ
մեռանիմ վասն Թագաւորիս. այլ իրաւացի
ես վիշտ է լինձ վասն քո, որ յարուցեալդ ես
ընդդէմ տեառն քո և հայրենեաց և ուխտի
ՏաւտտարմուԹեան»: Դարձաւ ասպետ-
պետն կորակոր, և Պէյար ոչ ես յերկ-
բեալ ի կեանս՝ տանդէր զՏոգին արժանի
քրիստոսակրօն դիւցազին (1524):

Փքացեալ կայսեր յաղողուԹեամբն ար-
շաւեաց ի Գաղղիս, և պաշարեաց զՄար-
սիլիա: Սպանիացիք կալան զՅովՀաննսպետն,

և Գերմանացիք մխեցան ՚ի Կամպանիա. իսկ Անգղիացիք նիզակակցութեամբ փղանդրացւոց միջամուխ եղեն յաշխարհն ընդ Փիքարտիա, և հուպ ՚ի մայրաքաղաքն մտեան: Ընդ դուքսն Վանտոմ և Թրէմոյլ խոհական խնամատուութեամբ իւրեանց զօրացեալ, հալածական տարան զԱնգղիացիս յաշխարհէն. և դուքսն Կիզոյ վանեաց զԳերմանացիս ՚ի Կամպանիոյ: Իսկ արքայն Փրանկիսկոս զօրու ծանուռ եհաս յօգնութիւն քաղցն Մարսիլիացւոց. Թողին յայնժամ Թշնամիք և ապատամբ իշխանն Պուրպոնի զպաշարուին և հեռացան:

Ամբարձաւ արքայն Փրանկիսկոս, և յաջ եգեալ զամենայն ազգս վաճառիցն, ձեռն ՚ի գործ արար առնուլ զՄեդիոլան. խաղայ եմուտ Յաուալիա ՚ի պաշարել զՓաւիա: Զօրք կայսեր ընդ առաջնորդութեամբ իշխանին Պուրպոնի հասանէին յօգնութիւն քաղաքին. և ՚ի լուր գալստեան նոցա բրնաղատէին իւրքն զհագաւորն բառնալ զպաշարուին, և մի ՚ի վաղիգ արկանել զվաստակաբեկ զօրականն, ընդդէմ քաջառոյգ բազմաթիւ բանակի զօրաց կայսեր: Փրանկիսկոս խրոխտ յանդգնութիւն վրէժխնդիր փառաց իւրոց՝ նախատինս համարեցեալ վախճանական երթալ առաջի ապստամբի ծառային, և ոչ զդուշացեալ ժամանակին՝ մխեցաւ ՚ի մարտ: Զառաջինն ՚ի կոչին իւր Թուէր յաղթութիւնն, այլ սաստիկ եռանգեամբն վառեալ նա կորոյս զյաղթութիւնն և զանձն գլխովին. քանզի

յարձակեալ ընդ մէջ Թշնամեաց և ընդ Թնդանօթաձիգ խրոյ գնդին, անպիտան գործեաց զկրձգութիւնս նոցա ընդդէմ Թշնամեաց: Անդրկիւղ յայնժամ և զօրք կայսեր՝ ի Թնդանօթից, որ զանհնարին ջախջախանս ածէին ի նոսա, ժողովեցան եկին՝ ի մի, և բուռն յարձակմամբ դիմեցին՝ ի վերայ Թևոյն՝ ուր էր Թագաւորն: Անդէն կէսք սրոյ էղեն ձարակ, կէսք ձերբակալ էղեն, և մնացեալքն փախստեամբ չրուեցան: Պատեալ սպաշարեցաւ շուրջանակի Թագաւորն, վէրս առեալ՝ ի բազուկն՝ և սրունս և՝ ի դէմս, մինչև ոչ ևս զօրել բառնալ զբեռն ծանրութեան վնասուց, և անձնատուր լինէր՝ ի զօրավարն՝ որ ձեղքեալ զամբոխն գայր ազաչէր զնա մի ևս յամառել՝ ի կորուստ անձին իւրոյ: Անկան՝ ի ձակատս անդ ընտիր ընտիրքն՝ ի Գաղղիացւոց, և մնացեալքն աճապարեցին մեկնել յԻտալիոյ:

Լուր ազետից փառեայ հռչակեցաւ ընդ բոլոր Գաղղիա. Թագաւորն ինքնին առաքէր Թուղթ առ մայր իւր եառ զակալ գահուն. «Դշխոյ սիկին, կորուսաք զամենայն՝ բաց՝ ի փառաց»: Այլ ջախեաւ ոմն փառք էին ալքայի տալ յանդգնաբար զանձն՝ ի գերութիւն, և ձգել արկանել ընդ իւր զպետութիւնն ալջայն՝ ի վտանգ կորստեան: Քաջութիւն խօլ և անմիտ:

ԳԼՈՒԽ Զ.

Ազգութիւն թագաւորին Փրանկիսկեայ գալն դէպ ի Մադրիտ, և վէրսին բռնութիւն ընծայուելն և մերթն ի թագաւորն:

1525 – 1529.

ՅԻՏԱԼԻՈՅ ածաւ թագաւորն ի Մատրիտ, ուր ինքնակալն կարոլոս զբաղուած ժամանակս ոչ կամեցաւ տեսանել զնա, պատճառանօք զի մի տեսութեամբն խռովեսցի: Բայց Փրանկիսկոս, որ յուսով պայմանաց հաշտութեան ինդրեալ էր անցանել ի Սպանիա, առ սասիկ կրից վասն խաղաղութեանն՝ անկաւ ի խոհութիւն ծանր: Յայնժամ կարոլոս երկուցեալ զի մի ի մեռանել թագաւորին կորուսցէ ինքն զամենայն արգասիս յաղթութեան, առ շահու անձին քան առ մարդասիրութեան և առ պատուականէ՝ կամեցաւ տեսանել զարքայն: Սիրով և քաղցրութեամբ խօսեցան ընդ միմեանս, և կայսրն ի խաղալել զխնդանդն յոյս առաքի գնէր՝ թէ իշխան է այսուհետև ի քաջագէպ ժամանակի գառնալոյ անդրէն ի թագաւորութիւն իւր: Հանգերձ գեղեցկիկ խոստմամբքս թոդոյր զնա ծխրել հաշիլ ի բանսի. և ուր ուրեմն յամին երկրորդի ազատել ծանր ծանր պայմանօք, որ ա-

պա պատճառք լինէին և դժբէղոյ դաշանցն: Եւ պայմանքն այսոքիկ էին եղեալք ի Մաս-
լիա. զի հրաժարեսցի Փրանկիսկոս յի-
րաւանց իւրոց ի վերայ Նէապօլսոյ և Մե-
դիոլանու. զի ամիսոիեսցէ զձեռն իւր ի
աէրութենէ կոմսութեան Փղանդրիոյ, և
Թողցէ ի յաղթողն զգքսութիւն Բուրգո-
ւիոյ և զայլ քանի մի քաղաքս: Դարձեալ
զի և ապստամբ դքսին Պուրպոնի Թողցէ
զամենայն գաւառս հանդերձ նախկին ի-
խանութեամբն: Ընժոյժ աւելչանօք Թա-
գաւորն յաղաւութիւն իւր՝ խոստացաւ
զամենայն, այլ իբրև եառս զանձն ազատ
ի ձեռաց Թշնամւոյն, ոչ կամեցաւ հաս-
տատել զդաշինսն, պատճառեալ Թէ աս-
գանին և ամենայն ժողովուրդն հակառակ
են հերձուածոյ Թագաւորութենն: Իբրև ա-
ւագքն առնէր նմա կայսրն պահել ըստ նախորդ-
դին իւրում Յովհաննու զորքապան օրէնս
հաւատարմութեան և դարձ առնել ան-
դրէն ի գերութիւն, Փրանկիսկոս ոչ պարա
համարեցաւ գալ յայն սահման երկիւղա-
ծութեան, և արդարացուցեալ զանձն՝ յու-
յսանէր վնասիլն մեծ ընդ ազնուականութիւն
մարդասիրութեան Եդուարդայ առ Յով-
հաննէս, և ընդ խոստութիւն նորա որով
վարեցաւն ընդ նմա ի բանսի:

Իսկ այս որպէս և է, լուծան գաշինքն. և Փրանկիսկոս ի զգուշանալ անձին ընդ-
դէմ ցասման կայսեր՝ յարոյց զԹագաւորն Անգլիոյ և զամենայն իշխանս Իտալիոյ ընդ-
դէմ նորա վառեալս նախանձու, մանաւանդ

ղի խէթ էր մասց նոցա աջողութիւնք կայսերի՝ որոց վախճան ի սիրասիրել յանկէր ի վերայ ամենեցուն: Վառեցաւ անդէն հրդեհ մարտին անհնարին սաստկութեամբ ի վնաս երկոցունց կողմանց:

Յարոյց Կարոլոս զօրս և արձակեաց Իտալիա ի պաշարել զՀռոմ. առաւ քաղաքն և մատնեցաւ յաւար և ի զայրոյթ զօրականին: Յառաջնումն աւուր ութ հազարք կորեան ի Հռոմայեցւոց անկեալք ի սրոյ Թշնամեաց, անկաւ և քահանայապետն ի գերութիւն: Միաբանեցան Փրանկիսկոս և արքայն Ընգլիոյ Հենրիկոս Ը յաղաւութիւն քահանայապետին: Եմուտ զօրավարն Լոմբրէք գաղղիական բանակաւն Իտալիա, և յաջողութեամբ վնասուց մեծաւ ի Նէապօլիս: Այլ անդ առ պակասութեան կարեւորաց զաւղի կալեալ ըմբռնեցաւ յախտ ժանտ. տատանուդեցաւ զօրն, անկաւ և զօրավարն ի կենաց: Եւ այլ գունդ զօրաց առաջնորդութեամբ Ահն Փօլ զօրավարին միջամուխ լեալ յերկիր գբաութեան Մեդիոլանու, խորտակեցաւ չարաչար, և զօրավարն գերի վարեցաւ ի Թշնամեաց: Ընդ այժմ վնասուցն կորոյս ի ժամանակին յայնմիկ Գաղղիա անխոհականութեամբ արքային Փրանկիսկոսի զնիզակակցութիւն մեծահռչակ ծովակալին գենուացւոյ Անդրէի Տորիայ, որ Թողեալ զկոլմն Գաղղիացւոց՝ էանց առ Գերմանացիս սատար լինել կայսեր, մնաց եալ զհայրենի քաղաքն իւր Գենուա ի նեղութ պաշտպանութեան ձեռին նորա (1528):

Ի խոնչել Ժողովդոց և յոգիս լինել ա-
պաստան՝ հարկեցան իշխանքն գալ վերըս-
մին՝ի գաշինս խաղաղութեան. զկնի կայս-
ըրն՝ի տարապայման պահանջանացն, զի եր-
կընչէր՝ի մեծաւորս արշաւանաց Օսման-
նեանց, որ առեալ զՆուդոս՝ սպառնային
Եւրոպիոյ. և խիճայր յառանէն տղմից
յերեսաց նորալանգից: Եւ կռեցան գա-
շինք խաղաղութեան՝ի Քամպրէ, պայ-
մանօք զի որոշեսցի Փլանդրիա՝ի տէրու-
թենէ Գաղղիոյ, և Բուրգոնիա ճնասցէ
անդրէն՝ի քնիկ տէր իւր. և՝ի տոյժ վնա-
սուն հատուսցին երկու միլիոն ակուեք ոսկի.
որով գարձան որդիք Թագաւորին Գաղ-
ղիոյ՝ի գերութենէ՝ զորս՝ի պատանդի Թո-
ղեալ էր փոխանակ իւր (1529):

ԳԼՈՒԽ Ե.

Ընծայէ Թագաւորին Վրդպարան, և ճիգն նո-
րա՝ի վարգապետ գիտութեան:

1529 – 1536.

Ի կատարել գաշանցն և՝ի հաստատել խա-
ղաղութեան ձեռն էարկ Թագաւորն՝ի նուաճել
զայնոսիկ՝ի պաշտօնէից, որք ոչ չատացեալ
՝ի պահ օրինաց՝ յոլայն երբեմն իշխան
նոցին և գատաւոր կալ: Յերկերիւր ամաց
հետէ Թագաւորք Գաղղիոյ յանվեհեալ հատ-

տատուԹիւն հրովարտակաց իւրեանց այս-
պիսի ինչ օրէնս կարգելին, զի մինչեւ
տորագրեալ հրովարտակաց 'ի գիւանս
խորհրդարանին՝ մի յօրէնս գրեսցին: Ազա-
տուԹիւն էր նոցա 'ի նշմարել ինչ ՚ի ետատա-
կար պետուԹեան յարքունի հրովարտակ՝
ցածուԹեամբ առաջի առնել Թագաւորին,
այլ 'ի պնգել արքային՝ պարտ էր առնլ տալ:
Առ գերուԹեամբն Փրանկիոկոսի զեղծեալ
խորհրդարանն իշխանուԹեամբքս, ժպրհե-
ցաւ ընդդէմ կալ տաեհնագպրին՝ որ կայր
հրամանատար աշխարհին, և ամբոխել զնշ-
խանուԹի դշխոյն մօր Թագաւորին, որ տե-
ղակալն էր արքայի: Իբրև գարձաւ Փրան-
կիսկոս յամօռ իւր, և լուաւ զայս ամե-
նայն՝ ցաւեցաւ յոգի իւր, և սկսաբար է-
կեալ 'ի Փարիզ առնել ժողով մեծ անուա-
նեալ Դատ արդարուԹեան, նպատաւ 'ի ժո-
ղով խորհրդարանին արքայական պերճու-
Թեամբ: Առեհնագպրին հրամանատար մեծ
ըստ ձեռանէ արքայի՝ ընկալեալ զպատուէր
արքունի, խօսեցաւ այսպէս առ խորհրդա-
րանն. «Եթէ ոնիցիք գոտ կամ բողոք ի-
մեքէ, խօսեցարուք»: Յանկանեն նախա-
գահից և խորհրդականաց յոտս արքայի,
ակնարկի արար Թագաւորն 'ի վեր կանգ-
նել: Սկսաւ առաջին նախագահն խօսել,
և յեռ խոստանալոյ խոնարհուԹեամբ զա-
նձնայն հպատակուԹիւն և հաւատարմու-
Թիւն, եցոյց Թագաւորին զհարկ զառաջս
առնլոյ Լուսաբերականաց, որ սպրդեալ
մոռանէին և 'ի Գաղղիա. յիշեցուցանէր ևս

զկաշառակուրծ բաշխուածն պաշտամանեցեալ-
րուեցեան, և զանօրէնն ապերասանուեցիս զո-
րոց ի գաւառս գաւառս: Եւ իբրև գա-
գարեաց նա ի խօսելոյ, յայնժամ առե-
նագպերն առանց ինչ սահմանելոյ վասն
բոլոքոյն՝ եաս քարտուղարին ընթեռնուլ
զվճիռ ալքունի:

Զինի սէրզասատս վճռոյն եչաչ Թա-
գաւորն ի գահոյից, եւոյծ զժողովն: Ան-
յին ի մտաեանս գիւանաց պատուէրըք հրա-
մանացն, և ընչեցան որ ինչ ընդդէմ Թա-
գուհւոյն և առենագպերին արձանագրու-
թիւնք էին. և երկուք ամանք յատենակա-
լաց յանկրաւի առ առելութեան դշխոյին
ի մահ վարեցան: Ապագս ամփոփեցաւ
իշխանութիւն խորհրդարանին ի նախկինն
սահման. այլ նոցա տակաւ մտերմացեալ
ընդ Թագաւորին՝ ի չեռս ածին վերսին
զամենայն իրաւունս իշխանութեան իւ-
րեանց:

Յետ այսորիկ Փրանկիսկոս պարտ ա-
ռեալ ի խաղաղութեան, զհետ եղև բաս-
նալոյ զեղծմունս կարգաց որ տպրդեալ
էին ի ժամանակս երկար պատերազմաց:
Նրիտասարդ յեղյեղուկ ի տակաւ ի փոր-
ձոյ և ի տիոց խրատուել, ի տեղի շուայլու-
թեան փոխանակէր զիմաստուն տեսչու-
թիւն, պարտակէր ի յանձանձանս իրաց աշ-
խարհին, և ընկալեալ զանուն պատուոյ
Նորոգիչ և Հայր գիտութեանց, ջանայր
խրախուսել զիմաստունս ի յառաջադու թի
գիտութեանց, առ ի ժառանգել արժա-

նապէս զանուանս փոուաց: Կանգնեաց ՚ի Դալղիա վանս վասն օտարազգի գիանոց, Ձոխացոյց գրատունն սլքունի երևելի և լևելի դրչագրովք, կառոյց և տպարան արքունի: Հատուսաւեաց ՚ի համալսարանի Թագաւորեալ քաղաքին ուսուցիչս լսոին, յոյն և եբրայեցի լեզուաց, և ևս քերթուԹեան, փիլիսոփայուԹեան և բժշկականուԹեան: Մանկունք յամենայն կարգէ ժողովգեան յաձախէին ՚ի գպրոցս. և ոչ ևս համարէր յամօԹ՝ որպէս երբեմն՝ ազնուականաց գիաեալ այլ ինչ քան զհեծելուԹիւն և զիրանգս ընուց:

Եւանդն փուԹոյ Թագաւորին ոչ յայտսոսիկ ևեԹ ամփոփէր, այլ աս ՚ի հատուտեալ անշարժ վնասակարուԹիւն՝ խորհէր նոր կարգս յաւելուլ ՚ի զօրս իւր: ՍակաւաԹիւ էին հեաևակ զօրք Գաղղիացւոց, և մեծ մասն նոցա վարձկանք ՚ի Հելուետիացւոց և ՚ի Գերմանացւոց: Փրանկիսկոս կարգէր նոր գունդս հեաևակաց. և որոշէր ասՊին լեգէոնս, աս մի մի լեգէոն վեց հազար այր, և գնդապետս մի, և ըստ ձեռանէ նորա զօրագլուխք վեց, հազարապետք, հարիւրապետք ասլն: Ա՚յս օրէնք վնուասրականք ՚ի ձեռացն հատուտուն. միայն լեգէոնն փոխեցաւ ՚ի գունդ երկու հազար զօրականաց:

ԳԼՈՒԽ Ը.

Վէրոյին երգեալ մարդոյ պաբերազմաց՝ ի մէջ կայսեր և Փրանկիսկոսի:

1536 – 1542.

Ո՛չ յապաղեր Փրանկիսկոս զկնի ամրացուցանելոյ զթագաւորութիւնն ձեռն արկանել և յարգասիս խորհրդոցն. զանազան կայսին կատարել զնոսատուին իւր զոր հաստատեալ էր՝ ի գաշինս անդ՝ ի Քամպրէ՝ Թողուլ զդքսութիւն Մեդիոլանու միւսմ յորդւոց Թագաւորին. վասն որոյ գրգռէր վէրսային մարտն առաւակագոյն քան զառաջինան. Թագաւորքն երկոքին, գառնացեալք՝ ի կշռամբանս, ի նախատինս և՝ ի սպառնալս գային մինչև՝ ի միոմանս հրաւիրել զմիւսանս. և այսօրինակ կատաղութեան ցոսման նոցա միաբեր զժողովրդեամբք նոցին անկանէին:

Եմուտ Կարոլոս առաւար քանակաւ՝ ի Պրովինկիա, եգեալ՝ ի մուխ տիրել գաւառին և հատանել զայն՝ ի Գալղիոյ: Մեծայոյս ընդ ելս խորհրդոցն՝ յանգգնագոյնս հարցանէ զաւմեան՝ ի գալղիացւոյ սպայից, Թէ քանի՞ աւուրք պիտին հատանելոյ՝ ի Փարիզ: Ան որ պատասխանի ետ սպային. «Ինձ ձա՛ կատա պատերազմի աւուրըդ կրկէ լմանալ,

անշուշտ պիտին երկոտասան, եթէ ոչ ի նախկին ձակատամարտէն գարձեալ կորագոլ որ նախայարձակ խնդասիրէ յայլոց սահմանս։ Եւ ոչ վերոյիշեցին բանքն։ Փրանկիկոս մեղմեալ զնոսա աշխոյժն երիտասարդական, չատացաւ պահել միայն զերկիրն. ընդարձակ օրինակ պատերազմի խմաստուն և պատշաճ ըստ ժամանակին հանդամանաց։ Հրամայեաց գատարկել զՊրովինկիա յաժենայն անդէտց. ի համբարոց և ի գինուց. ժողովեցին զհունձս, կոտորեցին զծառս պտղաբերս, թողեալ զայնս միայն՝ որոց պտուղք կամ անուտելի էին և կամ ձիաստակարք. աւերեցին և զքաղաքս, թողեալ զԱՀենիան, զԱրլ և զՄարսիլիա ամրացուցեալ հզօր պահակապանօք։

Մտեալ Կարոլոս յերկիրն աւերակ և յանապատս, ըմբռնեցաւ ի սովոյ. զօրականքն քաղցեալ՝ ձեռն էարկ ի պտուղս ձիաստակարս. և ճարակեալ ի նոսա սխտ տարաւոխիկ, ի սակաւ աւուրս կոտորեաց մահ զկէսս ի զօրացն։ Կարոլոս անկեալ ի մեծ անհանգստութենէն, բռնադատեցաւ վերկնել կամ մանաւանդ ի փախուստ դառնալ, թողեալ ի ձանապարհի զղէնս, զաղխս բանակին, զդիակունս մեռելոց, և զհիւանդս որ չէին ապրանաց. և այնպէս գարձ առնէր նա Լոտարինա ի բաղդ տարօրինակ յայնմանէ որով յառաջ քան զամօրեայ աւուրս գիմէրն ի Դաղլիա։

Գործակից եղև մեծի յաղթութեանս հոգևականութեամբ իւրով ապարապետն

Ան Մանմորանսի. և զուարճացաւ Թագաւորն Փրանկիսկոս ընդ կոր՝ի գլուխ փառաւոր Թշնամւոյն: Եւ հանապազորդեր պատերազմի յաջողութեամբ Գաղղիոյ, մինչև սահմանեցաւ դադարումն զինուց, պահելով՝ի ձեռին երկաքանչիւր զիւր երկրակալութիւն (1538):

Եւ՝ի միւսումն ամի խնդրեաց կայսրն՝ի Թագաւորէն Գաղղիոյ անցանել ընդ երկիր սէրութեան նորա առ՝ի նուաճել զԿանդայիս զապստամբեալս յիւրմէ: Փրանկիսկոս զսա խրատուն վեհախոհ քնաւորութեան չնորհէր նմա անցս շքեղ փառաւք, և կարգեաց խոստանայր փոխարէն Թողուլ՝ի նա զԱեգիսլան: Այլ երբև անց ընդ Գաղղիա՝ ոչ ևս յիշէր զխոստումն իւր. և ոչ շահացեալ հաւատարժութեամբն, գրգռեր զՀենրիկոս զորքայն Անգղիոյ ընդդեմ Փրանկիսկոսի՝ պատմելով նմա քաջութեամբ զանխորհուրդ բանս լինչ արքայն ընծայեր: Բաւական եղև այս՝ի զարթուցանել զիմբրեալն զառելութիւն. և ահա ամենուսա կրկին վառեցաւ հուր մարտի:

ԳԼՈՒԽ Թ.

Դաշնակցութիւն Փրանկիսկոսի ընդ Օսմանեանս, պատերազմ Բիէմոնթէայ: Հալածումն Նորագանդէից ի Գաղղիա և հալածք վտանգաց:

1542 – 1547.

Ի զայրոյթս անգ առելութեան իւրոյ Փրանկիսկոս ընդդէմ կայսերի՝ գաշնակից եղև ընդ Օսմանեանս, և օգնականութեամբ նոցա զէտ վաշտի սրկ ի պաշարումն Ընիցցա քաղաք Բիէմոնթէայ: Այս գաշնակցութիւն Գաղղիոյ ընդ Օսմանեանս յաւոյց զԵւրոպա ոչ ինչ առելութեամբ ընդդէմ ազգին. այլ քաջութիւն Գաղղիացւոց յաղթանակեաց վերսին:

Դուքսն Լնկլիէնի զօրավար կայր գաղղիական բանակին ի Բիէմոնթէ. ընդդէմ դքսի գաւառին մաերիմ կուսակից կայսեր: Հրաման ի վերայ կայր զօրավարիս պահել ևեթ զաշխարհն ի ձեռն ամեաց. այլ առաջ նորա զձիաւորսն քան զինքն յարձակեալ ի վերայ, և զի անմարթ էր ազատել զերկիրն առանց խորտակելոյ զնոսա, առաքեաց առ թագաւորն զՄոնլիւք՝ զայր եպիսկոպոս ի սպայիցն, ազգ առնել նմա զչարիս մտադրին: Ամենայն ատագանին ընդդէմ գաղձան առաջարկութեանն, և միտքն մեր-

ժեցին զայն: Մոնլիւք՝ որ անդն կայր, և հարկ էր նմա լռել, զոփերը տրոփերը ոսիւք ղգեալին առ անժուժութեանն, ոլորեր զալարեր զմատունս, խածաներ զշրթունսն և փրփրայր՝ ըստ ասելոյ ժամանակակից պատմագրի ուրումն՝ իբրև զայսահար: Խրախուսեալ ապա յանկարկուէն արքայորդւոյն, խնդրեաց հրաման իսուելոյ, և եցոյց յանդիման զպատճառս՝ այնպիսի սրտառուչ զօրաւոր բանիւք մինչև զբազումս յունկնդրաց յիւր միտս շրջել: Թագաւորն ՚ի տագնապ ատրակուսի և յերկբայս լեալ՝ եթաց զդէմս իւր, և ամբարձեալ զաչս յերկինս, ասէ բարձրաձայն. «Ո՛ հայրդ լուսոյ, լոյս տուր ինձ՝ առնել զոր պարտն է ՚ի փրկութիւն ժողովրդեանս»: Եւ ՚ի հիացման լեալ, ասեաւ ապա յանկարծ, կանգնեցաւ ՚ի վեր և աղաղակեր. «Տայի պատերազմ, տայի պատերազմ, պատերազմեայի, պատերազմեցի»: Դարձեալ ապա առ Մոնլիւք, ասէ. «Պատմեա, բարեկամ, եղբօրորդւոյս զոր ինչ տեսերն ասա և լուար. խոսեա յինէն առ զօրավարս, զի կամ նոցա զի ՚ի քաջութիւնս և ՚ի փորձ հմտութենէ նոցա է ամենայն յոյս ակնկալութեան իմոյ»: Իբրև Մոնլիւք առ խնդութեանն եբանէր ՚ի խորհրդարանէն, ումն ՚ի ծերունեաց ասպետանոյն կալաւ զձեռանէ նորա և ասէ. «Ցիմար և մոլի, որ ոչ այլ ինչ խորհիս քան զպատերազմ և չերկնչիս գու բնաւ յապերախից որ անտի գհետ գան, և չարագունից լինես առիթ վնասուց Գաղղիոյ՝ քան որ ու-

րեք երկեք հասեալ իցեն նմա»: Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ. «Թող՝ ի մէջ իշխանդ զնոգդ զայդ, և ընդ հուպ լուծցես հարեալ՝ ի մէնջ զիշնամիս և մանրեալ և ելիեալ. և եթէ այսպէս կամք իցեն, և կերեալ իսկ»: Եւ զոյգ-ընդ բանին վազեաց արտաքս՝ ի սենեկէն խորհրդոց. և երբեմն մեծաքայլ անցանէր ընդ սենեակս, եառս խուժդ մի ազատակոյս պատանեաց՝ որք ձեռին էլից խորհրդոյն: «Պատերազմ, ազգակից նոցա, պատերազմ. և որ ցանկայն՝ աճապարեսցէ զնա իմ»: Ի զէն ընթացան նոքա, և պատրաստեալ՝ ի չուս փութացան արագ՝ ի Բիւմոնթէ, զնա լուրեանց ձգեալ հազար այր յաղնուականաց: Դուքան Էնկիէնի օգնականութեամբ քաջացս այսոցիկ կալաւ յաղթութիւն երեւելի՝ ի Սէրիզոլ:

Ա՛յլ այս յաղթութիւն գաղղիացւոց արասաքոյ քան զաշխարհն Իւրեանց՝ էփրկէր զնոսա յորշաւանաց Թշնամեաց. քանզի ազքային Անգղիոյ Հենրիկոս աւար հարկանէր զԲրիքարթիա գաւառս, և կայսերն Կարոլոս միջամուխ՝ ի կամպանիա՝ ոանակոխ առնէր զաշխարհն: Սակայն ոչ ընդերկար եղև յաջողութիւն այս Թշնամեացն. եմուտ գլուխ՝ ի զօրս նորա. հասեալ՝ ի վերայ և ոտից և հիւանդութեան բռնադատեաց զնոս՝ ի հաշտութիւն՝ գաշամբք զի Թողցի Սէգիսլան միւսմ յորդւոց ազքային գաղղիոյ, և Փրանկիսկոս հրաժարեսցի յիրաւանց սերութեան Նեապօլսոյ, Արթուայ

և Փլանդրիոյ : Նա իբրև այս ևս դաշնագրութիւն ըստ օրինակի առաջնոցն անգործ մնայր , և չուինդն անդրէն ընթանայր մարտի , մեռաւ Փրանկիսկոս ի քաղցկեղէ հիւծեալ ամիսս ինչ ի տիւանդութեան իւրում (1547) :

Թագաւորս այս թէպէտ և անառակ ի պնացս , անսասան կայր ի հաւատս . և թէպէտ առ բարեպաշտութեան և թէ առ ի մաստուն նախատեսութեան զամենայն չան ի կիր էարկ առ ի խափանել զմուտ լուտերական և կալուինեան ազանդոցն ի Գաղղիա : Ի սկզբանն քարոզութեամբ վարկր ընդ հեռուստ նոցին մինչև ցամն 1535 . յորում ամի նոքա խոնջեալ ի ծածուկ ուներլոյ զազանդս իւրեանց և համարձակեալ դաշնակցութեամբ Թագաւորին ընդ նորազանդս Գերմանիոյ՝ կամեցան բառնալ զպատրուակն , և յայտնապէս քարոզել զմոլորութիւն իւրեանց : Վասն որոյ ի գիշերի միում մածուցին ի կից Ճանապարհ հաց Փարիզու և այլոց քաղաքաց դրուածս նախատանաց զարբոյ խորհրդոյն , և սիրեցին Թուղթս ի հայհոյութեամբ ի սենեակս և ի սեղան իսկ Թագաւորին , յորոց և սմանք յանդգնեալ պատառեցին զպատակերս սրբոց եդեալս ի յարդուիւն Տառապակաց : Յառուցեալ յայնժամ Թագաւորն ընդ այս սեղանակատուտ ժողովութիւն նոցա , և հան հրովարտակ գառնութեան , և ասս վէց ի մոլեգնելոց անսուրբ հրապարակաւ մատնեաց ի հուր : Յորոց և հալածումն խիստ

ընդդէմ Վռուայցւոց բնակչաց Պրովինկիոյ, որք ընկալեալ զկալուինեան զաղանդ՝ բա նագնաց լինէին առ Ճինեւրայիս յատկա սամբուԹիւն: Գիշերախառն միեցան զօր քըն ալբունի յաշխարհն, և ընդ հուր և ընդ սուր յապականուԹիւն եդին զաւանս և զգիւղս առ հասարակ, յեղակարծուԹիւն ընծայեալ մարդկան զոհ եղեն մնչեգնու Թեան զօրականին, և սակաւք ոմանք ճող պրեալ անկան 'ի քարանձաւս: Ա յս օրի նակ հիմն 'ի վեր աւերեցաւ բնակուԹիւն Վռուայցւոց, սատակեցան մայրք, և սրմա սաքն խլեցան ծառք պաղաբերք, և երկիրն արգաւանդահող և մարդաշատ՝ անայացեալ անմարդի եկաց: Ա յլ այս ամենայն խառնու Թիւնք և ծանր ծանր պատուհասք ոչինչ օգնեցին 'ի խափանել զատարածուն աղան դոյն, և յորդեր արձակ և ոտանաւոր բան երգիծանաց հակառակ պաշտաման և հա ւատոց հռովմէական եկեղեցւոյ: Տեսցուք ապա զկնի զմահաբեր աերմանցս այսոցիկ զպատուական ինատակարս կրօնից սատուածպաշ տուԹեան և քաղաքաժողով ընկերուԹե մարդկան: Ա յլ քանզի զջարեաց աղանդոց Լուսաերի և Կալուինի անկան մեզ բանք, պարտ է մեզ տալ համառօտագիծ գնկարա գիր աղանդապետացս՝ Թէ որպիսիք ոմանք էին և ո՛ր սկիզբն նոցա:

ԳԼՈՒԽ Ժ.

Լ-ՈՓԷՐ Ե ԿԱԼՈՒՆ:

ԱՂԱՆԴՈՑ ի վեր երևումն ցոյցք են հաւատոյք աւետարանին յառաջապատումն գուշակութեան՝ թէ ընդ բարի սերման լինի և որոմն, և զի եկեսցեն սուտ մարգարէք ոչնարեներաւ կերպաւորեալք և ի ներքոյ գայլք յափշտակողք: Վասն որոյ և յիրաւի է ասել՝ թէ որպէս ոսկի փորձի ի բովս, նոյնպէս և եկեղեցի Աստուծոյ ի հերձուածս աղանդոց: Այսպէս կամեցեալ Աստուծոյ սրբել զեկեղեցի իւր ի զեղծմանց և ի ներքս սպրդելոց՝ եթող ընդ ժամանակս ժամանակս յառնել աղանդապետաց առ ի զգաստութիւն ուղղադաւանից ընտրելոց:

Յաւուրս ժամանակացս այսոցիկ ի մեծամեծ և յերկար խռովութիւնս իբրև բազում ինչ ի գեղեցիկ կարգաց քրիստոնէութեան խանգարեալ խրճնանային, և գորկեանքն և Լարովերեանք ի գլուխ կացեալ եկեղեցւոյն Քրիստոսի դեղևէին զհաւատս տխմարաց, նաւակն պետրոսեան ի մրրիկս անդ յուզեալս աներևոյթ ձեռամբ նաւապետեալ՝ ոչ նաւակոծէր. և ուղղափառ հաւատք սուրբ և անխառն մնային, և անասնան գայն Հռովմայ՝ հաստատեալ ի

վերայ վիմին: Հարան ընդ այս վէմ Յով-
հաննէս Հուս, վ Ներսէփ, Հերոնիմոս Փրա-
կացի, և փշրեցան. և զոգեօս իմն՝ ի փոշւոյ
նոցա յարեաւ միւս այլ սպանդանոցս Մար-
տինոս Լուտեր: Դէպ եղև՝ ի ժամանակին
բաշխել քահանայապետին Հռովմայ Լևո-
նի Ժ. ներոզութիւնս ըստ կարգաց եկեղե-
ցւոյ. և զի ոչ պահէաք զսովորութիւնն
վաղեմի՝ տալոյ զայն՝ ի ձեռն Օգոստինեանց՝
յանձն առնէր զայն՝ ի Դոմինիկեանս, առ-
ախ էմուտ գրգիռ՝ ի մէջ երկուց կրօնից.
՝ի վեր երևեցաւ յայնժամ Լուտեր այր
Հարատարաբան և վարժապետ՝ ի համալսարա-
նին Վիրթեմպերկայ. և՝ ի պաշտպանութի
իւրոյ կրօնին նշանակելով զգայթակղու-
թիւնս ինչ սպրդեալս՝ ի ներքս՝ ի պատ-
հառս ներոզութեանն, ընդդէմ զինեցաւ
և առաքելական հինաւանդ սովորութեն.
և վախից՝ ի վախս գահավիժեալ՝ ի մոլորու-
թիւնս, յամարաբանէր զսկզբնական մեղաց,
զարգարութենէ և զիսորհրդոյ: Ոչ ան որոյ
դատապարտեալ՝ ի սրբազան գահէն Հռով-
մայ, անսանձ այնուհետև ուրանայր զամե-
նայն կարևոր մասունս հաւատոց, զքաւա-
րար պատիժս հանդերձեալ կենաց, զազատ
իշխանութիւն կամաց մարդոյ, և զարդիւնս
գործոց բարեաց: Յետոյ ուրեմն և կարգ-
ուրացս լեալ, մոլորեցոյց զհետ իւր զամն՝ ի
միանձնուհեաց՝ ամուսնացեալ ընդ նմա:
Նա ապա յառաջ ևս խաղացեալ, մերժեաց
զարբութիւն կուսութեան, ուսոյց ազգին
ըստ կամի իմանալ զնք գիրս, և իւրաքանչիւր

առանձին յօրինել իւր բարոյական և կրօնս։ Եւ զի ըստ ցանկութեանէ ապականեալ մարդկան օրէնս դնէր առաջի, և տայր իշխանաց ազատութիւն երկուս ածելոյ կանայս, և դրաւելոյ ըստ կամի զինչս եկեղեցեաց, բայզմանէն անգէն անասային նորոյ վարդապետութեանն, և ոամիկին կուրօրէն զիմէր զհետ իշխանաց իւրոց՝ չայցեալ նորաշուք ազատութեամբն։ Առաի ապա յաճախեցին բազմօրինակ աղանդք ճնասակարք եղծիչք մարդկութեան, յորոց՝ ի վեր ընդիւղեաց և կրկնակնքոցն մոլորութիւն՝ ի ջնջել զօրէնս իրաւանց ամուսնութեան։ Ոչ ինչ զօրեցին նախահոգ խնամք Կարոլոսի կայսեր ընդդէմ աղանդոյս, քանզի բազումք յերևելի իշխանաց Գերմանիոյ որ մոլորեալքն էին զհետ Լուտերի՝ ի մի միաբանեալ դաշնակցութեամբ՝ ընդդէմ բողոքեցին հրամանաց կայսեր, վասն որոյ և Փրոթէսթանթք կոչեցան, այսինքն է Բողոքիչք։ Տեսեալ սոցա զիւրեանց իսկ պառակտումն՝ ի հաւատս, ժողով գումարեցին Աւգսպուրկ քաղաք, և յօրինեաց անդ Մելանքթոն մի յերևելի աշակերտաց Լուտերի զհանգանակ հաւատոյ. սակայն և այս հանգանակ նոցա ոչ ինչ անփոփոխ։ Տարածեցաւ աղանդս այս՝ ի հիւսիսակողմն Գերմանիոյ, ի Բրուսիա, ի Դանիս և ի Շուեդս։ Թէպէտ հակառակ եկաց Գաղղիա աղանդոյս, այլ նոր ոմն աղանդապետ վառեցաւ և վարդապետութեանն յարեաւ անդ Յովհաննէս Կալուին, հետևող Ցուինկլիոսի։

Ասպերկց էր նա ի գեղջ ուրեք ի Բիքարիա, այր նենգամիտ, խորամանկ և յամառ ի կարծիս: Եկն սա ի փարիզ տարածել զաղանդ իւր. և ոչ գտեալ անդ ոմին կռիւ, տարագրեցաւ անտի ի Ճինեւրա. և անտի ևս մերժեալ, դարձեալ վերստին դարձ արար անդր, և հաստատեաց անդ զաղանդ իւր և զնախատըռնակալութիւն, մինչև հեռուստաց նորին ի տուր և ի հուր և ի կախաղան մահու առատակել զայլափառս. և այսպէս նա ի ձեռն աշակերտացն տարածանէր զմոլորութիւն իւր և ի Գաղղիա:

Մինչդեռ Լուտեր և Կալուին ընդ տղանդըս իւրեանց ուղխօրէն զամենայն չարիս գեղուին ընդ Եւրոպա, Հենրիկոս Ը արքայ Անգղիոյ, հարեալ կուրութեամբ յանառակ կրից, և հերձեալ յեկեղեցւոյն Քրիստոսի, եկաց ոտն ուղղափառաց, և ձեռն էարկ ի հալածել զնոսա. և այսպէս յամենայն գաւառս Եւրոպայ վառեցաւ հրդեհ քաղաքական պատերազմաց: Եկեղեցիք պղծեալ և աւար հարեալ, պաշտօնեայք Քրիստոսի միանձունք և միանձնուհիք և ամենայն հաւատացեալք յանարգութիւն և ի մահ մատնեալք, և նշխարք սրբոց արհամարհանօք ընդ օդս ցանեալք:

Յայս ամենայն արտասուելիս եկեղեցւոյ ձեռն նախախնամ, որ ընդ փորձութեան առնէ և զնա, խրատեալ զորդիս իւր գաւազանաւ բարկութեան իւրոյ ի զգաստութիւն և յուղղութիւն, յաւել ի վերայ զգեզ դարմանոյ ի ձեռն Ճիսուսեանցն

ընկերութեան, յիւր իսկ անուն զնոսա ա-
նուանեալ, յայտ լինի այսպէս առնելով թէ
հալածանք մնային նոցա և նախատինք և
պղտպտութիւնք յաշխարհէ։ Երիտասարդ
ոմն առաքեա ասպանիայի վերաւորեալ՝ի պա-
շարման Պամպելոնայ՝ եւ զանձն՝ի զի-
նուորութիւն Քրիստոսի։ Եւ՝ի լեառն
Սեռայ, նուիրեաց զկենս իւր և զսու-
սեր Տիրամօր կուսին, և առեալ՝ի ձեռս
վցուալ պանդխտութեան՝ զայն գիշեր աղօ-
թիւք հանէր՝ի դլուխ. և յուզեալ՝ի խոր-
հուրդս իւր, յաղթէր ամենայնի հոգւոյն
Աստուծոյ, և ոչ կասէր յընթացսն զոր
ընտրեաց։ Եւ յետ ոչ բազմաց եղիտ նա
իւր ընկերս, և նոքօք հանդերձ ժողովեալ
յեկեղեցւոջ Մոնմարթրի՝ ուխտեաց Ա-
ստուծոյ զկուսութիւն, և նուիրեալ զանձն
՝ի պաշտօն առաքելութեան, հաղորդեցաւ
ընդ նոսա սեղանոյն սրբութեան։ Նա ինքն
էր սուրբն Իգնատիոս Լոյոլեան, և այս ե-
ղև սկիզբն կարգին Յիսուսեանց։

Երկարաձիգ բանից պէտք լցեն առ՝ի
ձառել զվաստակոց սոցա և զբազմաբե-
ղուն արդասեաց՝, ի ջնջել զկռապաշտ մո-
լորութիւն յաշխարհս անծանօթս, ՝ի ջար-
խել զնորազանգս, և՝ի զինել զմանկունս
եկեղեցւոյ հաւատովք և գիտութեամբք։
Սոքա առաջապահ գունդ եկեղեցւոյ, և
վահան և սուսեր նորա յիրաւի անուանե-
ցան։ Ընհաւատութեանն ոգի՝ անգծելի
սեսեալ զայս վահան ընդդէմ իւրոցն յար-
ձակմանց՝ ցասեաւ մեծապէս, և զերիս դարս

անգամ մանչէր և գոչէր ի կործանումն նո-
ցին. և բազում անգամ անասցին աերու-
թիւնք մոլեգին ազազակին: Եւ ընդ այս
չէն լինչ զարմանք, զի այս իսկ է կնիք ճըշ-
մարտութեան, և սոյն այս պայման այնո-
ցիկ՝ որ ի գործս Աստուծոյ և ի մշակու-
թիւն հաւատոց ժրանայցեն:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թագաւորութիւն Հենրիկոսի. կրգի արտոնէաց
նորա և պատերազմունքն զոր մղէաց ընդ կայսեր:

1547 — 1555:

Ի ԲՐԵՒ ամբարձաւ յաթոռ թագաւորու-
թեան Հենրիկոս Բ, եղբօղ գյանձանձանս
աշխարհին և զանձն իսկ գլխովին ի ձեռս
սպարապետին Մոնմորանսեայ, և խոր-
հըրդով նորա ի սկզբան անգ թագաւորու-
թեանն օրէնս կարգէր անձին հաստատունս
վասն գործոց և պարապոյ գբօսանաց. յո-
րոյ խելամուտ լինելիք սովորութեանց որ-
քանեւացն Գաղղիոյ որ ի վերստաւանելորգ
դարու:

Յառաւօտու յեօթնեւերորգ ժամու զարթ-
նոյր թագաւորն ի քնոյ, և ի զգեստաւո-
րելն խօսէր ընտանութեամբ ընդ իշխանս
իւր՝ որք յընկերութիւն նմին կարգեալ
էին: Ապա առանձնացեալ վաստակէր ընդ

ջուրեսին առեներպիբս իւր. և եթէ կա-
րևոր ինչ լրք պահանջէին, մտանէր ի
ժողովն համախմբեալ մերձ ի սենեակ իւր:
Ի տանեբորդ ժամու առաջնկայ լինէր
սրբոյ պատարագին, և անտի ելեալ եր-
թայր ի սեղան: Եւ յետ ճաշուն ժամ
ասոյր աղերսանաց ժողովրդեան, և բողոքոյ
նոցին ընդդեմ պաշտօնէից տէրութեան,
որով զգոյշս գործէր զաւանդապահս օրի-
նաց իշխանութեան: Դառնայր անտի Թա-
գաւորն ի սենեակ իւր ընդ մտերիմ սիրե-
լիսն, և հանդերձ աւագանւովն երթայր ի
բնակարան դշխոյին, ուր ժողովեալ գտա-
նէր զամենայն սրբուհիսն տան և զբամբշանին
պալատան: Ընդ երկար զբանիւք անկանէ-
ին, և ամենայն ոք ջանայր խօսել ինչ հան-
ճարեղս, և վէպս ինչ զուարճալիս ի մէջ
բերել, ուր և շամբուշ համարձակութիւնք
երբեմն ի ներքս խառնէին: Սինջև լու-
ծեալ ակմբին, ապդ առնէր Թագաւորն
զապդ երեկոյեան խաղուց, որ էին որսք,
գնաակախաղ, սուսերախաղ, մատանեխաղ,
ձիընթացք, արգնընկէցք, այլովքն հանդերձ:
Եւ լինէին խաղքս հանդէպ պատուհանիւ
գահընձոյն, ուր դշխոյն և տիկնայք բազմէ-
ին գաւառուրք մրցանակի յաղթողաց: Թա-
գաւորն սիրով հրահանգաց կրթութեան
մանկտոյ՝ յաղթող հանդիսանայր գեր ի
վերոյ քան զբազումս, մինչև սակաւուց
ոմանց հաւասարել նմին: Ա՛յլ ըստ եղա-
նակաց փոփոխէին և զբօսանք խաղուց· ի
խիստ ձմերայնի Թագաւորն ընդ աւագա-

նուոյն զբօսնոյր ի բալևիրս ի վերայ սառուցեալ լճացն Յոռնէկնըպլըղի, ուր ի գլորել նորուսից՝ ծիծաղէին հանդիսականքն բարձրաձայն: Եթէ յառախութիւն լինէր ձեռն, ամրոցս ձիւնակառոյցս կանգնէին շատագոյ, և շէնքակոյտս կազմէին՝ գնատակաց. ապա ի կրկին խուռամբս բաժանեալ, կէսք ի յարձակել և կէսք ի դիմակալել պատրաստաէին, և օրինօք ասյին Ճակատամարտս: Ի պատճառս խաղուցս այսոցիկ ազնուականք գիւղաքաղաքացիք ամենայն ազգաց, և ոչ ի մեռացեալս լինէին իւրաքանչիւրոց ի նոցանէ Ճարտարութիւնք և փորձ քաջութեան: Զհետ խաղուց յաջորդէին կարևորք. Թագաւորն երթայր ի խորհուրդ երեկոյին, ուր պատրաստէր ի վաղուան ընդ առեներազելոյն մինչև կրնէրկս. անտի դարձեալ ակըմբէին ընդ գշեայն, և յերկարէին ի կաքաւս ի դիշերն: Այս էր առանձին ոճ կենաց Հենրիկոսի Բ. եմոյծ նա յաղքունիս և ի քաղաքին առ արուեստս քաղցր լինի ազնուական և նազելի գնացս, այլ զհետ այնոցիկ յաջորդեցին անառակութիւնք և զեղծումն բարուց:

Ի սկզբան անդ Թագաւորութեանն Հենրիկոսի՝ գլուխ ամբարձին գիւղականք և խառնիճաղանճն ի փուաթոս և ի կիէն, զէն առին և խռովեցին զգաւառսն: Յածուցեալ Հենրիկոս զալմուկն, խաղաղոյնս պատուհասակոծ արար զառաջնորդս ապստամբացն, և ընկճեաց զնոսա ի սպառ: Յետ այնորիկ վանեալ պատերազմաւ և զԱնգղիացիս, խօսեցաւ ընդ նոսա ի հաշտութիւն:

Զկնի ամաց լինչ խաղաղութեան՝ թա-
գաւորն անչէջ ունելով զնախանձ և զցա-
սումն հօր իւրոյ ընդ կայսերս, ժամանակ
բարեպատեհ վարկաւ ածել ՚ի վերայ նորա
զղէնան մինչգեռ պատրաստէր նա ՚ի պատե-
րազմունս ընդ լուսերական իշխանս Գեր-
մանիոյ ՚ի վրէժ քինոյ նախասահանացն: Ձա-
ռայիցն Ճգնեցան զօրք նորա ՚ի վերայ քա-
ղաքաց կայսերս, և գրեթէ առանց լինչ կո-
տորածի ՚ի բուռն ածին զՄէս, զԹուլ, և
զՎերտէօն: Յամին երկրորդի ՚ի հաշտու-
թիւն խօսեցեալ կայսերս ընդ նորատանդս՝
պատրաստեցաւ աշխարհազօր ուժով ընդ-
դէմ Գաղղիոյ, և լինն բիւրօք եկին եկաց
առաջի Մէս քաղաքի: Տեսեալ պաշարումն
ամիսս երիս, յորում մեծահոչակ համբա-
ւեցաւ հանճարով և քաջութեամբ Փրան-
կիսկոս դուքս Կիզայ ՚ի տոհմէ դքսութեան
Լորենայ. և այս եղև կարապետ առ յապա
մեծի պայծառութեան փառաց նորա: Կո-
րոյս Կարոլոս առ պարսպօք քաղաքին բիւրա
ջոր ՚ի զօրուէն, կէս մի ՚ի զինուց պաշա-
րելոցն և կէս մի յանհարթութենէ օդոց,
զի գեհեռեմբեր էր ամիսն այն: Վասն որոյ
բռնադատեալ էանց փախստական ընդ
Հռենոս, և մեկնեցաւ ՚ի խորս Գերմանիոյ,
զի մի առցէ զարշաւանս և զյաղթութիւնս
Գաղղիացւոց զկնի իւր: Ընդ որ ահաբեկեալ
էր քան զի ՚ի պարտութեի մատնեալ, պատ-
րաստեցաւ հզօրագոյնս ՚ի գիմի հարկանել,
և զյաղթականի առնուլ զանուն. և առեալ
զթելուան, տիւն ՚ի յատակ կործանեաց:

Հենրիկոս ի վեր քինու կործանելոյ քաղաքին ասպատակաւ մեծցաւ ի Սաորին նահանգս, և քանչ իսկ հաս զվերժ յաղթութեամբն ի Ուէնեթի, ուր կայսրն Կարոլոս Թիկնադարձոյց փախստական եղեալ առաջի զինուց Թագաւորին Գաղղիոյ: Բայց ոչ այսպէս և Իտալիա յաջողեցան իրք Գաղղիացւոց (1553):

Յետ այնորիկ տագնապեալ կարծես ի յողդողդ բաղդէ կենցաղոյս, Թողոյր զԹագն և զծիրանիս՝ տալով զինքնակալութիւնն եղբօր իւրոյ Փերդինանտոսի, և զԹագաւորութիւն Սպանիոյ հանդերձ Սաորին նահանգօք և Թագաւորութեամբն Նեապօլեայ և գաւառօք Ամերիկոյ որդւոյ իւրում Փիլիպպոսի՝ որ Թագաւորէր յայնժամ Անգղիա, ամուսնացեալ ընդ Մարիամայ դստեր Հենրիկոսի Ը: Եւ ինքն մեկնեալ առանձնանայր ի վենատոսն ուրեք, անցուցանել զինացորդս աւուրցն յաղօթս և ի գործս բարեպաշտութեան (1555):

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԿՐԿԻՆ ԲՈՐՁՈՒԵԼ ՄԱՐՏԻՆՈՍ ՊԱՐՏՈՒՔԻՆ ԳԱՂԼԻԱՅՈՑ ԱՅԻՊԱԼԻԱ, ԵՒ ՄԱՀ ԱՐՏԱՅԻՆ ՀԵՆՐԻՒՈՒԻ։

1555 – 1559։

ՅԵՏ հրաժարելոյ Կարոլոսի ի թագաւորութենէ, դուքս լինէր զինուց ի մէջ Գաղղիոյ և Սպանիոյ. այլ այս բռնապետս գադար զինուց ոչ ինչ սահեցոյց ընդ երկար. և զպատճառս լուծմանն երկաքանչիւր զմիմեամբք արկանէին։ Թագաւորն Սպանիոյ Փիլիպպոս անհաշտ լիւր կալմն ձըգեաց զՀնգղիացիս, և անդէն դաշնակցացն զօրք առաջնորդութեամբ Փիլիպպոսի Էմմանուէլի դքսին Սաւոյայ, զոր մերկայուցեալ էր երբեմն Փրանկիսկոս յիշեալ նուաճենէ, երևեցան առ պարսպօք Սէն-Քանթէն քաղաքի։ Քաղաքապետ առաջնոյն էր երևելի ծովապետն Քալինեի, այլ պահակապանք քաղաքին անբաւական էին ի գիմակալել։ Սպարապետն Մոնմորանսի հօրեղբայր նորա՝ որ բանակեալ նաւէր զօրիւք վտակաձօք հեռի ի քաղաքէն առ Ֆէրեաւ, թէպէտ յոյժ ի վայր էր զօրութեան զինշնամին, ջանայեալ եմոյծ զօրս ի քաղաքն յօգնականութիւն ընդ ճահիճս ընդ որս անցանել անհնար համարէին պա-

չարիչքն: Եւ եթէ անդէն վաղվաղակի գարձ առնէր ի Ֆէը, յաջողութեամբ յամբովի գործոյն հասանէր. իսկ նա թէպէտ զօրավար խնասուն և խոհական, այլ յայսմ գէպծառ բազդին յամառել կալ և ինալ անդ անցանելոյ օգնականն գնդին ընդ Ճահիճն, հաստատեալ ի մոլ թէ մինչ չև անցեալ թշնամւոյն ընդ անձուկ Թուրքն՝ մարթի հեռանալ ինքեանց անտի, բայց խաբեցաւ. զի Թուրքն՝ ընդարձակագոյն քան զոր կարծէրն՝ տայր անցս երեսուն հեծելոց միանգամայն, և անդէն արագ արագ անցանէին Թշնամիքն: Իշխանն Քոնտէ եռեզալկալ սպարապետին առաքել ի բարձրաւանդակ տեղւոջէ զնայելումն Թշնամեաց, ազդ առնէր նահանջ տալ զօրաց, այլ վայրապար, քանզի նա չինականագոյն և արհամարհող խորհրդոց՝ առնէր պատասխանի, թէ մինչ չև ծնեալ իշխանիգ՝ հրամանատար էի ես զօրաց, և նախատինս համարիմ ծերութես լսել խրատու պատանւոյն: Ա յսպիսի ամբարհաւաճ պատասխանի երևեալ ինչ յազթութիւն Թէրևս խուն մի արդարանայր, այլ ընկալաւ նա անդէն զփոխարէն ամբարտաւանութեան իւրոյ ահաւոր չարաչար հարուածովք: Պաշարողացն համագունդ յարձակեալ մեր ձեռն հուպ առ գաղղիացիս կրկին վարասխատ ի Ֆէը, և բռնադատեցին զնոսա ի Ճակատ մարտի: Զգօնացեալ յայնժամ սպարապետին յամբարհաւաճ մտացն, դիմէր ի խուճուրդ առ հինաւուրց զօրագլուխս ոք, հարցանէր թէ զինչ գործել կայ: Ա-

որ զօրագլուխն եւ պատասխանի. «Վայրկ մի յառաջ մարթ էր ինձ խորհուրդս բարկս առաջի առնել քեզ, այլ այժմ չգիտեմ և ոչ ինչ»: Եւ զդիշերն ողջոյն զօրականն վատատկաբեկ եղեալ ընդ ծանրութեամբ զինուց և յերկար ճանապարհէն, և հզօրագունից հանդիպեալ թշնամեաց, խորտակեցան անդէն և վարատեալ ցրուեցան: Ի փախուստ դիմեալ զերծաւ հեծելազօրն. իսկ 'ի հետևակաց կէսք՝ որոց զօրավարքն ապարատեան՝ որոյ եղեն ձարակ, և ինն հարիւր այր յաւազորերոյն ընդ նոսա: Մոնմորանսի վիրաւորեալ պատերազմէր յուսահատ, ոչ ևս կամելով տեսանել զարև յետ ամենայն պարտութեան. այլ գլորեալ յերկկիր, ձերբակալ եղև 'ի լրումն փառաց յաղթանակի Սաւոյացւոյն (1557):

Այս բազմապէտ պարտութիւն զուգակշիռ այնց որ 'ի Քրէսի, 'ի Պիկտաւ և յԱզինքուր, մեծաւորս կործանման գաղղիոյ կատարած Թուէր, բացեալ անարգել զաշխարհն ընդ առաջի թշնամւոյն մինչև ցփարիզ: Այլ հայրենասէր նախանձ ազատախուռն մարդկան, և միաշունչ հաւանութիւն ժողովրդեան, և գժտութիւն Անգղիացւոց և Սպանիացւոց, և անձրևաբերք աշնայնոյն խափանեցին զյառաջախաղացութիւն յաղթողաց: Ածապարեաց Թագաւորն յօգուտ 'ի կիր առնուլ զյաջողուածս հանգամանաց ժամանակին, և վերահին կանգնել զկորանս իւր. ուր զի և յամենայն կարգէ մարդիկ և ևևս զիմեամբք առնէին նախանձընդ-

դէմք ի ընուլ զդանձն ալքունի, որ ընդ հուսկ տեսաւ զօրացեալ ի պաշտպանութիւն աշխարհին և ի դիմաձորա:

Դուքան կիլ, տեղեկալ զօրավար ամենայն զօրաց աշխարհին, անդրէն զօրաժողով եղև բազում դիւրութեամբ. քանզի ամենեքեան գիտէլով զքաջութիւն զօրավարին և զբազդ, դիմէին առ նա ինքնակամ: Ոչ ի գերև եհան նա զյոյս նոցա. Ձարտաւր հնարիւք շարժեաց զղզդեցոյց զիշնամին: Քանզի կեղծեալ արշաւել ի քաղաքս հեռաւորս ի ծովէ, խոտորեցաւ յանկարծ ընդ աջեակ, և եկն եկաց առաջի Քալէայ: Անգղիացւոց յերկերիւր ամաց հետէ ախրեալ քաղաքին, և բազում ծախիւք ամրացուցեալ էր զայն. այլ պահապան զօրք ի նմա սակաւք էին յոյժ: Պնդեալ ուժգին զպաշարումն դուքան, և յաւուրս ուրի ընդ բռամբ էած զքաղաքն, և հալածեաց ի սպառ զԱնգղիացիս ի ցամաքէն: Իսկ զօրավարն Պրիսաք ի Բիէմոնթ սակաւաձեռն գնդաւ ցրուեալ վարտաւեաց զամենայն գիմակացս իւր, և հառաջառուն կալաւ զփառս գաղղիական զօրուն ընդդէմ դքսին Ալպայ՝ որ զկնի կոնդալվայ քորտովացւոց եկաց զօրավար ձեծանուն և հմուտ ի Սպանիացիս:

Ալ զկնի առաջնոյ մեծի պարտութեն խորտակեալ Դաղղիացւոց և ի պատերազմին Կրաւկնայ՝ խոնարհեցան ի հաշտութիւն: Թողին զամենայն երկրակալութիւնս իւրեանց հեռաւորս, ուշ եգեալ ամրա-

ցուցանել զհերուԹիւնն ի նեղբուսաց պա-
հեալ զՄէս, զԹուղ, զՎերաէոն, զՔալէ և
զայլ քաղաքս յեղս սահմանացն Հիւսիսոյ,
որ գոգցես ցարդ անպատասպար էր Թողեալ:

Մեծահանդէս հռչակեցան գաշինք հաշ-
ատեԹեանն խնամուԹեամբ ընդ իրեարս.
Հենրիկոս ետ զգուստաւ իւր զՂեղիսաբեԹ
ի կնուԹիւն Փիլիպպոսի արքային Սպա-
նիոյ, և զքոյր իւր զՄարգարիտա գքսին Սա-
ւոյիոյ. այլ վախճան իրացս ապերասքեր
եղև: Ըստ յառաջ սովորուԹեան գաղ-
ղիացւոց ի իրախուն յայտնիսիս՝ կարդե-
ցաւ նիզակախաղ. և ի բազում յարձակմունս
յաղԹող գտեալ Թագաւորն ծափահայն
դովեցաւ: Յերեկոյին մերձ ի վախճան
հանդիսին կամք եղեն նմա բեկանել նիզակ
ընդ կոմսին Մոնկոմերեայ անձնապահա-
պեաի իւրոյ առն հզօրի քան զամենայն աւա-
գանին ի նիզակախաղս: Ի կռիւ եկին ընդ
իրեարս և յարձակեցան ի վերայ միմեանց.
յուժգին բախմանէն Թռեան նիզակքն շա-
ռաչմամբ, և բեկոր նիզակին Մոնկոմերեայ
հանդիպեաւ ի գլուխ արքային, և Թափ ան-
ցեալ ընդ պահպանակ երեսացն՝ վիրաւո-
րեաց զձախակաս նորա յաչակողմն: Հենրի-
կոս առաներեալ անկաւ յերիվարէն. դիմե-
ցին վինաՒկիլք, և մուեալ ընդ անԹովք՝ ա-
ծին զնա յապարանս. պալատականք ամե-
նայն և ժողովուրդն զարհուրեալ երկիւ-
ղիւ զՀետ նոցա գնացին: Մահաբեր էին
վէրքն, և Թագաւորն պատուէր ետ մի ինչ
մեզանչել ի կոմսն. և յետ աւուրց աս-

ոանց մեռաւ նա՝ Թողեալ զԳաղղիա՝ ի ցաւս գառնագինս: Եւ արդարև ողբոց եղև արժանի մահ նորա, զի յետ այնորիկ գԺառԹիւն և խռովուԹիւն և տագնապ վեր՝ ի վայր յուզեաց զԳաղղիա:

Հէնրիկոս Թէպէտ չէր այր գիտնաւոր իբրև զՀայրն, այլ ոչ նուազ քան զնա պաշտպան եկաց գիտուԹեանց և իմաստնոց: Հայր և որդի բարեբարոյք էին, հանճարեղք, սիրողք Ժողովրդեան և փոխանակաւ սիրեցեալք՝ ի նմանէ, նախանձաւորք արդարուԹեան և կրօնից առաուածպաշտուԹեան. այլ վառնոզք գանձուց, սիրողք գրգանաց, և գործովք իւրեանց անարգուք հաւատոց՝ զոր հրովարտակաւ ընդգէմ հայհոյչաց և նորաղանդից հաստատէին: Ա՛յս միայն էր խոիր՝ ի նոսա, զի Հէնրիկոս քաջ գառաւ՝ ի քաղաքավարուԹեան քան զՀայրն. անսայր հաւատարիմ պաշտօնէից իւրոց և քաջ զօրավարաց, և բաղդն իսկ հաշտ էր միշտ ընդ նմա. այնպէս զի զօրացեալ Գաղղիա առ յաջորդաւ Կարոլոսի կայաբր, վրէԺխնդիր լինէր առաւապանացն՝ զոր հատոյց նոցա մեծաղօր ինքնակալս: Ա՛ՀաւասիկՀ առ սուաւ՝ ի Գաղղիա ԿաԹոլիկականացն Թիւ այնչափ՝ մինչև Ժողով իսկ գումարել՝ ի մայրաքաղաքին՝ ի հաստատուԹի՝ իւրեանց աղանդոյն:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թագաւորութիւն Փրանկիսկէայ Բ, և ազմուկ խռովութեանց առաջին պատերազմաց։

1559 – 1560։

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ որդի անգրանիկ Հենրիկոսի Բ և կատարինեայ Մեդիչի՝ թագաւորեաց ամ մի և կէս. այլ ի համառօտ ժամանակի թագաւորութեան նորա ի վեր ընձիւղեցին ի Գաղղիա ամենայն չարիք որ յառաջ հետէ սերմանեալ էին ի ծոց նորա։ Դուքսն Կիզ և եղբայր նորա կարդինալն Լորենայ, հօրեղբարք դշխոյին Մարիամու Սթուարթայ, ի պատիւ երեսաց նորա ամբարձան ի բարձ մեծի աւագութեան։ Սպասաւորեան Մոնմորանսի հզօր քան զամենայն աւագանին առ թագաւորութեամբ նախորդին՝ հեռացաւ յարքունեաց՝ տեսեալ զչարակենութիւն նոցա. ապա և ամենայն մերձաւորք թագաւորական տոհմին լուծան յիւրաքանչիւր պաշտամանց. մերկ ևս այսու կամեցեալ զառաջս առնուլ վտանգացն՝ յորս ի պատճառս փառասիրութեան նոցա անկանէր Գաղղիա ի ժամանակաց անտի թագաւորութեան Կարոլոսի Չ։ Եւ մերձիքն ի նոսա էին Ընտանիքս Պուրպոնեան, որ ամուսնացեալ ընդ օրիորդի ու-

մեծն Նաւարացւոյ Ժառանգի գահուն՝ Թագաւորեր ի Նաւարրա, և Լուդովիկոս Քան տէ Եղբայր նորա: Առաջինն ի սոցանէ այր անզօր և յոզդոզդ՝ ոչ համարձակեր մեկնել ինքնին ի գործ ինչ. իսկ կրասեր եղեալ առանդաւն, խիզախ և խռովայոյզ, չեր կոչին ձգեալ զեղբայր իւր զԹագաւորն Նաւարրայի, դիմագրաւ լիներ յամենայն վտանգս՝ կօրծանել զաոհմին Լորենայ, և ընդ ձեռամբ գրաւել զաեւչութիւն աշխարհին: Միանգամ ընդ Քոլինեի ծովապետին միաբանեցան սոքա ընդ ոխերիմ Թշնամիս Կիզեանց նախանձաւորաց ի հաստատութիւն ուղղափառ հաւատոց: Այսպէս փառասիրութեամբ և նախանձու իշխանաց պատճառս առին քաղաքական կռիւք, և պատրուակ ի մէջ անկաւ կրօնն. և առաջին նշան լինէր քաղաքական գժտութեան պաղանի դաւակցութիւն նոցա:

Ալբունիքն էին Ա՛մպուազ. դաշնակից իշխանք խորհուրդ ի մէջ առեալ հատատուցին կոտորել զԿիզեանս, և ձերբակալել զԹագաւորն: Օգնականք էին խորհրդոց նոցա գշխոյն Անգլիոյ և նորազանդ իշխանք Գերմանիոյ: Յայնժամ Ուրնոսի ումն անուն կոմս կապրոնացի ալբանեակ իշխանացն՝ այր յանդուգն համարձակութեամբ և գործօնեայ, խոհեալ յամենատաք զբազմութիւն Կալուինականաց հատոյց լուիկ զինեալ շուրջ զբնակութեամբ Թագաւորին, խնդրել նախ ի նմանէ զպատուհիան կրօնից, և ի մերժել նորա զայն՝

որպէս հաւատաւոր գուշակէին՝ յարձակել ի վերայ քաղաքին, կոտորել զԿիպչիանս և զկողմնակիցս նոցա, և ձերբակալեալ զարքային՝ ընդ անուամբ նորա և ընդ իշխանութեամբ պատրուակել զյարուցեալն իբրեանց: Իբրև ի վերայ եհաս Կիպչ գաւառանութեան նոցա, ջան ի մեռ եդեալ արկանել զնոսա յորոգայթ ի նոյն, յանկարծ ի վերայ եհաս պատրաստութեան նոցին: Սպանաւ Ուբնոսի և բազումք ի Կալուինականացդ ձերբակալ եղեն. առաջնորդք սպրստամբութեանն միայն ի մահ վարեցան, և թողութիւն եղև խառնիճաղանճ ամբոխին՝ իբրև մոլորելոց զինի խռովչաց: Ալ յետ աւուրց ի ժողովել համարձակել կիսոցն միաւանդամ ձեռն ի զէն արկանել ընդդէմ թագաւորին, հրամայեալ սուր ի վերայ եդեալ կոտորել զամենայն դաշնակիցս: Բազումք ի ձեռս անկեալ խողխողեցան առ հասարակ, կամ զծառոց դաշտին իբրև զկախաղանաց կախեցան: Այս եղև վախճան դաշնակցութեան նոցա, ուր զառաջին զփորձն եառուն Կալուինականք՝ թէ հեռաձուած յուղղափառ կրօնից յո՞ր կատաղութիւն զառածանէ զմարդիկ ընդդէմ օրինաւոր իշխանութեան (1560):

Նշաւակեցաւ ընդ հուպ ի նամակառուց, զի իշխանն Բռնաէ՝ զորմէ կատկածէինն՝ առաջնորդ էր և խրախուսիչ ապստամբաց, և զի հնարէր և այլ ազմուկս շփոթից յարուցանել: Դուքսն Կիզ քաջիկ զինամբաւն քօղարկեալ, կոչեաց զիշխանն Բռնէ ի

մեծ ժողով ատրուճեան: Հասեալ անդր Քոնաէ՝ երթայր՝ի յարդուճիւն Թագաւորին. որոյ կրտուճեամբ ընկալեալ զնա, ազդ արար ևէ ամբաստանուճիւն էր զնմանէ համախոհուճեան ընդ ապստամբս, և ծրագնամուճեան ընդ Թագաւորին: Ոչ ինչ բնաւ այլայլեցաւ Քոնաէ՝ի դէմն, և պատասխանի արար՝ զի այն ամենայն զրպարտուճեան բանք էին, և զի եթէ հաճէր ալքայ յայտնել զամբաստանօղն՝ քաջ կարօղ էր ինքն խայտառակել զտուճիւն նոցա: «Քաջ է, ասաց Թագաւորն, լուիցուք քեզ՝ի պատասխանել քում զանձնէդ»: Ընդ այս բան՝ի դուրս ելեալ Թագաւորն, հրաման եա ըմբռնել զնա: Ատեան քննուճեան կալեցաւ, և՝ի սուգել յանցանացն՝ հաստատ գտանկնիք մահու՝ի վերայ իշխանին: Իբրև մերձ էր մատնել՝ի ձեռս գահճաց յանցաւորն, մեռաւ Փրանկիսկոս Ռ յուճեամբ ամի կենաց իւրոց, Թողեալ զալքունիս և զԹագաւորուճիւնն երկփեղկեալ խռովուճեամբն՝ի շրջուկ քաղաքական պատերազմաց յաւեր և՝ի կործանումն աշխարհին:

ԳԼՈՒԽ ԻԹ.

Թագաւորութիւն Կարլոսի Թ, և Թղթակութիւն Կալւինականաց ի Գաղղիա:

1560 – 1562.

ԿԱՐՈԼՈՍ եղբայր Փրանկիսկոսի Բ մանուկ տասնամեայ նստաւ յաթոռ թագաւորութեան. և մայր նորա կատարին ՄԵմիչի վարէր զանձ տէրութեան աշխարհին՝ իբրև խնամակալ պետութեան. և ի հաստատութիւն իշխանութեան իւրոյ՝ ի զուգակշիռ հաւատարութեան պահէր զՊուրպոնեանս և զԿիզեանս, որ ոչ թեթև ինչ գործ էր այս: Քանզի իշխանն Գոնտէ մազապուր լեալ ի մահուանէ՝ ոխայր ընդ Կիզեանս իբրև ընդ պատճառս դատակնքոյ մահուն, և խնդրէր պարապ վրէժխնդրութեան: Դարձեալ և Գոլինեի հաւատեաւ գիտէլով թէ իշխանութիւն Կիզեանց խոչ մեծ է տարածելոյ նորոյ աղանդոյն, զամենայն հնարս հնարէր կորուսանել զնոսա զամենեսին կամ հեռացուցանել յարքունեաց: Այլ դուքն Կիզ այսպիսի ինչ հնարս ձարտարութեան խմացաւ ի քակել զխորհուրդս թշնամեաց. ընտանեցաւ ընդ սպարապետին, և յայտնեալ նմա զիրս իբր՝ միաբան եղեալ զնա ի նոյն խորհուրդս.

և սիրով հաշտութեան կապեցան սոքա ան-
քակ ընդ իրեարս՝ հինն ունելով զկրօնս առ-
առաքեալ պաշտութեան : Եւ նախանձախնդիր
դիպք կրօնից հարց իւրեանց՝ խրախոյս բար-
ձին նոքին իրել ի վերայ առաքեալ պաշտօնէ
և հաստատակաց օգտի զխոտս և զգահա-
սիրութիւն ոմանց ոմանց յիշեանացս : Ելիդ-
մամբ հաստատեցին միաբանութիւն անլու-
ծանելի , և ի ցուցանել և ժողովրդեան գան-
յեղի նշանակ այնր՝ ի ծնի զաակին ի
միտին մերձեցան ի սուրբ խորհուրդն :
Յետ այնորիկ յինքեանս ձգեցին և զԹա-
դեոսն Նաւաղրայ , որ ընդ կալուածական
պատգոյ եղեալ և զգաշնակցութիւն կու-
սակցաց , որ անքակտելի թուէր յայնժամ:

Յարկութիւն կալուածականաց Գաղ-
ղիոյ ըստ թուոյ բազմութեան նոցա էր.
Թայլ և գայրանայր , և օր ըստ օրէ յաւե-
լուին հնարք նոցա ի ձեռս բերել նորանոր
ազատութիւնս ընդդէմ կրօնից Հնմարտու-
թեան . քանզի ի ծածուկ գային իւրեանց
օժանդակ զղջիոյ մայր Թագաւորին՝ որ
Ճարտարութեամբ ինդրէր զատ ընդ նոցա
նոցա Թիկունս իւր առնուլ ընդդէմ իշխա-
նութեան Կիզեանց և սպարապետին : Նոյն-
պէս և ուղղափառք ժամ ի ժամէ ձեռնին
զօրութեամբ ուժոյ վանել զգարանակալ
գաւառականութիւն ազանդաւորացն . վասն
որոյ իբրև լի ցասմամբ երկոքին կողմանք մըր-
ձեալին , յանկարծագէպ լինէ պատահար
ազգեալ շարժեաց զնոսա ի մարտ քաղա-
քական : Դուքն Կիզ ընդ անցանելն առ

վ ասոն աւանաւ, որ էր ի հայրենի ժառան-
գութեան առհմին իւրոյ, զկայ էառ զի ա-
ռաջի կայ լինի սրբոյ պատարագին: Եւ
յետանել քահանային ի բեմին՝ կալուինա-
կանք որ ի մօտ ուրեք ի շեմարանի ցորե-
նոյ ժողովեալ առնէին զպաշտամունս իւ-
րեանց, ակսան երգել բարձրաձայն՝ Թերևս
յանխորհուրդս իսկ՝ զսաղմոս: Առաքեաց
գուքան ազդ առնել նոցա զի լռեսցեն մինչև
ի կատարումն սրբոյ պատարագին, այլ նո-
քա ոչ լսեան: Եւ իբրև առ հեռաքննու-
թեան մերձեցեալ հայէին ծառայք գքսին
ի ներքս ի շեմարանն, պահասպանք դրանն
համարեալ թէ յանգոնել եկեալ էն՝ ակսան նախատել զարան, և նոքա զնոսա,
մինչև ձեռն արկանել ի քարինս և ի գա-
ւազան: Ի չուինդն աղաղակի ամբոխին ըն-
թացաւ գուքան խաղաղել զնոսա, այլ ի
մոլեգնելոյ ամբոխէն վէրս էառ ի դէմն:
Տեսեալ անդ արանց գքսին արիւնալից
զդէմս աւազան իւրեանց՝ զայրագնեցան
յոյժ յոյժ, և ոչ ինչ ունկն եգեալ այնու-
հետև բանից նորա՝ գիմեալ ի վերայ կո-
տորեցին ի կալուինականաց արս իբր երե-
սուն, և զինացեալսն ի փախուստ դարձու-
ցին (1562):

ԳԼՈՒԽ ԺԵ.

Առաջին պատերազմ Թագաւորի՝ ի պատճառս աղանդոյն Կալուինոյ:

1562 - 1563:

Լուր կոտորածին Վասեայ, քանզի այսպէս կոչեցին զայն ալանդաւորքն, սարսափեցաւ ընդ պատառս ջարդաչարս ևս կոտորեալ Թեամբ: Անդէն ի զէն դիմեցին կալուինականք առաջնորդութեամբ Գոնասեայ Բէզանին, և վինի վայրապար ձգնեցոյ ըմբռնել զԹագաւորն ի պատրուակել նովաւ զարտրատանեալն իւրեանց, հասեալ յեղակարծուց առն զԱբրեզիոն, զՏուրսն, զՊիկտաս, զԱնժէ, զՈւշէլ, զՈւռան, զՊուրժ, զԼիոդդոն, զԿրընոալ և զայլ եւս եւեղ եւեղ քաղաքս: Ընդ ամենայն սոսկս ընդ որս անցանէին, սակ Մէզրէ, կոտորէին զեկեղեցիս և տապալէին յայնցանէ զբազումս, խորտակէին զպատկերս արբոց, հրոյ մատնէին և ցրուէին զնշխարս արբոց մարտիրոսաց՝ ոյք զհնումն եդին կրօնից քրիստոնէութեան ի Գալլիա. կոտծանէին զսեղան, և զարբեալն խորհուրդս դնէին ի պղծութիւն անհնարին. ի տանջանս և ի մահ մատնեալ զքահանայս սեռն և զծառայս նորա զինանձինս՝ որոց ոչ էր

թիւ, և զինն Տարիւր գիւղօրէս յապահա-
նուելիւն եգեալ: Ընդարմ վրէժխնդրութեի
ուղղափառաց Թէոթև ինչ էր առ ջարհօք
արիւնահեղ կոյր նահանձու ազանդաւո-
րաց, որք արեամբ անմեղաց լուանային զյա-
գուրդ մոլեգնութեան իւրեանց: Քանզի
պարսին Ատրէ ոդողեալ արեամբ ուղղա-
փառաց զգաւառն Տոֆինէ, զԱւգոնեանն
Գաղղիա, զԱնկլտոք, զՊրովինկիա և զայլ
գաւառս, ասիպէր զորդիս իւր յարիւն խոշ-
խոդեալոց ուղղափառացն լուանալ: Ոչ ինչ
ապա զարմացի որ ընդ վրէժխնդրութիւն
ուղղափառաց, եթէ զչափ անպիտանեան
ազանդաւորացն ի միտ առցէ: Ընդէն Թա-
գաւորն Նաւարրայ, սպարապետն և դուքսն
Կիզ չարժեցին զզօրս արքունի ընդդէմ ա-
պըստամբացն. պաշարեցին նախ զՌուան, և
անդ օրհասական ընկալաւ վէրս Թագաւորն
Նաւարրայ, և դուքսն հազիւ զերծաւ ի սրոյ
առն ուրուք սրիկայի: Ձերբակալ եղև անօ-
րէնն, և ածաւ առաջի դքսին. եհարց նմա
դուքսն քաղցրութիւ՝ Թէ զինչ պատճառք էին
սահելութեան նորա ընդդէմ անձին իւրոյ:
Նա պատասխանի ետ, Թէ ոչ այլ ինչ, բայց
օգուտ իմոցս կրօնիցդ: Եւ դուքսն ասէ. «Ե-
Թէ կրօնք քոյին ուսուցանեն մարդասպան
լինել, իմքս պատուիրեն ներել քեզ, երթ
ազատ»:

Ցետ առնուն Ռուանայ խաղաց բանակն
արքունի ընդդէմ ապստամբացն, որք լուսե-
րական պերճանացն օգնական գնդաւ զօրա-
ցեալ խրոխտացին. խառնեցաւ մարտն առ

Տրէօ քալաքաւ. սասուիկ էր քալաքականա
այս կռիւ, և յերիտաց կոչմանց ալք ակա-
նաւորք փոնտէ և Մ՝անմուրանի՝ ի գերու-
Թիւն անկան: Զամենայն վտառս յաղԹու-
Թեան կալաւ դուքան կին՝ հարեալ զծովա-
պետն Փոլինեի, և հալածական տարեալ
մինչև յԱբերեղան ընդ ծնացեալ զօրան: Այս
քալաք ամուր պատուար էր կաղմունակա-
նաց: Անդ դուքան յամառեալ էդեալ՝ ի
մուխ զամենայն ձիդն Թափել՝ ի խորտա-
կումն ապատարձաց՝ խաղաց՝ ի վերայ քա-
ղաքին, սասունացոյց զպաշարումն ըստ քա-
ջուԹեան իւրում. և իբրև մերձ էր առնուլ
զայն, յերեկոյի ժամ՝ ի դառնալն՝ ի ձմե-
րոց իւր՝ յետ հանդէս առնելոյ զօրացն և
տալոյ նոցա հրաման՝ ի միահամուռ յար-
ձակումն, հարեալ՝ ի հրաղինուց քեհա-
ուանորա: Դաւաճանն փոլԹոյ փախեաւ
հեծեալ յերիվար պատրաստական, ձեռն-
տու ունելով զնաւար գէշէրոյն. այլ սա-
ուսաճախնամ տեսչուԹիւն յայտնեաց
զասպանողն. քանզի փոլԹոյ զայն գիշեր
յածեալ չըչեալ Թափառական՝ ՝ի վաղիւն
ընդ պաշարիչս գտաւ՝ ի տեղւոյն: Կերպա-
րան նորա ահաբեկ մատնեաց զնա. վասն ո-
րոյ կալեալ ածաւ առ դուքան. որոյ ոչ չատ
համարեալ ներել նմա, խնդրեր և զԹա-
գաւորն հաշտ առնել ընդ նմա: Այսպէս
մինչև ցմահ իւր անդադար պահեաց փրան-
կիսկոս կիզ զայս դիւցազնական առաքի-
նուԹիւն, և զարմանալի եղև ամենեցուն
չարաբարոյ և անչեղւի քաղցրուԹեամբն և

ջինաղ քաջութեամբ որով մեծարոյ գտաւ և սիրելի ազնուականաց և զօրականին և ժողովրդոց: Կամեցան գարման ինչ բժշկութեան մատուցանել նմա. այլ ի պատրաստութիւն գեղոցն նանրահաւատ կրօնից խառնէին պաշտամունք, մերժեաց զայն նահատակն Քրիստոսի, լաւ համարեալ անարատ պահել զնիզակ մտաց իւրոց քան զկեանս (1563):

Յետ մահու նորա իշխանք Թագաւորին ոչ կամեցեալ ազատել զՓոլիքրոս ըստ խնդրոյ դքսին, ի հարկիսորձ քննութեան մատուցին զայրն. որ ի մահու անդ իւրում խոստովան եղև՝ հրամանաւ Քոլինիի զօրավարին եկեալ յայն գործ սպանութեան: Թէպէտ շատ ջանացաւ Քոլինիի արգարացուցանել զանձն, այլ կրկին բանք ջատագովութեան նորա անզօրք էին յոյժ և անհնարինք ի հաւանեցուցանել զիւս. վասն որոյ յանցաւոր գտաւ յաչս ամենեցուն յայս եղեռն անարդ և անգութ, որ արգարև անպիտան առնէ զգովութիւնս վիպասանից նորագանգից և ոմանց ոմանց յարդի մատենագրաց, որք ջանահնար լինին մեծացուցանել զամբծութիւն արգարութեան երևելոյ իշխանիս:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Երիցուդ և երկրդ տաղտկան պատերազմունք
ի Գաղղիա, ի պատճառս նորոյ աղանդոյն:

1563 – 1568.

Մեռ գքսին Հարուած էր ազեսալի ուղղափառ կրօնից: Կալուինականք խորամանկեալ գոգցեա ի ջախջախանս՝ վերստին գլուխ ամբարձին, մինչև հարկ եղև ի խաղաղել զնոսա շնորհել ազատութիւն պաշտելոյ հրապարակաւ զպաշտամունս կրօնից իւրեանց: Ա՛յլ այս ակամայ զիջումն չէ տալ տատուն խաղաղութիւն աշխարհին: Ուղղափառք և կալուինականք միշտ խեթ ի մեկ ունելով զիրերաց ի յանդուգն վարանս զգուշանային անձանց, որ և նորանոր գըժտութենից էր գուժկան: Սոքա ամփոփել կամէին զշնորհս յափշտակեալս զինուք, իսկ նոքա համարձակութիւն առեալ նախկին յաջողուածով ապատամբութեան՝ ոչ ըստ պայմանի գաշանցն վարէին, և ոչ շատացեալք ընդ ազատութեանն չնորհն՝ սիրապետել ցանկային, և զԳաղղիա ողջոյն յիւրեանցն փոխել ազանդ: Ուր ուրեմն ապա, թէ ճշմարտութեամբ և թէ կեղծեօք ոչ գիտեմ, համարելով թէ խլտանին ուղղափառք ընդդէմ իւրեանց, մերկացան զսատ-

բուակն, և փորձ փորձեցին միւսանգամ առնել զԹագաւորն՝ որ Նուպ էր ի Մոյ ընդ աւազորէրոյն: Եհաս բանն առ Թագաւորն, և ամաչապարեալ եմոյզ զքաղաքն, որ Թէպէտ և հզօր էր՝ այլ անպաշար. և յառաջ քան զծագել աւուրն անկաւ ի ջուր հասանել ի փարիզ գունդ մի ահեմ հեծելոց հեռակազօր առնելով ընդ իւր: Այնպէս քաջ կարգեաց սպարապետն զզօրան, զի ոչ համարձակեցաւ իշխանն Քոռնաէ հեծելովք իւրովք բախել ընդ նոսա, սակայն նեղեալ սաղնապետաց յոյժ զչուն: Թագաւորն Կարոլոս, գեռևս պատանի եօթնևտասնամեայ անառաջ կայր ի վերոյ երիվարին ժամն վեշտասան, և ոչինչ միտ եդեալ քաղցոյն և աշխատութեանն՝ քաջալերէր ինքնին զհեծելազինսն՝ ասելով. "Խրախոյս առէք, բարեկամք, առաւել ընդարեմ մեռանել ընդ ձեզ ազատօրէն իբրև Թագաւոր, քան կեալ ի գերութեան": Ոչինչ այնպէս դառնացոյց զնա ընդդէմ կալբինականաց քան զդժնդակ զայս գաւաճանութիւն, մինչև ոչ երբէք մոռանալ նմա զայն:

Իբրև ի գերև եղ ապատամբացն յոյս, բանակ եդեալ ի դաշտի սրբոյն Դիոնեսիոսի՝ խրոխտացին ընդդէմ Թագաւորին և խիզախէին մինչև մօտ առ դուրս Թագաւորեալ քաղաքին: Յարձակեցաւ սպարապետն ի վերոյ նոցա և տարաւ յաղթութիւն մեծ. սակայն ի մեծի յաղթանակի անդ փառաց Թաղեցաւ և ինքն, ընկալեալ հասոյր վերս

'ի Թշնամեաց: Սա այր քաջ և հմուտ 'ի պատերազմունս, յաճախ վաստակաւղդ գտաւ 'ի գործս իւր. Հաւատարիմ 'ի սպառ առ Աստուած և առ Թագաւորն իւր, մեռաւ իբրև զվեհապն քրիստոնէից, զէն 'ի ձեռին 'ի պատճառս կրօնից, զպաշտպան նախնեաց հաւատոյ հայրենեաց 'ի խռովութեան անդ ժամանակի և շփոթից (1567):

Ի հնչել համբաւոյ պատերազմին՝ վառեցաւ հրդեհ մարտի ընդ ամենայն գաւառս տէրութեանն և ամենեքին 'ի զէն ընթացան զայրագին. և անդ էր տեսանել զքանդմունս, զյափշտակութիւն և զաւեր աշխարհին: Դուքան Անժուի՝ որ սպա էին բիկոս Գ, եղբայր Թագաւորին, խաղաց ընդդէմ սպատամբաց և եհար խորտակեաց զնոսա 'ի Յառնոյք (1569): Անդ սպանաւ Հնաոսպարտ և Թշուառ իշխանն Գոնաէ որ զբնութեանն ձիրս, զդէղեցիկ առաքինութիւնս անօրինութեամբք իւրովք ընդդէմ Աստուծոյն իւրոյ և Թագաւորի վարեալ՝ անփառունակ վախճանաւ եղ 'ի կենաց:

Ընդ մահ Գոնաէայ ոչինչ երկուցեալ տարակուսեցան կալուինականք. յաջորդեաց զնա ծովապետն Գոլինի՝ ոչինչ սակաւ քան զնա 'ի հանճար և 'ի փառասիրութեան: Եւ պատերազմ, հարաւ ընդ զօրս Թագաւորին. այլ ոչ աւելի ինչ յաջողեաց նմա քան յառաջին ձակատամարտս. քանզի գուքան Անժուի խորտակեաց զնա 'ի սպառսպուռ առ Մոնքոնթուր քաղաքաւ: Անկանգնեցին արդեօք կործանումն կալուի-

նահանաց, եթէ չէր մեռեալ յիշեանս ուղղափառաց դժուարեի, որով հարկ եղև հաշտութիւն խոսել ընդ նոսա, և շնորհել նոցն ընդ այլ օգուտս պայմանս և քաղաքս ջրոս ազատութեան, և իրաւունս առ ամենայն բարձ աւագութեան (1570)։ Ի իսկ կարծել զի Կարոլոս ուսեալ ի մօրէն զարուեստս կեղծելոյ, շնորհեաց բազում ինչ կալուածս կանոց՝ յուսով արկանելոյ յաւուր միում ի ծուղակ զառաջնորդս հերձուածոյն, առ ի պահել զնոսա ի կապանս և կամ առ ի բառնալ իսկ զկեանս նոցա զի մի ի տարապայման իշխանութենէ նոցա վտանգ լինչ հասցէ Թագաւորութեանն։ Իսկ նոցա ի բազում լեալ խորհրդոց Թագաւորին, զերժուարս փարատէր ի մտաց նոցն երկմտութիւն։ Որ ուրեմն ապա յաջողեաց Թագաւորին ածել զնոսա յարքունիս պատճառանօք պատերազմի ընդդէմ Սպանիացւոց, և զօրավար կացոյց զծովակալն որպէս զայր հզօր ի աերութեան։ Յայս հրապոյրս յաւելոյր զնոսատումն՝ տալ զքոյր իւր ի կնութիւն Պուրպոնեանն Հենրիկոսի, որդւոյ Թագաւորին Նաւարրայ, այն որ Թագաւորեաց ապա և կոչեցաւ Հենրիկոս Դ։ Քանզի յապագայ կալուածականաց էր նա ծնեալ և ի նոյն կրթեալ ի մօրէն իւրմէ ի Յովհաննայ ի գլխոյէն Նաւարրայ, որ էր նահանձայոյզ կալուածական ապանդոյ, վասն որոյ և Հենրիկոս արքայ զնոցայն ունէր զկողմն։ Կատարեցան հանդէպ հարսանեաց, մեծ էր և ցնծութիւն հանդիսին՝ եթէ ոչ արիւնահեղ լինէր զբաւն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Կոչումն Կալուինականաց ի Ֆիլիպէ արքայ Բարբոնացւոյ և մահ աքսային Կարոլոսի:

1570 – 1574

ՅԱՒՈՒՐԱՆ յայնոսիկ վիրաւորեցաւ գառաւ ծովապետն Քոլինի, և միաստապարտ գաւոյն գառեցաւ Հենրիկոս դուքս Կիզայքանզի ի բազմաց հեաէ համբաւ ընթանայր զնմանէ՝ թէ երգուեալ էր նորա խնդրել զվրէժ մահու հօրն ի Քոլինեայ: Յայնժամ ժողովեալ կալուինականաց ի Փարիզ արանց իբրև ութ հազարաց, սպառնալեօք խրոխտային, ոչ միայն գառաստանի Թագաւորին ի վերայ գաւաճանին: Յանդգնագոյնք յայնգաւառաց անտի խնդասիրեին երթալ փողոսել զդուքսն Կիզ առ ոտս արքայի, խողխողել և զմայրն դշխոյն, և մանաւանդ զդուքսն Անժուի՝ զոր յետ յաղթութեանցն համարէին ոմանք Թշնամի ազանգոյն իբրեանց: Սառանեցաւ կառաբինէ Մեռիչեանց ի սպառնալեաց առաւ, և յահէ անտի սուրեցաւ ձերն արկանել յանգութ և յանհնարին խորհուրդս: Զոգաւառ Թագաւորն, ազգ արար նմա զպատրաստութիւն մօտալուտ սպառամբութեանն, և զի ի զօրանալ նոցա վտանգ մեծ է և Թագա-

ւորութեան և կենաց արքայի, և բնաւ իսկ ատելի արքունի. հնարս առ ի զերծանել ի չեռաց նոցա պարտ է կանխել, և ի մահ առ զնոսա, ոչ դանդաղելով օրինաւոր վճռոյ արդարութեան ընդդէմ այսպիսի ահաւոր եղեռնագործաց: Զարհուրեալ արքայի մանկանն՝ անդէն ի խորհուրդ ժողովեաց զաւագորեսն, և հաստատեցաւ այս բան ի խորհրդին, բնաջինջ կոտորել զԿալուխնականս ի վաղիւ անդր ի գիշերի տանախմբութեան արքոյն Բարթողիմէոս. և յանձն եղև կատարումն գործոյն ի դուքսն Կիլ: Մեծ էր ուրախութիւն նորա, զի ընդ գտատապարտեալսն կորնչէր և սպանող հօրն իւրոյ: Ւան որոյ անդէն ի սկզբանն սրախողխող եղև Քոլինի ի սենեկին, և արկաւ ի գաւխէն ուր հատեալ դուքսն Կիլ՝ սրբէր զարիւն երեսաց նորա առ ի տեսանել հատատեաւ զի մի գուցէ զերծցի ոխերիմն իւր, և կոխատեալ զգիակն նորա անցանէր: Ի հնչիւն զանգակի առաւս նշան ահաւոր կոտորածին. և զօրականք և ժողովուրդն՝ որք ակնկալեալ մնային նշանին, սփռեցան ընդ Թագս քաղաքին, մահն բերեալ ամենեցամբ ի տունս տունս կալուխնակացն, էր զոր գանիւք, էր զոր սուսերօք, էր զոր հրազինուք, և էր զոր խեղդիւ առ եւս ևս սատակէին անխտիր զառամին և զոսկանիկ և զղինուոր. ոչ ի հատակ նայէին, ոչ կանանց ողորմէին, և ոչ ազնուականութեան ակն ածէին: Արքունիք իսկ Թագաւորին ոչ օգնեցին ապստամբելոցն ի նմա,

ամենայն իշխանք ազանդոյն գահակալք անդ
խողխողեցան անդէն ի Թանդարանս և ի
մերձաւոր սենեակս իսկ բնակութեան ար-
քային : Ջերծաւ անդ միայն Թագաւորն
Նաւարրայ՝ Թողեալ զազանդ իւր : Ջայս ա-
զետաւոր գիշեր պատէհ առին անօրէնք
վրէժխնդիր առելութեան իւրեանց, որով
և բազումք յուղղափառաց անկանէին ի
սուր ոխերմոց իւրեանց : Ի Թագաւորեալ
քաղաքին միայն սպանան արք հինգ հազար
ի կալուխնականաց, յորս էին հինգ կամ
վեց հարիւր ազատ մարդիկ. Թէպէտ և հե-
ռացեալ որոնէին զառ ի մահ գառա-
պարտեալն, սակայն բազումք Ճարտարու-
թեամբ, բաղդիւ, կաշառաւ և կամ ի ձեռն
բարեկամաց Ճողոպրեցան ի սրոյ : Եւ գու-
զն կիզ զերծոյց արս իբրև հարիւր ի տուն
իւր՝ անշուշտ յուսով ձգելոյ զնոսա ի ծա-
ռայութիւն իւր կամ գարձուցանելոյ վերըս-
ոին ի կրօնս հարց իւրեանց : Ընդունէր էր
կոտորածն և բազում գարովանաց արժանի.
քանզի ընդդէմ էր ոչ ոք հեղութեան քրիս-
տոսական կրօնից, Թէպէտ ընդդէմ Թշնա-
մեաց հաւատոյ՝ իշխանութեան և հայրե-
նեաց : Դառապարտ զայսպիսի վրէժխըն-
դրութիւն եկեղեցի Քրիստոսի, քանզի ան-
պատեհ է ի սրբազան Ճշմարտութիւնս կրօ-
նից վարել զնենդ և զչէնս : Այլ որ ուղղա-
գատ աչօք հայեցի ի գործն, առաւել
զնորամանկութիւն կինոջ և զապականու-
թիւն արքունեաց լեալ այնմ պատճառս, որք և
առ ի պատրուակել զոճիրն՝ զպատճառս
կրօնից առին իւրեանց ի Թիկունս :

Ընդ սմանաւոր կոտորած ոչ՝ի թագաւո-
րեալ քաղաքին միայն գործեցաւ, այլ և՝ի
բազում այլ քաղաքս թագաւորութեան:
Ժողովուրդն խառնիճաղանձ՝ իշխանու-
թիւն առեալ հրամանաւ արքունի զայրացեալ
մասք վասն եկեղեցեաց Լուրեանց աւերե-
լոց, և քահանայից խողխողելոց, իբրև ար-
դարութեան Աստուծոյ գործօնեայք՝ի
վրէժ այնքանեաց մահուց և պղծութեանց,
յարձակեալ՝ի վերայ՝ արարին կոտորած
անողորմ գրեթէ յամենայն գաւառս: Բայց
՝ի տեղիս տեղիս մարդասիրագոյն գտան իշ-
խանք. որպէս և կուսակալն Պայոնի գե-
րակոմն Օրթէզայ, որ այսպէս պատասխա-
նի արար հրովարտակի թագաւորին. «Տէր
արքայ, ծանուցի զհրաման տէրութեանդ
Հաւատոլիմ ծառայից քոց, ժողովրդեան
երկրիս և զինուորաց. և տեսի զսուսա առա-
քինի քաղաքացիս և քաջ զօրականս, և ոչ մի
գտի՝ոչ գոյր՝ի նոսա: Ի Լիլիէօ ազան-
գաւորք ապաւինեցան յեպիսկոպոսարանն,
և եպիսկոպոսն Յովհաննէս Հէնրիւէր զար-
մանալի քաջութեամբ պաշտպանեաց նոցին
ընդդէմ ապստամբացն, մինչև շարժեալ ընդ
այն կալուածականաց՝ գործան ամենեքին
յօդղափառութիւն: Ոչ այսպէս յաջո-
ղեաց նոցա և՝ի Լուգդոն. քանզի իբրև դի-
մեցին եպիսկոպոսարանն, ժողովուրդք
աւազոյն բռնութեամբ մտեալ՝ի նեղս ընդ-
դէմ ամենայն Ջանից եկեղեցականաց ժո-
ղովելոց՝ի մի վայր՝ի թափել զնոսա՝ի
մահուանէ՝ կոտորեցին զամենեսեան (1572):

Ազանգաւորք զերծեալք ի կոտորածէն՝ առաւել ևս կատաղիք և ահագինք եղեն։ Վայրապար Ջանացաւ գուբան Ընժուխ առնուլ ի նոցանէ զՈւշէլ. և ի չերկարել պաշարմանն՝ հրաւիրեալ ի գահ Պազմնիացւոց Հարկեցաւ փառաք խօսել ի հաշտութիւն ընդ քաղաքացիս, Թողեալ ի նոսա զքաղաքն, խոստմամբ ևեթ հպատակութեան նոցա չառացեալ։ Այս առանձնակի հաշտութիւն ոչ զրաւ առնէր Թշնամութեան յայլ սահմանս աշխարհին. և իբրև անյոյս Թուէր վախճան ազէտիցն, նորօրինակ խոթումեամբ հիւանդացաւ Կարոլոս, համբերեալ ի բազմաց պատուհաս արդարութեն Աստուծոյ։ Հոսէր արիւն ընդ վտառս մարմնոյն, և միշտ առաջի մտաց ունելով զկոտորած գիշերոյ սրբոյն Բարթողիմէոսի ի սաստիկ խայթուած խղճէն և յահաւոր յուզմունս մեռաւ ի հասակի քսան և չորից ամաց (1574)։

Գեղեցիկ բարեմասնութեամբք զարդարեալ էր Թագաւորս այս, այլ ազեաւալի հանգամանաք ժամանակին ոչ Թոյլն ի վեր երևել նոցին։ Սիրող էր գիտութեանց, և ընդ անուանի քերթողս և Ճարտարախօսս ժամանակին կարգեցաւ. սակաւասէր էր, վաստակասէր, առատաձեռն, քաջասիրտ և եռանդնոտ. բոլոր ունէր յաձախ զմօրէն, զի արգելոյր նմա անձամբ զօրավար կալ բանակին։ Փոխանակ պատերազմական մարզից գնէտ եղև մեծաջան փութով հրահանգաց որսորդութեան, և ամենայն աշխա-

առաքեանց յորս կարևորք են ձարտարու-
թիւն և զօրութիւն : Մեծապէս զուարճա-
նայր արկանել՝ ի մի հարուած զկառափունս
իշոց և խոզից հանդիպելոց՝ ի ճանապար-
հի : Ի մտերմաց նորա ոք յաւուր միում
առեալ զնա սուր՝ ի ձեռին առաջի զօրուցն
իւրոց, և հարց անժպիտ. « Զի՞նչ պատճառք
իցեն թշնամութեան, սէր արքայ, ընդ ա-
մենաքրիստոնեայ վեհափառ տէրդ և
ընդ զօրիս » : Ծիծաղեցաւ ընդ այս հնար-
խանաց գիւտ նորա թագաւորն, և արկ ըզ-
սուսերն՝ ի բաց :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Մեղաւոքն Լեան Հենրիկոսի Գ, և դաշնա-
կիցքն Կիպրեանց՝ ի հաստատութիւն ուղղա-
հաւատ հրո-
նէց՝ ի Գաղղիա :

1574 – 1584 :

ԿԱՐՈԼՈՍ Թ վաղամեռիկ լեալ, չեմոլ
իւր ժառանգ. և անկանէր թագաւորու-
թիւնն եղբօր իւրում Հենրիկոսի, որ յամէ
հեաէ թագաւոր էր՝ ի Լեհս : Փախստեամբ
Ճողոպրեաց սա զանձն՝ ի Լեհաց, գալ թա-
գաւորել յիւրում աշխարհին. քանզի հա-
ճեալ յոյժ Լեհաց ընդ գեղեցիկ ձիրս բըն-
նութեան նորա, չմոռանին զնա : Ան-
ւր Հենրիկոս գարձ արարեալ՝ ի Գաղղիա՝ ի

դերև էհան զմեծայոյս ակնկալութիւն իւրոցն զբարւոք վարչութենէ նորա: Եթող զանձ պետութեան ի ձեռս մահկանացու իւրոց. շուրջ պատեալ ի ծաղրածու ի ցոփ և ի շռայլ պատանեաց՝ կորոյս ըստհամբաւ իւր հռչակեալն գիւցազն առաքինի ի սիս անդ մանկութեան, յորում այլք ի թագաւորաց ամօռով և ծննդեամբ միայն սերձանան: Տարփածուք նորա մեղկեցին զնա ի վատթար յանփոյթ և ի հեշտասէր կեանս, և ոչ ևս սեռան ի նմա և հեռաք անդամ քաջի գործն Ընժուի, որ քաջաժիր գործունէութեամբն ահաւոր էր թշնամեաց:

Հենրիկոս նախանձաւոր ի պահպանութիւն ուղղափառ կրօնիւ՝ կամէր ի սկզբան ընդ բնաջինջ բարձումն ազանդոյ կալուինականաց, այլ փոխեաց ապա զնորհուրդ իւր. և յետ մեծամեծ յաղթութեանց զօրավարաց իւրոց ի վերայ նոցա, մինչ ինքն ի շամբուշ կեանս շռայլէր՝ յանկարծ շնորհեաց կալուինականաց ազատութիւն կրօնից և քաղաքս ի պատսպարութիւն, զորս նոքա և ի յաղթական իակ լինել ոչ համարձակեին խնդրել: Առ ի հաստատել անշարժ վնտաղութիւն՝ հաւատարմութեան պէտք էին ի գաշինս, որով միայն մարթի էր հաստատել ի նոսա զվստահութիւն. այլ ըստ հանգամանաց ժամանակին և կրօնից՝ չէր ամենևին այս յուսալի (1580): Հենրիկոսի չէր որդի ի յաջորդ, և ժառանգ ամօռոյն թագաւորն Նաւարրայ վերստին դարձեալ

էր յաղանդ իւր, և առանց նախահօդ զգուշութեան ամրեր ընդ հուսկ աղանդն այն ի Գաղղիա : Վասն որոյ գումքան կիզ արար դաշնակցութիւն ընդ ուղղափառ իշխանս և ընդ գլխաւոր քաղաքս տէրութեան՝ առ անժառանգ կացուցանելոյ զյաջորդս սրբոյն Աղոթոլիկոսի : Խորհուրդ մտայ դաշնակցելոցն էր պինդ ունել հաստատութեամբ զկրօնս հարց իւրեանց ի Գաղղիա ընդդէմ բռնութեան աղանդոյն , որով և մերժել ի գահէն զՀենրիկոս զմատուռն Նաւարրայ զառաջնորդ և զպաշտպան կալուինականաց : Ա՛յսու ահա ժողովեցան բազումք ի մի միաբանութիւն . այլ ընդունայն էր գաշնակցութիւնն այն . քանզի օրինաւք որք կոչէին զՀենրիկոս ի գահ՝ նոյնք և հրամայէին ուղղադաւան ունել Թագաւոր : Ոչ այս որպէս և է . սակայն գիտեմք զի այլ գաղտնի խորհուրդք էին կիզայ գլխոյն քան զոր արտաքոյ ցուցանէր : Թէպէտ սա ոչ օտարատոհմի ոք գտաւ ի մեծամեծ առաքինութենէ հօրն , այլ վառեալ ի սաստիկ սէնջ փառաց՝ սարսաւ զխորհուրդս իւր յուսով մինչև ցգահ Թագաւորութենէ , և ոչ պատկառեաց առագաստել պատրուակաւ կրօնից զգաղտնի սիրանէնդ կիզոս ընդդէմ իշխանութեան բնիկ Թագաւորին : Սակայն նախահնամ տեսչութեանն խորհուրդք զարմանալի են միշտ ի հանել ի չարեաց զբարին , և զկիզոս խակ մարդկան ի կատարումն կամաց իւրոց ի կիզ արկանել : Ըստ արտաքին տեսութենէ անշուշտ Թուէր

Թագաւորել Պուրպոնեանն Հենրիկոսի, և ազանդոյն կալուինականաց հաստատուելիւն առնուլ ի Գաղղիա՝ իբրու առաջին կիսն աերուելեան, զոր օրինակ աեսաք ԱՆԴղիա և յայլ Թագաւորութիւնս հալածեալ զՀամարտութիւն և կայկայեալ զմերորութիւն: Բազմակնճիռն գէպք կուս զմիմեանց զինի յաջորդեալ՝ յայն պայման հաստուցին զերան, յոր ոչ ևս զօրէր մարգկային խոհականութիւն: Զօրացաւ ի վերայ Թշնամեաց իւրոց Հենրիկոս Պուրպոնեան, այլ անգէն ի վերայ յաղթողին յաղԹանակեցին և հաւասաք. և այս կրկին յեղափոխութիւն գիպաց ի դերև հանեալ միանգամայն զակնկալութիւն ազանդաւորաց, և զկարծեցեալ իրաւունս գաշնակցաց, շնորհեաց Գաղղիոյ որ ահաբեկն մնայր՝ զերբ բնիկ աեր և ՀՀամարիա կրօնս:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վ՚ան զօրանալոյ գէսին Կիպրոյ գաշնակցութիւնքն, և վան վնասերէ գաղաւական պատերազմի:

1584 – 1588:

ԴԱՀՆԱԿՑՈՒԹԻՒՆ կիպրեանց զինի ընդ երկար սողալոյ յարամբն ընդ խաւար, ի 1584 ամին մերկասպարանոց ամբառնայր զգլուխ իւր ահաւոր. յամենայն գաւառս սփռեալ

նուիրակք նորա՝ զվանգաց կրօնի յեղյեղէին ցանգ բանս, և զանկարգ առնչութիւնէ, և զնարատահարութիւնէ ժողովոգեան: Քաջ ոզիք ի վարդապետութիւնս լուսանց, առաքելիցունք ի խրատս, և ուսուցիչք ի գարոցս ընդգէմ արքունեաց և անձին Թագաւորի գառնէրպինեանս յամախէին: Պարկեշտագոյնքն ի նոցանէ երկիւղ արկանէին ուղղափառաց՝ Թէ ի վանգի են հաւատք՝ եթէ զինի մահու Թագաւորին ամբարձցի ի գահ իշխանն կալուինական. և այնչափ առաւել շարժեալ յուզէին զսուտ որչափ անխորշելի Թուէին նոցա չարեացն ազէտք. վառեցան անգէն ամենեցունն միաբ, և լսելի լինէր յամենուստ շնինգն այնաւոր կարապետ մծտալուստ մրրկի, և գուժկան քաղաքական խռովութեանց, որ ի սաստիկ հարուածս կատորածից ունելոյ զքաւել: Երթայր և զօրանայր օր ըստ օրէ միաբանութիւնն գաշնակցացն: Թագաւորն Հենրիկոս փոխանակ Ջանալոյ կործանել զվիճակարին զայն արձան, որ աձելով աձէր ընկճել զնա ընդ ծանրութեամբ իւրով, զգաւ եմուստ ընդ հովանեաւ նորա հակառակ ամենայն խոհական խորհրդոց. գնաց միացաւ ընդ Կիզայ առն ապստամբի, որ ի խայծ վառաց աճեալ գլդռեր զնա ընդդէմ Հենրիկոսի Պուրգոնի ազգակցի իւրոյ ժառանգի գահուն: Արդարեք վառութիւն անգէն ի վէր երևեցան, և պատերազմ քաղաքական յուզեցաւ այս վերջորդ անգամ ի հնգետասան ամս ժամանակի:

Քանզի սեաեալ կալուինականաց ՚ի լեառ կոչեցան ամենայն ազատութիւնք իւրեանց, զէն առին զօրաւոր կացուցեալ ինքեանց զարքայն Նաւարրայ և գումարեցան ՚ի մարտ պատերազմի:

Սէքսաոս Ե անբարձեալ յայնժամ ՚ի գահն առաքելական, էհան կոնգակ ահագին նզովից ընդդէմ զօրավարին ազանգաւորացն. այլ միանգամայն քաջ խելամուտ լեալ քահանայապետն խորհրդոց գաղիոնիկոս Գ անկրաւ խորհրդոց առաջնորդաց գաշնակցութեանն, արհամարհեալ մերժեաց և զնոսա: Եւ եթէ լեառ Թուէր ձեռնաու գոլ նոցա, ոչ առ այլ ինչ ուշ ունէր՝ բայց առ ՚ի խափան արկանել այնու կալուինականաց, զի մի հաստատութիւն առցեն ՚ի Գաղղիա:

Թագաւորն Նաւարրայ ոչինչ սրտաբեկեալ լքաւ ընդ մերկին առաւիկ փոթորկեալ զնարև. խրախուսեաց ընուչ արութիւն իւրով զաղքատութիւն հնարիցն, խաղաց համարձակ փոքու գնդաւն ընդդէմ ժուայէօզ գքսին մաեռիմ սիրելւոյ արքային, որ խաղայր պատերազմաւ ՚ի վերայ նորա, հար խոյտակեաց զնա ՚ի սպառ ՚ի Ռուէթրա: Սակայն ընդ քաջութեանն և վեհմախոհ գաեալ, զինի յաղթութեան առաջի արար Թագաւորին զհաշտութիւն և զձեռն օգնականութեան ընդդէմ գաշնակցաց: Հէնրիկոս Գ երկուցեալ զի մի կասկածաւոր լիցի, մերժեաց զհաշտութիւն և զնիզակակցութիւն նորա, և անգութ զինեալ կալուինա-

կանաց պատերազմաւ վարատեալ ցրուեաց զգուեղ մի Գերմանացւոց եկեղց յօգնակա-
նութիւն նոցա (1587)։ Թէպէտ այսպէս զօրացաւ Հենրիկոս, սակայն առ ոչինչ նա-
մարեցան զնա գաշնակիցք. և հատուատեալ 'ի միտս կորուսանել և զնա, 'ի Թոյնս գա-
նութեան իւրեանց ապականէին զգործս նորա, զբանս և զխորհուրդս, և գոքան Կիզ երևեալ նախ յաչս Ժողովրդեան՝ ընկալաւ զամենայն փառս յաղթութեան իբրև ազատարար աերութեան, մինչ յանդգնել նոցա երգել առաջի ալքայի. Սաւուղ եհար զհազարս և Դաւիթ զբիւրս։ Բնաւ կիջք մայրաքաղաքին առաւել քան զամենայն պատահեաւ՝ յայլոց իսկ գաշնակցաց 'ի բաց որոշէին՝ Սէղեանս կամ վէշտասանս զանձինս կոչելով զսա Թուոյ Թագից քաղաքին, և առաջնորդ կացուցեալ իւրեանց զարս վէշտասան 'ի քաջաց անտի գաշնակցաց՝ որոց զոգիս 'ի բուին էր եդեալ։ Դոքա-
սըն Կիզ օգնականս իւր զսոսա զամենեսեան ունելով՝ ձգեաց սարսածեաց զղջութիւն իւր, և միահեծան կալաւ զաէրութիւնն։ Յայնժամ Թագաւորն զգաստացեալ անագան 'ի Թմբրութենէն, վայրապար բուռն առնէր անձին կանգնել 'ի կորանացն, վայրապար արգելոյր զմուտս Կիզայ 'ի մայրաքաղաքն, խրատեալ առաքիւք անձին Թէ քանի վտանգաւոր է առանց իշխանական զօրութեան հրամանս տալ։ Քանզի անգոնեալ Կիզայ ընդհրամանն արքայի էմուտս 'ի փարիզ ծափահար ցնծութեամբ ժողովրդեան իբրև յազ-

Թոզ Ալամանաց, Քաղիչ ազանգոց, Նոր ումն Գեգէան և Մահաբէ Գաղղիոյ: Զի նեաց նա զքաղաքացիան 'ի Թիկուռնս իւր, և անգէն պատանէշ կազմեալ յամենայն փողոց, և զինամեաւ արարեալ զգօյան ազբուն, պաշարեցին զԹագաւորն յապարանն: Եթէ ըստ փառասիրութեան համարձակէր դուքն՝ վճարեալ էր այնու հեաւ վասն Հենրիկոսի. այլ 'ի բանագնաց լինել մօր Թագաւորին ընդ ապստամբս պայմանաւ գալ 'ի հաշտութիւն, ձողոպրեալ ազբայի զանձն իւր խոյս ետ 'ի Շարթր: Իբրև ազբայական պերճութեամբ հրամայէր դուքն Կիզ և ըստ կամի փոփոխութիւնս առնէր 'ի պաշտամանս պետութեան, խնդրեաց և զնախագահ խորհրդարանին զԱքիլլես Հալլէյ 'ի խորհուրդ ժողովել զնորան խորհել զպատշաճէից: Որում համարձակութեամբ ասացեալ նա պատասխանի. «Ողորմ ազէաք, եթէ ծառայ զտէր իւր հալածեացէ. սակայն Հոգիս Աստուծոյ է, սիրտ իմ ընդ Թագաւորիս, և մարմին իմ 'ի ձեռս ջոցաց. արասցեն զոր կամին»: Եւ յամօթ լեալ ատենեցաւ պնդութիւն Կիզայ ընդ անվեհեր իմաստութիւն բանիցն. և առ 'ի ծածկել զկէտ անուն ապստամբութեան իւրոյ՝ ջանահնար եղև դարձուցանել զազբայ 'ի մայրաքաղաքն. որ ծաղրական Թափօրիս խառնիճամանճ ամբոխին դարձ արարեալ 'ի փարիզ, և արար հաշտութիւն ընդ դբանին՝ նախիշեան վարիչ Թագաւորութեանն կարգեալ զնա (1588):

ԳԼՈՒԽ Ի·

Մահ Թոխին Կիլայ. ապստամբութիւն հայրապետին և պաշարումն նորա յԵրուսաղէմ և գառնութիւն, և սպանութիւն արքային Հենրիկոսի Գ:

1588 – 1598

Աստուած վաղվաղակի անկեալ Թագաւորն գումարեաց ի նմին ամի ժողով աղգախառնք ի Պլուա, և հաստատեր անգէն ի պատեհ ժամու Թօղամփել անյապաղ զամենայն զայն լուծ եգեալ ի վերայ նոր: Ջօր ամենայն իրաւացի պատճառս գժտութեան նմա դուքն, մերթ նենգանօք առ ի Թօղամփել ի նմանել զինացեալ հաւատարիմ ծառայն, մերթ գաղանի դաշնակցութեամբ ընդ արքային Սպանիոյ, և մերթ առաջի առնելով զի լինիցին կամք ազգին այնուհետեւ փոխանակ օրինաց առանց իսկ հաւանութեան Թագաւորի. գաւ անլուր ցայնժամ և ի ժամանակս ապիկայոյզ շփոթից խռովութեանց: Լուաւ գարձեալ արքայն Հենրիկոս Թէ պատրաստեալ են գաշնակիցք փակել զինքն ի մենաստան ուրեք, և լուր յականջս հաստանէր Թէ քոյր դքսին Պրաս ի ձեռին իւրոխասյր՝ Թէ ոսկւոյ հատից զՀեբա արքայի նորոյս Փիլբերիկեայ: Տեսեալ Հենրիկոսի զվերահաս վտանգն,

խորհեցաւ կորսանեամբ գահաւէրդքսին ապրեցուցանել զանձն, այլ ոչ ևս էր ժամանակ՝ արդարութեան գոտեսանաւ պարտաւորելոյ զինս, զի չզօր էր նա քան զաէր իւր. և եթէ ձերբակալեալ Թափէր միանգամ զանձն, անշուշտ կորուսաս ՚ի վերայ կայր Թագաւորին: Վասն որոյ ամենայն ազգանին խորհրդով հաստատեցին արտաքոյ քան զբէնս գտանել զայսանի ապստամբըն, որոյ համբաւ և զօրութիւն ոչ Թողոյր տեղի հարցափորձի: Ի վերայ եհաս գտանկնքոյն գուքսն ՚ի բազմաց, այլ յանգուգն արհամարհանօք ասէր. Եւ ո՞ր այն որ իշխիցէ յայդ: Եւ ըստ սովորութեան երթեալ մտանէր ՚ի խորհուրդ: Դահիճքն որ սպասէին նմա ՚ի ներքին սենեակ Թագաւորին, յարուցեալ ՚ի վերայ սպանին զնա և զերբայր նորա և զկարդինալն ընդ նմա զՏեառնաւ բարձրամիտ խորհրդոյ նորա: Յետ այնորիկ զբռամբ ածին և զդնեռորս ՚ի կողմնակցաց նորա ՚ի Պլուա. և Թէպեւս այս հասարոյր հարուած կործանէր անկանգնելի զդաշնակիցսն՝ եթէ ոչ Ձողոպրէր ՚ի ձեռաց գուքսն Մայէննի: Ապրս այս ՚ի Լուգդոն էր յայնժամ, և ընդ գոյժ սպեսից էղբարց իւրոց խոյս առեալ փախեաւ ՚ի Փարիզ, և խրախուսեալ անդէն զդաշնակիցս՝ վառեաց ՚ի միտս ամենեցուն զնոր վրէժխնդրութեան: Նոքա քաջալերեալ խիզախեցին յանդգնագոյնք քան զառաջինն, և յարձակեցան մնչեգնաբար յարքունիս. խորտակեցին զանգրեա նորա,

էզծեալ բարձին զկնիք նորա, և հուշակ հա-
րին Թէ անկաւ Թագաւորն ՚ի գահոյից
(1588)։

Ի նմին ժամանակի մեռաւ Կաթարինէ
մայր Հենրիկոսի, խորհրդականն մեծ և կա-
րեւոր ՚ի բազմակնճիռն դէպս արկածից։
Ամենայն մատենագիրք միաբան դովեն
զձարտարութիւն նորա, զհանճար նորա
մեծ ՚ի յանձանձանս աշխարհին, ՚ի հմուտ
քաղաքավարութիւն, և ՚ի հոյակապ մե-
ծադործութիւնս. այլ սակայն յարդի մա-
տենագրաց բազումք սոգոտանեն զնա իբրև
անխախիտ ՚ի կրօնս և փառամոլ, փոխանակե-
լով ընդ փառասիրութեան իւրում զամե-
նայն օգուտ հասարակաց։ Սակայն այլք ընդ
հակառակն պնդեն՝ Թէ հասատատուն եկաց
նա յուղղափառութեան, և Թէ միաբանու-
թիւն նորա ընդ գլխաւորս կալուինականաց
գործ էր ձարտար քաղաքավարութեան,
զի տեսեալ զանձողոպրելի վտանգս՝ չնո-
հէր կամաւ բռնութեան մրրկին, և գա-
շամբ խաղաղութեան փարատէր ՚ի գաղ-
ղիոյ զսպառնալիս չարեաց քաղաքական
պատերազմի։ Իսկ վասն սպանութեանց,
դեղատուութեան և այլոց դժնդակ չարեաց,
վասն որոց ամբաստանն եղեն զնմանէ, յա-
ւելուն ասել վնասագիրք՝ Թէ և ոչ մին
յայսցանէ ունի ցոյցս հաւաստիս, այլ
գիւտք են զրպարտութեան կալուինակա-
նաց, որոց չան մեծ էր յայնժամ գառն
ատութեամբք երգիծանել զԹագաւորս,
զնշխանս և զառաջնակարս, զհակառակորդս
աղանդոյն իւրեանց (1589)։

Ապաքէն կատարինէ Մեսիչեանց ՚ի մեռանիլն Խրատ եւս որդւոյ իւրում՝ ազատութիւն կրօնից չնորհել ամենայն հպատակաց, և միաբանել ընդ Թագաւորին Նաւարրայ: Զհետ գնաց Հենրիկոս իրատուց նորա, և հաշտութեամբ երկուց Թագաւորացս ամբարձաւ տունն Պուրպոնեան ՚ի գահ Թագաւորական: Միացան ՚ի Տուրոնէ և խաղացին ամենայն զօրութեամբ իւրեանց դէպուղիղ ՚ի Փարիզ. և իբրև անյոյս էր քաղաքն յերեսաց երկուց Թագաւորաց, և գաշնակիցք երթային և վառէին հանդերձ ամենայն ձարտարութեամբ հնարից դքսին Մայէննի, ահա յանկարծ կրօնաւորումն Դոմինիկեան՝ Յակոբ Կղեմէս անուն՝ հաճ յեղափոխութիւն մեծ իրացն: Այրս այս հեգ խրախուսեալ յոմանց ՚ի գլխաւորաց գաշնակցաց, և մոլորեալ ՚ի վարդապետութենէ քարոզչաց ոմանց մայրաքաղաքին յօրէնս անօրէնս՝ բառնալ անխիղճ զկեանս բռնաւորաց, համարեցաւ գործ քաջութեան գործել՝ սպանանելով զՀենրիկոս Գ, իբր զընտանեակար ուղղափառ կրօնից: Ձոքաւ ՚ի Սէն-Քլու՝ ուր էր ձմերոյն արքունի, և մուտ գտեալ առ նա իբր առ ՚ի յայտնել կարևոր ինչ խորհուրդ, եհար զնա անօրէնն և եթող զսուսերն ՚ի վէրին: Իսկ Թագաւորն ձգեալ զայն արտաքս և հարեալ ՚ի ձեռս սպանողին՝ գոչեաց. «Ա՛յ չուտ, և զինչ արարի քեզ, զի սպանանես զիս»: Ի գոյժ աղաղակին խուժեցին ՚ի ներքս պահապանք, և գխմեալ ՚ի վերայ անար-

ժան միանձինն՝ փողոտեցին զնա անդէն առ
ոտս Հենրիկոսի : Դիմեաց և Թագաւորն
նաւարրայ, և անկեալ ի ծունր առ մահճաք
Թագաւորին՝ լայր անբարբառ : Հենրիկոս
յեղս անդ շնչոյն կանգնեալ զնա ի վեր, և
զերկա արկեալ փարեալ զնովաւ, ազաչեր
զնա մնանել ի ծոց սուրբ եկեղեցւոյ, և հրա-
մայէր ամենայն իշխանաց մերձ եղելոց անդ
զերդումն հաւատարմութեան տալ նմա :
Պատրաստեցաւ ապա յանդիման լինել ա-
հաւոր բեմին, ներուցն շնորհեալ առ հա-
սարակ ամենայն Թշնամեաց իւրոց, և մանա-
ւանդ որոց պատճառք եղեն մահուն :

Ա յսպէս վախճանեաց զկեանս իւր Թա-
գաւորս այս՝ արժանի Թագաւորութեան
ցորչափ փոյթ էր ի վարչութեան : Ցիպք
բարուց նորա հակառակս մեղ-յանդիման
առնեն նկարագիրս . զի էր նա մեծանձն և
ապիկար, քաջարի և մեղկ, ժիր և վատ, բա-
րեպաշտ և խառնակեցիկ : Ոչ է մարթ ժըխ-
տել զարժանի պարսաւանաց ախտս նորա,
Թէպէտ ի վերջին ամս կենաց իւրոց դար-
ձաւ ի զգաստութիւն . բայց կալուխնա-
կանք և գաշնակիցք միօրինակ ոխերիմք նո-
րա պարսաւեն զնա ի սպառ : Ընդ Հենրի-
կոսի երրորդի վախճան եղև Վալուեանց
առհմին յորոց երեքտասանեւորդ եկաց նա
Թագաւոր ի Գաղղիա :

ԲԱՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

ԳԱՂՂԻԱՑԻՈՑ

ԵՒ ՅԱՒԵՐԵՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՕՔ

Ա.

Բնակարանք, տաղտք, հանդերձք, հեր գլխոյ և մորուաք:

Բնակարանք գաղղիացւոց յառաջ քան զվերջահասանելորդ դար գծուծք էին և անշուք իբրև զնորշս ապաւնեաց: Պատուհանքն էին նեղք, և փոխանակ ապակեաց կաւս կամ թուղթ օծեալ ՚ի ձէթ: Ապառանից իշխանաց և ազնուականաց թագաւորին էր պահեալ ապակին, և այն մեծացեալ նկարուք: Եւ ապարանքս այսոքիկ ամրագեալք աշտարակօք և խրամովք՝ զբերդս բերից բերէին զնմանուելիւն քան զտանց: Կրկնայարկք էին շինուածքն, բայց ՚ի վայրայարկէն որ ՚ի վերայ երկրի. առաջինն զբաւիկոնն բաժանէր ՚ի սրահս մեծամեծս, իսկ երկրորդն յինքնուրոյն սենեակս փոքրիկս: Ըստ շինուածոցն և կահք ՚ի նոսա պարզ և

և անշուք էին. ամօթալի անյիշատակութիւնք, և սե-
ղանիք անձնիք, նոյն և յաղթութիւնս. զկնոյին
միայնոյ էին բազմութիւք պղնձատպատք և մեռա-
սեխիւ զարդարեալ վերջաւորիք: Մահիճքն
էին քառահուսիք միաչափիքընդ երկայնութեն
և ընդ լայնութիւն իւրք առն կամ երկուա-
ցան ոտնաչափ. քանզի սովորութիւն էր յայն-
ժամ Գաղղիացւոց ի հիւրընկալել զբարե-
կամս ի ցոյց մեծի սիրոյ ի միում ննջել
յանկողնի: Եւ որպէս աւանդեն մատենա-
գիրք, Թագաւորն Հենրիկոս Բ, յաձախ ընդ
ազատասեանն իւրում Մոնմորանսեայ ի
միում ննջէր ի մահճի, և մեծ գութն կիր
հարեալ ի պատերազմին Տրէօյի զիշեանն
Քոնտէ և ձերբակալեալ զնա՝ ի գիշերին
առ իւր ի մահճին զնա հանգուցանէր:

Յառաջ քան զժամանակս զորմէ բանքս
են՝ բնակիչք քաղաքաց վաճառականք էին
և արուեստաւորք. քանզի աշխուժականք
բնակէին մեկուսի յամրոցս իւրեանց. և ե-
թէ գեղ լինէր նոցա ելանել ի քաղաքս,
կօշիկք յոտս չէին, զի մի ընդ գեղջուկս
համարեսցին. և սիկնայք նոցա ի գաւակս
երիվարաց արանցն իւրեանց. և յանձրևային
եզանակս ծածկեալք ի վերարկուս լինչ կըն-
դղաւոր և մոմապատս, այնպէս երևէին ի քա-
ղաքս. նոյնպէս և բամբիշք ալքայազունք:
Մարիամ Մեսիչն նա արար իւր նախ կառս.
բայց և կառացն յետ դարուս միոյ հնարե-
ցան ապակափեղկք: Փրանկիսկոս Ա, փո-
խեաց և զսարաղ հանդերձից, և փոխանակ
երկայն պարեգօտի սկսաւ ագանել բաճկո-

նակ և վերարկու կարճ. քան նմին օրինակի և ոտաձիկին: Բայց առեղակալք պահեցին զնուրեանց ձև երկայն և նեղ պատմուճանացն. իսկ քաղաքացւոց պատմուճան հասանէր մինչև ցծունկս:

Ար Հենրիկոսիւ Բ.-ւոյն գուրպայք ասղնեգործք՝ որ ցայնժամ՝ ի գիպակէ յօրինէին: Եւ՝ ի յաճախել շռայլ պերճասիրութեան առ յաջորդաւ նորա առ Հենրիկոսիւ Գ, թագաւորն և մեբիմք նորա մուծին զգանգուրս հերաց զուսովք գեղածփեալս, և զնոսպոպս գիզագէզ զգլխով՝ ի վեր ամբարձեալս. և նոքին զարձեալ մուծին զհովահար՝ ի կանանէն, որ եկաց մնաց մինչև ցաւուրս մեր. և այժմ քանակ զբազիկ նոցին առկախեալ ընդ այնր փոխանակեաց:

Վարսք երկայնք սեպհական զարդք էին Մերովեան թագաւորաց: Ապա յաւուրս Կարոլոսեանց իշխանք խոկ և ամենայն ժողովուրդն զհետ եղեն սովորութեան կրելոյ հերս և մորուս երկայն: Եւ յարհամարհելոյ զայն Լուդովիկոսի Կրտսերոյ, քան օրինակ նորա և իւրքն գերծուին յայնմ հետէ զմորուս, և գիտակս մինչև՝ ի յաւս Թողուին երկայնս: Այս սովորութիւն առեւեաց մինչև ցՓրանկիսկոս Ա, որ առ՝ ի ծածկել զսպիս վիրացն որ՝ ի վերայ ծնօտին՝ կրեր զմորուս, և անտի վերստին՝ ի պատիւ ամբարձաւ սովորութիւնն: Սակայն սրբ մեծարոյք և առեղակալք պահեցին զնուրեանց սովորութիւն մինչև՝ ի ժամանակս Լուդովիկոսի ԺԳ. յորում ժա-

մանակի իբրև տաղտկացեալ պալատականաց
գերծուին զմորուս, սոքա սկսան կրել զայն։

Բ.

Արտոնիք, դպրոցականք, տղայական հոգ վգո-
ղութիւն. օրէնք պատիժք և բանտարկութիւն։

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ Ա, սիրող գիտութեանց, միանգամայն և բերկրանաց, նա սկսաւ ժո-
ղովել յապարանս իւր զգիտունս և զիշխանս
ընտանեօք հանդերձ, և պերճացոյց զար-
քունիս։ Այնուհետեւ ամրոցն որ յանշէն
անապատս Ֆոնթէնըպլոյի, զարդարեցաւ
արքայավայել և եղև առաջին տպարանք թա-
գաւորաց Գողղիոյ։ Նոյնպէս և Լուվր՝ որ
զբանակաց բերէր զկերտարանս, վերսին կա-
ռուցաւ նորոգ Ճարտարապետութեամբ. և
կատարին Մեանլէ, ոչինչ նուազ մեծա-
գործ քան զՓրանկիսկոս, ձեռն էարկ ի շի-
նութիւն ապարանիցն Թիւիլըլի։

Սովորութիւն էր արքունեաց ծածկեալ
դիմով յանգիման լինել արքայի, և ի մատ-
չելն առ նա և յոչնանելն կամ ի սկսանելն
ի խօսել՝ բանալ զդէմս։ Ի սեզանի սպա-
սաւորք միայն արքունեաց անվերարկու և
բացագլուխք երևէին։ Ի պատրաստելն ար-
քայի յընդել և յետ ընդելոյն՝ խոնարհէր
նմա սւագանին յարգանօք։ Սովորութիւնս
այս բարձաւ առ Լուդովիկոսիւ ԺԲ. և առ

Փրանկիսկեաս Ա. օրինք եղեն բացաս գալ իսվ յանգիման լինել միշտ արքայի :

Էին երբեմն յարքունիս Թագաւորացն Գաղղիոյ արք ծաղրածուք, որպէս և այժմ առ արևելեան Թագաւորս, առ՝ի զուարճացուցանել զարքայ. Արք էր երբեմն ի պատճառանաք ծաղու և խորհուրդս օգտակարս Թելադրելին առարց իւրեանց: Պատմեն զի՝ի համբաւել գալատեան կայսերն Կարոլոսի Ե, ծաղրածուն Փրանկիսկոսի գրեաց՝ի տախտակի. « Անմիտ քան զիս ոչ կայսն եթէ գոյցէ այսր ». զոր ընթերցեալ Թագաւորին ծիծաղեցաւ և ասէ. « Եւ զինչ Թէ ես զնա՝ի նեղութիւն ընդունիցիմ »: Եւ միմոան յաւել. « Ջնչէցից զանուն նորա՝ի տախտակէդ, և զքոյդ ընդ այնր գրեցից »:

Ի սկզբանէ անտի Թագաւորութեանն սովորութիւն էր զդատաստանս և զվէճս տալ՝ի լսանին բարբառ. այլ յաղամոլ և յանկուլսարան գալրութենէ ազէտ նոսա թաց՝ բազում վէձք և խնդիրք լինէին. վասն որոյ օրինադրեաց Փրանկիսկոս գաղղիական բարբառով վարել յայնմ հետէ՝ի վէճս և յամենայն իրս պետութեան: Նոյնպէս յաւուրց Փրանկիսկոսի սկսան արձանագրութիւնք՝ի մատեանս ծննդեան ազգոց և մկրտութեան. յորս առաջ յաւելան և ամուսնացելոցն արձանագրութիւնք և մեռելոցն և այլն: Ի զգուշութիւն անգործութեան քաղաքացւոց գեռ ևս յետնեալ գտանէին յոյժ Գաղղիացիք. մանաւանդ

առ Հենրիկոսիւ Ե. յետ գիւտի հրաշալ-
նութեանց յաճախեին գունդ առ գունդ ա-
ւազակք : Որոց կալեալ զկնի ձանձրա-
հայ հրացան ի յուս, և սարձանակք ե-
րեք կամ չորք ի գօտւոջ, որպէս նահա-
ւակք պատրաստեալք ի պատերազմ կամ
անդրէն գարձաւորք՝ կողոպտէին զմարդիկ
և ի յափշտակութիւն դնէին զանգաստանս.
և գԺուարին էր զառաջս առնուլ զջա-
րեացն. քանզի չև ևս էին գրառք հետևակա-
խումբ զօրականին յառուկք, և ոչ զանա-
զանէին ինոցանէ աւազակքն : Յետ այնորիկ
զինեցան և արուեստաւորք ի պաշտպանու-
թիւն անձանց և առացուածոց, և էրկրա-
գործք իսկ և ազքատք, և այնուհետև ոչ ոք
մշակէր զերկիր, ոչ ոք էլանէր ի տանէ,
բայց տուեր յաղէր և գեղարդն ի ձե-
ռին : Ի խափանուածն չարեացն՝ խաթիւ ար-
դեալ մի ուժք բառնալ զէն բաց ի զօ-
րաց. և տուաւ իշխանութիւն քաղաքապե-
տին ըմբռնել զամենայն յանցաւորս եթէ
քաղաքացի և եթէ զինուոր, եթէ աշխուա-
կան և եթէ ռամիկ, և ինքնօրէն գառնել
զնոսա : Ընդ և այսու չէզև ինչ օգուտ մեծ.
և յաւուրս Փրանկիսկոսի Ե. աւազակութիւնք
և սպանութիւնք գործէին ի միջօրէի առ
պարսպաւ մայրաքաղաքին և յարուարձանս նորա, և հանապազորդեցին անկար-
գութիւնքս այս մինչև ի Թագաւորել Հեն-
րիկոսի Դ, որ զքաղաքական մարտս լուծցու-
ցեալ եգ կարգ, և հաստատեաց զանքոյթ
անդորրութիւն քաղաքացւոց :

Ի ժամանակին յայնմիկ անկանէր վաճառականութիւն Վենեակեցւոց և Գենուացւոց, և յառնէր Լուսիտանացւոցն, որոց բաժանորդք եղեն ապա Սպանիացիք և Հոլանտացիք և Ընդղիացիք. Գաղղիացիք միայն ի ներքին չփոթս խռովութեանց պատերազմաւ՝ անփոյթք էին ծովային զօրութեան և տուրեւառիկ վաճառականութեան:

Ի վերջոյ անէրորդի գարու զարգացաւ արուեստ պատերազմի նորահնար կազմածովք ի մարտ և ի պաշտպանութիւն պաշարողաց և պաշարելոց. այլ հեծեալք Գաղղիացւոց այլանգակամիտք, յամառէին ջառնուլ այլ զէն քան զսէգ, մինչգեռ օտար ազգք հրազինու զօրանային: Եւ վերստին կարագոյն այն իսկ էր՝ զի հեծելագունդն յաղնուականաց կազմեալ. յառաջին կարգ Ճակատուն գիմէր, և ի ոգմ կարգեալ ի մի գիծ՝ առանց թանձրութեան չկայրէր զգէմ ունել զօրութեան թշնամեաց. որոց հեծեալք թէպէտ և ոչինչ ազնուականք և քաջք, այլ զգոյշք և խոհականք, ոչ անարժան համարէին անձանց ի հինգ կամ ի վեց ոգմն կարգել կալ անխորտակելի առաջի քաջացն Գաղղիացւոց:

Ընդ Փրանկիակոսիս առաջնով գաղղիականին բարբառոյ ի յարգ և ի կերպարանս եկեալ, սկսան ծաղկել և գիտութիւնք: Մեծապատիւ համարեցաւ ուսումն իմաստուն լեզուաց. երևելի երևելի մատեանք Յունաց և Լատինաց առին զպատիւ և զյարգ. բազմացան ալք գիտնականք, որոց գլուածք

պատրաստեցին զմիտս մարդկան յառ յա-
պայն յեղափոխութիւն, որ առեալ ածէր
զդարն մեծահռչակ ի վեր քան զՕգոս-
տեան և քան զՆեբուքադնեզրեան ժամանակս:

ԹՈՒՂԹԱՐՔ

ՊՈՐՊՈՆԵՑՒԱՑ ՅԵՂԻՆ

ԳԱՐԻԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

Պատերազմունք զոր մղեաց Հենրիկոս Դ ընդ դաշնակիցս, և պաշարումն մայրաքաղաքին:

1589 - 1591

ՀԵՆՐԻԿՈՍ Պորպոնեան, արդարապէս մականուանեալն Բարի և Մեծ, սերեալ ի Ջանէը՝ ի Հռոբերտեայ՝ որ էր վեցերորդ և կրասերագոյն յորդիս սրբոյն Լուդովիկոսի: Սա Թէպէտ և ըստ յաջորդութեան կարգի օրինաւոր պայազատ Ճանաչէր, այլ՝ ի պատճառս ապանդոյ նորա՝ կէսք յիշատակ արքունի զօրուն ուծացեալ հեռացան՝ ի նմանէ, ի վտանգ կացուցեան համարելով արկանել զուպղպատուութիւն՝ ի գաղղիա՝ և

թէ թագաւոր ոք աղանդաւոր ունէր զդահն. վասն որոյ բռնագատեցաւ թագաւորն թողուլ զպաշարումն և մեկնել յաշխարհամէջս Նորմանեաց՝ վարանեալ ընդ եւս իրացն, զի չքաւոր էր արծաթով, և քաղաքացիքն սակաւք էին նորա, և նուազունք ոմանք ի հպատակաց հաւատարիմք, և բազումք այնոքիկ էին որ զանձանց խնդրէին զշահ: Դարձեալ հարկ էր նմա ձարտարութեամբ գնալ ընդ նորատանդս և ընդ ուղղափառս իւրոյ կողման. զի թէպէտ և ինքն անխոնջ վարքեր ընդ նոսա, սակայն կալուինականք քրիստինէական ազգացն թողուլ չքանէլ չնա: Մարթ էր նմա ի հանգամանս ժամանակին ի թեթև ինչ արկածից կորնչել ի սպառ: Զյաջողութեանց և զձեռնտուս նպաստից եւս նա զուգի քաջութեամբն և անխոնջ ժրութեամբ, և քաջալերեալ վստահ եղև ընդ յաջողութիւն գործոյն: Առաքինի չափաւորութեն նորա համբաւ հռչակէր, զի ոչ այնչափ յամէր Հենրիկոս յանկողնի՝ որչափ գուբսոն Մայեննի ի սեզանի. և զի յաճախ ևս պատանէր նա կոչիկս պատերազմի քան գուբսան հազարաւորս:

Ի մեկնել Հենրիկոսի ի քաղաքէն սակաւաձեռն գնդաւ, հետամուտ եղև նմա գուբսան Մայեննի սուսերակիր՝ հրնդապատակ առաւելեալ քան զվճռամին, զիւրին կարծելով այնուհետև ձեռքակալել զնա կամ ընկենուլ ի թագաւորութենէ: Ոչն եհաս, բախեցաւ ընդ նմա ի յԱնգէ,

ուր պատանէշ ածեալ նաեր։ Բայց Հէնրիկոս էա քաջ ՚ի միտ առնուլ թշնամւոյն՝ թէ քանի՛ հզօր է թագաւոր որ վասն գահոյն և կենաց պատերազմի. վանեաց զնա անտի և դարձոյց ՚ի փախուստ։ Եւ զկնի յաղթութեանն այսպիսեաւք հանճար բանիւք գրէր զյաղթութենէն առ մի ումն ՚ի քաջաց զօրավարաց իւրոց. « Խորհեաց որպէս և ախորժեաց, պատերազմ առաք ՚ի ՅԱՎք, մինչ գու ոչ էիր անդ։ Ողջ լեր քաջդ Կրիլլոն, սիրեցեալդ իմ յաւէրժ »։ Եւ զնա լուա եղև ՚ի Փարիզ՝ թէ խորամանկեալ զբացն Հէնրիկոսի՝ ինքն խոյս էա ՅԱնգլիա, անդէն թագաւորն առ ՚ի ծանուցանել զյաղթութիւն իւր յանկարծակի երեւեցաւ յանգիման քաղաքին՝ զէն ՚ի ձեռին. և ՚ի բուռն առեալ զարուարձանն, մերձ էր մտանել յաղթանակաւ՝ ինքեանք ընդ փախստականն։ Եւ իբրև ահաբեկ լեալ քաղաքացիքն պատրաստէին անձնատուր լինել, հասեալ դուքսն ՚ի վերայ՝ քաջալերեաց զնոսա անձամբ։ Հէնրիկոս անզօր և անբաւական ՚ի պաշարուելն մեծատարած և ամրակառոյց քաղաքին, դարձ արար սիրել քաղաքացն որ ՚ի Թուրէն, ՚ի Մէն, յԱնժու և ՚ի Նորմանդիա (1589)։

Իսկ դուքսն Մայէննի բռնագաւեալ ՚ի Թախանձանաց գաշնակցացն՝ պատրաստեցաւ զգեմ ունել երկրակալութեանց Թագաւորին, և խաղաց վեշտասան հազարաւ ընդգեմ նորա։ Հէնրիկոսի բիւր մի հեծ զօրաց էր. այլ ՚ի լուր յաղթութեանն Ար-

քայ՝ գայլին և խռնէլին ՚ի նա զոլք խմբովին. և ինքն իբրև զօրավար քաջահմուտ կարգէր զնոսա ՚ի Ճակատ մարտի՝ Թոզեալ յետոսէ զարեգակն և զՀողմոյն շնչումն: Անգ էր տեսանել զարքային քաջ, որ ընդ ամենայն կարգս զօրուն ընթացեալ խրախուսէր զնոսա. և ցուցեալ զսաղաւարտ իւր ոսկեայ ՚ի ցցուն, ասէր, « Որդեակք, եթէ պակասիցեն ձեզ զրօշք, ահա նշան վերսին ժողովելոց ՚ի կարգս ձեր, գալիք զնոյն միշտ ՚ի շահելս փառաց »: Համառօտ խրախուսանացն արդիւնք երևեցան անդէն: Ճահատակեաց նախ ինքն Հենրիկոս, և զկնի նորա զոլքն ամենայն այնպիսեաւ զարմանալի քաջութեամբ և կարգաւ, մինչև յամենուսին յետս ընդ կրունկն ընկրկեցաւ Թշնամին, Թոզեալ յաւար յաղթականին զԴանօթս, զդրօշս և զաղխս բանակին, և կորուսեալ ՚ի մարթէ անդ ՚ի յԻվրի զմեծ մասն զօրացն իւրոց (1590):

Այսու մեծաւ յաղթութեամբ զհամբաւն հարաւ անուն Թագաւորին, և բազումք գիմեցին ընդ գրօշսն նորա: Իբրև եաես նա զստուարութիւն գնդին իւրոյ մինչև ցքսան հազար ապանց, ՚ի գէպ վարկաւ խաղալ նոքօք ՚ի վերայ մայրաքաղաքին և պատնէշ պաշարմամբ նստել զնովաւ, մինչդեռ անփոյթ էին ամենևին քաղաքացիքն զպատահաստութենէ համբարոյ: Եւ յերևելն պաշարման անդ մայրաքաղաքին քաջիկ փոյթեցաւ վերհանձն առաքինութիւն Թագաւորին և քաջութիւն, և ոչ նուազ յայտնի ցուցաւ՝ Թէ քանի հզօր է ՚ի սիրտ

մարդոյ Աշնարտութիւն կրօնից՝ որ զինէ
զնա անվհատ քաջութեամբ : Քանզի ՚ի
սատականալ սովոյն խրախուսէալ զմիաբանս
բնակչաց քաղաքին, երդնուին մեռանել
սովալուկ՝ քան հնազանդել ընդ ձեռամբ
պատգաւոր Թագաւորի : Այս յանդուգն
երդումն կնքեցաւ անհետեւի խնդի հանդի-
սիս. զոր ասէլոյ ոմանց ՚ի պատմագրաց, և
թէ հաւատաս նոցա արժան իցէ ընծայել :
Գումարեցաւ գունդ մի նորանշան զօրա-
կանաց՝ խմբեալ ՚ի քահանայից, ՚ի կրօնա-
ւորաց և ՚ի համբակաց անտի գպրոցաց, և
կատարեցին հանդէս վնասուորական՝ հան-
գրնձեալ ոսնեալով զհանդերձս, սպաւարտ
՚ի գլուխ, վահան զմխիսքեք, հրացան ՚ի
յուս և սէգ ՚ի ձեռին : Մինչդեռ իշխանք
՚ի ծաղրական տեսարանն զբօսանացանէին
գԺողովուրդն, երթայր և զօրանայր սոքն,
մինչև ձեռն արկանել յոսկերս մեռելոց,
զոմս աղացեալ՝ հայց գործէին, և սովե-
ալքն առ տագնապ քաղցոյն որսային զմար-
գիկ. և էր այնուհետև տեսանել մար-
գահեբս ոմանս, և բազումք ՚ի մարց մար-
ճնով զաւակաց իւրեանց կերակրեցան, որ-
պիսի ինչ էր լսել ՚ի վէպս ազգաց յետ
պաշարման Երուսաղէմի, և այլք իրրև տասն
հազար անկան ՚ի սովոյն : Ընդ գոյժ անցեալ
մայրաքաղաքին Թագաւորն չարժէալ ՚ի
գութ, առեր ողբագին. « Ընդէր իցէ ինձ Թա-
գաւորել ՚ի վրայ մեռելոց » : Եւ գարձեալ թէ
« Լաւ իցէ ինձ չունել բնաւ զփարիզ, քան
տեսանել զայն պատահեալ » : Եւ ՚ի մէջ

շուտասացելոց անուն էրիս հաղորս ընկալաւ
ի բանակն, յորոց բազումք դիմեալ անյա-
պարար ի կերակուր՝ հեղձամղձուկք մե-
ռան: Եւ զօրավարաց սեանալ զն ոչ կամէր
Թագաւորն խստասիրտութեամբ վարել ընդ բնա-
կիչս քաղաքին՝ Թոզուբն խոյս տալ մարդ-
կան խմբովին, և Համարձակէնն պաշարս ան-
ցուցանել ի քաղաքն առ բարեկամս իւ-
րեանց: Ըստ օրինակի զօրավարաց և զօրա-
կանք անցուցեալ ընդ պարիսպս առ պա-
շարեալսն հաց և գինի և միս, առնուին փո-
խան ոսկի և զարդս կանանց և կերպասե-
ղէնս ազնիւս: Մարթ էր առաւակատոյն խըս-
տասրտութեամբ նուաճել զքաղաքն և վախճան
առնել մարտին. այլ խնամք աստուածծայ-
ինք որ միշտ հսկեն ի նպաստ ճշմարիտ
կրօնիցդ՝ բառնային ի Թագաւորէն մերթ
զխորհուրդս և մերթ զհնարս վատթարե-
ցոյ զինչամիս, և ազգ առնէին նմա՝ զի չէր
մարթ առնուլ ամրոյ նորա հաստատու-
թիւն մինչև ոչ գառնային նա ի հաւատս
կղմէից և Մեծին Կարոլոսի և որբոյն Լու-
դովիկեայ:

Զեռն արկեալ էր յայնժամ Փիլիպպոս
Ե, արքայն Սպանիոյ ի նուաճել զՀոլան-
դացիս, որ նշխարեալ էին զերծ աերտութե-
ն. և զօրավար նորա Ալէքսանդր Գառնէզ
գուքան փարմայի զօրս ծանուս մատեալ էր
ի Սոորին նահանգն: Թագաւորս այս նա-
խանձաւոր ի պաշտպանութիւնն ուղղափառ
հաւատոց, և դժկամակ իսկ ընդ նորայանդ
Դաղղիացիս՝ որ ձեռնտու լինէին ապստամ-

բաց, հրամայեաց զօրավարի զօրաց իւրոց մնել ի Գաղղիա և ամենայն զօրուվք իւրով խաղալ ի Թիկուռնս մայրաքաղաքին: Հենրիկոս ի լուր գալստեան Թշնամւոյն եբարձ զպաշարումն, և սպանիացւոյ զօրավարին արկեալ համբարս առաջ ի նեքբս ի քաղաքն՝ գարձ առնէր անդրէն ի Սաորին նահանգս: Այլ ի մայրաքաղաքին զկնի յաջողուվեանն եմուտ գԺառվիւն ընդ դուքսն Մայեննի և ընդ Սեզեանս բնակիչս քաղաքին. քանզի առքս ապագնապեալ ի նեղուվեան իւրեանց յաւագանւոյն, որք առաւել կուսակից էին Թագաւորին քան գաշնակցաց, յանկարծակի հասին ի վերայ նոցա՝ ունել զգլխաւորս ի նոցանէ, և առանց քննուվեան հանել ի կախաղան: Եւ ի յաջողել իրացս՝ խորհէին սպանանել և զդուքսն Մայեննի. այլ ոչ ոք յանօրինացն իշխեաց ձեռն մխել ի նա: Դարձ արարեալ դքսին ի քաղաքն, և զաւուրս ինչ գաղտ ի խորհուրդս անցուցեալ, ապա յանկարծ ասպր ըմբռնել զոմանս ի գլխաւորաց անտի գաւաճանաց և ի կախաղան հանէր: Այս ազդոյ հարուած ընկճեաց զհերձուած Սեզեանց բնակչաց մայրաքաղաքին, և վերծոյց զԹագաւորն յոխերիմ Թշնամեաց նորա (1591):

ԳԼՈՒԽ Բ.

Գործ Հենրիկոսի յոշղշփաա կրօնս, մա-պ նորա ի մայրաքաղաքն, և յաղխուխիանի ընդդէմ Սպանիացոց և այլոց ևշնամեաց, և ազափուխիան կալ-ինեալեանց։

1591 – 1598

Մինչդեռ գաշնակիցքն զմիմեանս խաժաամէին, Հենրիկոս խաղաց պաշարեաց զՌուան։ Իսկ Փիլիպպոս որ խորհէր ընդգէմ Սալեան օրինաց ամբաւանալ զքուսաը իւր ի գահ Գաղղիոյ, առեալ զի զօրանայր անդրէն կողմն կուսակցաց Թագաւորին՝ երկրորդ անգամ արձակեաց զդուքն Փարմայի ի Գաղղիա, որ բարձեալ զպաշարումն Ռուանայ՝ վերսին զօրացուցանէր զդաշնակիցս։ Ի մեկնել Սպանիացւոց էանց Թագաւորն ի Կամպանիա, ուր բազումք ի քաղաքաց զդաշնակցաց ունէին զկողմն. նուաճեաց զյօդսվս յայնցանէ, այլ ի պաշարման Էվրեաննէի կորոյս զմիծանուն զօրավար իւր զԾովապետան Պիրոն. զի մինչդեռ Թագաւորն ձեռն գուսաւ նորա արկեալ իսօսէր ընդ նմա, ի հարուսած հրացանի վիրաւորեալ ի գլուխ իւր անկաւ նա մեռեալ։ Յաւետաց յոյժ ալեքայի ընդ կորուսան Պիրոնի, որ ընդ քաջութեանն ի մարտի՝ էր

և Հարտարախօս մեծ, և զօրավիգն էր Թագաւորին և առաջերը և գլուխ։ Քաջավարժ էր նա ի գիտութիւնս, յարուեստս, ի լեզուախօսութիւն, ի հմուտ քաղաքավարութիւնն և ի գանձապետութիւնն. այլ նուազ զութիւն ևս էր խոհականութեան նորա առաջարածս էած զայլոցն ամենեքումբք։

Հենրիկոս ի շինել անդ զնուց և ի ապրակուսանս մարտի խորհէր գառնալ ի Ծոց Եկեղեցւոյ. և որ ցայն վայր ընդեմ էր կացեալ Թախանձանաց ուղղափառաց իւրոյ կողմանն, որպէս զի մի առ ակարութեան ինչ կամ առ քաղաքավարական խոհականութեան համարեսցի գարձեալ, այլ ի հաստատութիւնէ մտաց ընդ ուղղութիւն ուղղափառութե, իբրև վկայեցին և պաշտօնեայք իակ նորայանդից՝ Թէ մարթի փրկութեան հասանել և ի Հռովմէական եկեղեցւոջ, խնամատութեամբ յայնժամ յայտ առնէր. Թէ լաւ է կեալ և մեռանել յայնմ ժողովի մարդկան՝ յորում և հակառակակոչմանք վկայեն անշուշտ լինել փրկութիւն, քան կալ և ինալ յաղանդ՝ զոր գտատապարտեն ամենայն քրիստոնեայք։ Եւ յամին 1593 հրաժարեցաւ Թագաւորն յաղանգոյ անտի հանգիստս ի սուրբն Դիոնէսիոս առաջի բազմութեան բնակչաց մայրաքաղաքին, ուրոյ շարժեցան սիրտք ի սէր Թագաւորին ընդ այն առեալ. և ի հնչել գոհացողական երգոցն՝ հառն գոչէր և ժողովուրդն, «Կեցցէ արքայ»։ Այլ հառաւարար գաշնակիցքն ամենևին հակառակ այսմ՝ Թշնամա-

նէին զգարձ Թագաւորին, և ջանահնար լինէին արգելուլ զժողովուրդն որ խուռն դիմէր ի հնազանդութիւն, բայց ոչինչ օգտեցան, քանզի ի գալ աւին երկրորդի զօրացեալ քաղաքացւոց կուսակցաց Թագաւորին՝ բացին զդրունս առաջի նորա:

Դէպեաց Հենրիկոս հակառակորդաց իւրոց, և յաղթող լեալ հպատակացն՝ զհայրապետութիւն խնամեն տարածանէր ի նոսա: Յետ ղինադադարի առնելոյ զմիաբանեալն հակառակ իւր, գարձաւ զօրութեամբ ընդդէմ Սպանիացւոց՝ որք առաջի յարուցեալ էին ինքեան ի քաղաքական խռովութիւնս անդ: Ամենայն ուրեք յաղթութիւնք միշտ զհետ ընթացան նորա, և պերճ պսակեաց զյաջողութիւնս նորա երևելի Հակառամարտն ի Ֆոնթէն–Ֆռանսէզ, ուր կրկին հեծեալ գընդովք զօրաց՝ վանեաց զվեցպատիկ առաւել հետևելազօրս Սպանիացւոց (1595):

Ջերիմեամ մի զինի այսր մեծի յաղթութեանն՝ կրեաց Թագաւորն ծոյժ զուգակշիռ յաջողութեանն՝ նեղութեամբ թշնամեաց կորուսեալ զամին քաղաք: Վանզի ոմանք ի զօրաց Թշնամեաց ծպտեալ ի զգեստս չինականի՝ յառաւօտուն մերձեցան ի դուռն քաղաքին, բարձեալ սայլիւք վաճառս ի պարէն: Իբրև բացաւ դուռն, ոմն ի նոցանէ զկայ առեալ իբր Թէ առ ի վաճառել զնուրբ ընկուզաց՝ եմոզ անկանել զայն յերկիր, և ընկոյզքն առ հասարակ ըլուեցան ընդ երեսս երկրի: Տեսեալ զայս պահեկապանաց քաղաքին՝ որ ի պահ

դրանցն կային՝ Թողեալ զղէնս դիմելին անյապ յաւար, այլ ոչ եղև նոցա պարապ Ճաշակել զայնոսիկ. քանզի անդէն կարծեցեալ գիւղականքն այնոքիկ յարուցեալ ՚ի վերայ աւարառուացն՝ զոմանս առ եաեղ կոտորեցին, և զայլս հալածեալ՝ կալան զդրունս քաղաքին: Ի նմին ժամանակի և գունդ մի Սպանիացւոց՝ որ հուպ հասեալ կայր՝ եկն ՚ի Թիկունս նոցա, և ՚ի բուռն ածին զքաղաքն:

Մինչդեռ այս իրք անցանէին ՚ի Փլեբոսիա, Հէնրիկոս կոչնէնս տայր իշխանաց իւրոց և խառն ուրախութեան: Ի գոյժ առման քաղաքին ՚ի վեր վազեալ Թագաւորն ՚ի կոչնոցն. Երթիցուք, ասէ, շատ է այս Թագաւորին Գաղղիոյ. ժամ է արդ պարապ առալ գործոց և Թագաւորին Նաւարրայ: Ընդարձակ ժամանակ էր գործոյ. քանզի այս դէպ անակնկալ, այն հարկ ընդ Գաղղիա ողջոյն, իբրու եկեալ հասեալ Թշնամւոյն առ դուրս մայրաքաղաքին: Ի հասարակաց անդ երկիւղն կալուածնականք և եթե ուրախ Թուէին. որոց ցասուցեալ ընդ գարձ սրբոյն՝ ոչ կամեցան ձեռն առալ նմա ընդդէմ Սպանիացւոց. և գումարեալ հաստատեցին յիւրեանս երդմամբ գաշինս միաբանութեան, որ արդարև մեծապուծ ապստամբութեան էր գուշակ: Հէնրիկոս ոչ կարծառացաւ նայեն օգնականութեան. եգիտ իւր բաւական զօրս և գանձ, և էառ վերատին զՄիէն առաջի աչաց Սպանիացւոց (1597):

Ի նմին ամի սեպեալ դբսին Սաւոյայ

զնաանգ Գաղղիոյ յերեսաց Թշնամեացն, ժամ բարեպատեհ հանարէր տարածանելոյ զսահմանս սէրուԹեան իւրոյ ի գքսուԹեան Տոֆինեայ, և ի յաջողուԹիւն գործոյն՝ ձեռն արկանէր կանգնել զամրոցն Պարրոյ ի մարզս անգ Գաղղիոյ: Դուքսն Լէոիկիէս այր հաւատարիմ սեառն իւրոյ ազգայի, և քաջ ի զօրավարս ժամանակին, սպարապետս հարաւային գնդին, կարգեցաւ ի պատերազմ ընդդէմ Թշնամւոյն: Եւ իրրև ամենեքեան ակն ունէին Թէ ընդհուպ հասեալ նորա խափանեսցէ զգործ Սաւոյացւոյն, Լէոիկիէս անխմանալի իմն և Թաքուն խորհրդով Թողոյր համարձակ զկառոյցս բերդին առաջի աչաց իւրոց. և Թագաւորն իսկ յիրազեկ լինել գործոյն՝ արտունչ կալաւ զվատուԹենէ նորա. այլ Լէոիկիէս անշփոԹ ամենևին արար պատասխանի. «Տէր արքայ, կարևոր էր մեզ ամրոց հզօր առ յապահովելոյ զնիւսխասկոմին գքսուԹեանս Տոֆինեայ. և զի դուքսն Սաւոյեայ կամի կառուցանել զայն ի դանձուց իւրոց, առ ինչ լցէ մեզ խափանել զայն: Իրրև ամրացոյն բերդն հրազինուք և կազմածովք պատերազմի, յիմ վերայ լիցի հոգդ այդ՝ առնուլ զայն առանց ծանրանալոյ Թագաւորիդ»: Ապա հանդարտեցուցեալ քաջն Լէոիկիէս զԹագաւորն, հաստատուն կալաւ զնոտատուծին իւր. և ի կատարել ամրոցին յարձակեալ ի վերայ՝ կալաւ զայն:

Զկնի ավրտակատելոյ անգ և Թափելոյ

զՆՄԻՆ 'ի ձեռաց Թշնամեաց, յամին երկրորդի գաշամբք 'ի վերուին խաղաղացաւ Դաղղիա յերեսաց սրոտաբին Թշնամեաց: Ոչնչ այնպէս Թեթևասիամբ զինքնակէց եղեն և նեղքին Թշնամիք, զի զկնի բազում հակառակութեանց և սպառնալեաց ընկալան 'ի Թագաւորէն կալսինեականք հրովարտակաւ Նանթի զազատութիւն կրօնից և հրապարակաւ պաշտելոյ համարձակ զանգն 'ի բազում տեղիս, զերաւունս ակն ունելոյ բարձի աւագութեան, և մտանելոյ իակ 'ի խորհրդականս տէրութեան, և այլ բազում առանձին բարեշնորհութիւնս, պայմանաւ մի երբէք ձեռնտու լինելոյ Թշնամեաց տէրութեան (1598):

ԳԼՈՒԽ Գ.

Խմասպան վարչութիւն Հենրիկեայ և մահ նորա:

1598 - 1610

ՀԵՆՐԻԿՈՍ խաղաղութիւն հաստատեալ զամօս իւր, հոգ յանձին կալաւ 'ի յանձանձիս իրաց սչխարհին. եբարձ օրինաց զանգուած հարստահարութիւնս զորս հարկապահանջքն գործէին: Հատոյց տակաւ զամենայն պարտս Թագաւորութեն. կարգաւորեաց զօրէնս գատաստանի, զվաճա-

ականութիւն և զարուեսաս Հան յառաջին իւրեանց մեծութիւն, և ոչինչ յետանեալ գտաւ և ի կարեւոր շինութիւնս: Սիրելի առաքեալ զհեշտութիւն իւր յաչս իւրոցն առանին, և մեծարոյ արտաքնոց: Երկնչէին գրացի Թագաւորութիւնք անկրաւել ի Թագաւորն՝ որ գիտէր իմաստութեամբ զարուեսա վարչութեան Թագաւորութեան, որպէս և գիտացն քաջ յաղթող ի զէնս հանդիսանալ. և բազումք ի Թագաւորաց գտաւար կացուցեալ զնա գժաութեան իւրեանց՝ հպատակեցին վճռոյ արդարութեան նորա և զօրութեան:

Զեռնաու օգնական էր Հենրիկոսի ի յաջողութիւնսն գուքսն Սիլլի գանձապետն արքունի: Սա զօրաւոր էր քաջ, պաշտօնեայ հաւատարիմ, տեսուչ հմուտ, և ընդ զարմանազան առաքինութիւնսն այր արդարակորով, սիրելի յաչս տեառն իւրոյ, որ և չառնոյր ակն բնաւ ծածկել ի նմանէ զծանուցնա իսկ ի ճշմարտութեանց զօգտակարս: Ձմի լինէ ի գործոց նորա արժանեաց յիշատակի չատ համարիմ յետուլ աստանօր: Հենրիկոս սիրէր զոք ի սիկնանց արքունեացն գեղեցիկ քան հանճարեղ. և ակարացաւ իսկ տալ նմա խոստումն գրով առնուլ զնա իւր ի կնութիւն: Մինչև տուեալ ի ձեռս զիւրն խոստման, կամեցաւ ցուցանել նախ Սիլլեայ, և լսել զկարծիսն նորա: Ընդհատեալ գբանն զնոյնն, պատասխանեաց զայն՝ ասելով. «Ահա, տէր արքայ, զոր խորհիս»: «Ձինչպ, ասաց

ցասմամբ Թագաւորն, յիմարեցար Սիլլէ»: Պատասխանի արար զօրավարն. «Այո, տէր արքայ, յիմար եմ, և ցանկալի է ինձ միայն յիմար լինել ի Գաղղիա»: Յետ երկուց աւուրց կացոյց զնա Թագաւորն իշխան հրամանատուց: Թէպէտ գժտեր երբեմն ընդ նմա, այլ վաղ հաշտեր: Դէպ եղև երբեմն ի ամանք յոսոխաց Սիլլէայ պատեհ առեալ արկին կարծիս պղտորս ի միտս Թագաւորին զհատաստութիւնէ նորա: Հենրիկոս ոչինչ ամենևին ցասուցեալ, առնոյր զնա մեկուսի յիշխանաց իւրոց, և խնդրէր ի նմանէ զլուծումն ամբաստանութեանցն: Ոչինչ գժտարին եղև Սիլլէայ ցրուել զմրրիկ քաղաքացեանցն, և այնպէս քաջ արդարացոյց զանձն՝ մինչև Հենրիկոսի խոստովան լեալ զխաբեանս իւր, և ամաչելով ընդ դիւրահաւատութիւն, երդուաւ նմա ոչ ևս ունկն դնել Թշնամեաց նորա, և համարել զնա իւր մտերիմ բարեկամ: Ընդ այս բան ուրախացեալ Սիլլէ անկաւ յոտս Թագաւորին, ի վեր կանգնեալ զնա Թագաւորն, ասէ. «Արի՛ կաց Սիլլէ, տեսանեն զքեզ մարդիկն և կարծեն Թէ ներեմ քեզ». և գիրկս հարիկ նմա առաջի ամենայն իշխանաց արքունեացն:

Ներեաց Հենրիկոս մեծանձն փոխարկութեամբ իշխանաց իւրոց որ զապստամբութիւնն խորհէին, և զԿիւրն միայն զմայրն Ջախան մտանեաց ի մահ՝ յետ ջորիցս նեղելոյ նմա, և նորա գալոյ ի նոյն խորհուրդս յամառելոյ:

Թագաւոր որ նուիրէ զնունչ կենաց իւրոց՝ ի բարօրութիւն ժողովրդեան իւրոյ, սիրէ անքոյթ յաշխարհին, որպէս առանուաէր յընտանիս իւր. այլ յեաս ընդգէմն պատահեցաւ Հենրիկոսի Դ: Զօր ամենայն տեսանէր նա զառաջեաւ զվառանգ մահու յարանց անօրինաց. և՝ ի նախատինս իւրոյ դարուն այնչափ յաճախեցին սրք անօրէնք զինեալք՝ ի սպանութիւն լաւաբարոյ Թագաւորիս, որչափ ինչ չէզեն ուրեք երբէք ընդգէմ բռնաւորաց:

Իբրև խորհէր նա խոնարհեցուցանել զառն կայսեր Աւստրիոյ, և պատրաստէր առաւար բանակաւ անցանել՝ ի Գերմանիա, Ռաւայլեաք ումն անուն՝ այր վաշխուէր և կաուսալ՝ ի գլուխ առեալ զանօրէնութիւնն, զոր ընդունայն փորձեցին այլք: Պատեհ առեալ սա ժամուն՝ յորում կառք Թագաւորին զկայ առնուին յանձուկ փողոյն ուրեք յերթևեկէ սայլից խափանեալ, հուպ՝ ի կառն մատեաւ, եդ զոտս իւր՝ ի մի՝ ի յեսեն անուացն, և կրկին հարուածս սուեալ նմա, երկրորդաւն կլուրեաց զերակս Թոքոցն: Ազազակեաց Հենրիկոս, «Վիրաւորեցայ». և անդէն փչեաց զոգին (1610):

Եւ ո՞ կարիցէ պատմել զցաւ և զարհաւիրս Գաղղիոյ ընդ գոյժ ազեռաալն արկածին, ժողովուրդն որ ընդ երկար կանխակալ կարծեօք ոխերիմ էր նմա, այն ինչ ծանուցեալ Թէ որպիսի ոք էր և խանդակաի կապեալ՝ ի սէր՝ յանկարծ կորուսին

զնա: Եւ զի լսա ժամանակակից պատմագրն ումեմն՝ ի կիր առեալ զբանս, «Երբեւ հնձեաց, ասէ Պլուտարքոս, գոյժ մահու արքային, ի ձայն աղիողորմ և յուժգին հնծեծանս լուծաւ ժողովուրդն. կէսք առ կակուճ ցաւոցն պատանձեալ կային և թաւալ կացեալ անկանէին. այլք խնկարարեալ ինն գոգցես ընծանային ընդ քաղաքն. և բազումք գիրկս ածեալ զբարեկամօք իւրեանց գերարտօսր կականաւ, զայս ևեթ ասէին. Ո՛վ մեծի ազեսիցս: Եւ կանայք հերարձակք ձիչ բարձեալ ողբային զանձինս, և ի գիրկս առեալ զորդեսկան, «Աւաղ քեզ, ասէին, մանկուընք. և զինչ յայսմ հետէ լինիցիք, զի մեռաւ հայր ձեր»: Եւ յոլովք խակ՝ առ սասանիկ գիծոյ գորովոյն ընդ ահագին ազեսեան՝ անգէն կամ յետ առեալոյ մեռանէին»:

Հրահանգեալ Հենրիկոսի ի վարժոցս ձախորդութեանց, յաղթեաց ամենայն զբաժառաւթեց ոյք զմիմեանց կինի ընդ առաջ նորա ելին, այսինքն են արդեւք խափանաբաւք վտանգք ի կրել, և մանաւանդ հակառակորդք արժանաւոր անձին. այսպէս ամբարձաւ նա յաթոռ այր բազմափորձ, և ելն իւր ինքեան և զօրավար և առաջին առաջնորդ աշխարհին: Էր նա անկեղծ, միանգամայն և քաղաքավար, ազնուական խնամախութ, և պարզ ինն սխրալի նորայն կենակցութենն, արի ի զինուորութեան, և անձնատուր գութ բարութեան նորա: Այլ այս ամենայն գեղեցիկ բնաւորութիւնք

մ[illegible]ան ի նմա վերնայնոք [illegible] և [illegible]
[illegible]: Չակատեալ էր նա յոյժ ի
ակն խաղուց և կանանց. բազմութեամբ
[illegible] խաղուց եղեալ զմայրաքաղաքն, և
անուանակոչութիւնք տուփանաց նորա հրապա-
րակեալ հռչակեցան և ի բերանս ամենից:
Այլ ի վերջին ամս կենաց իւրոց ձգներ
[illegible]ել զլուծ մոլութեանցն, և գուշա-
կելով [illegible] զմահ իւր, և շարժեալ իսկ ան-
շուշտ յաստուածոսա՝ պատրաստեր զանձն
յահաւոր գաւառատան նորա. և յառաջ
քան զաւուրս հնգետասան մահաբեր հա-
րուածոյն՝ ընկալեալ իսկ էր ջերմեռանդն
պատրաստութեամբ զաւրբ խորհուրդն:

ԳԼՈՒԽ Դ.

Թոփաւորութիւն Լուդովիկոսի ԺԳ. առաջին
խոովութիւնք, և ամբառնալ Կարդինալին Ռի-
շըլիօ ի գլուխ վարչութեան պետութիւնն:

1610 – 1627

ԹԱԳԱՒՈՐԵԱՑ Լուդովիկոս ԺԳ մանուկ
[illegible]եամբ ընդ խնամակալութեամբ մօր
իւրոյ Մարիամայ Մեճիչի: Իբրև էառ գըլ-
խոյն զանձն պետութեանն ի ձեռին, փո-
խեաց անդէն զկարգ տեսչութեան, և ար-
ձակեալ զամենայն պաշտօնակալս յիշեա-

նուիրեննէ, եհան 'ի բարձր աւագութիւն զնայրենակիցն իւր զՔոնչինն՝ որ գնաց առնել զիշխանութիւն Անքրայ, անուաներ զանձն առաջին աղնուական 'ի Գաղղիա, իշխան Անքրայ և ծովապետ: Այս տարապայման մեծութիւն օտարոտւոյն չարժեաց զնախանձ աստեղութեան աւագանւոյն Գաղղիոյ և վերստին զարթոյց զիմբրեալ հեծձուածս ժամանակին: Նա տեսեալ նոցա թէ ոչ գաւաճանութիւնք և ոչ գաղտնի միաբանութիւն սահանեն ինչ ծովակալ իշխանիս, 'ի զէն ընթացան: Աճապարեաց Քոնչինն յորդորել զդշխոյն 'ի հաշտութիւն խաղաղութեան, առաջի առնելով ապըստամբաց խոստմունս գումարելոց ժողով ազգախառն: Այլ իբրև ըստ կամի ուղղեր զժողովն դշխոյն Մարիամ, համարձակեցաւ աւագանին օրէնսդիր՝ բողոք ունել զնմանէ. և զի մեծամեծքն հակառակ իսկ էին իշխանութեան արքայի ընդ տանն Աւստրիոյ, կրկին գրգռեալ զինեցան ընդ առաջնորդութեամբ Քոնտեայ իշխանին, և մեկնեցան 'ի գաւառս իւրեանց. և անտի գիր հանին ընդդէմ դշխոյին և պաշտօնէի նորա իշխանին Անքրայ: Թագաւորն ողբով և քաղցրութեամբ հաշտեցոյց զնոսա. և արդարացուցեալ զապստամբութիւն նոցին, յաւել ամբառնալ զնոսա 'ի բարձս աւագութեան: Իբրև յանկոյնթս այնուհետև իշխանն Քոնտե գայր մտանէր 'ի Փարիզ և խրոխտանօք ունչս իմն առնէր զիշխանութեամբ դշխոյին և Քոնչինեայ, յանկարծ

ընդունեցաւ ի ծուլակ նոցին (1616)։ Քանզի Իտալացիքն հանեալ նենգաւ ի բանտէն զԿարոլոս Վալուա՝ որ երիմ Թշնամի Գոնտեայ, ձերբակալեալ զնոյն ինքն զԳոնտէ եդին ի նոյն բանտ, և զօրս գումարեցին ընդդէմ համախոհից նորա. և յուզէր անդէն մարտ քաղաքական ի գաւառս գաւառս պետութեան. այլ սակայն ընդ բոլորքեզն և չիջաւ։ Քանզի մանկահասակ Թագաւորն Լուդովիկոս խորհրդով իւրոցն ի դէպ համարեալ զայս պատեհ ԹօԹափելոյ զլուծ յանգուգն և խրոխտ պաշտօնէին, հրաման եւս ձերբակալել զնա, և իբրև զգուշանալ կամէր նա անձին, բռնութեամբ սպանաւ անդէն առ դուրս արքունեաց։ Եւ ժողովուրդքն կատաղեալ յոյժ յոյժ յօշատեցին զդիակն նորա, և խառնիճաղանձն եկեր լափեաց զմարմինն։ Այսչափ էր ցասումն Գաղղիացւոց ընդդէմ օտարազգի ամբարտաւան իշխանին։ Սակայն և այսու ոչ չիջեալ բոլորք ցասման նոցա, սպանին և զկին նորա իբրև զվհուկ և զդեղատու, և զմարմին նորա այրեալ՝ զաճիւնն յօգս ցնդեցին. տապալեցին և զտունն ի հիմանց, և զինչսն յարքունիս գրաւեցին, վճռեալ յանդգնաց գրել զորդիս նորա և մի ամբառնալ երբէք ի բարձ աւագութեան։ Սաստիկ վրէժխնդրութեամբս բարձան պատճառք ապստամբութեանն, և հանդարտեցին իշխանքն։

Իսկ փառատէր և ապիկար դշխոյն անկաւ ընդ մտերիմ պաշտօնէի իւրոյ յիշխանու-

թենէն, և Լուդովիկոս անուսանել քաւել Թշնամեաց նորա, ի կարծիս կասկածանաց ամօթալի ինչ գործոյ, իբրև ի շնորհս մեծուել նորա տարագրեաց զնա ի Պլուա, ուրանչ երեսս արարեալ մայրական արուա սուացն (1617):

Յետ սակաւուց խոյս ետ դշխոյն յամրոցէն՝ իբրեալ ընդ չուանեայ սանդուխս ընդ պատուհանն: Ոմանք յիշխանաց ի վրէժխընդրութիւն դշխոյին զէն առեալ ապստամբեցան, մինչև հաշտութեամբ մտանէր դարձեալ դշխոյն ի շնորհս որդւոյն՝ սրբեալ յանձնէ զկէղտս. և միջնորդ խաղաղութեանս լինէր եպիսկոպոսն Լիւսոնի Կարդինալն Ռիշըլիէօ: Ընդաբոյս իմն հակառակութիւն ունէին ընդդէմ նորա Թագաւորն և աւագանին, և չարաչինեալ ընդ հանճար առնն՝ ձգնէին հեռացուցանել զնա ի գործոց պետութեան: Ա՛յլ այնպէս ճարտարութեամբ վարեցաւ Ռիշըլիէօ, զի յաջողեաց նմա մուտ գտանել ի խորհուրդս պետութեան, և ընդ հուպ հաւատեաց զերկիւղ յաչաղկոտաց իւրոց. քանզի ստուերածս էած զամենեքումբք քաջատեսութեամբն, խորախորհուրդ հմտութեամբն ի վարչութեան, ընդարձակութեամբ հանճարոյն և կարևոր ապատաւորութեամբք (1624):

ԳԼՈՒԽ Ե.

ՈՒՇԸՆԻԵՕ. ԽՈՒՈՐՀԵԼՈՐԴ ՂԱԶԱՓՈՐԵՑՈՑՆ ԽՈՐՎԱՑԱՂ Ի ԸՆԿՃԵԼ ՊԱՂԱՏԻՆԱՑԻՆԱՆ՝ ԱՄԱՄԲ ՈՒՂԵԼ ԴԱՂԱՓԻ։

1624 – 1629

Ի պաշտօնակալութեան իւրում Ուիշընիեօ կէտ նպատակի գործոց իւրոց եդ նուաճել զաղգկարար բարս կալուինակացս, խուսարհեցուցանել զբնբռատ դուռ զուրթիւն իշխանաց, և խորտակել զտարապայման զօրութիւնն տանն Աւստրիոյ։ Այլ առ ի քաջայայտ ծանօթութիւն հանճարոյ առնս մեծի՝ կարեւոր է գիտել զպայման աշխարհին որ ի ժամանակին։ Բազմադիմի էին յայնժամ վէրք թագաւորութեան Գաղղիոյ մահառիթք. քնական ակարութիւն և մանկութիւն արքային, փառասիրութիւն արքունի տոհմին՝ առ ի ձեռնամուխ լինել յիւրս աշխարհին, ամբարտաւանութիւն և օգտաճարաւ ցանկութիւն աւագաց՝ վարժելոց արծաթոյ տալ զհպատակութիւն և զծառայութիւն, որովք միաք նոցա միշտ ի կռիւս քաղաքականս կրթէին. այսոքիկ ահա պատճառք, որով բազում անգամ ի բազումս ձեղքէր զօրու-

Թիւն Գաղղիոյ, զեզեւեր պետութիւնն, յաւար և ի կողոպուտ մեծամեծացն եր-
թայր գանձն արքունի, և տէրութիւնն յան-
իշխանութիւն փոխէր. և Սպանիացիք զայս
նոցին զառանին չփոթձս ձեռնտու իւրեանց
առեալ, առաւել ևս յաձախեին զչարիս
աշխարհին: Այս էրք էին Գաղղիոյ, յոր-
ժամ ի ձեռն էառ Ռիշըլիէս զերասանակ
պետութեանն. և անդէն ընդ հուսկ կեր-
պարանափոխ լինէր աշխարհն: Ի սկզբան
անդ ձեռն տուեալ Կրիզոնաց, նուաճեաց
զբնակիչս Վալթէլլինայ, մերժեալ անտի
զղօրս Սպանիացւոց: Ապա խոնարհեցոյց
զնորաղանգս Գաղղիոյ, և շնորհեալ նոցա
զհաղորդութիւն՝ գարձոյց զուշ մնաց իւրոց
ընդդէմ՝ներքին թշնամեաց իւրոց. ուր միա-
բանեալ էին բազումք յաւագանւոյն և գըշ-
խոյ մայր թագաւորին, և ամենեքին նորա
ընդդէմ իւր և զքաղքային խորհրդով ամբաս-
նալոյ զկասեցան զեղբայր զքաղքային ի գահ:
Եւ անդէն Ռիշըլիէս ծանուցեալ զայս զքա-
քային՝ եւ մեկնեցաւ ի գիւղ իւր. կոչեաց
զնա թագաւորն և ամենայն վստահուելո
յանձն արար ի ձեռս նորա զիշխանութիւն
տէրութեան: Իբրև էառ Ռիշըլիէս զլուսի
իշխանութիւն վարչութեան՝ ձերբակալ ա-
րար զիշխանս և անտոմայ՝ զհարձորդիս Հեն-
րիկոսի Դ, և փակեաց զնոսա ի բերդ ու-
րեք. անտի խոնարհեցոյց զկասեցեալն գուբս
Աբրեզիոնի զեղբայր թագաւորին, և տուր-
պեաց զնա ձեռնհասի լինել ի համախոհից
իւրոց, յորոց ապան զիշխանին Ըալէ և զմա-

բալխան տարագիր արար, և ժողովով աւազանեայն և վճռով նոցին հաստատեաց զամենայն զգործս իւր: Այնպէս միապետեաց Ռիշըլիէօ ի թերութեան, մինչև ոչ ունէք ձիկ հանել. համարձակեցաւ իսկ ի մահ վարել զկոմսն Մոնմորանսի զՊուրթուխլայ իշխանն որ ընդդէմ օրինաց Հենրիկոսի Դ ի մեծամարտութիւն եկեալ էր: Եւ առքա եղեն առաջինք յաւազանեայն Գաղղիոյ, որ վասն օրինազանցութեանն ի մահ ածան:

Յաւուրան յայնոսիկ կրկին շարժէին կալուինականք Գաղղիոյ ի պատերազմ՝ դըրգռեալք ի Թշնամեաց Ռիշըլիէօ: Քանզի ի մանկութենէ անտի Լուդովիկոսի ոչ դադարէին առքա ի յուզելոյ խառնա ի հարուածոցմանս Գաղղիոյ, և ի 1615 ամին հեռէ ժպրհէր աղգախառնք ժողով նոցա ազերսագիր առնել արքունեաց, յորում ընդայլ անկրաւ պահանջմունս խնդրէին փոխել զկարծրդակից Թագաւորին, և յերկրորդ ամին զէն առնուին ի բազում կողմանս աշխարհին. ի վախճանի ապա հաւատեաւ ցուցանէին զկամս խորհրդոց իւրեանց բառնալոյ զԹագաւորութենէ ի Գաղղիոյ, և հաստարակաւտութիւն ընդ այնր հաստատելոյ: Յայսմ խորհրդի կանխեցին բաժանել զաշխարհն յուրն նահանգս, և կարգել իւրաքանչիւր նահանգի մի մի կուսակալս ի գլուխ իշխանաց իւրեանց (1621): Վայրապար լինէր գործ Թագաւորին, որ անձամբ գնացեալ ի վերայ նոցա ի Լանգը-

ոք՝ առնոյր ի նոցանէ առաւել քան զմեսն քաղաքս. քանզի ի ձախողիլ իւրոյն առ Մոնմուտանաս, բռնագատեալ դաշինս խաղաղութեան դնել ընդ ապստամբսն:

Ոչինչ երկարատև եղև այս խաղաղութիւն. զի գուքն Ռուանայ առաքինորդ նոցա՝ բազբատանս հնարեալ թէ զանոյ թագաւորն պատուհաս իւր, յարոյց վերատին զնուրան ընդդէմ առաւն իւրեանց: Ա՛յլ այս վերջին ապստամբութիւն նոցա պատճառք եղև ի սպառ կործանման նոցունց (1627): Քանզի պատեհ էառ զայս Ռիշելիէս, և պաշարեաց զՌոշէլ-քաղաք, զոր խորհէրն ցայնժամ իբր միայն հնարս վախճան առնել մարտին և նուաճելոյ զկալուինականս. քանզի պատուար էր քաղաքս այս ապանդոյ նոցա, և բազում անգամ նշկահեալ զմագաւորս Գաղղիոյ: Համարձակեցան բնակիչք քաղաքին կոչել զՆորլիացիս յօգնութիւն իւրեանց. այլ Ռիշելիէս փակեաց արգել զանցս օտար թշնամեաց, և ըստ օրինակին Ալէքսանդրի մեծի որ առ Տիւրոսիւ՝ լիր արկեալ ի ծով փակէր եօթն հարիւր քառասուն գրկաչափ զերկայնութիւն խորշի ծովուն մինչև ցնաւահանգիստ քաղաքին: Զեռն ի գործ առնէին. փութով արագութիւք, և զօրականքն թողեալ զգենս իւրեանց վառառակէին ի գործ կարևոր, յորում քաջքն այնուիկ մի մի անխոնջ գործաւորս երևէին: Եւ քանզի գիտէին թէ յաջողութիւն յաղթութեան ի գործոց անոնք է

նոցա, զամենայն հնարս հնարէին զդէմ առնել բռնութեան ալեաց ամենի ծովուն։ Երկայնաձիգ գերանս արկանէին ի խորս անդր խաչաձև կապեալ ընդ միմեանս, և ի միջոցս փայտակուտից գլէին անհարթ և անհեթեթ քարինս, և սիղմք ովկիանոս լցեալ ի խորոցս քարանցն ծեռեալ միացուցանէին զայնոսիկ։ Ահաւոր այր Թուման զառիվայր ի լայնութիւն եօթանասուն և երկու ոտնաչափից ի հիմանէ, և տակաւ ամփոփեալ ի քան և ի չորս ոտնաչափս կատարէր։ Ի միջոց խորշին Թոդուին չորս կանգնաչափ լայն բացատ՝ առ ի տալոյ ազատ ընթացս երթևեկելոյ ջուրց, և ի խորս գատարկութեան բացուածոյն ի կուզին նաւս լցեալս քարամբք, անանց գործեալ ձանապարհ նաւացն ընդ այն։ Ինակիչք Ռոշէլայ ընդունայն համարեալ զձիգն Թշնամեաց ընդդէմ բռնութեան մրրկի՝ ծաղր առնէին ի սկզբան, այլ խաբեցան յանկարծութենէ իւրեանց, զի ի գլուխ եղ գործ ամբարտակին յամիսս հինգ ամրակառոյց անսասանելի։ Կարդինալն առաջնորդ մեծի գործոյն՝ էս պահել զօրուն զևխատ հրահանգս ի ժամանակի անդ պաշարման. գողութիւն, երդումն և հայհոյանք բացէ ի բաց մերժեալ էին ի նոցանէ, և լիուլի առատութիւն էր ի բանակին, քանզի անկասկած գային բերէին ամենուստ մարդիկն զվաճառս իւրեանց. զօրականք քաջք պատրաստեալ զգեստուք ի խաղութենէ ձմերան՝ անվրէպ առնուին և զռոճիկս։ Այն

ինչ իբրև աւարառէր չինուած ամբարտակին, մերձենային Անգղիացիք առնուլ զայն մարտիւ. այլ երկուցեալ ի նաւաստիմէ Գաղղիացւոց՝ որ ընդ երկայնութիւն ամբարտակին տողեալ կային, և ի շարից հրացինոց երկուսաւեք կրձկին, առանց փորձ փորձելոյ զինուց չընչեալ զևեղս նաւացն՝ դարձ արարին յԱնգղիա: Զկնի ամսոց երեից երկրորդ անգամ հզօր նաւատորմաւ քան զառաջինն. այլ ոչինչ համարձակեալ, մեկնեցան դարձեալ ի բաց՝ թողեալ զապրուստամբս ի Թշուառութեան իւրեանց:

Երթայր և առաքեանայր առնէր ի քաղաքին. և Թէպէտ կամեցան քաղաքացիք արտաքս հանել զամենայն բերան անպիտան, այլ ասէր պաշարիչքն հրձգութեամբ Թնդանօթիւ մղեալ վանեցին զնոսա ի նեղլիս՝ մեռանել տակաւ ողորմ մահուամբ: Ի տագնապ տարակուսին Յովհաննէս կիլմոն իշխան քաղաքին օրինակաւ իւրով պնդէր զյամառութիւն քաջութեան քաղաքացւոցն: Սա զառաջինն բազմիք հրաժարեալ յիշխանութենէ անտի առաջնորդութեան, իբրև բրնաղատէին զնա, սուր ի ձեռին դարձաւ առ իւրան և ասէ. «Այո՛, եղէց ձեզ իշխան, քանզի այս են կամք ձեր. այլ հաստատեսցի պայման ընդ իս և ընդ ձեզ, զի մինչեցից զառաքելս զայս ի կոտս այնորիկ, որ նախ խօսեցան անձնատուր լինել. և եթէ ես խափ, մի և յիս խնայեսջիք»: Եւ մինչև ի սպառ անդրդուելի կալաւ զայս խուժադուժ խառնութիւն: Տեսեալ յաւուր միում

կիթան զկին զոմն առաքեակ նուագել, և լըսեալ յուժեմնէ զի ՚ի յետին շունչ կենացն էր, ասէ. « Եւ զարհուրիցիս յայդմանէ. նոյն պայման և մեզ առաջի կայ եթէ չհասանիցէ մեզ ուսուեք օգնութիւն »: Իրրև էր կարդեր ընկերն թէ « Սոքին կոտորէ զամենայն ամբոխ ժողովրդեանն, և վաղ իսկ անմարդի լինի քաղաքս », « Շատ է, ասէ, թէ գոյն ոք ՚ի փակել զդրունս »:

Սակայն մոլեգնեալս այս իշխան չկարաց յայն պայման հաստուցանել զերան: Քանզի արդէն իսկ արք հնգետասան հազար անկեալ էին ՚ի սովոյ, և մնացեալոցն ակն յանգիման առեալ զնոյն օրինակ վախճան մահու, ՚ի զարհուրանաց անոի հերձուածք ՚ի մէջ անկան, բազմաց ՚ի հաշտութիւն խաղաղութեան միաբան. մինչև հարկ եղև քաղաքապետին խոնարհել ՚ի պայմանս հաշտութեան: Քան զհնկալութիւն նոցա ողբագոյն գոաա յաղթականն ՚ի պայմանս ընդ ապստամբաց, որք մոլեգնութեամբն անարժանք էին ամենայն թողութեան: Ածին նուիրակքն զբանալիս քաղաքին առ թագաւորն, և ՚ի ծունր իջեալ խնդրէին զներումն անձնատուր լինելով ՚ի կամս իշխանութեան նորա: Լուդովիկոս չնորհեաց նոցա զկեանս, զինչս, և զազատութիւն խղճի, այլ կործանեցան պարիսպք քաղաքին, յետս կոչեցան ազատութիւնքն չնորհեալք, և առաջնորդք ապստամբութեան տարագիր եղեն ՚ի մշանջենաւոր օտարութիւն:

Յառումն Ռոշէլայ ծախեցան չորեքհա-

բիւր բիւրք վերայից. և ի գլուխ երիքսաան ամաց պաշարման նուաճեցաւ քաղաքն Խառվարտ, ապաւէնն ամրութեան անօրինաց և կաղապ ազանդաւորաց և ապստամբաց՝ որ յերկերիւր ամաց հետէ ի միասեռական սերութենէ և հասարակապետութենէ վարեր՝ կազմ միշտ ի յառնել ընդդէմ աեարց իւրոց: Առիթն կամ ձեռնտու վեստասան քաղաքական պատերազմաց, ուր ուրեմն յեսին ապստամբութեամբն ընկճեալ Թաղէր ընդ աւերակօք, եթէ գթութիւն Թագաւորին չէր Թափեալ զնա ի սրոյ յաղթական զօրուն: Ըստ խորհրդոյ Ռիչըլիէօ զմահաբերն ընդունէր զհարուածս ազանդն կալուինականաց, և տեսեալ զվերահաս ապստնալիս բնաջինջ բառնալոյ՝ ձեռնթափ ի վնուց ընկճէր լուիկ: Լուդովիկոս խոստացաւ ախրաբար, ներեաց յորժամ կարողն էր պատուհասել զնոսա: Ամենայն ազատ քաղաք երբեմն բռնակալեալք՝ գարձեալ ի բնակչաց քանդեցան. գրաւեալ ինչք եկեղեցականաց գարձան յառաջին վիճակ աեարցն, հասարակաց պաշտօն ուղղափառութեան հաստատութիւն էառ վերատին ի տեղիս ուսոի մերժեալն էր: Այսպինակ խոհականութեամբ և պինդութեամբ հանճարոյ կարդինալիս լուեցին պատերազմունք յաղագս կրօնից, որովք ի բազմաց հետէ վերդովեր խաղաղութիւն Գաղղիոյ, և բազում անգամ անարդել բանայր ճանապարհ երկակալութեանց Թշնամեաց:

ԳԼՈՒԽ Զ.

Պատերազմ ընդ Սաուլեայ, և օր խաչիանաց։

1629 – 1633

Ազատեալ Գաղղիա յերկիւղէ քաղաքական պատերազմաց, խաղաղութեան ցանկայր այնուհետեւ և վախճան առնել միահեծան իշխանութեան Ռիշըլիէօ. մանաւանդ զի և Թագաւորն Լուդովիկոս գժկամակութեամբ տանէր զլուծ իւրոյ պաշտօնէին, և շոշմանարար շուրջ հծծէին վնովաւ ի ձեռն առնուլ զերասանակ պետութենն։ Այլ ձարտարամիտ այրն Ռիշըլիէօ աճապարեաց եգիտ պատճառս պատերազմի, զի մի պարապ լինի սրբոյն այլազգ ինչ խորհել։ Յարոյց պատերազմ ի վերայ դքսին Սաւոյեայ, որ օգնականութեամբ կայսեր և Թագաւորին Սպանիոյ ձեռն արկանէր ի քաղաքն՝ զորս Մարիա Կոնձակայ դուստր դքսին Նեւերայ ժառանգութիւն էր առնել առնանութեամբն ընդ Կասմոնի երբոր սրբոյն։ Զօրաժողով եղև Թագաւորն, և հանդերձ երեւելի զօրավարօքն ի ձմերանի անդ մեկնաւ ի Սուսա, և հալածեալ զՍպանիացիս ի Բազալայ, խոնարհեցոյց զդուքն Սաւոյիոյ ի հաշտութիւն։

Ա՛յլ յ՛ետ ոչ բաղմաց կրկին յարեաւ գուք-
ըն ՚ի մեռս, և օգնականութեամբ Սպա-
նիացւոց վերսաին ՚ի ձեռս էած զքաղաքս
իւր. և զօրացան Սպանիացիք և Աւստրիա ՚ի
վերայ Գաղղիոյ, և անշուշտ յաղթանակէ-
ին՝ եթէ երեւելին Կուսաձաւոս Առոլփոս ար-
քայն Շուետաց չէր սառնան յարուցեալ
կայսեր ՚ի հիւսիսոյ: Քանզի ՚ի լուր և
՚ի չուիդն գինուց նորա ահաւորապուն-
թենէ՝ ամիսոփեաց կայսրն զձեռն իւր
յԻտալիոյ, և արար խաղաղութիւն ընդ
Գաղղիոյ: Յետ սակաւուց գադարեցաւ և
թշնամութիւնն որ ընդ Սպանիացիս և ընդ
Գաղղիացիս գեղեցիկ յանդգնութեամբն
Մածարինեայ նուիրակի քահանապետին
Ուրբանոսի Ը, և գաշամբք Ուեսթփոս-
նայ (1630):

Զկնի մեծի յաջողութեան պատերազ-
մին անկաւ Լուդովիկոս իսթացեալ ՚ի Լիոն.
և մինչդեռ Ռիշըլիէօ յուսահատ զկենաց
իւրոց ծփայր ՚ի խորհուրդս տագնապոլա-
կան, առաջացաւ թագաւորն և դարձաւ ՚ի
Փարիզ. այլ կրկին նոր վտանգ տարակու-
սի եւանէր ընդ առաջ: Քանզի դշխոյ մայր
թագաւորին ամբարձեալ զՌիշըլիէօ մե-
ծութեան պետութեան, կարծէր պա-
հել և զնոր իրաւունս ՚ի վարչութեան, այլ
վասն ծանեաւ զի իշխան կացոյց զինա ՚ի վե-
րայ գշխոյ իւրոյ: Եւ կեղծէր թագուհին
կինն խորագէտ զմիտս իւր զամս յոլով,
քանզի կարդինալն խելօք վարեալ ընդ բա-
րերարին՝ ընդհակէր նմա զամենայն բաց յիշ-

թանութեանէ : Սակայն ՚ի վախճանի զայրացեալ արամութեամբ վառն պատերազմին ընդդէմ Վիկտորի Ամեդեայ դքսին Սաւոյիոյ փեսային իւրոյ , և յեցեալ ՚ի զօրութիւն բազմութեան Թշնամեաց կարդինալին , շատ իսկ կարող զանձն համարէր ասիպել ըղթագաւորն արկանել զնա յիշխանութենէ : Մանաւանդ զի և եղբայր Թագաւորին դուքսն Աբեղիոնի ընդ այլ իշխանս արհամարհեալ առաջի ձեռնտուութեան կարդինալին , յայտնապէս ոխայն ընդ նմա ունէր , շուշա Թուէր ամենեցուն անկուճն նորա , և ինքն իսկ Ռիշըլիէօ կարծէր առ վայր մի անկեալ ՚ի չնորհաց Թագաւորին : Այլ մեծարոյ էր նա յոյժ յաչս Լուդովիկեայ մեծամեծ յաջողութեամբքն , և յայնահանձար և նրբամիտ խորհրդովքն , մինչև չէր ոք այլ իբրև զնա յաջորդել յիշխանութեան նորա : Վասն որոյ ՚ի դէրև ելանէին գաղտնի դաւաճանութիւնք Թագաւորազանց և աւազանութեան , և ոչ զօրէին աղաչանք և արտասուք դշխոյն մօրն ընդդէմ կարդինալին : Թագաւորն առ ժամանակ մի յերկմիտս և ՚ի տարակուսանս ցուցեալ զանձն , յայտնապէս ծանոյց Թէ կամք իւր էին հաստատել յիշխանութեան զկարդինալն , և պաշտպան կալ նմին հակառակ ամենայն յարձակմանց Թշնամեաց նորա : Եւ յաւուր յորում կարծէին արկանել զնա յիշխանութենէ՝ խուռն գիմեալ ՚ի խնդակցութիւն դշխոյին , յայնմ աւուր յաղթանակեաց նա , և կոչեցաւ օրն այն Օր խաբկանաց , զի պա-

արեալ մնացին Թշնամիք Ռիշելիէօ (1630):

Յայնմհետէ ահիւ ասպետին Թշնամիք կարգինալին՝ ի զօրութենէ նորա և յիշխանութենէ, զի էր զոր խոնարհեցուցանէր ընդ ձեռամբ և էր զոր հեռացուցանէր յարքունեաց. այլ այս խաւարութիւն նորա նորանոր Թշնամիս յարուցանէր ընդդէմ անձին: Դուքան Ալբուզիոնի ևս քան զևս զայրագնեալ ընդդէմ նորա, եթող զարքունիս և մեկնեցաւ. և գշխոյ մայրն լի բարկութեամբ սկսաւ լուսանօք ապառնալ, այլ անխոհական ցասումն պատճառ լինէր կորըստեան նորա: Քանզի զարթեան վերսաին նախկին կարծիք կասկածանաց՝ ի միտս Թագաւորին, և Ռիշելիէօ հասատատէր զնոյն. որով և պատժապարտ համարեալ եգաւ նա՝ ի գիպահոլ հրամանաւ ազգային: Այլ գշխոյս այս կին խրոխտ և յամառ՝ ոչ կամեցաւ վասն բարեոյ հասարակաց Թողուլ զնոր առանձին առելութիւն: Եւ յամառ պնդութեամբն բազում տոյժս ինասուց հասուցանէր անձին, և տարտգիր փախուցեալ՝ ի Գաղղիոյ՝ ի բազում տագնապ ատրակուսի և՝ ի վիշտս վտանգաց փակեր զանձն:

Իսկ դուքան Ալբուզիոնի պատրաստեալ զինուք մտանել՝ ի Գաղղիա, կանխեաց հըրամայակեաց Թուղթ յայտարարութեան լի Թշնամանօք՝ ի վերայ կարգինալիս: Ռիշելիէօ անդէն իսկ կազմ՝ ի պատերազմ՝ զինուք ասպր զպատասխանին: Ծովակալն Մոնմորանսի կուսակից դըսին ձերբակալեալ գըլ-

խաոեցաւ. և չաո եղև այս 'ի կործանումն ապստամբաց: Ապիկար դուքան պատրաստ առաւել 'ի յանդուգն խորհուրդս քան յաջողակ արուեստիւք սնդուեան յա- ռաջ վարել զայն, անկաւ յերկիւղ տա- րակուսանաց, բարեբաստուեին համա- րեալ անձին՝ առաջիւք բարեկամաց իւրոց գնեաց զհաշտուեին, զորս և մատնեաց 'ի վրէժխնդրուեին օրինաց, և որպէս կամք են բանիս ասել՝ յանդղոքելի գտաոտան Ռիշելիէս, յորոց բազուկք յերևելի մարդ- կանէ ընկալան զմահու դատակնիք:

Յետ այսորիկ զօրու ծանու խաղաց արբ- քայն Լուդովիկոս 'ի Լորենա ընդդէմ դքա- սին Կարոլոսի, որ զքոյր իւր զՄարգարի- տա առանց իւրոյ հաւանուեեան առեալ էր 'ի կնուեին եղբօր նորա Կաստոնի դքա- սին Աբեզիոնի: Կարոլոս ոչ կարելով ընդ- դէմ կալ զօրուեեան արքային Գաղղիոյ՝ որ եկեալ պաշարեալ էր զՆանսի քաղաք, հրաժարեալ 'ի աերուեենէն եմոլ զայն եղբօր իւրում՝ Նիկողայոսի Փրանկիսկոսի կարդինալին, որ անդէն ամատարեալ ա- մուանցաւ ընդդէմ օրինաց եկեղեցւոյ, և ապա մողեալ զգաւառս իւր 'ի Գաղղիացիս, Ձողոպրեաց զանձն յայլ տեղի (1633):

ԳԼՈՒԽ Է.

Սկիզբն էրէսամէայ պապէրապին ընդդէմ փաննԱւոպրիոյ։

1630 – 1640

ԻՐՐԵՒ այսպէս նուաճէր մեծահանճար կարդինալն Ռիշըլիէօ զապստամբութիւն կալուինականաց և խոնարհեցուցանէր զմեծութիւն իշխանաց, ժամանակ բարեպատեհ վարկաւ յետ այնորիկ յարձիւնս ածելոյ և զերծորդն իւր զընդարձակ խորհուրդ, այն էր խոնարհեցուցանել զտունն Աւստրիոյ։ Այս տոհմ ազգուն 'ի Թագաւորութենէ անուն կարծեսն Ե ախրապետեր կիսոյ մասին Եւրոպիոյ. մին 'ի ցեղից ունէր զկայսերութեան գահ ընդ Պոհեմիոյ և ընդ աշխարհին Մաճառաց, և միւսն ընդ Սպանիոյ ունէր ընդ ձեռամբ զոզջոյն իսկ զԱւստրանիա, զՍաւոյին նահանգս ուզղափառութեան, զՓրանկ կոմսութիւնն, զՄեծ մասն Իտալիոյ և ընդարձակ գաւառս 'ի Հնդիկս և յԱմերիկա։

Ռիշըլիէօ պատրաստեալ 'ի մեծ յամենուստ ատալ զյարձակումն 'ի վերայ նոցա, միաբանեաց ընդդէմ նոցա գաշամբք զՀոլանտացիս, զլուսաբերական իշխանս Գեր-

մանիոյ զմեծահռչակ աշխարհակալն զԿուս-
թաւոս Աւոլփոս զարքային Շուեհաց. թէ-
պէտ ինսամակար Թուէր այս դաշնակցու-
թիւն և ուղղափառ կրօնից, սիրելիմ գո-
լով դաշնակցացն նմին, և բազմաղէտ եղ-
բոպիոյ՝ որ հանդերձեալ էր հեղեղել ա-
րեամբ ժողովրդոց իւրոց, սակայն չառ
իսկ արգարացուցանէր զՈրիշըլիէօ շահ մեծ
խորտակելոյ զիշխանութիւն մի՛որ ի դարուց
հետէ նախանձընդդէմ և բազմավառնդ
Թշնամի էր Գաղղիոյ: Եւ վառեցաւ հուր
մարտին ամենուստ միանգամայն և սկսաւ
երկբառնան ամ ընդդէմ Գերմանիոյ, և ամն
քան և հինգ ընդդէմ Սպանիոյ: Ալ հա-
մառօտիւ գիցուք առաջնոր զերացն վէպս,
ըստ պայմանի համառօտագիծ առաջար-
կեալս կարգի: Կայսրն Փերդինանտոս Բ
զօրանայր յոյժ յետ ի սպառ խորտակելոյ
զՓրեդերիկոս զարքային Պոհեմիոյ, և ընկճե-
լոյ զազգն զայն խրոխտ. մինչև Քրիսթեան
Դ Թագաւոր Դանեմոյ՝ ոչ կարացեալ ընդ-
դէմ կալ հզօր զօրութեան կայսեր, ձեռն-
Թափ լինէր ի գործոյ պատերազմին յետ
պարտութեանն ի ԼուԹթեր, կորուսեալ
զՓոմերանիա և զսուրնա Պալթիկ ծովուն:
Ալ վրիպեցաւ յոյժ կայսրն արկանելով
յիշխանութենէ զքաջ զօրավար իւր զԱլբ-
Թէյն զպատճառ յաղթութեանցն, և ցը-
րուելով զզօրս իւր ի Լեհաստան, ի Սաորին
Նահանգս և Իտալիա. քանզի պատեհ հա-
մարեալ զժամանակն Ռիշըլիէօ, և առ երեսս
պատրեալ զնա խաղաղութեամբ, յորում

նէր ի ծածուկ զալքային Շուէտաց զկուս-
Թաւոս Ատոլփոս. Սա երիտասարդ աշխոյժ
սակաւաձեռն գնդաւ միեցաւ ի Գերմա-
նիա. և իբրև ծաղր արարեալ արհամարհէին
զնա կայսերականքն, նա ի գլուխ երկուց
ամաց կոխեաց գոգցես զողջոյն զԳերմա-
նիա ի վիճակս մինչև ցԴանուբ և ցՀռե-
նոս. խորտակեաց զզօրս կայսեր բազում
անգամ, և սպան զքաջ զօրավարն Թիլլի
(1631): Ահաբեկ լեալ կայսրն աճապա-
րեաց կրկին կացուցանել զվալդէին, զա-
ռաջս առնուլ յաղթական Թշնամեաց: Ան-
կաւ Կուսթաւոս ի Լիւցէն (1632), և զօ-
րացաւ կայսրն ի վերայ Թշնամեաց իւրոց
ի Նորալէնկ. աճապարեաց Ռիշըլիէօ, և նո-
րոգեալ զդաշինս միաբանութեան յարոյց
զօր ասասիկ ի Գաղղիոյ: Բանակն հիւսի-
սային խաղաց ընդ զօրավարութեամբ Ա-
Թինչլհանի և Պրիղեայ ի Բեղգիա, և վանեալ
անակ զԹշնամին՝ կալան զաշխարհն, և ան-
ցեալ միացան ընդ Հոլանտացիս. այլ ան-
գԹութեամբ իւրեանց ի Թիրլեման սարսու-
ցին յինքեանց զԲեղգիացիս, որով կրկին
զօրացան կայսերականք. իսկ գունդք զօ-
րացն ի Գերմանիա փոփոխ բազդիւ մղէին
զմարան:

Յիտալիա ձախողեցան իրք Գաղղիացւոց, և զօրավարն Քրէքի, որ նիզակցութեամբ
դբաւին Սաւոյեայ, և դբաւին Փալմոյ և Ման-
Թուայ մարանչէր, խորտակեալ գարշ առ-
նէր ի Գաղղիա մինչգեռ յաղԹութեամբ
զօրանայր Ռոհան և արկանէր զկրիզոն

ընդ պաշտպանութեամբ Գաղղիոյ (1635)։ Իբրև ձեռներէց լինէր Ռիշըլիէօ առնուլ զՓրանկ կոմսութիւնն, յանկարծ զօրավար կայսեր քաջն Փիք-քօլոմինի քառասուն հազարաւ յարձակեցաւ ՚ի Փիքարտիա և ՚ի Կամպանիա. անդէն և այլ բանակ կայսեր ընդ առաջնորդութեամբ արքային Մաճառաց մեկեան ՚ի Բուրգոնիա (1636)։ Ընդ լուր պշրաւանայս աստանեցաւ մայրաքաղաքն Փարիզ, և քրիմինըլիէն ամենուստ լըսելի լինէր ընդ դէմ կարգինալին. յարեան կրկին ոտիքն, այլ վաղ ընկճեցան. և ՚ի հեռանալ թշնամեաց՝ խաղաղացաւ առանին վըդոմն։ Ի սմին ամի մեռանի Փերտինանտոս Բ, և պայազատն զնա որդի նորա՝ կալեալ զանուն հօրն, այլ ոչ և զբաղդն։ Էր զի յաջող և էր զի ձախող մղէին մարտք, երբեմն մեծամեծ յաղթութիւք և երբեմն աղէտալի հարուածք ՚ի վերայ եկեալ։ Սակայն գիտաց միշտ քաջն Ռիշըլիէօ յօգուտ առնուլ զյաղթութիւնն, և գտրմանն տանել աղէտից հարուածոց. և թէպէտ անմարթ էր խափանել զնուազուծն մարդկան և գրամոց ՚ի Գաղղիոյ, սակայն և ըստ այսոցիկ տառապանս զհաւատ պարծանս, ծածկելով զբազում գաւառս Գերմանիոյ ողորմաւբերակօք, հանելով բռնութիւն ՚ի Սպանիացւոց զգաւառս և զքաղաքս, ձեռն տալով Քաթալոնացոց յապստամբութիւն. նոյնպէս ձեռնտու լինելով և յապստամբութեան փորթուկալացւոց ՚ի կանգնել զիւրեանց առանձին թագաւորութիւն, և միանգամայն ասել՝ աղօտացուցեալ մթագնէր

ՀՀՂՈՐ ՁՈՐՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ Աւստրիոյ որ սպառնայր ծառայեցուցանել զբովանդակ Եւրոպա: Նախկին պատճառք յաջողութեանց Գաղղիոյ ի Գերմանիա եղեն իշխանն Վէյմար Սաքսոնիացի և ծովակալն Կէպրիան. և յԻտալիա կոմսն Հարքուր, որ արշաւեաց ընդ Նեապաւլիս հնչակաւոր արար զամն 1640. և օգնականութեամբ պատանւոյն Թուէնայ զօրագլխի հեծելագնդին հարաւ աներկիւղ մերձ ի Փիէրս ընդ զօրս Սպանիացւոց կըրկին առաւելեալս բազմութեբ քան զիւրան, և տարաւ յաղթութիւն մեծ: Մարդիկն Լէկանէզ զօրավար սպանիական բանակին, ոչ կարելով միխիթարել ընդ ձախող եղս պատերազմին, տայր առել փողով ցզօրավարն Հարկքուր. «Եթէ ես Լէկանէզ Թագաւոր էի Գաղղիոյ, հրաման տայի հատանել զգլուխ Հարքուրայ, որ այնպէս յանդգնեցաւ դիմագրաւել փոքու գնդաւ ընդդէմ հզօր բանակի Թշնամւոյն: Պատասխանի արար նմա Հարքուր. «Եթէ և ես Թագաւորէի Սպանիոյ, հարկանէի զպարանոց Լէկանէզի, որ յաղթեցաւ ի դոյզն գնդէ Թշնամեաց»:

ԳԼՈՒԽ Ը.

Աւուրս Թուրին տալոյ. առանին խռովութիւնք ի Գաղղիա. մահ Ռիշելիէօ և Լուդովիկոսի արքայի:

1640 – 1643

Ընդ հուպ Էկանէզ վերսանին զօրացեալ կամէր լինն վըէժինդիր լինել պարտուԹեանն՝ պաշարելով զքաղաքն Քազալ: Կոմսն Հարկուր խաղաց ընդդէմ նորա ազատ համարձակ, և ընդ կրկին պաշտիչապակս բանակին մխեալ ի նեղութ՝ եհար զնոսա ի հարուածս, և խրախուսեալ յաջողուԹքն՝ յարձակեցաւ առնուլ զՏաւրինոն (Թուրին) քաղաք, զորոյ զամրոցն ունէին յայնժամ Գաղղիացիք: Էկանէզ կրկին զօրաժողով լեալ եկն յօգնուԹիւն քաղաքին. և չկարացեալ միջամուխ ի նեղութս լինել ընդ կարգս զօրաց կոմսին, ձեռն էարկ պաշարել զնա և ի սով ըմբռնել: Ընդ եր տեսանել տեսարան նոր՝ անկուր ի վէպս պատերազմաց. քանզի պաշարեալ զԳաղղիացիսն յայս յամրոցին՝ նստէին շուրջ Սպանիացիք տեալք քաղաքին, և կոմսն Հարկուր պաշարէր զնոսա փակեալ ի քաղաքին, և նոյն ինքն արտաքուստ պաշարեալ կայր ի Էկ-

կանէզ մարգիզէն: Սասկանայր սուն
յամբոցին և՝ ի բանակի գաղղիացւոց և ա-
ռաւել ևս՝ ի քաղաքին: Ճարտարապետ ոմն
ապանիայի կամեցեալ դարման տանել սո-
վոյն, ճարտարեաց եգիանորատեսիլ ռում-
բըս, և լցեալ զնոսա ալերբ՝ հնարէր ձգել
՝ի քաղաքն զվնասուածք պաշարողացն, այլ
ոչ եհաս յամբոկ գործոյն, և ամենայն
ռումբք գոպցեա անկան՝ ի բանակն գաղ-
ղիացւոց, որով շահ մեծ լինէր նոցա այս
գիւտ՝ ի վնաս թշնամեաց: Յաղթեաց կոմ-
սն և սովոն և այլոց խոչընդոտան խափան-
արարաց մարտին, և եմուտ յամբոխաւ
՝ի Թուլոն: Այս կարևոր աշխարհակալու-
թիւն մեծահռչակ փառաւորեաց զնա, մինչև
առել ձիոյ՝ ի զօրավարաց Սպանիացւոց.
“ Յանիալն էր ինձ Հարիքուր լինել քան
կայսր ”: Սակայն յետ այսորիկ ոչ այնչափ
յաջողէին նմա գաղղիոյ. քանզի և առանին
պրպիռք խառնուածեան և գժկամակու-
թիւնք իշխանաց ընդդէմ կարդինալին, և
ապստամբութիւն նոցա մեծապէս արգել
լինէր զնոսա գաղղիոյ. ուր մանաւանդ և
ժողովուրդն յոգիս ապատան յանդուգն
ատելութենէ և՝ ի ծանրութենէ հարկին,
յապստամբութիւն խրախուսէին՝ ի նո-
մանոխս. ուր և խռովութիւն կարդինալին
յաքսոր և՝ ի մահ նոցա՝ առաւել ևս վա-
ռէր զատելութիւն ամբոխին ընդդէմ նո-
ցա: Այլ որչափ նոքա խլացուէին, և ևս յա-
ւելոյր զօրութիւն Ռիշելիէօ՝ ի յընկճել զնո-
սա, և ծանրանայր բռնակալութիւն նորա

ի վերայ ահագնութեան : Ոչ ապրեցաւ ի բարկութենէ նորա և սիրելի զինուորքն Թագաւորին Սէնք-Մարտ և բարեկամ նորին Թու :

Յետ այսորիկ քանզի խօթ էր կարդինալն՝ Թիւինապահք նորա ի վերայ ուսոց բարձեալ բերէին զնա ի պահաւորակ ինչ ի ձև սենեկի, և ի Հանապարհին տապալէին դրունք քաղաքաց՝ որ անձուկք էին յանցս պահաւորակին : Այսպէս ի ծայր մեծութեան հասեալ Ռիշըլիէօ՝ մահաբեր խօթութեամբ ոչ երկարեալ այլ ևս զկեանն, վախճանէր զաւուրս իւր (1642) : Ոչ ապացին գաղղիացիք ընդ մահ նորա, քանզի բազմաց ատեալ էր նշանաւթիւն նորա. սակայն կոյս կորոյս գաղղիա զայր հանճարեղ, որպիսի սակաւք գտանին : Ձգաւոք ոք նշանաւ մեծախորհուրդ նբերև զսա ի կատարել գործոց մատցն, կոխելով զամենայն զնաչ և զնաւթ : Նշանն մայր և Թագուհի տիկնին, դուքսն Աւրելիանի և բազումք յարքայական նշանաց և յաւագաց՝ ոխերիմք նորա և ծարաւիք էին կոտորեանն. չէանց բնաւ ամ մի առանց գալոնի դաւաճանութեան ի կործանումն նորին և համ՚ի ապանութիւն : Թագաւորն յորոյ յաչսն պատուականք էին ծառայութիւնք նորա, առաւել քան զայլս տագնապէր զնա և յերկիւղս տակնուվրայ արկանէր. քանզի Թէպէտ միշտ մեծարոյ եղև նա յաչս նորա, այլ ոչ երբէք սիրելի, համ՚ի քնէ առ անկակից նախանձն, համ զի մտաւոք Ռիշըլիէօ զծա-

ռայութեան իւրոյ զպարտս, տուեալ իւրաքանչիւր արդեօք պատճառս գրդռելոյ զարքայն ի ցասումն կամ ի դժկամակութիւն, որ արդարև ծանր և սովորելոյն հրամայել երկուց հազարաց բիւրուց Գաղղիացւոց: Ա-հա ոչինչ այլ այնպէս հաւատախտ սայ մեծութեան հանճարոյն Ռիշըլիէօ, որպէս կալն և մնալ ի բարձ աւագութեան ցնահ՝ ընդդէմ դալանիկ դաւաճանութեան նախանձոտ և չոր աւագանւոյն, ընդդէմ հակառակութեան տան Թագաւորի, և որ մեծն է ընդդէմ ատելութենէ ահաւոն իւրոյ՝ որում հպատակեր և իշխեր միանգամայն:

Ոչ ի մի ինչ կամ յերկուս մեծանուն եղև Ռիշըլիէօ, այլ յամենայն ազգս հանճարեղ խորհրդոց յօգուտ իւրոյ աշխարհին. քանզի յետ ամրապնդելոյ զիշխանութիւն Թագաւորին, փոյթ կալաւ և ի զարգացումն գիտութեանց և արուեստից: Հաստատեաց և Ճեմարան գիտութեանց ի Գաղղիա կազմեալ ի քառասուն իմաստանոց, որոց ուշ նպատակ էր մաքրել զբնիկ բարբառ իւրեանց և հաստատուն օրէնս կարգել լեզուին: Ի սիպ օրինակի Ճեմարանիս՝ կանգնեցան ապա և այլք ի պայծառութիւն Գաղղիոյ:

Զկնի վախճանելոյ կարդինալիս՝ ոչ ինչ երկարակեաց լեալ և Լուդովիկոս ԺԳ մեռանի: Սա ընդ բուսոյ բարուցն երկչոտ և անհամբոյր, եղոյց յանձին և առաքինութիւնս, այլ ոչինչ հռչակաւորս. սակիկար ի մեծամեծ խորհուրդս, այլ գիտեր զյարդ

նոցին և ձեռնատու լինէը ի կառավարուածն։ Սակաւապէտ էր, ժուժկալ, բարեպաշտ, արդար, Թշնամի պերճութեան, քան զամենայն զբօսանս որսատէր էր յոյժ. նախանձաւոր ի պատիւ կրօնիցն և իշխանութեան, և որ ինչ նպաստաւոր Թուէր նոցուն՝ փութով մեծաւ ձեռն արկանէր յայն ամենայն։ Ուիշըլիէօ պաշտօնեայ նորա նահատացոյց զփառս տեառնիւրոյ, այլ Լուդովիկեայ հաստատուն պնդութիւն ընդդէմ բերմանն բռնութեանն՝ ցոյց է խնամատարութեան նորին և մեծանձնութեան հոգւոյն, և յաւէժական փառք անուան նորա։ Քաջ էր իբրև զՀենրիկոս Դ, այլ ոչ որպէս զնա աշխոյժ և արագ ի տիրապետել։ Առատաձեռնամտեսչութիւնն արար զնա որդի և հայր երկուց հզօրագունից Թագաւորաց Գաղղիոյ, Հենրիկոսի և Լուդովիկեայ. ամբացոյց և ևս զԹագաւորութիւնն հայրենի, և պատրաստեաց որդւոյ իւրում Լուդովիկոսի ԺԴ զհրաշալիս Թագաւորութեան նորա։

ԳԼՈՒԽ Թ.

Զօրանալ Գաղղիացւոց ՚ի վերայ Ընդհակառակ ի-
րենց առ Մանկունեամբ արտայքն Լուդովիկեայ,
և նեղին աղմուկ խառնուրդեանց:

1643 – 1648

Մանուկ հնգամեայ էր Լուդովիկոս ԺԴ յաջորդեալն ՚ի գահ Թագաւորութեան Գաղղիոյ ընդ խնամակալութեամբ մօր իւրոյ Աննայի Աւստրիացւոյ: Յաղթութիւն մեծապայծառ փառաւորեաց զՀանդէս յուղարկաւորութենէ հօրն, և շքեղ ևս գործեաց զմուտս Թագաւորութեան նորա, որ հանդերձեր նման իշխանութիւն երկար և փառաւոր քան զամենայն Թագաւորսն Գաղղիոյ: Քանզի գունքան Ընկիէնի Լուդովիկոս Պուրպոնեան որդի իշխանին Քոնտեայ եղեալ ՚ի պատերազմին զՀանդերձեալ զնուր մեծութիւն: Զայն առաջին նուագ զօրավար կացեալ, պատանի քան և երկուց ամաց, իբրև նոր ումն Ալեքսանդր ցուցաւ հըմտութեամբ քաջութեանն ՚ի գաշտին Ռոքրուայ՝ Թագեալ անդ զՀզօր բանակ Սպանիացւոց, որ ՚ի հարիւր և չիսուն ամաց հետէ Տամբաւեր քաջութեամբն և հրահանգօք: Եւ յաղթութեամբն այսու խրախուսեալ

զԱբան, կանգնեաց այլ նոր յաղթութիւն
ի վերայ կայսերն ի Գրիպսուրկ, և զբառամբ
հած զքաղաքս, զԹիոնվիլ, զՎիլհալսպուրկ,
և զՄոգունտիա: Յամին երկրորդի խաղաց
ընդդէմ քաջի զօրավարին Մերսեայ, որ
հարեալ զԹիւրէն զօրացեալ էր ի Գերման-
նիա. բախեցաւ ընդ նմա դուքսն ի Նոր-
լէնկ, խոցոտակեաց ի սպառ, և զնա ինքն
զՄերսէ մահացոյց անդէն: Ի նմին ժամա-
նակի և դուքսն Աբրահամն և կոմսն Հար-
քուրայ զօրանային ի Փլանդրիա և ի Բա-
թաւնիա, և ի ծովամարտի յաղթէին Գաղ-
լիացիք Խաղացուց: Իսկ դուքսն Անկլիէնի
յետ սպանանելոյ զՄերսէ զզօրավար կայ-
սեր և զօրացուցանելոյ զՏէտա Թիւրէնայ,
դարձ առնէր ինքն ի Գաղղիա, և արագ ա-
րագ Թափեալ զՏանքերք խաղայր ի Սպա-
նիա և նաւեր զԼիսբոնա քաղաքաւ: Ա՛յլ
կրկին յապաղեաց օգնութիւն ի կողմանէ
Իւրոցն, բռնադատեցաւ Ֆէռնէմափ լինել
ի գործոյն. սակայն ոչնչ յարուածեան
քաջութեանն նուազեալ, գայր Հանէր զվէմ
պարսպութեանն յաղթութեամբ ի Փլան-
դրիա ի վերայ մեծի գքսին Լէոբոլտոսի,
յորում նիզակակից էր ինքեան և քաջն Թիւ-
րէն: Անդուլ անընդհատ ի չորեքտասան
ամաց հետէ հանապազորդեր պատերազմին
ի մէջ կայսեր և Գաղղիոյ, և Գաղղիացիք
յամ յաղթութիւնս նորանորս երկրակալութիւն
ի նեղըս խառնէին: Տաղտկացեալ Փերթի-
նաքսաս ի բազում պատերազմացն, մտա-
ւանդ վն յերեսուն ամաց վերսվեալ խաղա-

ղուեթի աշխարհին՝ յոգիս էր ապաստան պե-
տուեթին, խոնարհեցաւ գալ ի հաշտուեթե:
կնքեցան դաշինքխաղաղուեթեանն ի Միւնս-
թէր կամ ի վեստֆալիա, յորում Ալսա-
ցիա և այլ գաւառք ինչ ի ձեռս ճնացին
գաղղիացւոց. և ամիսփեցաւ իշխանու-
թիւն կայսեր՝ տուեր ևեթ ճնացեալ նախ-
կին զօրուեթեանն (1648): Եւ այս վիայն
էղեն տոյժք կրօնից, զի բարձր ի գլուխ ամ-
բաստան ոչնդատուորք ի գեղ-
մանիա: Շուետք զօրացան յոյժ՝ զփոմե-
րանիա և զայլ բազում քաղաքս հատեալ ի
կայսերէ, և հինգ հարիւր եիւր ակուեթս ո-
կիս հանեալ ի տուգանս: Անդ հաստա-
տեցաւ Հելուետիականն ազատ հասարա-
կատէտուեթիւն, և Միացեալ նահանգաց
ինքնագլուխ իշխանուեթիւն: Սպանիա ոչ է-
մուտ ի պայմանս ուխտին. քանզի ի յի-
շատակ առաջին փառաց պայծառուեթեան
կարծէր զեռ ևս կանգնել վերսանին ի կո-
ծանմանէն. բայց դժուարին էր նմա մըր-
ցել ընդ երկար, եթէ ոչ նեղչին դժուա-
թիւն ձեղքեալ զդաղղիա՝ լինէր խափան
ընկճելոյ զնսանանձընդդէմ հակառակորդն:
Քանզի ալքսանդր ընկճեալ ընդ երկաթի
պատալանաւ Ռուսքսէմբուրգի, դէպ ժամանակ
համարեցաւ ամբառնալ զգլուխն ընդդէմ
կնոջ վոյ և մանկան. Թէպէտ դշխոյ մայրն
Աննա աստրիացի խնամակալ թագաւո-
րուեթեանն՝ սիրելի էր յաչս ամենեցուն, այլ
ոչ նոյնպէս և Մազարինի առաջին պաշ-
տօնեայ նորա: Սա ծննդեամբ Իտալացի, և ի

չփոթել հակառակութեանց անեալ, դնւրա-
մէտ էր առ ամենայն ինչ. խորամանկ,
պատրաստ ի խոստումն, այլ ոչ հաստա-
տուն ի կատարել: Օտար յոյժ ի բուռն
գնացից Ռիշըլիէոյն որ ահարկութեամբն
նուաճեաց կալաւ զամենայն, սա ընդ գոլ-
ումն խորամանկութեան և ճարտարու-
թեան չանայր ի նոյն ի կէտ նպատակի
հասանել: Այլ խոտորնակի ընթացք վար-
ժութեան նորա անզօր ամենևին՝ ոչ զեր-
ծուցին զնա ի նախանձուէ, որ հետամուտ
է փառաց մեծի իշխանութեան, և ոչ ա-
զատ կացուցին զնա յարհամարհանաց՝ որ
անբաժ է յատկիկար վարչութենէ. և ոչ
նակ յերկնատատակութենէ, որ պատրաս-
տակամք են միշտ յառնել ընդդէմ իշխանու-
թեան՝ որ անգէտ իցէ արուեստ երկե-
ղութեան: Աւաւել ոխերիմք ի
հակառակորդն Մածարինեայ էին աւա-
զանին փարիզու: Ոմանք ի խորհրդակա-
նաց ոչ զատրէին ի բռնութեցն զծանրու-
թենէ հարկաց և զվատնելոյ գանձուն, և
սատկութեամբ երգիծանաց իւրեանց յին-
քեան յանկուցանէին զկերտս ժողովր-
դեան թագաւորեալ քաղաքին. ածին և
զաւազանին յայն պայման՝ մինչև մի մի տալու-
ամբք երևեալ նոցա յարքունիս ընդդէմ
թագաւորական իշխանութեան: Խորհեցան
արքունիքն ահաբեկ առնել զնոսա՝ ձեռն
արկեալ յերկուս ոմանս յառաջնորդաց
խռովեցս ի պրանքմէնել և ի պրուսսէլ, ման-
նաւանդ զի պատեհութիւն ժամանակին

օգնական Թուէր նոցա. այն ինչ նո-
րոգ յաղթութեամբն Լենոսայ վառաւո-
րեալ պերճանայր կարդ վարչութեանն:
Բայց քանզի կարի վտահացեալ նոցա յին-
խանութիւն իւրեանց՝ անփոյթ արարին
զհատատաւութենէ առաջարկեալ գործոյն,
վասն որոյ'ի լուր կատարած եղիկուց խորհր-
դակցաց գրգռեցաւ քաղաքն ամենայն և
'ի զէն գիմեաց խառնիճաղանձ ամբոխ ռամ-
կին, կանգնեցին անդէն պատնէշս յամե-
նայն փողոց, և զշխոյն պաշարեցին ընդ
Մածարինեայ յատարանս նորա. և ազա-
ղակէին զայրագնեալ սպառնալեօք յօշ յօշ
պատառել զկարդինալն: Բռնադատեցան
ազգուհիքն զինքանել սպասամբայն՝ Թո-
զեալ ազատ զնորհրդականս, որք 'ի ձայն
խնդութեան և հրապնուց ածան 'ի տունս,
և պնդացեալ հպարտացաւ ամբոխն ընդ
այս յաղթութիւն իւր (1648):

ԳԼՈՒԽ Ժ.

Պոպէրպղ փաղփական:

1648 – 1651

Թէպէտ սպրնկար սկսարութիւն ազգու-
նեաց ծածկել ծածկեաց զապստամբու-
թեանն հուր, այլ ոչ զինքոյց. քանզի հակա-

ւսակորդք կարդինալին բազմացեալ միաբա-
նեցան յիւրեանս՝ պարտաւորս զանձինս կո-
չելով, և համարձակէին բողոքել ընդդէմ
կարդինալին՝ ինդրելով արկանել զնա յիշ-
խանութենէ: Նա այսու, որպէս կանխեալ
ասացաք, վրէժխնդիր լինել անձանց կամէին
վասն ընդ երկար ընկալեալ նուաճելոյ ընդ
իւրս լծով Ռիշըլիէոյի: Առաջնորդ եկաց
ապստամբացն եպիսկոպոսն Վաննէի օգնա-
կան արքեպիսկոպոսին Փարիզու, այն որ
յետոյ եղև կարդինալ Ռետեայ, երիտա-
սարդ հզօր և հանճարեղ, այլ յանդգնա-
փառասէր և ձեռներէց և խռովիչ, որ՝ի
չկարէին առնուլ՝ի ձեռին զանձ սերու-
թեան՝ առաջնորդ եկաց կամեցողացն վէր՝ի
վայր խռովել զնոյն:

Ձունեին զոք այլ ապաւէն մանուկ Թա-
գաւորն և գվնոյ մայրն և պաշտօնեայն ընդ-
դէմ խրոխտ միաբանելոյ քան զյաղթականն
՝ի Ռոքրուա. որ անդէն ածասպարեաւ՝ի
հանդէս քաջութեան իւրոյ և հաւատարմու-
թեան եին անյապաղ առաջի մայրաքա-
ղաքին: Անդամանեալ արհամարհեաց նա զը-
թշնամին, և ուժ հազար արամբ պաշարեաց
զքաղաքն ընդ արձակ և մարգաշատ: Մե-
ծի հանճարոյ էր խորհուրդն, և բազմա-
փորձ հմտութեան կատարումն նորին, և ընդ
հուպ առացուք զվախճան գործոյն: Ինկաւ
Փարիզ՝ի սով, և ոչ իշխեցին ապստամբք
վանել զնուաղուժիւն դնդի պաշարողաց,
կամ զի ոչ համարձակեցան՝ի կռիւ գալ
և կամ զի անյաջող անտի էլին: Վասն ո-

րոյ պաշարեալ ի քաղաքին՝ պաշտպանէին անձանց, որպէս զնարդ ոք յուսայր ի խաժ-
ժանէն անմարզ ի զէն և ի մարտ. և ըստ բանի ժամանակակից ուրուճն պատմագրի
“ Դիւրին էր յոյժ զօրաց Թագաւորին կո-
տորել զնոսա միանգամայն ի մի հարուած,
եթէ պատանէին զնոսա արձակ ի ձակատա-
մարտ ”: Այլ սակայն պատերազմն այս
ծաղրս առաւել վճարեցաւ քան արեամբ,
զի երկիծանօք և երգօք կռուէին քան վա-
ղակատարտս և զինուք, մինչև խաղաղու-
թիւն լինէր, հնարհեալ նենգութեամբ
քաց, և առաջնորդաց նոցա բարձա աւա-
դութեան. և Մածարինն հատատէր յիշ-
խանութեան իւրում (1649):

Այլ ոչ վայելեաց Մածարինն ընդ ե-
կար ի հանդստեան. քանզի նշխանն Քոն-
ան՝ որ ազատեացն զնա՝ ոչ ևս տահման
դնէր պահանջանացն. և զի լսեա արժանի
վատակաց ջննակալս վարձս, սկսաւ ան-
դոանել զէշխան և զկարդինալն: Մածարի-
նի առանց ինչ ակնածութեան վարէր, ա-
զատ զանձն համարեալ յերախտեացն իւրոց
և բռնատէր առն. հատատեաց ի մեռ ան-
կար առնել զնա ի վեստել. և զամենայն
հնարս նենգութեան ի կիր արկեալ յաջո-
ղեաց մահաբանութեամբ եպիսկոպոսին փա-
րնզե և այլոց դէմսատրաց ի Պարսատր ա-
նասանելոց մերկացուցանել զքոնոե յամե-
նայն փառաց. քանզի ի ժամանակի անդ
զաղանի գաւառանութեանց և երկպառա-
կութեանց ըստ հաճոյից ոմանցն ամենայն

ինչ գործէր, զոր եպիսկոպոսան վարէր ըստ
կամի : Ընդպատճառ ձերբակալ եղև իշխանին
Թագաւորացն, և ոչ ոք խլըտեցաւ ինչ ընդ-
դէմ. զարմանք են, զի ամաւ յառաջ՝ի կա-
նանաւորել երկուց խորհրդականաց գլուխը
քալաքն ողջոյն և վառէր առանին պատե-
րազմ, իսկ այժմ և ոչ ոք շարժէր ընդ այս :
Ազատեալ Մածարինն՝ի բռնութեն Թշնամւոյն,
եռեւս զի չունէր այլ պէտս օգնականութե
ուրուք. ոչ ևս այլ ակն ածէր յեպիսկոպո-
սէն. սակայն ոչ յապատեաց զլջանալ ընդ
գործն ապաշնորհութեան. քանզի յարտոյց
եպիսկոպոսան ընդդէմ նորա խառն մեծ
ապատամբութեան, մինչև ամենայն կար-
գաց մարդկան վիրաւորել՝ զազատութիւն
ինդրէին զՔրոնաեաց և տարապիր առնել
զՄածարինն : Զարհուրեցաւ կարդինալն
յանձն իւր, և չոգաւ բանալ ինքնին զդուռն
բանտի իշխանին. այլ նա ոչինչ ամաչեալ ա-
նագան ընտրհիւն, և վայրապնեալ ընդ նախ-
կին նախատինան՝ ոչ ևս հաշտեցաւ երբէք
յեւս այնուրիկ ընդ նմա (1651) :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ամպոսմբուրիան Քոնքեայ իշխանին ընդդէմ հայրենեաց, և պաթերազմանք ընդ Սպանիացիս:

1651 – 1660

Զկնի ամաց լինել իբրև առնոյր ազքայողդին զԹագաւորութիւնն՝ ամաց լեալ ջոլեբաասանից, եմոլ Քոնաէ ցասմամբ զարքունեան ասելով, Թէ ցորչափ Մածարինի սիրէ յարքունիս՝ անմարթ է ինձ երևել անդ վտահութեամբ: Տէղի եա կարդնալն առ փոքր մի մրրկաց ժամանակին, այլ այս չարգել զհակառակութիւն Քոնաեայ՝ որ զէն ի ձեռին խաղայր ընդդէմ իւրոցն: Յաջողեաց եգիտ Գաղլիա հակառակորդ նմին զքաջ զօրավարն զԹուրէնն, որ ի ժամանակի կապանաց Լշխանին ի կոլին լեալ ազատամբաց՝ զէն ի ձեռին ջանահնար լինէր խորտակել զչղմայս նորա: Այլ վաղ մահաւ ընդ ծառայութեամբ Թագաւորին, ոչնչէ իւիք խախտեցաւ ի հաստատութենէն: Եւ կացեալ սա առաջնորդ բանակին ընդդէմ ազատամբ Լշխանին, քանզութեամբ կասեցոյց զնա ի Պէնոյ, մինչ Թագաւորն և ազքունիքն ողջոյն փոքր միւս ևս ի ձեռս անկանէին Մշնամեցւոյն. և հալ վանեաց զնա յարևնահել մարտին որ յա-

թուրքաց սրբոյն Ընտանի, ուր եմէկ չէր արձակեալ սիկնոջն Մոնթանսիէ դառը կասմանի դքսին Աբդելմոնի զմնդանօմն Պասմիչեայ ընդդէմ Թագաւորական զօրուն, փակեալ իշխանն մնացորդ զօրօքն առ պարսպաւ մայրաքաղաքին, կամ դերեալ եւ կամ մահ առաջի կայր նմա (1652)։ Չերծաւ ի վտանգէն ձեռնհասութեամբ քաղաքացւոց, այլ սկար էր յոյժ ընդդէմ զօրութեամ Թշնամեացն. և չկամեցեալ նոքա իրօք իշխանին առնլ տալ յաղթութեամ Մածարինեայ, անկաւ առ Սպանիացիս։ Սոքա զերկպառակութեամբն Գաղղիոյ յօդուտ իւրեանց արկեալ, զանցելոց պարտութեանցն զվրէժ լուծանէին, և արագ արագ էրկրակալութեամբ յառաջ խաղային։ Եւ մեծամեծաց ևս արդեօք յաջողութեանց ակնկալութիւն էր նոցա ընդ առաջնորդութեամբ իշխանին Քոնտեայ, զորոյ զքաջութեան անձամբ առեալ էին զփորձ, այլ նախանձ զօրավարացն նոցա խափան էարկ հանձարոյ հմտութեանն, որով յօրում ուրեք խորտակեցան, և զոգեկս յամենայն դէպս ոչինչ վնասէին։ Թիւրիզն որ չաղխէչ էր գլխոց նոցա՝ պատեալ զարտութիւնս քաջութեանց իւրոց յաղթութեամբ Տիւնայ և առեամբ Տանքերքայ, յորում նիզակակից էր Գաղղիացւոց և Քրոմուէլ առաջնորդ հասարակապետութեան Անգղիոյ, այլ պատերազմող և խորհրդական խորագէտ փառասէր, որ բռնամահ կորզեաց զկարոլոսի առաջնոյ յայն բաղդ զանձն էր ամբարձեալ (1658)։

Ի վախճանի ապա տկարացեալ Սպանիացւոյ քաջհռչակ ամեայ պատերազմաք ի հաշտութիւն խոնարհէին: Դարձեալ այս խաղաղութեան, պիրենեան ասացեալ, յաւէտ ի տերութիւն Գաղղիոյ զՈւսիլլիոն, զԼրթոսա, զմի մասն Փլանդրիոյ և Լոքսեմպուրգայ. և հաստատեցաւ ամուսնութեամբ Լուդովիկոսի ԺԴ ընդ Մարիամու Թերեզեայ անդրանիկ գստեր Թագաւորին Սպանիոյ, և Թողութեամբ ապառամբ իշխանին Քոնտեայ:

Այս չքեղ հաշտութիւն գործ էր հանճարոյն Մածարինեայ. որ և երևելի յաջողութեամբ միանգամայն և քաղցրութեամբ և ակնածութեամբ որով վարեր ընդ աւագս և ընդ անաւագս, մեծարոյ ընծայեցոյց զանձն յաչս ժողովրդեան և սիրելի: Եւ զի չհանդրեաց ինչ վրէժս ի Թշնամեաց խրոց, նոյնպէս և ոչ ոք այնուհետեւ խորհեցաւ հակառակ իշխանութեան նորա: Եւ իբրև պատրաստեր վայելել յարդասիս վաստակոցն և պատել զվէրս տերութեան ի շիտակ Թշս անդ խռովութեան ընկալեալս՝ պակասեր ի կենաց:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ընտրութիւն Լուդովիկոսի ի յերես վերջութիւն արքունեացն, և ի նոր ընդունելութիւն նախարարացն։

1661 - 1671

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ որ առ երախտագիտութեան թոռեալ էր Մածարինեայ վերատանակ սէրս առ թեան, յետ մահու նորա զբռամբ առնոյր զնոյն ի քան և ջոլից ամաց հասակին զարմանալի ինն յաջողութեամբ և հասատատութեամբ. այն զի և անառես և անխնամ ի հրաշանգս՝ թուէր զհաճոյից եւեթ և զգրգռանաց ունել զձաշակ։ Սակայն պատմին գէպք ինչ յառաջ քան զամն զայնոսիկ, որով ծանեան յայտնապէս զհանճար նր որ կանխագուշակքն էին՝ թէ որպիսի ոք լինելոց էր արքայորդին։ Քանզի յամին 1655 երբեմն ազգ եղև նմա թէ ահա աւագանին ժողով գումարէր վասն քննութեան հրովարտակաց և արձանագրելոց զայնս, զոր օրինակ սովոր էր ի ժամանակս խռովութեան, Թագաւորն՝ որ էր յայնժամ պատանի եօթնեւտասանամեայ՝ անդէն ի գառնալն յորսոց գէպուղիղ ջոգաւ ի տէրն ժողովոյն, և առանց ազդ առ-

նելոյ Լամուա՝ ի նեղութս ի հանդերձս որսոր-
դի խարազան ի ձեռին. «Գիտեմ ամենայն
ոք, ասաց, զալեաս՝ որ ի ժողովոյ ձերոյ
Տրդեցին՝ ի մեզ. վասն որոյ հրամայեմ լու-
ծանել վաղվաղակի: Իշխանք նախագահ,
արդ՝ ի ղաս, և մի ումեք լեզի իշխանութիւն
խօսել զիրավարտանակաց խմոյ»: Վայելուչ
գիտակ հասակին, ազնուական գնացքն,
ձայն նորա և կերպարան, տիրապետ իմն և-
զանակ բանիցն զարհուրեցուցին զաւազա-
նին, և խոնարհեալ հնազանդեցան: Այլ
հաւատեաւ զինի մահու կարգինալին եղոյց
զանձն Լուգովիկոս արդարև Թագաւոր. և
յայնմհետէ կերպարանափոխ լինէր Գաղ-
ղիա:

Ազգիւալ խանգարեալ էին ազգունի գան-
ձուցն կարգք ի բաղում յերկար խռովու-
թեանց. իսկ Ռոլդէր արժանաւոր պաշտօ-
նեայ մեծի Թագաւորին ի կարգի եդ զա-
մենայն, յոմին կանգնեաց զվաճառակա-
նութիւն և զծովային զօրութիւն Գաղղիոյ,
զարիացուցեալ ծովեցոյց և զարուեստս:
Բազում ազգք ձեռագործ հաստատե-
ցան կամ ի կատարելութիւն ածան ի
Գաղղիա, որով զերծաւ աշխարհն ի ծանր
հարկաց ծախուց, որ վասն պերճասիրու-
թեանն ծախէին Հարստարութեան գրացն
ազգաց: Եւ գործէին յայնժամ ի փայլիլ
գործք ընտիր անկուածովք և գեղեցիկ նկա-
րուք և գունովք որ ի վեց գային ընդ գեղեցիկ
պատկերս Հարստարաց: Ի Լուգդուն էանէին
կերպասք ոսկեթել և արծաթել և մետաք-

սեայք, և Ճարտարութիւն գործոյն անցանէր զհոխութեամբ նիւթոյն: Ի միջոցին աւանի գործէին հայելիք մեծութեամբ, յատակութեամբ և ամրութեամբ գերազանցք քան զորս ի վենետիկ քաղաքի: Եւ միւս մատուցանէր Եւրոպայ ոսկւոյն զընտիր ընտիր յախճապակեայս, նրբութեամբ հաւատարս ձեռնականացն, և առաւելեալս իսկ յոյժ չքնաղութեամբ պատկերացն և փափկութեամբ գունոց:

Նեղցաւն Լանկըտոքայ միացոյց Լուդովիկոս զՄվիկիան ընդ Միջերկրականին, գործ արդարև հռովմէական մատց արժանի, նաւահանգիստք որ թողեալ էքեալ էին անպատսպար՝ շուրջ պատէին ձեռակերտօք և ծածկեալ լինէին նաւօք: Անկեանոյն ի մի կողմն փարիզու և դիտանոց աստեղաբաշխութեան ի միւսն՝ զհոյակապ արքունեաց բերէին զնմանութիւն: Կանգնէին ամրոցք կամ նորոգէին յամենայն սահմանապլուխս աշխարհին. եմուտ հրահանգ զինուորական ի զօրս, կարգ ի քաղաքական տեսչութիւն, և արդարութիւն ի գատս: Քաջալերս խրախուսանաց առին պիտութիւնք և մեկուսացութիւնք ի ներքոյ և արտաքոյ աշխարհին. այլ վաճառն յօտարազգի պիտոյ՝ թղթովք Քոլպէրայ գանձապետի ընկալան ոտձիկս և պարգևս, որք միտք մեծ էղեն թագաւորին և պաշտօնէի նորա և խնամատոյն: Կառնաւ Ակադեմիապետութեանց և գեղարուեստից զհետ էղև խուզարկութեան հնութեանց: Ճեմարանն պիտութեանց

ձեռն էարկ ՚ի զարգացումն բնաբանական
գիտութեան, և վարժարանք նկարչութեան
արձանագործութեան և ճարտարապետու-
թեան ՚ի լոյս ածին բազում երևելի գործս
ճարտարաց, պայծառացուցեալ և զիտուս
Գաղղիոյ: Համառօտ ասել, ամենայն ինչ
մեծաբարբառ քարոզէր՝ թէ փծռաց և մե-
ծութեան Գաղղիոյ գար էր սքանչելի թա-
գաւորութիւնն Լուդովիկեայ ԺԴ: Մե-
ծափառ իշխանութեամբ վարէր Լուդովի-
կոս ընդ արտաքին պետութիւնս. ձեռն
տայր փորձուկալաց ընդդէմ Սպանիացւոց.
օգնէր և Լեոբոլտոսի կայսեր ընդդէմ Օս-
մանցւոց: Դաշնակցէր ընդ Հոլանտացիս ՚ի
տուրևառիկ վաճառականութիւն, և ՚ի ձեռն
դքսին Պօֆորայ սրբէր զՄիջերկրականն
ծով յասպատակութենէ Պէրպերացւոց,
տարեալ զերկիւղ զինուցն մինչև ՚ի Ձեզայիր:

Ցետ այնորիկ կարգէր նոր զինուորու-
թիւն ՚ի ձեռն քաջ պաշտօնէի իւրոյ Լու-
վուայի, և նոքօք հզօրացեալ պերճանայր
թագաւորականն իշխանութիւն և Գաղղիա:
Ապա ՚ի մեռանել մեր իւրոյ Աննայի Աւս-
տրիացւոյ պատճառեալ զժառանգութեան
իրաւունս՝ յերկիս եօթնեակս ՚ի ձեռն տա-
նոյր զԳաղղիականն փղանդրիա և զՓրանկ
կոմսութիւն: Այլ իբրև զարթեան Հոլան-
տա, Անգղիա և Շուեթք ընդդէմ Գաղղիոյ,
բռնագաւազեալ Լուդովիկոս դաշտիւք Ա-
քուիսկրանա թողուլ զՓրանք կոմսութիւն,
յաւելեալ ՚ի տէրութիւն իւր զՓլանդրիա
(1668):

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատերազմ և արշաւանք Լուդովիկեայ ի Հոլանդա:

1672 – 1674

Ի ժամանակին յայնմիկ վիքացեալ Հոլանտացւոց յաջողութեամբք իւրեանց և նոր ձոխութեամբ կալուածոց որ ի Հնդիկս, մոռանային զերախտիս Գաղղիոյ՝ որով ամբարձեալ կանգնեցան, և ժպրհէին իսկ յոխորտալ ի վերայ Թագաւորին որ քան զամենայն Թագաւորս ժամանակին հզօր էր զօրութեամբ և խիզախ: Իբրև ի ծայրեղիս յայս յանդգնութիւն յաւելին և նախատինս, քանզի եաւն հատանել գրոշմած ի ակսպ պատկերի դեսպանին իւրեանց Յեսուայ՝ որ ի Գաղղիա, և արձանագիր ի նմա օրինակ զայս. "Հանդէպ երեսաց իմոց և կայց արեգական,,. Յայտ իմն այսպէս առնելով իբր Թէ Հոլանտացին այն Յեսու անշարժ կարէր ունել զթագաւորն Գաղղիոյ, և կասեցուցանել զնա յաշխարհակալութեանցն՝ զոր խորհէր, Լուդովիկոս նահանձախնդիր փառաց իւրոց՝ ծանրացաւումն լեալ ընդ յանդուգն ժպրհութիւն հասարակապետականացն, հատատեաց ի

մաի լուծանել ի նոցանէ զվնաս: Եւ կայցեալ Թագաւորն առաջնորդ զօրաց իւրոց, ընդ իւր առնոյր զքաջ զօրավարս իւր զԲանաէ, զԹիւրէն, զԱզուեռա և զայլ հասանել յեզր գետոյն Հռենոսի՝ դէմ յանդիման Թողեսայ: Այս գետ մեծ և յորդահոս պատնէշ ևն էր ի բնէ անմատոյց ընդդէմ Թշնամեաց. այլ Գաղղիացւոց խրախուսեալ գեր ի վերոյ քան զվիսս ի տեսիլ իւրեանց Թագաւորին, արկին զանձինս ի լոյղ. և ի գունդս գունդս միացեալ յաղթեին բռնութեամբ հոսանաց ջրոյն, և յանդիման աչաց Թշնամեացն ահիւ ըմբռնելոց ընդ խիզախ քաջութիւն նոցա՝ հասեալ ուներին զյաջմանէն: Եւ իբրև մերձ էին Թշնամիք անձնատուր լինել, անդ՝ մանկահասակ դուքսն Լոնգվիլ՝ եղբօրորդի Ռոնտեաց զգեաւեալ ի գինւոյ՝ մոռակեաց զերկիւղ իւր, եհաս մերձ ի պատնէշս Հոլանտացւոց, և արձակեալ զհրազէնն՝ ազաղակեաց. "Ձէ արժանի ձմերոյն խառնիճաղանձս այս": Այլ անդէն հարեալ ի հրացինուց Թշնամեաց անկաւ յանդուգն և խրոխտ պատանին, և ի նոյն հարուածէ վէրս ընկալաւ և հօրեղբայր նորա սուղ ինչ հետէ քան զնա կալով: Զայրացեալ Գաղղիացւոց ընդ վատնիգ զօրավարին իւրեանց, անյին ընդ պատնէշսն, և սուր ի վերայ եգեալ հոսորեցին զոմս և զամն (1672):

Ծածկեաց հետզհետէ բանակն յաղթականաց զվիսացեալ նահանգս. ահարեկ ապար ընակիչս, մինչև բաղումք ի քաղաքաց եւ

եւ ելս առնելով զմիմեանցիք գային մտանէին
ինքնակամ ընդ լծով յաղթականին, բարե-
բախտ զանձինս վարկուցեալ ի առանց ինչ
նեղութեան պաշարման անձնատուրք լի-
նին: Մինչամեխ եղեն գաղղիացիք մինչեւ
Վենդեթաամ, և առնակալք եղեալ ի քա-
ղաքին՝ բերէին զբանակս առ յաղթողն. և
ի Թագաւորն ծանր ծանր պայմանս դնէր
նոցա առաջի, գարձուցանել զուղղափառ
կրօնն անգրէն ի Հոլանտա, տալ վեհագե-
ղից աշխարհին յուղղափառս, տուժել քան
միլիոնս ի ծախս պատերազմին, և այսչափ
ինչ քաղաքս ի գուրս տալ, և տասն հա-
տանել դրամածս՝ ցուցեալ ի նոսա թէ զա-
զատութիւն խրեանց ի Թագաւորէն գաղ-
ղիոյ ունին, ընդ այս խիստ պայմանս ի
ցաւումն կատաղութեան բրգեցան Հոլան-
տացիք, և զդեսպանս խաղաղութեան զՅով
հաննէս վ ի ր և զՔառնէլ զեղբայր նորա
իրրև գաշնակիցս գաղղիոյ խողխողեալ յո-
չոտեցին դրգռութեամբ Գուլիելմոսի Օ-
րանժի: Եւ այգպարև իսկ եթէ չէր ապրե-
ցուցեալ զաշխարհն Գուլիելմոս պատանի
մեծահանճար և փառատէր, նուաճեալ
էր Հոլանտա, և ոչ ևս էր ի կարգս պե-
տութեանց Եւրոպիոյ: Գուլիելմոս այս,
իշխան Օրանժի յաղթէ Գուլիելմոսի Նա-
տաւայ, որ յառաջ քան զամս հարիւր ա-
ռաջնորդ եկաց ապստամբութեան Հոլան-
տացւոց հակառակ Թագաւորին Սպանիա-
ցւոց առ այն ծնօղս, մեկնեալ էր յաշխարհէն
և մերժեալ յիշխանապետութենէն յերե-

սաց Տէր հերձուածոյ սիրոյդ զաղտուղ
Թի հատարակապետութեանդ: Ի բազմավառանդ
հանդամանս հայրենեաց իւրոց հնարս հնա-
րեցաւ մանկահասակ իշխանս այս՝ ի կոր-
ծանել զիշնամիս իւր, կուսակիցս զնոսա
ամբաստանեալ Գաղղիացւոց: Եւ իշխանա-
պետ կացեալ ելոյծ զնորհուրդ հաշտու-
թեանն, և հաւանեցոյց էած զհայրենակիցս
իւր՝ ի յուսահատ խորհուրդ մատնելոյ՝ ի
ջուր զերկիրն: Խորտակեցան կապանք ջրոց,
հատան ամբարտակք և թումբք, և անդէն
հոլանտա՝ որ՝ ի բազում տեղիս զնստագոյն
էր քան զՈվկիան՝ երևեցաւ իբրև ծով մե-
ծատարած անգնալի խորութեամբ: Գաղ-
ղիացիք՝ ի տեսիլ քաղաքին Ամստերտամայ
առատանային՝ ի սիրտս իւրեանց՝ ի զայրոյթ
կատաղի, Թէ զնորդ ոչ կարէին հատանել
՝ի վերայ աւարոյն. քանզի էր քաղաքն շուրջ
պատեալ՝ ի պատերազմիկ նաւաց, որ՝ ի
տեղիս տեղիս շատ խոկ գտեալ ջուր՝ կար-
գեալ կային հանգոյն ընդարձակ անտառի
՝ի մէջ ալեաց ջրոյց: Ձէր այլ ևս երկրակա-
լութեան խորհուրդ՝ ի հեղեղեալ գաւա-
ռին, և անդէն աճապարագոյն Թշնամիք քան
զհոլանտացիս՝ ի վերայ յառնէին Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաշխանաւել Լուդովիկեայ ի վերայ հզօր ընդ նմա խռովց, և մահ ջեձանաւն զբաւարին թիւրենայ:

1674 – 1675

Երկուցեալ ի յաջողութենէ ընծուց Լուդովիկոսի, Սպանիա, կայսրն Աւստրիոյ, իշխանք Գերմանիոյ, Դանիք և Սաւոյիա, միաբանէին գալ յարձակել ի վերայ Գալղիոյ: Լուդովիկոս ծաղր արար զնոքօք և անդէն չքաւեաց զզօրութիւն նոցա: Արշաւեալ անձամբ էառ զՓրանկ կոմսութիւն ի Սպանիացւոց, և թիւրէն մեծացաւ ի միջերկրայս Գերմանիոյ, տարածեալ անդ զահ իւր: Իակ դուքան Լուքսեմպուրկայ հրամանաւ առեալ Թոլուզ զՀոլանսա, Ճոխ աւարաւ գարձ առնէր՝ անցեալ ընդ մէջ եղից բանակաց Թշնամեաց: Եւ իշխանն Փոնտէ քառասուն հազար արամբք հասանէր հարկանէր ի Սէնէֆ զվերջապահ գունդս ինննասուն հազար զօրաց իշխանին Օրանժի. և մինչև աճապարեալ նորա յօգնութիւն, սիրէր առնոյր զմեծ մասն աղեխց բանակին: Փոնտէ հաւատարիմ հետևող իմաստից կեսարու, ոչինչ համարէր վճա-

բեալ գործ՝ յորժամ մնայր նմա և ինչ մի ի գործել. վասն որոյ անդէն արագ արագ խաղաց ի վերայ Թշնամեաց ի տեղի ուրեք քաջագէտ, և միագունդ զօրութեամբ իւրով գումարէր ընդ նոսա ի կռիւ մարտի: Անդ բազում նախճիրք արեանց գործէին. Գաղղիացիք կամեցեալ ի գլուխ հանել զյաղթութիւն, և Թշնամիք ջոալ տեղի ամօթով, յամառեալ պնդէին ի կռիւ արիւնահեղ մինչև ցմեռասան ժամ երեկոյին: Բազում հարուածս ընկալան և Գաղղիացիք յոյժ երկրորդ պատերազմի. այլ Ըշնամիքն վաճառեալ, և կիսով չափ խորտակեալ, Թողուին գիշերոյն զբանակեցան և հեռանային անտի: Դուքսն Մէգէտա խորտակեաւ, այլ զի առաւելոյր բազմութեամբ քան զԹշնամին՝ յաղթող զանձն կամեցաւ հռչակել. և առ ի հաւատարմացուցանելոյ զայն յաչս Եւրոպայ՝ ջոքաւ պաշարեաց զԼառենարա քաղաք: Այլ երբեմն իշխանն Քոնաէ հեռատես եղև նմին, նա առ երկիւղի չհամարձակեալ մնալ անդէն՝ մեկնեցաւ ի կանոն խուճապով խառն ի խուռն, և մեզ առաւիկ պատեալ զԹշնամեօք՝ ծածկեաց զփախուստ նոցին յաչաց գաղղիացւոց:

Մինչդեռ Քոնաէ վանէր զդաշնակիցս մինչև ցկարս Փլանդրիոյ, Թիւրէն ի Գերմանիա քան հազարաւ միայն մարտ դնէր ընդ վաճառն հազար զօրս Թշնամեաց: Սա կէս նպատակի խորհրդոյն առաջի եդեալ ուրեք Ալսակիոյ և Լորենոյ, և անտի յա-

ռաջ խաղալ ի միջոցս աշնաբերին, որ մըշտապէս ելեալ էր ի հարկանել և ի վանել զթշնամիս՝ կէզծեաց տեղւոյ տալ հզօրագունի քան զինքն զօրութեամբ, և ամրացուցեալ անքոյթ զքաղաքս կարևորս՝ Թողոյր զԱլասցիա և մեկնէր ի Լորենա: Յայնժամ դաշնակցացն ի կարծիս լեալ թէ ի ձեռս նոցա Թողոյր զգաւառն, սփռեալ տարածեցան ի նմա վաճառուն հազար մարտիկք. և զի ձմեռն ի վերայ կայր, մտին ի ձմերոցս ի հանգիստ. այլ առ նուազութեան կերակրոց հարկեցան հեռի ի միմեանց զվայրան ընտրել: Այսմ ինայր և Թիւրէն, և միւնչդեռ անկասկած նստէին նոքա ի վերջս Դեկտեմբեր ամսոյն՝ եկ վազվազակի ձեռով և գալանի ձանապարհաւ եմուտ յԱլասցիա, և հասեալ ի վերայ ձմերոցաց թշնամեաց՝ խորտակեաց զնոսա մի ըստ միոջէ, և ի սպառ կոտորեաց զգաշնակիցս ի Թուլքհէյմ, և զինացորդս զարս քսան հազար մերժեաց վանեաց ի Գերմանիա՝ ձմերել անգէն: Իսկ ի քաւաւսն հազարացն կէսք սպանան, կէսք գերի վարեցան, և կէսք վարատեալ ցրուեցան:

Յաջողութիւնք յաղթութեանց Գաղղիոյ դադար առին մինչուամբ մշտայաղթին Թիւրենայ: Քանզի վարեալ նորա զզօրավարն Մոնթէքուքոլի, և զզօրս կայսեր անդր քան զՀռենոս, իբրև մերձ էր ի հարկանել և զմեծանուն զօրավարն որ իբրև նոր ոմն Փաբիոս էր ընդդէմ Աննիբալայ, անակնկալ հարեալ ի հրազինուց մեռաւ ի Սալցպախ:

Եկաց զնա Լուդովիկոս արքայ. և պարտ անձին համարեալ պատուել զքաջն զօրավարի զդիակն՝ որպէս երբեմն Կարոլոս Ե. զքաջին Կէսքլենայ, հրաման տայր Թաղել զմարմինն ի սուրբն Դիոնեսիոս ի շիրիմն Թագաւորաց: Նշխարք մարմնոյն Թիւրենայ անցին ընդ բազում գաւառս Գաղղիոյ, և որտաստաւք և կոծ ողբոց ժողովրդեան յուղարկաւոր նմին լինէր, որ ընդ երկար տարածեաց զնանաւն իւր ի վերայ նոցա՝ զերծուցեալ ի տառապանաց պատերազմի (1675):

Արշաւանք մեծի զօրավարիս համեմատք բարուցն էին՝ կարևորք քան զքէզք: Զկին Ձակատամարտք պատերազմաց նորա որպիսիք յաճախ առանց ինչ օգոյ հուշակ հարկանեն. այլ խորագէտ զօրավարութիւն, չուեալ իմաստութեամբ առ ջոջէ ի առն, շփոթել զթշնամին, և առանց պատերազմի զինքնիկեցս զնոսա առնել, այսոքիկ են պատերազմունք օգտաւէտք՝ որով ապրեցուցանէ ոք զՀայրենիս, և յորս զգօնութիւն զօրավարին չհոգու լինէ ի կամս բաղդին: Զկաց ոք զօրավար իբրև զնա սիրել զօրաց իւրոց և մեծարել. սիրէին զնա իբրև զՀայր, քանզի իբրև զօրդիս զնանաւն սիրոյ ի նմանէ փոխադարձ ընդունէին, որ բազմահոգ փութով զգուշանայր միոյ միոյ ի նոցանէ կենաց և առողջութեան, և վաստակակից եղեալ նոցա՝ քաղցրացուցանէր զամենայն աշխատանս: Ի Հայրենի կրծնիլ նորաշանդ ծնեալ, հրաժարեաց երկիցս ընդունել ի Թագա-

ւորէն զառաջր սպարապետութեան՝ պայմանաւ դառնալոյ ի կրծոնն նախնեաց իւրոց: Այլ եօթն ամաց յառաջ քան զմահ իւր լուսաւորեալ ի ձեռն մեծին Պսխիւէի, արժանաւոր վարդապետի դիւցազնին, եբաց Թիւրէն զաչս իւր ի լոյս ընորհաց Քրիստոսի, և եհաղ զաղանդն կաթուլնական: Եւ յետ այնորիկ պատնչելի օրինակ լինէր բարեպաշտութեան, և միայր կատարածի մարթին զի հեռացեալ մեկնեսցի ի կեանս առանձնութեան: Աւուրըք յառաջ քան զմահն հալորդեալ իսկ էր ի խորհուրդ կենդանարար մարմնոյ աեառն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաջողութիւնք զինուց Լուդովիկեայ ի վերայ Ընտամեաց իւրոց, և հայցուածիւն Նիմէից:

1675 – 1684

Յամին յորում բարձաւ Թիւրէն ի կենաց՝ ծովական Քրէքի յանդգնեցաւ լինն հալարաւ եւեթ խաղալ յօգնութիւն Թրէսայ՝որ պաշարեալն էր ի Թշնամեաց հզօրագունից քան զինքն. հարաւ նա ի Քոնսարպրոմ, և ձերբակալ եղև ի Թրէս, ուր անկեալ էր յետ խորտակելոյ զօրաց իւրոց: Այս առաջին անգամ ձախող գիպեցան ելք

զինուց Լուդովիկեայ. սակայն շահաբէա յոյժ եղև նմին ինքեան Քրեքեայ, որ՝ի բնէ հանճարեալ յատուածս պատերազմի, այլ խնդախ և յանդուգն, ՚ի մի՛ս էառ անդէն, զի խոհականութեան է առաջնորդ կալ քաջութեան, և արգասիս բախտի համարեցաւ զկանխակալ յաղթութիւնն:

Եւ զինի այսորիկ Թագաւորն ՚ի ձեռն քաջութեան իշխանաց իւրոց և զօրավարաց յառաջ մղէր զերկրակալութիւնս իւր, և ոմն առ ոմն յաղթութեամբ յառաջ խաղայր՝ ՚ի տուրն նահանգս սէրտութեան Սպանիոյ. և վալանսիէն քաղաք մեծ և հզօր ՚ի Փլանդրիա առաջ ՚ի միջօրէի զինի եօթն աւուր պաշարման: Ծովապետն Լուքսեմպուրկ՝ որ զօրավար կայր ընդ ձեռամբ արքայի, պատրաստեր զյարձակումն ՚ի վերայ քաղաքին ընդ զառ ՚ի վեր արտաքին պատնիշացն. անկան անդր զօրքն և տապալեալ զամենայն ընդդիմակացս կալան զբարձունս պատնիշաց: Անակ դիմեցին ՚ի պատնէշն մահիւաձև՝ որ ծածկէր զպատուարն, և ընդ չարժական կամուրջս անցեալ ընդ խրամատան մտին անդր: Պաշարեալքն ահիւ տագնապեալ, տպաւինեցան ՚ի քաղաքամէջ անդր. Գաղղիացիք աճապարեալ արագ հեծամուտ նոցա եղեն, և մխեցան ընդ նոսա ՚ի վալանսիէն: Այս գործ մեծ փոքու գնդաւ ՚ի տուլ ժամանակի ՚ի գլուխ ելանէր: Առ սովիմբ դարձեալ անձնատուր լինէր ՚ի Սէնթ-Օմէր, և մեծ իշխանն եղբայր Թագաւորին զօրանայր ՚ի վերայ իշխանին Օրան-

ժի՛ ի՛ Մոն-Քասաէլ (1677)։ Նովին արա֊
գուելեամբ առան և քալաքն կանա, Քամ֊
պրէ և Իբրէս և այլք բազումք։

Բազմակորուստ տուժիւքն երկուցեալ
պաշնակից֊ք ի հաշտութիւն խոնարհեցան,
և կռեցան պաշինք խաղաղութեան ի Նի֊
ժէ։ որպէս և զիարդ օրինադրեաց զայն
յաղթողն. որով ընդարձակեաց գաղղիա
զսահմանս իւր, ի նեղըս առեալ զոլջոյն
զփրանկ կոմսութիւնն և զման ինչ Սաորին
նահանգացն (1679)։ Այսոքիւք ահա թա֊
գաւորն գաղղիոյ երկրակալ հզօր և համառ
քաղաքավար ծանուցեալ յամենեցունց,
ընդունէր զփառաց անունն՝ Մեծ յորջոր֊
ջեալ. այդարև փառք շքեղ, ուր և ապինք
ոխերիմք գաղղիոյ խոտովան եղեն այժմ֊
նի լինել ազգային անուանն Մեծի։

Լուդովիկոս և ի խաղաղութեան նակ
տարածէր զբազուկս սէրութեան իւրոյ.
գաղանի հնարիւք և ոսկւով եբաց առաջի
իւր զդրունս Սիթրասպուրկոյ կայսերական
ազատ քաղաքին, որ ամուր պատուար եղև
գաղղիոյ ի կոզմանէ հռենոսի։ Ծովականն
Տիւքէնա առաքեալ ի վերժ ծովագնաց ա֊
պատակութեան ճէզայերի, ի հուր դա֊
տեալ զքաղաքն՝ բռնադատէր ի դուրս տալ
զամենայն քրիստոնեայ գերիսն։ Եւ գե֊
նուայ ժպրհեալ արհամարհել զգաղղիա,
պատուհասակոծ լինէր ի հարուած ոմբոց,
և խոնարհէր առաջի նորա ի հաշտութիւն
(1684)։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Կրօնական խռովութիւնք ի Գաղղիա, և պարբերին էին հալածական աղանդոյն յաշխարհին:

1684 - 1686

Մունգոեր այս ամենայն յաջողութիւնք բաղդի ի դէպ գային Լուդովիկեայ՝ կարեվէր խոցեաց զնա մահ դշխոյին Մարիայ Թերեզայ և Քոլպէրայ գանձապետին: Սակայն երթայր և ծոխանայր վատաւք արքայութեան Լուդովիկեայ, ամենուառատ առաքինական հնուածք հոյակապք, և վերայլ աքանչելի բուրաստանօքն յարուցեալ կանգնէր ի վեր ի ձախճախուտ կարակուժ լճէն՝ ի վաստակս բիւրաւորաց մարդկան և ի ծախս գանձուց անթիւս:

Յառնէին և չփոթք խռովութեանց ոչ սակաւք ի ժամանակս թագաւորութեան Լուդովիկեայ ի պատճառս կրօնից. նախ ևան Յանսենեանցն որ ի Յանսենիոսէ եպիսկոպոսէն Իբրեայ ծագեալ ի 1640 ամին՝ գալտաբար տղմակեալ տարածէր. երկրորդ՝ ևան առանձին Գաղղիական եկեղեցւոյն ազատութեան, յորում ահաւոր հերձուած ի վերայ կայր՝ եթէ իմաստութիւն քահանայապետին էր զառաջս ա-

ռեալ սպառնալեացն. երրորդ՝ վասն Անդորրականաց՝ յորս անկեալ համարեցաւ և աքանչելին Փեռնելոն:

Յետ այսոցիկ ամենայնի դէպ եղև և վերջին հասարոյր հարուած կալուբինական աքսորդին՝ զոր ետ Թագաւորն, և հնչեաց համբաւ գործոյն ընդ ամենայն Եւրոպա: Կալուբինականք վինու բռնութեամբ քաղեմ ազատութիւնս կորզեալ էին 'ի Թագաւորացն առաջնոց. յորոց բռնապատեալ և հեռիկոս Ա, տայր նոցա ազատութիւնս հրամայական նանթեայ: Այլ նոցա ոչինչ յետս կացեալ 'ի ձեռներէց յանդգնութենէ իւրեանց, քաղեմ իրօք հակառակ օրինաց հրամայականին գործէին. վասն որոյ հաստատեաց Լուդովիկոս 'ի մահ 'ի ձեռն առնուլ զաստ իշխանութեան իւրոյ. և զի հզօր էր զօրութեամբ, արհամարհեալ զպատուին բարկութեան նոցա՝ յետս կոչեաց զհրամայականն նանթեայ, արգել զպաշտօն նոցա հրամայականն, և եւս տալեալ զամենայն եկեղեցիս նոցա. արգել իսոնիս մի ևս ուսուցանել նոցա 'ի գպրոցս, տարագիր արար զվարդապետս նոցին, և խոտացաւ պարգևս որոց 'ի միտս եկեալ գայցեն յուղղափառութիւն, և պատուհաս ծանր՝ որոց անմտութեամբ 'ի նոյն անկցին պղանդ: Յաղանդաւորացն կէսք մեկնեցան յերկիր օտար, ոմեքիմ Թշնամի արտաքս զանձինս հայրենեաց. զորոց զԹիւ ոմանք աւեն վաթսուն և ութ հազար, և այլք մինչև ցհարիւր և ցերկերիւր հազար հանին զայն.

էին այս որպէս և է, սակայն այս յայտնի է
լմէ ոչ անգութ ինչ գործ կամ անիրաւ գոլ
ծեցաւ. քանզի մինչ նուրտալանդք Անգլիա,
՛ի Սկովտիա, Իռլանտա և յայլ գաւառս
Եւրոպայ խաւիւ հալածէին զսուտափառս
մահու չափ, և ՛ի քրէական յանցանս էր
գրեալ հնազանդութիւն յօրէնս եկեղեցւոյ,
՛ի նմին դառն ժամանակի այսչափ մարդա-
ւէր ցօւցաւ Լուդովիկոս առ նուրտալանդս.
այլ ջնարհիմք և զայս ժխտել՝ թէ կորուսա
մեծ եղև գաղղիոյ գաղթականութեամբ մե-
ծի բազմութեան մարդկան, որք և անմոռաց
կալան ՛ի միտս զվերջ անիրաւութեան ընդ-
դէմ հայրենեաց: գոան և բազմութիւնք
նուրտալանդից, որք որջացեալ ՛ի կիրճս լե-
րանցն Սէզէնի և յուզեալ ՛ի վարդապետաց
իւրեանց՝ զատատամբութեան ամբարձին
զերծ, և վնաս բռնութեամբ ընկալեալ բա-
զումք կամ կեղծեօք կամ ճշմարտութեամբ
դարձան ՛ի հաւատս հարցն (1685):

Յաւուրսն յայնոսիկ կորոյս գաղղիա զիշ-
խանն Քոնտէ՝ զայր հոյակատ և երևելի.
էպտանէր թերևս ոչ գերազանց քան զնա,
եթէ ոչ առ ամբարհաւաճ խաւսութեանն
՛ի հերձուածս կործանեալ էր և յատատամ-
բութիւն թևակոխեալ. թէպէտ դատապար-
տեաց զայն զինն, այլ ատաշնորդս և երևե-
լի երևելի յաղթութիւնք ոչ կարացին քե-
րել ՛ի նմանէ զայս կեղտ անուն: գնացք
նորա ոչ միշտ ըստ օրինաց քրիստոնէու-
թեան եղեն. ասկայն ժողովեալ նա զանձն
միանգամ ՛ի հինգից պատերազմաց, և զբ-

գաւառացեալ առ փոքր փոքր, ընտելացաւ կրօնիւց բարեպաշտութեան՝ զոր մեծարէրն միշտ. և հուսկ ապա շարժեալ ի ընորհաց հոգւոյն, փոխեցաւ յայլայր. և որպէս զարմացոյց զաշխարհ մեծաշուք յաղթութեքն, նոյնպէս և օրինակ բարի զանձն ընծայեցոյց ամենեցուն բարեպաշտութեամբ գնացիցն:

Մանաւանդ զվերջին ամս կենաց իւրոց անցոյց աքանչելի գործովք առաքինութեան, և մեռաւ աւիւ դառատանացն Ադուածոյ և ի յուսով յոլորմութիւն նորա (1686):

ԳԼՈՒԽ ԺԷ.

Դաշնակցութիւն պէպռւրէանց Եւրոպայ ընդդէմ արքային Գաղղիոյ:

1688 – 1690

Ոմանք յիշխանաց Եւրոպիոյ երկիւղիւ և նախանձու գումարէին յԱւսպուրկ ի դաշնակցութիւն ընդդէմ Գաղղիոյ, առաջին կէտ նպատակին եդեալ՝ արկանել յաթոռոյ Թագաւորութեան Անգղիոյ զՅակոբ Բ, զաներեսն յԱնգղիացւոց վասն նախանձուն ուղղափառութեան: Բռնակալ գահու նորա փեսայ նորին Գուլիէլմոս Գ, իշխանն Օրանժի, ուխտիւմ հակառակութեամբն ընդդէմ Գաղղիոյ արժանաւոր

առաջնորդ կայր Թշնամեաց նորա, խրախուսելով հակառակ փառաց և զօրութեան նորա: Ուշ նպատակի եդեալ տարապայման ցուցանել զփառասիրութիւն Լուդովիկոսի առ ի լաւ ևս ծածկել զիւրն, զՆերօպա գրեթէ առհասարակ յիւր խորհուրդս միտքանէր. և եթէ նովին հանձարով վարեալ էր ի պատերազմունս որով ի ձարտարք քաղաքավարութեան, անշուշտ ազէտք առատկուսի և տագնապ անհնարին ի վերայ կայր Գաղղիոյ: Սակայն յաջողեաց բազդ Գաղղիոյ, Գուլիէլմեայ ինքնին ձեռնտու լինելով այնմ քան զամենայն զօրավարս Թշնամեաց. զի ըստ երդիծաբան առացուածոյ պատմագրի ուրումն, չգոյն ոք Թերևս զուգակշիռ նմին ի պարծանս Թոզոյ ի բաց այնքան բազում պաշարմունս քաղաքաց, և այնքանեացն բազում պատերազմաց կորուսանելոյ: Սակայն անշուշտ համարէր նա զյաղթութիւն ընդդեմ Լուդովիկոսի. քանզի Թիւրքն, Գոնաէ և Գրեթէ չէին ի միջի. այլ էին Գաղղիոյ Լուքսէմպուրգ և Գաթինա, և ի գալոց երևելի զօրավարաց յաթեան այլք նման նոցին ի հաստատութիւն և ի փառս գահուն Լուդովիկոսի:

Յառաջին կրկին պատերազմունս ոչ ինչ այնչափ մեծամեծք գործեցան գէպք. արքայորդին պաշարեաց էառ զՖիլիպսպուրգ քաղաք, ապա զՄոգունտիա, զՏրեւ, զՄիրը, զՎորմս և զայլ բազում քաղաքս ի Կողոնիա: Ել երկիրն փալատինայ զայս երկրորդ անգամ ի հնուր մատնեցաւ. քառասուն քա-

զաբք և բազում գիւղք հրոյ եղեն ճարակ։ Դիզդեցաւ զարմեաւ Գերմանիա, յարոյց զօրս ընդ ձեռամբ Կարոլոսի դքսին Լորենայ և Վալաէքայ իշխանին Պրանտէպուրկայ։ Զօրացաւ Կարոլոս ընդդեմ Գաղղիացւոց և արուեստիւք անկաւ ի մարսի, և Վալաէք եհար զԳաղղիացիս ի Փլանդրիա։ Ազատացեաց Լուգովիկոս և արձակեաց զօրավարութեամբ զքաջն Լուքսէմպուրկ, որ հասեալ ի վերայ Թշնամեացն բախեցաւ ընդ նոսա մերձ ի Ֆլէօրիւս։ Բանակին դաշնակցաց ունելով յանդիման հոսանս ինչ ջուրց զառ ի վայր և խոր, ակն ունէր յանցանելն ընդ այն Գաղղիացւոց խորտակել զնոսա. սակայն այլ խորհուրդ էին Լուքսէմպուրկայ։ Կարգեալ նորա զՀեսեական զօրն պատրաստութեամբ անցանելոց ընդ ջուրն, ինքն հեծելովք աճապարեալ անցանէ ընդ գաղանի ճանապարհ. և յերկար շրջան առեալ, եկն երևեցաւ յանկարծ ի յաջակողմն Թշնամեաց և հարաւ ի թիկն նոցա։ Ընդ գալուստ նորա շփոթեցան Թշնամիք. և նա չէտ նոցա ժամ պարապոյ ճակատ յօրինել ի պատերազմ. այլ աղաղակեալ «Խորտակեցան, խորտակեցա՛ն» դիմեաց ի վերայ։ Հասոյց ի նոսա կոտորած սաստիկ, վեց հազար դիակունս տապաստ արկեալ առ ոտիւք ձիոյն. տարաւ գերի ութ հազար, և երկերիւր գրօշակս, և զամենայն հրացէնս և զաղխս բանակին. այսոքիկ եղեն ահա շքեղ և մեծապայծառ փառք զօրավարին, որպիսիք մեծութեան հանճարոյ նորա (1690)։

Եւ յայլ կողմն աշխարհին Գաթինայ յաղթող լեալ՝ի պատերազմին Սթաֆորթի կալաւ զԱաւոյիա առ հասարակ և զմնան ինչ Բիէմոնթեայ: Ի վերայ Ովկիանոս ընդ երկայնութիւն վայթ կղզեայ կոմսն Թուրվիլ իսրտակեաց զնաւատորմին Անգլիացւոց և զՀոլանտացւոց դաշնակցեալս՝ի մի, և առանց կորուսանելոյ և ոչ զմակոյկ մի՝ գերեցաւ կամ հրկէզ արար առաւել քան զքան նաւս: Այսու յաղթութեամբս ծովակալեաց՝ի տպատ, մինչև ոչ ևս համարձակէին երևել անդ Անգլիացիք և Հոլանտացիք, որ ամօք յառաջ միայնակ իշխան էին ընդ ծով:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Այլ ևս յաղթող և յախող պատերազմունք Լուդովիկոսի Քէնէայ մինչև յհաշտութիւնն՝ի Ռիսուէյ:

1690 – 1697

Սակայն զկնի երկուց ամաց կերպարանափոխ լինէին իրքն. քանզի Լուդովիկոս կամէր նստուցանել վերայն յաթոռ իւր զՅակոբ Բ, զընկեցեալն՝ի գահոյից: Եւ վի յառաջ քան զվճռան իջուցանել Անգլիա հարկ էր ցրուել զՀոլանտացի նաւատորմիղ թշնամեացն, թուրվիլ քառասուն նաւուք եւթ

հրամանն ընկալաւ ՚ի Թագաւորէն հետա-
մուտ գոլ հարկատուաց նահանգիս և բախել ընդ
նոսա ՚ի մարտ: Հանդերձ անհամեմատ սա-
կաւուԹեամբ իւրեանց վատահ լակ էին
գաղղիացիք ընդ յաղԹուԹիւնն. քանզի բա-
նակեցան լեալ ընդ բազում ՚ի զօրավարաց
նահատուին Ընդղուացւոց՝ յիւրեանս էին
ձգեալ զնոսա, ՚ի սկսանելանդ մարտին առ
գաղղիացիս անդր հատուածել ընդդէմ
կողմնակցաց Օրանժի: Ա՛յլ ծովակալն անդ-
ղլիացի իրապէկ գաւաճանուԹեան լեալ,
փոխեաց անդէն զզօրագլուխս զորոց կա-
ճառէր. և Թուրվիլլ անուանեալ եղբօրն՝
բռնադատեցաւ ընդ ոզբոյն աւրմանն մարտ
մղել: Յերկարէր գործ պատերազմին յա-
ռաւօտէ մինչև ցգիշեր. և ոչ մի լակ կողու-
սեալ նաւ Թուրվիլլ. փառօք արդեօք մե-
նէր ՚ի մարտէն՝ եԹէ սեղաւուԹիւն ծովու
չէր նմա դակառակ, և եԹէ գաւանէր գաղ-
ղիացւոց նահապետաւ ՚ի Շէրպուրկ: Ա՛յ-
սու կրկին տարապէպ արկածիւք կորոյա նա
հնգեսասան նաւս, որք ՚ի ծանծաղս խրեալ
հրկէզ եղեն մերձ ՚ի հոկ (1692):

Ա՛յսպէս յաղԹուԹիւն չէր ինչ ՚ի կշիռ փո-
խարինի սուժից նիզակակցաց՝ զոր կորըս-
սեամբ Մոնս և նէմուր քաղաքացն կրեցին,
զորս ինքնին անձամբ առնոյր Լուդովիկոս.
և ոչ պարտուԹեամբն ՚ի պատերազմին
ԸԹէ ինքնին, որ հռչակաւոր եղև նեղու-
ԹեամբԹշնամուաց և քաջուԹեամբ յաղԹա-
կանաց: Իբրև խոյտառակեցաւ լսեան զօ-
րավարին Լուքսեմպուրգայ՝ որ առ գուվլեզ

մոս էր առաքեալ և բանագաւեցաւ միշտ
ձեռն միեալ ի նա՝ գրել ըստ սուտ առ
զօրավարն գաղղիացի, սասելեամբ լսոյս
խոսիեալ զօրավարն փոքր միւս ևս և չարա-
չար խորտակէր առաջի Թշնամւոյն: Կանգն
ի ծագել առաւօտուն միշտ ի քուն էին
զօրքն, և ինքն զօրավարն խօսիացեալ պատ-
րաստէր գնդ առնուլ. յանկարծ ի վերայ
հասին Թշնամիքն: Ի շուինդն ազդակի և ի
ձայն հրազինուց մոռացեալ Լուքսէմպուրգ
զհիւանդութիւն իւր և զդարման, առ վե-
րահաս վտանգին զգեցաւ զզօրութիւն: Նո-
րահաս խմաստութեան և քաջութեան
պէտք էին ի յաւիշտակել զյաղթութիւն ի
Թշնամեաց, արար և յաջողեցաւ վանեաց
զԹշնամին խորտակեալ ի նոցանէ զարս
բիւր: Ընտի յաղթական զինուքն խոյացաւ
և հաս ի վերայ Գուլիէլմոսի, և հար խորտա-
կեաց զնա ի Նէրվինա: Գոն ուրեք պատ-
մին այսպիսի սպառ սպառ ջախջախանք զօ-
րաց, և յաղթութիւն կատարեալ: Լցաւ
մայր եկեղեցին դիշխեալ Թշնամեաց. և ի
գառնալ Լուքսէմպուրգայ յաղթութեամբ
ի մարտէն գոհութի մատուցանել առաջն
վան յաջողութեանցն Գաղղիոյ, ալեգելոյր
ի բազմամբոխ ժողովրդենէն. և եկեալ իշ-
խան սին յարքունի սանէ՝ զձեռանէ կալեալ
նորա մուծանէր ի նեղբս ազգակ բարձեալ
«Տէղի սուք, ասէ սուք յօրինողն օծոցայ
եկեղեցւոյն»: Հաշակեցաւ սոն այս և յաղ-
թութեամբն ի Մարսէլ, զոր սորա Քա-
թինա ի Բէէմոնթ:

Մեծամեծ յաջողութեամբք բարձրացուխ պանծային Գաղղիացիք, այլ յաղթութեամբքն երթայր և նուազէր զօրութիւն նոցա: Իսկ նիկլակակցաց բազմութեան զնամանութեն բերելով բազմագլուխ վիշապն, ի խորտակել կիսոցն այլք նորանորք ծնանէին. և որ ապեսաւորն էր՝ կորոյս Գաղղիա զնեցուկ ամրութեան իւրոյ մահուամբ ծովակալին Լուքսեմպուրկայ: Էր սա ի վաղեմի և յերևելի տոհմէ Մոնմորանսեայ, յորում ոչ պակասէին արք աւագք: Սա արժանաւոր ձեռակերտ իշխանին Քոնտեայ, և ժառանգ հանճարոյ նորա և խնամատութեան, գերազանցեր զօգտիս զամենեքումբք. զօրաւոր ժխր ի գործ, ձեռնհասկց յամենայնի և բարեբաղդ, փառաք ի գլուխ առնէր զամենայն պատերազմունս և պաշարմունս քաղաքաց՝ յորս ձեռն արկանէր: Համառօտ ելև ժամանակ հիւանդութեան նորա, և յահաւոր ժամու անդ՝ յորում ոչինչ են երևոյթք փառաց և նշանակք մեծութեան, եցոյց նա ապաշաւ անկեղծ ընդ մտադիր ծառայութիւն իւր ի փառս Թագաւորին քան Աստուծոյ. բաւէ, գոչեաց, որ օգուտ լինէ ի յաղթութենցս առաջի առնելին Աստուծոյ՝ որ գառելոյն է վիս: Իսկ փոխանակ պատկացն եղծանելեաց մատուցանէի առաջի նորա զբաժակ ցաւոց ջրոյ առեալ աղբատաց առ ի սէր նորա ։։

Չկնին մահուն Լուքսեմպուրկայ եկք պատերազմաց լինով Հատատաեցին զփառս քաջի առնն, և արդարացուցին զերատացն սուգ

Թագաւորին և զԺողովրդեան Գաղղիոյ։ Ընդդէմ Անգղիոյ յոլով ուրեք հարեալ կոտակոր, պաշարեաց կալաւ զՆէմուր յանգիման զօրացն Գաղղիացւոց (1695)։ Խոնջ էր Եւրոպա յանդուլ պատերազմից, և յաղթականքն և յաղթեալք խաղաղութեան ցանկային։ Այլ զվերջին ձիգն զօրութեան Թափեալ Գաղղիացւոց ի 1697 ամին, ի ձեռն զօրավարին Քաղինայ առնուին զքաղաքն Ար ի Փլանդրիա, և անտի խաղային ի Պրուքսել. և վանեալ գուքան մարտիւ պատերազմաւ զօրանոցն ի Սպանիա, և տէր Պարչէլոնայ քաղաքին։ Ի յաջողութեանց սոսի Թշնամւոյն ընդոստուցեալ նիզակակցաց, հաշտութիւն խաղաղութեան խօսեցան ի Ռիսուիք։ Թագաւորն Լուդովիկոս իբրև զյաղթող խօսեցաւ անդ, սակայն խմաստուն խորհրդով եթող զամենայն գաւառս երկրակալութեչ իւրոց։ Դարձեցաւ զառաջինն տարապայման այս ջնջուածն Թագաւորին, զորոյ անպիտանային զպատճառս. այլ ոչ յապաղեցին ապա խելամուտ լինել խմաստուն տեսութեան և խորախորհուրդ քաղաքավարութեան մեծի ալբայլին (1697)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՍԿԻԶԲՆ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՊԵՐԱՊԻՆ։

1701 – 1704

ԹԱԳԱՒՈՐՆ Սպանիոյ կարոլոս Բ, որ վեր-ջին էր ի տանէն կարոլոսի Ե, սեսեալ զի ժեռանէր անզաւակ՝ կտակաւ ետուր ժա-ռանգ գահուն զՓիլիպպոս դուքս Անժուի զհոռն քեռ իւրոյ Մարիամայ Թերեզեայ և Լուդովիկոսի ԺԴ. և այսու խորհեր մըշ-տասաւ խաղաղութիւն հաստատել և բարե-կամութիւն ընդ Սպանիա և ընդ Գաղղիա։

Թէպէտ յայտնի էին այնուհետեւ իրաւունք Փիլիպպոսի, այլ ի շահ օգտի հասարակաց՝ Եւրոպա ոչ ոյն ընդդէմ կ՚քրեցաւ կտակի արքային. զմտաւ ածեալ զի եթէ տուն Պորպոնեանց վաղ իսկ ահաւոր՝ յաւելցէ իւր այլ նոր իշխանութիւն, թերացեալ զու-գակշիռ հաւասարութեան պետութենանց՝ ընկղմեացէ զնոսա Գաղղիա։ Եւ ի ծածուկ սպրեալ ի Գուլիելմոսէ յոխերիմ Թըշ-նամւոյ Լուդովիկոսի ԺԴ, կայսրն Լէոփոլ-դոս միջամուխ լինէր անցուցանել զայս ձոխ պետութիւն ի ձեռս երկրորդի որդւոյ իւ-րոյ Մեծի դքսին Կարոլոսի, որ էր սպդակից Թագաւորացն Սպանիոյ, միով եւեթ սահ-

Ճանաւ հնուի քան զմերձաւորս Լիւն Գաղլիացւոյն, և զի գործեալ պակասէր նմա կառավարիր Ժառանգութեան ի նպաստ: Յայսմ ամենայնի վերայ զօրավիգն եղեն նմա յայսմ Անգղիա, Հոլանտա, Բրուսիա, խուն ինչ գինի և Փորթուգալ, և Սաւոյիա յաւելեալ ի նոսա: Իսկ Լուդովիկեայ նիզակակից լինէին կայսրընտիրն Կոլոնիոյ և Պաւիերայ: Թերևս խառնէր ի նիզակակցութիւն նորա և Կարոլոս ԺԲ Թագաւոր Շուետացց, պատանին քաջառոյզ, Ալէքսանդրն հիւսիսոյ. այլ նա յետնուաձելոյ զԴանիա, զԱաքսոնս և զԼեհս՝ ձեռնամուխ լեալ ի պատերազմ և ընդդեմ Ռուսաց, ի ջրկել գեղեցիկ յաջողութեանց բաղդին՝ ընկձէր ընդ ձախողակ արկածիւք: Ջխաղաղութիւն Թևակոխէին Հելուետիա, Վենետիկ և եկեղեցականն պետութիւն. իսկ մնացեալ պետութիւնք Եւրոպայ առհասարակ ի հրգեհ մարտի վառեցան, ի Հերակլեան արձանացն մինչև ցծագս աշխարհի, և յԱրևանատոյ մինչև ցԲիւզանդիոն. քանզի և Օսմանեանք պատերազմաւ էին ընդ կայսեր, և այս ունայն գԺառութիւն շահ մեծ լինէր Գաղղիոյ:

Ձեռաւ Գուլիելմոս զեղս գործոյ պատերազմին զոր գրգռեաց, քանզի մեռաւ յամին 1702, յաջորդ իւր Թողեալ զԱննա Սթուարտ զքենի իւր, զդուստր Յակոբայ Բ: Ամաւ յառաջ սկսեալ էր պատերազմին, այլ մեղմագոյնս մարտնչէին, մինչև տակաւ վառեալ վայրապար ի կռիւ զմիմեամբք եղանէին: Թէպէտ յոլով ուրեք Տարեալ խոր-

սակէին Գաղղիացիք Իտալիա և ի Փլանդրիա, սակայն գեռ անհաւրշամ պահէին զառաջին իւրեանց զփառս, մինչև ի 1704 ամին կերպարանափոխ լինէր Եւրոպէ։ Քանզի մինչդեռ կայսրընտիրն Պաւիերայ նիզակակցութեամբ գաղղիացի բանակին արձակ արձակ յառաջ խաղայր ի Գերմանիա՝ խրոխտացեալ զօրութեամբ իւրով կոխել զԱւստրիա և զվիեննա քաղաք, յարաչեր հարուածովքն զոր ընկալաւ ի Հոխշլեթ՝ ի գերև եհան զգեղեցիկ ակնկալութիւնն, և հալածական փախստեայ երթայր ի ձակատէ մարտին։

Դուքն Մալպորու զօրավար զօրացն Անգղիացւոց, և Եւգինէոս ազարտապետ կայսեր ի մի միաբանութիւն եկեալ, ի մարտ կարգային զԳաղղիացիս և զՊաւարս, և զելից յաղթութեանն կախեալ կայր բազդ պետութեան կայսեր։ Գաղղիացիք և նոցին նիզակակիցք առաւելեալ թուով քան զերթնամիս՝ անկարգս իմն զձակատն յօրինեալ, տեղի եառնն երթնամեաց միջամուխ ի նեղքս լինել, և զայլ թևն զառուցեալ ի բուն բանակէն՝ վեր ի վայր շփոթէին զզօրս և անհնարին կոտորած ի վերայ հասուցանէին. որոց առ առաջնապ երկիւղին կուրացեալք՝ փախստեամբ դիմէին անկանէին ի Դանուբ, և բազումք անդէն գետամոյն կորնչէին։ Մեռաւան հազար այրընտիրք ի զօրացն պարտելոց փակեցան ի գիւղ մի իբրու յանել գառագիլ, և առ վշտի տարտակուսանաց գոչէին մռնչէին քաջքն, և պա-

առաւ պատուաւոր ընդ հոդով ծածկէին զդրօշան, և յանհնարս մատեալ զէն ընկէց անձնատուր առ Թշնամին լինէին: Երկոտասան հազարք անկան ի մարտի, և չորեքտասան հազար գերի վարեցան. բազմութիւն յոյժ դրօշուց, խորանք անթիւք և պաշար առատիկ և հարիւր Թնդանօթք յաւար մատնեցան: Կալեալ Թշնամւոյն և ըզ Պաւիերա՝ վանեաց զԳաղղիացիս յափանց անտի Դանուբայ մինչև ցեզերս Հռենոսի:

Ոչ ոք համարձակեցաւ ցուցանել առաջի Լուդովիկոսի զայս անհնարին ազէատ. ահիւ ապգնապէցան պաշտօնեայքն, աւտգանին և զամիկն: Եւ արքայի տեսեալ ի գէմս ամենեցուն դրոշմեալ վտանգ տրամաբեան, ինքն միայն անգէտ լինէր իրացն: Տիկինն արիասիրտ Մէնթընոն յանձն էառ հաստատանել զբանն յականջս Թագաւորին, զի մի և անպարտելի կարծեսցէ նա զանձն:

ԳԼՈՒԽ Ի.

Խորհուրդ Գաղղիացւոց ամենայն ուրէք առաջի Ի՛նչ Ելնելոյ Իւրեանց:

1704 – 1710

Սակայն գեռ ևս ոչինչ այնպէս ձախողակ և բազմագէտ էին իրք Գաղղիոյ. Թէպէտ կորուսին ի Սպանիա զՊարչելլոնա և զմա-

տակայ գաւառս, սակայն և հանին զքէն վրիժուն Իտալիա ընդ զօրավարութեամբ Վանտոմայ դքսին հարեալ զիշխանն Եւգինէոս ի Քառատոյ և վանեալ զնա մինչև ցԼերինա Թիրոլոյ, բայց անդ 1706 աղետալն եղև յոյժ: Քանզի Փիլիպպոսի բարձեալ զպաշարուձին Պարչելլոնայ, փախստական երթայր առաջի Կարոլոսի, կորուսեալ զԱասրիտ քաղաք թագաւորական և զկես թագաւորութեանն: Ի Փլանդրիա հրամայեաց առեալ ծովակալն Վիլլոս բախել ընդ նիզակակից, կորակոր Թիկնադարձոյց լինէր յերեսաց նոցա ի Ռամիլլ. և ի ձանապարհին անոսի երկիւղիւ ըմբռնեալ զօրացն, վայրավառանեալ ցրուէին: Մալպորու ձարտար ի յաղթութիւն, զոյգ նմին և հանձարել յօգուտ վարել զկորանս թշնամեաց, հեռամուտ եղև փախստէից՝ սուր ի վերայ եգեալ նոցին, և միով յաղթանակաւ սիրեալ բովանդակ Սաորին Նահանգացն մինչև ցԳրուննա Լիլլոյ: Հուսկ ապա և ոյժ կորսեան Իտալիա՝ եզից զջափ ազեաց մարտին՝ անօրինակ ի վէպս պատմութեանց: Առեալ Գալղիացւոց զԲիէմոնթ ողջոյն, եկին պաշարեցին զՏաւրինոն քաղաք՝ որ գեռ ևս ի ձեռս էր դքսին Սաւոյեայ: Եւգինէոս տեսեալ թէ ոչ ընդ Վանտոմի էր պատերազմն, եկն անարգել յօգնութիւն քաղաքին: Աւագանին Գալղիոյ ահաբեկ ի լուր կոտորածին Ռամիլեայ՝ արգել զօրավարաց չելանել ընդ ամբոխութիւն պատնիշացն, յառաջագոյն գոգ-

յեւ գուշակեալ զաղէտսն՝ որք ոչ յատակէ-
ցին հաւատալ զաստուածութիւն գուշակու-
թեանն: Քան զչափն ընդարձակեալ ձա-
կատու պաշտօղացն, անկարացան նովին
զօրութեամբ յամենուսս զդէմ ունել թըշ-
նամեաց. և հարան ի նոցանէ՝ թողեալ
անդէն ուսս բազում յոյժ: Ի լուսն աղե-
տից գուքան Աբեղիոնի ազգոյ վերս յան-
ձին առեալ, ոչ կարաց հոգալ ի փրկութիւն
զօրաց: Խառն ի խուռն խուճապմամբ ի
փախուստ դիմեցին նոքա, այլ իւրաքանչիւր
զփրկութիւնն անձին հոգալով. որով վատ-
նեալ գաղղիական բանակին, չգտաւ ի նմա
այլ եւս զօրութիւն զդէմ ունելոյ թշնամեաց
յԻտալիա. և սովիմբ գառնագոյն եւս աղէտք
զհետ եկին քան որ ի Հոխշեթէթ և ի Ռա-
միլլ, կորուսեամբ Բիէմոնտեի, Մեգիոլա-
նու և Թագաւորութեանն Նէապօլսոյ:

Ի 1707 ամին յաջողակ ելին Թուէր բազդն
Գաղղիոյ. ծովակալն Պերուիք կանգնեաց
յաղթութիւն մեծ ի վերայ նիզակակցաց
յԱնգլիանցս. նուաճեաց ընդ ձեռամբ փի-
լիպպոսի զԹագաւորութիւնս Վալենցայ և
Արագոնայ. բռնագաւեցան գարձեալ գուք-
սին Սաւոյեայ և իշխանն Եւգինէոս բաւ-
նեալ զպաշարումն Թուրնոնի, քանզի կորըս-
տեամբ բազաքիս կորուսանէր Գաղղիա զծո-
վային զոյժ իւր ի վերայ Միջերկրականին,
և Թողոյր զմօտաւոր գաւառս յաւար թըշ-
նամւոյն:

Յամին երկրորդի ասան բիւրք Գաղղիա-
ցւոց, որոց զօրավարեր գուքան Պուրկոյնի՝

որդի անդրանիկ ալքսայորդւոյն, ականատես լեալ անկանելոյ ի ձեռս Թշնամւոյն միոյ ի պատուարաց աշխարհին կարևորագունի՝ քաղաքին Ալլեպ, ոչինչ կարէին առնել։ Այսպէս յաղթանակէին ամենայն ուրեք Թշնամիք Դաղլիոյ, և նա վատթարեալ անկեալ էր ի զօրութենէն, և ամեն խիստ 1709 ամին ի սպառ ընկղմեաց զնա յանյուսութիւն։ Կորեան ի ցրտոյ ձիթենիք և նրբենենիք հարաւային գաւառացն արդիւնք արգասեաց. գոգցես և ամենայն ծառ պղպեղաբեր սառուցեալ անպիտանացաւ, պակասեցան և հունձք, և սարածեցաւ սովն և վիշտ սարակուսանաց։

Լուդովիկոսի սպեխարշեալ ընդ սղեսս հասարակաց՝ խնդրեր զհաշտութիւն. այլ Թշնամեաց այնու ոչ շահացեալ, ընկճել զնա խորհէին բոլորովին. վասն որոյ մերժեցին զայն։ Մալպորու և Եւգինէոս առեալ զօրուրնէ քաղաք՝ հաղացին ի Մոնս, գիտելով զայն անպատապար ի պահապանաց և ի զինուց։ Մարլբոխան Վիլլարս հոգացեալ զպահպանութենէ քաղաքին, պատնիշափակ ամրացաւ ի Մալպլաքէ, այլ բազմօք առաւելեալ քան զնա զօրութեամբ Թշնամեաց՝ անդէն հարան ընդ նմա։ Գաղղիացիք նրբեալ զօրն ողջոյն, վինչգեռ առնուին զհաց, առեալ զԹշնամին՝ վաղվաղակի Թողեալ զպատսար հացին ի բերանոցն՝ դիմեցին ի մարտ։ Սաստիկ էր պատերազմն և անհնարին կոտորածն. խորտակեցաւ գոգցես ի սպառ ձախ Թև Թշնամեաց, ուր զինուորէին

Հոլանտացիք : Մալպորու կացեալ յայլ ևս բանակին, զամենայն ձիգն Թափէր՝ի վանել զուժգին յարձակումն Թշնամւոյն. վանորոյ հարկ էր յառաջ վարել զիջավայր բանակին. սակայն՝ի յարձակել Թշնամեաց և անդր, զօրավար Գաղղիացւոց վէրս ընկալեալ ելաներ՝ի պատերազմէն : Ոչ ևս յերկբայս մնայր այնուհետև յաղԹութիւնն . և որ զարմանալին էր, սասանիկ հարուածեալքն տանէին զմրցանակն : Գաղղիացիք կորուսին զարս ուԹ հազար, և քսան և մի հազարս՝ի Թշնամեաց կոտորեցին, այլ ձեղքեալ լինէր բուն բանակի նոցին. վասն որոյ աեղի եառուն յաղԹողին, Թողեալ զձակատ մարտին և զարաշուք յաղԹանակ նսաեւոյ՝ի մէջ գիւղականց համազգեաց : Այլ քանզի անուն պարտուԹեան ջնաւէ զկորով զօրականին. վասն որոյ լքեալ նոցա մեկնէին անտի, Թողեալ զքաղաքն Մոնս անարգել՝ի ձեռս Թշնամւոյն :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Խոնարհել Լուդովիկեայ ի հպատակութիւն, և մերժել զայն ընծայեացն:

1710 – 1711

Նորոգեցաւն բանք դաշնադրութեան ի 1710 ամին, և Լուդովիկոս Թախանձանօք զհետ էր խաղաղութեան. այլ Թշնամիքն նորա խնդամտեալ ընդ խոնարհել Թագաւորին ընդ ոտիւք իւրեանց, յորմէ զարհուրեալ դողային երբեմն, և քան զևս փքացեալ խոտանային՝ մերժեալ արհամարհանօք զօգտակարութիւնն դաշանցն: Յայն ատգնատ անձկութեան հասանէր Լուդովիկոս, մինչև խոտտանալ օգնական լինել նոցա արծաթով յանկուծ Թոռին իւրոյ յաթոռոյ Թագաւորութեան. իսկ անգութ յաղթականքն և ոչ այնու չատանային. այլ պահանջէին, զի մարտ ընդ նմա եդեալ՝ առցէ ի նմանէ զԹագաւորութիւնն ի միջոց երկուց ամսոց: Ընդ այս խժական առաջարկութիւն չարժեցաւ Գաղղիա ողջոյն, և մուացեալ անդէն զկարեւոր պէտս խաղաղութեան՝ ամենեքեան առ հասարակ ազնուականն և ռամիկն հաւանեցան, բան եդին ամ յամէ տատանորդել յեկամտից

իւրեանց արքունի գանձուն. իսկ սուրբն արքային զօրացաւ առ ժամանակ մի ևս տանել ծախուց պատերազմի: Ոչ ինչ նուազ քան զնոսա վառէցան և Սպանիացիք յաղթութիւն քաջութեան և յաղնուամիտ սուրբ, զայրագնեալք ընդ բարձումն՝ ի նոցանէ Թագաւորին իւրեանց. և հաստատութեամբ եդին՝ ի մահ՝ յամենայնի դիմագրաւ լինել՝ ի զօրավիգն օգնականութեան նորա: Իսկ նա ոչ ևս ակն ունելով օգնականութիւն ինչ գտանել՝ ի Դաղղիոյ՝ որ խոնջ և թափուր էր՝ ի զօրաց, խնդրեաց՝ ի հաւէն իւրմէ զգուքան Վանտոմ միայն. և արդարև խակ չէին պէտք առաւելագունի իրիք առ՝ ի զօրանալ՝ ի վերայ Թշնամեացն. քանզի՝ ի հաստանել գքսին առ նա, զինուորեալ անգէն ընդ ձեռամբ նորա Սպանիացւոց հեռամուտա լինէին Թշնամեաց, և անկեալ՝ ի վերայ՝ ի սպառապուռ խորտակէին զնոսա առ Վ իլլա-Վ իցիոզա քաղաքաւ: Ընդ Փիլիպպոս իրրև զմի՝ ի յեռին զօրականէն դիմագրաւ լիներ՝ ի վտանգս. և իրրև պակասէին նմա՝ ի գիշերին մահիճք, գուքան Վանտոմ առնապարեալ կանգնէր նմա գահաւորակ՝ ի դրօշից և յաւարէ Թշնամեոյն. գահաւորակ շքեղապանծ քաջայաղթ արքայի (1710):

Ընդ յաղթութեամբ հաստահիմն արար Փիլիպպոս զնստարխուլ՝ ի բազում ժամանակաց զթագաւորութիւն իւր, յապաշաւ դաշնակցելոցն ընդ ամարդի խաւարութիւն ամբարտաւանութեան իւրեանց: Դարձեալ և կայսրն Յովսէփ պայազատ Լէոպոլտոսի

վեռեալ անորդի, անկանէր ինքնակալու-
թիւնն ի մեծ դուքսն Կարոլոս եղբայր նո-
րա: Եւ ահա այս վերջին գէպք բացին
անագան զաջս աւագանւոյն Ընդղիոյ. զըշ-
խոյն Աննա և խորհրդականք նորա քաջ ի
միտ առին, զի զօրավիգն լեալ Կարոլոսի
ամբառնալ զնա յաթոռ թագաւորութեան
Սպանիոյ՝ թիկունք լինէին տարապայման
զօրութեանն Աւստրիոյ, զոր չկամէին թո-
ղուլ Պորպոնեանց: Դարձեալ հզօրագոյնն
ի զօրավարս Ընդղիոյ Մալպորու ամբաս-
